Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ILGRGP
673

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՅՈՒԼԻՈՍԻ ԿԵՍԱՐՈՒ

ՀԱՅԿԱԿ
673
2009
18 AUG 2005
Степанъ Петровичъ
Севастьяновъ
въ Астрахани
ար.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՅՈՒԼԻՈՍԻ ԿԵՍԱՐՈՒ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Հ. ԱԲՐԱՀԱՄ ՃԱՐԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՀԱՏՈՐ Ա.

30
I



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1867

673-2009
(4248)
11
18669

VENISE. — IMPRIMERIE ARMÉNIENNE DE S. LAZARE. 1867.

NAPOLEONI · III

CAES . AVG ·

GALLORUM · INVICTO

CHRISTIANORUM · IN · ORIENTE

PROTECTORI

ARMENIA · GRATA

Степанъ Павловичъ
СЕРЕБРЯКОВЪ
въ Астрахани

ԹԱՐԳՄԱՆԻՉՆ

Հեղինակ պատմութեանն և պատմագրեալն առ ի նմանէ՝ երկոքին ևս պերճապատակ Գլուխք, յամենայնում՝ տեսչութենէ ամ֊ բարձեալք յիշխանութիւն ի վերայ քաղաքականագոյն ազանց ժա֊ մանակին իւրեանց, և գերազանցեալք ի վարիչս աշխարհաց, ումն պատերազմական քաջարութեամբք, և ումն ոչինչ պակաս ի համառ֊ թենէ զինուորական արուեստին՝ առաւելեալ խորատես քաղաքա֊ վարութեամբ, որով ոչ զիւրն միայն՝ այլ և զայլոց ազգաց հնարէ զբարօրութիւն, չունին պէտս մերոց ինչ երկարաճառ բանից՝ առ ի ծանօթումն զալ ընթերցանելոցս, կամ ի յաճախութիւն գոլու֊ թեան և փառաց։ Շատ է իմաստասէր և հետաքնին մտաց միով առ սակաւ մի յատարկէզ մատենիս, և տեսանել ակնյայտնի, թէ զիարդ միմեամբք ևս քան զևս փայլին երկոքին նոքա հանճարեղ Գլուխք. մին՝ ճշդիւթ և կենդանագիր պատկերաւ յանդիման կա֊ յուցանելով զդիւցազն իւր, ընդ որով զրեա թէ անմարթ էր և ոչ զանձն ինչ ստուերագրել, միւսն՝ ճշմարիտ նկատմամբն վերհագոյն և զարմանալի ևս հանդիսացեալ յաչս սրատեսից անգամ գիտնոց։

Ասեն և հանճար վերափառ Մատենագրին՝ անդստին յառա֊ ջին համբաւուց հանդերձելոյ գործոյն մեծաւ ակնկալութեամբ ձըկ֊ տեալ ունէր զաչս բանասիրացն Եւրոպիոյ, և յայն ինչ հրատարա֊ կիլ Ա. հատորոյն՝ զրեա թէ և զոյգ յամենայն բարբառս նոցին թարգ֊ մանեալ՝ յաճախեաց յընթերցումն և ի մեծարանս։ Վասն որոյ իղձ եղև և մեզ՝ որպէս յայլ ինչ գործս նմանիս, յայսմ ևս թևակոխել

'ի հետևողութիւն քաղաքակիրթ ազանց և յարգողաց բանի. և փութացաք մինչչև էր երևեալ Ք. Հատորոյ պատմութեանն՝ յեղուլ զաոաջինն 'ի մեր Հայ լեզուս. ընկալեալ առ այս կանուխ և զբարեհաճոյ Հաւանութիւն Օգոստափառ Պատմագրին. որով պատուականացն և ընծայեցոյց մեզ զգործս զայս և զվաստակ, և առ Հաւաստեայ բարեսէր խնամոցն՝ զոր և առ հետուստ ևս յօժարի տարածանել, և իրաւամբք երախտապիտս և երախտապարտս զմեզ և զհայրենիս մեր կացուցանել։

Եւ զի մեծ մասն ունի 'ի բարոյական կեանս ազգի՝ մատենագրութիւն նորին, որ և 'ի մեռելատիպ հանդարտութեան անդ թաքուցանելով զկայծակունս ըղձից իւրոց և զաղնուական բերմանց՝ որ վաղ կամ անագան վերածնուացն զհրաշալի հաւն հանճարոյն, ապա և որ առ գալրութիւնս ազգին իւրոյ բաղմօք լինչ կամ սակաւուք հանգանակել ճգնիցի, կարծեմ եթէ ոչ այլ ազգ լինչ գործիցէ՝ քան թէ 'ի հուր անդր նուիրական սեղանոյ հայրենեաց՝ յաւելուլ նիւթս 'ի անուանդ և 'ի բորբոք աստուածառաք բոցոյն կենդանութեան։ Ցայս միտս և մեր վառեալ 'ի ձեռնարկ թարգմանութեան գրոցս՝ ակն ունիմք ներողամիտ ընդունելութեան մերազնէից բանասիրաց, որոց ոչ անհաճոյ թուեցաւ և իւրեանց բնիկ բարբառովն առնուլ զօգուտ գործոյս, զոր բաղմաց արդեօք մարթ է լնուլ 'ի բան իսկ յաղբերէն՝ յօրինակագրէ անտի հոյակապ Հնդինակին։

Степанъ Павловичъ
СЕРЕБРЯКОВЪ
въ Астрахани

Ամենայն Պարոնեան
Աստրախանցի
Ա ս տ ր ա խ ա ն

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Պարտ իսկ էր պատմական աւանդից Հնութեան ոչ
ինչ պակաս քան զհաւատոյն արբանեան համարել: Չի եթէ
պատուէրք կրօնից սրբութեան զեր՝ ի վերոյ կենցաղականացս
ցանկալեաց զիտոս մեր ամբառնան, ուստի և պատմութեան
ազդէ մեզ զսէր զեղեցկին և արդարոյ, և զատելութիւն ընդ-
դէմ ամենայնի՝ որ խոչընդոտան անկանէն և խափան յառաջա-
դէմ զարգացման մարդկութեան: Այլ յօդտակարութիւն
ուսման այսորիկ պահանջէն պայմանք ինչ. Հարկ է զի անց-
Հղիւ գտակաւ ածցին՝ ի հանդէս, զի քաղաքային կամ ընկե-
րական յեղափոխութիւնք իմաստասիրաբար հետազօտեալ
քննեսցին, զի քաղաքագէտ աւագորեցոյ մանրապատում դէպք
կենաց զօշտուէք՝ մի գողացին զուշ մաց՝ ի մեծէ նոցա քա-
ղաքավարական կեաս նպատակին, և մի՝ ի մուացօնս գարձու-
ցեն զերկնատուաք նոցին պայման:

Բազում այն է զի մատենագիրք յանդիման ածեն մեզ զազ-
գի ազգի կերպարանս պատմութեան իբր գէպս իմն բնածին,
առանց հետազօտելոյ՝ ինչախոտ անցս զատոյգ ծագումն նո-

1

ցին և զբնիկ յատաջապատումթիւն. Հանդոյն ինն նկատչէ, որ ’ի պատիւր աճելով զարհաճս բնութեան՝ յերևելն արդիւնս ևեթ նոցին ուշ ունի, չկարացեալ տալ ’ի նկարուն ցուցմունս դիտանականս։ Պատմագրին պարտ է Հարտարապոյն քան զնկալեալսն գոլ. պարտ է նմա իբրև զերկրախոս, որ պարզէ զնորահնչան իրս երկրագնտոյս, յայտնել զգաղտնիս յեղափոխութեան ապագայ։

*Սակայ որ այն էցէ պատմագրի Հանապարհ հասանելոյ ’ի Հշմարտութիւն. այն իսկ՝ զի Հպատակեսցէ օրինաց ուղղապատութեան։ Յատաջ քան զամենայն աներկբայելի է՝ զի մեծ ինչ արգասիք գործոյ ’ի մեծէ ինչ պատՃառէ յատաջ գան, և ոչ բնաւ ’ի փոքուէ. կամ այլազգ խօսելով, դէպք ինչ անհնչանակ յերևման՝ չածէ երբէք Հետևորդս կարևորս առանց նախապատրաստական ինչ պատՃառի, որ զԹեԹև և դուշնաբեաց զայն դէպս կայուցանելոյ մեծամեծ արգասեաց արարիչ։ Կայծ փոքրիկ ոչ բորբոքէ Հրատ մեծ, եԹէ ոչ ’ի վերոյ այրեցականս շեղջակուտեալ նիւԹոյ անկանիցի։ Մանդէսպիէօ այսպէս զմեծատնութիւնս զայս Հաստատէ. «Չէ բաղդն, ասէ, իշխող աշխարհի. են են պատՃառք Հանրականք՝ որ Թէպէտ բարդայեալք և Թէ բնականք, իշխեն ’ի պետութիւնս, ամբառնան զայն, ունկն ’ի կայի կամ դահավիժ կործանեն. առնային դէպք Հպատակեն պատՃառացս. և եԹէ երբէք արկած ինչ պատեղի, այն է դէպք ինչ ևեԹ կործան արկին զպետութիւնն, էին արդեօք պատՃառք Հանրականք՝ որ պատրաստէին զկոտորածս միով իսկ միայնով պատերազմաւ. Հանուաօտ ասել զկնատուրացն անցից աղխատելեալ ձգին զՀետ դէպք իբրայեան չիւր»[1]։

Եթէ ընդ ամ իբր Հազար յաղԹող միշտ Հանդիսացան Հռովմայեցիք ’ի ծանր ծանր արկածս և ’ի վտանգս, էին Հան-

1 Յաղագս մեծութեան և անկման Հռովմէական պետութեան. ԾԸ։

բաւական ինչ պատճառք՝ որ եւտուն նոցա գալ միշտ զքրիստեօք, և չթողլին պարտութեանցն եւթ այնոցիկ և աղեաւոց գնեա ձգել զկործանումն պետութեան։ Եւ եթէ Հռովմայեցիք օրինակ եղբեմն կացեալ աշխարհի ինքնօրէն կանգնելոց ժողովրդեան և ազատութեամբ վճռանալոց, և յետ Կեսարու թուեցան գահավիժել կուրօրէն ի ծառայութիւն, էին իսկ պատճառք հանրականք՝ որք արգելուին ազնուաբար հաստատակաց պետութեանն դարձ առնելոց անդրէն ի նախնականն իւր կարգաց պարզութիւն. և այդ և նորանոր իղձք քաղաքաժողով ընկերութեան, որ կայր ի Հռոմ, այլ հնարս պահանջէին ի լուսին նոցին։ Ցոր օրինակ ցուցանեն միտք, զի ի դէպս ծանուցա հարկ է և պատճառաց նոցին անհրաժեշտս գոլ, նոյնպէս և ի տեսել սահմանադրութեան իրիք՝ պարտ է իմանալ ի նմա գՀաւատարիս լուսոյ եթէ նորա, և յանժխտելի ազդեցութեան միոյ ուրուք ի վերայ իւրոց գարուն՝ գՀանդէս հանճարոյ նորա։

Գործ է առաք քաղաքանդրել զկենսատու տարերս, յորս էր զօրութիւն սահմանադրութեանն, և զտերապետեալ ի միտս սահմանադրին իմաստ՝ որ ածէրն զնա ի գործ։ Սակայն կանոնիւս խոյս տալք ի վերնակաց պատմագրացն այնոցիկ՝ որ հաւաքեն զանցս աւանդեալս ի գարուց անցելոց, առանց կշռադատելոյ զնմանատակերպական արժանիս նոցին, պանծացուցանելով զգարտասանելին, և թողուլ ի տուեալս զլուսոյ արժանաւորն։ Ոչ եթէ մանր հետազօտութիւնք յօրինուածոյ հռովմէական պետութեանն տան մեզ ի միտ առնուլ զերկարատեւութիւն մեծի պետութեանս, այլ խորացնին տեսութիւն դիտաւորութեան օրինացս նոցա նորա. և գարձեալ ոչ եթէ մանրատաւոմ վէպք գործոց նաբէից գործոց գերազունի ուրուք առն յայտնեն մեզ զգատողութիւն գերակայութեան նորա, այլ մտախոհութիւն ի պատճառս բարձման գործոց նորա։

Ուր ուրեք գործք նորանշանք վկայեն մեծութեան հան-

Հարոյ ուրուք, զինչ դժպատեհագոյն ողջախոհ մտայ քան ընծայել նմին կիրս առ հատարակ և զղջացմունս նուաստութեան։ Զինչ անիրաւագոյն քան չձանաչել զերակայութիւն էից այսոցիկ բարեմտանելոց՝ որ ընդ ժամանակս ժամանակաց ի վեր երևին ի պատմութեան իբրև զաշտարակս լուսատուս՝ փարատելով զաղջամուղջ դարուն այնմիկ, և զպատճառս լուսաւորելով։ Զանազատ նոցա զայս զերազանցութիւն, անխրատել և դարձեալ մոլորութեան, պարտ համարելով նմին տակաւ ընդերկար և կամակար ընդ տիրապետութեամբ՝ որ չէ՛ գէ հնձեալ ի վերայ ստոյգ մեծութեան և անժխտելի օգտակարութեան։ Խնդատրութիւնք, և լինելիքն արդարք։

Յոլովից ի պատմագրաց զիւրազոյն պատահէ նուաստացուցանել զորեարն մեծահանճար, քան ամբաստնել ինքեանց աղնուական խնդատիւք ի նոցին բարձրութիւն, և խորամուխ լինել յընդարձակութիւն խորհրդոց նոցա։ Այսպէս յաղագս Կեսարու, վոխանակ ցուցանելոյ մեզ զՀռոմի ընտանի պատերազմօք երկիւղելիս, մեծութեամբք զեղծեալ, ոտնահար վաղեմի իւրոց կարգաց, ի վտանգի յերեսաց հզօր ազգաց, այս ինքն Գալատաց, Գերմանացւոց և Պարթևաց, և անբաւական կալ ի հաստատութեան առանց իրիք միահեծան, հզօրագոյն և առաւել կայուն և արդար վարչութեան. վոխանակ՝ ասեմ՝ տալոյ զայս հաւատարմագոյն պատկեր, յանդիմանեն կացուցանեն մեզ զԿեսար ի մանկութենէ հետէ թեւակոխեալ ի բռնակալութիւն։ Եթէ հակառակն նա Սիլլայ, եթէ գժտի ընդ Կիկերոնի, եթէ դաշնակցի ընդ Պոմպէի՝ խոստա՛ծ նախատեսութեան նորա ընծայեն, իբր թէ յառաջագոյն նկատեալ նորա զամենայն՝ առ ի տիրել ընդ հանուր։ Եթէ ի Գալս արշաւէ, համարի առ ի մեծանալ աւարաւ աշխարհին[1], կամ առ ի տանջել զօրս հաւատարիմս ի լուծն ա-

[1] Սահմանիս. կէսար. ԻԲ։

ռաջարկեալ խորհրդոյն։ Եթէ աճէ ընդ ծով զարծուխն հուալ մէական յաշխարհ անծանօթ առ՝ի սպառսպուռ նուաճումն Կեղտաց[1], Թուի դիմել անդր՝ի խնդիր մարգարտաց, որոց՝ի ծոլս Մեծին Բրիտանիոյ[2] համարէին գիւտք։ Եթէ յետ ընկճելոյ զահաւոր Թշնամիս Իտալիա՝ անդր քան զԱլպիս մուտ բերէ արշաւել ընդդէմ Պարթևաց՝՝ի վերադիմադրութիւն պարտութեանն Կրասոսի, կարծի՝՝ի պատմագրաց ոմանց գործօնեայ՝՝ի բնէ գոլ, և՝՝ի պատերազմունս գքաջողջութիւն[3] գտանել։ Եթէ ընդունի ընտրհակալեօք՝՝ի ծերակուտէն զպատիւ դասին, և տանի զայն խրոխտանօք, համարի առ՝՝ի ծածկել զպլուխ իւր ձաղատ։ Իսկ եթէ ընդ հարուածովք բարերարելոյն իւրմէ անկանի սրահողևող, համարի վասն Թէին ածելոյ զթագաւորութեան անկեալ, որպէս Թէ չէր նա մեծ քան զամենայն Թագաւորս առաջի ժամանակացայ իւրոց և առ յառագայ մարդկան։ Ի Սուէտոնեայ և՝՝ի Պլուտարքեայ և այլ՝ այսոքիկ են գծուծ մեկնութիւնք ընծայեալք ազնուագոյնից ձեռնարկութեանց։

Այլ՝՝ի իւիք զմեծութիւն ուրուք լոյծ չանապէշ։ Յինքնակալութենէ խորհրդոց նորա, ՝՝ի յաղթանակել իմաստից նորա և հնարից ընդդէմ մահու և պարտութեան։ Եւ չէիցէ՞ իսկ այս պահեալ հանձարոյ՝ յոչնչութենէ առնուլ կեանս, և տարածանել զիշխանութիւն իւր և՝՝ի վերայ ազգաց՝ որ գալոց են։ Կեսար ոչ ևս է՝՝ի միջի, այլ ազդեցութիւն նորա հզօրագոյն է քան առ կենդանութեամբ նորին։ Վիկերոն ասէ նորա ասել պիտի գոլել. «Զմեռեալն գործք կեսարու, գրուածք նորա, բանք, խոստմունք և խորհուրդք՝ զօրաւորագոյնք են յետ մահու նորա

1 «Եգ՝՝ի մոխ կեսար անցանել՝՝ի Բրիտանիա, որոյ բնակիչք զօրավիգն լեալ էին կելտաց գրեթէ յամենայն պատերազմունս նորա ընդ նոսա»։ Կեսար. Պատերազմ կելտաց. Դ. ի։

2 Սուէտոնիոս. կեսար. խէ։

3 Ապպիանոս. Քաղաքական պատերազմունք. Ա. ճԻ. 326. տպագր. Վենետկայիկ։

քան Թէ ՚ի կեանս »[1]։ Պարուց ՚ի գարս շատ իսկ էր ասէ՝այս էին կամք Աստուծոյ, և աշխարհ հնազանդէր։

Յաւուցէ ՚ի միտ առնուլ և զուշ նպատակն առաջարկեալ մեզ։ Այս է, ցուցանել զի յորժամ երկիւղած սեաչուԹիւն յարուցանէ որեար՝ որպիսի ոք Աստուած, որպիսի ոք Մեծն Կարոլոս, որպիսի ոք Նաբոլէոն, առ հարԹելոյ է առաջի ժողովրդեան Հանապարհ ընդ որ պարտ է նոցա գնալ, առ դրոշմելոյ զինիք հանձարոյ նոցա ՚ի Թուական նոր, և ածելոյ ՚ի տակաւ ան ՚ի կատարումն զերկիւ և զվաստակ դարուց բազմաց։ Երանի ժողովրդոյ՝ որ խնամուած լեալ՝ նոցին գՀետ գնացեն, և վայ այնոցիկ՝ որ ապախտաւար և դիմադարձ նոցա լինիցին։ Հանդերձ Հրէից խաչահանութ Մեսիային իւրեանց գտանիցին, գաչացութ և մեղապարտ. գաչացութ՝ զի չեռանեն զանբաւականութիւն Հգանց իւրեանց խափանելոց զլուսին յաղԹանակի բարուց. և մեղապարտ՝ զի յապաղեն ևԹ գյաւաչաղանիսն, խոչընդոտան եղեալ առաջի արագ արագ և բարեացաբեր ընԹացից նորա։

Ա՛տաւանիկ ոչ ապատութիւն Աեսարու, և ոչ գերութիւն ՚ի Սուրբն Հելինէ մարԹացան զերկրացուն ազգաց եղծանել ՚ի սպառ զերաւունս, զոր առ ժամանակ մի առ ոմն կոխեցին գաշնակից.ք պատերազմաւ ազատութեան։ Բրուտս ապանեալ զկեաւր՝ արկ զՀոմէր յարհասիս քաղաքական պատերազմի. և ոչ միայն էիարաց ազգել զանկախութիւն Աեզոտեայ, այլ և տեղի ետ Ներոնի և կալիգուլայի բռնակալութեան։ Եւ ոչ գաշնակցաց Եւրոպայ խեղեկոյտ վՀու ընդդէմ Նաբոլեոնի կարաց ազգել զվերականգնումն ինքնակալութեան. և ապայն քանի ՚ի բացեայ կամք ՚ի կարևոր ինդրոց անտի առնել զանգամանել, ՚ի կրկին Հանդարտելոյ, յօրինաւոր փոխարինացն Հրէից ժողովրդեան առ Նախկին Ինքնակալութեամբ։

1 Կիկերոն. Եամսիան առ Ատտիկոս. ԺԴ. Ը։

*Ա. յապէս ՚ի 1813 ամէ և այսր կանխապատրաստակ բանիւ կա-
լանաւորին ՚ի Սուրբն Հեղինէ Ձշմարտին ատեանք. «Քանի՛
մըցուԹեանց, քանի՛ Հապաղեայ արեան, և շարից աման չկայեն
պէտք՝ մինչև յարդիւնս գալ բարեացն, զոր ըղձայի առնել
մարդկուԹեան»* [1]:

Արքունիք Դիւյոլերի ՚ի 20 Մարտի 1862:

ՆԱՓՈԼԷՈՆ

1 Արգարև քանի՛ յուզմունք, քանի՛ անհաւան պատերազմունք և յեղափոխու-
Թիւնք յԵւրոպա ՚ի 1813 ամէ և այսր, ՚ի Գալլիա, ՚ի Սպանիա, Իտալիա, ՚ի
Լեհաստան, ՚ի Բելգիա, ՚ի Հունգարիա, ՚ի Յունաստան, ՚ի Գերմանիա:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՅՈՒԼԻՈՍԻ ԿԵՍԱՐՈՒ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԹԱՄԱՆԱԿ ՀՌՈՎՄԱՑ ՅԱՌԱՋ ՔԱՆ ՋԿԵՍԱՐ

ԳԼՈՒԽ Ա.

ՀՌՈՎՄ ԱՌ ԹԱԳԱՒՈՐՕՔ

Ա. Թագաւորաց սկզբնաւորել զհռովմէական տէրութիւն:

«Ի սկիզբն քաղաքաժողով ընկերութեանց, ասէ Մոնդէսքիէօ, էշխատեցայ հաստատակամութեան է կարգել զահմանադրութիւնս, և ապա տահմանադրութեան կարգել զնշխանս Հաստատութեան»: Եւ յաւելու. «Ի պատճառաց յաջողութեան Հռովմայ մի և այն է, զի Թագաւորքն նորա առ հաստատակ կացին առը երևելիք: Զգուշանալիք այլ ուրեք՝ ի պատմութեան և ոչ ի՝ այնքանոյ քաղաքագէտ որերոյ և զօրասէր տաց այնպիսեաց յաջորդութիւն անբնդհատ»[1]*:*

Վէպք հիմնարկութեան քաղաքին Հռովմայ՝ շատ իսկ առասպելապատում, չմտանեն ի պատիկս այսր առ ի մէնջ առաւելագծեալ: Զանոց զկնի ջնջեալ զորս առասպելեն վէպք նախնի ժամանակացն այնոցիկ, յուշ առնեմք և եթ զի Թագաւորք արկին զհիմունս կարգաց՝ որ եառն Հռովմայ զմեծութիւն իւր և այնքան որեար նշանաւոր, որք զարմա-

[1] Յղ. մեծ. և անկ. հռովմ. պետութեան:

ցուցին զաշխարհն առաքինութեամբք խրեանց և քաջութեամբք։

Թագաւորութեան տեսեաց անդ զամն չորեքարիւր քառասուն և չորս, և յանկանել նորա՝ էր իսկ Հռոմի հզօրագոյն՝ ի պետութեանս Լատինի։ Ընդարձակ էր տարածութեան քաղաքին. զի՝ ի ժամանակէ անտի բլուրք նորա եօթանեքին առ հասարակ զոգեբ փակէին պարսպաւ, ներքոյ և արտաքոյ պատապարեալ սրբավայրիւ՝ զոր Բոմերիում կոչէին[1]։ Ելջապատս այս էկաց ճնոյց ընդերկար նոյն, Թէպէտ՝ ի բազմանալ ժողովրդեան յաւելան արուարձանք լայնածաւալք՝ որ՝ ի տատ՝ ինքերթս փակեցին և զնուխրական վայրսն[2]։

Ընդէկ Հռոմէական երկրին տարածութեան անձուկ էր յոյժ, այլ հպատակաց Հռոմայ և գաշնաւորաց արդէն իսկ ընդարձակ։ Քանզի ժողովուրդք ոմանք գաղթականութեամբ եկեալ հաստատեալ էին անդ զխրեանց բնակութիւն. և Թագաւորք Հարտար քաղաքավարութեամբ խրեանց յաջողեալ ձգէլ՝ ի հնազանդութիւն զբազումս՝ ի մօտաւոր ազգաց. և յորժամ Տարկունիոս Գաւազ խնդէր զՀերնիկս, զՎատինացիս և զՎոլսկեանս՝ ի հանդէս գաշնադրութեան ընդ իւր, քառասուն և եօթն ազգաց գաղութք կցորդ եղեն նաւակատեաց տաճարին Սրտամիդայ Լատինի[3]։

Հիմնարկութիւն Ռոմեայ յաւուրս Անկոսի Մարկեայ՝ ի

1 Տիտոս Լիւիոս· Ա· ԽԴ։ — Դիոնեսիոս Ալիկառնացի՝ ի խօսել զգաստութեան քաղաքին՝ որ ձգէին՝ ի գրանոյ անտի Եսկուլինեայ ցԿոլլինա՝ ասէ· «Ամրացեալ է Հռոմ խրամով երեսուն ոտնաչափ՝ ի խորութիւն, և աւելի քան զՀարիւր՝ ի լայնութիւն՝ յանձկագոյն խակ վայրս։ Խակ՝ ի վերոյ խրամոյս ամբառնան պարիսպք՝ հաստատեալ՝ ինձրգուաս բարձրաբերձ և մեծաստուած հողաբլրօք, որ ոչ մանգլոնօք ստապալին, և ոչ խրամաձութեամբ կործանին»· Հնոսլիան հռովմէական· Թ· ԿԸ։

2 «Ի ժամանակէ անտի (Սերուխոսի Տուլլեայ) չէր լինչ ընդարձակեալ Հռոմ... և եթէ՝ ի տեսիլ քաղաքին համարէր ոք խնչամաձել մեծութեան նորա՝ սխալէր ստոյգ, զի չկարէր՝ ի միտ առնուլ ցոր վայր տարածանէրն և ուր սահմանք վասն արուարձանեայցն՝ ի քաղաք անդր չորոյտարկեալ...։ Մինչև ցժամանակ արքայութեան Կլաւդեայ՝ Թէպէտ և յաւելեալ էր՝ ի բազմութիւն Թիւ բնակչաց քաղաքին, սակայն Վեսպեսիան տեսանէր կայր՝ ի սրբավայրէն»· Աւլոս Գելլիոս· Բ· ԺԳ։— Դիոն· Ալիկ· Դ· ԺԳ։

3 Դիոն· Ալիկ· Դ· ԽԳ։

բերան Տիբերի հաւատաւ Թէ անդամին ի միտ առնուին զքաղաքական և զառաքեալիկ շահս օգտից դիւրեաւ կցորդու-
Թեամբ ընդ ծովուն։ Դարձեալ և դաշինք կռեալք ի վաճառականութիւն ընդ Կարթեդոնի յանկանել Թագաւորութեան՝
զոր մանրապատում առնէ Պոլիբիոս, ցուցանեն հաղորդու-
Թիւն ընդարձակագոյն քան զոր մարթ էր մեզ կարծել՝։

Բ. Յօրինուած քաղաքական կարգաց։

Քաղաքաժողով ընկերութիւն հռովմէական սկիզբն առեալ՝ որպէս հաւանելի է ի յեզափոխութենէ վաղեմի ընկերութեանց, կազմէր վաղ ուրեմն ի խմբից մարդկան՝ որ
Ցեղքն կոչէին. զումարեալ ի տանուտէրական տոհմից, նամանաւանդ իմն բերել զցեղապետութեանց Ակուխից կամ Արբացւոց։ Նահապետք տոհմից տանուտեարք, և իրա-
քանչիւր ոք ի նոսա Պատրիկք՝ ոչ միայն ազգախտանութեամբ հաւասարէին ընդ միմեանս, այլ և քաղաքական և կրօնական յօդիւք։ Եւ ասի ապա ազնուականութիւն որպէս ի հօրէ անցեալ ժառանգութեամբ, ունելով նշանակ զանուն տոհմին, և զգեստուց ձև[2] ուրոյն, և անդրիս մահեղին գնահատեաց։

Ոտանիկն՝ Թերևս վաղ իսկ ընդ լծով հնազանդութեան նուաճեալ, այնպէս էր առ ցեղն իշխող, որպէս Անգլ-Սաքսոնք առ Նորմանս ի մեռասանեցորդ դարու մերոյս Թուականի՝

1 «Դաշնագրութեամբս այսուհետ Հռովմայեցիք և դաշնակիցք նոցին երդուան ոտն միմեանց՝ մի նաւել քան զԽրուանդեան Գեղեցիկ. (որ է սարսուռնդ ի հիւսիսային կոյս յանդիման Կարթեգոնի, որ կոչի այժմ ի նաւամատոյց՝ սարսուռնդ Բորդա-Ֆարինոյ)։... Իսկ Կարթեգոնացիք խոստուին ոտն զգուշանալ երբեք Ժողովրդոյն Արուէացւոց, Անտիացւոց, Լաբրենտիացւոց, Կիրկէացւոց, Տերրակինացւոց և ամենայն ազգաց լատինացւոց՝ հպատակաց Հռովմայ». Պոլիբիոս. Գ. իբ։

2 «Տարկուինիոս Երէցն՝ ի կարգելն կանխաւուեստութեամբ Հարտար քաղաքավարութեան ոտհմանս պայմանի քաղաքացւոց, ոչ անհոյթ արար և զատրազգեստուց ազատորդւոց, հրամայեալ տանել նոցա շինչ ոսկի և պատմուճան եղրածիրանի. բայց նոցին միայն, որոց հարք ընդ պաշտամունս առենակալութեան էին անցեալ. իսկ այլոց տանել զեղրածիրանին եւեթ, այլ և նոցին իսկ հարց պարտ էր զի առ ժամանակ մի զինուորեալ էին ի հեծելազօրուն». Մակբոլիոս. Աստորինական. Ա. Զ։

յարշաւել նոցա Յանգղէս։ Հոդապարծք էին սոքա առհասարակ, անմատոյց ի զինուորական աւագութիւնս և ի բարձ քաղաքական[1]։

Ազնուականաց տոհմք ժողովէին զիւրեամբք յեկից անտի և յառաջէն որպէս սահս իւրեանց։ Դիտեիս Ալիկառնասցի հաճարի պատուիրեալ ի Հռոմուլեայ՝ իւրաքանչիւր ումեք ի ռամկէն ընտրել իւր ոք պաշտպան[2]։ Սակայ գործ էր միակու- թիւն երկրի, և հաճարէին զերդաստանիկք[3]։ Պաշտպանու- թիւնս այս պարտս էին ածէր նոցա փոխադարձս՝ որպէս աղ- գակցաց։ Պաշտպանից պարտք էին ձեռն օգնականութեան կարկառել յառաջին և ի հասարակաց գործառնութիւնս սակաւ իւրեանց. և նոցա մի վերջանալ ի սպաս հարկանելոյ տեառց իւրեանց անձամբ և ընչիւք, և պահել հաւատարմու- թիւն անդրժելի։ Ոչ կարէին սոքա քարշել զիրարս յառեան, վկայութիւն տալ հակառակ միմեանց. և ի գայթակղութեան սակի էր տեսանել զնոսա երկպառակեալ ի քաղաքական վէճս։ Կարգս այս չէր ինչ աննման կալուածական իշխանութեան. աւագտէրն պաշտպանէր զանաւագ մարդիկ, և սոքա փոխա- նակէին այնմ տարեւոր հասիւք կալուածոյ և ծառայութեամբ. սակայն խոհր մեծ այս էր, զի սակք չէին տրուկք՝ այլ ազատք։

Ստրկութիւն՝ ի բազմաց հետէ կարեւոր մասն էր բազկա- յու քաղաքաժողով մարդկութեան։ Ստրուկք յեկից և ի գե- րեաց[4] պատերազմի, հաղորդեալք ամենայն առանձին վաստա- կոց ընտանեաց, ընդունէին յաձախ ազատութիւն ի վարձ ծա- ռայութեան իւրեանց, և որպէս ազատագրեալք հաճարէին սակք տեառց իւրեանց՝ առանց վայելելոյ յամենայն իրաւունս քաղա- քացւոյ[5]։

1 «Ռամիկն մերժեալ յամենայն պաշտամանց՝ յերկրագործութիւն եւեթ պա- տակեր և յանգիստ գալման և ի տուրնատիկ վաճառաշահութիւն». Դիոն. Ա- լիկառն. Բ. Թ։ — «Իրաւնտրեր Հռոմա զերկրագործս ազատս առնելով զնոսա ի զինուորութենէ և ի քաղաքական յանձանձանաց». Անդ. Բ. Հզ։

2 Բ. Թ։ — Պլուտարքոս, ի Հռոմուլս. ժե։

3 «Արտարիից բաժին յանձն էր սինկքոր մարդկան». Փեստոս, ի բառն Հոր. էջ 246. տպ. Միւլլէր։

4 Դիոն. Ալիկառն. Դ. ԽԴ։

5 Խնդիրք ներհուանք եղէն զայսմանէ, այլ մեք մտադիր ընթերցմամբ մատե-

ՅԵՂ ԻՍԱՔԱՆՉԻՒՐ ԿԱՉՄԵՐ Ի ՄԻԱԲԱՆՈՒԹԵՒՆ ԱՀՈՒԱԿԱՆ ՏՈՀՄԷՆ՝ ՈՒՆԵԼՈՎ ՆԱՀԱՊԵՏ ՀԱՅԱՐԱԿԱՑ, ԵՒ ՇՈՒՐՋ ՁՆՈՎԱՒ ԼՄԲԷՒՆ ԲԱԶՄՈՒԹԻՒՆ ԱՆԿԷ, ԱԶԱՏԱԶՐԱՑ ԵՒ ՏՐԿԱՑ։ ԱՌ Ի ՏԱԼ ԾԱՆՕԹս ԼԻՆԷ ՊՅԵՂԷՆ ԹԷ ՔԱՆԻ ՀԶՕՐՔ ԷԻՆ Ի ՆԱԽԿԻՆ ԴԱՐՍ ՀԱՅՈՒՄՆ, ՇԱՏ ՀԱՄԱՐԻՄ ՅՈՒՇ ԱՌՆԵԼ ԶԻ Ջ251 ԱՄԱՒ ՀԻՆՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԷՆ, ԱՏԱՏՈՍ ՈՒՆ ԿԼԱՒՏՈՍ, ՈՐ ԱՊԱ ԱՊՊԻՈՍ ԿԼԱՒՏԻՈՍ ԿՈՉԵՑԵԱԼ, ՍԱԲԻՆԱՅԻ Ի ՀԱԲՊԻԼԵԱՅ ՔԱՂԱՔԷ, ՏՈՀՄԻԿ ԵՒ ՄԵԾԱՓԱՌԹԱՄ, ՈՐՊԷՍ ՎԿԱՅԷ ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱԼԻԿԱՌՆԱՑԻ, ԶԱՅՐ ԱՊԱՍՏԱՆԵԼ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑԻՍ ԱԶԳԱԿԱՆՈՅ, ԲԱՐԵԿԱՄՈՂ, ԱՆՀՈՒՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԸՆՏԱՆԵՕՔ ՆՈՅԱ ՀՆՈՂ ՀԱԶԱՐ ԱՐԱՄՔՔ՝ ՈՐ ԿԱՐՈՂ ԷԻՆ Ի ՊԱՏԵՐԱԶՄ [1]։ ԵՒ ՅՈՐԺԱՄ Յ275 ԱՄԻՆ ԵՐԵՔ ՀԱՐՒՒՐՁԱՆ ՓԱԲԻՈՍԵԱՆՔ՝ ՅՈՐՈՅ ԿԱՉՄԵՐ ՅԵՂԱՆ ՓԱԲԵԱՆ՝ ԿԱՄԵԱՒՆ ՏԱԼ ՄԻԱՅԱԿ ՄԱՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԴ ՎԷՅԱՅԻՍ, ՉԵԱՐ ՉՆԱՅԻՆ ՆՈՅԱ ՄԱՆՔ ՀՈՐԵՔՀԱԶԱՐ [2]։ ԲԱՑԱՌԱՄ ԱՅՆ ԷՐ ԶԻ ԱՉՆԱՒԱԿԱՆՔ ԿԱՏԱԿԵՑՈՒՔ ԻՐԵՒԱՆՑ ԱՄԵՆԱՅՆԻ ՁԵՌՆՀԱՍ ՁԻՆՔԵԱՆՍ ՀԱՄԱՐԵՒՆ։ 3286 ԱՄԻՆ ՅԱՆԱՏԱՏԵԼ ՌԱՄԿԻՆ ԶԱՒ Ի ԺՈՂՈՎ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԲՂԵՇԻՑ, ԱԶԱՏՈՐԵԱՑՆ ՄԻԱԽՈՒՄԲ ԸՆԴ ՍՈՒՆ ԻՐԵՒԱՆՑ ԸՆՏՐԵՑԻՆ ԶԲՂԵԱՇԻՍ [3]։ ԻԿ Յ296 ԱՄԻՆ ԿԼԱՒՏԻՈՍ ՈՒՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՏԱՑԵԱԼ ԱՍԵՐ ԹԷ ԱԶԱՏԱՆԻՆ ՉԷ ԿԱՐԵԱՆ ՌԱՄԿԻՆ ԱՌ Ի ՏԱԼ ՊԱՏԵՐԱԶՄ ԸՆԴԴԷՄ ՎԱԼԿԵԱՆՑ [4]։ ՏՈՀՄԲ ՎԱՂԵՄԻԲ ԿԱՑՈՒՑԻՆ ԸՆԴԵՐԿԱՐ ԻՐԱՒԼԻ ԱՒԵԼ ԶՍԵՐՄՈՒԹԻՒՆ։ ՆՈՔԱ ՄԻԱՅՆ ԿՈՉԵՑԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ [5], ԵՒ ՀԱԶԱՐԱԿ ՄԱՐԴԻԿԻՆ՝ ՌԱՄԻԿ [6]. ԵՒ ԹԷՊԵՏ ՅԵ-

ՆԱՊՐԱՑԻՆ ՊՈՖՈՐ, ՆԱՊՈՒՏՐ, ԿԷՕԹԼԻՆԿ, ՏԻՒՐԻՒՅԻ, ՄԱՐՊԱՐԱՑ, ՄՈՄԱՅԻՆ, ԼԱՆԺ, ԵՒ ՕՅԼՈՑ, ԽՈՅՍ ՍՈՒՏԱԼ Ի ԿԱՐԾԵԱՑԻՆ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆՔ՝ ԸՆԿԱԼՈՒՔ ՈՐ ՍՈՒՏԱԼ ՀԱՒԱՆԵԼԻՆ ՄԵԶ ԹՈՒԵՑԱԼ։

1 ԴԻՈՆ. ԱԼԻԿԱՌՆ. Ե. Խ։ — ՏԻՏ. ԼԻԼ. Բ. ԺԶ։

2 ՏԻՏ. ԼԻԼ. Բ. ԽՀ։ — ԴԻՈՆ. ԱԼԻԿԱՌՆ. Թ. ԺԵ։

3 ՏԻՏ. ԼԻԼ. Բ. ԿԴ։

4 ԴԻՈՆ. ԱԼԻԿԱՌՆ. Ժ. ԺԵ։

5 «ՎՃԻՌ. ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԿՈՉԵՐ ԱՄԵՆԱՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՈՍՓԱՐԿԵԱԼ Ի ՄԻՈՅ ՈՒՄԵՔ ՅԱՅՆՄ ՌԱՄԿԻՆ»։ ՏԵՍ Ի ՓԻԼՈՍ, Ի ԲԱՌՆ ՎՃՌ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ. ԷՋ 330։ — ՏԻՏՈՍ ԼԻՒԻՈՍ Ի ԽՈՍԵԼՆ ՉՈՍՄԻԱՊԵՏՈՍՑ ԳՆԵ Ի ԲԵՐԱՆ ԱՊՊԻՈՍԻ ԿԼԱՒՏԻՈՍԻ ՉԱՅՍ ԲԱՆ. «ՉԻ ՈՉ ԼԻՔ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ, ՅԼ ՌԱՄԿԻՆ Է ՆԱ ԽՂՃԱՆ»։ Բ. ԺԶ։

6 «ԿԱՉՄԵՐ ՌԱՄԿԻՆ Ի ՄԱՆԵ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ՝ ՈՐ ՈՉ Ի ԾԵՐԱԿՈՒԱՏԻՆ ԷՐ ԵՒ ՈՉ ՅԱՋԱՈՐԿՈՅ»։ ՓԻԼՈՍ, Ի ԲԱՌՆ ՎՃՌ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ։

տոյ ուրեմն ընդարձակապէս կալաւ նշանակութիւն բառս ժո-
ղովուրդ, սակայն ըստ Կիկերոնի չէր պարտ իմանալ այնուհետ
զընական աւ հասարակ, այլ զմիաբանութիւն մարդկան զօրե-
լոց ՚ի միասին հաւատալ իրաւամբք և շահու[1]:

Գ. Յօրինուածոյն քաղաքական:

Յաչխարհի, յորում պէտք զօրք էր պատերազմի, պարտ
էր քաղաքական յօրինուածոյ զինուորականին հպատակել:
Մինչ միապետ իշխանն՝ անկ էր գերագոյն տեսչութիւն, միա-
բանութեան ատազդելոյ և ծերունեաց՝ խորհրդականութիւն,
և կրելեաց զգիտունս մարտի՝ իրաւունք քաղաքական: Թագա-
ւոն ՚ի հանախումբ ժողովոյ ցեղիցն[2] *ընտրեալ՝ հրամանատար*
էայր զօրուն: Քրմապետ էր, օրէնադիր և դատաւոր ՚ի կրօնա-
կան խնդիրս աւ հասարակ. նմա անկ էր դասել[3] *և զանցու-*
ցեալս ընդդէմ հասարակապետութեան: Ի նշանակ իշխանու-
թեանն կրէր նա Թագ ոսկի և հանդերձ ծիրանի. նուիրակք
քան և չորս[4] *երիվարելոյ նորա, կիսոց ՚ինոցանէ բար-*
ձեալ տապար շուրջ պատեալ մահակօք, այլոց խուրձ ևեթ

1 «Խակ ժողովուրդ ոչ զամենայն մարդիկ է համարելի՝ որով և ոչ է օրինակաւ համախմբեալ, այլ զբազմութիւն համաձայնութեամբ իրաւանց և շահակցութեամբ ընկալեալ»· Կիկ· Յղ· Հասարակապետ· Ա· իե:

2 «Ժողովուրդն վիճակաց համախմբութեամբ կացուցեալ էր զինա (զՆումա) Թագաւոր: ՋՏուլլոս Ոստիլիոս, ըստ խնդրոյ եռելակալ իշխանին, ժողովուրդն գումարեալ առեան՝ կացոյց Թագաւոր: Յետ Թարկուինեայ՝ Սերուիոս կոչեաց առեան ժողովրդեան, և ՚ի բաց առեալ զիշխանութիւն ՚ի վիճակաց՝ հրամանաւ զի օրինք Թագաւորեացն յայնմ հետէ»· Կիկ· Յղ· Հասարապետ· Բ· ԺԳ· իԱ:

3 «Թագաւորք յառաջ քան զՍերուիոս Տուլլիոս զամենայն դասս քաղաքացւոց յաւենի իւրեանց տեսանէին, և զամենայն վիճից զՀասարակաց և զքաղաքացւոց՝ ըստ մեծ իւրեանց տալին վճիռ: Խակ Սերուիոս զասոյց զերկուսին զոյսոսիկ, և պահեալ իւր զիշխութիւն նոցա՝ որ յօգուտ տէրութեան հայէին, զսոսկականաց վէճս ևԹող այլոց դասուցոց, բայց միայն հրամայեալ դասել նոցա ըստ օրինացն տուելոց յինքեմէ»· Դիոն· Ալիկառն· Դ· իե:

4 «Բղեսաչիք՝ որպէս երբեմն և նախկին Թագաւորք, ունէին երիտասան նուէր բախս ոսկրատուրս, և երիտասան մահակակիրս»· Պլուտարքոս, Պոպլիքովղան· Աոբոց· ժե:

մահակաց[1]։ Ի մեռանել ալքայի ընտրէր ոք ՚ի Ծերակուտէն տեղակալ՝ վարել զիշխանութիւն ալքոնի զաւուրս հինգ, մինչ չև ցընտրութիւն նորոյ Թագաւորի։ Պաշտօնս այս պահեցաւ նոքին ամուսոք և առ բղեշխիւք ՚ի հաստատակամութեան, յորժամ առ հեռաւորութեան բղեշխիցն խափանէր գումարումն քաղաքացւոց։

Ծերակոյտն ՚ի մեծահարուստ և ՚ի տոհմիկ պատրիկաց՝ ՚ի սկզբան ՚ի հարիւրոց, և յետ ազգախառնելոց ընդ Սաբինացիս՝ յերկերիւրոց, և առ Տարկունեաւ յետ ընդունելութեան փոքր ցեղապետութեանց՝ յերեքհարիւրոց, հոլմնէր յառեան յանձանձել զնրա քաղաքին, յորում բովանդակէր յայնժամ աւերեայն շահ օգտի տէրութեանն։

Սկզնաւորապէս պահեալ էին բարձք աւագութեան և ազնականութիւնք. նոցա էր բառնալ զաւերեայն ծանրութիւնս պատերազմաց, որով և ինքեանց էր միայն իշխանութիւն քուէից տալոց յազգախոսսն ժողովս։

Ցեղք յերիս գունդս բաժանէին, իւրաքանչիւր ունելով իւր հազարապետ[2]. առ Հռոմուլեաւ պարտ էր նոցա ունել հազար այր հեռւակ, (վասն որոյ և Հազարապետք կոչէին), և հարիւր հեծեալ։ Եւ իւրաքանչիւր ՚ի գնդից զաւանէր ՚ի տան վիճակս, և մին ՚ի տասանցն ունելով իւր պետ։ Երից գնդից այսոցիկ տալով երիս հազարս հեռւակաց և երիք հա-

1 « Ցետ այնորիկ Տարկունիոս Երէցն կրկեր Թագ ոսկի և պճնաւոր աղնեցուած ծիրանի և գաւազան ալքունի վղոսկրեայ՝ զամենայն աւուրս կենաց իւրոց. և գահոյք ևսկ վղոսկրեայք էին նորա։ Ի նստել նորա յատեան և ՚ի գնալ ընդ քաղաքն երիթային յառաջ նորա երկոտասան նուիրակք սակրաւորք, շուրջ զամենքեան մահակք։ (Դիոնեսիոս ոչ յաւելու զայլ երկոտասան նուիրակս՝ մահակիկս միայն)։ Իբրև մերժեցան Թագաւորք ՚ի Հռոմէ՝ վարէին և բղեշխք տարեալք նոքօք, բայց ՚ի Թագէն և յեղբածիրանեաւն։ Բարձան ՚ինոցանէ երկոքին ևէթ նշանակքս պատուոյ, զի առեալ էին և անչաճոյ ժողովրդեան։ Այլ ոչ ՚ի տպաւ անհետ եղեն. զի ՚ի կանգնել նոցա ՚ի պատերազմի ուրեք յաղթութեան՝ յորժամ տահմանէր նոցա ծերակոյտն պատիւ յաղթանակի, տանէին նոքա զարդս տակելէնս և ծիրանի տաղնեզործ »։ Դիոն. Ալիկառն. Գ. կԲ։

2 « Զօրականք Հռոմուլեայ երիք հազարք զաւուցան յերկս խումբս », (որք ՚ի լատին բարբառ. կոչէին Դէքուրս)։ Դիոն Կասսիոս. Հատած ԺԴ։ — Դիոն. Ալիկառն. Բ. է։ — Պլուտ. ՚ի Հռոմուլոս. ԻԵ։ — « Ասի և հազարապետք զօրաց կոչէցան Տրիբունք »։ Վարրոն. Յշ. լատին բարբառոյ. Ե. 2Ա. էջ 32. տպ. Միւլլերի։

լիւր այրուձիոյ, ՚ի տոյանէ կազմէին յայնժամ լեգէոնք։ Եւ ընդ հուպ կրկնապատկէր Թիւ տոյ՝ յաւելուլ նորոց քաղաքաց ՚ի սեռս Թիւնն[1]։ Վիճակ՝ որ և Կոչիտա լսի՚ի հռովմէական բառ, մանն էր ցեղիցն, և էր յայնժամ հիմն քաղաքական և զինուորական կարգադրութեան, որով և հռովմէական ժողովուրդ Կոչիտեանք կոչեցան։

Ի վիճակացս ասի կազմէին ընկերութիւնք կրօնականք, ունելով իւրաքանչիւր տօնախմբութիւնս և կոչումս, որ և հատ ատեն ՚ի նոսա զօր էին որդեգրութեան։ Յորժամ զքաղաքական ինչ խնդրոյ խորհուրդ ՚ի մէջ առնուին, մէն մի առանձին տայր քուեայ[2], սահմաներ անդ խաղաղութիւն կամ պատերազմ, ընտրէին առեռակալք քաղաքին, հաստատէին կամ խափանէին օրէնք[3]։

Բողոքել առ ժողովուրդն՝[4] որ կարող էր եղծանել զվճիռ առեռակալաց՝ էր այլ ինչ, բայց բողոքել առ վիճակս։ Ա՛ռ առ ատ դիմելով երբեմն՝ յետ դատաստանի երկապետաց՝ ապրեալն Յովբատեան եղբարց, եգիտ զիւր փրկութիւն։

Խորագէտ վարչութեան Թագաւորաց էր ձուլել ՚ի մի զբազմացեղ մարդկին, և տապալել զմիջնորմն որոշիչ այլ և այլ դասուց։ Ի յաջողութիւն առաջնոյ խորհրդոյն զատուցին զՀատարակ ժողովուրդն ՚ի խումբս խումբս[5] բազմացուցեալ զԹիւ հազարապետաց, և փոխեցին զկարգ նոցա և զօ-

1 Դիոն. Ալիկառն. Բ. Ն։ — Բազմագիմի մեկնութեամբ խնդրեցին բազումք զայլ զինչանակ Կուրիա բառիս. ոմանք ՚ի լատին բառէս գՒրա, որ նշանակէ՝ հոգաբարձութիւն կամ վիճակ. ոմանք ՚ի Կուրէս քաղաքէ, կամ ՚ի Քիրիոս յուշանան ձայնէն որ Տէր լսի, և այլք այլազգ. բայց առաւել հաւանական Թուի ՚ի Քուիրիս բառէն՝ որ Տէգ նշանակէ. (Դիոն. Ալիկառն. Բ. ԽՀ. և Պլուտ. ՚ի Նոմա. ԽՇ.) զի այսու մեկնութեամբ լմանամբ զՀամանիշ բացատրութիւն ինչ մանաւանդ յԱնդրեայ գարուն, որ փէգ բառիս զնուրբ տիպատորայ լմանայլին։ Եւ զի գլխաւոր պատճառ կազմելոյ խմբից այնոցիկ կոչեցելոց Կուրիա՝ էր պատրաստել զունդս քաղաքացւոց զինելոց, մարթ է ապա համարել զնոյն փոխանակ տիպատորայ։

2 Տիտ. Լիւի. Ա. ԽԳ։

3 Դիոն. Ալիկառն. Բ. ԺԴ. և Դ. Ի։

4 «Սովորոյթ բողոքելոյ առ ժողովուրդն հայր և առ Թագաւորաբ. զոր օրինակ առաանելք ՚ի մատեանս քրմապետաց»։ Կիկ. Ցչ. Հատրոյ. Բ. ԼԱ։

5 Պլուտարքէ ՚ի Նոմա. ԺԵ։ — Պլին. Բն. Պատմ. ԼԴ. Ա։

լինա[1]։ Եւ առ ի ձեռս բերել զերկրորդն՝ ի մեծ տհաճութիւն ազատանւոյն մուծին զառաքեալն ի դաս պատրկայ[2] և զձերբասլատս ի կարդ քաղաքացւոց[3]։

Ապա ակն ածեաց Թիւ բազմութեան վիճակաց իւրոցն, և քանիցս ժողովել զսա պէսպէս՝ պատրիկք չքաւոյք գնէին Թուով զձոխս։

Սերուխս Տուլլիոս պահեալ զվիճակն՝ եբարձ ի նոյանէ զինուորական կարգաւորութիւն, այսինքն է արկեալ մի ևս ի նոյանէ առնուլ սկիզբն զօրաժողովոյ։ Կարգեաց զհարիւրեակս կրկնապատիկ խորհրդով. առ ի տալ երաւունս ընտրոյ առնոյն քաղաքացւոց, և առ ի զումարել բանակ առաւել ազդային՝ խառնելով ինոսա և զառաջին։ Կամէր զարձեալ արկանել զպարտս պատերազմաց ի վերայ ձոխից[4], որպէս արդարոյն իսկ էր, առն առն ծախիւք իւրովք զինուորել և հայթհայթել զնոշակ իւր։ Ոչ ևս այնուհետև զաւակարգութիւն քաղաքակցաց լինէր ըստ ցեղից, այլ ըստ գոյից։ Սկզնական ընդ առաջին ի նոյն կարգ դասէր, եթէ հաւասար էին հասք նոցա։ Ապաքէն ընչեղապատնէին ազդեցութիւն զօրանային, այլ ըստ չափու տրոյն պահանջելոց ի նոցանէ։

Սերուխս Տուլլիոս հրամայն հանել աշխարհագիր առնել ամենայն ժողովրդեան, և ամենայն ունէք պարտք էին յայտնել գնաւակ իւր, գգոյս, զանուն ազգատոհմի և գհօր, գթիւ որդւոցն և զարուկաց, որ և ազգահամար կոչեցաւ[5]։ Եւ գրեր ազգահամարս

1 «Սերուխս Տուլլիոս ոչ ևս վարեր ըստ վաղնջուց կարգաց էրից գնդից որշելոց ըստ ազգի, այլ ըստ չորից կարգելոց ատա յիւրմէ ըստ Թաղից»։ Դիոն. Ռվիկ. Դ. ԺԴ։

2 Դիոն. Ռվիկ. Դ. ԽԱ։ — Տիտոս Լիւիոս. Ա. Նե։

3 Դիոն. Ռվիկ. Դ. ԽԲ։

4 Դիոն. Ռվիկ. Դ. ԺԹ։ — «Արկ Սերուխս Տուլլիոս այսու հնարիւք զամենայն ծանրութիւնն ծախուց և վտանգաց պատերազմի՝ ի վերայ մեծատանց»։ Դիոն. Ռվիկ. Դ. Ի։

5 «Որպէս նուամա օրինագիր էհաց կարգաց կրօնից, ըստ այմ և առ յառաջ եկեալ ազգ՝ իրաւամբք հոչակեաց զՍերուխս հեղինակ կարգաց՝ որ որշեն ի հարարակաբերութեան զնակիր առանձանի, պատուոյ և գոյից։ Նա ինքն հաստատեաց զազգահամար՝ զօգտաւետագոյնն քան զամենայն սահմանադրութիւնս ժողովրդեան, որում առաջի հայր յայն մեծութիւն ամբառնալ։ Ոչ ևս մարդկան, այլ գոյից լինէր հրաւէր ի յանձանձառս տէրութեան։ Ազգահամարաւն կացու-

ԳԱԱ ԳԱԱ Գրադարան Ե. Ա. Աղայան 673 – 2009 Ա 1801 Ա 4

այս 'ի տախտակս[1], և 'ի կատարել նորին այր այր քաղաքացի էին 'ի ձեռին գայր ժողովել 'ի գաշան Ա.րիսեան։ Հանդէս այս զօրականին կոչէր Լրուալի Քաւութեան, զի զոհիւք և քաւութեամբք կատարէր. և ատի էառ գլորջորջումն քաւութեան միջոց հնդից ամայն 'ի միջէ 'ի միւս ազգահամարն[2]։

Քաղաքացիք զատուցան 'ի վեց դաս[3], և 'ի հարիւր լինելն և երեք հարիւրեակս՝ ըստ գոյից իւրաքանչիւր, 'ի ձոխագոնից 'ի յետին աղքատն։ Առաջին դասն բովանդակէր լինելն և ութ հարիւրեակս, յորոց ութևտասունքն ասպետք էին. երկրորդն և չորրորդն՝ քսան և երկուս. երրորդն՝ քսան. հինգերորդն՝ երեսուն. վեցերորդն՝ թէպէտ և բազմաթիւ քան զայլս, բայց ի նէթ բովանդակէր հարիւրեակ[4]։ Առաջնումն դասու՝ յոր նուագապետն էր թիւ քաղաքացւոց՝ այլ ի յոլովաթիւ էին 'ինանց հարիւրեակք, պարտ էր հատուցանել աւելի քան զիւէս հարիւց, և պատրաստել լեգէոնականս քան զայլս ամենեսեան։

Եկաց ճեպ նոյն սովորութիւն հաւաքելոյ զբուեայս ըստ

յանէր 'նս զդասակարգս, զհարիւրեակս և զկարգաւորութիւնն որ փոյթ 'ի խաղաղութեան էին հանելոյ և զօրութիւն 'ի պատերազմի»· Տիտոս Լիւիոս· Ա· ԽԹ։

1 Դիոն· Ալիկ· Դ· ԺԶ։

2 «Աբրուխոս Տուլիոս նէրև 'ի գլուխ եհան զազգահամարն՝ հրամայեաց զալ ժողովել քաղաքացւոց առ հասարակ վառեալ 'ի զէն և 'ի զարդ պատերազմի 'ի դաշտ անդր ընդարձակագոյն մօտ 'ի քաղաքն, և կարգեալ գայրուձին 'ի վաշտս վաշտս, զհեռւակազօրն 'ի փողանդս, և զթեթևազէնն զօրականն 'ի պատշաճական իւր ատգի, էառ առնել 'ի վերայ նոցա քաւութիւն՝ զենլով ցուլ մի և խոյ և նոխազ։ Հրամայէր շուրջ զբանակաւն ածել զզոհն, և ապա մատուցանել Ա.րեսի, որում՝ և գաշան էր նուիրեալ։ Անտի և այսր պատկառ կացին միջտ հռովմայեցիք 'ի կատարումն պաշտամանն 'ի ձեռն սրբազոյն կարգի աւգուրաց՝ 'ի վախճան իւրաքանչիւր ազգահամարի, որ և քաւութիւն կոչէր։ Թիւ համարոյ հռովմայեցւոց հասանէր, ըստ նշանակելոյ 'ի տախտակս ազգահամարին՝ յ85,000 եւրեք հարիւրիւ նուազ»· Դիոն· Ալիկ· Դ· ԻԲ։

3 «Բարեկարգութիւնն այս պահեալ առ հռովմայեցիս ընդ դարս բազումս, փոխեցաւ առ մեօք, և 'ի հարիւրեակսն էին հարուստքն և ազնուագոյնքն իսկ զօրականացն։ Իբր ոչ էին 'ի տպատ անհետ եղեն հարիւրեակքն, այլ ոչ ևս նոքին վարձուց չքաւութեամբ գումարէին քուէարկութք, և ոչ նոքին արդարութեամբ՝ որպէս առաջեալ էր իմ 'ի ժողովս նոցա՝ ընտրութիւնքն լինէին»· Դիոն· Ալիկ· Դ· ԻԱ։

4 «Զքաւարարսն 'ի քաղաքացւոց, թէպէտ և բազմաթիւք՝ յետ ամենեցուն տային զվարկս իւրեանց, և հարիւրեակ մի էին եթ կազմէին»· Դիոն· Ալիկ· Դ· ԻԱ։

գլուխ՝ որպէս երբեմն ’ի վիճակս, բայց առաւելութիւն ձայնից ’ի մէն մի հարուրեակ ոչ ինչ աւելի հաշուէր քան զմի միայն վարկ։ Արդ որովհետև առաջին դասն ունէր ինսնաուն և ութ ձայնս, ուր այլք միահամուռ ոչինչ աւելի ունէին քան ինսնաուն և հինգ, յայտ է զի բաւէին քուեայք առաջնոյ դասուն յաղթութիւն։ Նախ ութևտասն Հարիւրեակք առաջնոյ տային զվարկս իւրեանց, և ապա ութսուն հարիւրեակք առաջնոյ դասուն. եթէ տարաձայն դտանէին ոքա, կոչէր ’ի քուէարկութիւն երկրորդ դասն, և ապա մի ըստ միոջէ այլք ’ի դասուց. այլ որպէս Տիտոս Լիւիոս ասէ, ոչ երբէք դէպ լինէր լինանել ցվերջինն[1]։ Թէպէտ և ըստ բնիկ նշանակութեան հարիւրեակն ցուցանէր հարիւր այր, այլ անդստին իսկ առաւելուն յոյժ թուով։ Խոստանչելի ’ինոցանէ որոշէր ’ի մասն գործ՝ յոր մտանէին ամենեքեան յեօթնևտասնամենից ցքառասունևվեցամեայս. և ’ի մասն քաղաքական, յորում էին ’ի քառասուն և ’ի վեցից ամաց ցվաթսնամեայս[2]։

Իսկ վերջապէս դասուն հարիւրեակքն՝ զորս յորմէք ’ի մասնաւորաց և ոչ ’ի թիւ արկանեն, ազատք էին ’ի զինուորելոյ, և ’ի ծանր ևեթ վտանգս պրկին ’ի զինուորութիւն[3]։ Հարիւ-

1 Ա. խդ։

2 «Յեօթնևտասնամենից կոչէին ընդ դրօշս՝ ’ի սկզբ ամաց զինուորեալ պատանեաքն՝ երկարէին ’ի զինուորութեան մինչև ցքառասունն և վեց ամ՝ ապա իբրեանց, ուստի սկսանէր ազևոյթ»։ Ազլս Գելլիս, ժ. ԻՉ։ — Դիոն. Ազիկ. Դ. ԺԶ։

3 Զհարիւր ինսնաուն և երկուց հարիւրեկաց միայն առնէ յիշատակ Տիտոս Լիւիոս. իսկ Դիոնէսիոս Ազիկառնացի հանէ զթիւ նոցա ցհարիւր ինսնաուն և երիս։ «Յառաջին հռովմայեցի ազգաւոգոյնք՝ որք ոչ ’ի յայտ ածէին յազգահամարի աւելի քան զհազար հինգ հարիւր լոմայս, Ջաւախոգոճ կոչեցան։ Իսկ որոց գոյք ոչ առաւելուին քան զերեք հարիւր ինսնաուն և հինգ լոմայս, որով պրեա թէ ոչինչ ունէին, Գնխոնիոփ յազգահամարին կոչէին։ Արդ քանզի գոյք և առացուածք քաղաքացւոց երաշխաւորութիւն իմն էր և պրաւ առաջի պետութեան և հինն հայրենասիրութեան, ’ի ծանր վտանգս միայն զօրաժողով լինէին յերկուցունց առն՝ ’ի վերջին դասուց։ Եւ առկայն պայման զաւակագործաց պատուականագոյն էր քան զվնասաբուծաց ազգահամարին. ’ի գժուարին դէպս՝ առնուազն պատանեաց, զինեալ զսուսս ծախուք հասարակաց՝ խառնէին ’ի զօրագս. և անուն նոցա ոչ ’ի զինաթիւ ազգահամարէն կոչէր, այլ զինուանութիւն պայմանի իւրեանց մեզմել համարէին՝ զաւակ առեալ յորուցանել հայրենեաց։ Ա’ ’ի ջոյկ առացուածոց՝ չկարելով նոցա օգնել ուխտութեան, ձևուն այլեն գոնեա ’ի մարդաշատութիւն քաղաքին»։ Ազլս Գելլիս, ժ.Զ. ժ։

*բեակք ասպետաց՝ յորոց հեծելապունդն կազմէր, ՚ի Հռոմէ քա-
ղաքացւոց գումարեալ՝ ջանային նոր կարգ ՚յարձանին մու-
ծանել, որով ՚ի յայտ գայ՝ Թէ քանի կարևոր գործ էր ընտրու-
Թիւն զօրավարին նոցա։ Եւ արդարև զօրավար հեծելապնդին՝
որ Երազուիքն կոչէին, առաջին յետ արքայի առեհակաէր
՚ի քաղաքին. որպէս և ապա՛ առ ընկերհաշտութեամբ Մարկ
տրոս հեծելազօրաց եղև փոխանակ Իշխանապետին։*

*Առաջին ազգահաւաքն Սերուխոսի Տուլլեոսի տայր ու-
ժեան հազար այր կարող պատերազմի[2], որ հաւասարէ երկե-
րիւր հիւսուածն հազարաց ընդ այր և ընդ կին. մարթ էր յաւե-
լու՚ի կարճ հնգետասան հազար արուեստաւորս, տուրևառիկ
կամ չքաւոր՝ որոց չէին երաւունք քաղաքացւոյ, և հնգետա-
սան հազար տարիաց[3]։*

1 «Տարիուինիոս Երէցն օրէնս տայր ապա տասերաց, զոր և պահէցին ցարդ»· Կիկ· Յղ· Հատրաիապէք· Բ· Ի։

2 «Թիւ քաղաքացւոց պրէլոց համարի լինել 80,000· այլ հնագոյնն ՚ի պատ-
մագիրս մեր Փաբիոս Պիկտոր պարտ համարի իմանալ այսուիկ զքաղաքացիս բա-
ւականս ՚ի զէն»· Տիտ· Լիւ· Ա· ԽԳ։

3 Ազգահաւաքիք Ժողովրդեան աւանդեալք ՚ի վաղեմի պատմագրաց՝ այլ և այլ
ունին մեկնութիւնս։ Ի Թիւ անդր համարոյ զքաղաքացիս առ հասարակ պարտ
է իմանալ արդեօք, եթէ զտանուտեարս, և կամ զժամանեալսն յարքունս։ Որ-
պէս եաս հաւանիմ, Թիւ համարոյ՝ զոր տան Տիտոս Լիւիոս, Դիոնեսիոս Ալի-
կառնացի և Պլուտարքոս, բովանդակէ զամենայն կարգս ՚ի զէն և ՚ի պատերազմ·
այն է ըստ կարգադրութեան Սերուխոսի Տուլլեայ յեօթնեւտասանամենից ցվաթ-
սնամեայս։ Սորօք էր իմանալ զբուն քաղաքացիս հռովմայ· զի յեօթնեւտասանա-
մենից և ՚ի խոնարհ դեռահասակք էին յոյժ առ ՚ի մանանել ՚ի համար աշխարհին,
և ՚ի վաթսնամենից ՚ի վեր՝ անցեալ զառուրըք։ Գիտելիք զի ծերունիք վաթսնա-
մեայք Ընիամօրըք կոչէին, արդեւելաք անցանել ընդ կամուրջս առ ՚ի գնալ տալ
զվարկ իւրեանց։ (Փեստոս, ՚ի բառն Վաղնամէայ· էջ 334։ — Կիկ· ճառ ՚ի պաշտ·
Ս· Հոռոմ· Ամբինոսի· Լե։)

80,000 արք կարողք ՚ի զինուորութիւն, ըստ արդի ազգահաւարոյ ցուցանեն
զինսն և հինգ հարիւրորդս այրական ազգին, այն է 145,000 ժողովրդեան·
իսկ վասն երկոցունց սեռից՝ հաւասարաթիւ համարելով 290,000 անձանց։ Եւ
արդարև ՚ի Գալլիա ՚ի 100 բնակչաց 35 են յեօթնեւտասանամենից և ՚ի խոնարհ, 55
յեօթնեւտասանամենից ՚ի վեր մինչև ցվաթսնամեայս, և 10 ՚ի վաթսնամենից և
անդր։ Ի հաստատութիւն այսր համարոյ պատմէ Դիոնեսիոս Ալիկառնացի, զի
յ247 ամին Հռովմայ հանգանակութիւն լինէ ՚ի պատիս Ովստաեայ Կոկլէսի լեալ,
300,000 անձինք ընդ այր և ընդ կին՝ հասն իւրաքանչիւր որ որ ինչ մարթէին
ձախել յառօրեայ պարէն։ (Ե· ԽԵ։)

Յանձն եղև ժողովոյ Հարուբեհայ ընտրութիւն առնեալ. այլ ժողով վիճակաց գոլով օրինակ նախնական ազատութեամբ ժողովոյ, հանապատզօրեցեալն տահմանել զկարևորագոյն իրաց կրօնից և վինուորութեան, և կացին միացեալ տեարք և յանձանձիչք՝ որոց միանգամ չէին անկ Հարուբեհայն խոնհոյ: Ցայնմ ժամանակաւ և Սողոն զնոյն օրինակ յեղափոխութեան մուծանէր յՍԼԹԷնս, որպէս զի երկոքեան մեծահուչակ քաղաք վաղնջուց ժամանակաց՝ ոչ ևս ազնուատոհմութեան տային զնուաճութիւն, այլ ընչից առաւելութեան:

Սերոխոս Տուլլիոս օրէնս հրատարակէր ոչ սակաւս 'ի նպաստ ժողովրդեան. հաստատէր զի պոյք ևեթ պարտաւեսան, ոչ և անձն փոխանակեսցէ ընդ պարտուցն: Ինքնանուիթիւն տայր և ռամկին պաշտպան կալ ազատութեան, որ լսել օրէնս լինէր և սոցա՝ նման ազատանուագն՝ յաչախել ի բեանց սահ[1]:

Դ. Հրօք:

Կրօնք լսա մեծ մասին կարգաւորեալ 'ի Նումայ, լինէին 'ի Հռոմ գործի քաղաքականութեան և մանաւանդ բարուք տեսչութեան: Ի հաստատակաց իրս և յատուկն զդիս 'ինեբքս աճեալ, զրաշխէին յամենայնի կենաց սրբազան: Ա.յսպէս ընդ հովանեաւ դից կային՝ պարհասք քաղաքին հանդերձ ամենայն սահրօք[2], տահմանք կալուածոց, դաշինք քաղաքացւոց, խոստմունք

Իսկ վասն տարկաց գոանեմք 'ի պատմութեան Դիոնեսիոսի Ալիկառնացւոյ, (թ. ԽԵ.) զի կանոյք, մանկունք, տրուկք, վաճառականք և արուեստաւորք եռապատիկ աւելի էին քան զԹիւ քաղաքացւոց: Արդ եԹէ քաղաքացիք՝ կարողք 'ի զէն, էին 80,000 մարդիկ, և ծնացորդ ժողովրդեանն եռապատիկ աւելի, ուրեմն Թիւ համօրէն ժողովրդեանն էր 4×80,000=320,000. և հանեալ 'ի Թուոյս զվերոյիշատակեալն 290,000, մնայ 30,000 տարկաց և արուեստաւորաց: Իսկ 'ի մէջ վերջնոցս այսոցիկ երկոցունց դասուց զոր և համեմատութիւն ախորժելով գնել՝ զհետ գոյ միշտ սակաւաԹիւ լեալ յայնժամ տարկաց:

1 Դիոն. Ալիկ. Դ. Թ. ԽԳ:

2 «Ի նեբքսակոլին քաղաքին էր օրէն շինուածոց հուպ 'ի պատուարս լինել պրպէս առ մեօք. և արտաքուստ մինչև ցվայր ինչ էր հրամանն մշակելոյ: Զարձանակալացս զոյս յոյս կոյս պարսպին և յայն, ուր էր օրէն ոչ բնակուԹիւն և

և կարևոր դէպք անպատմելն արձանագրելը՝ ի մեհենական մատեանս[1]։ Թերափիք պահէին զընտանեսն՝ ի չակատամարտի նշանակ դրօշոյն՝ էր պատկեր դիցն պաշտպանող ընդոնին[2]։ Պատգամաւք և սքանչելեօք օժանդակէին յօժարութեան և խորհրդոյ ազգին՝ դէմս յաւուր միում կալոյ Հռոմայեցւոյ ընդ Խաալիա[3]։ Թէպէտ և կրօնք նոցա ոչ միայն օգնէին թերութեանցն իսկ իւրեանց առնել զարս և ամբառնալ զմիտս[4], այլ և կարի իսկ քաջ դիւրին դարձէին զանձանձանս սահմանադրութեանց և պահէին զաստիարեայ ազգութիւն։ Դարձեալ և ընտելացուցանէին զժողովուրդս Խաւխոնի հռոմէական դերադահութեան. քանզի Սերուխոսի Տուլլիոսի հաստանեցուցեալ զնոսա ձեռն տալ՝ ի կատոյց մեհենին Արտեմեայ, տայր նոցա ընդունել սակ Տիտոս Լիւիոս, ի մայրաքաղաք իւրեանց զՀռոմ, ուր բազում անգամ զկնի առեալ էր նոցա՝ հակառակ այսմ պահանջման[5]։

Կեղծիք պատգամաց դիւք՝ ի բազում դէպս օրէն առնէր նոցա դառնալ ի քնին դժպհի վճռոյ։ Ըստ այսմ օրինակի հմայեալ ի Թռչնէ հատուց[6], ի կերակ կոչեցեալ նուիրական վառե-

ոչ միակութիւն, կոչէին Հռոմէացիք Ռոմէիոս (այսինքն է ծառատուն)։ Եւ յօժամ տարածութեամբ քաղաքին հետզհետէ ածէին զպատուարան, պահէին միշտ երկուսակք զնուիրական արձակավայրն»։ Տիտ· Լիւ· Ա· Խ։

1 «Հաստատեալ ի վկայութիւն մեհենական մատենից, որ մեծաւ իրաւամբ պահին ի մեհեանս»։ Դիոն· Անգլ· ԺԱ· ԿԲ։

2 «Պատուական առանդքս այսոքիկ՝ մեծարեալք էին յաչս նոցա երբեմն զպատկեր դից»։ Դիոն· Անգլ· Զ· Խե։

3 «Առաջ Կապիտոլիան ընկալաւ զնոր կոչումն· զի ի պեղել զհին մեհենին՝ գտաւ գլուխ մարդոյ, (որ ի լատին բարբառ գլուխ առացեալ,) և կիւրք եռուն պատգամ կալոյ Հռոմայ գլուխ քաղաքաց Իտալիոյ»։ Դիոն· Անգլ· Դ· ԿԱ։

4 «Դիմել ի պատգամս քրմաց, և զգուշութիւն կրօնից ասէր մատանալ ժողովրդեան զսովորոյթ ի յարիշատակութիւն, և զսէր ի պատերազմ։ Մխոք զբազեալք անդուլ ի տեսութիւնս կրօնականս՝ ծանեան զնամակալութիւն երկնից յամենայն իրս մարդկայինս, և ակն ամենեցուն այնպիսեաւ չկրմռանդն բարեպաշտութեամբ զպաճեալ, զի միամտութիւն և հաւատք յերգմունս՝ Թագաւորէին ի Հռոմ, քան երկիւղ օրինաց և պատուհասից»։ Տիտ· Լիւ· Ա· ԽԸ։

5 Ա· Խն։

6 «Գտանելք ժողովրդեան զօրաժողով, և ամենայն իսկ գործ կարևոր ժողովր ի նոցանէ ձեռնհասի՝ եթէ հմայք հատուց ոչ հաստանէին»։ Տիտ· Լիւ· Ա· Լ,Զ։

կաց, յընդհատս զոհից, և՝ ի հետս փայլականց՝ եղծանիւքն զընտրեալ ուրուք ինձ, և կամ զկնի սպանանիւն և կամ յաքեցուցանիւքն զկատարումն առեալ քահանայութ և ծերակուտին։ Ոչ ումեք օրէն էր՝ ի պաշտօն ամբառնալ, և ոչ Թագաւորի իսկ՝ ի գահ ելանել, մինչեւ դիցի զՀաճուԹիւն իւրեանց յայտնեալ կարծեցեալքն ստոյգ նշանօք։ Էին նոցա բարեգուշակ և չարագուշակ աւուրք։ Յօրիցարս էր օրէն ոչ դատաւորաց լսել դատաստան, և ոչ ժողովրդեան հաւանիլ՝[1]։ Հանապազ իսկ մարթ է ընդ Կամիլեայ ասել Թէ քաղաքն այն՝ ի հաւատս գուշակուԹեանց և հմայից էր կանգնեալ[2]։

Քաղաք չկայանէին կարգ անհաղորդական. այլ ամենայն ումեք՝ ի քաղաքացեաց օրէն էր մնանել՝ ի տակաւին կարգս։ Ի գլուխ քահանայական սրբազան դասակարգուԹեան կային քրմապետք հինգ[3], և իշխան նոցա Թագաւորն[4]։ Նոցա էր տալ վճիռ՝ ի խնդիրս ծխից և պաշտամանց, զգուշանալ զոհից և կրօնական հանդիսից ըստ օրինի և ըստ հայրենադաւանէ[5] կարգաց կատարելոյ, հակել՝ ի վերայ այլոց պաշտօնէից,

1 «Հաստատեաց Նումա և բարեգուշակ և չարագուշակ աւուրս, քանզի էր ուրեք գի և օր ոմն յատկապէս մարթ էր օգտակար լինել ժողովրդեան». Տիտ. Լիւ. Ա. ԺԹ։

2 «Քաղաք մեր կառուցեալ է՝ ի հաւատս գուշակուԹեանց և հմայից. ասեն և ոչ ոմն՝ ի նոցանէ պարտական՝ որ չկոչէ գի ասասուածով և պաշտամամբք նոցա. հանդիսից զոհապարծուԹեանցն մերոց առհմանեալ են աւուրք և վայրք». Տիտ. Լիւ. Ե. ԾԲ. Աքենոբան. Կամիլլեայ։ — Չ. ԽԱ։

3 Կիկ. Ցչ. Հասարիապէպ. Բ. ԺԲ։

4 «Ամենայն գործ կրօնական՝ հասարակաց և առանձին վճռով քրմապետին կատարէր. գիտէր և ժողովրդին Թէ առ ի արժան էր գիմել. և զառաջս առնուին չարեաց՝ որոց մարթ էր ապրդել յապականն առնել զազգային ծխիւք, զօտարոտիս ընդ այնոցիկ՝ ինեղբս մուծանելով։ Քրմապետին դարձեալ անկ էր կարգաւորել որ ինչ հայէրն՝ ի յուղարկաւորուԹիւն և՝ ի հաշտ առնել զԽոդիս մեռելոց, և ընտրել՝ ի պանդխտից յայտնեալս՝ ի ձեռն շանթից և այլ երևումից՝ որ ինչ յայնցանէ պահանջէրն զոհս քաւուԹեան». Տիտ. Լիւ. Ա. Ի։

5 «Քրմապետն Թարգման է գից և ըղձապատուէր, կամ մանաւանդ արարողապետ։ Ոչ միայն զահերէց կոչ՝ ի հաստատակաց զոհապարծուԹիւնս, այլ և հակէ՝ ի վերոյ սուկաւանաց, և զգուշանայ զի մի զանց առնիցեն զկարգօք պաշտամանն։ Համանպատմոյն ասէ, նմա է անկ ուսուցանել միւսեմ միւսեմ որ ինչ պարտ կոչէ առնել՝ ի պատիւ գից և՝ ի հաշտ առնել զնոսա». Պլուտարքոս. Նումա. ԻԲ։

և կարպատուել զսոցա[1]. չտայէին իսկ նոքա Համան զպատճոյ իւրեանց ոչ ծերակուտին և ոչ ժողովրդեան[2]։

Ձեռ քրմապետաց կային պետք վիճակաց, յիւրաքանչիւր վիճակս վիրծակաւն պաշտամունս կատարել. և էր նոցա գլխաւոր ոք։ Ձկնի տոցա էին քուրմք, հաւահմայք[3], Վեստեանք՝ պահապանք գիցանուէր հրոյն. և երկուտասան քուրմք Սալեանք[4], 'ի պահ սրբազան տապարաց՝ որ Եռկիւտաբերն կոչէին. և յեռ աւետեցուն Քարոզք բանակին[5] քուռն, յօրինել զգաշինս և զպատշանալ պահպանութեան նոցին, ազդել պատերազմի; և հսկել 'ի պահ դաշնակցութեանց ընդ այլ ժողովուրդս։

Էին և ընկերութիւնք կրօնականք յատուկ ելագոյն պաշտօնս ունելոյ, որպիսի էին ժողովն Արուալեանց, որ աղօթիւք և Թափօրովք կարդային զերկնից օրհնութիւն 'ի վերայ հնձոց. ընկերութիւն 'ի պաշտօն Լուսերկիւեան տանէ՝ որ 'ի պատիւ դիցն Լուսերկիւայ, պաշտպանի անդէից և կորուսչի գայլոց՝ էր սահմանեալ։ Թերատիք առանին և շահապետք քաղաքաց և գերդաստանաց, առնուին զպաշտօն կարգեալ 'ի Տուլեայ Ոստիլ

1 «Բաժանեաց Նումա զսոսին յերիտասեան ամիս ըստ շրջանի լուսնոյ, և յաւէլ 'ի տարին զամիսս Յանուար և զՓեբրուար»։ Տիտ· Լիւ· Ա· ԺԹ։ — Պլուտ· Նումա· ԻԹ։

2 Դիոն· Ասիկ· Բ· ՀԳ։

3 Դիոն· Ասիկ· Բ· ԿԴ։

4 Սալեանք կոչին 'ի լատին բայէն սալիօ· զի պարտ է նոցա 'ի գէպս ուրեք հաքաւս սրբազանս յօրինել և երգել օրհնութիւնս 'ի պատիւ Արեսի։ (Դիոն· Ասիկ· Բ· Կ։)

5 Դիոն· Ասիկ· Բ· ՀԲ։ — «Քարոզք (փէտիա՛լէս) անուն առին զկոչումն, զի վերակացուք էին երդման և հաւատարմութեան 'ի մէջ ժողովրդոց· զի 'ի ձեռն նոցա պատերազմունք առնուին զկերպարան արդար պատերազմի, և յաւարտել նոցին՝ խաղաղութիւն 'ի ձեռն ուխտի առնոյր երաշխաւորութիւն։ Մինչև ձեռն արկեալ 'ի մարտ, առաքէին զոմանս 'ի քարոզից ասել առ 'ի բողոքել որ ինչ էր իրեանց բողոք»· Վարրոն, Վոփին ընծ· Ե· էջ 86։ — «Եթէ էր ինչ որպատուն դաշնակցաց զանիրաւութենէ ինչ Հռովմայեցւոց՝ և խնդիր հատուցման, քարոզից էր քննել՝ եթէ ինչ հակառակ դաշին էր գործեալ»· Դիոն· Ասիկ· Բ· ՀԲ։ — «Ի Նումայ կարգեալ էին քուրմքս այսոքիկ քարոզք յարդարագունէն և 'ի հեզապուն քան զամենայն Թագաւորս, 'ի պահպանութիւն խաղաղութեան, գառաւոյք և իրաւարարք օրինաւոր պատճառաց պատերազմի»· Պլուտ· Կամիլլ· Ի։

լեայ, և ոճռախմբէին ի ժամանակս, յորս ազատ էին ստրուկք յամենայն վաստակոց[1]:

Եւուն Թագաւորք կառուցանել ումեքեան քաղաքս ի պաշտօն փառաց[2], *առաքինութեան*[3], *կենցաղավարութեան*[4] *և ընտիրատարութեան առ դիս*[5], *աստուածծարել կամելով զայս ամենայն:*

Հաճոյ էր Հռովմայեցւոց զամենայն ինչ երևելի նշանակօք առաջի առնել. այսպէս Նումա առ՝ ի ցուցանել յայտնապոյն զժամանակ խաղաղութեան և պատերազմի՝ կանգնեաց տաճար Յանուսի, բանալ զայն ի ժամանակս պատերազմի և փակել՝ ի խաղաղութեան. և տե՛ս ինձ, զի ընդ պարապայս ետուն հայրիւր տարի առ եղեալ փակեցաւ[6]:

1 Դիոն. Ալիկ. Դ. ԺԴ: — Պլին. Բնաիան Պտմ. ԻԱ. Ը:

2 «Կառոյց Նումա մեհեան Հռոմուլեայ, աստուածացուցեալ զինա և կոչեցեալ Կուիրինոս». Դիոն. Ալիկ. Բ. ԿԴ:

3 «Մեհեան Եստեայ՝ ի նշանակ պզաստութեան, մեհեան՝ ի հաւատս հաստատութեացն՝ կառուցան՝ ի Նումայ». Դիոն. Ալիկ. Բ. ԿԸ և ՀՆ:

4 «Սահմանեալ դնէք, ասն՝ ի պատիս Պալեայ դիցուհւոյն հովուաց, Սատուռնոս՝ դնէք միակութեան, և հանգստեան անդոց և պարարտութեան նոցա դնէք խնամակալք». Դիոն. Ալիկ. Բ. ՀԴ:

5 «Սերտիոս Տուլլիոս կառարեալ զայս ամենայն՝ ի խաղաղութեան և՝ ի պատերազմի, կանգնեաց երիսեա տաճարս Բաղդին՝ որ Թուէրն յայնժամ նմա զամենայն աւուրս կենաց նորոց, զմին՝ ի վաճառանոցն արջառոց, և զմիւս այլ՝ ի գետափունս Տիբերեայ՝ տուեալ նմա զանուն առնոյն Բաղդին, որ և պահի ցարդ առ Հռովմայեցիս». Դիոն. Ալիկ. Դ. ԻՀ: (*)

6 «Տաճարն Յանուսի երիցս փակեցաւ՝ ի ժամանակի անտի Թագաւորութեան Նումայ. զառաջինն առ բռնչիսութեամբ Տիտոսի Մանլիոսի՝ ի վերջ Կարթագինեան պատերազմին, և միւսանգամ՝ ի շնորհել դից զինի Ակտեան մարտին առնել գարուս մերոյ զԱգոստոս ինքնակալ՝ տալով աշխարհի զխաղաղութիւն». Տիտ. Լիւ. Ա. ԺԲ: — Եւ Պլուտարքոս ասէ՝ ի վարս Նումայ. ԻԴ. «Եւ ասկայն փակեցաւ տաճարս յետ յաղթութեան Ագոստեայ կայսեր ընդդէմ Անտոնիոսի, զոր օրինակ փակեալ էր երբեմն առ բռնչիսութեամբ Մարկոսի Ատիլիոսի և Տիտոսի Մանլեայ, Թէպէտ և սուղ ինչ տեւեալ. զի ընդ հուպ՝ ի վերայ հասեալ այլ պատերազմ, բացաւ վերստին: Բայց առ Թագաւորութեամբն Նումայ և ոչ օր մի բացեալ տեսաւ»:

(*) Եւ է վերջինս արդ եկեղեցի Հայոց՝ ի Հռոմ: Ծան. Թարգմանչին:

Ե· *Օգուտք բազատրական վարդապետաց:*

Ի պատմելոյս յարդ՛ի մին առնուլ է՝ զի Հաստատութիւն Հռովմէական՝ [1] վասն իսկ աս Թագաւորաց առացեալ էր զնա Հաստահիմն յօրինուած [2]: Ոչ նորին աշխատհակալ առաքինութիւնք չհանդուրժէր յանձուկ տահմանս իւր: Որ շուրջ զնուաճ փոքրիկ վիճակք Լատինաց ունէին Թերևս նոյնպէս արս հանճարեղս և քաղաքացիս քաջս, այլ ոչ գոյին նոցա անշուշտ որպէս՛ի Հռոմ՝ հանճար պատերազմի, սէր հայրենեաց, հաւատք՛ի բարձրագոյն բաշխս բաղդին, հաստատութիւն մտաց յանձխտելին իւր զերակայութիւն, խրախոյսք հզօրք յեղյեղեալք հանդարտագ՛ի միտս առնելոյն յաւագ մարդկանէ ընդ երկերիս քառասուն և չորս ամս:

Քաղաքաշտոյս ընկերութիւն Հռովմէական հիմնեալ էր՛ի ձեռնարանս ընտանեաց, կրօնից և իրաւաբանչիւր առացուածոց. վարչութիւն՝ յընտրութեան, քաղաքավարութիւն՝ յաշխարհականութեան: Զվարչութեան երասանակ ունէր ազատանին մեծագոյզ և փառասէնչիկ, և որպէս զամենայն ազնուապետականս անհանդուրժք միապետութեան, և արհամարհօրոք դամ կէին: Գոն զոյծեցին Թագաւորք յարուցանել ժողովուրդ նոր առ նախապատիս որերոյն, և մուծին զառաքին՛ի ձեռակայան, զազատսն՛ի քաղաքացւոյ, և զբազմութիւն քաղաքացւոյ յաստիճան գինուորական:

Հաստահիմն էր յօրինուած ընտանեաց. Թագաւորէր՛ի նմա տանուտէրն ինքնիշխան, ինքն ևեթ էր դատաւոր [3] որ-

1 Խորհրդով՛ի վար արկանեմք զբառս Հաստաթախտեփոխն, զի և ամենայն հին պատմագիրք այսպէս կոչեն զՀռովմէական պետութիւն և առ Թագաւորօք և առ ինքնակալօք: Հաւատարիմ Թարգմանութեամբ ևեթ բառից կարեմք խնայել ձչգիտես վարնջուց քաղաքաշտոյ ընկերութեանց:

2 «Ձէ ինչ անծանօթ Թէ քանի շնորհատարած է Հաստատակետութիւնս միւսմ միւսմ՛ի Թագաւորաց մերոց՝ վասն բարի բարի և օգտաւէտ սահմանադրութեանց»· Կիկ· Ճչ· Հաստաթախտեփ· Բ· ԻԱ:

3 «Առ Հռովմայեցիս չէն իրիք սէր մանկուանք առ կենդանութեամբ հօր իւրեանց: Ոչ զընչից ևեթ իւրոց, այլ և զկենաց որդւոցն հրաման ասէր հայր»· Դիան· Անկ· Ը· ՀԹ· Բ· ԻԵ:

պատն և կնոջ և տարփայ, ընդ կեանս նոցա ողջոյն։ Սակայն կարդ և պայման կնոջ չէր լինչ անարդ, որպէս առ խուժադուժս. բաժանորդ էր նա ընչից առն իւրոյ, հրամայէր՝ի տան, ունէր և իրաւունս տանտիրոյ, և ընդ եղբարս իւր հաւասարապէս էր հայրենական ժառանգութենէ[1]։

Ըստ հարկաց էին զօրաժողով և քաղաքական իրաւունք. քաղաքացիք եթէ էին զինուորը, և ունևորք միայն՝ քաղաքացիք։ Ըստ չափու ընչահատութեան ուրուք՝ էր զօրութիւն նորա և ազդեցութիւն. բայց ըստ այնմ էին նորա և բեռինք և պարտք։ Ի պատերազմ և յընտրութիւն ըստ գոյից դասակարգէին Հռովմայեցիքն. և որպէս յառեղի քաղաքացւոց՝ նոյնպէս և՛ի բանակի զօրուն Հռովմայ նախանձուք կային։

Վարժեալք յատուկքին հրահանգս ազատութեան՝ նանրահաւասս կրօնիւք և մեծարանօք առ աւագորեայն՝ի չափս կայր ժողովուրդն։ Յամենայն իրս կենցաղոյս՝ինելքս աճեալ պղխա, և առ սովորականք՝ի մարդկային գործոց ակնառանային. և ցուցանէին զեր՝ի վերոյ կենցաղականացս զերկնահնամ՝ առեչութիւն, որ ուղէր զգործս մարդկան։ Խնամատք իրաւանց և արդարութեան տարրանային՝ի խոհզ մտաց. ՚ի սրբութեան համարէր եր երդումն, և առաքինութիւն՝ որ նշանակէին ծայր կատարելութեան պարտուց, կարդէր յընդհանուր օրէնս հաստատեալ և առանին կենաց[2]։ Օրէնք տիրապետէին, և սահմանադրութեամբ քարոզիչ զօրուն՝ վէճք և հակառակութիւնք ազգաց՝ի քննութիւն առնուին ըստ տեսութեան իրաւանց՝ մինչև՝ի տայր տուսերն լուծեալ։ Քաղաքավարութիւն նոցա յայնմ էր, ձգել առնային հնարիւք զազգս դրացիս՝ի հնազանդութիւն Հռովմայ. և՝ի դիմակալել նոցա՝ հարկ լեալ զինուք զնոսա նուաճել յայլ և այլ կարգս դասին. կէսք առնիջ-

1 Դիան. Ալիկ. Բ. իե. 12. «Ի սկզբանէ անտի, առ Մոմոէն, գերդաստան Հռովմայեցի՝ բարոյական կարգօքն որ Թագաւորէր յիւրան և զօրինք հպատակութեան նոցա՝ յանդիման աճէր զպայմանս գերագունի եմն քաղաքականութեան»։ Պմ. Հռովմայեցոց. Բ. ապագր. հա. Ա. էջ 54։

2 «Այնպէս անբիծ էին վարք, զի ընդ ամս երկերիւր և երեսուն ոչ ուրուք յարանց զկին իւր արձակեալ, և ոչ՚ի կանանց ոք բաժանեցաւ յառնէն»։ Պլուտարքոս, Ջոփուէյո Թէսէոյ և Հռոմոլոսի։

նոցէ կցորդեալ Հաւատակից բազկի[1], այլք գաղթականաց Թեամբ կացեալ՝ ի հնազանդութեան, պատրաստեալք յառ յապա տիրապետութենէն[2]։

Ա.րուեստք Թէպէտ և տակաւին անկերպարան, ընդ ծէս եւրոպականս մուտ գտեալ՝ գային՝ ի նպաստ կրօնից և առ՝ ի զպօնայուցանել զբարս. ամենայն ուրեք կանգնէին մեհեանք, կառուցանէին կրկէսք[3], շինուածք մեծամեծ կենցաղոյդ՝ ի գլուխ ելանէին. և Հռոմէ տահմանադրութեամբ օրինաց իւրոց պատրաստէր զնոսա գերակայութենէն։

Ա.ռեղակալք գրեթէ առ հասարակ ընտրութեամբ կային. և ամբարձեալ միանգամ՝ ի պաշտօն՝ վարէին իշխանութենէն ընդարձակ, և աներկիւղ տային շարժել գերկոսին հզօր բառնալիս գործոց մարդկան. զպատիժ պատուհասն առեմ և զվարձ

1 *Զարմանայ Կիկերոն ընդ խորագէտ իմաստութենն Թագաւորացն առաջնոց՝ ընդունելոյ զՀնամիս պարտեալս՝ ի Թիւ քաղաքացւոց։ Օրինակ նոցա, ասէ, յօրէնս եղեն մեզ. և չգադարեցին հարք մեր՝ իշնորհելոյ պարտելոց Հնաւանեաց զիրաւունս քաղաքացւոց»։ Ճառ՝ ի պաշտ. Բալբեայ, ԼԱ։*

2 ԳԱՂԹԱԿԱՆՔ ՀՌՈՎՄԱՑԵՑԻՔ, *իրաւամբ ընտրոյ և առագութեան։*

Ա. *գար.* 1–244 (*առ Թագաւորօք։*)

ԿԵՆԻՆԱ (*՛ի Սաբինա*). *անծանօթ։*

ԱՆՏԵՄՆԷ (*՛ի Սաբինա*). *անծանօթ։*

ԿԱՄԵՐԻՆԱ (*՛ի Սաբինա*). *կործանեալ յ252. անծանօթ։*

ՄԵԴՈՒԼԼԻՆԱ (*՛ի Սաբինա*). *Սանդ–Անձելոյ։ Տես ճէլլ, Տեղագրութիւն Հռովմայ, 100։*

ԿՐՈՒՍՏՈՒՄԵՐԻՆԱ (*՛ի Սաբինա*). *անծանօթ։*

ՓԻՏԵՆԷ (*՛ի Սաբինա*). *Աւերակք առ ճխուպլէյ և Սերպենտիա քաղաքաց։ Վերաքին հաստատեալ՝ ի գաղթականութենէն յ326 ամին, և ապա ըստ կործանեայ Մասուխիայ կործանեալ։*

ԿՈՒԼԱՏԻՆԱ։

ՈՍՏԻԱ (*՛ի բերան Տիբերի*). *Աւերակք ընդ Դորբէ–Պուաչչիանոյ և ընդ Ոստիա։*

ԳԱՂԹԱԿԱՆՔ ԼԱՏԻՆՔ.

Ա. *գար.* 1–244 (*առ Թագաւորօք։*)

Զկարելիք յիշատակել հաւատեաւ և ոչ մի լսելն գաղթական յայսմ գարու հաստատեալ ըստ վարելի մասնագրոյ։ Սինայ և Կիրկեայ գաղթականք՝ ի յաջորդ գարու հաստատեցան, յորում և դիցուք։

3 «*Զարդարեաց Տարկուինիոս և զմեծ կրկէսն որ ընդ Աւենտին լեառն և ընդ Պալատին. և ինքն նախ եւս չինել զկրկէսեան նահապետական յարկաճաճուկ*». Դիոն. Ալիկ. Գ. ԿՀ։

փոխարինել։ Ամենայն քաղաքացւոյ՝ որ տկարանայրն առաջի Թշնամւոյ, կամ զանց զկնի՛ր հրահանգաց առնէր[1], բրածեծ կամ սակը դահճի կայր առաջի. իսկ նահատակեալց յարու- Թիւն քաջալԹեան՝ պսակ պատուոյ[2], զօրավարաց՝ յաղԹա- նակ հետի կամ՛ի կառս[3] և աւար ձոխ[4], և հոյակապ պըճոյ՝

1 Տիտ. Լիւ. Ա. ԽԹ։ — «Ի մահ գառապարտեցան անդէն հարիւրապետքն՝ որոց խուժքն երԹեալ էին փախստեայ. և դրօշակիրք՝ որոց զդրօշս իւրեանց կո- րուսեալ էր, կէսք գլխատեալ, այլք բրածեծ սպանան։ Իսկ զինացեալ գունդս զօրուն եա տասանորդել բղեաշխն. և մին մի՛ի տասանց վիճակաւ ածեալ՛ի մահ՝ հառուցանէր զպատուհաս զինուորակցացն։ Ա յս սովորական պատուհաս է առ Հռովմայեցիս ընդդէմ գաղտլիք զօրականին, և որոց մատնեն զդրօշս իւրեանց». Դիոն. Ակիկ. Թ. Ը։

2 «Եդ Հռոմուլոս՝ի վերայ վարսից իւրոց պսակ դափնեայ». Պլուտ. Հռո- մուլոս. Ի։

3 «Ներակոյան և Ժողովուրդ սահմանեցին Տարկուինեայ պատիւ յաղԹանա- կի». Դիոն. Ակիկ. Գ. Կ։ — «Ա՛յլ է Ովատիոն, և այլ յաղԹանակ. նախ այնու զանազանեալ, զի որ ընդունին զայն՝ յառաջոյ բանակին հետի մտանէ՛ի քաղաքն՝ և ոչ՛ի յաղԹական կառս. երկրորդ՝ զի ոչ կրէ պսակ ոսկի, ոչ պատմուճան ոսկե- Թել և երփնանկատ, այլ եղջերանման ևւԹ սպիտակ արկեալ զանձամբ, որ է սովորական հանդերձ զօրավարաց և բդեշխից. և պսակ դափնեայ՛ի գլուխ, այլ ոչ և գառազան՛ի ձեռին։ Ա յս է ահա խոսիր ընդ մեծն և ընդ փոքր յաղԹա- նակ, ջնջելով այլ ինչ զանազանութիւն». Դիոն. Ակիկ. Ե. ԽԻ։ (*)

4 «Հռոմուլոս սպանանէ զԱկրոն, խորտակէ զԹշնամիս, և գայ նուաիրել ա- ռաջինն Ապոլոնի զընտիր ընտրս յաւարէ իշխանին։

«Յետ Հռոմուլեայ կոանելիոս Կոսսոս մատոյց նախ նմին զկոյ աւարս նոյնպէ- սիս՛ի պատերազմին՝ յորում զօրավարքն հեծելապետին, սպանեալ ձեռամբ ի- րով զզօրապետս Փիդենացւոց։

«Ձէ պարտ բաժանել յաւարաւորացն երկուց և զօրինակ Մ. Մարիելլեայ, որ աներկիւղ քաջալԹեամբ յարձակեալ առ եղը Պադոսի փոքու այրուձիով՛ի վե- րայ սպրկային Կելտաց՝ հզօրի բազմաձեռն բանակաւ, հատ զգլուխ նորա. և ա- ռեալ՛ինամանէ զսպառազինութիւնն,՛ի ձօն արդարեր մատոյց զայն փերբեարեանն Ապոլոնի։ (Ար Հռովմայ 531։)

«Ի նոյնօրինակ արուԹիւն և՛ի մարտս՝ երևելիք կացին Տ. Մանլիոս Տորկուա- տոս, Վալերիոս Կորուոս և Եմիլիանոս Սկիպիոն։ Պատերազմողքս այսոքիկ արք դրդեալք՛ի ձայնատուր լինելոյ զօրավարաց Թշնամեաց՝ ատելագոյն զնոսա ար- կին. այլ քանզի ընդ ձեռամբ գերագոյն զօրավարի մարտանէին, էրկին նուաիրել Ապոլոնի զաւարս իւրեանց։ (Ար Հռովմայ 392, 404, 602։)» Վալերիոս Մաքսիմոս. Գ. Ե. յօդ. 3. 4. 5. 6։

(*) Փոքրն յաղԹանակ՝ կոչէր Ովատիոն յոչխարէ ընկալեալ զկոչումն, զի զինոյր՛ի հանդի- սի անդ ոչխար՝ որ՛ի լատին բարբառ կոչի Ո՛վէս, ուր՛ի մեծն յաղԹանակի զինոյր ցուլ։ Ծան. Թարգմ.։

աստուածպատուէիւն։ Ի պատիւ մեռելոց և՛ ի սիրուածն արիւնառուշտ ըմբշաց դիմիկն քաղաքացիք՝ ի խաղս կրկնակց, ուր պատակպուէիւն աստիճանի և պատուոյ՝ տայր իւրաքանչիւր գիւր տեղի[1]։

Ա յսպէս հասեալ Հռոմի յերկրորդ դար՝ ի սկզբնաւորութենէ իւրմէ՝ ընդունէր՝ ի ձեռն Թագաւորաց իւրոց զամենայն սերմանս մեծութեան, որոց հասանէր ապա՝ ի վեր երևել։ Մարդկան զահմանադրութիւնս յայսվայր յօրինեալ, սեաց զոր արդ ուրպէս և ահմանադրութիւնք յօրինեացեն զմարդիկ։

1 «Բաժանեաց Տարկուինոս զնստարանս մեծի կրկնոյն յերեսուն վիճակս, որոշեալ իւրաքանչիւր տեղի սեպհական»։ Դիոն։ Ալիկ։ Գ։ ԿՀ։ — «Յայնժամ, (զինի Լատինացւոց պատերազմին), ընտրեցաւ վայրն՝ որ կրկեան մեծ կոչի արդ։ և սահմանեցան անդ կայք ծերակուտին և ասպետաց»։ Տիո։ Լիւ։ Ա։ Կե։

ԳԼՈՒԽ Բ

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԸՆԴ ԲԳԵՇԽԻՔ

յ244 ամէ. ց416.

Ա. Աշակերտութիւն հաւատարմապետական վարդապետին։

Մերժեցան Թագաւորէն ի Հռոմէնայ. բարձան ի միջոյ, զի լսացեալ էր պաշտօն նոցա և գործ։ Ընդ որս արդեօք՝ Թէկլա՝ ի բարեյաղթեան և Թէ՝ ի բնական կարդի՝ օրէնք գերապոյն, որ որպէս աշխարհակալեալ ոմանց, նոյնպէս և կարգաց պետութեան կէտ անանցանելի սահմանեն՝ ի լրանալ օգտակարութեան նոցա։ Ցորչափ ժամանակակիցն այն երկնահրաման չէր լեալ հասեալ, ոչ մի ինչ զօրէ ընդդէմ։ գաւակցութիւնք և ապրուստութիւնք առ հասարակ կործան անկանէին առանձին անընդդիմանալ զօրութեան՝ որ պահպանէ զայն ընդդէմ չգանցին առաջելոյ։ Իսկ ընդ հակառակն եթէ ինչ անսասանելի յերեւման՝ գաղարեալ յօգտակարութենէն՝ ի զարդացումն մարդկութեան, ոչ զօրութիւն հայրենատուր, ոչ քաջութիւն, ոչ փառաւորեալ անցելոց ժամանակաց յիշատակք, չկարեն յապրել և ոչ օր մի զձակատագիրն անկման նորա։

Քաղաքականութիւն գոյցես ինձ անց՝ ի Յունաստանի ասելս առ՝ ի կազմել անդամոց վաստակն անբաւ՝ որով անմահ բոցածաւալ յաշխարհս ամենայն։ Պարտ էր այնուհետև հոգւոյ զօրութեան և կարգաց բազմել հարկաւ գահերիցս՝ ի նախկին ժամանակս Հռոմէնայ, որպէս եղև իսկ առ Թագաւորութիւն։ և ցորչափ Քանդուցս և վաստակ չէաւ կատարումն, յայնմանէկէն նոքա ամենայն հակառակաց։ Այլապարտ փոյթ փոյթէր ծերակոյտն բաժանորդ իշխանութեան նոցա լինել,

Իւրաքանչիւր ոք վարելով նոյնա զաւուրս հինգ[1]. վայրապար ամբաստնային կինք ընդդէմ միապետականին իշխանութեան. ամենայնն վայրապար և անօգուտ. սպանութիւնք իսկ ազգային ամբաստանութիւն զանգայութիւն: Բայց՝ ի հասանել պահուն՝ յոլով դադարէր կարեւորութիւն նոցա անհրաժեշտ, դէպք դուշնաբեաց տապալեցին գնոսա: Առնակնոջ միոյ բռնաբարութեամբ սասանեցաւ գահն, և յանկանելն գոռաւ բաժանեալ յերկուս. զբեաշխք յաջորդեցին ամենայն յառաջանացն Թագաւորաց[2]:

Ոչ ինչ այլ փոխեցաւ՝ ի հաստատակառավարութեան, բայց զի փոխանակ միոյ իշխանի ընտրելոց ցկեանս՝ կային այնուհետև ընտրութեամբ իշխանք երկու ընդ ամ մի: Յեղափոխութիւնս այս գործ էր ազնուապետութեան. կամէր ազատանին իշխել իւրովք, և ամ ըստ ամէ ընտրութեամբն՝ իւրաքանչիւր ոք յոլս տայր հասանել ըստ կարի գերադոյն իշխանութեան: Ա՛հա կարճամիտ հաշիւ մարդկային, և խորհրդոյ մարդոյ գծուծ դիտաւորութիւն. այլ տեսցուք արդեմ գերադոյն դիտողն հնարս հնոցա նուիրակք:

Խորշ մի երկրի՝ ի գետափունս Տիբերեայ՝ նախատահմանեալ՝ ի տիրապետութիւն աշխարհի, բովանդակէր յինքեան որպէս տեառք, սերմունս բազմաբեղուսն՝ որ արագ արագ սփռել կամէին: Այլ չկարէին զայն առանց անթերի ազատութեան քաջակիրթ դասու մարդկան, և զբաւամբ ածելոյ նոցա

1 Հարիւր առեներակալք ծերակուտին բաժանեցան՝ ի տասն տասնեակս, և իւրաքանչիւր՝ ինոցանէ ընտրէր զոք յիւրոց անտի կալ նախկինան: Բաժանորդք էին և այլք իշխանութեանն, այլ միւք զնշանակս պատուոյն, և գնայինս յառաջ նորա նուիրակք: Իշխանութիւնս այս տեւէր զաւուրս հինգ՝ իւրաքանչիւր ուրուք կալեալ զայն կարգաւ: Ոչ յառեալ առմիւն արտաւնջ բառնալ զայսմանէ, զի ծանրանայր այտուիկ լուծ ծառայութեան իւրոյ հարիւրս ընդ միոյ ուձնելով աւարս: Եւ յօժարեալ Թուէր միւսմ ևեթ Թագաւորն այնուհետև տանել՝ ինքնին զնա ընտրելով». Տիտ· Լիւ· Ա· ԺԷ:

2 «Սակայն ազատութիւնս այս էր՝ ի սկզբան՝ ի տարեալ ընտրութիւն ևեթ ըզհինից՝ քան՝ ինուազել զարքունի իշխանութիւն: Առաջին զգեաշխք ընկալան զամենայն պատունութիւնս նորա և զամենայն նշանակս պատուոյ. էրկիւղ միայն էր, զի եթէ երկոքին ևս տանէին խուրձս, ոչ ևս այնք ահարկու լինէին. Բրուտոս՝ ներքուստ իւրոյ իշխանակցին՝ առաջին ևիաց՝ ի տանել զայնս». Տիտոս Լիւ· էիտ· Բ· Ա:

յօգնութիւն լուրեանց զամենայն նախապատուութիւնս թա-
գաւորութեան: Ամենապետութեան այս առաւելութիւն է
քան զմիապետութեան, զի անսասանելի և՛ ի տևողութիւն,
հաստատագոյն՝ ի խորհուրդս, հաւատարմագոյն յաւանդա-
թիւնս, և ձեռնհասէից յաւելեալ. զի ուր բազմութիւն է երաշ
խաւոր, ոչ ոք անդ ձգէ յանձն զերաշխաւորութիւն: Հռոմի
յետ անձուկ սահմանադրութեանցն ոչ ևս կարօտեր ամիսուե-
ղ զինչանութիւն վարչութեան՝ ի մի ոք, այլ պէտք էին նմա
կարգաց յեղափոխութեան՝ որ տացէ աւագանւոյն ազատ մուտս
՝ի գերագոյն իշխանութիւն, և ձեռնտու լինի՝ ի սրել զմիտս ի-
րաքանչիւր խանձոյ գահակերութեան: Գործ էր ստեղծուլ
ցեղ մի ընտիր սրեղոյ՝ որ նոքին սկզբամբք և նոքին առաքինու-
թեամբ յաջորդեալ զմիմեանս՝ հանապատղորդէին ազգաց յազգս
գլխագոյն կարգ ապահովելոց զմեծութիւն հայրենեաց:
Անկումն թագաւորութեան եղև ապա յեղափոխութիւն ձեռն-
տու՝ ի գարգացումն Հռոմայեցւոց:

Ազատանին միայնակ կալաւ ընդ երկար զամենայն զքաղա-
քական, զզինուորական և զկրօնական պաշտամունս. և զի ա-
ռաւելագոյնք յայսցանէ տարեալք էին, էր զրեթէ և ոչ ոք՝ ի
ծերակուտին՝ որոյ էր անցեալ ընդ այնս. որպէս զի առեալս
այս կալմէր յարանց՝ որ փոքր էին՝ ի վէչս առեներական և՛ ի
Հակառ մարտի, կիրթք՝ ի դժուարութիւնս տեսչութեան, և
Համայն ասել, մեծաշխատ հմտութեամբն արժանաւորք՝ ի
գլուխ կալոյ բազմին Հասարակապետութեան:

Չէին սակս դասակարգեալք որպէս՝ ի մերումս արդի ընկե-
րութեան լեր սահք և նախանձընդդէմ. էարհամարհէր անդ
մարտիկն զքաղաքացին, չխորշէր օրինագէտն և առեներայն՝ ի
գործատուէն, և ոչ քահանայն մերկեալ յասենեցումց: Վասն
ամբառնալոյ՝ ի բարձ աւագութեան և արժանաւոր լինելոյ ըն-
տրութեան քաղաքակցաց՝ ամենքեր ազատորդին ընդ բազմա-
դիմի փորձս անցանել անդատին՝ ի մանկութենէ: Պահանջէր՝ ի
նոցանէ արագութիւն մարմնոյ, Հարտարխոհութիւն, յաջողա-
կութիւն՝ ի մարզս զինուորական, գիտութիւն քաղաքական և
կրօնական օրինաց, Հանձար առաջնորդելոյ զօրուն կամ վարե-
լոյ զնաւատորմիղ, յանձանձելոյ զիւրս քաղաքին կամ հուսակա-

լելոյ. և պարտք բազմօրինակ վարժեցս այսոցիկ՝ ոչ միայն տալը նաև Թուիչս Թևակոխելոյ յամենայն աջողակութիւնս, այլ և պայծ ժողովրդեան՝ որ առ իւրաքանչիւրս յատենակալաց իւրոց՝ ժողովէր ՚ի մի յայն այլևայլ աւագութեամբ պատուեալ: Եւ որ պատուէրն ՚ի վատահութենէ քաղաքակցաց իւրոց, քաց ՚ի փառաւորելոյ տոհմին՝ վայելէր ընդ երկար յերկրակի արժանապատուութիւնս՝ զոր ընծայէր նմա պաշտօն դատաւորի, քահանայի և զօրականի:

Ազատութիւն լուսոյ ՚ի գործ հրամանատարութեան՝ նըպատեր և ՚ի զարգացումն զօրութեանց իմացականին: Զարդիս տակաւին մեր սահմանադրականք ընդ օրէնս ունին չվստահել ընդ իշխանութիւն, որ ՚ի Հռոմ փոխանակէր ընդ այլ վստահութիւն: Յայժմու ընկերութիւնս մեր՝ աւանդատուն իշխանութեան իւրից կաշկանդեալ է միշտ հզօր կապանօք, հըպատակէ խիստ օրինաց, չղջիմ կարգաց, և վերահսկումն: Հռոմ մայելոյն Թողեալ ընդ հակառակն յիւր միայն երաշխաւորութիւն, ազատ յամենայն ոտնակապից, հրամայէր տիրաբար ՚ի սահմանն իւրոց իրաւանց: Սանձ ազատութեանս այսմիկ էր սակաւաւորութիւն պաշտամանց, և իրաւունք տուեալ ամենայն ումեք աստուածոյն լինելոյ զաւեղակալաց յիւր պաշտամանն նոցա:

Այսպ աներևոյթ նախապատուութիւն աւագանւոյն հիմնեալ էր ՚ի վերայ օրինաւոր զերակայութեան. և դիտէր իսկ աւագանին յօգուտ իւր վարել զկերս ժողովրդեան: Ազատութիւն ևան անձին միայն կամէր, բայց դիտէր զպատակեր նորին փայլեցուցանել յաչս ոտնակապից, և անուն ժողովրդեան զուգորդել էր միշտ ՚ի վճիռս ձերակուտին: Խրոխտապանծ ընդ կործանումն միապետական իշխանութեան՝ գուն գործէր պահել ՚ի խառնիճաղանձին զինորս երկիւղն ընդ դարձ Թագաւորութեան: Աստուածութիւն բռնակալաց լոյծ ՚ի ձեռս նորա զին ահաւոր ընդդէմ որոց կամէին աներեսնալ քան զայլս ՚ի վեր, դարանել իշխանութեանց իւրոց, կամ բարերարութեամբք յինքեանս զրաւիչն յանկուցանել: Այսպէս պատճառանօք ատեպ յերկրէ երելովք զԹագաւորութեան Թեկն ածելոյ՝ անկցի յամին 269 ըղեաշխն Սպուրիոս Կասիոս, վասն առաջարկելոյ

նորա զնախկին ազարակային օրէնս. անկցի յամին 315 Սպու-
ռիոս Մեղիոս, կասկածաւոր լեալ աւազանւոյն՝ ցօրեան՝ ի սակի
բաշխեալ ժողովրդեան [1]. անկցի յամին 369 ազատարարն Հռով-
մայ Մանղիոս, վասն ծախելոյ զամենայն ինչս իւր յօգնութիւն
անձեռնհաս պարտատերացդ [2]: Ապա նովին ամբաստանու-
թեամբ անկցի՝ ի զոհ նորոգիչն Տիբերիոս Սեմպրոնիոս Գրակ-
քոս, և յետոյ ուրեմն անկցի և մեծն Կեսար: Արդ եթէ կէղ-
ծիք երկիւղի դառնալոյ վերստին՝ ի նախնին կարգ պետու-
թեան՝ զօրաւոր հնարք էին իշխելոյ՝ ի ձեռս ազատանւոյն, ա-
պա և ստոյգ երկիւղ յերեսաց ոմանցին կորուսանելոյ զիշխա-
նութիւնս իւրեանց՝ սանձահարէր զնոսա՝ ի չափու և յարդա-
րութեան:

Եւ կարի խոհ քաջ. զի եթէ բազմութիւնն զրկեալ յամե-
նայն պաշտամանց՝ չդնէր բողոքանօքն չափ տարտապայման իշ-
խանութեան ազատանւոյն, եթէ չսահմաներ զնոսա արժանի իշ-
խանութեան իւրեանց զոլ առաքինութեամբ, և չնորոգէր
զնոսա զոգես լինի՝ ի մանկութիւն՝ արկանելով արիւն նոր յե-
րակունս նոցա, եղծումն նոցա կամ ինքնիշխանութիւն դա-
րուք ինչ յառաջ ձգէին զնոսա՝ ի կործանումն: Ընկերութիւն,
որ չնորոգի տարերօք եկամուտ սրեղոյ, կրկ զղտաւինք կո-
րուսանելոյ սրեղոյ. և անսահման իշխանութիւն՝ ի ձեռն միոյ սրտիք
կամ դասու սակաւուց, վախճան առնու միշտ՝ ջնաւակար ե-
ղեալ և որոց վարեցն զայն: Ազատութիւն ոմանցին զարթոյց՝ ի
հաւարակապետութեան նախանձ լինի բարեբաստիկ՝ որով յա-
րեան արք աւազք. զի որպէս ասէ Մաղխաւելլի [3], «Երկիւղ
կորուսանելոյ՝ զնոյն կերպ ծնուցանէ՝ ի սրտի, որ ինչ երջ ստա-
նալոյ»: Թէպէտ և սինդ պահէր աջնուաստերութիւն զիշխա-
նութիւնս իւր, սակայն զիտաց և քան ժամանակին առելն տալ
աւ՝ ի յօգուտ: Ձարտար՝ ի կանգնել միշտ զկորանս իւր, այլով

1 «Արդարացի լեալ էր մահ Մելեայ, ասէր Կուինտոս աւ՝ ի հանդարտել
զժողովուրդն, եթէ չէր խակ նա պարտաւոր եղեւան Թեկին ածելոյ զալքայու-
թեան»· Տիտ· Լիւ· Դ· ԺԵ:

2 «Յանողոք սրտից անտի եւ վէիս ազիատալեր, նոցին խակ դառաւորաց առե-
լի»· Տիտ· Լիւ· Զ· Ի:

3 Ճառ՝ ի վերայ Տիփոսի Լիւիոսի, Ա· Ե:

իւիք եղանակաւ ՚ի ձեռս բերէր անդրէն՝ որ ինչ բռնատիրէն ՚ի թողուլ. և ՚ի կորուսանելն ատեպ ինչ ինչ յիրաւանց իւրոց, պահէր անխուսափելի զաւատ իւր։

Այսպէս ահա հռոմէական տէրմնատիրութեանց յաւուրս էր՝ պատրաստել արս յաջողակս յամենայն պաշտամունս։ Ցորչափ իշխանք յանձուկ ատպարիզի գիտացին ամիրութենէ զիւրեանց փառասիրութիւն՝ տեղի տալով ստոյգ շահու հայրենեաց, և հրապոյրք մեծութեան և անսահման իշխանութեան չգառնացեցին զնոսա, եկայ կարգ ազնուապետութեան հանդերձ ամենայն իշխանութիւնքն, և կալաւ հաստատուն զյողդողդութիւն տէրմնատիրութեանց։ Ինքն միայն կարող էր տանել ընդ երկար՝ առանց ընկճելոյ ընդ նոսա զկարգ պետութեան, յորում յանձնանձանք իրաց և հրամանատարութիւն զօրացաւ ամ յամէ անցանէին յայլ և այլ ձեռս ընտրութեամբ՝ որոց տեսարք փոխոխականք էին միշտ։ Եւ օրինք իսկ հակառակս կամարար յաւուրս ածէին տուիմս անիշխանութեան, քան ամ բանիցէ ոչ չնչահարիւտ ազատութիւն։ Ըստ տեսութեանցս այսոսիկ քննեացուք զօրինադրութիւն Հատարականութեան։

Բ. Օրինադրութիւնք Հատարականութեան։

Ընդ ամենայն երկոքին ՚ի սկզբան անդ էին զօրաւարք միանգամայն և դատաւորք և յանձանձիչք իրաց պետութեան. հանդուգնապատիւք յիշխանութեան՝ քաղաքացւոյ այն էր զի տարաձայնք գտանէին յաւերն[1] և ՚ի մարտի[2]։ ԳԺտութիւնք յաճա-

1 Հաւաստիք գԺտութեան երկուց բռնչնից. «Կոչեաց Կասիոս գաղտ որքանիս կարաց ՚ի Լատինացւոց անտի և ՚ի Հերնիկաց, յաճախել իւր հուսակից. եկին խոնեցան նոքա ՚ի Հռոմ, և ՚ի սակաւ ժամանակի լի եղև քաղաքն հիւրովք։ Ապ եղև Վիրգինեայ, և հրաման եհան ՚ի ձեռն քարոզի յամենայն կիւս Ճանապարհաց, զի որոց չէրն բնակութիւն ՚ի Հռոմ, մեկնեացին վաղվաղակի ՚ի քաղաքէն. այլ Կասիոս հակառակ հրամանին իշխանակցին եհան այլ հրաման, չէլանել ՚ի քաղաքէն՝ որոց էին իրաւունք քաղաքացւոյ, մինչ չև օրինացն ընդունելի լեալ և հաստատեալ»։ (Ամ Հռոմայ 268)։ Դիոն։ Ալիկ։ Ը։ ՀՒ։ — «Կոռնելիոս՝ նեղագոյն քան զիշխանակից եւր, կամեցաւ շնորհել ժողովրդեան որ ինչ իրաւացի և արդար խնդիրք էին նորա։ ուր ընդ հակառակն Ապպիոս լաւ համարէր մեռանիլ քան տեղի տալ»։ (Ամ Հռոմայ 283)։ Դիոն։ Ալիկ։ Թ։ ԽՀ։

2 Բդեաշխքն երկոքին նեբհակակիւք բարուք, տարաձայնք էին միշտ ՚ի մի-

խեցին ՚ի նոսա մինչև ցժամանակս բռնակալութեան Կեսարու և Բիբուլեայ. և այնչափ առաւել մարթ էր այնոցիկ ՚ի նմանս կալ զվայրկեանն ՚ի վերուստ մոյ ՚ի բռնակալէն՝ եղծանելոյ զի-մաղրութիւն իշխանակցին: Եւ դարձեալ, սակաւատև իշխանութեան նոցա ժամանակ բռնադատէր զնոսա կամ աճապարել ՚ի չհակառակութիւն առ ՚ի չթողուլ յաջորդի իւրեանց զփառս յաղթութեան[1], և կամ դուլ առնել զինուց և գնալ հաւանել ՚ի Հռոմէ յառեան քաղաքացւոց: Պարտութիւնք ՚ի Տրեբիա, ՚ի Կաննա և Սերուիլեայ Կեպիոնի խորտակումն ՚ի Կիմբրոց՝[2] աղետալի օրինակք կացին տարաձայնութեան ՚ի հրամանատարութիւն պատերազմի:

Այլ ՚ի խափանել զարշաւս չարեաց միանգամայն վարել զիշխանութիւն՝ միաբանեցին բռնաշխք փոխանակաւ իշխել ՚ի պատերազմի օր ընդ մէջ, և ՚ի Հռոմէ ամիս ընդ մէջ տանել յառաջոյ զիսուրձս. այլ նորաձևութեան և այսորիկ եղեն պճոյճի հետևանք[3]: Հարկ եղև յետ լինն անոյ անկման թագաւորութեան կարդել զոք յիշխանապետ. այս իշխանութիւն անպայման, սահմանեալ վեցամեայ ժամանակաւ՝ ի չափ տևողութեան պատերազմական ամի, առժամանակեայ լինչ էր դարման ՚ի դէպս անակնկալս առ ՚ի չգոյէ միոյ միայնոյ իշխանութեան: Այսպա երկպետութիւնս այս և յողդողդութիւն զեղ-ծագոյն իշխանութեան ոչ կազդուրէին զգօրութիւն, միա-թիւն և հաստատութիւն՝ կարևորք ՚ի վարչութիւն ժողովըր-

մեան»· Տիտ· Լիւ· Իբ· ԽԱ: — «Մինչ դեռ ՚ի գժտութիւնս անցուցանէին նո-քա զժամանակն քան յընտրութիւն խորհրդոց...»· Տիտ· Լիւ· Իբ· Խե:

1 Տիտ· Լիւ· ԻԱ· ԾԲ: — Վիճն Կասսիոս, Հռոփ· Ի, ՄՀԱ· տպագր· Կրոյ:

2 Տիտ· Լիւ· ԻԱ· ԾԲ:

3 «Ի հռովմէական բանակին բռնաշխքն երկոքին հաւասար վարէին իշխանութիւն· այլ զինչմանէն Ագրիպպայ ամիսս եւթ իշխանութիւն՝ ի ձեռս իշխանակցին, հաւասարեաց վիճութիւն կարևոր ՚ի յաջողութիւն մեծամեծ գործոց»· Տիտ· Լիւ· Գ· Հ: — «Բռնաշխքն երկոքին բազում անգամ հրամայէին միանգամայն յա-ջորդ պատերազմի»· Տիտ· Լիւ· Պոպերաց վէրոնայ լերին· Ը· Թ: — Պոպերաց ՚ի Սէնպինան, ժ· Ի: — «Նորաձևութիւն ազնատոհմիկ, զի յայնմ հետէ առն իւրա-քանչիւր ուշ նպատակի եղև օգուտ անձնական և ոչ հասարակաց, լաւ համարե-լով զբեհուն հասարակապետութեան քան զիշխանակցին փառաւորութիւն, և չարիք անթիւ հասին ՚ի վերայ հայրենեաց»· Վիճն Կասսիոս, Հռոփ· Բանփ· Ծև· տպագր· Կրոյ:

դեան՝ որ անդուլ՚ի պատերազմունս կայր, բարձեալ էր ՚ի միջոյ· բայց ծանրագոյն արկեաք լինէին չարիք՝ եթէ նոյն խնդիրը շահու և նոյն տեսութիւն՚ինոյն դաս պատկանելոց չնաւագէին զայնս։ Չզօրագոյն էր մարդ քան զսահմանադրութիւնս, որ գնա հրահանգէին։

Ընտրութիւն ռամկապետաց, որոց պաշտօն եղև տալ կանոն յոյժ, պատճառս ետ յամին 260 նորոյ գժտութեան. ռամիկն՝ յորոց էր մեծ մասն զօրուն, խնդրեաց իշխանս իւր զզօրավարս[1]. իշխանութիւն ռամկապետաց չափաւոր էր ՚ի սկզբան, որպէս քաջայայտ ի յօրինաց աստի՝ որ գնաս հատատէրն[2]. «Մի տարտարհակ վարել զռամկապետ իբրև զսինկղոսն զի հարկանել գնա, և մի ՚ի ձեռն այլոց ուրուք նեղել գնա, մի սպանանել գնա և մի տալ սպանանել[3]»։

Այսի ի խնդատասիրել յոր նուաստութիւն զառաջեալ էր ռամիկն։ Սակայն արգելիչ վարկ ռամկապետաց կարէր խափանել զառաջարկութիւն օրինաց և վճռոց բղեշխից և ծերակուտին, զզօրաժողով, զքաղաքաժողով և զընտրութիւն առեհնակալաց[4]։ Այնպատին յ297 ամէ թիւ նոցա եհաս ՚ի տանն,

1 «Ռամկապետք (Տրիբունք) կոչեցան որք ՚ի սկզբան հազարապետք զօրաց էին, և յանձն եղև նոցա ապա պաշտպանութիւն ժողովրդեան ՚ի մեհենել նոցա ՚ի Կրապտոմեր»· Վարրոն, Հատին լեզուէ· Ե· էջ 81· տպագր· Օ· Միւլլեր։

2 «Տժգոհք ընկալան յազատանուոյն զհաստատութիւն առեհնակալաց իւրեանց, և ապա խնդրեցին ՚ի ծերակուտէն ընտրել ամ յամէ երկուս շինուածապետս յօդնականութիւն ռամկապետաց յոր ինչ և պէտս ունիցին, ՚ի քննել զգաստասանս առ ՚ինոցանէ յանձնեալս ինքեանց, ՚ի խնամ ունել զարբազան և զհաստատակաց շինուածոց, և յապահովել զմեծս վաճառանոցաց»· (Ամ Հռովմ· 260)· Դիոն· Ալեկ· Զ· Դ։

3 Դիոն· Ալեկ· Զ· 2Թ։

4 «Ռամկապետք հակառակ կան զօրաժողովոյ»· (Ամ Հռովմայ 269)· Դիոն· Ալեկ· Ը· 2Ա։— «Լիկինիոս և Սէքստոս, վերստին ընտրեալ ՚ի ռամկապետութիւն, չԹողին ընտրել և ոչ զոք յառեհնակալ· և քանզի ժողովուրդն միշտ զերկոսին զայնոսիկ ընտրէր ռամկապետս, որք մերժէին միշտ զընտրութիւն հազարապետաց զօրուն, եկաց քաղաքն զամս հինգ առանց առեհնակալաց»· (Ամ Հռովմայ 378)· Տիո· Լիւ· Զ· Լ։— «Յառեհնոյն նուագի՝ ի գումարել բղեշխից զժողովուրդն առ ՚ի տալ հետամտիցին զբղեշխութիւն, ռամկապետք զօրութեամբ իշխանութեան իւրեանց խափանէին զգումարումն ժողովոյն։ Այնպէս ՚ի խմբել սոցա զժողովուրդն յընտրութիւն, արգելուին զայն բղեաշխք՝ ինքեանց սեփականեալ զերկոսեան խմբելոց զժողովուրդն և հաւաքելոց զքուեայս»· (Ամ Հռովմայ 271)·

այսինքն՝ երկու յիւրաքանչիւրոց՝ ի հնոցէ գաւուց՝ յորոց առա-
ւելապէս դումարէին զօրք[1]. բայց դարձս այս, ոչ յոյժ օգտա-
կար եղև ռամկին. զի ըստ աՀել Թուոյ ռամկապետաց, դիւ-
րագոյն լինէր աղնուապետականաց գտանել՝ ինոսա օգնական
խորհրդոց իւրեանց: Տակաւ յաւելաւ զօրութիւն նոցա, և յա-
ղին 298 յիւրեանս գրաւեցին զիրաւունս հոլմնելոյ զծերա-
կոյան, Թէպէտ և ընդ երկար ժամանակս արտաքոյ էին ին-
քեանք՝ ի ժողովոյն[2]:

Ոակ յաւէնի քաղաքացւոց, սակաւ յոյժ էր զօրութիւն ժո-
ղովրդեան: Ի ժողովս Հարիւրեկաց, վարկ առաջնոց գաւուց՝
որ կազմէին՝ ի մեծամարթամ քաղաքացւոց՝ զօրաւորագոյն
էր քան զայլս առ Հասարակ, որպէս տեսաք: Ոակ՝ ի գումար-
մունս վիճակաց, ազատանէին էր բացարձակ. որպէս զի՝ ի վերջ
կոյս երկրորդի գարուն, յորժամ ընկալաւ ռամիկն ժողով ըստ
ցեղից[3], այս ընդդէմ ջրաւել մեծ ինչ յազատութիւնս նորա. զի
իշխանութիւն ևեթ տայր նմա ժողովելոյ՝ ի հրապարակի, ուր
գաւուցեալ ըստ ցեղից, արկանէր զքուեայս իւր՝ ի սակրոս յին-
տրութիւն ռամկապետաց և չինուածապետաց, որ ցայնժամ՝ ի
ձեռն Հարիւրեկաց[4] ընտրէին. վճիռք նորա՝ ինոսա միայն պատ-

Դիոն. Աւիկ. Ը. Դ: — «Մերթ ռամկապետք խափանէին զազատանին գալ՝ ի ժո-
ղով յընտրութիւն սենեկապետի, և մերթ ոտքս արգելուն զնոյն ինքն զսենեկապետն
մի՛ կոչել զծերակոյան՝ ի ժողով յընտրութիւն բգեշխից»· (Ար Հռովմայ 333)·
Տիտ· Լիւ· Գ· ԽԳ:

1 Տիտ· Լիւ· Գ· Ն:

2 Դիոն· Աւիկ· ԺԱ· ԼՄ:

3 «Երևելագոյն դէպք տարւոյս (առ Հռովմայ 282) յորում յաջողութիւնք զի-
նուց յերերի կացին, և յորում յարնաւ գժտութիւն՝ ի բանակի և՝ ի քաղաքի
սաստիկ յոյժ, եղև Հաստատութիւն ժողովոյ քաղաքացւոց՝ ի ռամկէն. նորաձև-
ութիւն՝ որ էառ նմա զպարծանս յաղթութեան, այլ սոյգ ինչ օգուտս սակաւ:
Զի մերժուին ազատանուցն եբարձ՝ ի ժողովոյ քաղաքացւոց զամենայն շուք պայ-
ծառութեան, առանց յաւելցի զօրութիւն ժողովրդեան, կամ տկարացուցանե-
լոյ զծերակուտին»· Տիտ· Լիւ· Բ· Ն:

4 Ի Համախմբութիւնս ժողովրդեան՝ ի քաղաքի և՝ ի բացի ոչ Հարիւրեակք
տային քուեայս, այլ ռամիկն ըստ ցեղից· «Յաւուր երրորդ ութնաւաձառին վաղ
քան ընդ առաւօտն լցեալ էր հրապարակն ծայր՝ ի ծայր պիւղականօք, ոչ ուրեք
երբէք այնպիսի ինչ երևեալ: Գումարեցին ռամկապետք զժողովուրդն ըստ ցե-
ղից, և լարաբաժին արարեալ զհրապարակն ըստ Թուոյ նոցա՝ զաւուցին տեղի
այլ և այլ: Ա յս առաջին նուագ էր Հռովմէական ժողովրդեան՝ ի ձեռն նոցա

կանէին, ոչ ինչ բռնադատեալ զազատանին. որպէս զի այնու հետեւ նոյն և մի քաղաք վերուց քաղաքաց բերէր կերպարան, ունելով իւրաքանչիւր առեւտակալս և օրէնս ինքնուրոյն[1]։ Ոչ կամեցաւ ազատանին՝ ի սկզբան մատնակից լինել ժողովոյ ոամկին, բայց վաղ ծանուցեալ զօդուտն որ անտի, մտին՝ ի ժողով անդր սանիւք իւրեանց յամին իբր 305[2]։

Գ. Կերպարանափոխութիւն պետութեական վարչութեան։

Քաղաքավարութիւնս այս, յօրինեալ՝ ի զանազան տարերց ընկերութեան, զժուարաւ կարէր հաստատել կարգ ինչ առաջական, եթէ զերակայութիւն մարդկան՝ որոց էին բարեմասնութիւնք՝ ի բնէ՝ ոչ զօրանային ընդդէմ պատճառաց տարաճայնութեան։ Եւ զերակայութիւնս խակ այս վաղ տկարանային, եթէ ազատութեանց բռնի կամ մտադիւր տուեալց՝ չէր տակաւ հարեալ զթումբս՝ ի միջոյ երկուց դասուցս։

Ապաքէն ազատ իշխանութիւն զդեչխին, Թերևս՝ ի ձեռնակուսէն ևեթ[3] տուեալ նոցա՝ ի սկզբան, յորմէր տատիկ

տալոյ քուեայս՝ զիւանակութեամբ ազատանուցն, որ խափանէին կամէր զայն, և ըստ վաղնջուց կարգաց՝ ի հարեւրեկաց գումարել ժողով»։ (Ամ Հռոմայ 263)։ Դիոն։ Ակիկ։ Է։ ՍԲ։ — «Ի ժամանակէ անտի (ամ 283 առ զդեչխութեամբ Ավ-գոստոսի) մինչև ցաւուրս մեր, առեան ոամկին ընտրէր զառաջադահս և զչինուածս առանց հաւանմանէ և այլոց դիտողութեանց։ Այս վախճան եղև խառնութեանց, որովք յուզէրն Հռոմ»։ Դիոն։ Ակիկ։ Թ։ ԽԹ։ — «Ժողովուրդ Հռոմայ և քան զևս գառնացեալ, կամէր յաւելուլ իւրաքանչիւր ցեղից միւս այլ երրորդ սահման վասն քաղաքին Հռոմայ առ ամփոփելոյ անդր զքուեայս»։ (Ամ Հռոմայ 308)։ Դիոն։ Ակիկ։ ԺԱ։ ՍԱ։

1 «Երկու՝ ի միջէ բաժանեալ քաղաքս, երկաքանչիւրոցն առեւտակալս գոլ և օրէնս ուրոյն»։ (Տիտ։ Լիւ։ Բ։ ԽԴ։) — «Արդարև, որպէս առաքինէքդ խակ, զառաւցեալ եմք յերկուս քաղաքս, յորոց մին ազգասուրեամբ և կարօտութեամբ յանձանձի, միւսն լեռնութեամբ ամենայն կրաց, և գոռոզ առաքինութեամբ»։ (Ամ Հռոմայ 260)։ Դիոն։ Ակիկ։ Ճառախօսութիւն Տիգոսի Լուկիոսի առ դեսպանս Վղկիանոյ, Զ։ ԼԶ։

2 Սկիպքն արարին զանք տալ զվարկս ըստ ցեղից, ըստ օրինադրութեանն Վաղերիոսի Ովրաւեայ։ և առաւելեմբ ըստ պատուիրանի Տիտոսի Լիւիոսի (Ե։ Լ, ԼՔ։), զի յաւուրս Կամիլլեայ զանք և ազատանին վաղ խակ մտեալ էին՝ ի ժողովս քաղաքացւոց ըստ ցեղից։

3 Ապպիանոս, Քաղաքական պատերազմունք։ Ա։ Ի։

ամբաստանութիւնս՝ թողեալ ասելն զի «Ընդհակառակն իշխանութիւն ոչինչ նուազ քան զԹագաւորացն խոհար էր. զի փոխանակ միոյն՝ երկու էին խնդութեանց տեարքը, լուծլ անսահմանն անկանոն և անսանձ իշխանութեամբ, որ ընդդէմ ժողովրդեան ջրջէր զանեղայն սպառնալիս օրինաց և զանեղայն պատուհաս»[1]:

Թէպէտ և յ'283 ամ հետէ ընդ նոսին դասաւորք[2] *հպատակէին ազատանին և ասիկն, սակայն առ'ի չգոյէ հաստատուն օրինաց՝ ստացուածք և կեանք քաղաքացւոց'ի հաճոյս իւրեանց էին և ասիկայ ամենակալ էր ապաստան:*

Հարկ էր ապա անհրաժեշտ հաստատել զօրինս'ի վերայ անխախտ հիմանց, և ընտրեցան յաւին 303 տան առեներկալք'ի Տաճատեաս, առեալ զանձամբ կրկնակի իշխանութիւն զդէմ եղիսկ և զամենայն, որով իրաւունք էին նոցա հաստատել զքաղաքացիս'ի ձեռն Հարիւրեակաց և'ի ձեռն ամենեցուն: *Ձանձն եղև նոցա յօրինել մատեան օրինաց, որ ապա կոչեցան Օրէնք երկոտասան տախտակաց, քանդակեալ'ի պղնձի, հին Հռովմէական իրաւանց: Սակայն օրէնքս այսոքիկ խափանէին զեռ ևս զմիութեան երկուց կարգացն զքաղաքական արգասիս, և Թագուհին զաւարտապանս'ի կամս պարտաւորէր ընդդէմ վճռոյ Սերուխոյ Տուլեայ:*

Ջեղծան տասնապետքն իշխանութեամբ իւրեանց, և անկմամբ նոցա յաւելան պահանջք ասիկն. իշխանութիւն ամենակալեցոյ՝ որ դադարեալն էր յերկոց ամաց հետէ, վերստին հաստատեցաւ, և սահմանեցաւ զի օրէն լինի թողուլ առ ժողովուրդն ընդդէմ վճռոյ տասնապետաց. և զի օրէնք սահմանեալք յաւելուն ասիկն, որպէս և յաւելուն Հարիւրեակաց, լինի ամենեցուն անդրժելի[3]:

1 Տես· Լխ· Գ· Թ:

2 Վեկտորիոս՝ երիցապոյն'ի ասիկասեաս իսաեցաւ զօրինաց, ոչ'ի թագմոց հետէ կարգելոց: «Առաջնոյն, որ հայեր'ի փոխադրութիւն դասուց, շնորհեր ժողովրդեան՝ ընտրել իւր դատաւորս՝ զորս կամէրն յազատանուցն». (Ամ Հռովմայ 283)· Դիոն· Ալեք· Թ· Խգ:

3 «Օրինաց վճռելոց'ի ժողովրդենէ համախմբելոց ըստ ցեղից՝ հասանէր պարտ'ի վերայ ածել ամենայն հաւանութեցւոյ, և զնոյն ունել զօրութիւն որպէս սահմանելոցն յաւելուն հարիւրեակաց: Եւ վճռեցաւ պատուհաս մահու, և գրաւումն ընչից'ի գանձ հասարակաց, ըմբռնելոցն'ի յանցանս խափանելոյ կամ դրժելոյ

Ոյսվ կացին երեք առեանք կամ ժողովք քաղաքացւոց. առաջին՝ ժողով վիճակաց՝ որ տալով իշխանութիւն առեալ կալցց ընտրելոց՝ ի ձեռն հարկադրեկաց, հաստատէր յեղանակ իւր ինն ընտրութիւն բռնելոց՝. երկրորդ՝ ժողով հարկադրեկաց, պահելիցս թեամբ բռնելոց. և երրորդ՝ ժողով ռամկին, պահելիցս թեամբ ռամկապետաց. առաջինն՝ ընտրէր զբռնեալսն, երկրորդն՝ զառեղակալս ռամկին, և երկոքին ևս կազմեալ զոգես՝ ինոցունց քաղաքացւոց, կարէին անխտիր հատանել կամ մերժել զօրինս. բայց յառաջինսն Հռոմայեցիք և ազնուականք ունէին զառեղայն ազդեցութիւն, զի՝ ինոցանէ էր մեծ մասն հարկադրեկաց, և նախ ինքեանք տային զվարկս. իսկ այլոցն խառնէին վարկք ընդ քոնեայս ռամկին՝ ուստի և ինքեանքն էին։ Այսպէս ոմն՝ ի վաղեմի մատենագրաց. «Եթէ ժողովն քոնեայք բան ազգաց, առեանն է՝ ի վիճակաց. եթէ բան տից և բան ազգահամարին, է՝ ի հարկադրեկաց. իսկ եթէ բան գառաւի գառաւի, է՝ ի ռամկին»[2]։ Հանդերձ ազատութեամբքս այսոքիւք՝ տիրէր միշտ հակառակութիւն օրինաւոր ընդ իշխանութիւնս, ընդ ժողովս և ընդ այլ և այլ կարգս քաղաքական ընկերութեան։

Ռամիկն Թեկն ածէր զառեղայն պաշտամանց, մնասանել զգերեշխութեան, և չկամէր գրել՝ ի գինուորութիւն եթէ իսկզբանէ իւր ոչ կատարէին, և՝ ի պահանջանս իւր զայն իսկ՝ ի

օրինացս։ Վճիռս այս նոր լուեցոյց զվաղնջուց գժտութիւնս ռամկին և ազատանոյն, որ ոչն կամէին հնազանդել օրինաց կարգելոց՝ ի ժողովրդենէ, բաղբաղանօք՝ զի որ ինչ սահմանէրն՝ ի ժողովն գումարելոց ըստ ցեղից՝ վասն ժողովրդեան միայն էր և ոչ քաղաքին ողջոյն. և զի ընդ հակառակն՝ որ ինչ սահմանէր յառեղակալ հարկադրեկաց՝ օրէնք էին վասն նոցա և վասն ամենայն քաղաքացւոց». (Ար Հռովմայ 305). Դիոն. Ալիկ. ԺԱ. Խե։ — «Պատճառք վիճից էին միշտ՝ ի մէջ երկուց դասուց, Թէ պա՞տա էր ազատանոյ հպատակել վճռոց ռամկին։ Երեցագոյն փոյթ բռնէին եղև առաջի առնել առեղակալ հարկադրեկաց զօրէնս՝ զի վճռաք ժողովրդեան համաձայնելոց ըստ ցեղից լինի յօրէնս աշխարհին». (Ար Հռովմայ 305). Տիտ. Լիւ. Գ. Ծե։ — «Ազատանէն ինքեան միայն անկ համարէր օրէնս տալ». Տիտ. Լիւ. Գ. ԼՀ։

1 «Ժողովք՝ ի ձեռն վիճակաց վասն ամենայն իրաց որ՝ ի գինուորութիւն հային. Ժողովք՝ ի ձեռն հարկադրեկաց յընտրութիւն բռնելոց ձերոց և հպատակեսցոյ զօրուն, և այլն». Տիտ. Լիւ. Ե. ԾԲ։

2 Ագէլս Գելլիոս. ԺԵ. ԻՀ։ — Փեստոս, ՝ի բառն վճիռ ժողովրդեան։

նեալքս աճէր՝ զի Թագաւորայ ՚ի ռամկէն էր ծագումն։ Կա֊ նուխեայս ռամկապետ գոչէր առ ժողովուրդն. «Կամիցի՞ք ու֊ բեմն ունել զդեւաշխս հանդոյնս տանջանաց, վաստիարայց քան զամենայն մարդիկ՝ պատրկաց առ հասարակ, քան լաւագու֊ նիցն ՚ի մերոց Թագաւորայ, արանց երկիւանց»։ Իսկ ոչ նախանձք էին ՚ի հանարի[1]։

Ընդդէմ դառնայր ծերակոյտն, զի չկամէր տալ ռամկին զիրաւունս զդեշխոյ հանախմբելոյ զքաղաքացիս, և զաւագ հմայից պաշտօն կրօնական՝ պահել ազատանոյն[2]։

Ար ՚ի զաւաջս առնուլ զժուարութեանս, խափանեալ ծե֊ րակուտին զօրինական արգելս առնելոյ ընդ ազատա֊ նին և ընդ ռամիկն, հաւանեցաւ յ309 ամին՝ ընդ հաստատու֊ թիւն վեցից հազարապետաց զօրուն, հաւասար զդեշխոյ

1 Տիտ. Լիւ. Դ. Գ։

2 «Ծանրացաւումն լինէր ժողովուրդն, զի արգելուին նմա մի հարցանել հմայս, որպէս եթէ գարշելիք էին այնք գիւոյն անմահից»։ — «Եհարց ռամկապետն թէ առ ինչ չկարէր ոք ՚ի ռամկէն կալ զդեշխոյ. որում պատասխանի ետուն թէ էին հմայս ռամկին, և թէ տանեցւոց վասն այսորիկ արգելեալ էր նոցա ա֊ մուսնութիւն ընդ ազատանոյն՝ զի մի ազգիւացին հմայք ՚ի խառնածին մարդկա֊ նէ»։ Տիտ. Լիւ. Դ. Զ։ — «Յորմէ ձեռս են արդ՝ ըստ հայրենաւանդ սովորութեան՝ հմայք։ Ի ձեռս ազատանոյն՝ որպէս կարծեմ. զի չառնին հմայք ՚ի կալ ուրուք առեներակալ ՚ի ռամկէն»։ — «Եւ չիցէ այս բնաջինջ առնել ՚ի քաղաքէս զհմայս ՚ի բառնալ զայնս յազատանոյն չքնարութեան առենակալն ՚ի ռամկէն, ուր ազատք միայն կարող են պահել զայնս»։ (Ամ. Հռովմայ 386)։ Տիտ. Լիւ. Զ. ԽԱ։

Զդեշխոյ, գառաւորի և համարտակալի պահեալ էին իրաւունք առաջ հմայից, և առաքակարգ առենակալաց փոքունքն։ Աւագ հմայք Թուին լեալ այնք, որոց պաշ֊ տօն զօրացուցանէր զիրաւունս ազատանոյն։ Զունիմք ինչ ՚ի նախնեաց Ճշդիւս առմանն զերկոցունց ազգացս հմայից, բայց Թուի նոցին Կիկերոնի առմանել զայն յասելն (Զօրինաց Բ. 12), զի աւագ հմայիւք իմանային զայնս, ուր անհրաժեշտ պէտք էին հաւատմանց. իսկ փոքունք, որ առանց նոցին կատարէին հմայք։ (Տես Աւլոս Գելլիոս, ժԳ. ԺԵ.)։ — Իսկ վասն հմայից առենի քաղաքացւոց, ուր ընտրէին ռամկապետք յարանց՝ որոց կացեալ էր զդեշխոյ, հաստատեն բանք Տիտոսի Լիւիոսի (Ե. ԺԴ, ՍԲ. Զ. ԺԱ.), զի նոյնք էին ընդ հմայս ընտրութեան զդեշխոյ, որով և նոյն ընդ աւագ հմայս. քանզի գիտեմք ՚ի Կիկերոնէ (Վասն ընդ֊ դէմ Ռուլլեան Ա. 17. Բ. 35.— Տիտ. Լիւ. Դ. Է.) զի պարտ էր առենակալին՝ որ ժողով գումարէր քաղաքացոց՝ ածել ընդ իւր զոք ՚ի հաւատմից, որում հար֊ցանէր զնշանացն գուշակութիւնս։ Ի ժողովս քաղաքացոց չքնարութիւն ամ֊ կապետից յարանց՝ որոց կացեալ էր զդեշխոյ, պահէին իրաւունք ազնուակա֊ նաց՝ ընտրութեամբ տեղական յազատանոյն։

տաեալ նոցա իշխանութիւն. այլ որ կարևորագոյնն էր՝ տե-
ղահալէին միայր հանգամանել զքաղաքացիս և հարկանել զՀա-
սահմայս[1]: Ընդ սմն եօթանասուն և եօթն՝ հազարապետք
զօրուն վոխանակաւ ընդ բդեշխից վարէին իշխանութիւն, և
ոչ ևս հաստատութեամբ դարձաւ բդեշխութիւն յառաջին
կարգ իւր, քայց թոյլ տալով և ռամկին յ387 ամի՝ հասանելոյ
'ի նոյն աւագութիւն, ըստ միում յօրինաց անտի Ալիվնեաց
Ստեփանի: Ռամկապետս այս ետ ընդունել առաջարկութիւնս
բազումս, որ թուէին դարձեալ նոր ինչ թուականութիւն՝ ըն-
դունելով զգժտութիւնս: Սակայն ազատանէին այնպէս պա-
հէր իւր զատտնութիւն հարկանելոյ զՀմայս, զի յամին 398
ոչ գոլով անդ բդեշխին՝ որ յաղատահարէին էր, կարգեցաւ
տեղակալ գահերից տաճկի քաղաքացւոց՝ առ'ի չթողուլ զան-
ձանձանս իրաց ոչ իշխանապետին և ոչ միւսոցն բդեշխ, զի
երկոքին խակ էին 'ի ռամկէն[2]:

Բայց հանդարձակելով դատս ժողովրդեան հասանել'ի բդ-
եշխութիւն, 'ի քաց առնուին յիշխանութենէ անտի բազում
ինչ իրաւունս՝ տալով զայնոսիկ տեղակալաց ազատաց: Ա. յա-
պէս տակաւ բառնայր 'ի բդեշխից՝ հաստատութեամբ երկուց
գանձապետաց յ307 ամին՝ հոգ տեսչութեան զինուորական
գանձուն[3]. հաստատութեամբ հանդրակալաց յ311 ամի՝ իրա-
ւունք ունելոյ զգանկ ազգահանութիւն և զխափս եկամտից տե-
լութեան, և հակելոյ 'ի վերայ բարուց հասարակաց. հաստա-
տութեամբ դատաւորաց յ387՝ տեղապետական իշխանու-
թիւն 'ի խնդիրս քաղաքացւոց, իբր թէ ազատորելոյ ևեթ էր
գիտութիւն Կուիրեան իրաւանց. և հաստատութեամբ շի-
նուածապետաց գահերից՝ վերակացութիւն խաղուց, հո-
գաբարձութիւն շինուածոց, ատիկանութիւն և խնամ համ-
բարուց քաղաքին, հոգ և պահպանութիւն ձանապարհաց
հասարակաց և տեսչութիւն վաճառանոցաց:

1 Տիտ· Լիւ· Զ· ե:

2 Տիտ· Լիւ· Է· ժէ:

3 Յամին 333 եհաս Թիւ գանձապետաց 'ի ջորս: Երկուքն 'ի պահ գանձուն և
'ի տեսչութիւն հասարակաց եկամտից կարգեալ 'ի բդեշխից, և այլ երկուքն 'ի մա-
տակարարութիւն զինուորական գանձուն կարգեալ 'ի ռամկապետաց:

Աջնաւապետաց կամք էին պարտութեալ՝ եթէ զակամայ շնոլ հեաւ ազատութիւնս. այլ յետ ընդունելութեան Վիկինեան օրինացն՝ ոչ ևս մարթ էր արգելուլ իրաւացն զմուտ ռամկին յոր և իցէ աւագութիւն։

Յամէ անտի 386 հասեալ էին սքա՛ւ ի կարեւոր աւագութիւն հեծելապետութեան՝ որ էր գոտցես տեղակալութիւն իշխանապետին[1]. իսկ յամին 387 բացաւ առաջի նոցա մուտ՛ ի կրօնական պաշտամունս[2]. յ395 ընկալան զպանձապետութիւն, և յ398 զիշխանապետութիւն անգամ։ ՛ի 403 զհամարակալութիւն, և յետոյ ուրեմն ՛ի 417 զպատուոյրութիւն։

Ցինքն վտարեաց Ժողովուրդն յ391 ամին զիրաւունս ընտրելոյ զկեսս ՛ի հազարապետացն լեգէոնիս, որք յայնժամ՛ ի ձեռն բռնակալին էր անկ որոշել զպայման քաղաքացւոց և տալ վճիռս յընդունելութիւն կամ՛ ի մերժուիլն առեղակալոց ծերակուտին։

Այս ամենայն դիտաւորութիւն Պուպլիլեան օրինաց էր՛ ի նոյն կարգ անբաւնալ զերկոցունց դասուցս զանգուածութիւն, և յարուցանել ազատարեար կալմեալ յամենայն ընտանեաց, որ նշանաւոր լեալ էին սպասահարկութեամբ հայրենեաց։

1 «Հէնիլապէս կոչէր վասն գերադունի իշխանութեանն՛ ի վերոյ ասպետաց և զգեստաւորին՝ և հանգոյն իշխանապետին հրաման ասէր համօրէն հռովմէական Ժողովրդեան, յորմէ ընկալաւ և զանուանն Մաքիստրոս Ծողէդեան»։ Վարրոն, վասն լեզուին լատին. ե. 82. տպ. Միւլլէր։

2 «Ջերիպեան, զարբազան ծխոյ հոգաբարձուա՝ յաջորդելոյն տաճարապետ. կէսք՛ ի ռամկէն և կէսք յազատենէ»։ Տիտ. Լիւ. Զ. Ա։

3 Տիտ. Լիւ. Ի. ե։

Դ. Պատմութ կոչեան:

Ի սկզբան հինգերորդի դարուն Հռովմայ՝ կցորդութենն մոա
բանութեան երկուց դասուց տուեալ էր քաղաքաժողով ընտ
կերութեան առաւել ևս մեր Հաստատութիւն. բայց զոր օ
րինակ ուեսաք առ Թագաւորութեամբ՝ ի վեր երևել սկզբանց՝
ոչ յաւուր միում պատճառ ունէին լինել մեծութեան Հռով
մայ, այնպէս տեսանելի յայնժամ երևել վտանգաց, որոց մի
նայր ապա անդրել՝ ի վեր ամբառնալ: Ընտրութիւն կաշառա
կուրծ, օրէնք ընդդէմ դաւադրաց, ստրկութիւն, բազմանալ
աղքատանաց, ազատականին օրէնք և խնդիր պարտուց՝ ապա
հասցեն յայլ և այլ դէպս կործանումն Հասարակապետու
թեան: Յուցցուք Համառօտիւք զի վէպ այսոքիկ ծանուցք առ
յապա, վաղ իսկ յուզեալ էին:

Կաշառակուրծ ընտրութիւն. — Եմուտ նեղ յընտրու
թիւնս՝ յորմէ հետէ ազեաց թիւ ընտրելեացն, և Հարկ եղև
բազմութիւս քուէիւք Հաստանել՝ ի Հաստատից պաշտամունս:
Օրէնք առաջարկեալ յ396 ամին՝ ի Ս. Պետիլիոսէ ռամկապետէ
վանն Հետամտութեան յատենակալութիւնս՝ շատ իսկ Հաւա
տեն զկաշառակուրծ ընտրութիւնս:

Օրէնք քրէական յանցագործաց. — Յամէ առաւ 305 և 369 օրէնք ընդդէմ դաւադրաց Հասարակապետութեան՝ ի կիր ա
ռեալք, եղեն զէնք՝ որովք անպատճառ ապա առ ինքնակալօք
չարաչար վարեցան, անուանեալ օրէնք քրէական յանցանաց[1]:

Ստրկութիւն. — Ստրկութիւն սպառնայր վտանգս ծա
նուցանել քաղաքաժողով ընկերութեան, նախ զի դիւրապնդ վտ
տակէր փոխանակելով զազատս մարդկին. և երկրորդ անգամ՝
զի ժժգոհ ընդ պայման իւր, պատրաստ էր՝ ի թօթափել
զլուծ, և օժընդակել ամենայն գահատէր մարդկան: Յաման
253, 294, 336 *ապստամբութիւնք ըստմանեայք եռուն՝ ի միտ*

1 «Ապրիս կոչէ աշխարհաժողով, և վտահացեալ յիշխանութիւն իւր ռամ
կապետական, ամբաստանէ զՎալերիս և զՈվրատիս, դաւաճանս Հասարա
կապետութեան». (Ար Հռովմայ 305). Դիոն. Ալիկ. ԺԱ. 18:

առնուլ պետութեան զի անդատին իսկ երկիւղալը էր դաս մարդկան զուրկ յամենայն բարեմասնութեանց, թէպէտ և սերտիւ կցորդ ընդ ամենայն պէտս կենաց հասարակաց[1]։

Աւրագ արագ աճէր թիւ ստրկաց՝ ի բազմութիւն, և փո՞ խանակին նոքա ընդ ազատ քաղաքացւոց զորս պատերազմունք կուտ զՀետ եկեալ յափշտակին՝ ի մշակութենէ երկրի։ Եւ ապա՝ ի դառնալ ոտա՝ ի հայրենիսն, պարտ էր ծերակուտին կերակրել զնոսա՝ տալով բերել մինչև՝ ի Սիկիլեայ ցորեան, առ՝ ի բաշխել զայն նոցա ձրի, կամ դիւրագնի[2]։

Ագարակային օրէնք.— Ագարակային ևս օրէնք և խնդիրք պարտուց՝ ոչ յամեցին յուզմանց անվախձանից լինել պատՃառք։ Թագաւորքն՝ կալուածս լինն առնէին զերկիրն կալեալ զինու զօրութեամբ՝ ի գլխաւոր հաս պետութեան[3], և առաջ տաճեռնէին մանր լինչ անտի յաղքատ քաղաքացիս[4]։

1 «Մինչդեռ այս կրք էին, դէպ լինէր դառաճանութեան ստրկաց բազմաց՝ ի հոսիմ միաբանել՝ ի խորհուրդ ունելոյ զամրոցս և հուր արկանելոյ յայլ և այլ կողմանս քաղաքին». (Ամ Հռովմայ 253). Դիոն. Աւիկ. Ե. ծԱ։ — «Ի բարձուէ կապիտոլին կոչէր Հերդոնիոս զատրուակս յազատութիւն. զկրաւունս Թշուառաց առեալ՝ ի պաշտպանել, խոստանայր զարձուցանել՝ ի հայրենիս զատարագրեալս անտի ատրամպարտուց, և ազատել զատրուակս՝ ի ծանր լծոյ, զիտուս գործոյն ընծայելով ժողովրդեան Հռովմայ». (Ամ Հռովմայ 294). Տիտ. Լիւ. Գ. ԺԵ։ — «Ստրուկք միաբանեալ՝ ի գաւակցութիւն հանդերձէին հուր հարկանել զայլ և այլ կողմանց քաղաքին, և՝ ի գիմել ժողովրդեան յօգնութիւն յարկացն հրկիզելոց, յարձակել զէն՝ ի ձեռին՝ ի միջնաբերդն և՝ ի Կապիտոլիան։ Բայց՝ ի գերև եհան Արամազդ զելեռնաւոր խորհուրդս նոցա, զի մատնութեամբ երկուց ոմանց՝ ինոցանէ՝ ձերբակալ եղեն յանցաւորքն և ընկալան զպատիժ պատուհասին». (Ամ Հռովմայ 336). Տիտ. Լիւ. Դ. Խե։

2 «Անագան ուրեմն առ բռնչխութեամբ Մ. Մինուկիոսի և Ա. Սեմպրոնեայ, եհաս ցորեան առատ՝ ի Սիկիլեայ, և ծերակոյտն եհատ զկինս վաճառելոյ զայն քաղաքացոց». (Ամ Հռովմայ 263). Տիտ. Լիւ. Բ. ԼԴ։ — «Եւ զի առ՝ ի չքպոյէ մշակաց երկիւղ էր սովու, առաքեցին բերել ցորեան յԵթրուրիոյ, ՝ի Պոմպտինոնէ, ՝ի Կումայ և մինչև՝ ի Սիկիլեայ». (Ամ Հռովմայ 321). Տիտ. Լիւ. Դ. Խե։

3 «Հռոմուլոս՝ ի զատուցանել զժողովուրդն՝ ի ցեղս և՝ ի վիճակս, բաժանեաց և զերկիրն յերեսուն հաւասար մասունս, տալով իւրաքանչիւր վիճակի մասն, և պահեալ ոչչափ ինչ կարևորն էր վասն մեհենաց և զոհից, և տուն մի՝ ի կալուածոց հասարակաց». Դիոն. Աւիկ. Բ. Կ։

4 «Բաժանեաց՝ նուաճս չքաւորագունից՝ ի ռամիկն զերկիրն՝ զոր գիւնս առեալ էր Հռոմուլեայ, և զնոսն մի՝ ի կալուածոց հասարակաց.» Դիոն. Աւիկ. Բ. ԿԲ։ — Ընդդէմ հնարս ընծայեն և Տուլլոսի Ոստիլեայ և Անկոսի Մարկիոսի. (Դիոն.

Սովորութիւն էր առնուլ՝ ի պարտեզից[1] զերկու երիս մանր անդաստանաց նոցա. «Յերկուց երրորդաց ատի զմանն միշտ կեալ, ասէ Սպիտանոս, տային նորոց գաղթականաց, մերթ ձրի, մերթ ի վաճառ ածեալ, և մերթ ի վարձ տարեւոր լաւ բերոյն։ Խոկ զանբեր կողմն՝ որ ի պատճառս անբերութեան պատերազմաց զրեթէ միշտ առաւելոյր, ոչ էր սովորութիւն բաժանելոյ, այլ Թագուհին ի վայելս՝ որոց կամք նոցին հերիւելոյ և միաբելոյ, պահելով տէրութեան զառատանորդս ի հնձոց և ջինջերտից ի պտղոց։ Ջնոյն հարկս ալիանէին և պարտաբերացն ի դարմանս հատիլն և խաշանց, (զի մի ընդարձակեսցին արօտք ի վնաս սերմանեաց անդաստանաց)։ Ջայս այսպէս գործէին առ ի բազմացուցանել զնասարակսն ժողովուրդ, աշխատասէր քան զայլ հանուրեաւ ի Հռոմ, և առ ի յաճախել նրբեանց գաշնակից ի բնիկ աղգէ։ Բայց հակառակ յուսոյ նոցա պատահէին արգասիք։ Քանզի փարթամք կալան զմեծ մասն անբաժին երկրի, և համարեալ թէ ընդ երկար գրաւմանքն ոչ ումեք լինի մերժել զնոսա ի կալուածոցն, գնոց առին տակաւ կամ բռնի ի գրացի տեառց փոքր կալուածոց զաղքատին ժառանգութիւնս նոցա, և արարին իւրեանց տէրութիւն մեծատարած, փոխանակ լոկ անդաստանաց՝ զոր ինքեանք մշակէին ի սկզբան»[2]։ Չհարըստահարելոյ զայսոսիկ Քանաայան միշտ Թագաւորք սանձահարել[3], և Թերևս վասն այսորիկ Սերուխոս Տուլլիոս կենօք

Ալիկ· Գ· Ա· ԽՀ։)— «Սերուխոս Տուլլիոս ի Թագաւորել իւրում բաժանեաց զկալուածս հասարակաց ի վարձկանս Հռովմայեցւոց»· Դիոն· Ալիկ· Գ· ԺԳ։

1 Հռոմուլոս, ըստ Դիոնեսիոսի Ալիկառնացւոյ, առաքէր գաղթականս ի Կենինա և Անտեմնա, կալեալ զերծրոզ մանն քաղաքացն այնոցիկ· (Բ· Կ)։ — Յամին 252 կրտուսին Սաբինացիք բնաւ ապատարս յարօրատրեալ երկրէ իւրեանց· (Դիոն· Ալիկ· Ե· ԽԹ)։ — Դաշինք կռնալք ընդ Հերնիկս յամին 268 բառնային ի նոցանէ զերծրոզ մանն երկրին· (Տիտ· Լիւ· Բ· ԽԱ)։ — «Ի 413 ամին կրտուսին Պռխեբինացիք զերիս մանն երկրի իւրեանց· իսկ ի 416 Տիբուրտացիք և Պրենեստացիք կրտուսին զմի մանն երկրին»· Տիտ· Լիւ· Ա· ԺԲ։ — «Ի 563, պ· Կռնելիոս Սկիպիոն Նասիկա էառ ի Բոյոց տակաւ լինչ նուաղ քան զկէս երկրի նոցա»· Տիտ· Լիւ· ԼՋ· ԼԹ։

2 Սպիտանոս, Բաղաքական պատերազմանք· Ա· Է։ — Թէպէտ վկայութիւնս այս կրտսեր է ժամանակաւ, սակայն ի ձահ գոյ և ժամանակին՝ զորմէ բանքս են։

3 «Հրովարտակ հանէր Սերուխոս զի որոց զհասարակաց կալուածս բռնի հանէին կամ ըստ սէրութեան գրաւեալն էր, ի սահմանեալ ժամանակի կեաս գար-

չափ տուժեցաւ։ Բայց ՚ի բառնալ թագաւորութեան զօրաց գեալ յոյժ ազատանին՝ գուն գործեաց պահել զերկիրն ստացեալ յանիրաւի[1]։

Ապաքէն որպէս զծանրութիւն պատերազմի և հարկաց ըստ մեծի մասին նոքա տանէին, էին իսկ նոցա առաւելագոյն իրաւունք քան այլոց՝ ՚ի վերայ սահմանաց զինուք նուաճելոց. և զի դարձեալ համարէին բաւել գաղթականաց պահել ժողովուրդ ի երկրագործ, և վարէին իբրև վարձուորք տէրութեան քան թէ տեարք կալուածոյն։ Եւ արդարև ըստ հասարակաց իրաւանց, կալուածք հասարակաց չէին վաճառել, որպէս և իսկ ՚ի վաղեմի մատենագրաց. «Չհաւանէին իրաւագետք թէ երկիր՝ լեալ միանգամ ՚ի ստացուած հռովմէական ժողովրդեան, մարթիցի վայելմամբ կամ ստացմամբ լինել ՚ի ժառանգութիւն այլոց ուրուք»[2]։

Հակառակ այսմ կանոնի խոհական խորհրդով աւարտման հանէին չքաւորաց ՚ի քաղաքացւոց՝ որք զինուորէին ՚ի պատերազմունս. ըստ այսմ յ268 ամի և այսր գրեա եթէ անբնդհատ ամի ամի խնդիրք լինէին ՚ի ռամկապետաց անտի և ՚ի բդեշխից։ Յամին 275 ոմն յազատանուոյն Փաբիոս Կեսոն՝ առաջարկեալ լարաբաժին առնել զերկիրն այն ինչ աշխարհակալեալ, ասէ. «Եւ էիցէ իրաւացի՝ զի երկիր առեալ ՚ի թշնամեաց, էցէ ՚ի ժառանգութիւն այնոցիկ՝ որոց քրտամբ և արեամբ գնեցաւ»[3]։ Զնորոգեալ եւկաց ծերակոյտն ընդ այս առաջարկ, որպէս և յառաջարկեալս կանխաւ ՚ի Կ. Կոնսիդեայ ՚ի Տ. Գենուկեայ

ձուացեն, և նովքն գարձեալ հրովարտակաւ հրամայեն ասպր քաղաքացւոց, որոց էր ինչ ժառանգութիւն, բերել առ ինքն զանուն իւրեանց». Դիոն. Ալիկ. Դ. ծ։

1 «Ընդ պարտ գարմանալ թէ լաւագոյն համարեացին չքաւորք զբաժանումն կալուածոց տէրութեան ՚ի քաղաքացիս, քան Թողուլ զի ժպիրհք ոմանք միայն գրաւեացեն զայնս։ Իսկ եթէ տեացեն բարձեալ զայնս ՚ինոցանէ՝ որ ՚ի հասս այնոցիկ վայելեն, և ժողովրդեան գառնալ յիրաւունս իւր, գազարեացեն ՚ինախանձելոյ ընդ մեզ, և նուազեսցէ ՚ինոսա խլձ բաժանելոյ զայնս ՚ի քաղաքացիս, ՚ի միտ առեալ զի օգտակարագոյն լիցին կալուածք Թողեալ ՚ի ձեռս հասարակապետութեան». (Ամ Հռովմայ 268.) ճա՜ Ապիոխ. Դիոն. Ալիկ. Ը. Հգ։

2 Ակնարիոս Ռոբրիկոս, Ի խնդիրս ագարակաց, ՚ի Վաղէր պրպալէս, տպ. Լախմանն, հա. 1. էջ 82։

3 Տիտ. Լիւ. Բ. Խը։

յամին 278, ՚ի կն. Գնոմևեայ յամին 280; և ՚ի ռամկապետայ՝ տատրոմեամբ բռնէշխից Վալերեայ և Եմիլեոսի՝ յամին 284[1],

Բայց յետ վիճելոյ զամս յիսուն և չորս, և յետ մերժելոյ Տարկուինեանց՝ ռամկապետն Խվլեոս յամին 298 խնդրեաց և ընկալաւ զթագաւորութիւն կալուածոց Ալենեան ըերդին, փոխանակելով ինեալ ինաւուն որոց պրաեալ էր սահմանս ինչ անդ[2]: Ընդ վայր եղեն ջանք ասպա յամին 298 և՚ի յաջորդ ամն զօրութեամբ Խվլեան օրինաց՝ տալ բաժանել և զայլս մասունս կալուածոց հասարակաց[3]. իսկ յամին 330 յաւելաւ հարկ ՚ի վերայ տեառց կալուածոց ՚ի հասուցումն ռոճկի զօրականին: Ոչ ինչ թուլաւ նայր անդրել պնդութիւն ռամկապետաց, և յետ այնորիկ ընդ ամն երեսուն և վեց՝ վեցիցս նորանոր առաջարկութիւնք ՚ի դերև եղեն, ևս և վասն երկրին Բոլայ՝ որ այն ինչ առեալ էր ՚ի Թշնամեաց[4]:

1 «Լուկիոս Եմիլիոս երաւունս համարի բաժանել զինչս հասարակաց ՚ի քաղաքացիս, քան թողուլ զայնոսիկ ՚ի վայելս սակաւուց ոմանց. իսկ որ պիտացեալ էին հասարակաց կալուածոց՝ պարտ էր նոցա ջառանալ զի Թոլաբնոցա ընդ երկար վայելել յայնս խաղաղութեամբ, և չէր արժան նոցա յամառել յերկարելոյ այլ ևս ՚ի վայելումն եթէ կամք լինին բառնալոյ զայնոցանէ: Եւ յաւելու, զի քաց յերաւանց՝ որ ամենեցուն յայտնի են՝ հասարակաց ընչից գոլ քաղաքացւոց ամենեցուն, որպէս ինչք իւրաքանչիւրոց անկ են՝ որոց սեպհականն է զայնս ըստ օրինի, սակայն ծերակոյտն և յայլոց պատճառաց բաժանել ժողովրդեան զկալուածս, ըստ հրովարտակին առեալոյ 17 ամաք յառաջ». Դիոն. Ալիկ. Թ. ՎԱ:

2 Տիտ. Լիւ. Գ. ԼԱ: — Դիոն. Ալիկ. ժ. ԼԹ, և որ զինն:

3 «Մեծաձայն բողոք բառնային ռամիկն, զի պրաեէին աշխարհակալութիւնք իւր. ցանոյր զի յայնչափ կալուածոց, զորս զինու զօրութեամբ առեալ էր ՚ի Թշնամեաց, և ոչ գոյն ինչ մասն մնայր իւր. զի զկալուածս հասարակաց ունէին փարթամք և հզօրք, պրաեալ յանկրաւն զհասս նոցին, այնու և եթէ զի զօրաւորք էին և ՚ի հնարս անլուրս ձեռնեբէջք: Պահանջէր զի որպէս ընդ ազատանուցն հաղորդ էր վառնպացն, նոյնպէս և օգտից գոլ և նպաստից». (Ամ Հռովմայ 298.) Դիոն. Ալիկ. ժ. ԼԶ:

4 «Ժամ պատեհ էր՝ յետ վրէժս խնդրելոյ յապստամբից, վասն ողբելոյ ընկերս, առաջարկել զբաժանումն կալուածոց Բոլայ. զի տկարանայր այսուհետ իղձ ազարակային օրինաց՝ որ մերժէին զազատանին ՚ի հասարակաց ժառանգութեանց յանկրաւն պրաելոյ: Քանզի ՚ի խոր խոցէր զժողովուրդն անարժան յամառութիւն ազնուականաց բռնակալելոյ զերկիր հասարակաց. դարձեալ և զբողոյ բաժանել ժողովրդեան և զերկիրն անառերունչ այն ինչ առեալ ՚ի Թշնամեաց, որոյ հասանէր ընդ հուպ լինել որպէս զայլս յաւար ազատանուցն». (Ամ Հռովմայ 341.) Տիտ. Լիւ. Դ. ՎԱ:

Բայց միայն յամին 361 վճիռ ծերակուտին չնորհեաց իւրաքանչիւրոց ի տանուտեարց և յազատութեցոյ եօթն արտավար գետնոյ յերկիրն որ այն ինչ առեալ էր ի վէհյայոց անտի[1]։ Յետ հնգամեայ դիմակալութեան տապա յամին 371 առ ի վերստին լինել ընդ օդնականութիւն ժողովրդեան ի մարտ ընդդէմ Վղտակեանց՝ հաւանեցաւ ծերակոյան ընդ բաժանումն երկրին Պոնտոսի զոր կամիլլեայ բարձեալ էր ի ժողովրդենէ և վաղ իսկ թողեալ ի յափշտակութիւն աւազանուոյն[2]։ Ընտրհքս այսոքիկ բանսանեայք չկարէին հաձել ի տապաւ զրամիկն, և ոչ խափանել զանիրաւութիւնս։ Վիկինեան օրէնք եռաւն յաղթանակել պահանջից ժողովրդեան, ի հարկուր երեսուն և ի վեց ամաց հետէ դիմամարտելոց[3]։ Օրէնքս այս ոչ ի տապաւ զըրկէր զազատանէն ի վայելից կալուածոց յանիրաւի գրաւելոց, այլ չափ դնէր այսոցիկ հինգ հարկուր արտաւարս։ Յետ այսր բաժանման՝ ինացորդ երկրին բաժանելի էր յաղքատս։ Պարտ էր տեառց կալուածոց պահել ինոսա խառն ի ազատ մարդկան ի յաձախութիւն գառանց՝ յորմէ զօրաժողով լինէին լեգէոնք։ սահմանեցաւ և թիւ անդէոց իւրաքանչիւր կալուածոյ՝ առ ամ փոխելոյ զինակութիւն արօտից՝ որ սովորաբար առաւել շահաւոր է, և յաձախել զարտորդից միակութիւն՝ որ ազատէրն գնասցէ ի պիտոյից դիմելոյ երկիր օտար գործեանց։

Օրէնքս այս Վիկինեայ Ստոլոնի պատրաստէր յաջողութիւնս, սանձահարէր զյափշտակութիւն փարթամաց և զաղքատութեան, զգուշութեամբ գնայր ընդդէմ անցելոյն, արգելոյր զինաւաղար տարածումն կալուածոց իւրաքանչիւրոց ընդդէմ հաստատակացն, զիտրաստել ընչից հաստատակաց առ ստակահաս ումանս, զանմարդաթանալ Իտալիոյ, որով և գինուորել գործն[4]։

Դատաւճիռք յաձախ ի վերայ ածեալ ստունգանութեան

1 Տիտ. Լիւ. Ը. 1։

2 Տիտ. Լիւ. Զ. ԻԱ։ — Թուի Պոնտոսեան ծովիկ յոտնթի յոյժ լեալ յայնժամ, զի ըստ Լիկինեայ Մուկիանոսի պատմի։ Պլինիոս աւելի քան զուարթասուն քաղաքս լեալ անդ բարգաւաճեալս։ (Բն. պմ. Գ. Ը. 59. տպ. Սիլլիկ։)

3 Տիտ. Լիւ. Զ. ԼԸ ցխ։ — Ապպիանոս, Քաղաքական պատերազմանց. Ա. Ը։

4 Տես գիտաւորս մատենին Ա. Մաուէի, Հնագիտական ծանուցման. Բարիզ, 1846։

Վիկինեան օրինաց՝ յուցանեն զՀաստատութիւն նոցին, և զՁեռնատուութիւն ընդ ամն երկերիւր նորովք գաղթականաւք[1], ՚ի պահել զդաս երկրագործաց՝ զնախկին զօրութիւն աշխարհին, և երևի իսկ յայտնապէս ՚ի ժամանակէ անտի ծերակուտին ինքեան սկիզբն արարեալ վերատին բաշխոյից կալուածոց ՚ի ժողովուրդն[2]։

Պարսիկ.— Խնդիրք պարտուց և նուազելոյ սակից տուկսեաց ՚ի բազմաց հետէ տային պատճառս ծանուցից մոռախտհուԹեանց և բուռն վիճից։ Եւ քանզի քաղաքացիք ծախուք իւրեանց զինուորէին, անփարԹամբ ՚ի ժամանակս զինուորու-

1 ԳԱՂԹԱԿԱՆՔ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՔ· — Երկրորդ շրջան· 244–416.
ԼԱՓԻԿՈՆ (336) ՚ի Լատին (Լաւիկանեան Ճանապարհ)· Լա Գոլոննա։
ՎԻՏԵԼԼԻԱ (359) ՚ի Վոլսկեանս (Պրենեստինեան Ճանապարհ), անատոյգ· Ձիւդէլլա կամ Վալմոնդոնէ։
ՍԱՏՐԻԿՈՆ (370) ՚ի Վոլսկս· Ափուռնք Աատուրայ· Գազալէ ու Գոնգա, ՚ի ՀՔ Անցոյ և Վէլէդրի։
ԳԱՂԹԱԿԱՆՔ ԼԱՏԻՆՔ· — Երկրորդ շրջան· 244–416.
ԱՆՏԻՈՆ (287) ՚ի Վոլսկս· Դորբէ ա՛Անցիոյ կամ Բորգոյ ա՛Անցիոյ։
ՍՈՒՏՍՍԱ ՊՈՄԵՏԻԱ (287) *մերձ ՚ի Պոնտինեան մօրուս, վաղ անհետ լեալ։*
ԿՈՐԱ (287) ՚ի Վոլսկս· Գորի։
ՍԻԳՆԻԱ (259) ՚ի Վոլսկս· Սէնեի։
ՎԵԼԻԳՐԷ (260) ՚ի Վոլսկս· Վէլէդրի։
ՆՈՐԲԱ (262) ՚ի Վոլսկս, *մերձ յայժմեան քաղաքն Նորմա։*
ԱՐՏԷԱ (312) ՚ի Հռուդուլս· Արտէա։
ԿԻՐԿԷԻ (361) *յԱբրուձկացիս, Մոնգէ Ձիրճէլլոյ· Սան Ֆէլիչէ կամ Բորգոյ ու Բաոլոյ։*
ՍԱՏՐԻԿՈՆ (369) ՚ի Վոլսկս· Գազալէ ու Գոնգա։
ՍՈՒՏՐԻՈՆ (371) *յԵտրուրիա (Կասեան Ճանապարհ)· Սաթրի։*
ՍԵՏԻԱ (382) ՚ի Վոլսկս· Սէցցէ։
ՆԵՊԵՏԷ (381) *յԵտրուրիա, Նէբի։*

2 Ա*յսպէս ահա տեսանելի՛ կամին 416 իւրաքանչիւր ուժիք յաղքատաց քաղաքացւոց ընդունել արտաւարս երկուս ՚ի կալուածոց Լատինաց և ՚ի գաշնակցաց նոցին։ Իսկ ՚ի 479 ամին յետ մեկնելոյ Պիւռոսի՝ եռս բաժանել ծերակոյսն անդս ՚ի նոսա որոց պատերազմեալ էր ընդ արքային Եպիրոսի։ Ի 531 Փլաւմինեան օրէնք, զոր Պոլիբիոս յանխրաւի կոչէ զեղծուցիչ Հռովմայ, բաժանեցին ըստ ցեղս զերկիրն Հռովմէական՝ որ ընդ Ռուբիոնէ և ընդ Պիկենոն։ Ի 554 յետ առման Կարքեդոնի, եռս ծերակոյսն բաժանել զերկիրն ՚ի զօրս Սկիպիոնի, և վասն միոյ միոյ ամի ծառայութեան ՚ի Սպանիա կամ յԱֆրիկէ՝ ընկալաւ իւրաքանչիւր ոք ՚ի զօրականէն երկուս արտաւարս, բաժանեալ ՚ի ձեռն տասնապետաց։ (Տիտ· Լիւ· ԼԱ· Խթ։)*

Թեան չկարեալ Հոպ ունել զարտորէից կամ զկալուածոց իւրեանց, տոկոսեօք արծաթ՝ ի փոխ առնուին առ՝ ի ընուլ զպետս իւրեանց և զընտանեացն։ Ամէ յայսպիսի գէպս պարտք յազնուական իմն պատճառէ յառաջ գայիցն, այն է՝ ի ծառայութենէ Հայրենեաց[1]։ Վասն որոյ բազումք կուսակից էին պարտապանաց, և Հակառակ այնոցիկ՝ որ զօշաքաղութեամբ՝ ի կարիս ախոյենացն Հայրենեաց տարապայման տոկոսս պահանջէին։ Ազատանին և սա զեղծանէր աւագութեամբն իւրով և իրաւագիտութեամբ, պահանջելով վարձս ծանուցս՝ ի ոսոխէն ի պաշտպանել զդատս նոցա[2]։

Թագաւորք ծախսաձայն դրութեօք քաղաքացւոց ընդ պարտեօք անկելոց՝ Հեպէին յաձախ՝ ինապատ նոցին[3]. այլ հետ անկանելոյ Թագաւորաց՝ մեծատունցն դաս Համարձակագոյնս կեղեքէին զքաղաքացիս, մինչև բազմաց՝ ինոցանէ չքաւորել՝ ի պատճառս զինուորութեան, և վաճառիկ լինել Հրապարակաւ՝ որպէս ստրուկք ոմանք՝ ի պարտաւորէից իւրեանց[4]։ Վասն որոյ

1 «Եցոյց նոցա Մարկոս Վալերիոս Թէ չէր գործ խոհական զանազ զդուշնաքեայս քաղաքացւոց՝ որք առ Թագաւորօք նահատակեցան՝ ի պատերազմունս՝ ի պաշտպանութիւն Հասարակապետութեան». (Ամ Հռովմայ 256.) Դիոն. Ալեքսաւ. Ե. կե։ — «Ասէն պատճառէր ռամիկն չկարել զպարտսն Հատուցանել. քանզաւեր զի ընդ բազում ամս պատերազմացն Թողեալ էր երկիր նոցա անպաղաբեր, զի անդեայք նոցա էին սատակեալ, ստրուկք փախուցեալ կամ՝ ի հինից Թշնամեաց յափշտակեալ, և որ ինչ սոացուածք էին նոցա՝ ի Հռովմ՝ ի ծախս պատերազմի էր ապառեալ։ Եւ անոր պատասխանէին պարտատէրքն Թէ Հասարակաց էին սոյժք վնասուն, և Թէ ոչինչ պակաս քան զպարտապանս իւրեանց կրեալ էր և ինքեանց զէան, և Թէ անմարթ էր ինքեանց յանձն առնուլ և զկորուսեալ ընչից՝ զորս տուեալ էին՝ ի փոխ քաղաքացւոց չքաւորաց՝ ի ժամանակի խաղաղութեան, Թող զորս Թշնամեաց յափշտակեալ էր՝ ի նոցանէ՝ ի ժամանակի պատերազմաց». (Ամ Հռովմայ 258.) Դիոն. Ալեք. Չ. ԻԲ։

2 Որք վարէին զդատս քաղաքացւոց՝ ամենեքեան գոգցես յատենէ ծերակուտին էին, և վարձս ծանուցս պահանջէին՝ ի պատիւ։ (Տիտ. Լիւ. ԼԴ. Դ։)

3 «Յետ աւուրց հրամայէր Սերուիոս Տուլլիոս առնուլ զհամար պարտապանաց, որոց չէր բաւական ձեռն՝ ի հատուցումն, և զպարտատէրց նոցա և ըզպարտուց միոյ միոյ՝ ինոցանէ։ Եւ յորժամ ցուցաւ համարն՝ եթ կանգնել սեղան հրապարակաւ, և ակն յանդիման ամենեցուն հատոյց պարտատէրց զպահանջս նոցա». Դիոն. Ալեք. Դ. ժ։

4 «Եթ հրատարակել Սերուիոս՝ ի ձեռն քարոզի՝ արգել հրամանի, մի ումեք յափշտակել, վաճառել կամ՝ ի գրաւ ունել զինչս Հռովմայեցւոց զինուորելոց ընդդէմ Վոլսկեանց, մի առնուլ բռնի զմանկունս կամ զոք յընտանեաց նոցա եւ

'ի հասանել պատերազմի՝ բազում այն էր զի չառնուին յանձն աղքատք պրել'ի զինուորութիւն[1], բողոք բարձեալ, թէ «Ա՛ր ինչ օգտեսցէ մեզ յաղթել արտաքին թշնամեաց, յորժամ պարտատերքս մեր արկանեն զմեզ'ի շղթայս վանն պարտուց մերոց: Եւ ո՛ր օգուտ մեզ յամրանդելոյ զկեանս Հռոմայ, եթէ չկարեցեմք պահել զանձին ազատութիւն»[2]: Սակայն ազատութեարն որ առաւել քան զայլս ձեռնտու լինէր ծախուց պատերազմին, ոչ յանկրաւէ պահանջէր և նա'ի պարտատիրոջէն. և աստի անդադար էին գժտութիւնք[3]:

Յամի 305 սահմանեցան օրէնք երկոտասան տախտակացն, ամփոփել սակի տոկոսաց'ի 10 առ 100'ի տարւոջ. բայց Վիկկինեայ Ստոլոնն միայն օրէնք լուծին արդարութեամբ զայս ծանր խնդիր: Սահմանէին օրէնքս զի տոկոսիք կանխաւ հատուցեալք'ի պարտատիրոջ՝ բարձցին'ի դրամագլխոյն, և մնացեալ դրամագլուխն հաւասարապարտիւք յերից ամս:

և է պայմանաւ»: — «Ծերունւոյ ուրուն բողոք բարձեալ՝ զի պարտատէառն նորա'ի տարկուէիսն զնա վարեալ էր, գոչէր բարձրաձայն. Ազատ ծնեալ եմ և յամենայն պատերազմունս զինուորեալ մինչև ցսպիկար ծերութիւն. 'ի քանի և ունի մարտս նահատակեալ և մրցանակս մեծամեծս յաշխս ընկալեալ: Այլ'ի ձախողել ժամանակիս և'ի հատարակապետութեանս անկանել'ի յետին անձկութիւն, հարկ եղև ինձ առնուլ փոխ'ի հատուցանել զտուրս հարկաց. և'ի չկարել հատուցանել զպարտս իմ, պարտատէրն իմ անողոքելի ծառայեցոյց զիս և զերկուսին որդեակս իմ'ի տարկուէիսն, և եհար զնս ջարապան յանկրաւէ վանն պատահանելոյ իմոյ առ խիստ հրամանս նորա». (Ամ Հռովմայ 259.) Դիոն. Ալիկ. Զ. ԻԶ: — «Պարտատէարքն պատճառք լինէին ապստամբութեան խառնել ձայնձին. չկայլն'ի չափս, արկանէին զպարտատիրս իւրեանց'ի բանտս, և ծառայեցուցանէին զնոսա որպէս տարուս արծաթապինս». (Ամ Հռովմայ 254.) Դիոն. Ալիկ. Ե. ՎԳ:

1 «Աղքատք, մանաւանդ անկարողք'ի տալս'ի հատուցումն պարտուց՝ որք և բազմութիւք էին յոյժ, հրաժարէին'ի զինուորութենէ և ոչ կամէին կցորդել ազնուականաց, մինչև ծերակուտին հրովարտակաւ ջնջել զպարտս նոցա». (Ամ Հռովմայ 256.) Դիոն. Ալիկ. Ե. ԿԳ:

2 Դիոն. Ալիկ. Ե. ԿԳ:

3 «Ապիոս Կլաւդիոս Սաբինոս առաջարկեաց խորհուրդ ՀՀակառակն ամենեքեան Մարկոսի Վալերիոսի. ոչ ոք երկբայեացն, ասէր, զի փարթամք՝ որք ոչ ինչ նուազ քաղաքացիք են քան զմինչքոր ռամիկն, որք զառաջին ունին կարդ'ի հատարակապետութեան և'ի յանձանձանս երից հատարակաց, և որոց յամենայն պատերազմունս ծառայեալն է, ինոսա մեծ կրեացեն, յազատել պարտապանաց նոցա'ի պարտուց հատուցանելոյ նոցին». (Ամ Հռովմայ 256.) Դիոն. Ալիկ. Ե. ԿԶ:

Հնարէր այս օգտակար էր երկաքանչիւրոց իսկ կողմանց. զի՝ ի ջրաւել ձեռին պարտապանաց՝ ի հատուցումն, պարտաւեալըցն ոչ մի ինչ ընկալեալ տակաւին՝ ի վառանդ կորստեան դնէին և զդրամատուխան. իսկ օրինքս ապահովէր զիրեն. նոյնպէս և պարտապանաց տէրացեալ կալուածոցն՝ զորս ընդունէին՝ մարթ էր նոքօք, և յամեցմանէն՝ որ չնորհէր նոցա, թափել զանձինս՝ ի պարտուց: Իրաւախոհութիւնս այս հաստատեալ յ387 ամին չէզև ծնայուն ինչ, և՝ ի յուզել ևս քան զևս գժտութեանց, յամին 412 վճռեցաւ ջնջել սպառապուռ զպարտս, և արգելուլ զառևտուխս. այլ վճիռս այս առժամանակեայ ինչ էր և խռովութեանց առիթ:

Ե. Բովանդակութիւն:

Հարևանցի պատկերս այս չարեաց վաղ իսկ՝ ի վեր երևեցոյց, որ ձգնէին զհռոմկական ժողովուրդն, տայ մեզ՝ ի միտ առնուլ զի բազդ պետութեանց, յոր տարազ և նոցեն՝ կրեն յինքեանս զսերմունս կենաց՝ որ կենդանի պահէ զնոսին, և զսերմունս ապականութեան՝ որ ունին ածել յաւուր միում զաւեր նոցա և զկործանումն: Այս ըստ զիմել Հասարակապետութեանն՝ ի զարգացումն կամ յանկումն, առաջինքն՝ ի սերմանց կամ երկրորդք՝ ի վեր երևեալ և տիրապետէին փոխանակ. այսինքն ե յորժամ ազատութեան պահէր զիւր առաքինութիւնս և զսէր հայրենեաց, զօրանային տարեալք յաջողութեան. բայց՝ ի սկսանել նորա օտարանալ յայնցանէ՝ զորս էին խռովից պատճառք, և սասանեցուցին զշինուածն աշխատութեամբ այնպիսեաւ կառուցեալ:

Բայց թէպէտ և անկումն Հաստատութեան՝ տալով ազատանութեան առաւել ևս կենդանութիւն և ազատութիւն՝ և ևս ամրացոյց և ծնայուն գործեաց զսահմանադրութիւն աշխատութիւն, սակայն՝ ի սկզբան անտ ոչինչ խնդացին ընդ այն ռամկապետութիւնք: Երկերիւր ամք՝ ի վերայ անցին մինչև ընկալաւ ռամիկն ոչ միայն զհաստատութիւն քաղաքական իրաւանց և զբաժանումն հասարակաց կալուածոց, այլ և նեղոտութիւն պարտապանաց ծանրաբեռնելոց՝ ի պատճառս անդուլ պատե-

բազմաց։ Ամաց գրեթէ նոյնքանեաց պէտք եղեն առ՝ի ստա-
նալ Հասարակապետութեան անդէն զգերագահութիւն՝ի վե-
րայ մեծաւոր ազգաց՝ զոր առ վերջնով թագաւորօք վարեալ
էր՝։ այսչափ ինչ ժամանակի պէտք են վասն դառնալոյ տէ-
րութեան յառաջին կարգ իւր՝ յետ սասանութեան և տկարա-
նալոյ յերեսաց յեղափոխութեանց կարի իսկ օրինաւորաց։

Սակայն Հռոմ շատ իսկ ամրացեալ էր առ՝ի դիմակալել միանգամայն արտաքին յարձակմանց և ներքին շփոթից։ Ոչ պորսենայ և ոչ Կելտացն արշաւանք և ոչ դրացի ժողովրդոց դաւակցութիւն կարացին ինչ սանանել Հաստատութեան նո-
րա։ Վաղ իսկ կացին առք Հոյակապք՝ որպիսիք ոմանք էին Վա-
լերիոս Պուբլիկոլա, Ա. Պոստումիոս, Կորիոլանոս, Սպուրիոս

1 Ի վկայութենէ Պոլիբեայ, Դիոնեսիոսի Ալիկառնացւոյ, Տիտոսի Լիւիոսի, Փլորոսի և Եւտրոպիոսի յայտ է, զի՝ի ժամանակի անկման Տարկուինեայ Գոռոզի պետութիւն Հռոմայ տարածանէր ընդ համօրէն Լատիոն, ընդ մեծ մասն երկ-
րին Սաբինացւոց, և ընդ Ոկրիկուլըն (Օգրիկոլի) յՈմբրիա, և զի Ետրուրիա և երկիրն Հերնիկաց և Կերէ (Ձերվետրի) գաշնակցութեամբ միացեալ էին ընդ Հռոմայեցիս պայմանաւ իւրք հպատակութեան։

Հաստատութիւն վարչութեան բղեշխից՝ պատճառս եւս ընդվզելոյ ազգաց հը-
պատակելոց Հռոմայ։ Ցամին 253 ժողովուրդք Լատիոնի միաբանեցին ընդդէմ Հռոմայ. իսկ յետ յաղթութեան առ Հռեգիլլեայ լճին յ258 ամին, այն է չո-
րեքտասան ամ զինի անկման Տարկուինեայ, ակաւ նուաճուին Լատիոնի՝ զոր՝ի
գլուխ ատեաւ Սպուրիոս Կասսիոս գաշնադրութեամբ ընդ Լատինս, յամին Հռով-
մայ 268։ Իսկ Սաբինացիք առ բղեշխութեամբ Ովրատեայ յամին 305 ընկճեցան՝ի ստոր։ Փիգենէս, որոյ ընկալեալ էր զգերագահութիւն Տարկուինեայ, առաւ միանգամ յ319 ամին, և երկրորդ անգամ յապստամբել իւրում յամին 328։ Ան-
քսուր (Դէրրաչինա) յետ պարտութեան Վոլսկեանց՝ի ստոր նուաճեցաւ. իսկ Վէյք և Փալերք անկան ընդ իշխանութեամբ Հռոմայեցւոց յամին 358 և 359։ Կիրկէի, ուր առ ժամանակօք թագաւորաց գաղթական լատին հաստատեալ էր, միւս ևս գաղթական ընկալաւ յ360 ամին։ Կերէ յաւելաւ՝ի մարզս Հռոմայ յ364 ամին. և՝ի ժամանակս արշաւանաց Կելտաց միացան՝ի ստոր ընդ սահ-
մանս Հռոմայ Ընտիան և Եկուտրա։ Ցամին 408 առաւն Սաորիկոնի յերկս սահ-
մանացն Վոլսկեանց արգել զնոսա՝ի ձեռն տալոյ ապստամբութեան՝ որ սկաս-
նէր յուզել՝ի Լատինս։ Ի 411 ամին բովանդակ գաշտաւայրն Լատիոնի կալեալ էր՝ի քաղաքացւոց Հռոմայ կամ՝ի գաշնակցաց, այլ՝ի լեռնակոմանս էին քա-
ղաքք Վոլսկեանց և Լատինացւոց ազատք, և՝ի ծածուկ թշնամիք։ Սակայն մարթ է ասել՝ զայսու ժամանակաւ վերատին աշխարհակալեալ Հաստատակապե-
տութեան ոչնչափ ինչ ունէր առ թագաւորօք, Թէպէտ և Հռոմ առիպէր՝ի 416 ամին ընկճել միւսանգամ զվերջին ապստամբութիւն Լատինաց։

*Կասիոս, Ալինկինեատոս և Կամիլլոս, որք պայծառացան յօ-
րինագիտութեան և ի պատերազմի. և Հռոմի կարէր յոտին
ունել տասն լեգէոնս, այսինքն 45,000 զօրական: Աւտունին յա-
ջողեին օգուտք կարևորք, և ոչ սակաւ ազատութիւնք ընդ-
հեալ առ ի հաշտութիւն ազատանուց ընդ ոտիկին. ընդունել
երեն օրինք դրատորք, և լաւ ևս տահմանեցան իշխանութիւնք
այլեայլ առենից, քայց տահմանադրութիւն ազգին կայր և
ինայր նոյն: Դիւրութեամբն որ ընտրհեցաւ ոտիկին հասանե-
ալ յառնեոյն պաշտամունս տէրութեան, յաւելաւ զօրութիւն
ազնուապետութեան. դարձաւ նա ի մանկութիւն առանց
այլայլելոյ, պահասեցին հակառակորդք նորա, և յաձախեցին
կուսակիցք: Ի ոտիկին տոհմք մեծափառութեամբ և երևելիք
գային հուպ ընդ հուպ խառնել ընդ վաղեմի տոհմս ազնուա-
կանաց, մանաւանդ լինելով խորհրդոց նոցա և ըղձից և մտա-
հաձութեանց իսկ նոցա: Վասն որոյ իմաստուն ոք պատմագիր
դերմանացի ասէ ի ձահ, զի յանկանել թագաւորութեան թե-
րեւս յոլովագոյնք ի ոտիկին գտան ի թիւս ծերակուտին, քայց
վաստակք նոցա, առանց ազնուականութեան և մեծութեան՝
կրեցին առաւել դժուարութիւն հասանելոյ ինոյն[1]:*

*Զի չէ բաւական՝ առ ի գիտել զյարգ ընկերութեան իրիք՝
խելամուտ լինել օրինաց նորա, այլ պարտ է քաջ հաւաստել
և զներքնծութիւն տուրութեանց և բարուց: Օրէնք քարո-
զէին զհաւատարութիւն և զազատութիւն, քայց տուրու-
թիւնք պահէին զբարձս և զառաւելագոյն զօրութիւն բար-
ձրագոյն դասու: Մուտք ի պաշտամունս չէին արգելեալ ոտիկ-
կին, քայց ընտրութիւնն մերժէր զնոսա գրեթէ միշտ: Ընդ-
ամն յիսուն և հինն, երկերիւր վաթսուն և չորս հազարապետք
զօրաց կացին բդեաշխք, և ի նոսա ութևտասան միայն էին ի
ոտիկին. և ի թեկն ածել ոտիկին ի բդեշխութիւն՝ բազում
այն էր զի ընտրութիւնն ի վերայ ազատանուցն անկանէր[2]:
Ի բազմաց հետէ երկոցունց դասուցս ազգախառնութիւնք լի-*

1 Մոմսէն, պ.պ. հռովմ. Ա. էջ 241. Բ. տպ:

2 Ցամս ջրիքեասան յ399 ամէն ց412 ոչ եթող ազատանէն, քաց ի վեցից ոմանց յոտոտիկէն, հասանել ի բդեշխութիւն:

նէին ըստ օրինի Հաւատարմութեան. սակայն կանխակալ կար-ծիք չև էին բարձեալ՝ ի 456 ամին. զի որպէս յայտ է՝ ի պատ-մութենէ, ազատագրին Վիսիգնիա՝ ամուսնացեալ ընդ Վո-լուսիանոսի ռամկի՝ մերժեցաւ՝ ի տիկնոջ՝ արտաքսեալ՝ ի տաճա-րէն Պատրիական զպաստութեան[1]:

Օրէնք պաշտպանէին ազատութեան. այլ դուն ուրէք պաշտպանութիւն նոցա գայր յարդիւնս, որպէս հաւաստեն զայս անդադար նորոգութիւնք նոյն կարգաց. զի ահա յամին 205 սահմանէր՝ վճռոյ ռամկին զօրինաց ունել զօրութիւն, սա-կայն և այնպէս հարկ համարեցաւ յետոյ կոչել զայն վան Հոր-տենսեան օրինադրութեանն յամին 466, և Մենեան օրինա-դրութեան յամին 468: Վերջինս այս հաստատէր վերատին զՊուբլիլեան օրէնս 415 տարւոյն, նոյնպէս և զՎալերեայ Պուբ-լիկոլայն 246 ամին, որ իրաւունս տայր բողոքելոյ յատեան ժո-ղովրդեան ընդդէմ վճռոց ատենակալաց: Եւ թուի հաստա-տութիւն առեալ օրինացս՝ ի ձեռն Վալերիոսի և Ոռատեայ յամին 305, և ապա՝ ի ձեռն Վալերեայ Կորուսի յամին 454: Եւ յայս սակս մեծանուն պատմագիրն Հռովմայեցի գոչէր. «Զկարեմ՝ ի միտ առնուլ զտէպ նորոգութիւնս նոցին օրինաց, բայց այնու զի զօրութիւն ոմանց յատապանդին ամբաստնայր միշտ անդրդուլ յաղթանակել՝ ի վերայ ազատութեան ժողովըր-դեան»[2]: Մուտ ռամկին՝ ի ծերակոյտն յօրինս էր ընկալեալ, սա-կայն չկարէր ոք մտանել յայն առանց վճռոյ հանդրտակալաց, կամ վարելոյ պաշտօն ատենական՝ որ դրեթէ միշտ ազնուա-պետականաց էր պահեալ: Օրէնք՝ որ պահանջէին զվճիռ՝ ի հա-մարակալաց յռոմկին՝ անպարծ թողեալ էր յաշխարհս, և առ՝ ի լինել հանդրտակալ՝ պարտ էր հասարակօրէն ընդ բռնշխութիւն անցանել: Վճռոյն պաշտամանց պարտ էր գոլ տարեւոր. և սա-կայն ռամկապետք և բռնաշինք՝ ի տուղ ժամանակի անդրէն վերատին՝ ի ձեռս բերէին զընտրութիւն. զորօրինակ Վիկինիոս Սաղոն ընդ սմն էին անընդհատ եկայք ընտրութեամբ ռամկա-պետ. Սուլպիկիոս Պետիկոս Հպատից եկայք բռնաշին (յամին

1 Տիտ· Լիւ· ժ· ԽԳ:
2 Տիտ· Լիւ· ժ· Թ:

390 ց403)։ Պապիլիոս Լիճաս և Մարկիոս Հռուտիլոս ջրից կա-
յին բռնաշինք, առաջինն յ395 ամէ ց406, երկրորդն յ397 ամէ
ց412։ Ընդ վայր օրէնք 412 ամին պահանջէին զամն տասն
աւ՝ի կարելոյ դառնալ՝ինոյն աւեղակալութիւն. զի բազում
յառաջ քան զլրումն սահմանեալ ժամանակի կրկին կատ-
՝ի նոյն պաշտօն. զորօրինակ Վալերիոս Կորուս վեցից եւց
բռնաշխ (՝ի 406 ամէ ց455), և անընդհատ ընդ վերջին երիս
ամն. և Պապիրիոս Կուրսոր հնգից (յամէն 421 ց441)։

Քաղաքացւոյն կենաց պաշտպանէին օրէնք, սակայն տկա-
րանալը հասարակաց վարկ ընդդէմ սպանութեան աւելաց
ծերակուտին, և հակառակ օրինաց Վալերիոսի Պուբլիկոլայ
բռնշխի՝ դրուատէին սպանութիւնք ոսկատեսին Գենուկեայ
և մեծախարճամ ոսկին Սպուրիոսի Մելեայ։

Ազատ էր ասեան քաղաքացւոց, բայց ծերակոյսն զօրճ
՝ի ձեռին ունէր զարկելոյ վարկ ոսկատեսոյ, և զնանրահա-
սատ զգուշութիւնս կրօնից։ Միւսմ անթ՝ի բռնշխէ օրէն էր
խափանել զգումարուածն ժողովրդեան, կամ լուծանել զասեան
պատճառանօք ընդհատից երկնից դիտելոյ, կամ սպառնալեաց
ինչ շանթի, կամ որ և է արտայոյ երեւութեանց. և հանգոյն
սասպեալ, մարթ էր հնգից եղծանել զամենայն ընտրութիւն՝
Դարձեալ՝ և իշխանութիւն ժողովրդեան սահմանէր անթ խա-
կապէս՝ ՝ի յուշանել զորոց կամէր զնշխանութիւն. քանզի ա-
՝ի մտանել՝ի պաշտօն՝ պարտ էր բռնշխէ և կուսակալաց արտա-
նել զնշխանութիւն իւրեանց ընդ վեհսն վիճակաց[2]։ Մարթ
էր ապա ազատանոյն վերսին խոտել զընտրութենանց՝ որ
նմա անհաճոյ էին, զոր այսպէս բացատրէ Վիկերոն՝ ինսպատ
ժողովրդեան ձեւացուցանելով. «Նախնիք ձեր, ասէ, երկից
՝ի ձէնջ խոտրեին վարկս յընտրութիւն աւեղակալաց ձերոց,
զի յառաջարկել՝ի ընտրս աւեղակալաց ընտրելեաց յաղատա-

1 «Եւ ո՛չ ակամանիցէ յայտնապէս, զի Թերութիւն իշխանապէսին (Մար-
կելլեայ) յաչս հաւատմանից այն խակ է՝ գոլ նորա՝ի ռամկաց»։ Տիտ. Լիւ. Ը. ԽԹ։
— Կիկերոն, Հմայից. Բ. 35 և 37. — Հօրինոց. Բ. 13։

2 Ձեր օրէն բռնշխէ և պրետորաց՝ի ժողով խմբել զքաղաքացիս, ոչ զօրաւո-
րել, և ոչ զվերջին վճիռ հաստանել զքաղաքական խնդրոց, էն զանձամբ առեալ
զնշխանութիւն և զերաւունս հմայելոյ ըստ օրինի վիճակաց։

նուին զօրէնս ինչ վիճակաց, երկրորդ անգամ իսկապէս զատնային քուեայք ի վերայ նոցին անձանց. որպէս զի ի ստոյգ նալ ժողովրդեան ընդ ընտրութիւնն, մարթէր նմա հրաժարել անտի[1]»:

Իշխանապետութիւնն ինքնին գործէ ի ձեռս էր ազատանուին առ ինուաձելոյ զդիմակալութիւնս, և վարելոյ զպզտեցութիւն իւր յատենի քաղաքացւոց: Ոչ ընտրութեամբ կայր իշխանապետ, այլ հրաւիրեալ յումեքէ ի բդեշխից[2]: Ընդ ամս հինգ քան և վեց՝ ի 390 ամէն ց416՝ ուր և տան իշխանապետք կային:

Ապա ամենայն ծերակոյտն՝ հանդերձ յաղթութեամբ ամենեկին, էր ամենիշխան. քանզի և առանց խոկ այլոց հնարից՝ որ ստձեռնպատրաստ կային նմա, տէր էր նա սպրդաբերելոյ զվնաս ձիւս ոսկին, զոր իւր էր անկ ածել յարդիւնս: Եթէ ի զօրանալ միոյ ի դասակարգութեանց՝ ազդեցութիւն նորա ամենայնի ձահարէր զքաղաքական ազատութիւն, օրէնք առաւել և առ ամենեսին զնուազանչիւր ուրուք ազատութիւն: Չի ոչ միայն դերդաստանիկք հպատակէին ընդ միապետական իշխանութեամբ տանուտեառնն, այլ և իւրաքանչիւր ոք ի քաղաքացոց ընդ բազմադիմի ծանր պարտուք հնազանդութեան կային[3]: Համարակալին էր հսկել սրբութեան հարսանեաց, դաստիարակութեան մանկտուոյն, խնամոց ստրկաց, և տանից և մշակութեան անդաստանաց[4]: «Ոչ բաւուք համարէին Հռոմ-

1 Ջագարեանցին օրէնաց, ճառ էրէրդէ· Թ:

2 Տիտ· Լիւ· Դ· ԼԱ:

3 Եթէ ոք ի քաղաքացւոց չկամէր տալ զանուն իւր ի գինուորութիւն, ինչք նորա ի գանձս հասարակաց հատանէին. իսկ եթէ չհատուցանէր զպարտս իւր, ի ստրկութիւն վաճառէր:— Արդելեալ էր կանանց ըմպել գինի. (Պոլիբիոս, Զ· ՙ)· սահմանեալ էր թիւ բազմականաց ի կոչունս· (Աթենէոս, Ի· ԻԱ· 274): Առենակալաց ի մեռանս պաշտաման իւրեանց չէր օրէն ընդունել հրաւէր ի կոչունս, բայց միայն ի յայտնի ինչ անձանց· (Ավ· Գելլ· Բ· ԻԴ:— Մակրոբ· Բ· ԺԴ): Ամուսնութիւն ընդ անառակիկ և կամ ընդ օտարազգի օրիորդի բազում պայմանօք էր պարտաւանդեալ, իսկ ընդ ստրկի կամ ընդ ազատագրի ի սպառնալեալ: Ամուրի կեանք ի սահմանեալ ինչ հասակի տուժիւք տուգանէր· (Վալերիոս Մաքսիմոս, Բ· Փ· 1): Օրէնք սահմանեալ էին վասն սգոյ մեռելոց և յուղարկաւորութեան· (Կիկերոն, Զօրինաց· Բ· 24):

4 Ավ· Գելլ· Դ· ԺՓ:

մայեցիք, ասէ Պլուտարքոս, թողուլ իւրաքանչիւր ումեք ազատութիւն ամուսնանալոյ, մանկունս ծնանելոյ, ընտրելոյ զպայման կենաց, կոչունս առնելոյ, և կենլոյ ըստ կամաց և ըստ հաճոյից՝ առանց տեսչութեան և հրամանի սահեալ»[1]:

Տեսչութիւն Հռովմայ նմանութիւն յոյժ բերէր յայնժամ զանգլիականին՝ որ յառաջ քան զընտրականն ձև վարչութեան: Ի բազում դարուց հետէ զրուաներ անգլիական օրինադրութիւն իբր պատսպարան ազատութեան, թէպէտ և յայնժամ, որպէս և՛ ի Հռովմ, ազնուականութեան և մեծութեան էին պահեալ պատիւ և իշխանութիւն: Ցերկաքանչիւր յայսոսիկ պետութիւնս, ազնուապետութիւն տէր ընտրոյ՛ ի ձեռն հնարից կաշառաց կամ փուռն աւուրց (*) կոչէր՛ ի պաշտօն, ՛ի Հռովմ՝ զազատսն, և յԱնգլիա՝ զազնուապետս ՛ի խորհրդական, և առ՛ի չգոյէ աշխարհահանարն էր ոք քաղաքացի յերկուս յայսոսիկ պետութիւնս: Բայց թէպէտ և ժողովուրդն չունէր մասն վարչութեան աշխարհին յԱնգլիա, այլ դէթ իրաւամբք պարծէր յառաջ քան զամն 1789 ընդ ազատութիւն իւր, որ հռչակէր ընդ անշշունջ ոլորս Եւրոպիոյ: Անկողմնապահ հանդիսախոսի չէ ինչ փոյթ՝ թէ սեպհականն, ուր՛ ի հանդէս ածին քաղաքական ծանր և կարևոր իրք, անձուկ իցէ թէ ընդարձակ, եթէ բազմութիւք իցեն գոլանքն թէ սակաւութիւք, այլ ընդ մեծութիւն սեպհեանն միայն զարմանայ: Ա.յսպէս հետևի են՛ ի մինչ կամք պարտաւորեալ զազատսն ոչ՛ ի Հռովմ և ոչ յԱնգլիա, վասն պահելոյ նոցա զյառաջադիմութիւնս իւրեանց ամենայն հնարիւք՝ զոր օրինք և սովորութիւք պատրաստէին նոցա: Պարտ էր իշխանութեան կալ միանալ յազնուականս, ցօրէական արժանաւորութիւն էին նոքա այնմ: և հարկ իսկ է խոստովանել՝ զի առանց հաստատութեան նոցա՝ ինոյն քաղաքական վարչութիւն, առանց մեծախոհութեան նոցա, և առանց խիստ և անդրդուելի առաքինութեան՝ որ նկարագրէին ի սեփական ազ-

1 Պլուտարքոս. Կոպոն Համարձակ. ԻԴ:

(*) Փուռ առանձ կոչէին յԱնգլիա՝ յառաջ քան զնորոգումն կարգաց ընտրութեան ասենակալաց՝ քաղաք ոմանք սակաւաբնակք, որոց պահէին դեռ ևս իրաւունք ընտրութեան, և մարթէր դիւրաւ ՛ի ձեռն սակաւուցն այնոցիկ ընտրողաց ՛ի ձեռս բերել զընտրութիւն: Ար֊ խոստանէին:

նուագեսուԹեան, զոյծ Հռովմէական քաղաքականուԹեան չեղանէր՝ ի գլուխ։

Ի սկզբան Հինգերորդի դարուն ամրացեալ Հռովմէականն ՀաստրակապետուԹիւն՝ պատրաստեր քաղել զպտուղ այնքան նեաց Ձգանցն կրելոց։ Յայնմ Հետէ առաւել միաբանեալ առանին, զարձուցին Հռովմայեցիք զամենայն զօրուԹիւն իւրեանց յաշխարհակալուԹիւն Իտալիոյ, այլ Հարիւրոց ամաց պէտք էին առ՝ ի գլուխ տանել զայն։ Խրախուսեալք միշտ օրինադրուԹեամբն, և՝ ի խորագէտ ազնուապետուԹենէ՝ ի չափու կալեալ, ընծայեցին օրինակս զարմանալիս պահելոյ՝ ի յոյզ շփոԹից յանուն ազատուԹեան զանյողդողդուԹիւն կարգաց, որ կացոյց զնա գլխոյ տիեզերաց։

ԳԼՈՒԽ Գ.

ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԻՈՅ

Յամին 416—ց488:

Ա. *Նկարագիր Իտալիոյ:*

*Նախնին Իտալիա չորևանդակէր զերկիրն Հռոմայեցւոց՝ որոյ Ալպիք և ծով են բնիկ սահմանք: Յաճախեալներս հոչեցեալ մասն, այն է գաշտն մեծ ուռոգեալ՝ի Պադոս գետոյ, և տարածեալ ընդ Ալպս, ընդ Ապենեանս և ընդ Ադրիականն ծով, զատուցեալ էր՝ինանիկ: Գաշտաւայրս այս, և մասն մի լերանց ծովեզերեայց Միջերկրականին, կացուցանէին զԻտալիա, զգալլս յայսոցա Ալպեայց և զերկիրն Վենետացւոց: Յանդգնակըզ-զին, կամ բնիկն Իտալիա, ձգէր՝ի հիւսիսոյ գՈւսբիկոն, և բուն հատանակաւ կարծեաց՝ մինչև՝ի վայրկեանս Առնոս գետոյ՝, յաբևմտից գՄիջերկրականն, յարևելից գԱդրիական, և՝ի հարաւոյ գԲանիականն ծով. (Տես յԱշխարհացոյց տախտակսն Թիւ 1 և Թիւ 2): Ապենեանք անջրպետեն զբովանդակ երկիրն Թիւրեն Իտալիոյ, սկսեալ անտի՝ ուր յանդգնն Ալպիք՝ մերձ՝ի Սաւոնա, և գօտիք լերանցս տակաւ ամբառնան մինչև գմիջերկրայս գագաթըզ-գին: Վեառն Վեղինոյ է ծագ բարձրութեան նորա, և անտի երթան և խոնարհին Ապենեանք մինչև գկատարած արքայութեան Նէապօլսոյ: Ի հիւսիսակողմն աշխարհին՝ մատչին

՝ Հիւսիսային սահմանս Իտալիոյ լեալ առ հասարակապետութեամբ հռոմայեցւոց միշտ պատմագիրք զՄակրա վտակ յԵտրուրիա. բայց՝ի հարաւ կոյս անկանելոյ սահմանաց հաւասարիք այն են, զի գնայր կեսար ձմերել՝ի Լուկկա. պարտ էր ասպա քաղաքիս այսմիկ գոլ ընդ իշխանութեամբ նորա, և մասն Գալլիոյ յայսկոյս Ալպեաց: Ար Աւգոստեայ հիւսիսային Իտալիոյ սահմանք ձգեցան՝ի Մակրա գետ:

Երինքս յԱդրիականեն, այլ՝ի միջերկրայս անջրպետեն զցամաքակղզին յերկուս գրեաթէ հաւասար մասունս. հասեալ ապա՝ի լեառն Գարուզոյ (Վուլտուրա) մերձ յաղբերակն Պրատանոյ, բաժանին յերկուս Թևս, մին մտանէ՝ի Կալաբրիա, և միւսն յԵրկիրն Պարի մինչև ցՕդրանդոյ։

Ի կրկին փեղկից Ալենենեանց՝ աղբիւրանան գետք բազումք, յորոց կէսք՝ի ծովն Ադրիական, այլք՝ի Միջերկրականն Թափին։ Յարևելից կուսակղզւոյն էն Ուսբիկոն, Պիսաւրոս (Ֆոլիա), Մետաւրոս, Եսիս (Էզինոյ), Տրուենտոն (Դրոնդոյ), Ամեռնոս (Բեսգարա), Սանկրոս, Տրինիոս, Փրեֆետոն (Ֆորտոլէ), Ափիտոս (Ֆանդոյ). որ առհասարակ գնան ուղղակիծ ընդ գօտիս լերանցն։ Յարևմտից կուսակ Ամնոս, Ումբրոյ, Տիբերիս, Ամասենոս, Նիրիս (Կարնիանոյ), Վոլտուռնոս, Սիլարոս (Սկլէ) որք գնան զուգընթացք ընդ Ալենենեանս, այլ մերձ՝ի բերանս իւրեանց գրեթէ ուղղաձիգ հոսեն՝ի ծովափունս։ Ի ծոցն Տարենտայ են Պրատանոյ, Կասուենոս (Պազիէնդոյ) և Ակերիս (Ակրի)։

Ջնահանդէս Իտալիա մարթ է բաժանել և ստորաբաժանել այսպէս.

Ի հիւսիսակողմանն, Ալեռնովք՝ ազգ սերեալ՝ի Կելտաց, և բնակեալ՝ի ծովափունս Ադրիականին, ՝ի Ուսբիկոնէ մինչև մօտ Ումբրիա։ Ումբրիա բնակեալ ընդ երկիրն Ալեռնոյ և ընդ գնացս Տիբերեայ. և Ետրուրիա ընդ Տիբերիս գետ և ընդ ծովն Միջերկրական։

Ի միջնագաւառի, Պիկենան՝ ընդ ամէջ Ումբրոյ և Ադրիոյ յանդրադոյն Ապրուցցոյ. Լատինն՝ ՝ի կողմն երկրին՝ որ ձգի Ալենենեանց ցծովն Միջերկրական, և ՝ի Տիբերեայ գՎրիս։ Ի հարաւակողմն Լատինոյ, Վոլսկք և Ուռունկացիք՝ ծնացորդք վաղեմի Ասոնոյ՝ ամէնօրեալք ընդ Վրիս և ընդ Ամասենոս գետս, սահմանակիցք Համազգեայ Սաբինեանց բնակելոց՝ ի միջագետս Վրիսայ և Վոլտուռնեայ. Սաբինացիք՝ ընդ Պիկենան և ընդ Լատինս։ Յարևելից Լատինոյ՝ ի լեռնամէջս՝ Եկուացիք. և Հերնիկք՝ յեցեալք յազգս սերեալս՝ի Սաբէլացւոց, որք էին Մարսք, Պելինիացիք, Վեստք, Մարրուվինացիք, Փրեֆետանիացիք, սփռեալք՝ի հովիտս ոտոգեալս՝ի գետոյ՝ որք բերանա-

ցեալ յանգիստն ՚ի ծով Ադրիական ՚ի ծագաց Պիկենտեսի մինչև ցՓրենատոս։

Սամնիտն, որ անցեալ ընդ մեծ մասն Ապրուցցայց և ընդ գաւառն Մոլիզա տարածանէր յարևմտակողմն մինչև ՚ի վերնագոյն Վուլտուրայ, յարևելս կոյս մինչև ցափոնս Փրենտանեայ, իսկ ՚ի հարաւ ցլեառն Վուլտուրայ։ Յայնկոյս Վուլտուրայ տարածանէր Կամպանիա (երկիր Լաբորայ, մասն իշխանութեան Սալերնոյի), ՚ի սմինեայ մինչև ՚ի ծով Պեաստոնի։

Հարաւայինն Իտալիա կամ Մեծն Յունաստան բովանդակէր առ եզերբք Ադրիականին.

Ա. զԱպուլիա (Գաբիդանադա, և երկիր Պարեայ), և զՄեսապիա (երկիր Օդրանդոյի) որ ձգէր մինչև ցհրուանդանն Յապիւգեան, և զինքնակողմն երկրին ունէին Սալենտացիք, և բազում այլ ժողովուրդք Մեսապիացւոց, իսկ զծովեզերեայս բազմաթիւ գաղթականք Յունաց։

Բ. զԼուկանիա, որ է գրեթէ այժմեան գաւառն Պազիլիքադա, զոր Թանան ալիք ծոցոյն Տարենտայ։

Գ. զԲրուտիոն (զայժմեա Կալաբրիա), որ է մասն Իտալիոյ՝ առաւել քան զամենայն կողմանս ՚ի դուրս կարկառեալ և ատարտ ՚ի հրուանդանն Հերակլեայ։

Բ. Պայման ժողովրդոց Իտալիոյ, և զօր կցորդութեան նոցա ընդ Հռոմայեցիս։

Յամին 416 նուաճեալ էր ՚ի տպատ Հռոմայեցւոց զԱտինա և տիրեալ մասին Կամպանիոյ։ Գահերկիւթեամբն նոցա տարածանէր յայժմեա Վիտերպոյ մինչև ՚ի ծով Ներապօլսոյ, և յԱնտիոքն (Բորգոյ ս՚Անգիոյ) մինչև ցՍորա։

Սահմանապլուխք Հասարակապետութեան ժողովրդոցդ էին, և սահմանքն անտրոշք, և ազգք դրացիք պատերազմողք քան զամենայն բնակիչս Յամաքակղզւոյն։

Ի հիւսիսոյ ևեթ լերինք Վիտերպոյն անտառախիտք (Կիմինեան անտառք) պատուարք էին ընդդէմ Ետրուրիոյ։ Հաստակողմն ՚ի բազմոյ հետէ ըստ կիսոյ մասին էր Հռոմայեցւոց. գաղթականք լատինք Սուտրիոնի (Սուտրի) և Նե-

պետայ (Նէբի) էին նոցա որպէս ամուլք դիտանոյք։ Իսկ Եւտուբացիք՝ ի դարուց հեաւէ ոխերիմք ընդդէմ Հռովմայ, փորձէին անդադար թափել՝ ինոցանէ զերկիրն կոտսեալ։ Սէնոնեան կելտք, որոց յամին 364 կալեալ զՀռոմ և հրկէզ արարեալ էր, և յաձախ ևս վերստին անդր արշաւեալ, զայն դարձեալ զիւրձ առնուլ զբադղին։ Եւ Թէպետ յամին 404 և 405 ՚ի պարտութիւն մատնեալ, սակայն կազմ և պատրաստք կային հանապազ զէն առնուլ ընդ Ումբրիացիս և ընդ Ետրուրացիս ընդդէմ Հասարակապետութեան։

Սաբինացիք Թէպետ և անդստին ՚ի վաղ ժամանակաց բարեկամութեամբ էին ընդ Հռովմայեցիս, սակայն կէզակարծ էր նկատակցութիւն նոցա։ Պիկենոն, երկիր արգաւանդաւոր և բազմամարդ, կայր հանդարտեալ, և բազումք ՚ի լեռնաբնակաց անտի Սաբելեանց, Թէպետ և քաջք և ժիրք ՚ի մարտի, չէին ինչ դեռ ևս ահարկուք։ Մերձաւորագոյնք Հռովմայ Եկուացիք և Հերնիկք յանդգնծութիւն ածեալ էին. բայց ծերակոյտն յուշի ունէր զՇինամութիւնս նոցա, և խորհէր միշտ ՚ի վրէժխնդրութիւն։

Ի հարաւային ծովափունս, ՚ի վաճառաշահ քաղաքս Յունաց Հզօրագոյն էր Տարենտոն. այլ գաղթականքս այսոքիւ՝ որ կարացեալք՝ կարօտէին վարձկան զօրականի առ ՚ի զէմ ունել բնակչաց երկրին։ Վիճէին նոքա ընդ Սամնիացիս և ընդ Հռովմայեցիս զնախիշխանութենէ ՚ի Մեծն Յունաստան։ Սակ նիւթք, ազգ արիական և ազատամիտ, Ջանային տէրտապետել ընդ հարաւային Իտալիա ողջոյն. քաղաք նոցա կազմէին նախակցութիւն ահաւոր սերտ միաբանութեամբն ՚ի պատերազմ։ Սգգք լեռնաբնակք պարտապէին ՚ի յարիշտակութիւն. և աե՛ս ինձ, զի և արդի դէպք հաւաստեն՝ ոչինչ և յաւուրս մեր փոփոխութիւն լեալ բարուց բնակաց երկրին։ Սամնիացւոց շեղջակուտեալ էր մեծութիւն բազում. զինք նոցա մեծափառ Թանք՝ եթէ հաւատամք Կեսարու[1], օրինակ կացին հռոմէացւոյ զինուց։

1 Ձառ Կեսարու յաւելի ծերակուտին, առանգեալ ՚ի Սալուստիոսէ. (Դասախոսութիւն կոպէնհաղէնի. Ծ.Ա.)

ի բազմաց հետէ Հռովմայեցիք և Սամնիտացիք ոտիք էին միաբանց նախանձընդդէմք. և՝ ի յանդիման լինել նոցա էրե-
րաց, յայտնի էր գալ նոցա ընդ միաբանս՝ ի զէն. երկարաձիգ
եղև մարտն և ահաւոր. և՝ ի հինգերորդ գարու անդադար
շուրջ զՍամնիտս պատերազմէին զպետութենէ Իտալիոյ: Ամենր
էր յոյժ բնակութիւն երկրին Սամնիտացւոց, պատնիշափակ գոգ-
ցեա պատսպարեալ՝ ի լերանց՝ մարթ էր նոցա լինել բատ կամս
՝ի հովիտս Լիրիսայ, և անտի պահ ունել ընդդէմ Աւրունկաց՝
որ կազմ և պատրաստք էին հանապազ յարձակութիւն, և
հատանել զկցորդութիւն Հռովմայ ընդ Կամպանիոյ. կամ խա-
զալ ընդ վերնակողմն Լիրիս գետոյ՝ ի Մարս, դրդել զնոսա՝ ի
մարտ, և ձեռն տալ Ետրուրացւոց՝ ի պաշարումն Հռովմայ, կամ
միւսի՝ ի կամպանիա ընդ հովիտն Վոլտուռնեայ, և անկանել՝ ի
վերայ Սիտիկինաց, զորոց ցանկային ունել զերկիրն:

Փոքու պետութեան՝ ի մէջ այնչափ ոխերիմ ազգաց՝ ամ-
բառնալոյ՝ ի վերայ այլոց և նուաճելոյ զնոսա, պարտ էր բերել
յինքեան տարերս յաւտուկս պերակայութեան: Որ շուրջ զը-
Հռովմաւ բնակեալ ազգք պատերազմողք, խրոխտք ընդ ի-
բեանց ազատութիւն, ոչ զնոյն միութիւն ունէին, ոչ զնոյն
խրախոյս, ոչ զնոյն ազնուապետական հզօր յօրինուածոյ,
և ոչ զնոյն զաչացու վստահութիւն ընդ ձակատագիր ի-
բեանց և ընդ բազդ: Երևէր՝ ի նոսա առաւել անձնասիրու-
թիւն քան փառասիրութիւն. պատերազմէին առ՝ ի յաձախել
զձոխութիւնս իւրեանց աւարաւ՝ քան յառաւելուլ զթիւ հպա-
տակաց: Յաղթանակեաց Հռովմ, զի՝ ի յոյս ապառնոյն ևեթ
միշեր նա պատերազմ, ոչ առ՝ ի քանդել, այլ առ՝ ի պահել.
և յետ զինական աշխարհակալութեանն գուն գործէր և բա-
րոյապէս նուաճել զպարտեալս: Ի ջրից հարուրից առաց հե-
տէ հռովմէական տիրմանատրութեան կազմեալ էր ազգ
մարտիկան վառեալ՝ ի սէր հայրենեաց և՝ ի հպատակութիւն
պարտուց. և մարդիկն այն ևս քան զևս կազդուրեալ առանձին
անդրդ պատերազմօք՝ բարս և աւանդութիւնս քան զսահ-
մանադրութիւնն զայն հզօրագոյնս տակաւ՝ ինեցեր մուծեալ
էր: Վասն որոյ ընդ երիս դարս՝ ի Հռովմ, հանդերձ ամի ամի
փոփոխութեամբ իշխանութեան, էր տեսանել հաստատու-

*Թիւն այնպիսի յարատև՝ ինոյն կարգ քաղաքական տեսչու-
Թեան, և հրահանգ այնպիսի նոյն առաքինու Թեանց, մինչև
համարել միոյ ուրուք և նոցին խորհրդոյ վարել զաշխարհն, և
ամենայն զօրավարաց նորա Թուել արս հմուտս՝ ի պատերազմի;
ամենայն առենակալաց նորա՝ քաղաքագէտս ներհունս, և ա-
մենայն քաղաքացեաց նորա գոլ զօրականս քաջս։*

*Ոչինչ նուազ օգնէին երագ յաջողու Թեան Հռոմայեց և
տեղի բնակու Թեան նորա։ Ի միջավայրի միայնոյ գաշտին մե՛ծ
արգաւանդն Լատիոնի բնակեալ, առ եզր կարևորագունդ գե-
տոյն միջերկրայեայ Տաւղոյ, որ կոյսդէրն գնաց ընդ ծովու, կարէր
մշակել մանգամանդն և նաւարկել. պայմանք անհրաժեշտք՝ ի
ժամանակին յայնմիկ քաղաքացւոյ ինքնակալու Թեան։
Մե՛ծահարուստս նահանգաց ծովեզերեայց Միջերկրականին
պարտ էր անկանել դիւրեաւ ընդ ձեռամբ նորա. իսկ որ
շուրջ գնային լեռնային գաւառաց դիւրանայր աշխարհակալու-
Թիւն, ունելով տակաւ զեր Հովտացն առ հասարակ։ Այս-
պէս քաղաքն եօԹնաբլուր եԹէ բնակու Թեամբն ամրացեալ
և եԹէ քաղաքական յօրինուածու Թեամբն, բերէր յինքեան
զբերման առյապայ իւրոյ մե՛ծու Թեանն։*

Գ. Գնացք նոցա ընդ պարսոնալ ժողովուրդս։

*Ի սկզբանէ անտի հինգերորդ գարուն պատրաստէր Հռոմ
զօրու Թեամբ ուժոյ նուաճել և նամանեցուցանել իւր զամե-
նայն բնակեալս՝ ի Ալպիկան գետոյ ցկիրճն Մեսինայ։ Ոչ միայն՝ ի
հակառակաց արգելու Թիւն զնա կարէր, ոչ գաշնակցու Թիւն ազ-
գաց մերձաւորաց ընդդէմ նորա, ոչ նորանոր արշաւանք կե-
տաց, և ոչ դիմեցումն Վեհատի՝ ի վերայ նորա։ Ասեալ՝ ի
պարտու Թեանց ինչ անտի իւրոց՝ գիտէր նա կանգնել զկորանս
իւր և կազմել զհու Թիւն Լատինոյ. իբր ոչ եԹէ նուաճեալ
մանգամանդն զամենայն ազգս՝ ինոյն օրէնս և՝ ինոյն կարգ
վարչու Թեան, այլ մուծանելով զնոսա առ փոքր փոքր և այլ
և այլ առանձնատս յազգատոհմին մե՛ծ Հռոմէականաց։ «Ի քա-
ղաքաց զումն ներգաւակից իւր առնէ, այլոմ ընտրէ պատիւ ընդ
Լատինան օրինօք կենալ. ումեք իրաւունս պարգեւէ քուէից,*

այլում Թողու զնուրն կարգ վարչութեան։ Գաղաթք առաւել կամ նուազ կցորդք կարգաց տեսչութեան իւրոյ, գաղթականքն ծանրեբերեալք, գաղթականքն լատինք, գաղթականքն Հռոմայեցիք, կուսակալութիւնք, քաղաք գաշնակից, քաղաք ազատ, գաւառք իրարանցուր ըստ այլ և այլ հանգամանացն, և ամենեքեան կցորդեալք ի մի հաւատար ազգարանն ծերակուտին կազմեն նոա ցանց լայնատարած՝ ընդունել գազգս խաղաղասիրութեան մինչև ցօրն, յորում անպատերազմ գտանիցին նոքա Հպատակք Հռոմայ»[1]։ Պնդեալ զայլ և այլ կարգաց այսոցիկ զհանգամանս։

Իրաւունք քաղաքի ի լատինեան իրում, բովանդակեր զարտօնութիւնս քաղաքական պահեալս Հռոմայեցւոց, և տայր քաղաքական կենաց առաւելութիւնս ինչ, զոր մարթէր ի բաց միջել և տակաւ ընդունել։ Այսպէսն ի նոսա առնուր, այն է իրաւունք առանալոյ և փոխանցելոյ յայլս ըստ Հռոմէական օրինադրութեան. ապա առնուրդութիւն կամ իրաւունք ազգախառնութեան՝ հանդերձ բարեմասնութեամբք, զոր ընդունէին օրէնք Հռոմէականք[2]։ Տուրնաւոր և առնուրդութիւն միանգամայն կազմեն զկուսիրեան իրաւունս։

Երեք ազգ էին ինքնօրէն վարչութեան քաղաքաց[3].

Ա. Քաղաք՝ որոց բնակիչք ի քաղաքացիս Հռոմայ գրեալ՝ վարէին ամենայն իրաւամբք նոցա, Հպատակելով և պարտուց նոցին։

Բ. Քաղաք՝ առանց քուէից, որոց էին բովանդակ կամ ըստ մասանեայ կուսրեան իրաւունք, և մարթ իսկ էր նոցա ընդունել լուսի զիրաւունս քաղաքացւոց Հռոմայ պայմանօք

1 Հաստատեալ այս, որ մեծաւ յաւակութեամբ բացատրէ զքաղաքագիտութիւն Հռոմէական ծերակուտին, առեալ է ի գերազանց Հռոմէական պատմագրէն Տիւրիւեայ. Հա. Ա. գլ. ԺԱ։

2 Որպէս՝ կացուցանել զկին ընդ Հպատակութեամբ առնն յաներևոյթ, տալ Հօր լուսի իշխանութիւն ի վերայ որդւոց իւրոց, և այլն։

3 Ի սկզբան քաղաքք այսոքիկ էին գաշնակիցք Հռոմայեցւոց կալով ինքնօրէն ազգութի, պայմանաւ եւթէ պարտուք ապատ լինել ծառայութեան մատուցանելոյ Հռոմայ, ուստի և կոչեցան Մունիկիպիոմ. զի Մունուս ի Հռոմէական բարբառ նշանակէ ապատ կամ Հարկ ծառայութեան։ (Ալոս Գելլիոս ԺՉ. ԺԳ. 16)։

ինչ[1]. և այս էր՝ զոր կոչէին իրաւունք Լատինաց։ Երկոցունց այսոցիկ առաջնոց դասուց էր ինքնօրէն վարչութիւն և առեան։

Գ. Քաղաքք՝ որոց կոչուսեալ էր զամենայն ինքնիշխան ազատութիւն փոխանակելով ընդ այնր զօրինս քաղաքականս Հռովմայ, բայց առանց վայելելոյ ի կարևորագոյն իրաւունս քաղաքականս. և այս էր կոչեցեալն կերեւակի իրաւունք, զի նախ առաջին կերպ քաղաք սովին օրինօք վարեցաւ[2]։ Չետ ազատ քաղաքացս՝ որոց էր առեան ինքնուրոյն, գային ի դասակարգ ընկերութեան կուսակալութիւնք[3], յորս գնային առի առի կուսակալք ի դատաւորութիւն։

Անձնաւորս ազգքն ի յոռեգոյն պայմանի կային. քանզի մահանեալք պարտութեամբ ի կամս ծերակուտին՝ սոխակին լինել զինքնիկէց և տալ պատանդս, քանդել զպարիսպս կամ ընդունել անդր պահանոցդս, հարկս հարկանել, և տալ այսչափ ինչ զօրս։ Բաց ի սոցանէ՝ քաղաք, որոց չէր ընկալեալ լուծն զերծաւունս քաղաքացւոց Հռովմայ, ի դաշնակցաց հաստարի էին։ Ըստ դաշանցն զանազանէին և պայմանք նոցա։ Կարգ դաշինքն բարեկամութեան[4], կամ վաճառակցութեան[5], կամ դաշնակցութիւն պահպանողական, կամ պահպանողական և վերաժական[6] կոչեալ հաւատարակս երկուստեք, կոչէին հաւասար դաշինք։ Խակ յոտնամի մի ի կողմանց, որ ոչն գիտէր երեք Հռովմայեցւոց, պարտս ծանուցնա յանձն առնոյր, յորոց ազատ էր միւսն, կոչէին դաշինք անհաւասար։ Եւ կոչէին դա-

1 Ի վայելել լիրաւունս Հռովմայ, պարտ էր բնակիլ անդ, և ուրեք յազատ քաղաց անուն ունել որպէ ձերբազատ, կամ առենակալութիւն ինչ վարել անդ։

2 Ագէլլիոս· ժ.Զ· ԺԲ։—Պաւլոս Սարկաւագ ի բառն Մառնէքթոս· էջ 127։

3 Յայսմ գասակարգէ գտանէին երբեմն երրորդի կարգի ինքնիշխան քաղաք, որպէս Կերկ։ (Տես Փեստոս ի բառն Կոսսկոլոնիան· էջ 233)։ Բազումք ի քաղաց, որպէս Փունդի, Փոլմի, Ալպինոն, ընկալան ապա վերաւունս քուէից· սակայն ըստ վաղնջուց սովորութեան կոչէին զարձեալ Կոսսկոլոնիա· որպէս և գալեթականք խակ պետակաբար այնպէս կոչեցեալ։

4 «Ընկեր և բարեկամ»· Տիտ· Լիւ· ԼԱ· ԺԱ։ — Տես և Դիոն· Ռլիկ· Զ· Գե· ԺԱ։

5 Զոր օրինակ ընդ Կարքեդոնի։ (Պոլիբ· Գ· ԽԲ։ — Տիտ· Լիւ· Է· ԻԷ· Թ· ԺԹ· ԽԳ։)

6 Ա յապէս ընդ Լատինս· «Զի զնոսա՝ զորս և ժողովուրդն Հռովմայ ի բարեկամս և ի Թշնամիս կալցին»· Տիտ· Լիւ· ԼՐ· Ը։

չինքս Թողլով պարտեւոյց գրեթէ միշտ մնան ինչ յերկրէ իւրեանց ՚ի յաղթականս, խոստմամբ չեանեղոյ երբէք ՚ի մարտ ինքնահրամանս։ Ապաքէն ընտրհեր նոցա ազատութիւն ինչ, իրաւունք տուրեւտուոյ և ազատ բնակութիւն ՚ի մայրաքաղաքին, այլ պարտս ՚ի վերայ եդեալ նոցա պահպանողական և վկուժական նիզակակցութեան։ Եւ հաստատութիւն դերակայութեան Հռովմայ յայս ձև պայմանի բռնադակեր. «Ջվեհափառութիւն հռովմէական ժողովրդեան հաւատարմութեամբ պահեացեն»[1]։ Արժանի յիշատակելոյ է, զի յաւուրս Աւգոստեայ զատան և ազատագիրք ՚ի նամանօրինակ դասակարգութիւնս բոլ բնակչաց Իտալիոյ[2]։

Իսկ գաղթականք հաստատեցան առ ՚ի պահ աշխարհակալութեանց, յատկահոգութիւն նոր սահմանագիծս և ՚ի զգուշութիւն կրճից կարևորաց. ևս և ՚ի սկզբան անդ՝ առ ՚ի զերծանել ՚ի խռովարարաց[3]։ Կրկին ազգ էին գաղթականաց, Հռովմայեցիք և Լատինք. առաջնոցն դոյզն ինչ խտիր էր յառաջին դասակարգէ ազատ քաղաքաց, իսկ Լատինացն յերկրորդ դասակարգէ։ Առաջինքն կազմէին ՚ի քաղաքացւոց Հռովմայ, ՚ի զինուորական դասուէն գաղթել ընտանեօք հանդերձ, որ ՚ի սկզբան յազատանուէն էին միայն։ Գաղթականք պահէին զարտունութիւնս յարակից քաղաքացի անուան[4], ընդ նովին նոցա

1 Կիկ. Ափենաբան. ՚ի պատ. Բալբեայ. ժ.Զ։

2 Ազատագիրք՝ քաղաքացիք էին Հռովմայ, կամ Լատինք և կամ ՚ի համարի Անյնապոյ ազգայ։ Սորուկք՝ որոց ՚ի ժամանակի ծառայութեան իւրեանց կրեալ էր ծանր պատուհաս, յելանելն յազատութիւն հանդոյն ևեթ անձնատուր ազգայ համարէին։ Իսկ եթէ չէր ուրուք կրեալ պատիժ, և անցեալ իսկ էր զբեանամենիւք, և ըստ Կուկրեան իրաւանց՝ ստացուած տեառն իւրոյ էր, եթէ ըստ հռովմէական օրինաց՝ ձև ձեռնձգութեան կամ արձակման ՚ի վերայ նորա կատարեալ էր, ընդ քաղաքացիս Հռովմայ համարէր։ Ի պակասել միոյ ՚ի հանգամանացս՝ ընդ Լատինս գրէր։ (Օրինապրութիւն Գայեոսի. Ա. յօդ. 12, 13, 15, 16, 17։)

3 «Առաքեաց Վալերիոս յերկիրն կալեալ ՚ի Վոլսկեանց գաղթականս յաղքատացց ժողովրդեան ՚ի պահանորդս ընդդէմ թշնամեաց, և առ ՚ի նուազել զթիւ խռովարար մարդկան ՚ի Հռովմայ....». (Ամ Հռովմայ 260.) Դիոն. Ալիկ. Զ. Խգ։ — Ցոգնաթիւ գաղթականքս թևթևաբեռնէին զՀռովմ յամբոխէ քաղաքացւոց չքաւորաց, և հաստատէին զնաղաղութիւն (452)։ (Տիտ. Լիւ. ժ. 2)։

4 Արդի մատենագիրք չեն միաբանք զնրացս, որ բազում քննութեան են կա-

պարտեօքն անկեալ, և առանին կարգ տեսչութեան նոցա յար և նման էր Հռովմէականին[1]։

Գաղթականք լատինք զանազանէին յայլոց, հինեալք՝ ի գաղնակցութեան Լատինացւոց յայլ և այլ կողմանս Լատիոյ։ Սերեալ՝ ի գաղնակցութենէ ազատ քաղաքաց, չէին իրրև զգաղթականս Հռովմայեցիս կցորդեալ ընդ մայրաքաղաքին անձուկ զօրիւք[2]։ Այլ՝ ի լուծանել այնր գաղնակցութեան, գաղթականքս այսոքիկ անցին այնուհետեւ՝ ի կարգս այլոց գաղնակից քաղաքաց։ Առեղծուածք հաստատութեան նոցա՝ էր պակս գաղնադրութիւն իմն վասն ապահովելոյ զգաղաստութիւն նոցին[3]։

Գաղութքս այսոքիկ կոչեալ՝ ի սկզբան՝ ի Լատինաց՝ ոչ անագանեցին ընդունել և զքաղաքացիս Հռովմայ, որ առ չքաստութեան փոխանակին զպատիւ իրենց և զիրաւունս ընդ ստոյգ օգուտս գաղթականաց։ Զերուին սոքա յաշխարհագիրս հանդերս հանարտակաց, այլ ձև գաղնացին ևեթ ահմանել գաւառս և զթիւ զօրականին՝ զոր պարտ էր նոցա տալ։ Ձոր ինչ արտաստութիւնս կորստանէր գաղթականն, շահէր զայն ինքն իշխան ազատութեամբ[4]։

Հետաստութիւն լատին գաղթականաց, որ բնակին յերկրի Թշնամեաց, սոքիկ զնոսա կալ հաստատիմ Հռովմայ և

բօս· բայց մարթ է ըստ խնաստից բնագրին՝ որ ըստ Մատուխայ (Պիպտանոթիան, Ա· էջ 244–254)՝ համարել զինդիրն լուծեալ։

1 Ժողովուրդն ընտրէր անգ զառենակալս իւր· Երեսփ ընուին զպաշտօն բերելոց կամ զպատուարաց, զորոց առնուին իսկ երբեմն և զանուանս։ Իսկ հընգամեան առենակալք զհամարակալաց ունէին զաեղն։ Էին նոցա և գանձապետք և շինուածապետք։ Ծերակոյտն՝ որպէս և՝ ի Հռոմ, կազմէր անգ՝ ի հարիւրոց, որոց պաշտօն կենաց էր ահմանել, և՝ ի հինգ ամս միանգամ զանայր թիւն նոցա։ (Հերալեան ցոցոյ, գլ· ե, և որ գինն։)

2 Ոմանք՝ ի գաղթականաց՝ ի ցուցակին զոր տայ Դիոնեսիոս Ալիկառնացի՝ Թուին որպէս գաշնակիցք։ (Ե· ԿԱ։)

3 Պլին· Բն· պմ· Գ· Դ· յօդ· 7։

4 Քանզի ընտրէր նա իւր առենակալս, հաստանէր և գրամս (Մոմսէն, Դրամագիտութիւն, էջ 317), որ հռովմէական գաղթականաց իսկ չէին իրաւունքս այս, և պահէր զօրէնս իւր ըստ առածին, Թէ «Ոչ իւիք հռովմէական ժողովրդեանն օրինօք կապեալք, բայց որով ազգ նոցա հինեցաւ»· (Ալբս Գելլիոս· ԺԶ· ԺԴ· 6։ — Տես և Կիկ· Ափնաբան· ի պաշտ· Բալբէայ· Ը· 21։

հակե՛ւ ի վերայ զրացի ժողովրդոց։ Զօրութիւն նոցա զինուորական հաւասար էր զօրից ընդ Հռովմէական զաղթականաց, և հանդոյն տոլին արժանապէս կոչէին պատուաւորք պետութեան և զէտք[1], և ըստ քաղաքական տեսութեան ոչինչ նուազ ծառայութիւնս մատուցանէին։ Զի եթէ զաղթականք հռովմայեցիք ցուցանէին ազգաց պարտեզոց զվերհասութիւն հռովմէական անուան, քանք նոցա լատին զաղթականք ևս քան զևս ընդարձակէին զլատինական անուն[2]. այս ինքն զտարբառս, զբարս և զսովանդակ խոկ զքաղաքականութիւն ազգին՝ որոյ Հռոմ էր զլուխ։ Լատին զաղթականք բազում այն էր՝ զի առ՝ի խնայութիւն զաղթականաց Հռովմայեցւոց առաքէին, պահ ունել մանաւանդ զծովեզերից և զդուշանալ տուրեաւոյ ընդ օտար ազգս։

Համարեալ զիրաւունս քաղաքացւոց Հռովմայ պատիւ մեծ՝ զոր ամենայն ոք ջանայր՝ի ձեռս բերել առ՝ի պարծանս, ծնեալ բակոյան հրապոյրս փառասիրաց մատուցանէր. և բնաւորեալ էին էր յամենեսեան իղձս այս առ նախնիս, ոչ եթէ բառնալ զբարեմասնութիւնս, այլ՝ի թիւս բարեմասնեցոյն յաւելուլ։ Ոչ միայն՝ի Հռոմ, այլ և՝ի բովանդակ հռովմէական պետութեան ապատամբք կամ դժկամակք, ոչ իբրև յայժմեան քաղաքային ընկերութեան դան դործէին տապալել զայն, այլ հաստանել այնմ։ Այսպէս իւրաքանչիւր ոք ըստ իւրում պայմանի ըղձանայր յօրինաւոր ինչ կէտ նպատակի. ոմանք մտանելոյ յաղնուապետութիւն, և ոչ եթէ բառնալոյ զայն. իտալական ժողովուրդք հաղորդս լինելոյ իշխողութեան Հռոմայ, և ոչ եթէ զդէմ ունելոյ այնմ։ Հռովմէական մարզք՝ դաշնակից և բարեկամ լինելոյ Հռովմայ, և ոչ եթէ ազատութեան իւրեանց դարձեալ հետամուտ լինելոյ։

Մարթ էր ազգացն այնոցիկ՝ ի գնացից իւրեանց գուշակել որ ինչ բազդ ծնայր նոցա։ Փոխանակ անարգ շահուց քաղաքին իւրեանց՝ վայելէին՝ի հզօր պաշտպանութիւն, և՝ի նուաստանալ իրաւունս, որ բազում այն էր՝ զի պատուականագոյնք

1 Կիկ. Հակառակին օրինաց. Բ. 27։
2 Տիտ. Լիւ. Իէ. Թ։

էին յաչս պարտեզաց քան զինքնիշխան ազատութիւն։ Ասի՝ ի միտ առնուլ է՝ թէ ուրպէս զիւրեաւ էառ հաստատութիւն հռովմէականն պետութիւն։ Չի ոչ է տապալել անկանգնելի՝ փոխանակել ինչ օգտիւ։

Յանկարկել ևեթ՝ ի պատերազմունս՝ որ ածին զաշխարհակալութիւն Յոռլոյ, տեսանեմք թէ ուրպէս ծերակոյտն՝ ի կիր արկանէր զկանոնս ցուցեալս՝ ի վեր անդր. ուրպէս զիտէր նա յօգուտ առնուլ զնեղձուած հակառակորդաց իւրոց, ՝ի ժողովել զամենայն զօրութիւնս իւր ՝ինուաձումն միոյ ՝ի նոցանէ, զոր յետ յաղթութեան՝ յաւելցուր ՝ի դաշնակիցս իւր, և ապա զինուք և օգնականութեամբ նոցին վարէր ՝ի խորտակումն այլոյ ուրուք. ուրպէս զքակտէր զդաշնակցութիւնս պարտեցոյ, և նուաճեալ կապանօք յինքն զնոսա յարեցուցանէր. ուրպէս ՝ի վայրս վայրս հաստատէր պահակս զօրաց կարեւորս. և համայն ասացեալ, սիրէր ամենայն ուրեք զազգն լատինական՝ բաժանեալ ՝ի քաղաքացիս Հռովմայ մանն ինչ զերկրին, զոր առնոյր ՝ի թշնամեաց։

Ա.յլ միևչև ՝ի Հառս պատմութեան իրացս մատուցեալ, դարձցուք յասն, որ յառաջ քան զՀաշտութիւն Լատինաց։

Դ. Հպատակիլ Լատինաց յետ նախնոյ պատերազմին Սամնիտացւոց։

Ընդ ամս հարիւր վաթսուն և եօթն ամիսսիկեր Հռոմ զզօրութիւն իւր ընդդէմ դրացեաց առ ՝ի տանալ անդրէն զյառաջադահութիւն իւր կորուսեալ յետ անկման Թագաւորութեան։ Միշտ իսկ դոզյես ՝ի պահպանութիւն իւր պատերազմէր. այլ՝ ի սկզբանէ հետէ հինգերորդ դարուն ձեռն արկ ՝ի զէն վըհժական, և զկարդ աշխարհակալութեան սրբազանեաց, մինչև անկեալ և ինքն կործանեցաւ։

Յամին 411 միաբանութեամբ Լատինաց զայս առաջին նուաճ եւ պատերազմ ընդ Սամնիտացիս, սկսեալ ընդդէմ ահաւոր ազգին մարտ՝ որ տևեաց զամն եօթանասուն և երկու, և քան և չորս յաղթանակս եւս կանգնել զօրավարացն Հռովմայեցւոց[1]։ Խրոխտացեալ Լատինաց զի ձեռնտուութեամբ իւրեանց

1 Փլորոս· Ա· ԺԶ։

կանգնեցան կրկին մեծամեծ յաղթութիւնք ի Գաւրաս լերին և ի Սուեստուլա, և յանդգնեալ ի զօրութիւն իւրեանց հաստատել կարծելով Հռովմայ՝ պահանջէին զմի յերկուց բռնից և զկէս ծերակուտին յիւրեանց կացուցանել։ Յայնմ օրէ հրատարակեցաւ ընդդէմ նոցա պատերազմ։ Խնդրել խնդրէր ծերակոյտն դաշնակից և հպատակս, այլ Հանդուրժէր ունել իւր հաւատարս. վասն որոյ ընկալաւ անխուսք զինուցակցութիւն երիկեան իւրոց թշնամեաց. և էր տեսանել զՀռովմայեցս ի դաշտս Վեսերեայ և Տրիխանեայ ընդ Սամնիացիս, ընդ Հերնիկս և ընդ ազգս սաբելեանս մարտակիցս ընդդէմ Լատինաց և Վոլսկեանց։ Նուաճեալ միանգամ զԼատին՝ մընայր սահմանել զպայման պարտեցոյն։ Առեռախօսութիւն կամիլլեայ, զոր Տիտոս Լիւիոս յառաջ բերէ, յայտնի առնէ զառնն մեծի զքաղաքական տեսութիւն՝ զոր առաջարկէ. «Կամիցիք, ասէ առ առեռակալս, զեղծանիլ իրաւամբք յաղթութեան։ Տեարք էք քանզեզայ ի սպառ զԼատին, և անպատճառ անմարդի կացուցանելոյ զայն՝ յետ բազում անգամ հզօր օգնականութիւնս առեալ գտանելոյ։ Կամիցիք ընդ հակառակն լսել օրինակի հարց ձերոց յաձախել զօրութիւնս Հռովմայ։ Ընկալարուք զպարտեալն ի թիւ քաղաքացեաց. այս հնարք են բիւրաբեղուն յաւելոյ զզօրութիւն և զփառս ձեր միանգամայն»[1]։ Եւ յաղթեաց կալաւ խորհուրդս այս վերջին։

Առաջին նախ զկապ կցորդութեան որ ի դաշնակցութիւն էին միաբանէր զազգս Լատինաց։ Արկեալն նոցա զամենայն ժողով քաղաքական, զամենայն պատերազմ ազգային, զամենայն վաճառակցութիւն և ամուսնութիւն ընդ այլ և այլ քաղաքս նոցա[2]։ Քաղաք մերձաւորագոյնք Հռովմայ ընկալան զիւսուն քաղաքակցութեան և քուէից[3]։ Այլք պահեցին զանուն դաշնակցութեան և զիւրեանց բնիկ սահմանադրութիւն. բայց կորուսին մանր ինչ յերկրէ իւրեանց[4]։ Ոչ լատին գաղ-

1 Տիտ. Լիւ. Ը. ԺԹ. ԺԹ։

2 Տիտ. Լիւ. Ը. ԺԹ։ Քաղաքքս այսոքիկ ասացան զկրաւունս քաղաքի, այլ ոչ և քուէից. ի Թիւս ասցա էր Կապուա, զի ասպետք նորա չէզեն հաղորդ ապստամբութեանն, Կումա, Փունդի և Փորմի։

3 Վելլ. Պատերկ. Ա. ԺԵ։

4 Տիտ. Լիւ. Ը. ԺԹ։

Թականք հաստատեալք կանուխ ժամանակաւ՝ ի վաղեմի երկրին Վրկիեանց՝ կազմեցին զինքեանս դաշնակցութեան կատարեալ։ Վերնատացիք միայն բազում անգամ ընդվզեալք՝ խառնեցան պատուհասեցան. և Ընտիոն հարկեցաւ տալ՝ ի գուրս զտորմիլ նաւաց իւրոց, և եկայ գաղթական ծովեզերեայ։

Ձգուշութիւնքս այսոքիկ խնամք, բայց արդարացիք, խաղաղացուցին զնոսա. և՝ ի վերայ ծնացորդ մասին նոցա Խաղիոյ և օտար աշխարհաց նոյն զգուշութիւնք՝ ի կիր արկեալ, պատրաստեցին ամենայն ուրեք յաջողութիւն հռովմէական պետութեան։

Առաջանոակեալ դաշնակցութեամբ Սամնիտացոց ընկճեալ Հռովմայ զնոսունեացիս, ոչինչ յերկուացաւ ծերակոյտն պատերազմ առեալ դարձուցանել ապա զկնի իւր ընդդէմ նիզակակցացն։ Յամին 422 ուխտ եդ ընդ Կելտս և ընդ Ալեքսանդրի արքային Մոլոսացւոց, որ զօրս Թափեալ՝ ի ցամաք մերձ՝ ի Պետառան, հարկանէր զՀռովմայիս և զՍամնիտացիս։ Յաղագս այս Եպիտռոսի մօրեղբայրն Մեծին Ալեքսանդրի հրաւիրեալ՝ ի Տարենտացւոց Խոտալիա, առ մահուն կանխելոյ՝ ի գերև եհան զանկնակալութիւնս նիզակակցացն, և Սամնիտացիք վերստին ապստամբին յերկիր սահմանակցաց իւրեանց։ Հռովմ՝ ի մէջ անցեալ լուեցոյց զպատերազմն. և զամենայն զօրութիւն իւր և զՀիդն Թափեաց՝ ի խորտակել զապստամբութիւնս քաղաքացն Վրկիեանց, զՓոնդէայ և զՊրիւերնոնի[1]։ Յամին 425 Անքսուր (Դէրրաչինա) եկայ գաղթական Հռովմայ, և՝ ի 426՝ Փրեկել (Զէբրանոյ?) գաղթական լատին։

Հաստատութիւն ամուր քաղաքացս և կալեայ և Ընտիոնի՝ ապահովէր զերծեւեկս՝ ի Կամպանիա, և Լիրիս և Վուլտուռնիա լինէին այնուհետև գլխաւոր պատուարք Հռովմայեցւոց։ Քաղաք կառուցեալք յեղեր գեղեցիկ ծոցոյն՝ զոր նախնիքն կոչէին ծոց Կրատերայ, և առ մեօք կոչի՝ Նէապոլսի, ՝ի միտ առին յայնժամ զսպառնալիս վտանգին՝ որ՝ ի վերայ կայր նոցա։ Դարձուցին զաչս իւրեանց՝ ի ժողովուրդս միջերկրեայս՝ որք ոչ էին ընդ հաստ տագնապէին վասն ազատութեան իւրեանց։

1 Տիտ· Լիւ· Ը· ԺԲ, և որ գինի։ — Վալերիոս Մաքսիմոս· Զ· Բ· 1։

Ե. Երկրորդ պատերազմն Սամնիտացոց (427–443).

Երկիրն յուրմէ՛ որ առ արեւմտեան ծովեզերք Յանապատկղզւոյն, ունէր շարժել զցանկութիւն Հռովմայեցւոց և զՍամնիտացոց, և լինել աւար յաղթողին. զի «Կամպանիա, ասէ Փլաւտոս, գեղեցկապոյն մասն է Իտալիոյ և Թերևս բոլոր աշխարհի. չէք բարեխառնութեան օդոց քաղցրագոյն քան զնոսայն. երկիցս՝ ի տարւոջ փթթի անդ դարուն։ Բերրի յոյժ է երկիրն՝ մինչև կոչել պարտէզ Դեմետրեայ և Վռանխեայ։ Ոչ ևս ի ծով հնարընկալ քան որ զափունս նորին Թանայ»[1]։ Յամին 427 ժողովուրդք երկոքին՝ ի վեց եկին ուխտապետել անդ, որպէս յամին 411։ Ի դիմել բնակչաց Նալէոպոլսի՝ ի վերայ պաղեստինացոց Հռովմայեցւոց երկրին Կամպանիոյ, խաղացին զգեաշխք ընդդէմ քաղաքին, որում վաղվաղակի՝ ի Թիկունս հասին Սամնիտացիք և բնակիչք Նոլայ՝ մինչդեռ Հռովմ պաշնակեր ընդ Սատուրնացիս և ընդ Լուկանիացիս։ Ընդերկարեաց պաշարումն քաղաքին, և հարկ երկարաձգելոյ պատերազմին քան զսահմանեալն կէտ՝ յամեցոյց՝ ի զօրավարութեան զՊուպլիոս Փիլոն երբ փոխանակ գղեխի, որ առաջին երևէր՝ ի զինուորական յիշատակարանս։ Վաղ ընդ փոյթ հալածեցան Սամնիտացիք՝ ի Կամպանիոյ. անճնաւոր եղեն Բալեոպոլսեցիք, հնին՝ ի վեր կոծանեցաւ քաղաք նոցա. այլ նորա բնակուԹիւն կալեալ մերձ անդր՝ ի Նէապոլիս*, ապահովեցին նոր դաշնադրութեամբ զազատութիւն իւրեանց գրեթէ ինքնիշխան, պայմանաւ ևԹէ տալոյ Հռովմայեցւոց այսչափ ինչ նաւս։ Յայնմ հետէ գրեթէ ամենայն քաղաք Յունաց հպատակեցան ի բաւ միոջէ, և օգտակար պայմանօք կապեցին զիւրեանս նաւային նիզակակցաց[2]։

Այլ երկարեր պատերազմին՝ ի լերինս Ապենեանց. Տարեն-

1 Ա. ԺԶ։

2 Տիտ. Լիւ. Ը. ԻԶ. ԻԱ. ԻԹ. Իբ. ԺԱ։

(*) Բալէոպոլիս և Նէապոլիս, Հնաքաղաք և Նորաքաղաք լծարգմանին՝ ի մեր բարբառ։ Ծառ. Խոր.։

ոմն յաւելաւ ՚ի Սամոսատացիս՝ ոչք միայն ահաւոր պեռևևա էին՝ , և լուսանիւացիք յետս կացին ՚ի նիզակակցութենէ Հռոմէացւոց։ Զօրավարք երկու անուանիք ՚ի ժամանակին՝ Կ· Փաբիոս Հռուֆիանոս և Պապիրիոս Կուրսոր յաղին 429 մարին ՚ի Սամոսատ նեայ, և ՚ի նեղ արկին զքաղաքն՝ հատուցանել զոյժս պատերազմին, և դուլ առնել զինուց զամ մի։

Զայսու ժամանակաւ դէպք իմն անակնկալ, որ կերպարանափոխ արար զաշխարհս, յուցանէր ոտպիսի ինչ խարէ և ընդ հնարս պատրաստականս առն հանճարեղի և ընդ յաղթ գնացս խոհական ազնուապետութեան։ Ալեքսանդր Մեծն գերահռչակ պայծառացեալ, և արկեալ ընդ լծով Մակեդոնացւոց զՀզօրագոյն Թագաւորութիւնս Ասիոյ՝ մեռանէր ՚ի Բաբելոն։ Ազգեցութիւն նորա բազմապատիկ և յաղթող, որ զյունական քաղաքականութիւն եմոյծ յարևելս, եկաց միաց և յետ մահու նորա։ Բայց պետութիւնն ՚ի նմանէ ՚ի տակաւ ան կանգնեալ՝ ՚ի բազում բաժանէր (431), ուր ընդ Հակառակն ազնուապետութիւն Հռոմայեցւոց ՚ի դարս անցեալ յարատեւէր, Թէպէտ և յաղթ՝ այլ անընդհատ, ՚ի կարգ յօրինուածոց Թեանն՝ որ զամենայն ազգս կցորդեալ ՚ի միջակէտ հասարակաց, պատրաստէր իւր տակաւ տիրել նախ Իտալիոյ, և ապա բովանդակ տիեզերաց։

Ի վտարանջել մահուն Ալուվիտացւոց յաղին 431, խրախուսեցին Սամոսատացիք զէն առնուլ վերատին. և ՚ի յաջորդ ամի ՚ի պարտութիւն մատանեալ ընդրեցին խօսել ՚ի հաշտութիւն. այլ խրոխտ մերժումն Հռոմայեցւոց էած զնուաս յաղին 433 զՀռչակաւոր պարտութիւն ՚ի Կիրճան Կաուդիոնի(*)։ Վերահանձնութիւն զօրավարին Սամոսատացւոց Պոնտիոսի Հերենննիոսի, որ ընդհէր առաջնոց դաշանցն, ոչ շարժեաց զծերակոյտն։ Վիգհոնք չորք անցեալ էին ընդ լծով, այլ նա ոչինչ ՚ի ծանականս անդ նկատեր, բայց միս և պատճառս վրէժխնդրութեան։ Դաշինք Կաուդիոնի ոչ հաստատեցան. բազբազայք մնոտիք, Թէպէտ և

1 «Աղգս այս միայն կայր»· Տիո· Լիւ· Ը· ԻԷ։

(*) Կիրճք Ապենինեան լերանց։ Ծան· Թրդ։

իրաւացի համարեալք ապա ՚ի Կիկերոնէ [1], եաւն կերպարանս իրաւանց մերժելոյ զդաշնադրութիւնն։

Բայց Ծերակոյտն զամենայն դուն գործէր ՚ի կանգնուածն պարտութեանն, և ոչինչ յամեաց Պուպլիլիոս Փիլոն խորտակել զթշնամին ՚ի Սամնիտն և յԱպուլիա, և Պապիրիոս անցոյց ընդ լծով 7,000 Սամնիտացիս։ Ազապարեցին պարտեալք խընդրել զհաշտութիւն, այլ ընդվայր. զի զերկեամ մի ևեթ դադ զինուց ընտրեցաւ նոցա (436)։ Ա.ին ինչ լրացեալ ժամանդրութեանն, մտին նոքա յերկիրն Վոլսկեանց մինչև մերձ Անքսուր, և բանակեալ ՚ի Լաւտուլէս՝ հարին զգօրս Հռովմայեցոց աւ խուռն զինուորեալս ընդ զօրավարութեամբ Կ. Փաբիոսի (439)։ Վտարանջեաց Կապուա, և միաբանեցին յայտնապէս ընդ Սամնիտացիս՝ Նոլա, Նուկերիա, Ալբունկացիք և Վոլսկեանք որ ՚ի Լիրիս։ Ոգի ապստամբութեան տարածանէր մինչև ցՊրենեստ, և Հռովմ կայր ՚ի վտանգի։ Որպիսի ազգդ զօրութեան պէտք էին ծերակուտին աւ ՚ի հաստատուն ունելոյ ընդ իւր զազգս, որ գայթ ՚ի գայթի կային միշտ յուխտի հաւատարմութեան։ Բազդն ձեռնտու լինէր ջանից, և դաշնակիցք ուխտադրուժք ծանուցանս ըստ չափու ահարկութեանն պատուհասէին։ Յամին 440 [2] բանակ մի բազմաձեռն գՀետ պնդէր Սամնիտացւոց մերձ ՚ի Կաւդիոն, և պակաս արարեալ ՚ի նոցանէ երիս գիւրս, գինացորդս յԱպենենեանս արկանէին։ Ազգանք Հռովմայեցւոց եկին բանակեցան աւ Բովիանոն մայրաքաղաքաւ նոցա՝ ձմերել անդ։ Ի գալ միւսոյ տարւոյն (441) պարապ առեալ Հռովմայեցւոց ՚ի թշնամեաց՝ յօգուտ զդէպն վարկին ածել զբառամբ զամուր ամուր տեղիս, և հաստատել գաղթականս ՚ի Կամպանիա և յԱպուլիա շուրջ զՍամնիտիս։

Յաւուրս ժամանակացս այսոցիկ, Ապիոս Կլաւդիոս քարտուղար ըստ օրինի առնէր զՀանապարհն, որ յիւր անուն կոչեցեալ Ապիեան Հանապարհ [3]։

Ուշ կալան Հռովմայեցիք և ՚ի պահ զգուշութեան ծովա-

1 Կիկ. Յաղագս պատգամաւորաց. գ. 30։
2 Տիտ. Լիւ. թ. ԻԴ. ԻԸ։
3 Դիոդ. Սիկիլ. Ի. Ւշ։ — Տիտ. Լիւ. թ. ԻՔ։

*փանց և նաւատրիարքեան ծովեզերեայց. առաքեցին գաղթա-
կանս՝ ի կղզին Պոնտիա[1], որ է հանդէպ Անքիւրէի, և սկսան
գինել նաւատրամ ընդ հրամանաւ նաւապին երկպետաց[2],
և հնգետասան ամաց հետէ երկարաձգէր պատերազմն, ոչինչ
աւելի յաջողեալ Հռովմայ՝ բայց վանել զՍամխեացիս յերկիր
իւրեանց, և առնուլ զերկուսին գաւառս զՍպուլիս և զՎամ-
պանիս:*

2· Երրորդ պատերազմ Սամխեացւոց: Միաբանութիւն Սամխեացւոց, Ոմբրիացւոց և Հերնիկաց:

(443–449):

*Եշուկ մարտին գայրագինս հնչեր Յապուլիս, և վաղնջուքն
դաշնակցութիւն նորոգէր անդրէն: Հանապազօրեայ պատե-
րազմօք ընդ կեանս կրթեալք՝ ի գէն, և՝ ի հուշակ պարտու-
թեան Լատուլեայ յանդգնեալք, ժամ պատեհ համարեցան
ետուրացեալ Թափեայ զվաղեմի երկիր իւրեանց՝ ի հարաւա-
կողմն Վիմինեան անտառին, իրրախուսեալ ևս՝ ի գնացից միջեր-
կրեայցն Իտալիոյ խռնջելոց յանդուլ հինից ընդհանուցն Հռով-
մայեցւոց: Բանակք Հասարակապետութեան յամին 443 ցամին
449 սահեին զգէմ ունել այլ և այլ թշնամեաց միանգամայն:
Յետուրիս՝ փաբիոս Հռուլլիանոս ազատեր զՍուտրիոն զպա-
տուար ամրութեան Հռովմայ՝ ի հիւսիսոյ[3], անցանէր ընդ Վի-
մինեան անտառս, և յաղթութեամբքն՝ որ մերձ՝ ի Վատիմոն
լիճ (446)[4] և՝ ի պերուսիոն՝ բռնադատեր զքաղաքս ետրուրիոյ
առհասարակ՝ ի խնդիր հաշտութեան:*

*Յաւուրսն յայնոսիկ ասպատակէր բանակ մի զօրաց յերկիրն
Սամխեացւոց, և նաւատրամ Հռովմայեցւոց զինեալ՝ ի դաշնա-*

1 Դիոդ· Սիկիլ· ժթ· ճև:

2 Տիտ· Լիւ· թ· Ը:

3 Դիոդ· Սիկիլ· Ի· Լե:

4 Լիճն Վատիմոն կամ Պանեաչ էին երեք մղոնաչափ հեռի է՝ ի Տիբերեայ յա-
ջակողմն նորին ընդ գետս և ընդ լիճն Վիմինեան, ՚ի բարձրութենէն զորոց հա-
նեալ:

կցայց նոցա ծովեզերեայց դիմեր նախայարձակ՝ ի պատերազմ, և ձախողէը մերձ յԱվփատեռնեանն Նուկերիա (Նոչէրա քաղաք կամպանիոյ)։

Վառէր դարձեալ բոց մարտին յԱլպուէիա, ՚ի Սամնիան և յետրուրիա, ուր ծերունին Պապիրիոս Կուրսոր իշխանապետ կացեալ միւսանգամ՝ տանէր յաղթութիւն մեծ ՚ի Լանգուբա (445)։ Յաղին երկրորդէ ՚ի դիմել Փաբիոսի ՚ի Սամնիան, մինչդեռ միւս բռնաշխին Դեկիոս պահէր զետրուրիա, յանկարծակի խորհուրդ կալան Ումբրիացիք յարձակել առնուլ զՀռոմի։ Յետս կոչեցան բռնաշխք ՚ի պահ քաղաքին. եբեկ Փաբիոս զետրուրացիս ՚ի Մեսանիա (յելս սահմանաց ետրուրիոյ և Ումբրիոյ), և ՚ի յաջորդ աղին յԱվլիսիէ (447)։ Եւ զի ընդ բերեալն էին և եկուացիք և Հերնիացիք, քաղաքք նոցա լեալ կամակաւոր՝ զէն առին յայտնապէս ընդդէմ Հռոմայեցւոց (448)։ Խրախուսեցին դարձեալ Սամնիացիք, բայց արագ նուաճուն Հերնիացւոց ժամ ետ ծերակուտն ամիսոիել զզօրութիւն իւր։ Կրկին բանակք մնեալ ՚ի Սամնիան ընդ Ապուլիա և ընդ Կամպանիա, վերատին հաստատեցին զառաջին սահմանապուխս։ Բոլիանոն առաւ երկոտ անգամ, և ընդ ամիս հինգ մատնեցաւ երկիրն յապականութիւն։ Ընդ վայր փորձ փորձէր Տարենտոն յարուցանել սատան Հասարակապետութեան, սոխակելով զՆուվանիա-ցիս զէն առնուլ յօգնականութիւն Սամնիացւոց։ Յաջողութիւն զինուց Հռոմայ վախձան արար մարտի, և էած ՚ի դաշինս խաղաղութեան զաղգս հանօրէն հարաւային Իտալիոյ, սոխակեալ զնոսա յայնմ հետէ չանսալէլ զդերակայութիւն Հռոմայ։ Եկուացիք միայն մատնեցան ՚ի ցասումն նորին. զի ոչ մուտացաւ ծերակոյտն զմարտնչել նոցա յԱվլիսիէ ընդ թշնամիս իւր ընդդէմ Հռոմայ. և ՚ի զերծանելն ՚ի ծանուցից վտանգաց անտի աճ ՚ի վերայ ժողովրդեանն այնորիկ ահեղ պատուհաս, քաղաքս քառասուն և մի առեալ ՚ինոցանէ յաւուրս չիսուն և ՚ի հուր դառեալ։ Ելջանս այս վեցամեայ լուծին առնոյր նուաճութեամբ Հերնիացւոց և Եկուացւոց։

Զանց հինգ լուեցին պատերազմունք և պարտապ եղև Հռոմայեցւոց սահմանեալ զկարգ և զպայման նորոց հպատա-

կաց, հաստատելով գաղթականս և ձանապարհս կցորդուԹեան։

Ջնոյն պատուհաս կրեցին և Հերնիացիք, որպէս և Լատինք յամին 416, զրկեալք 'ի վաճառակցուԹենէ և յամուսնուԹենէ։ Կացուցան Ինաիկիա, 'ի Փրենեին և յայլ քաղաքս նըշանահեալս կուսակալք, և տուան նոցա Կերեան իրաւունք։ Քաղաքք հաստատիմք կացին յինքնիշխան ազատուԹեան իւրեանց, և պահեցին զմեծարանաց անունն դաշնակցուԹեան (448)[1]։ Եկուացիք կորուսին մնան մի յերկրէ իւրեանց, և ընկալան զկրաւունս քաղաքի առանց քուէից (450)։ Սամնիացիք քաջ խոնարհեալ, անագան ուրեմն ընկալան զվերստին հաստատուԹիւն առաջնոց դաշանց իւրեանց (450)[2]։ Դաշինք անհաւասարք կռեցան ընդ Մարսիկս, ընդ Պելիգնիացիս, ընդ Մարրուվիացիս, ընդ Փրենտանիացիս (450), ընդ Վեստս (452) և ընդ Պիկէնս (455)[3]։ Ընդ Տարենտացիս հաւասար կռեցան դաշինք, և յանձն էառ Հռոմ չԹողուլ նաւաց իւրոց անցանել անդր քան զՀրուանդեան Լակինեան ('ի հիւսիսոյ ծոցոյն Տարենտանի)[4]։

Ըստ այսմ օրինակի բաժանեալ աստ երկիր 'ի քաղաքացիս Հռոմայեցւոյ, և անտի ազատ քաղաքաց բազմանային յոյժ Թիւք։ Դարձեալ և յաւելուին ՀաստատակապետուԹեան դաշնակիցք. ունէր նա զկիրճս Ապենինեանց և տիրէր ծովէ 'ի ծով[5]։ Ընդ քեզդրեկից Լատինաց շուրջ պահէին զՀռոմ և բառնային զՀաղորդուԹիւն ընդ հարաւային և ընդ հիւսիսային Իտալիա։ 'ի Մարսիկս և յԵկուացիս էին Ալբա և Կարսէոլի, և յաղբեբանէն կոյս Լիրիսայ՝ Սորա, և յՈւմբրիա՝ Նարնիա։ Եւ ձանապարհք զինուորականք կցորդէին զգաղթականս զայսոսիկ ընդ մայրաքաղաքին։

1 Տիտ· Լիւ· Թ· ԽԳ։ — Կիկ· Ապենաբ· 'ի պալա· Բոլբէայ, ԺԳ։ — Փեստոս, 'ի բառն Կոասիալսուիկնա· էջ 233։

2 Տիտ· Լիւ· Թ· ԽԵ։ — Դիոդ· Սիկիլ· Ի· ձԱ։

3 Տիտ· Լիւ· Թ· ԽԵ· ժ· Գ· Ժ։

4 Ապպ· Պոպէրպաշնանս Սաճնիական, յօդ· Ա· էջ 56· տպ· Ըվայհայզէր։

5 Դիոդ· Սիկիլ· ԺԹ· Ժ։

Ը. Զորրորդ պատերազմ սամնիտական: Երկրորդ անգամ հիւպատութիւն Սամնիտացւոց, Ետրուրացւոց, Ումբրիացւոց և Կելտաց: (456–464):

Անմարթ էր խաղաղութեան տևել ընդ երկար. ընդ Հռոմի և ընդ Սամնիտացիս էր մեծամարտ սաստիկ: Ոչ ա՛ռաջ նոցա յետ արկածից իւրեանց, յաւին 456 ձեռն արկին դարձեալ՚ի փորձ զինուց[1]: Աւաքեաց Հռոմի յօդնականու՛թիւն Լուկանիացւոց ընդդէմ յեղակարծ հինից զկրկին բա՛նակս բռնչէին: Սամնիտացիք՚ի պարտութիւն մատնեալ յերե՛սաց Փաբիոսի՚ի Տիփեռնոն, և առաջի Դեկիոսի՚ի Մալեւենտոն, տեսանէին զաշխարհ իւրեանց ոտնակոխ՚ի թշնամեաց և յաւեր մատնեալ: Սակայն ոչինչ վհատեալ զօրաւար նոցա Գելլիոս եգնատիոս՝ խորհուրդ կալաւ՚ի վտանգ մեծ Հռոմայեցւոյ: Բաժանեաց զբանակն Սամնիտացւոց յերիս առաջս. զառաջինն՚ի պահ աշխարհին, զերկրորդն յատպատակ կամպանիոյ, և զերրորդն՝ որում ինքնին զօրավարէր՝ խաղացոյց յԵտրուրիա. և առաւարտուցեալ զայն օգնականութեամբ Ետրուրացւոց, Կելտաց և Ումբրիացւոց, արար բանակ հզօր և բազմաձեռն[2]: Սպառնայր մըրիկ մատրին ամենուստ. և մինչդեռ զօրավարք Հռոմայեցւոց պատրաստեալ էին կէսք՚ի Սամնիտն, այլք՚ի Կամպանիա, հաս նամանեկան յԱպիոսէ՝ որ զօրավարէին յԵտրուրիա, դաշնակցութիւն ահեղ կազմեալ լուեալք՚ի հիւսիսային ազգաց, և ժողովեալ նոցա զամենայն զօրութիւնս իւրեանց յՈւմբրիա, գրոհ տալ անտի՚ի Հռոմէ:

Մեծ էր ահ երկիւղին, այլ անվհատելի ժրութիւն հասարէր վտանգին: Զամենայն այր զօրատար և զազատապիրս իսկ զինուորեցին հինն ըմբռ մարդիկ վարեալ՚ի զէն: Ի մեծի վտանգին (458) միւսանգամ Փաբիոս և Դեկիոս ամբարձան՚ի զբազմն իշխանութիւն, և տարան յաղթութիւն մեծ առ պարսպօք Սենտինոնի ընդ երկար պատերազմեալ: Ի հակառամարտի

1 Տիտ. Լիւ. ժ. ԺԱ, և որ ձեռն գայ:
2 Տիտ. Լիւ. ժ. ԻԲ, և որ ձեռն գայ: — Պոլիբ. Բ. ԺԲ: — Փլոր. Ա. ԺԷ:

անդ Դեկիոս եւ զանձն ՚ի կշիռ. ըստ օրինակի հօր իւրոյ։ Ի քակտել դաշնակցութեանն՝ եհար Փաբիոս զմիւս ևս բանակ Թշնաւեաց եւ ել ՚ի Պերուսիոնէ, և եկն յաղթանակել ՚ի Հռոմ։ Նուաճեցաւ Ետրուրիա (460), և եղև քառասնամեայ դուլ զինուց [1]։

Սամնիացիք տակաւին դեռ ևս յամառեալ ՚ի պատերազմ մերթ յաղթեալ և մերթ պարտեալ։ Յամին 461 ուխտ եդեալ յաղթել կամ մեռանել, երեք բիւրք ՚ի նոցանէ ծածկեցին դիակամբ իւրեանց զՀակատուն տեղի զՎկուլոնիա։ Չկնի անցոյ հինչ մեծամուծն Պոնտիոս, դիւցազնն Կաւդիոնեան կրճից, երևեր միւսանգամ յետ քան և հինն անցոյ՝ ՚ի գլուխ քաղաքացւոց իւրոց։ Սուաջի նորա ՚ի պարտութիւն մատնեալ կրասերն Փաբիոս, հուպ ընդ հուպ կանգներ զկորանն օգնականութեամբ հօրն [2]։ Եւ ապա յամին 464 բանակք Հռոմայեցւոց երկոքին սկսան ՚ի Սամնիոն պատերազմ անհնարին, որով այս չորրորդ անգամ հարկեցուցին զՍամնիացիս ՚ի նորոգումն առաջնոց դաշանցն, և տալոյ ՚ի բաց մատն հինչ յերկրէ իւրեանց։ Ցայնու ժամանակաւ հրդեհ ապստամբութեան լեալ ՚ի Սաբինացիս, չնջոյց զայն անդէն Կուրիոս Դենտատոս. և միջերկրայք Խոալիոյ նուաճեցան ընդ ձեռամբ Հռոմայեցւոց։

Խաղաղութիւն ընդ Սամնիացիս տեւեաց զամս հինգ (464–469)։ Հռոմ ընդարձակեաց զսահմանս իւր, և ամրացոյց զսահմանս ազգաց՝ որ ընդ պաշտպանութեամբ իւրով էին և յաւել իւր ամրոցս զօրանիստս։

Իրաւունք քաղաքի առանց քուէից ընդհեցաւ Սաբինաց, և կացին ստիկանք ՚ի քաղաքս ուրեք Վոլտուռնեան հովտին (՚ի Վէնաւիրոն և յԱվլիփէ)[3]։ Ի պահ հարուածոյն Խոալիոյ՝ առաքեցաւ ՚ի Վէնուսս գաղթական երկուց բիւրուց Լատինաց [4], որք իշխէին և ՚ի վերայ Սամնիոնի, Ապուլիոյ և Լուկանիոյ։ Դաշնադրութեամբն ընդ քաղաքս Յունաց՝ գերագահութիւն

1 Վոլսինիէս, Պերուսիոն և Արրետիոն. (Տիտ. Լիւ. ժ. Ա)։
2 Որոզիոս, գ. ԻԲ։ — Զոնարաս, է. 2։ — Եւտրոպիոս, Բ. Ե։
3 Վէլլ. Պաաերկ. Ա. ԺԵ։ — Փեստոս, ՚ի բառն Կասաիկլոնիենսէս. էջ 233։
4 Դիոն. Աքիկ. Ծուղիոփուղ, էջ 2325, տպ. Էվայկհայզէր։

Հռոմէից ընդարձակէը՝ ի հարաւակողմն Յամաքակղզւոյն, այլ՝ ի հիւսիսոյ էւ ևս կարէը զՆորուբացիս ունել ընդ դաշնաւորս, զի դուլ ևեթ զինուց արարեալ էր ընդ նոսա: ՅՈւմբրիա Սարմատիա գաղթական կային ինքնիշխան, և առեևտրի ծովեզերեայք որ ընդ Ռուբիկն և ընդ Եսիս՝ էին ընդ ձեռամբ Սենոնաց. յելս սահմանաց նոցա՝ ի հարաւոյ բնակեաց գաղթական Հռոմէացեցի Գալլիական Սենա (Սինիկալիա). իսկ ծովեզերեայց Պիկենտի՝ ի պահ կայր գաղթականն կոչեցեալ Նոր Սիրոցին, և առևտրոցն Հատրիոյ լատինական (465)[1]:

Ը. Երրորդ միաբանութիւն Լորդուրացւոց, Կերտուց, Լուկանիացւոց և Տարկիտաց:

(469–474):

Զօրութիւն Հռոմէից երթայր և առնէր յոյժ. Սահմանքն, առաջնորդք ապստամբութեան, ոչ ևս կարէին միաբանել ընդ իւրեանս և ոչ զոք, և ազգ ի միոյն չէշխէր ձայնատուր լինել Հասարակապետութեան. սակայն Լուկանիացիք, որ դեռևէին միշտ, ձայն եառն յայնժամ աշխարհօրէն ապստամբութեան:

Սկիաւանք Լուկանիացւոց և Բրուտտիացւոց՝ ի Թուրիոն պատձառս եառն վերստին միաբանութեան Տարենտացւոց, Սաննիացւոց, Եապուրացւոց, և Կելտաց իսկ, տակաւ՝ ի միասին գումարելոց: Հրդեհ մարտին ծաւալեցաւ անդէն զհիւսիսս, և Եապուրիա եղև ասպարէզ զինուց: Բանակ հռոմէացեցի զինեալ ձեռամբ Մեմմեալ յօդնութիւն Արրեատինի, բեկաւ յերեսաց Եապուրացւոց՝ ընդ որս էին վարձկանք Կելտք: Ի սպանանել Սենոնաց՝ յորոց էին և սոքա՝ զղեսպանս Հռոմէից, եկեալս՝ ի պահանջել զհատոյց զինուց դրժելոյ նոցա դաշանցն որ ընդ Հասարակապետութեան, խաղացոյց Ծերակոյտն ընդդէմ նոցա զլեգէոնս, որոց հարեալ զնոսա վանեցին անդր քան զՌուբիկոն: Ընդ արկածս Սենոնաց համազգեաց զբարեալ Բոյացիք՝ իջին վաղվաղակի Յումբրիա, և զկաց ճնոց Եապուրացւոց ժողովեալ՝ պատրաստէին զալ միւսանգամ յաւարի առնուլ զՀռոմ: այլ

1 Պոլիբ. Բ. ԺԹ. ԽԴ: — Տիտ. Լիւ. Հատած, ԺԱ:

ապրեալս ցու նոցա, և կրկին յաղթութիւնք գՀեռ միաբանց մերձ ի Վատիմոն լիճ (471) և ի Պոպուլոնիա (472)՝ եառն զօրութիւն ծերակուտին կուբլընդ նոսա դաշինս, և ընկերել զնոսա յառաջին տահմանս իւրեանց։ Հանապազորդ էր պատերազմին ընդ Եպրուրացիս զերկեամ մի, և նուաձութեամբ նոցին ի գլուխ ելանէր աշխարհակալութիւն հիւսիսայինն Իտալիոյ։

Թ. Պիտոս Յիտալիա։ Ներածումն Տարենտացւոց։

(474–488)։

Պարտապ առեալ Հռովմայեցւոց յերեսաց պատերազմանցն հիւսիսոյ՝ դարձուցին զզօրութիւն իւրեանց ի հարաւակողմն Իտալիոյ, և ազգ առաջին պատերազմ ընդդէմ Տարենտացւոց՝ որոց ի նահատակս Հռովմայեցւոց յարձակեալ էր։ Ի պաշարել Եմիլիոսն բդեշխն զքաղաքն նոցա, առաջին խումբք զօրացն Պիւռոսի՝ հրաւիրեալք ի Տարենտացւոց՝ եկին ի ցամաք (474)։

Թուական նոր կազմեն դՀալբս այս բազդին Հռովմայ, որ զայս առաջին նուաճ ի վեղ գայր ընդ Ցունաստանի։ Մինչև ցայնժամ լեգէոնաց նորա չէր եկեալ ի մարտ ընդ զօրս իսկապէս կանոնաւորս, այլ կրթեալ ևեթ յանդուլ պատերազմունս ի լերինս Սամնիտի և Ետրուրիոյ. յայսմ հետէ հասանէ նոցա ելանել ի Հաւատ ընդ հինաւուրց զօրականի հրահանգելոյ յարուեստ զինուց, և ընդ պատերազմատորձ և հմուտ զօրավարի։

Սքեսային Եպիրոսի յետ երկից կորուսանելոյ զիւր թագաւորութիւն և վերատին ընդ ձեռամբ ածելոյ, նուաճեալ և Թողեալ զՄակեդոնիա, երազէր զաշխարհակալութեան արևմտից։ Ի լուր դալստեան նորա 25,000 զօրօք և քան փղօք [1], զօրաժողով եղեն Հռովմայեցիք զինուորեալ զամենայն քաղաքացիս կարողս ի զէն, զզաւակատործս իսկ. և ի հանդէս մեծաստատ զօրութեան՝ մերժեցին զօդնականութիւն կարքե-

1 Տիտ. Լիւ. Հպպածթ, ժԳ–ԺԴ։ — Պլուտ. ի Պիւռոս, ԺԵ, և որ վինի։ — Փլոր. Ա. ԺՀ։ — Եւտրոպ. Բ. Զ–Է։ — Զոնար. Ը. Զ։

*դոնական նաւատորմին, խրոխտ պատասխանեալ թէ «Հասա-
րակապետութիւնս չարկանէ ձեռն ի մարտ, որում չկայ բաւա-
կան իւրով զօրութեամբ»[1]։ Եւ միևնոյնժամ հինգ բուռ զօրօք
խաղայր բռնաշէն Լեւինոս ընդդէմ Պիւռոսի խափանել զնա
ի գումարելոյ ընդ Սամնիացիս, միւս այլ բանակ մնանէր ի
Լուկանիա. Տիբերիոս Կորունկանիոս բռնաշէն սանձահարէր
զեատուրիա, որ խլըրտէրն անդրկէն. և գունդ պահեստի զգու-
շանայր մայրաքաղաքին։

Լեւինոս պատահեաց ալքային եպիրոսի մերձ ի Հերա-
կլէա՝ գաղթական Տարենտոնի (474)։ Եօթնևից ընդհարան
լեգէոնք ընդ փաղանգին, և իբրև մերձ էին ի բեւեռանել զայն,
փղակոյտն անծանօթ Հռոմայեցւոց ի վերայ հասեալ՝ մատոյց
թշնամւոյն զյաղթութիւն։ Միով ևեթ հակատամարտիւ տի-
րեաց Պիւռոս հարաւային Իտալիոյ առհասարակ, ուր քա-
ղաք ցնծայր ընկալան զնա մեծաւ ցնծութեամբ։

Բայց թէպէտ և յաղթող, զիրաւ էառ զծանր տուժից. ծա-
նեաւ զմեղկութիւն ցնծայից Իտալիոյ և զժրութիւն արիական
ազգին։ Առաջարկեաց ծերակուտին հաշտութիւն, և խնդրեր
զաջակցութիւն Սամնիացւոց, զԼուկանիացւոց և մանաւանդ
զքաղաքացն ցնծայց։ Ծերունին Ապպիոս Կլաւդիոս եցոյց ան-
հնարին զնաղաղութիւն՝ ցորչափ Պիւռոս կայր Իտալիա. յաղ-
թեաց խորհուրդ նորա, և մերժեցաւ առաջարկութիւն հաշ-
տութեանն։ Եդ ի մոխ յայնժամ Թագաւորն խաղալ ի վերայ
Հռոմայ ընդ Կամպանիա, ուր զօրք նորա առին աւար բա-
զում։

Լեւինոս խրատեալ պարտութեամբն, դէտ ևեթ կայր հի-
նից Թշնամւոյն, և հասեալ ի պահ Կապուայ, գնայր հանդոյց
ի հանդուպ զՀեռս Պիւռոսի, և խնդրեր պարապ։ Թագաւորն
խաղայր ընդ Չանապարհն Լատինեան, և հասանէր անխափան
ցՊրենեստ[2], այլ շուրջ պատեալ յերից բանակաց Հռոմայե-
ցւոց՝ ստիպեր զնա դարձ առնել, մեկնել ի Լուկանիա։ Ի գալ

1 Վալեր. Մաքս. Գ. Է. 10։

2 Ապպիանոս (Սամնիական պատերազմունք. ժ. Գ. էջ 65) յաւաքեալ ասէ Պիւռոս
սի մինչև Անագնիա։

ամին երկարզիւ յուսացեալ գտանել օգնականութիւն յազգաց արեւելից, յարձակեցաւ Յ.պուլիա. այլ Հաւատարմութիւն միջերկրացեցն Իտալիոյ դաշնակցաց՝ եկաց անսասան, Ջօրացեալ Յ.ոկուլեն (Ազգոլի տէ Սադրիանոյ) (475), բայց առանց կասարեալ յաղթութեան, և զնոյն դիմակալութիւն ամենայն ուրեք գտեալ, յօգուտ էարկ զպատեհ մեկնել Իտալիոյ, և դիմել յաշխարհակալութիւն Սիկիլիոյ (476–478)։ Հաստատէր յայնժամ Ծերակոյտն զհերութիւն իւր՝ի հարստահողին Իտալիոյ, և նուաճէր զքաղաքանին Յունաց, ընդ որս և զՎրկրիս և զՀերակլէա[1]։ Ընդ բռնութեամբ զինուց լեգէոնաց վերստին անկեալ Սամնիոն, Լուկանիա և Բրուտտիոն, հարկեցան Թողուլ զմասն ինչ երկրի իւրեանց, և նորոգել զդաշինսն. և՝ի ծայրէ ծերեայս Տարենտոն միայն և Հռեգիոն կացին մնացին ազատք։ Դիմակալէին դեռ ևս Սամնիտացիք. և բռնակն Հռոմէացիք զակիւռ ածեալ նստէր յերկրի նոցա յամին 478 և 479։ Մինչդեռ այս լրք էին՝ երևէր անդրէն Պիւռոս Իտալիա յուսացեալ ժամանել յօգնութիւն Սամնիտին. բայց Հարեալ՝ի Բենեւենտ՝ի Կուրիոսէ Դենտատոսէ, դարձ առնէր՝ի հայրենիս։ Ա.րշաւանք Պիւռոսի, որ ազգակից էր Ա.լեքսանդրի Մեծի և մի՝ի յաջորդաց նորա, Թուէր իմն վերջին ձիգն յունական քաղաքականութեան, որ զայր անշնչանալ յոտս մեծութեան Հռոմէականի նորածին։

Պատերազմին ընդ ազգային Եպիրոսի կրկնակի արգասիք եղեն կարևորք. նախ այն իսկ՝ զի՝ի կատարելութիւն եկն արուեստ մարտի առ Հռոմայեցիս. և երկրորդ անգամ՝ զի եմուտ յազգս պատերազմողս պայման քաղաքականացեալ ժողովրդոց՝ մեծարելոյ զհակառակորդս, խնայելոյ՝ի պարտեալս, և ցասման և ատելութեան մի՛ ևս տևելոյ յետ կռուոյն։ Թագաւորն Եպիրոսի մեծաւ ազնուականութեամբ վարեցաւ ընդ գերին Հռոմայեցւոց։ Կինեաս առաքեալ հրեշտակութեամբ՝ի Հռոմ առ ծերակոյտն, և Փաբրիկիոս առ Պիւռոս՝ երկոքին ևս բազում մեծարանօք ոսոխացն դարձ առնէին առ իւրեանս։

1 կիմ· Աթեն· ՚ի պոլ· Բալբեայ, իբ։

Ի յաջորդ ամին կալան Հռոմէացիք զՏարենտոն (482)[1], խաղաղութիւն արարին ՚ի սպառ ընդ Սամնիացիս և տիրեցին Հռեգիոնի (483–485)։ Ի պատերազմէ անտի Գաւրոս լերին եօթանասուն և երկու ամք անցեալ էին, և բազում ազգք յաջորդեալ միմեանց առանց տեսանելոյ զվախճան երկար և արուհնահեղ կռուոյն։ Սամնիացիք զնացին զոգեաս լեալ, ոչ ի նպատ իշխան ազատութեան դեռ ևս կանգաղեալ կայր ՚ի լերինս նոցա. որպէս զի յետ երկուց դարուց և կիսոյ՝՚ի յառնել պատերազմի դաշնակցաց, վէճ հաւասարութեան իրաւանց անդ դարձեալ զտանէր իւր ամուր ապաստանի։ Ա.յսպէս անուն Սամնիացւոց էկաց միշտ առեալ ազնուապետութեան և Սիլլայ, քայց սիրելի Կեսարու։

Եւ այլք ՚ի ժողովրդոց վաղ ընդ փոյթ մտին ընդ օրինօք յաղթականին։ Բնակիչք Պիկենտի ՚ի պատուհաս ապստամբութեանն կորուսին զի մասն երկրի իւրեանց, և ոչ սակաւք ՚ի նոցանէ կալան բնակութիւն ՚ի հարաւակողմն Կամպանիոյ մերձ ՚ի ծոցն Սալեռնեան (Պիկենեանք) (486)։ Յամին 487 նուաճումն Սալենտացւոց պատրաստեաց Հռոմէացւոց տիրել՚ի Բրունդուսիոն՝ ՚ի կարևորագոյն նաւահանգիստ Ադրիականին[2]։ Յամին երկրորդի նուաճեցան և Սարմնացիք[3]. Վոլսինի՝ քաղաք Ետրուրիոյ՝ յաւելաւ դարձեալ ՚ի Թիւս գաղթականաց Հռոմայ. և Սաբինացիք ընկալան զիրաւունս քուէից։

Իտալիա այնուհետև լեալ Հռոմէացւոյ՝ ձգէր ՚ի Ռուբիկոնէ մինչև ՚ի կիրճն Մեսսինայ։

Ժ. Նախիշխանութիւն Հռոմայ։

Ի ժամանակին յայնմիկ հաստատութիւն գաղթականաց ապահովէր զաշխարհակալութիւն գաւառաց նուաճելոց։ Եւ էր Հռոմ շուրջ պատեալ յամուր ամուր բերդօրէից, որ ունէին

1 Տիտ. Լիւ. Հպպածք, ԻԴ։ — Որոզ. Դ. Գ։
2 Փլորոս. Ա. Ի։
3 Տիտ. Լիւ. Հպպածք, ԻԵ։ — Կոպիպուլէան աբյանագիրք, առ 487։

զամենայն անցս Լատինն է, և փակէին զՀանապարհս Կամպանիոյ, Սամնիոյ, Ետրուրիոյ և Կելտաց[1]:

1 ԳԱՂԹԱԿԱՆՔ ՀՈՌՈՎՄԱՅԵՑԻՔ· — Երրորդ չորեան· 416–488:

ԱՆՏՈՆ (416) *ծովեզերեայ գաղթական, ի Վոլսկեանս· Դորբէ տ'Անցոյ կամ Բորգոյ տ'Անցոյ:*

ԱՆՔՈՒՈՒՐ (425) *ծովեզերեայ գաղթական, յԱրուենկացիս (Ափպեան Հանապարհ)· Դերբրաչինա:*

ՄԻՆՏՈՒՈՒՆԷ (459) *ծովեզերեայ գաղթական, յԱրուենկացիս (Ափպեան Հանապարհ)· Աւերակ մօտ ի Դրայեդդա:*

ՍԻՆՈՒԵՍՍԱ (459) *ծովեզերեայ գաղթական, ի Կամպանիա (Ափպեան Հանապարհ)· մօտ ի Ռոքքա Մոնտրաիոնէ:*

ՍՆՆԱ ԳԱԼԼԻԱՑԱՆ (465) *ծովեզերեայ գաղթական, յՈւմբրիա, ի Գալլիացւոց ափոտակի (Վալերեան Հանապարհ)· Սինիգալիա:*

ԿԱՍՏՐՈՒՄ ՆՈՎՈՒՄ (Նոր Ամրոց) (465) *ծովեզերեայ գաղթական, ի Պիկենոն (Վալերեան Հանապարհ)· Ճիուելլա Նուովա:*

ԳԱՂԹԱԿԱՆՔ ԼԱՏԻՆՔ·

ԿԱԼԷՍ (420) *ի Կամպանիա (Ափպեան Հանապարհ)· Գալլի:*

ՓՐԵԿԵԼԼԷ (426) *ի Վոլսկս· Հովիտ Լիրիսի· Ձեբրանոյ? քանդեալ յամի 629:*

ԼՈՒԿԵՐԻԱ (440) *յԱպուլիա· Լուչերա:*

ՍՈՒԵՍՍԱ ԱՒՐՈՒՆԿԱ (441) *յԱրուենկացիս (Ափպեան Հանապարհ)· Սեսսա:*

ՊՈՆՏԻԷ (441), *կղզի հանդէպ Կիրկէայ· Բոնցա:*

ՍԱՏԻԿՈՒԼԱ (441), *սահման Սամնիոյ և Կամպանիոյ· Պրեսոսիա, մերձ ի Սանգա Ակագա ոէի կոդի· վաղ իսկ բարձեալ ի միջոյ:*

ԻՆԴԵՌԱՄՆԱ (Լիրինաս) (442) *ի Վոլսկս· Դերրամէ· անբնակ:*

ՍՈՐԱ (451)· *սահման Վոլսկեանց և Սամնիացւոց· Սորա· վաղ իսկ գաղթեալ:*

ԱԼԲԱ ՓՈՒԿԵՆՑԻՈՑ (451) *ի Մարսիկս (Վալերեան Հանապարհ)· Ալպա· պիւղ մերձ յԱՒՃԾանոյ:*

ՆԱՌՆԻԱ (455) *յՈւմբրիա (Փլամինեան Հանապարհ)· Նարնի· ամրացուցեալ յամին 555:*

ԿԱՐՍԷՈԼԻ (456) *յԵիւուացիս (Վալերեան Հանապարհ)· Ձերիդա, Օսդերիա ոէլ Գաւալիէրէ, մերձ ի Գարսոլի:*

ՎԵՆՈՒՍԻԱ (463), *սահմանագլուխ ընդ մէջ Լուկանիոյ և Ապուլիոյ (Ափպեան Հանապարհ)· Վէնոզա· ամրացուցեալ յամին 554:*

ԱԴՐԻԱ (*կամ Հատրիա*) (465) *ի Պիկենոն (Վալերեան և Սալերեան Հանապարհ)· Ատրի:*

ԿՈՍԱ (481) *յԵտրուրիա կամ ի Կամպանիա· Անաէտոնիա? մերձ յՕրպիդելլոյ· ամրացուցեալ յամին 557:*

ՊԵՍՏՈՆ (481) *ի Լուկանիա· Բեսդոյ· աւերակք:*

ԱՐԻՄԻՆՈՆ (486) *յՈւմբրիա, ի Գալլիական Ափոտակին (Փլամինեան Հանապարհ)· Ռիմինի:*

ԲԵՆԵՒԵՆՏՈՆ (486) *ի Սամնիոն (Ափպեան Հանապարհ)· Պէնեվէնդոյ:*

*Ի կատարած կռուոյն՝ որում զրաւ եղև աշխարհակալու-
Թեամբ Խոսալոյ, քան և եօթն ևեթ ցեղապետութիւնք էին
քաղաքացւոց Հռոմայ. և հաստատութիւն այլոց ևս ուժից
(յորոց երկու վերջինք՝ ի 513) յաւել զթիւն յերեսուն և՝ ի
հինգ. քան և ի՝ ոտանալ կացին միասին ընդ ժողովրդեան
Հռոմայ, և ջրեքտասանք յաւելան՝ ի նոր քաղաքացիս. ջոր
յերեսրիացիս, և երկու երկու՝ ի Լատինս, ի Վոլսկեանս, Ա-
սոնեանս, յԵկուացիս և՝ ի Սաբինացիս[1]: Ա՛լ ոչ այս ամենեքեան
յոյժ՝ ի բացեայ էին՝ ի մայրաքաղաքին, և բազում այն էր, զի
չկարէին նոր քաղաքացիք գտանել՝ ի ժողովս, և առաւելութիւն
Թուոց և ազդեցութիւն պահէր բնակչաց Հռոմայ: Ցետ 513
ամին ոչ ևս յաւելան ցեղք. այլ յառաջինն յաւելուին քաղա-
քացիք, և անդամք միոյ՝ ի ցեղից գտանէին սիրեալք յայլեայլ
գաւառս, և Թէև նոցա ամէն յոյժ յաւելուածոյքն, և ևս քան
զևս հետամտութեամբ երկրորդական կարգի ազատ քաղաքաց
յառաջին կարգ ինքնիշխան ազատութեան ամբառնալոյ: Ա՛յս-
պէս՝ ի մէջ կոյս վեցերորդի դարուն քաղաք Եկուացւոց, Հեր-
նիացւոց, Վոլսկեանց, և ոմանք ևս՝ ի Լատինացւոյ՝ ի միասին
ընդ քաղաքս Սաբինացւոց ընդ Վենափրոն և ընդ Ա՛լբիկ, ըն-
կալան զկրաւունս քաղաքացւոց հանդերձ քուէիւք:*

*Վասն որոյ Հռոմ՝ ի վերջ կոյս հինգերորդ դարու իշխէր
՝ի վերայ ազգաց բուն Իտալիոյ, Թէպէտ և այլ և այլ օրինա-
կաւ: Իտալականն պետութիւն, եթէ մարթ էիցէ այսպէս զայն
անուանել, կազմէր յերից դասուց. յիշխեցողաց՝ որ էին քա-
ղաքացիք, ՝ի պաշտպանելոց՝ որ էին զաշնակից, և՝ ի հպատա-
կաց: Դաշնակցաց և հպատակաց պարտ էր այսչափ ինչ զօրս
տալ Հռոմայեցւոց. իսկ ծովեզերեայց յունական քաղաքաց՝
պատրաստել տորմիղս նաւաց հանդերձ նաւաստեօք: Քաղաք
իսկ ազատք՝ ի յանձնանձանս առանձին իրաց, հնազանդէին պաշ-*

1 Ի Կամպանիացիս՝ Ստելլատինս. յԵտրուրացիս՝ Տրոմենտինս, Սարտատինս, Առնեատիք, ՝ի 367 (Տիտ. Լիւ. Զ. Ե.): Ի Լատինս՝ Մեկիս և Սկապտիս, ՝ի 422 (Տիտ. Լիւ. Ը. ԺԷ.): Ի Վոլսկեանս Պոմպտինս և Փուբլիկիս, յ396 (Տիտ. Լիւ. Է. ԺԵ.): ՑԱսոնեանս՝ Ոսիկինտիս և Փալեռնս, ՝ի 436 (Տիտ. Լիւ. Թ. Ի.): ՑԵկուացիս՝ Անեատիք և Տերենտինս, ՝ի 455 (Տիտ. Լիւ. Ժ. Թ.): Ի Սաբինացիս՝ Վերինս և Կուրիոնս, ՝ի 513 (Տիտ. Լիւ. Հ<unclear>, ԺԹ.):

*ածնակալաց կարգելոց՝ ի մայրաքաղաքէն՝ ի յանձնանձանս զի-
նուորական իրաց*[1]։

*Իրաւունք էին բդեշխից զկնուտրեցոյ՝ ի մերձաւոր գաւա-
ռաց՝ ուր տապարէջն էր պատերազմի, զամենեսեան՝ որ կարողք
էին՝ ի զէն։ Ջհանդերձանս և զուռճիկ զօրացն այնոցիկ՝ նոցին
քաղաքաց պարտ էր հայթայթել. Հռոմ՝ ի ժամանակի հե-
պատերազմին զպէտս նոցա ընծայ։ Հետևակազօրն նիզակակից՝
հաւասար էր սովորաբար հռոմէականին. իսկ հեծելազօրն՝
երկպատիկ կամ եռապատիկ։*

*Ի վարձ օգնականութեանն իրաւունք էին նիզակակցաց՝ ի
վերայ մասին աշխարհակալութեան. և փոխանակ տարեւորաց
առ՝ ի նոցանէ հասից՝ ի վերայ կալուածոց տէրութեան։ Կա-
լուածքս այսոքիկ բազումք յոյժ՝ ի ձամբաք կղզւոյ*[2]*, աղբիւրք
էին հասից՝ որ՝ ի գանձ աշխարհին ժողովէր՝ ի դաշնակցաց, որ
ազատ էին յայլոց հարկաց։ Ի կատարումն հրամանաց ծերա-
կուտին, ՝ի հանդերձել զտորմիղս, և՝ ի ժողովել զհաս երկրին՝
կարգէցան գանձապետք չորք։*

*Ինքեան միայնոյ պահէր Հռոմ զյանձանձանս արտաքին
գործոց, և զտեսչութիւնն բաղդի Հասարակապետութեան։ Ո՛չ
երբէք հաղորդք էին դաշնակիցք վճռոց առնուն, և քաղաք ի-
րաքանչիւր չէանէր ըստ անձուկ սահմանն հասարակաց իւրոց
տեսչութեան։ Ազգն իտալական՝ ի ձեռն քաղաքական վերա-
տեսչութեանս կազմէր տակաւ սահմանադիր օրինաց, որ ա-
ռանց այսորիկ պատակտեալ ընտանի պատերազմաց, որ միա-
սակարագոյնքն են և աշխարհաւեր քան զարտաքին պատե-
րազմունս, ոչ ևս լինէր բաւական զդէմ ունել երկոցունց պա-
տերազմացն տագնապի Կելտաց և Կարքեդոնացւոց։*

Տարազ վարչութեան որով Հռոմ յանձանձէրն զԻտալիա,

[1] Ամի ամի՝ ի սկիզբն իշխանութեան բդեշխից՝ առեներակալք կամ՝ նուիրակք քաղաքաց երթային՝ ի Հռոմ, և բդեաշխք սահմանէին զթիւ զօրաց՝ զոր միւսք միւսոյ քաղաքաց պարտ էր հանդերձել ըստ ազգահամարոյ։ Ջազգահամարս զայսոսիկ առնէին տեղական առենակալք և առաքէին առ ծերակոյտն՝ ի հինգ ամն միանգամ, բաց՝ ի լատին գաղթականաց՝ որոյ թուի անփոփոխ կալեալ զթիւ նախնի գաղթականաց։

[2] Ցերկրին Սաւնիացւոց մանաւանդ յաձախէին կալուածքս այսոքիկ։

լաւագոյն քան զամենայն կարգս էր, այլ առժամանակեայ վարչութեամբ։ Պարտ էր ապաքէն լինաւմ ունել կատարեալ հաստատութեան ամենայն քաղաքաց ձամաք կղզւոյն. և այս էր յայտնապէս նպատակ իմաստուն քաղաքագիտութեան Կամիլեանց և Փաբիոսեանց։ Ի նկատել զի գաղթականք քաղաքացիք առաջի առնէին զՀռոմ պատկեր Հռովմայ, և գաղթակատնայն լաւինաց էին սահմանադրութիւնք և օրէնք նոցին պատկանաւորք, և զի դարձեալ բազմութիւն քաղաքացւոց Հռոմայ և դաշնակցաց Լաւինացւոց սփռեալ էր յայլևայլ կողմանս ձամաքակղզւոյն՝ ընդ երկիր լայնածաւալ կալեալ պատերազմօք, մարթ է՛ւ միտ առնուլ թէ զինարդ արագ արագ ծաւալէին սովորութիւնք Հռովմայեցւոց և բարբառ լաւինական։

Եթէ՛ ի վերջին դարս ոչ գիտաց Հռոմ՛ի դէպ վարել զպատեհ ժամանակն, յորժամ հաւասարութիւնս այս վաղ իսկ ներգործեալ՛ի միտս՝ մարթ էր յարդիւնս գալ, այս՛ի վերջանալոյ նորա էր յիմաստից արդարութեան՝ որ առաջնորդէին ծերակուտին յառաջին դարս Հասարակապետութեան, և մանաւանդ՛ի զեղծմանէ աւազորերոյն՝ որ ախորժէին՛ի պայման հաւասարութեան ունել զդաշնակիցս։ Իրաւունք քաղաքացւոց տարածեալ առ ամենայն Իտալացիս, ՛ի կարևոր ժամանակի կարէր տալ Հասարակապետութեան զօրութիւնս նոր, այլ յամառ մերժումն՝ պատճառս եղ ապստամբութեան, զոր ակամն Գրակքոսեանք, յառաջ տարաւ Մարիոս, խափանեաց առ ժամանակ մի Սիլլա, և յաւէրակ եաձ կեսար։

Ամերիայի Պետական Գրադարան

ԺԱ. Զօրութիւն օրինադրութեանց։

Ի ժամանակիս, զորմէ խօսիմք, ՛ի ծագ պայծառութեան էր Հասարակապետութիւնս։

Օրինադրութիւնք յարդարէին արս անուանիս, և տարեւոր ընտրութիւնք ամբառնային յիշխանութիւն զարժանաւորսդոյնս, և յետ սուղ ժամանակի դարձեալ կոչէին զնոսա՛ի նոյն։ Ասպարէզ նահատակութեան զօրավարաց ոչ ձգէր անդր քան զբնիկ սահմանս ձամաքակղզւոյն, և փառասիրութիւնս նոցա՛ի չափս կալեալ դատաստանաւ Հասարակաց, չանցանէր

զօրինաւոր նպատակաւն միութեան Խաղխոյ ընդ միով իշխանութեամբ։ Աւազորեարն Թուէր բերել յանձին ընդ քաջութեան նախնեաց և զառաքինութիւնս նոցին. չքաւորութիւն և անտոհմութիւն ոչ արգելուին զվաստակս արժանիս հասանել յաւագութիւնս։ Կուրխոսէ Դենտատոսէ, Փաբրիկեայ, Կորունկանիոսէ չէին մեծութիւնք, և ոչ անդրիւք նախնեաց. սակայն հասին ի բարձր աւագութիւնս. և ազնուականութիւն ամենեքին հաւասարէր ազատանոյն ազնուականութեան, և երկաքանչիւր ձգտէին տակաւ խառնել յիրեարս՝ զաւուցեալք ի խառնիճաղանձէն[1], բայց նախանձընդդէմք ի հայրենասիրութիւն և յանտեսութիւն իւրեանցն շահու։

Թէպէտ և ախտժակք Հռոմէութեան մուծեալ ի ներքս ի Հեռն պատերազմացն Սաբինեանց[2], սակայն առեղակալք պահէին պարզութիւն ի գնացս, և երաշխաւորէին զհասարակաց կալուածս ընդդէմ ձեռնարձակութեան Հռոմէից, անաչառ պահպանութեամբ օրինաց՝ որ սահմանէին նոցա հինգ հարիւր արտաւար հէթ ի տացուած[3]։

Նախապատուք ի քաղաքացիս՝ օրինակս առաւել զարմանալիս ընծայէին արդարութեան և չափաւորութեան։ Մարկոս Վալերիոս Կորուս յետ ամբառնալոյ ի քան և ի մի պաշտաման առեղակաւն՝ զառնայր անդրէն յանդաստան իւր՝ անլինչ, այլ ոչ անխառնակ (419)։ Փաբիոս Հռուլլիանիոս ի յաղթութիւնս իւր և ի յաղթանակս անյիշաչարութեամբ զՊապիրիոս Կուրսոր ընտրէր յիշխանապետ, փոխանակելով զառատութիւն ընդ օգտի հայրենեաց (429)։ Մանիոս Կուրիոս Դենտատոս ոչինչ պահեալ անձին ի Հռոմ առարկ Սաբինացւոց, յետ յաղթելոյ Պիւռոսի, զարձ առնէ յանապաձոյճ կեն-

1 Տիտոս Լիւիոս դնէ ի թերան Դեկիոսի յամին 432 զայս բան նշանաւոր. «Ապաքէն ոչ զերջ է ռամկին ընդ ազնուականութիւն իւր». Տիտ. Լիւ. ժ. է։ Եւ ապա յամին 538 ոմն ի ռամկապետաց այսպէս բարբառի. «Զի՛ ի ռամկաց ազնուականք ի նոյն արբուքիւնս ընծայեալք, սկսանէին արհամարհել զռամիկն, առ որում ոչ ևս էին արհամարհ անգամին ի հարց անտի». Տիտ. Լիւ. ԻԲ. Լ։

2 Տիտ. Լիւ. ժԴ. ԽՀ։

3 Հաւասարք էն դատապարտութիւնն նոցին՝ որ առնգանէին զբինգ Սուլանի. Տիտ. Լիւ. ժ. ԺԴ։

ցաղ իւր դաշտային (479)[1]։ Փաբլիկիոս մերժէ զարծաթն մատուցեալ նմա ի Սամնիտացւոց վասն ազնուականութեանն՝ զոր արար ընդ նոսա, և արհամարհէ զընծայս Պիւռռոսի (476)։ Կորունկանիոս զընտրից իսկ առաքինութեանց ընծայէ օրինակ[2]։ Փաբիոս Գուրգէս, Փաբիոս Պիկտոր և Ոգուլնիոս տան ի գանձս հասարակաց զմեծահարուստ ընծայս ընկալեալ ի գնալ իւրեանց հրեշտակութեամբ յԱվեքսանդրիա[3]։ Մ. Ռուտիլիոս Կենսորինոս՝ վասն վտանգին երկիցս հետ ընդ հետ տալոյ միում ումեք զհամարակալութիւն՝ չէաւ յանձն լինել անդրէն միւսանգամ համարակալ (488)։

Մարթ էր զայլս ևս բազում յիշատակել, որ յայնժամ և առ յառաջ յաճախեցին փառս հռովմէական Հասարակապետութեան. այլ յաւելցուք զի որք ի յանձնանձանս իրաց կային՝ պիտացին ոչ միայն զարս աւագս ձգել յինքեանս, այլ և վարձատրել առատապէս զայնոսիկ՝ որ վաստակէին յօգուտ աշխարհին։ Օրինակ եմն, Փաբիոս Հռուլլիանոս յաղթող լեալ ի բազում պատերազմունս, չընկալաւ զմեծարանաց անուն եռամեծ (Մաքսիմոս), բայց ի խափանելն ի համարակալութեան իւրում յաւենէ քաղաքացւոց զազդեցութիւն աղքատանոյն՝ որ յազատագրուց անտի ժողովեալ, և ի խառնել գնոսա ի խումբս քաղաքացւոց (454), յոր քուեայք նոցա կորնչէին ի բազմութեան[4]։

Դարձեալ ոսկին ոչ դադարէր ի պահանջելոյ նորանոր ընտրս, կամ զխափանեալսն ի ձեռս անդրէն բերելոյ։ Ա. յապէս ընկալաւ յամին 428 զհատատուութիւն օրինաց Սերուիոսի Տուլլեայ, որ սահմանէր՝ ընչից և եթ պարտապանին, և ոչ անձին նորա երաշխաւորել զպարտս իւր[5]։ Յամին 450 Փլաւիոս՝ որդի ուրուն ազատագրի, հրատարակեաց զտումար և զձեռս աստե-

1 Վալերիոս Մաքսիմոս, Դ. Գ. 5։ — Պլուտարք. ի կոթառ, Գ։
2 Վալ. Մաքս. Դ. Գ. 6։
3 Վալ. Մաքս. Դ. Գ. 9։
4 Տիտ. Լիւ. Թ. Խ։
5 « Ինչք պարտապանին և ոչ անձն երաշխաւորեցեալ զպարտս։ Ա.յապէս ամենայն քաղաքացիք սորուկք գարձան յազատութիւն, և արդիւնաւ՝ մի ևս տալ ի կապանս զոք ի պարտապանաց »։ Տիտ. Լիւ. Ը. ԻՉ։

նական վճռոյ, որով բառնայր ի պատրկաց զպահեստն առնոա միայն՝ զիտուԹիւն քաղաքական և կրօնական իրաւանց[1]։ Բայց իրաւագէտք գտին զՀնարս ի գերև առնելոյ զՓլաւեան ձևս այլովք Հասարակաց անխմանալի ձևովք[2]։ Յամին 454 Հեծաւ մուտ ռամկին ի ժողովս քրմապետաց և Հաւահմայից. և ի նմին ամի Հարկ եղև դարձեալ երկրորդ անգամ նորոգել զՎալերեան օրէնս եկակոչէ։

Յամին 468 եւ դարձեալ ժողովուրդն ի Յանիկուլոն ի լանդիր ԹողուԹեան պարտուց, դժկամակեալ ընդդէմ վաշխից[3]։ Եւ ոչ Հաստատեցաւ խաղաղուԹիւն, բայց յընդունել նախ զՀորտենսեան օրէնս՝ որով վճիռ ռամկին պարտս ի վերոյ ամենեցուն ածէին, և ապա ի նորոգել զատ Մենեան օրինաց զկարգս պահանջեալս ի Պուբլիլեայ Փիլոնէ յամին 415. որք որպէս տեսաք ի վեր անդր՝ բռնադատէին զծերակոյտն Հրատարակել կամուխս զօրէնս առաջարկեալս յատենի ժողովեան, եԹէ չէին Հակառակ իրաւանց Հասարակաց և կրօնից[4]։

ՓառասիրուԹիւն Հռովմայ Թուէր տարապայման. սակայն ամենայն պատերազմաց նորա պատճառք, գէԹ վեր ի վերոյ, էին օգնել տկարին և պաշտպանել նիզակակցաց։ Եւ յիրաւի իսկ պատերազմունք նորա ընդդէմ Սամնիացւոց մերձ ի պաշտպանուԹիւն բնակչաց Կապուայ էին, մերձ Բալէոպոլսի և մերձ Լուկանիացւոց։ Պատերազմին ընդ Պիւռոսի սկզբնապատճառք եղեն խնդրել բնակչաց Թուրինի օգնականուԹիւն. և նպատակ Թախանձեալ ի Սամերտացւոց ի Սիկիլիա՝ Հուպ ընդ Հուպ ածցեն զառաջին պատերազմին ԿարԹեդոնացւոց։

Ծերակոյտն, որպէս տեսաք, ի կիր առնոյր զնմաստս՝ որ հի մունք են ինքնակալուԹեանց, և զառաքինուԹիւն՝ որ ծնունդք

1 Վասն ազնուԹեան տումարի, և արուեստի սահմանելոյ զօրս, քրմաց միայն ծանօԹք էին աւուրք գատ վարելոյ։

2 « Երկուցեալ իրաւապետաց Թէ գուցէ անպէտ լիցի պաշտօն իւրեանց վարելոյ գատս, հնարեցին կարգս լինել և ձևս առ ի կարևոր ընծայեցուցանել զանձինս »· Կիկերոն, Ի պաչ· Մ-ընէայ, ԺԱ։

3 Տիտ· Լիւ· Հպպ, ԺԱ։ — Պլին· ԺՉ· Ժ· 37։

4 Կիկերոն, Բրուտոս, ՃՀ· ԺԴ։ — Զոնարաս, Տուէտ· Ը· 2։

էն պատերազմայ։ Գարձեալ՝ քաղաքացւոց առհասարակ հաւատարմութիւն իրաւանց. ՚ի վտանգս հայրենեաց՝ նոյն պարտք ամենեցուն և զաղափուճն իսկ ազատութեան։ Ա.րժանաւորապունէից պատիւք և հրամանատարութիւն. և ոչ ումեք աւագութիւն՝ որոյ չկայ զինուորեալ։ Ա.յսոցիկ օրինակ հոյակապքն և Հոխագոյնք ՚ի տունն. ՚ի մարտին առ Հռեդիկեայ ընկեն զինուորք ՚ի ծերակուտէն խառնեցան կացին ՚ի ռազմս լեգէոնից[1]։ Ի պատերազմին որ առ Կրեմերաւ երեք հարիւր և վեց Փաբիոսեանք, յորոց իւրաքանչիւր ըստ Լիւիոսի՝ բաւականք էին քարձրագոյն պաշտամանց, անկան զէն ՚ի ձեռին. և ապա առ Կանեաւ ութսուն ազնուականք ընդ սինկղտոս զօրականին անկան ՚ի Հանապատն[2]։ Յաղթանակ ընտրեալ՝ որոց նոր աշխարհակալութիւնս յաւելուին, և ոչ որ զյափշտակեալս ՚ի թշնամեաց ՚ի բաց թափէին. իսկ առանին պատերազմաց ոչ երբեք ընտրեալ յաղթանակ[3]. զի եւք նոցա աղէտք էին միշտ հասարակաց։ Բղեսաշխք և փոխանակք բղեշխից ջանային գործել միշտ զօգուտ հայրենեաց, առանց մտահ վերաժինդրութեան փառաց իւրեանց. այսօր յառաջին կարգ աւագութեան, վաղիւ յերկրորդն, նուաճին մատնութեամբ հնազանդելով որոց յերկին հրամայէին։ Սերտիլիոս յաղին 281 բղեսաշխ, ՚ի միասին ամի փոխանորդ եկաց Վալերեայ։ Փաբիոս յետ այնչափ յաղթանակաց յանձն առնոյր լինել տեղակալ եւթն որդւոյն։ Այս ժամանակաւ և Փլամինիոս յաղթողն արքային Մակեդոնացւոց, յետ Հռոմայեցւոցն ՚ի Թեսաղիայ առ սէր հայրենեաց խոնարհեր ՚ի հպատակութիւն զօրաց[4]։ Եւ ինքն իսկ Մեծն Սկիպիոն պարտեալ զԱննիբաղ, փոխանորդ եղբօրն կայր ՚ի պատերազմին ընդդէմ Անտիոքոսի։

Զամենայն ինչ փոխանակել ՚ի վերայ հայրենեաց առաջին

1 «Տեսանէք ասասնօր զի աւագագոյնք առ հասարակ ՚ի ծերակուտէն օրինակ Հեզ ընծայեն։ Կամին հաղորդս լինել աշխատութեանց և վտանգաց մարտին, ուր օրէնք և հասակ նոցա ազատս կացուցանեն զնոսա ՚ի զինուորութենէ». Ա.պե. Նախասահմանն Պոպոսիոսի իշխանապետի առ զջրս Իւր. Դիոն. Ա.ւիկ. Զ. Թ։

2 Տիտ. Լիւ. Իբ. Խթ։

3 Վալ. Մաքս. Բ. Ը. 4, 7։

4 Պլուտարքոս. ՚ի Փլամինիոս. ԻԸ։

պարտք էին Հռովմայեցւոց. նուիրեալ զանձինս ի քոյն սանդա-
րամետականաց, որպէս Կուրտիոն և որպէս երկոքին Դեկո-
սեանք, համարէին գնել զկեանս իւրեանց՝ ի փրկութիւն այլոց
կամ՝ ի յաղթութիւն[1]: Զգուշութիւն հրահանգաց զինուց մին-
չև յանդգնութիւն զառածանէր. Մանլիոս Տորկուատոս, ըստ
նմանութեան Պոստումիոսի Տուբերտեայ, մահու պատուհա-
սէր զինքնահրաման յաղթութիւն ոտքոյն: Զօրք թիկնապար-
ձոյցք տասանորդէին ի մահ. իսկ գաւազնիք ի ռազմի կամ
ի Հանդիսաւորութեան, կիսք ի պատուհաս մահու, այլք յանար-
գութիւն մատնէին. և գերեալք ի թշնամւոյն՝ իբր անարժանք
փրկանաց ի բաց մերժէին[2]:

Ընդ պատեալ ի պատերազմել ազգաց, հարկ ի վերայ
կայր Հռովմայ յաղթել նոցա կամ կործանել: Այսու յառաջ
գայր գերազանցութիւն նորա յարուեստ պատերազմի. զի, որ-
պէս ասէ Մոնտէսքիէօ, ի վաղանցուկ պատերազմունս յոլովա-
գոյնք յօրինակաց կորնչէին. խաղաղութիւն յայլ ինչ իրս զբաղե-
ցուցանէ զմիտս, և մոռացօնք լինէին թերութեանց ևս և առա-
քինութեանց: Այսու արհամարհանք մատնութեան և անտե-
սութիւն շահուց՝ զոր նայն խոստանայ. Կամիլլոս դարձուցանէ
առ ծնողս իւրեանց զմանկունս նախապատուհս տոհմից Փալե-
րեանց, մատնեալս ի դաստիարակէ իւրեանց. ծերակեցան մեր-
ժէ ցասմամբ զխոստումն բժշկին Պիւռոսի՝ դեղեալ գինւս: Այսու
երկիւղածութիւն երդման, և մեծարանք դաշանց կռելոց.
գերին Հռովմայեցի, որում՝ նեղէին Պիւռոս գնալ ի Հռովմ՝ ի
Սատուռնեան տօնս, դառնայր առ թագաւորն՝ կալով ի խոստ-
ման. և Հռեգուլոս թողոյր օրինակ գերահոչակ հաւատարիմ
կալոյ յուխտին: Այսու քաղաքագիտութիւնն այն Հարստար և անդ-
ողքելի, որ մերժէր զհաշտութիւն յետ պարտութեան, և
զդաշինս ընդ թշնամւոյ՝ ցոլջափ կայր նա յերկրին հայրենեաց.
որ յօգուտ արկանէր զպատերազմ առ՝ ի հանդարտել զառ-
անձին յուզմունս[3]. որ շահէր զպարտեալս բարերարութեամբ՝ ի

1 Ա֊բիլիոս վ֊իկտոր, Աբր անուանէ. ԻՋ, ԻԷ:

2 Տիտ· Լիւ· Թ· ժ:

3 «Ամենուրեք խռովութեան յառնէր ընդ ազատանին և ընդ ռամիկն, և յեղա-
կարծ երկիւղ պատերազմի (ընդ Տիւռբացիս) զնաուցանէր զայն»· Տիտ· Լիւ·

հպատակել նոցա, և ընդունէր զնոսա տակաւ՚ի հռովմէականն ազգատոհմ մեծ, իսկ յանսաստել նոցա հարկանէր զնոսա անխնայ՚ի տուր և՚ի գերութիւն[1]։ Այսպէս և խնամք բազմացուցանել յաշխարհակալութիւնս իւր զմշակ և զպօրական։ Եւ զի երկարեմ։ աստէ զարմանալին այն տեսարան քաղաքի՝ որ կազմէ ազգ մի, և ազգ՝ որ բովանդակէ զտիեզերս։

Է. ԺԲ։ — « Ապրիոս Սոբինոս առ՚ի խափանել զչարիս՝ որ անհրաժեշտ ծնունդք են դատարկութեան և չքաւորութեան, կամէր զբաղեցուցանել զժողովուրդն յարտաքին պատերազմունս, զի ինքնին հայթայթեսցեն զկեանս իւրեանց և զբաւեալ առատութեամբ պարէնս յերկրի Թշնամեաց՝ որ չէին՚ի Հռովմ, օգնեսցեն հայրենեաց փոխանակ ապրիլոյ տարապարտ զծերակոյտն՚ի յանձանձանս իրաց աշխարհին։ Եւ ասէր Թէ քաղաքի՝ որպիսի էր Հռովմ, որ տիրէն չանայր՚ի վեր քան այլոց և առել էր նոցա, չպակասէին պատճառք օրինաւորք պատերազմի. և եթէ չանցելոյն կամէր ոք զսպառնին գուշակել, տեսանէր յայտնապէս զի առնայն խռովութիւնք՝ որ ցայնժամ պատահէին զՀռոմայեցւոց հպատակութեանն, ՚ի ժամանակի խաղաղութեան չառնէին՝ յորժամ չէր ինչ երկիւղ արտաքուստ »։ Դիոն. Ալիկ. Թ. ԽԳ։

1 Կլաւդիոս մարտ մղեալ Յուդբրիա՝ էառ զկամերինն քաղաք և գերի առեալ զբնակիչսն՚ի վաճառ եհան. (Տես՚ի Վալերիոս Մաքսիմոս, Զ. Ե. յօդ. 1։ — Տիտ. Լիւ. ՀպպԺ, ԺԵ։) — կամիլլոս առեալ զՎէրա քաղաք, ՚ի վաճառ հրապարակաւ հանէր զազգս մարդկին. (Տիտ. Լիւ. Ե. ԽԲ։) — Ձամին 365 գերեալք, ըստ մեծի մասին Եւրուբացիք, հանան հրապարակաւ՚ի վաճառ. (Տիտ. Լիւ. Զ. Դ։) — Օգնական գունդք Սամնիացւոց, յետ Ալիփեայ պատերազմին (447) վաճառեցան իբրև սորուկք 7,000 այր. (Տիտ. Լիւ. Թ. ԽԲ։)

ԳԼՈՒԽ Դ

ԲԱՐԳԱՒԱՃՈՒԹԻՒՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻՆ ՅԱՌԱՋ ՔԱՆ ՋՊԱՏԵՐԱԶՄՈՒՆՆ ԿԱՐԻՔԵԴՈՆԱՑԻՈՑ

Ա. *Վաճառաշահուքիւն Միջերկրականին։*

Երկերիւր քառասուն և չորից տարի պէտք եղեն ՚ի հաստատութիւն Հռոմայեցւոց առ Թագաւորօք, հարիւր եօթանասուն և երկուց՝ վասն կարգաւորելոյ և ամրանալոյ Հասարակապետութեան ընդ դէմ ելիւք, եօթանասուն և երկուց՝ յաշխարհակալութիւն Իտալիոյ. և այսուհետև դարու և կիսոյ պէտք լինէին նոցա ՚ի տիրապետութիւն աշխարհի, այսինքն ՚ի հիւսիսային Աֆրիկէ, ՚ի Սպանիա, ՚ի հարաւակողմն Կելտաց, ՚ի Լիւրիկէ, Յեպիրոս, ՚ի Յունաստան, ՚ի Մակեդոնիա, ՚ի Փոքրն Ասիա, ՅՈւտիս և Յեգիպտոս։

Այլ ևս բուռն հարեալ զպատմութենէ աշխարհակալութեանցս, զկայ առցուք վայրկ մի ՚ի զնին այնր ժամանակի հանդամանաց Միջերկրականին, զորով հետ ընդ հետ ՚ի հանդէս եկին տեսարանք երևելիք նախնեացն պատմութեան։ Ի զնեալն զայն.չմարթիմք կալ անկարեկիր ընդ կործանումն ընդարձակ աշխարհայ, յորս երբեմն արդասիք երկրի, կերտուածք հոյակապք, Հռոմ թիւնք, երկրախումբ և նաւախումբ զօրութիւնք, և ամենայն ինչ ցուցանէր բարգաւաճեալ քաղաքականութիւն, որ արդ անապատն է անմարդի, կամ խուժադուժ ազգաց բնակութիւն. (Տես Յաղագս Պատմութեան, Թիւ 3)։

Տեսեալ էր Միջերկրականին զմեծանալ և զբարգաւաճել զիւրև քաղաքացն Փիւնիկեցւոց հետզհետէ, զԱրդոնի, զՏիւրոսի և ապա զՔարթագենոյ։

Սիդոն, բարգաւաճեալն նախ քան զաւուրս Հոմերի, խո-
նարհեալ հուպ ընդ հուպ ընդ նախիշխան զօրուն Թեամբ Տիւրո-
ս. ապա Յունաստան եւեալ գնուալս արարեալ գայր՝ի վաճա-
ռաշահութիւն՝ի ծովն Եղբին։ Դար խաղաղաւէտ մեծա-
Թեան, և՝ի նախանձընդդէմ Հզունս բազմաբեղուն։ Փինի-
կեցիք դիմեալ մանաւանդ ընդ Հարաւ, յարեւելս, Աֆրիկէ,
Ասիա անդր քան զՅաւրս, ՝ի ծովն Կարմիր, ՝ի ծոցն Պարսկա-
կան, Ովկիանոս և՝ինաւագնացութիւնս հեռաւորս։ Իակ Յոյնք
՝ի ծովեզերս առ հասարակ հիւսիսոյ, ծաձկեալք ՝ի բազմու-
Թենէ գաղթականացս իւրեանց։ Փինիկէ ձեռներէց՝ի գործս
յանդգնունս և՝ի հնարագիտութիւնս շահաւէտս. Ելլադա
ձեռագէտ նախ քան զվաճառականն, սիրէ՝ի ձեռն գաղթա-
կանաց զհանճար իւր և զիմաստս։

Ա.յս մրցումն բարեբաստիկ վաղ դադարէր յերևել այլոց
երկուց գաղթականաց՝ի ծոցոյ նոցին։ Պայծառութիւն Կար-
քեդոնի փոխանակէր զՏիւրոսին, և Ալեքսանդրիա յաջորդէր
Յունաստանի։ Ա.յսպէս արևմտեանն կամ սպանիական Փինի-
կէ բաժանէր զվաճառականութիւն աշխարհի ընդ արևելեանն
և եգիպտական Յունաստան, արգասիք հանճարեղ աշխարհա-
կալութեանց Ալեքսանդրի։

Բ. Հիսպանիա Աֆրիկէ։

Քանից այլ և այլ ազգաց աւարաւ Հոխացեալ Կարքե-
դոն, եկաց մայրաքաղաք հզօր լայնածաւալ պետութեան։ Նա
սահանգիստք նորա ձեռագործք՝ տանէին յաձախաւոր տորմիղս
նաւաց[1]։ Բիւրապ դղեկին նորա շրջապատ պատէր մղոնս եր-
կուս։ Ի ցամաք կուսէ ամրանայր քաղաքն եռապատիկ պարսպ-
պօք, քան և հինգ աստիճանս յերկայնութիւն, երեսուն կանգ-
գուն՝ի բարձրութիւն, և աշտարակք՝ի նոսա քառայարկք՝յորս
տանէր 4,000 այրուձի, 300 փիղս և 20,000 հետևակս[2]. և

1 «Նաւահանգիստն զինուորական տանէր միայն երկերիւր և քսան նաւս». Ապպիանոս, Կարթեգոնական պատերազմունք, Ղշ. 437. տպ. Եվայկհայզէր։

2 Ապպիանոս, Կարթեգոնական պատերազմունք, Ղե. 436։

քաղաքին բնակիչք անբաւ. զի և՝ ի վերջին ամն յետ հարկուրամեայ պատերազմաց՝ էին՝ ինձա դեռ ևս եօթանասուն բիւր բնակիչք[1]։

Ելեւաւճք՝ ի նմա հոյակապք արժանաւորք մեծութեան նորա՝ էր՝ ի նմա Աշմուն դից մեհեան երևելի, որ Ասկլեպիոս նոյն համարէր՝ ի Յունաց[2], և տաճար Արեգական՝ ծածկեալ՝ ի թիթեղն ոսկի հազար քանքարաց[3]. և մեծի դիցուհւոյ նոցա վերարկու պատկերին 120 քանքարաց[4]։

Պետութիւն կարքեդոնի ձգէր՝ ի տահմանաց Կիւրենական աշխարհին (Երկիր Բարկայ, փոխանբերութիւն Տրիպոլեայ) մինչև յԱպանիա. էր նա մայրաքաղաք հիւսիսային Աֆրիկեայ առ հասարակ, և՝ ի Հիբիա միայն էին նորա երեք հարիւր քաղաք[5]. և կղզիք Միջերկրականին գրեթէ ամենեքին յաւանէից և՝ ի հարաւակողմն Իտալիոյ վաճառակից էին նորա։ Կարքեդոն նախկինան կայր՝ ի վերայ ամենայն վաղնջուց գաղթականացն Փիւնիկեցւոց՝ ի ծովեզերեայս Աֆրիկեայ, և առնոյր՝ ի նոցանէ ամի ամի այսչափ ինչ հարկս և գումարս զօրաց։ Ի ներքսագոյնն Աֆրիկէ առաքէր խառնբս վաճառականաց՝ ի

1 Սարաբոն, ԺԷ· Գ· 707։

2 Ապպիանոս, կարթէդոնական պատերազմանք, ՃԼ· 492։

3 5,820,000 Ֆրանքս· (Ապպիանոս, կարթէդոնական պատերազմանք· ՃԻԷ· 486։) Ըստ քննութեան մասնագրացն Լէդրոն, Պէօխ, Մոմսէն, և այլն, ընկալաք յընթացս պատմութեանս զվաղեմի դրամս ըստ համեմատութեան արդեացս ըստ ցուցակիս որ զՏեսա գայ·

Լիտրայ կամ փող պղնձի (Ա)=1/16 դենարի=5 հարիւրեակ Ֆր·
Դահեկան (Սեսաերս)=0,975 կրամ=19 հր·
Դենար=3,898 կրամ=75 հր·
Դահեկան մեծ=100,000 դրամ=19,000 Ֆր·
Քանքար ասեղիևան կամ եւբէացի, 26 տպ, 196 ֆ =5,821 Ֆր· 00 հր·

Մնաս · · · · · · · · · ·	436	=	97 00
Դրամակշիռ (Դրագմէ) · · · ·	4,37	=	0 97
Դանիկ կամ Փշիտ (Ոբոլ) · · · ·	0,73	=	0 16

Քանքար եգիւպտացի հաւասար է 8,500 ասեղիևեցի դրամակշռաց (37 տպ,2) = 8,270 Ֆր· — Քանքար արծաթոյ բաբելոնեան է 33 տպ,42 ֆ = 7,426 Ֆր· (Ի մանրամասն գիտութիւն տես՝ ի Մոմսէն, Հռովմէական դրամագիտութիւն, էջ 24–26, 55· — Հուլշ, Չոռնական և պիտովմէական լափաց բանք, էջ 135–137)։

4 Իբր 700,000 Ֆրանքս· (Ամիենոս, ԺԲ· ԺԸ· 509· տպ· Ելայկհայզէր)։

5 Սարաբոն, ԺԷ· Գ· 707։

ինդիր փղաց և փղամկրէից, ոսկւոյ և խափշիկ գերեաց, զոր ածէր՝ի վաճառաշահ քաղաքս Մինջերկրականին[1]։ Ի Սիկիլիոյ՝ առնոյր ձէթ և գինի, Յելպայ՝ երկաթ, ՚ի Մեղիտայ՝ կեր-պաս ապխտած, ՚ի Կորսիկայ՝ մոմ և մեղր, ՚ի Սարդինիոյ՝ ցո-րեան, հրահաղ և գերի, ՚ի Բալեարեանց՝ ջորի և պտուղ, ՚ի Սպանիոյ՝ ոսկի, արծաթ և կապար, ՚ի Մաւրիտանիոյ՝ մորթս կենդանեաց. և առաքէր նաւս մինչև ՚ի ծագս Բրիտանիոյ ՚ի Կասիտերեան կղզիս (Սարլինկ) բառնալ անտի անագ[2]։ Իսկ ՚ի Կարքեդոնի ծաղկէր չարտարութիւն, և մանաւանդ կերպաս անկուածոյք գերահռչակք[3]։

Ի վաղնջուց վաճառաշահ քաղաքաց և ոչ ոք ՚ի կշիռ կա-րէր կալ ընդ Կարքեդոնի, ուր յամենայն ազգաց ընծանայր խուռն բազմութիւն։ Յոյնք, Կելտք, Իսպուրացիք, Սպանիա-ցիք և Լիբէացիք դիմէին անդր գունդ գունդ ընդ դրօշիւ նո-րա[4]. Նումիդացիք տային նմա այրուձի ահաւոր[5]։ Տորմիլ նա-ւաց նորա ահարկու՝ հասանէր յայնժամ ցհինգ հարիւր նաւս։ Էր նորա զինարան մեծ[6], զորոյ անտի խոկ մորթ է՚ի միտ առ-նուլ զմեծութիւն, զի յաղթականին Սկիպիոնի եւս քան բիւր զէնս ազգի ազգի, և երեք հազար մենքենայս պատերազմի[7]. և ըստ այնչափ բազմութեան զօրաց նորա և հանդերձանաց՝ էին նորա հասք անբաւ։ Յետ պատերազմին խոկ Զամայ՝ Պոլիբիոս տակաւին կոչէր զինա հարստագոյն՚ի քաղաքս աշխարհի, մինչ-

1 Սկիւլաքս Կարխեդոնացի, Նաւագնաց ասպնջականի՚ի ծովեզերեայս, էջ 51 և որ գինի. տպ. Հրատրնի։

2 Տես զմատենագրութիւն Հերէնի, Խորհրդածութիւնք պետականութենէ, գնոցին և գործոյ հռչակաւոր ազգաց վաղնջուց ծանանաիոց, մասն Ա. հա. բ. յօդ. ե և զ. էջ 163 և որ գինի, 188 և որ գինի. գ. տպ։

3 Աթենէոս ուսուցանէ մեզ զի Պոլեմոնի գրեալ էր ճառ երկայն զվերարկուաց գնոյն Կարքեդոնի (ժբ. ՍՀ. 509։)

4 Երոգոտոս, է. ճկե։ — Պոլիբիոս, Ա. կէ։ — Տիտ. Լիւ. ԻՀ. ժբ։

5 Զբռվանդակութիւն զօրացս, ըստ Տիտոսի Լիւիոսի, գոնեմբ առ երկրորդ կարքեդոնական պատերազմաւ հետևակազօրս 291,000, և այրուձի 9,500. (Տիտ. Լիւ. գիրք ԻԸ–ցԻԹ։)

6 Կարքեդոն՚ի դէպս ինչ կարաց ձեռակերտել՚ի միում աւուր հարիւր քա-ռասուն վահանս, երեք հարիւր սուսերս, հինգ հարիւր նիզակս և հազար նետս պատերազմիկ կազմածոց. (Սարաբոն, ժէ. գ. 707։)

7 Սարաբոն, ժէ. գ. 707։

դէտ այն ինչ տուգանս ծանուն Հաստուցեալ էր նորա Հրամայեցոց[1]: ԱշակուԹիւն բարգաւաճեալ ոչ սակաւ տատար լինելը բարեբաստուԹեան նորա քան զտուրևատս վաՃառաց: ԲազմուԹիւն Հոգեպարծ գաղԹականաց[2] Հաստատեալ անդ, 'ի ժամանակս Ագաթոկլեայ յաւելցը քան զերկերիւր. որ ապա կործանեցան պատերազմաւ[3] յամին 440: Բիւզակէն (Հարաւակողմն տէրուԹեան Դունխայ) շեմարան ցորենոյ էր կարքեդոնի[4]:

Ձայս գաւառ կոչեցեալ Եմպորիա, այսինքն է Շուկապան, զի էր երկիր քան զամենայն վաՃառաշահ գաւառս գերազանց, գոլէ յոյժ աշխարհապէրն ՍկիւԹաց[5], որպէս Ճոխ և բերրի քան զամենայն կողմանս Լիբիոյ: Յաւուրց անտի Մարաթոնի էին նորա բազմաԹիւ քաղաք մեԹերանոց վաՃառաց նեղքնոյն Ադրիկեայ: Պոլիբիոս[6] Ճառէ զերկերացոյ նորա, զարջաւոյ, զօղեայ և զայծեայ, ամբաւ անդէոց, որպիսի չէր նորա տեսեալ այլուր: Փոքրիկ քաղաքն ևԹ Վեպտիս Հաստուցանէր կարքեդոնի Հարկ անհԹեԹեԹ՝ քանքար մի յաւուր (5,821 ֆր.)[7]:

ՅարգասուրուԹենէ տան Ադրիկեայ 'ի միտ առնուլ է զՃոխուԹիւն քաղաքացն ծովեզերեայց Սիրտայց, որ ԹէպԹ և 'ի վկայուԹիւն յետոյ՝ Հաստատեալ Հուպ յանկումն կարքեդոնի, այլ այնու իսկ առաւել յայտ առնէ զնախանձն իւր բարգաւաճուԹիւն: Յամին 537 ընդարձակ նաւահանգիստ կղզւոյն Կերկինայ (Գերքէնի, տէրուԹիւն Դունխայ, Հանդէպ Ադրաքայ) Հաստոյց Սերուխլիոսի տան քանքարս[8]: Անդր և սա

1 Յամին 513՝ քանքարս եւբէացիս 3,200 (18,627,200 ֆր.)· յամին 516՝ քանքարս 1200 (6,985,200 ֆր.)· յամին 552՝ քանքարս 10,000 (58,210,000 ֆր.): Սկիպիոն էրէց Ադրիկէից տարրս 'ի քաղաքէս 123,000 կշիռ արծաԹեայ: (Պոլիբիոս· Ա· կԲ, կԳ, ՁԸ· ժԵ· ժԸ: — Տիտ· Լիւ· Լ· ԼԷ· ԽԵ:)

2 Ադրիատուկ, ՔաղաքավարուԹիւն, Է· Գ· յօգ· 5: — Պոլիբ· Ա· ՀԲ:

3 Դիոդոր Սիկիլ· Ի· ժԷ:

4 Պլին· ԲՆ· Պմ· Ե· Գ· 24:

5 Սկիպիոն կարխեդոնացի, Նաւագնաց ուղեւորուԹիւն 'ի Ծովէկէրեայս· ԿՁ 49, տպ· Հըտսընի:

6 Պոլիբ· ԺԲ· Գ:

7 Տիտ· Լիւ· ԼԴ· կԲ:

8 58,200 ֆր· (Տիտ· Լիւ· ԺԲ· ԼՄ:)

յարևմտակողմն, Հիպպոյ–Հռեգիոս (Պօն) էր տակաւին քաղաք մեծ ծովեզերեայ՝ ի ժամանակս Յուգուրթայ [1]։ Տինդիս (Թանճէլի) ՝ի Մաւրիտանիա, որ պանծայը ՝ի կարի յոյժ վաղեմի հնութիւն իւր, առնէր վաճառաշահ մեծ ընդ Բեռիկեայ։ Երեսակ ժողովուրդք Աֆրիկեայիք ՝ի գաւառս յայսոսիկ էին ընդ ազգեցութեամբ Կարթեդոնացւոց, և յաձախ իսկ միշտիք կալուածոց նոցա։ Նումիդացիք մասիւնք՝ որոց ապա մայրաքաղաք եղև Կիրտա (Կոստանդինա), Նումիդացիք մասնաւիւնք՝ որոց գաւառք էին Ալճեր և Օրան, և Մաւրիտանացիք՝ սփռեալք ՝ի Մարոք։ Ժողովուրդքս այսոքիկ վրանաբնակք՝ դարմանէին անդեայ բազում, և արմտի առատ հանէին յերկրէ։

Աննոն ծովապետ կարթեդոնացի առաքեալ յամի 245 հետազօտել զծայրս ծովափանց Աֆրիկեայ՝ մինչև անդր իսկ քան զնեղուցն Գադէսի, բնակեցոյց անդ զաղթականս յոլով, որոց յաւուրս Պլինեայ հետք անգամ չէնային [2]։ Հաստուածքս այսոքիկ ածին զվաճառականութիւն ՝ի Մաւրիտանացիս և ՝ի Նումիդացիս և առ բնակիչս ՝ի Մարոք, Թերևս և ՝ի Սենեկալ։ Բայց ոչ Աֆրիկէ միայն տարածանէին կալուածք կարթեդոնի, այլ և ՝ի Սպանիա, ՝ի Սիկիլիա և ՝ի Սարդինիա։

Գ. Սպանիա։

Իբերիա կամ Սպանիա՝ վէցեքուսիք մեծամեծ գետովքն՝ որ նաւարկեցաք էին առ նախնիս, երկարաձիգ գօտեօք լերանց, Թաւ անտառօք, և արգաւանդ հովտօքն Բետիկեայ (Անտալուսիայ) Թուի պատրաստեալ ժողովուրդ բազմաթիւ և պատերազմող, ձոխ ՝ի բոլս, ՝ի բեռս երկրի և ՝ի վաճառաշահ։ Ջիմիջնագաւառս Յամաքակղզւոյն ունէին Իբերացիք և Կելտիբերք, ՝ի ծովեզերս անդ Հաստուածք ՝ի կարթեդոնացւոց և ՝ի Յունաց բնակէին. բնակիչք ծովեզերացն ՝ի տպաւ Թաւիւրք

1 Սալուստ. Յուգուրթ, ԺԹ։

2 Պլինիոս յիշատակէալ զայս և յերկուսանայ. (Բն. Պմ. Ե. 1, 8։) — Տէս Նաւագնացութիւն Աննոնի, ՝ի հաւաքածոյս Փոքր աշխարհագրաց Յունաց։

*՝ի քաղաքականութենէ՝ վաճառակցութեամբ Փիւնիկեցւոց ա-
ծան՝ի կարգ ինչ քաղաքականութեան, և յարգախառնութե-
նէ նոցա ընդ օտար գաղթականս՝ սերեցաւ ժողովուրդ խառնա-
ծին, որոյ պահելով զգի իբերական, զսովորութիւնս Փիւնի-
կեցւոց և Կարթեդոնացւոց ընկալեալ էր՝ի վաճառականու-
թեան։*

Կարթեդոնացիք և Յոյնք՝ի հաստատելն՝ի Սպանիա՝ սկսան յօգուտ՝ի կիր արկանել՝ի կառուցումն շինուածոց զանազանս, որ ծածկէին զբերինս աշխարհին։ Գադէս իբր մեծագունոց հաստատեալ՝ի Կարթեդոնացւոց՝ի ծայր Բետիկեայ, եկաց մի՝ի գլխաւոր նաւահանգստ նոցա։ Անդ հանդերձէին նաւք խաղալ դիմագրաւ ընդ Ովկիան՝ի լինելիս արգասեաց Ամերիկեան երկրին և կղզեաց Մեծին Բրիտանիոյ, և գանարեանց անգամ։ Թէպէտ և անկանէր Գադէս՝ի մեծութենէն շինուածոցն կարթագինեայ (նորոյն Կարթեդոնի) յամին 526, սակայն բազմանալով դեռ և էր յաւուրս Ստրաբոնի, քան զՀռոմ միայն առուն կացեալ։ Ի տախտակս ազգահամարին արձանագրեալ կային ազք հինգ հարիւր՝ որոց Հռոմեացին տայր նոցա իրաւունս ընդ առեսս կալոյ՝ի հանար. որպիսի ինչ Պատաւիոն միայն ընծայէր Յուլիա[1]։ Ի Գադէս՝ որ հռչակաւոն էր մեհենիւ Հերակլեայ, յորմէին մեծութիւնք բովանդակ Սպանիոյ։ Խաշինք Բետիկեայ և երիվարք մրցէին հանար բաւել ընդ Ասուրիս։ Կորդուբա (Գորտովա), Հիսպալիս (Սեւիլիա), ուր ապա Հռովմայեցիք հաստատեցին գաղթականս, էին երբեմն քաղաք մեծամեծք վաճառաշահք, հանգրուանք նաւուց՝ որք նաւէին ընդ Բետիս՝ի վեր (Գուատալքուիվիր գետ)[2]։

*Էին Սպանիոյ և բազում բովք ընծայիր հրահալից, ոսկւոյ, արծաթոյ, երկաթոյ և կապարի, յորս պարապէր ժիր ձարտարութիւն[3]։ Յօակայ (Հուեսգա) հանէին արծաթ, ՝ի Սիսապոնէ (Սվմատէն)՝ արծաթ և ծնդիկ[4]։ Ի Կոտինէ՝ պղինձ ընդ ոսկւոյ։ Ա-
ռ Որետանացիս՝ի կաստուլոն (կազլոնա՝ի վերոյ Կուատա-*

1 Ստրաբոն, գ. է. 140։
2 Ստրաբոն, գ. Բ. 117։
3 Պլին. բն. պտմ. գ. գ. 30։ — Ստրաբոն, գ. Բ. 120։
4 Ստրաբոն, գ. Բ. 117։ — Պլին. գ. 1. 3. լգ. է. 40։

լմնարայ) ՚ի բուն արծաթոյ վաստակէին չորեք բիւրք յատուրս Պոլիբեայ, և տային աւուր աւուր 25,000 դրամակշիռս[1]։ Յե֊բեսուն և ՚ի չորս ամն զօրավարութ Հռոմէացւոց տարան ՚ի Յա֊մնաք կղզւոյն գումար մեծ ոսկւոյ և արծաթոյ[2]։ Աւաստուբիւն հրահալից ՚ի Սպանիա տայ ՚ի միա առնուլ թէ զնարդ աս բա֊զում չիշխանաց կամ՚ի թագաւորաց փոքունց իբերական ազ֊գին գտանէր այնչափ բազմութիւն անօթոց ոսկւոյ և արծա֊թոյ։ Պոլիբիոս զոմն ՚ի նոցանէ հաւատալ Հռոմէացւոց պերճապատում թագաւորին Փէակիացւոց[3]։

Ի հիւսիսակողմն և՚ի միջերկրեայս Յամնաքակղզւոյն՝ միջակու֊թիւն և գարման անդէոց էին գլխաւոր աղբիւրք Հռոմէացւոց։ Գործէին անդ տաւատոկք և հանդերձք աւուեայք և այծեայք, ածել ընդ Իտալիա[4]։ Ի նահանգն Տարրակոնայ միջակութիւն կտաւատի արգասաբեր էր յոյժ. և էր գիւտ բնակչաց երկ֊րին հիւսել զբարակասնն կտաւս՝ զոր կերպաս կամ գաւառա֊զա կոչէին, և էր յարգի յոյժ աւ Յոյնս[5]։ Աղեսաղեաւ բե֊րէին մորթ, մեղր, աղ՚ի գլխաւոր նաւահանգիստս Ծովուն. որ էին Եմպորիա՝ գաղթական Փոլիէացւոց ՚ի Կատալոնիա. Սա֊գունտոն՝[6] գաղթական Յունաց ՚ի Չակիւնթեայ կղզւոյ. Տար֊րակոյ (Տարրակոնա)՝ մի՚ի վաղեմի գաղթականաց Փիւնիկեցւոց

1 Իբր եթէ 25,000 Ֆրանքս. (Սարաբոն Գ. Բ. 122։)

2 767,695 կշիռ. արծաթոյ և 10,918 կշիռ. ոսկւոյ, առանց ՚ի համար արկա֊նելոց զառանձին հարկս՝ որ երբեմն ծանուռնք էին յոյժ, որպէս Մարկոլինկայն՝ մի֊լիոն մի դահեկանաց (230,000) Ֆրանքս) և Կերտիմոյն՝ 2,400,000 դահեկանաց (550,000 Ֆր.). (Տես ՚ի գիրս Տիտոսի Լիւիոսի, ԻՀ. ցԽՉ)։ Ա յատկութիք էին Ճո֊խութիւնք Սպանիոյ ՚ի գուշնաքեայ առելս անգամ. զի յամին 602, Կ. Մար֊կելլոս արկ հարկս քաղաքի միոյ փոքու Կելտիբերաց (Օչիլիս) երեսուն քանքար արծաթոյ (իբր 174,600 Ֆր.) որ թեթև իսկ համարէր գրացեայ նոցա. (Ապ֊պիանոս, Պոփէրաղմոանի Սպանիոյ, ԻՀ. 158. տպ. Ըվայհայզէր)։ Պոսիդոնիոս, զոր յառաջ բերէ Սարաբոն (Գ. Դ. 135), պատմէ թէ Մ. Մարկելլոս եհան ՚ի կել֊տիբերաց հարկս վեց հարիւր քանքարաց (իբր 3,492,600 Ֆր.)։

3 Ժողովուրդ առասպելեալ, զորմէ խօսի Հոմեր. (Աթենէոս, Ա. ԻՀ. 60. տպ. Ըվայհայզէր։)

4 Դիոդոր Սիկիլ. Ե. ԼԴ. Լե։

5 Պլին. ԲՆ. Պմ. ԺԹ. Ա. 10։

6 Յաւուրս Աննիբալայ քաղաքս այս էր ՚ի փարթամագունից անուն Յամնաք կղզւոյն. (Ապպիանոս, Պոփէրաղմոանի Սպանիոյ, ԺԲ. 113։)

'ի Սպանիա. և Մալակա, ուստի գային ազգ ազգ աղկերաց[1], Լուսիտանիա, ուր նաւք Փիւնիկեցւոց կամ Կարթեգոնացւոց ոչ երթևեկէին, էր այնչափ յաջողեալ։ Սակայն Պոլիբիոս[2] 'ի Թիւ արկանէ զբերս գաւառին գնովքն Հանդերձ, որ զարդիւնս մշակութեան երկրին առաւս յոյժ ցուցանէն[3]։

Չքարեբաստուածին Սպանիոյ յայտ առնէ և բազմամարդութիւն նորա։ Ըստ մատենագրաց ոմանց՝ Տիբերիոս Գրակքոս էառ 'ի Կերտիբերաց անտի երեքհարիւր քաղաքս պարսպաւորս։ Ի Տիւրդետանիա (մասն Անտալուսիոյ)՝ Ստրաբոն հաշուէ ոչ ինչ պակաս քան զերկերիւր քաղաքս[4]։ Ապա նոյնպէս, պատմագիր Սպանիական պատերազմացն, զբազմութիւն Թափառական ազգաց ասէ նուաճեալ Հռովմայեցւոց[5], և 'ի պատե-

1 Ստրաբոն, Գ· Դ· 130։

2 Պոլիբ· ԼԴ· Հատած, 8։

3 Գրիւ մի գարուոյ (32 լիտր) վաճառէր միոյ դրամակշռոյ (97 հարիւրեակ Ֆր·). գրիւ մի ցորենոյ՝ 9 դանգաց (իւր 1 Ֆր· 45 հր·)։ (Ուր 'ի Գալլիա 32 լիտր վաճառի միջին գնով 10 Ֆրանկաց)։ Մար մի գինւոյ (39 լիտր) արժէր դրամակշիռ մի (97 հր·)· նոպատառակ՝ դանգի միոյ (16 հր·) վաճառէր, նոյնպէս և այծ· գառն՝ յերկից ցչորս գանգս (50 ց60 հր·)· խոզ՝ 100 լեռից և 3 դրամակշռոյ (4 Ֆր· 85 հր·)· մաքի՝ 2 դրամակշիռ (1 Ֆր· 95· հր·)· եզն 'ի լուծ՝ 10 դրամակշիռ (9 Ֆր· 70 հր·)· ուղտ՝ 5 դրամակշիռ (4 Ֆր· 85 հր·)· չափ մի ԹՀոյ (26 հեկտակր·)՝ 3 դանգաց (45 հր·)։

4 Ստրաբոն, Գ· Բ· 116։

5 Ապպ· Պոփերպմոնի Սպանիոյ, Ա· 102։ — Պոմպէոս 'ի նշանակս յաղթութեան՝ կանգնեալ 'ի Ծովեզերս Կատալոնիոյ ցուցանէր նուաճել ութ հարիւր էօթանասուն և էօթն քաղաքս· (Պլին· Բն· Պմ· Գ· Դ· 18։) Համարէր Պլինիոս երկերիւր ինանուն և երեք քաղաքս Սպանիոյ որ յայսկոյս, և հարիւր էօթանասուն և ինն 'ի Բետիկէ· (Բն· Պմ· Գ· Դ· 18։) Մարթի ոք գուշակել զթիւ բնակչաց 'ի համարուէ զօրացն ընդդէմ Սկիպիոնեանց։ Ցաւելով զթիւս եղեալս 'ի մատենագրաց՝ հասանեմք 'ի թիւ ինչ ահագին յ'317,700 մարդկան սպանելոց 'ի մարտի և գերելոց· (Տիտ· Լիւ· Լ, և յաջորդն։) Ցամին 548 սեռանեմք զերկուս ազգս Սպանիոյ՝ զԻլերգետս և զԱսետանս, միացեալ ընդ ոմանս 'ի փոքունց Ժողովրդոց, 'ի զինել 30,000 հեծեալս և 4000 այրուձի· (Տիտ· Լիւ· ԻԹ· Ա։) Նշանակին 15 կամ 20 այլք, որոց ճիգն հաւասարք են կամ առաւելեալ։ Զկնի մարտին Ջամայ, Սպանիա հանդերձէր Ասդրուբալայ 50,000 հեծեալս և 4,500 հեծեալ· (Տիտ· Լիւ· ԻՀ· ԾՒ· ԾԳ։) Զև և այ երևեալ կատնի նուաստութիւնն Յանդիման Եմպորիոյ, գունդ մի 40,000 Սպանիացւոց, որ 'ի չքնաղեայ գաւառացն Ժողովեալ, պատրաստք էին 'ի վանել զնա· (Ապպ· Սպանիական պատերազմանդ· Խ· 147։) Ի Լուսիտանիա խակ 'ի նուաճն 'ի բազմամարդութեան, ան-

բազմին կն. Սկիպիոնի՝ ազգս առաւել քան զհարիւր և քսան լեալ անճառութ[1]։

Ապա ամենայն ցանկալ կղզին Իբերական էր յայնժամ՝ մի՛ և բազմանալով և՛ բազմահարուստ գաւառաց Եւրոպիոյ։

Դ. Հարաւային կէտք։

*Ոչ ինչ նուազ ցանկալի ընծայեն տեսարան և ծովեզերեայք կեցեալ աշխարհին՝ զոր Թանան ալիք Միջերկրականին։ Յոքնախուռն գաղթականաց եկեալ յայնժամ վարեալ էր զբազնակիսս Սեհոյ և զՎուանայ՛ի բերան Հռոդանոսի. և՛ ի մէջ կոյս երկրորդի գարու յառաջ քան զմեր Թուականն, անձկանային կեցեալ տահմանք աշխարհին։ Սոքա կիրճք՛ի քաղաքականութեան քան զԻբերացիս, ոչ ինչ նուազ քան զնոսա էին և բռունք. ընդ բազում ժրութեան կցորդէին զհամբոյր և զհիւրասէր բարս, առ որ ոչ սակաւ օգնէր կենակցութիւն ընդ գաղթականս Յունաց սիրեալս ընդ ծովեզերս Ալպեան լերանց մինչև ցՊիրենեանս։ Մշակութիւն երկրի և գարման անդէոց՝ գլխաւոր մեծութիւնք էին նոցա, և Հարստարութիւն նոցա էր՛ի շահաւետել զբերս երկրի և զանդեայց։ Գործէին և առ վերարկուք ոչինչ ընդհատ երևելիք քան զԻեղտիբերացին, և ածէին յաձախութեամբ Իտալիա։ Կեցք Հարտարք՛ի նաւարկութիւն՝ տանէին ընդ Սեհոս, ընդ Հռեհոս, ընդ Սան, ընդ Հռոդանոս և ընդ Լուար՝ աղխամաղխս վաճառաց և փայտս՛ի կառուցումն շինուածոց, ևս և՛ ծովեզերայց Մանչի, մերձ՛ի վաճառաշահ քաղաքս Փոլկէացւոց՛ի Միջերկրականին[2], Մգաթէա (Ակտ), Անտիպօլիս (Անթիպ), ՛ի Նիկէա (Նիս), ՛ի Սահեպաղեան կղզիս (Հիէր), և՛ի նաւահանգիստ Մոնակեանն

անուն Սերուխոսի Գալբայ և Լուկուլլեայ կոտորել 12,300 մարդիկ. (Ապպ. Սպանիական պատերազմունք, ԽԸ և ԽԹ. 170 և յաջորդն։) Թէպէտ ապականեալ և անմարդի կացուցեալ երկիրն յերեսաց երկուց զօրավարաց, սակայն՛ի սակաւ ամս պատրաստեր Վերիաթոյ զօրութիւն ահաւոր։

1 Տիտ. Լիւ. ԻԲ. Ի։

2 Ստրաբոն, Դ. Ա. 153. Բ. 157. Գ. 160։

Հերակլեայ (Մոնաքոյ), որոց էր կցորդութիւն ընդ Սպանիոյ և ընդ Իտալիոյ [1]։

Անճուկ էր յոյժ տահման Մասիլեայ, այլ ազդեցութիւն նորա հասանէր մինչև 'ի միջնաշխարհն Կելտաց։ Անդ որթ և ձիթենի ընտելացան օդոց աշխարհին։ Բիւրաւորք եզանց գային ամի ամի յարօտս նորա Ճարակել զծոթոր [2]։ Վաճառականք քաղաքին ընթանային յամենայն կողմանս Կելտաց 'ի վաճառ գինւոյ, և ձեռակերտաց իւրեանց [3]։ Ադանց ամբառնալոյ 'ի կարգ ծովեզերեայ մեծամեծ պետութեանց՝ փոքրիկ հասարակապետութիւնն Փովկէացւոց 'ի ձեռն բերոց իւրոց ոչ սակաւուց՝ մեծարոյ էր Կարթեդոնի, և ոչ յամեաց դաշնակից լինել Հռովմայեցւոց։ Անդստին 'ի հինգերորդ դարէ Հռովմայ էին վաճառանոցք Մասիլիացւոց 'ի Սիրակուսա, որպէս եղեն ապա և Ալեքսանդրիա սեղանաւորք 'ի նոցանէ, որ զանհնարին ժրութիւն նոցա հաւաստի առնեն 'ի վաճառականութիւն [4]։

Ե· Լիգուրիա, կելտք յայսկոյս Ալպեայց, վենետիա, և Լիբիկէ։

Լիգուրացիք ևեթ 'ի Տիւրրենական ծովու կէին դէմ և ամրեան կենօք, որպէս երբեմն Իբերացիք ազգակիցք նոցին։ Էին իսկ ոմանք 'ի ծովեզերեայ քաղաքաց նոցա՝ մանաւանդ Գենուա, վաճառաշահք· այլ աստատակութեամբ ընդ ծով [5] քան կարգօք վաճառականութեան պահէին [6]։

Ընդ հակառակն կելտք՝ որ յայսկոյս Ալպեայց բնակէալ՝ յաւուրց անտի Պոլիբեայ բազմանային դէմ յոյժ։ Հաւաստի առնեն զայս և կորուստք նոցա, զորս կրեցին ընդ ամս քսան և եօթն յամի 554 ց582, որք ըստ Տիտոսի Լիւեայ ընդ անկեալս 'ի մարտի և ընդ գերեալս՝ եղեն 257,400 այր [7]։ Կելտք բնա-

1 Տես զբանս Ամեռեայ Թիէրի· Պատ· կեսպ· Բ, 134 և յաջորդք· Գ· տպպր։
2 Պլին· ԻԱ· ԼՋ։
3 Դիոդ· Սիկիլ· Ե· ԽԶ։ — Ամիէն· Դ· ԼԶ· 94։
4 Դեմոսթենէս, Լր ճաա, Ընդդէմ Զենոդեմոյ, 980· ասպ· Պէքքէր։
5 Ստրաբոն, Դ· Զ· 169։
6 Դիոդ· Սիկիլ· Ե· Կթ։
7 Տես Տիտ· Լիւ· Լր ցխբ։

*կեալք յայսկոյս Ալեայց, պահելով զբնիկ իւրեանց բարս, կը-
ցուղութեամբ ընդ Եպուրացին հասեալ էին՝ ի կարգ ինչ քա-
ղաքականութեան։ Քաղաքք անդ սակաւք էին, այլ աւանք
բազումք[1]։ Սոքա պարապեալ՝ ի մշակութիւն որպէս զայլս՝ ի
Կելտաց, արածէին յանտառս իւրեանց երամակս խոզից այն-
չափ, մինչև բաւական լինել յաւուրս Սարաբոնի՝ ի պարէն
Հռովմայ[2]։ Դրամք յոսկւոյ զոյ գտեալք առ մեօք յայսկոյս
Ալպեայց, և մանաւանդ ընդ Պադոս և ընդ Ադդա գետ, որ
բերեն զդրոշմ Բոյոց և զժողովրդոց ոմանց Լիգուրացւոց, զո-
յանեն զառաստութիւն ոսկւոյ, զոր աւազախառն բերէին ալիք
գետոցն այնոցիկ[3]։ Եւ դարձեալ ոմանք՝ ի քաղաքաց, որոց
սկիզբն Եպուրացւոց անտի էր, որպէս Մանդուա և Պատա-
ւիոն, պահէին զՀետս քաղաքականութեան վաղնջուց ժամա-
նակաց՝ յոր ժողովուրդք Տոսկանայ տիրէին մինչև անդր խակ
քան զՊադոս։ Պատուիոն մերձ՝ ի ծով, մանգաւանային և քաղաք
վաճառաշահ, ՝ի վաղ ժամանակս ունէր երկիր ընդարձակ, և
կարէր զինուորել երկոտասան բիւրս[4]։ Փոխադրութիւն նախ-
րուց դիւրին էր ընդ ջրանցս՝ որ անցանէին ընդ Վենետիա, ըստ
մանկ պեղեալք Եպուրացւոց անտի. որպիսիք էին մանա-
ւանդ որք կցորդէին զՀռաւեննա ընդ Ադրիան, որ եղև ապա
Համբարանոց մեծ յայսկոյս Ալպեայց[5]։

Շահակցութիւն Վենետաց ընդ Գերմանիոյ, ընդ Լիւրի-
կեայ և ընդ Հռետիոյ վաղագոյն էր քան զՀռոմ և՝ ի վաղուց
անտի ժամանակաց գայր՝ ի Վենետիա սաթ՝ յափանց անտի
Պալտիկ ծովուն[6]։ Ամենայն վաճառաշահ որ ապա ժողովեցաւ
յԱկուիլէա քաղաք կառուցեալ՝ ի Հռովմայեցւոց յետ նուա-*

1 Սարաբոն, Ե. Ա. 179, 180։

2 Սարաբոն, Ե. Ա. 181։

3 Ի բնէ առատ էր ոսկի՝ ի կելտս, այլ ոսկեհանք և գետք ոսկեբերք վաղ
ապառեցան. զի երթայ և նուազէ զտութիւն կելտական ոսկեգրամոյ ըստ մերձե-
նալ յաւուրս աշխարհակալութեան Հռովմայեցւոց։

4 Սարաբոն, Ե. Ա. 177։ — Տիտ. Լիւ. Ժ. ԺԵ։

5 Պլին. Բն. Պատ. Գ. ԺԶ. 119։ — Մարտիալէս, Վէրսու. Դ. ԻԵ։ — Ճանապար-
հորդութիւն Անտոնինեայ, 126։

6 Պլին. Բն. Պատ. Լէ. Գ. յօդ. 43։

Հռոմէական վէնեւտայ, էր յայնժամ՝ ի վէնեւտս, և գաղթականք բազումք Հռոմէացւոց բնակեալք յայսկոյս ծովուն՝ յանդիման առնեն զամբաւ հարստութիւն նորին։ Վէնեւտք պատերազմ՝ ի մշակութիւն երկրի իւրեանց և՝ ի գարման ձկոց, կէին խաղաղական կենօք՝ որ դիւրէր զվաճառակցութիւն, և զկէմ ունէր աւազակութեան սղզաց սիւռլոյ՝ ի ծովեզերս հիւսիսոյ և արեւելից Ադրիականին։

Խարիացիք, Լիբուռնացիք և Լիւրիկեցիք, ահարկուք էին աւազակութեամբ ընդ ծով քան զօրութեամբ զինուց. թէ- թև և սրընթաց նաւակօք իւրեանց ծածկեալ զՀանդրին ծով, խափանէին գնաւարկութիւն ընդ Խաղիա և ընդ Յունաստան։ Յամին 824, հանէին Լիւրիկեցիք՝ ի ծով հարիւր նաւս լիբուռնեայս[1], ուր երկրախուռն զօրք նոցա էին աւելի քան զՀինգ հազար[2]։ Ադքաս էր Լիւրիկ, և հանդերձ արքայատոհմեամբ երկրին՝ ետայր բազում ինչ շահ Հռոմէացւոց։ Անտես լեալ էր անդ մշակութիւն յաւուրս իսկ Ստրաբոնի։ Բազմամարդ և էր Խարիա համեմատութեամբ տարածութեան երկրին[3], այլ ոչ աւելի քան զԴալմատիա և զԼիւրիկ. և՝ ի ժամանակին յայնմիկ, զորմէ խօսիմքս, չէր հասեալ՝ ի ծագանդր բարեբաստութեան՝ յոր ժամանեաց ապա հիմնարկութեամբ քաղաքին Տէրգեատեայ (Դրիեդէ) և Պոլայ։ Ադիատիկան՝ ի հնումն՝ որ ասլականէին զայն[4], և յայնմ հետէ զօրացան նաւահանգիստքն Վիւրրաքիոնի և Ադրիական՝ ի հին։

Զ· Եպիրոս։

Եպիրոս՝ բազմարօտ և բազմահովիւ, անջրպետեալ՝ ի նահատակ լերանց, բերէր զնամանութիւն Հելեւետիոյ։ Ամբրակիա (Ադդա) զոր Պիւռռոսի ընտրեալ էր իւր՝ ի բնակութիւն, եղև

1 Նաւք փոքունք, թեթեւաոտպատք և երագընթացք, յաճախ յատպատուկութիւն, յորջորջեալ յանուն ազգին՝ Լիբուռնեայք։

2 Պոլիբ· Բ· Ե։

3 Տիտ· Լիւ· ԽԱ· Բ· Դ· ԺԱ։

4 Պոլիբ· Բ· Ը։

քաղաք գեղեցիկ էր, և էին նորա թաղերը երկու։ Ապարանք թագաւորին (Պիւռէոն) էր արդարև թանգարան իմն. զի յամին 365 'ի շուք յաղթանակի Մ. Փուլվեայ Նոպիլիորի եւ անդրիս երկերիւր ութսուն և հինգ պղնձի, և երկերիւր և երեսուն մարմարեայ[1], հանդերձ նկարուք Զեւքսեայ՝ զոր յիշատակէ Պլինիոս[2]։ Եւ հատոյց յայնժամ քաղաքն Եպիրացւոց հինգ հարիւր քանքարս (2,900,000 ֆրանկս), և նուիրեաց բդեշխին պատկ ոսկի 'ի կշիռ հարիւր յիսուն քանքարաց (իբր 4,000 հազարակրամ)[3]։ Նախ քան զպատերազմին Պաւլոսի Եմիլիոսի Թուի բազմանալոյ լեալ երկիրս այս, և եօթանասուն քաղաք էին նորա ըստ մեծի մասին յերկրին Մոլոսացւոց[4]։ Յետ մարտին Պիւդնայ՝ զօրավարն Հռովմայեցի արար աւար մեծ 'ի քաղաքէս, մինչև իւրաքանչիւր ումեք 'ի հետեւակ զօրուէն ընդունել աւարաբաժին 200 դէնար (իբր 200 ֆրանկս), և մէն միւսմ 'ի հեծելոց՝ 400. Թող զմնան գանձուն՝ որ 'ի տուրկաց վաճառելոյ հասանէր ց150,000։

Լ. Յունաստան։

Ի սկիզբն առաջնոյ Կարթեդոնական պատերազմին 'ի քառակ գլխաւոր պետութիւնս բաժանէր Յունաստան. 'ի Մակեդոնիա, Աետոլիա, Աքայիա և 'ի Սպարտա։ Բռնանդակ մնացեալքն երկրին՝ որ տարածանի 'ի հիւսիսակողմն նեղջին Կորնթոսի մինչև ցլերիոս Պինդայ՝ էր ընդ ձեռամբ Փիլիպպեայ. իսկ արեւմտեան կողմն էր Ետոլացւոց։ Զմեծագունէս բաժանէին յիւրեանս Աքայեցիք, բռնաւորն Սպարտայ, և քաղաքք ազատք։ Ի Յունաստան, որ իբր 'ի դարէ հետէ խոնարհէր յանկումն, նուաղեալ էր ոչ պատերազմական, և պակասեալ բազմութիւն ժողովրդոց. բայց Պլուտարքոս Յունաց իմանայ զցեղ Հելլենաց, և յաւելու զի երկիր նոցա տայր թագաւորին ար-

1 Տիտ. Լիւ. Լթ. ե։
2 Պլին. Լը. կ։
3 Պոլիբ. Իբ. ժԳ։
4 Պոլիբ. Լ. ժե. Ե։ — Տիտ. Լիւ. Խե. ԼԴ։

ծաթ, պարկէնա և զՀանդէրձանս պատերազմի[1]։ Զօրութիւն Յունաց ընդ ծով ոչ ևս էր. դաշնակցութիւն Ս.քայիոյ՝ յորում էին Ս.րդոլիս, Կորնթոս, Սիկիոն և ծովեզերեայ քաղաքք Ս.քայիոյ, նուազունս յոյժ ունէր նաւս։ Ս.յլ երկրախումբ զօրութիւն Հելլենաց ոչ այնչափ նուազ էր։ Եւ ոչ միայն դաշնակցութեան էր բիւր մի զօրականաց, և՛ ի մարտին ընդդէմ Փիլիպպեայ՝ պանծայր առաւել քան զՀռոմայեցիս զօրավիգն լեալ՝ի Շնորհսն յաղթութիւն։ Սակայն դեռ ևս փարթամ էր Յունաստան յամենայնս ճարտարութիւն։ Յամին 535 թագաւորն Մակեդոնիոյ՝ինուաձել զքաղաքն Թերմէ յԵւոլիա՝ և զիա անդ անդրիս երիս հազար[2]։

Ս.Թենացիք, Թէպէտ և ոչ ևս ունէին զնախկինն տիրապետութիւն ընդ ծով, սակայն պահէին դեռ ևս զինացուած քաղաքականութեանն՝ ամբարձեալ երբեմն՝ի ծագ փառաց[3], և զանգման դաստակերտս Պերիկլեայ դարուն, որոյ անուն եւթ յուշ առնէ զՀրաշակերտս արուեստից և Ճարտարութեան։ Երևելի էր՝ի մէջ այլոց Ս.կրոպոլիս մեհենիւն Ս.Թենասայ (Պարթենոնիւ), կամարակապ անդաստակօքն (Պրոպիլէ), և հրաշակերտիւք Փիդիասայ՝ պատկերաւն դիցուհւոյն յոյկաց և՛ի փղոսկրեայ, և միւս այլ պղնձի պատկերաւ՝ որոյ նըշմարիտ՝ի հեռուստ՝ի ծովէ սաղաւարտ և գեղարդն[4]։ Զինանան Պէրէնիկ, կառուցեալ՝ի Փիլոնէ Ճարտարապետէ՝ էր ըստ Պլուտարքեայ գործ հրաշալեան[5]։

Սպարտա՝ Թէպէտ և անկեալ յամենայն զօրութենէ, տակաւին անուանի էր շինուածովքն և Ճարտարութեամբ։ Վաղճանացի նորա առաջին զարդ էր մեծահռչակ դահլիճն պարսկական[6], կառուցեալ յետ պարսկայնոց պատերազմանց,

1 Պլուտ.՝ի Փլամինէս, ԺԲ։
2 Պոլիբ. Ե. Թ։
3 Արիստիդէս, Համեմատական. էջ 149։
4 Պաւսանիաս, Աթթիկէ, ԻՀ։
5 Պլուտ.՝ի Սիլլա, Ի։
6 Պաւսանիաս, Լաքոնիա. ԺԱ։ — Պարտ է յիշատակել և զպղնձի մեհեանն Ս.Թենասայ երևելի, զկրկին կրթարանս, զծառաստանդ Ճեմելիս, և զմեծ հրապարակն՝ ուր խառն յաճախէին պատանիք։ (Պաւսանիաս, Լաքոնիա, ԺԴ։)

որոյ սիւնք՝ ի սպիտակ կճեայ յանդիման առնէին զպատկեր երևելեացն՝ ի պարտեզոյ։ Երկաթեն հատեալ առատութեամբ՝ ի լեռնէն Տայիզեատայ՝ զործէր զարմանալի օրինակաւ՝ ի Սպարտա, որոյ զործարանք զինուց և անօթոց հռչակաւորք էին[1]։ Ի ծովախուռնս Լակոնիոյ առատ գիւտք էին ծիրանաբեր խղկունեաց, որ պատուական գոյնք էին յետ փիւնիկեան ծիրանւոյն[2]։ Ի նաւահանգիստ Կիւթիոնի բազմանային և զործօն՝ յաւին 359 էին զեռ և մեծ ամեծ զինարանք[3]։

Ի միջոյն յաճախ կղզւոյն էր Սկիաթիա. և թէպէտ քնակիչք երկրին՝ ի տուարածական կեանս պատրաստեալ, սակայն սիրողք էին և արուեստից՝ որպէս զայլս՝ ի Յունաց։ Էին անդ մեհեանք երկու երևելիք. Սթենասին՝ ի Տեգէա՝ կառուցեալ՝ ի ձեռն Սկոպասայ Հարտարապետի[4], ուր էր տեսանել զերեսին և զարդս Հարտարապետութեան, և Սպոլոնին՝ ի Փիւգալիա[5], 3,000 ոտնաչափ՝ ի վեր քան զերեսս ծովու ունելով զնիստ, որոյ վրատակք անգամ՝ ի հիացումն էն ցարդ անցաւորաց։

Եւս՝ պաշտպանեալ զգուշութեամբն չիտելոյ յայս կամ յայն կողմն, զհետ էր խաղաղական արուեստից. միաբանութիւն բարգաւաճէր անդ, և որս ձկանց առատ յոյժ. բեհեզք գործեալք անդ մրցէին ընդ կերպասուց Կով կղզւոյ, և վաճառէին՝ ի կշիռ ոսկւոյ[6]։ Էր յԵլիս գեղեցկագոյնն՝ ի կրթարանաց Յունաստանի, ուր երբեմն ամառ իսկ յառաջ կանխէին կրթել՝ ի մրցումն Ողիմպիական խաղուց[7]։

Ողիմպիա էր քաղաք սրբազան, մեծահռչակ մեհենիւն և դիցանուէր պարտիզիւ, ուր՝ ի միջ բազմութեան հրաշակերտից ամբառնայր՝ ի հրաշալեաց աշխարհի՝ անդրիմն Սրանապ-

1 Ստեփան Բիւզանդացի, ՝ի բառն Լակեդոնիա, էջ 413։
2 Պաւսան. Լաքոնիա, ԻԱ։
3 Տիտ. Լիւ. ԼԴ. ԻԹ։
4 Պաւսան. Արքադիա, Խե։
5 Պաւսան. Արքադիա, ԽԱ։ — Յերկուսն և ութ սեանցն՝ երկուսն և երկուք տակաւին կանգուն կան։
6 Պլին. ԲՆ. Պմ. ԺԹ. Ա. 4։
7 Պաւսան. Ելիա, Բ. ԻԳ և ԻԴ։

դայ գործ Փիղեայ[1], որոյ այնպիսի էր վերհատուածքիւն՝ զի Պաւլոսի եմիլիոսի Թուէր յանդիման նորին իսկ աստուածոյն ՚ի տեսիլ նորին կալ։

Ասդա՝ խանձարուրք յոլովագունից ՚ի մեծանուն Հարտաց քաղաքէ՝ ունէր մերձեանս, ազբիւրս, կրճտարան և Թաւերս. և հրապարակ նորա լեալ էր երբեմն ասպարէզ Հակատամարտի զօրացն Պիւռոսի և Անտիոքոսեայ։ Եկայ ինձ նա՝ մինչև ընդ ձեռամբ իսկ Հռովմայեցւոց՝ ի ՚ի հոյակապ քաղաքաց Յունաստանի։ Ի սահմանս նորա էր մեծակառոյց տաճարն Հերայ, վաղեմի սրբարան Ասղխացւոց, յորում էր պատկեր գինուհւոյն յոսկւոյ և ՚ի փղոսկրէ ձեռագործ Պոլիկլետայ. անդ էր և Հռովմեան Նեմեայ, ուր կատարէր մին ՚ի քառեակ ազգային ոճից Յունաստանի[2]։ Էին յԱղղոլիս և Եպիդաւրեան ջերմուկք, և մերձեանն Ասկլեպեայ Հռո՚ի ճճնից հիւանդաց[3], և Թատր ընդարձակ՝ ի ՚ի մեծամեծ Թատերաց աշխարհին[4]։

Կորնթոսի յոյժ գեղեցիկ է բնակութիւն ՚ի վերայ անձուկ կրճին՝ որ բաժանէ զՊեղեան ծով ՚ի ծոցոյ՝ որ ՚ի նոյն անուն յորջորջի[5]։ Ասւեստ երանգոց, գործարանք երեւելիք գորգոց և պինձոյ՝ յուշ ածէին դեռ ևս զվաղեմի բարգաւաճանս Հելլենացց։ Բազմանարդ հարկ էր նմա գալ. զի քառասուն և վեց բիւր տրամք էին նորա[6]. ամենայն ուրեք ամբառնային ապարանք մարմարակուռք, զարդարեալք անդրեօք և մեծապին աճոթովք։ Կորնթոս համարէր զեղիս քան զամենայն քաղաքս։ Ի բազմութենէ մերձենից նորա՝ Աստղիանն աւելի քան զայլ ամենայն մերձեանս առնոյր սպաս ՚ի հազար և աւելի բոզից[7]։

1 Պաւսան. Եւիս, Ա. Բ։

2 Ստրաբոն, Ը. Զ. 319, 320։

3 Պաւսան. Կորնթոսոյ Բրիէր, ԻԸ. 1։

4 Պաւսան. Կորնթոսոյ Բրիէր, ԻԷ։

5 «Ոչ ևս հարկ էր վաճառականաց պատել զԿորնթեաւս, այլ ընդ Հանապարհ ուղղութ Հատանէին զկնիրճն ընդ անձկագոյն անցս, ուր Հատատեալ էր կազմած անուաձև՝ առ ՚ի փոխադրել զնաւս Թեթեւաբեռինս ծովէ ՚ի ծով, Հատուցանելով Կորնթոսի զերաւոնս անցից». (Ստրաբոն, Ը. Բ. 287, 288։ — Պոլիբիոս, Դ. ԺԹ։)

6 Պաւսան. Աթթիկէ, Բ։

7 Կիկ. Յաղագս Հատրախապէտութեան. Բ. Դ. 7, 8։ — Ստրաբ. Ը. Զ. 325։

ի վաճառս աւարին, զոր էառ Մուսիոս, պատկեր մի Բաքոսի նկարեալ յԱրիստիդեայ վաճառեցաւ 600,000 դահեկանաց[1]։ Ի յաղթանակին Մեսեղեայ Մակեդոնացւոյ էին կնոջ քոյր որդեաց դրօշեալ ի Հիւսիսպեայ՝ որ յանդիման առնէին զՄեծն Ալեքսանդր՝ կոտորելով ի Գրանիկեան մարտին քան և հինգ հեծեալս և հինն հետևակ. անդրիս այս յաւարի առաւ ի Կորնթոս, ուր աճեալ էր ի Դիոն քաղաքէ Մակեդոնիոյ[2]։

Ոչ ինչ նուազ և այլ քաղաք Յունաստանի Հոխք էին ձեռակերտօք Հարտարաց[3]։ Ի ժամանակս պատերազմաց Մակեդոնիոյ բարձին Հռովմայեցիք ի քաղաքէ փոքուէ Երեարիոյ բազմութիւն յոյժ նկարակերտ պատկերաց և մեծապին անդրեաց[4]։ Պատանիսս ուղևոր՝ բազում ինչ զարմանալի նուէրս պատմէ աճեալ յայլ և այլ աշխարհաց ի մեհեանն Դելփեայ։ Քաղաքս այս հանքաւեալ սրբութեամբ և պիտեան մեծահանդէս խաղուք, ասէիր ընդ Ողիմպեայ. կուռեալ ընդ դարս բազում ի մեհենի իւրում դանձ ամբաւ, և ի կողոպտել զայն Փովկէացւոց՝ դարն անդ ոսկի և արծաթ բաւական ի հատանել 10,000 քանքարս դրամոց (իբր 58 միլիոնս ֆրանքաց)։ Վաղեմի Հռոմէութիւն Յունաց անցեալ էր և ի գաղթականս նոցա, և ի ծագաց Սեաւ ծովուն մինչև յԱիւրենէ ամբառնային զնուաճք մեծապայծառք։

Ը. Մակեդոնիա։

Մակեդոնիա յաւուրց Մեծին Ալեքսանդրի ինքն ձգէր զմեծութիւնս և զպանձս Ասիոյ։ Տիրապետեալ մեծի մասին Յունաստանի և Թրակիոյ, նուաճեալ զԹեսալիա, ձգէր ըզձեռն իւր և ի վերայ Եպիրոսի, և ամենայն հզօր զօրութեամբ ուժոյ քաղաքաց, որ էրբեմն ազատք, և երկերիւր ամօք յառաջ նախանձընդդէմք էին իշխանութեան և քաջութեան մի-

1 Ստրաբ. Ը. 2. 327։ — Պլին. ԲՆ. պատ. ԼԵ. ծ. յօդ. 36։

2 Արրիանոս, Արշաւանք Ալէքսանդրի, Ա. 16։ — Վելլէյոս Պաուերկուլոս, Ա. ԺԱ։ — Պլուտ. յԱլէքսանդր, ԺԶ։

3 Աթենէոս, Ջ. 272։

4 Տիտ. Լիւ. ԼՐ. ԺԶ։

ժեանց։ Բարւոք մնասեսութեամբ Հասից՝ ի կալուածոց ալքատնի [1], ՚ի բոլոց արծաթոյ Պանգէոն լերինն և ՚ի Հարկաց՝ ընդէն ՚ի պէտս աշխատէին [2]։ Յամին 327 առաքէր Անտիպատոս զնա պատս ամբառ ՚ի Հռոդոս, որ ցուցանէ զքաւ Ճոխութեան Մակեդոնիոյ [3]։

Ց363 ամաւ շինութեան Հռովմայ, Փիլիպպոս ալքայ խոհական խորհրդով ամրացոյց զքօրութիւն Մակեդոնիոյ։ Ժողովէր ՚ի գինարանս անդր սպառազինութիւն երից բանակաց, և համբար տանուամեայ։ Ար Պերսէոսիւ ոչ ինչ նուազ բարգաւաճ էր Մակեդոնիա. եւ նա ալքային Կոտիւսայ փոխանակ վեցամեայ ծառայութեանն քանքարս երկերիւր՝ հազար հեծելովք [4]։ Ի Հակառամարտին Պիդնայ՝ յորում եղև կործանումն նորա ՚ի սպառ, բիւրք կրկին եղեն ՚ի նմանէ անկեալք, և մեռանան հազար ՚ի գերութիւն վարեալ [5]։ Պերճութիւն գինւոց և զարդուց մակեդոնական գնդից առաւելայր յոյժ քան զայլոցն։ Փաղանգն Լեւկասպիդ (Սպիտակասպար) զգենոյր ծիրանի, և կրէր սպառազինութիւն ոսկեզօծ. իսկ Քալկասպիդ (Պղնձասպար) փաղանգին էին վահանք յապնիւ պղնձոյ [6]։ Տապալման գերդաստանին արքունեացն Պերսէոյ, և որոյ ընդէն ունէին առ նմա, յայտ առնեն թէ յոր սահման հասեալ էր Ճոխութիւն Մակեդոնիոյ։ Սպասք զգեստուց և սեղանոյ ամենեցունցոցա հաւասարէին պերճութեան արքունեաց [7]։ Յաւա-

րի անդ Պաւլոսի Եմիլեայ էին պատկերք նկարակերտք և անդրիք, դրիք մեծահարուստք, անօթք ոսկւոյ և արծաթոյ, պղնձոյ և փղոսկրեայ՝ դոյզ Ճարտարաց առ հասարակ [8]. որոյ

1 Տիտ· Լիւ· ԽԵ· ԺՀ։

2 Տիտ· Լիւ· ԽՌ· ԺԲ։

3 Որ էր 100 քանքար արծաթոյ (582,000 ֆր·), 100,000 չափ ցորենոյ (52,500 հարիւրապետաւոր)· գարձեալ բազմութիւն յոյժ փայտից ՚ի շինութիւն, կուպր, երկաթ և կապար· (Պոլիբիոս, Ե· 27։)

4 Իբր 1,164,000 ֆր։ Պերսէոս խոստացեալ էր նմա զկրկինն· (Տիտ· Լիւ· ԽՌ· Կէ։)

5 Տիտ· Լիւ· ԽԴ· ԽԲ։

6 Տիտ· Լիւ· ԽԴ· ԽԱ։

7 Տիտ· Լիւ· ԽԵ· ԼԲ։

8 Տիտ· Լիւ· ԽԵ· ԼԴ։

ոչ մի յաղթանակ հաւասարէր նորայումն[1]: Վալերիոս Անտիոնայի աւելի քան զ120 միլիոն դահեկանս համարի (իբր 30 միլիոն Ֆրանքաց) զոսկին և զարծաթ ածեալ՝ ի շուք հանդիսին[2]: Յոմէ յայտ է զի՝ ի Մակեդոնիա էին ժողովեալ ամենայն վաղեմի ճոխութիւնք Յունաստանի:

Թրակիա՝ ի բազմից հետէ կացեալ վայրենի, ելանէր տակաւ՝ ի նուաստութենէ անտի՝ յոր անկեալն գնէր: Բազում հաստուածք՝ ի Յունաց բնակեալք յատուկս ևբդինեանն Պոնտոսի՝ ածէին անդր զքաղաքականութիւն և զարօրութիւն. մանաւանդ Բիւզանդիոն, թեպետ և յաճախ տապնասեալ յերեսաց խուժադուժ դրացեացն, վաղ իսկ վայելէր՝ ի մեծութիւն և յաջողութիւն՝ որ գուշակին լինէին հանդերձելոյ նորա բազդին[3]: Խուռն դիմեալ ամենուստ՝ ի քաղաք անդր հիւրք՝ մանաւանդ՝ ի նմա ցոփութիւն՝ որ յառակս եղև[4]: Վաճառականութիւն նորա առաւել՝ ի ձեռս նաւացն Ա.թենացւոց էր, որ գնային՝ ի լնդիր ցորենոյ՝ ի Տաւրիս և ձկանց ևբդինեանն Պոնտոս[5]: Եւ յորժամ Ա.թինք մերձ յանկումն իւր՝ յանիշխանութեան էր, Բիւզանդիոն՝ ուր բարգաւաճէին արուեստք և դպրութիւնք՝ ապաւէն էր տարագրելոց անտի:

1 Տեւաց հանդէսն զաւուրս երիս. յառաջնումն աւուր հազիւ կարացին անցանել 250 սայլք ակաղձեալք անդրեօք և նկարակերտ պատկերօք. յերկրորդումն սայլք զինաբարձք, որոց զհետ գնային 3,000 զօրականք տանելով 750 սափորս լի դրամովք արծաթոյ, իւրաքանչիւր՝ ի սափորից բարձեալ՝ ի ջորից՝ եւ բեալով քանքարս երիս (ընդ ամենայն աւելի քան զ13 միլիոն Ֆրանքս): Ցետ սոցա գային սայլք բարձեալ բերելով բաժակս արծաթիս քանդակեալս և դրուագեալս: Ցաւուրն երրորդի գային՝ ի հանդէս սայլք՝ բարձեալ բերելով դրամս ոսկիս յեօթանասուն և եօթն սափորս, իւրաքանչիւր ունելով քանքարս երիս (ընդ ամենայն 17 միլիոն): Ապա գայր բաժակ մի սուրբ՝ ի կշիռ տասն քանքարաց, ընդելուզեալ ակամբք պատուականօք, ըստ հրամանի Հռովմայեցւոց զօրավարին: Ա յս ամենայն առաջոյ երթայր գերեաց, Պերսէոսի և իւրոցն. և յետ ամենեցուն կառք յաղթողին. (Պլուտ. ՝ի Պաւլս Եմիլիոս, 1,6, 1,9:)

2 Տիտ. Լիւ. Խե. 1:

3 Պոլիբ. Դ. Լէ, Խդ, Խե:

4 Աթիաոսաէլ, Քաղաքագիտութիւն. Հ. Դ. յօգ. 1:—Ելիանոս, Պատմութիւն այլ և այլ. Գ. ԺԴ:

5 Ստրաբոն, Ի. ե. 258. ԺԲ. Գ. 467:

Թ· Փոքրն Ասիա :

Բազում գաւառք էին Փոքուն Ասիոյ, յորոց յոլովագոյնք՝ յետ բաժանելոյ յայլևայլ մասունս ինքնակալութեանն Ալեքսանդրի՝ կացին ինքնիշխանք։ Գլխաւորք՝ ի նոցանէ միաբանեցին՝ ի քառեակ խումբս, կազմելով Թագաւորութիւնս չորս. զՊոնտոսի, զԲիւթանիոյ, զԿապադովկիոյ և զՊերգամայ։ Թող զծովեզերեայ քաղաքս ոմանս Յունաց, որք պահէին զիւրեանց ինքնօրէն վարչութիւն, կամ ընդ նախիշխան տէրութեամբ Հռոդացւոց մնին։ Տարածութիւնք նոցա և սահմանք փոխոխէին յաձախ մինչև ցոլորապետութիւն Հռոմայեցւոց, և բազումք՝ ի գաւառաց անցին՝ ի միջէ յայլ պետութիւն։ Տէրութիւնքս այսոքիկ աւելի կամ նուազ կցորդք էին յաջողութեան Մակեդոնիոյ։

«Ասիա, ասէ Կիկերոն, այնքան ձոխ է և բերրի, զի արգասաւորութիւն երկրին, զանազանութիւն բերոյն, տարածութիւն արօտից, բազում այլևայլ վաճառք՝ զոր բարձեալ տանէին անտի վաճառականք, տան նմա առաւելութիւն անժխտելի՝ ի վերայ ամենայն կողմանց աշխարհի»[1]։

Ճոխութիւն Փոքրուն Ասիոյ յայտնի երևի՝ ի հարկաց անտի՝ զոր տայր նա զօրաւարաց Հռոմայեցւոց։ Թող զաւարս տաբեալս՝ ի Սկիպիոնէ՝ ի պատերազմին Անտիոքոսի, և՝ ի Մանլիոսէ վերայ յամին 565, Սիլլա՝ և յետ այնորիկ Լուկուլլոս և Պոմպէոս հանին անտի իւրաքանչիւր որ 20,000 քանքարա[2], նոյն չափ և բաշխեալ զօրականին, որ գումարի յանհեթեթ գումար իբր եօթն հարիւր միլիոնից՝ ընդ ան քան և հինգ։

Ժ· Թագաւորութիւն Պոնտոսի :

Ի քառեակ խմբէից գաւառաց Փոքրուն Ասիոյ, զոր՝ ի վեր անդր յիշատակեցաք, այն որ առաւել՝ ի հիւսիսակողմն ան-

1 Ճառ՝ ի դպատս Մանիլեան օրինաց, Զ։
2 Պլուտ· ի Սիլլա· իե։

կանէր, կազմէր զմեծ մասն Թագաւորութեան Պոնտոսի։ Գաւառս այս՝ որ էր վաղեմին այն Պոնտոսեանն Կապպադովկիա՝ երբեմն նախարարութիւն Պարսից, հնազանդեալ Ալեքսանդրի և յաջորդաց նորա, գլուխ ամբարձ յետ մարտին որ առ Իպսեաւ (453)։ Միհրդատ Գ. ընդարձակեաց զսահմանս նորա՝ յաւելեալ յայն զՊափլագոնիա, և ապա զԱինոպ և զԳաղատիա։ Հուպ ընդ հուպ ձգէր Պոնտոս՝ի Կոլքիսն ընդ արևելեան հիւսիս՝ ցԹոքրն Հայս ընդ արևելեան հարաւ, և յաբեմտից գայր՝ի հանբոյր ընդ Բիւթանիոյ։ Եւ այսպէս պետութիւնս այս կազմեալ յայնեայլ ազգաց, մօտ հասեալ կովկասու, տիրեալ՝ի վերայ Եւքսինեանն Պոնտոսի, այնեայլ արգասիս յայնեայլ նահանգս ընծայէր։ Ընդունէր գինի և ձէթ Յեգեան ծովէ, ցորեան՝ի Վոսփորէ, և ածէր՝ի դուրս աղիւերքաղուամ[1], իւղ դևինոյ[2]։՝ի բերոց նեղբնակաւառաց՝ առ՝ի Գաղղիսեայ[3], գեղմն յԱնկիւրիոյ, ձիան՝ի Հայաստանէ, ՝ի Մարաց և՝ի Պահլաւոնիոյ[4], երկաթ՝ի Քալիւբաց՝ վաստակաւորաց՝ի բուն Հարաւակողմեան Տրապիզոնի, հռչակեալս անդրանին յաւուրց Հոմերի, և յիշատակեալս՝ի Քսենոփոնեայ[5]։ Լին անդ և բուքս արծաթոյ՝ անտես լեալ առ Սորաքոնիս[6], և առ մեօք պեղեալ։ Նաւահանգիստք կարևորք՝ի վերայ Սեաւ ծովն բանային վաճառաց այսոցիկ Հանապարհ դիւրին սփռել ընդ աշխարհս ամենայն։ Լուկուլլոս եգիտ՝ի Սինոպ զմանն լինչ գանձուցն՝ որոյք շքեղացոյց զիւր յաղթանակ, և եւս մեզ վարկ մեծ զարթայութենէն Միհրդատայ[7]։ Չարմանալի էր՝ի Սինոպ

1 Ի մանաւորի Թիւնոս կամ բեղամիտ ձկան՝ որ յարգի էր ընդ ոլջոյն Յունաստան. (Սարաբոն, է. 2. 266. ԺԲ. Գ. 467, 470։)

2 Սարաբոն, ԺԲ. Գ. 470։

3 Սարաբոն, ԺԲ. Գ. 468։ Գաղղիանիա ձգէր յարևմուտեան հարաւ Ադիատիկ (Սամոն)։

4 Պոլիբ. Ե. ԽԴ, ԾԵ։ — Եզեկիէլ, ԻԷ. 13, 14։

5 Քսենոփոն, Նահանջ Բիւրոսն, Ե. ե. 34։ — Հոմեր, Իլիական, Բ. 857 (*)։

6 Սարաբոն, ԺԲ. Գ. 470։

7 Էր անդ անդրի ասկեղէն արքային Պոնտոսի՝ վէց ոտնաչափ՝ի բարձրութիւն, և՝ի ձեռին նորա սապար ընդելուզեալ յականց պատուականաց. քան կահա-

(*) Զորս Հայ թարգմանիչն Աւիթս կոչէ. «ՅԱւիթեայ՝ի հեռուստ, ուստի ծնունդք են արծաթոյ»։ Ծան. Խոր.։

արձանն Աւտոլիկեայ՝ միոյ ի դիւցազանց պաշտպանաց քաղաքին, զոր Ամենիայ Չարտարին[1]։

Տրապիզոն, որ յառաջ քան զԱեծն Միհրդատ՝ ընդ Թաւրոբ Պոնտոսի կայր զրեթէ յինքնիշխանութեան, առնէր վաճառաշահ յաշխարհս հեռաւորս։ Հանդոյն նմին և Ամիսոս (Սամսոն)[2] այլ հատուած ի Յունաց՝ առ Լուկուլլեա հանդերձ մի ի բարգաւաճ և ի հռչակաւոր քաղաքաց աշխարհին[3]։ Ի ներքնագաւառս՝ Ամասիա, որ եկաց ապա մի յերևելի ամրոցաց Փոքուն Ասիոյ և մայրաքաղաք Պոնտոսի, Թուի լեալ անուանի յառուրս կաղքեդոնական պատերազմացն։ Կաբիրա՝ որ ապա կոչեցաւ Սեբաստիա, և ապա Նեոկեսարիա, միջակէտ գիտական Թեծին Մեծին Միհրդատայ ընդդէմ Լուկուլլոսի, մեծահռչակ էր յոյժ հոյակապ մեհենիւն Լուսնոյ։ Յերկրին Կաբիրայ ցՀայաստան ոչ բազում ինչ աւուրց էր ճանապարհ՝ ըստ Լուկուլլոսի[4], և զՀռոմէութեան նորա կարեւք զջուր առնուլ ի գանձուցն մեծերից ի Տիգրանայ[5]։

Ասի և ի միտ առնուլ Թէ արդեօք Մեծն Միհրդատ յետ երկուց գարուց կարաց հանել ընդդէմ զօրութեան Հռոմայեցւոց բանակս զօրաց և տորմիղս նաւուց բազմապատմարս։ Էին նորա ի Սեաւ ծովու չորեքհարիւր նաւք[6], հեռուակազօր քան և հինգ բիւր, և ձիոս բիւր հեծեալ[7]. զի ընդունէր և զօրս ի Հայոց, ի Սկիւթացւոց, ի Մէոտեան լճէն և ի Թրակիոյ։

կալք սահմանեալ են անօթով արծաթոյ, և երեսուն և երկու այլք են անօթով ոսկւոյ, և զինք ոսկի և դրամք։ Զկահակալսն բարձեալ բերէին արք, և զհետ նոցա ջորիք ուր բեռնաբարձք մահճակալս ոսկիս, և ապա յիսուն և վեց այլ ևս ջորիք՝ քծուարս արծաթոյ, և հարիւր և եօթն այլք՝ դրամս արծաթոյ 2,700,000 դրամակշռոյ (2,619,000 ֆր.)։ (Պլուտարք ի Լուկուլլոս. Կ։)

1 Պլուտ. ի Լուկուլլոս, ԻԳ։

2 Ստրաբ. ԺԲ. Գ. 469, 470։

3 Ապպիանոս, Միհրդապէան պատերազմաց. ՀԸ։

4 Պլուտ. ի Լուկուլլոս, ԺԴ։

5 Տես որ ինչ պատմէ Պլուտարքոս (Լուկուլլոս, ԻԹ.) զՀռոմէութեանց և զԼիւկիանէ ամենազգի ձեռակերտաց Տիգրանակերտի։

6 Ապպ. Միհրդատ. պատեր. ԺԳ. 658. ԺԵ. 662. ԺԷ. 664։

7 Ապպ. Միհրդատ. պատեր. ԺԷ. 664։ Փոքր Հայք 1,000 այրուձի ասէր. իսկ Միհրդատայ հարիւր երեսուն գերանդազէն կառք էին։

ԺԱ. *Բիւրանիա։*

Բիւթանիա՝ գաւառ փոքուն Ասիոյ, որ անկանի ընդ Պրոպոնտոս, ընդ Սանգար գետ և ընդ Պափլագոնիա, էր թագաւորութիւն՝ ի սկիզբն Զ. դարուն Հռովմայ, սահմանակից Պոնտոսի. և էին՝ ի նմա այլ և այլ գաւառք յարակից Մուսիոյ և Փռիւգիոյ։ Էին անդ քաղաք բազումք՝ նախանձորդք վաճառականութեան ծովեզերեայց Պոնտոսի, և յանուանէ Նիկիա և Նիկոմիդիա։ Վերջինս այս կառուցեալ յամին 475 յարքայէն Նիկոմեդեայ Ա՝ արագ արագ ընդարձակէր[1]։ Հերակլիա Պոնտոսի՝ հաստուած Միլեսացւոց ընդ Սանգար և ընդ Պարթենիոս գետս, առնէր վաճառականութիւն՝ ի սիւրա, և զազաւոթիւն նորա չկարաց Մեծն Միհրդատ նուաճել։ Էր նորա նաւահանգիստ ընդարձակ և անբոյժ, պատսպարան բազմաթիւ նաւատորմի[2]։ Ոչ թէթև ինչ զօրութիւն էր և Բիւթանացւոց, զի զինէին՝ ի պատերազմին Նիկոմեդեայ ընդդէմ Միհրդատայ արս 56,000[3]։ Վաճառաշահ մեծ էր՝ ի ծովեզերեայս Բիւթանիոյ շահակցութեամբ պաղթականացն Յունաց. և միջերկրայք նորա ոչ ինչ նուազ բարգաւաճէին մշակութեամբ, մինչ և յաւուրս իսկ Ստրաբոնի հոչակէր աշխարհն վասն անդեայց իւրոց և հօտից[4]։

Ի գաւառաց Բիւթանիոյ զմին կալան Ակեսք (՝ի 478 ամի Հռովմայ), և երեք ցեղք՝ ի նոցանէ բաժանեցին զերկիրն յիւրեանս, տիրեալ անդ որպէս նախարարական իշխանութեամբ. և կոչեր երկիրն յանուն նոցա Գալատիա։ Քաղաք վաճառաշահ՝ ի նմա էին՝ Անկիւրիա, հանդրուան կարաւանաց Ասիոյ, և Պեսինոնտ, ուր՝ ի մայրաքաղաքացն հին կրօնիցն Փռիւգացւոց, ուր յոքնախաւսն դիմէին ուխտաւորք՝ ի պաշտօն Կիւբելեայ[5]։

1 Ստրաբ. ԺԲ. Գ. 482։ — Սահման Բիւզանդացւոյ, ՝ի բաւն Նիկոմիդեան։ — Պլին. ԲՆ. պար. Ե. ԼԲ. 149։

2 Ստրաբ. ԺԲ. Գ. 465։

3 Ափպ. Միհրդատ. պար. ԺԷ։

4 Ստրաբ. ԺԲ. Ե. 484։

5 Ստրաբ. (ԺԲ. Ե. 486) *կոչէ զՊեսինոնտ գլխաւոր՝ ի վաճառանոցս գաւառին։*

Բազմանարդ էր Գալատիա, զի ի մեծահռչակ պատերազմին Կնէոսի Մանլիոսի Վուլսոյ [1] յամին 565 անկան ի Գալատացւոց այսր 40,000 այր։ Արկին ցեղք ի նոցանէ Տեկտոսակք և Տրոկմեանք ի միասին յետ բազում պարտութեանց զինեալ տասն հազար 50,000 հեռևակազօր և 10,000 այրուձի [2]։

ԺԲ· *Կապպադովկիա։*

Յարևելակողմն Գալատիոյ ընդ միջ Ալիս գետոյ և Հայաստանի, հեռի ի ծովէ, անջրպետեալ ի բազում գօտեաց լերանց՝ էր Կապպադովկիա Թագաւորութիւն զերծ յաշխարհակալութեանց Ալեքսանդրի. յետ ոչ բազմաց ձկնի մահու նորա էհան Կապպադովկիա ընդդէմ Պերդիկկայ 30,000 հեռևակ և 15,000 հեծեալ [3]։ Ի ժամանակս Ստրաբոնի բովանդակ մեծութիւն աշխարհին էր ի ցորեան և յանդեայս [4]։ Յամին 566 ալքայն Արիարաթ հատուցանէր 600 քանքար առ ի լինել դաշնակից Հռովմայեցւոց [5]։ Մաժակ, որ ապա կոչեցաւն Կեսարիա, մայրաքաղաք Կապպադովկիոյ, քաղաք բնիկ ասիական, ի վաղուց հետէ հռչակէր վասն արուեստից [6]։

ԺԳ· *Պերգամական թագաւորութիւն։*

Արևմտակողմն Փռիգիոն Ասիոյ ծանօթագոյն է մեզ, յորում յետ մարտին Իպսոսի եկաց Թագաւորութիւն Պերգամոնի, և մեծաւ առատաձեռնութեամբ Հռովմայեցւոց առ նեմենէս Բ տակաւ զօրացեալ, անկաւ ապա ընդ նոցին իշխանութեամբ։

1 Տիտ· Լիւ· ԼԸ· ԽԹ։
2 Տիտ· Լիւ· ԼԸ· ԽԶ։
3 Դիոդոր Սիկիլեացի, ԺԸ· ԺԶ։
4 Ստրաբ· ԺԲ· Գ· 462։
5 Գրանքս լոյր երեք միլիոն և կէս· (Տիտ· Լիւ· ԼԸ· ԼԲ·)։— Տես Ազաթիաս, Պաւերաղմանէ Ասորոց, ԽԲ· 602։ — «Դեսպարիոս էառ ի Հոլոփեռնեայ յետ ոչ բազմաց ինչ ժամանակաց քանքարս հազար (5,821,000 ֆր·), վասն հաստատելոյ զնա ի գահ Թագաւորութեան Կապպադովկիոյ»· Ազաթ· Պաւեր· Ասորոց, ԽԸ· 607։)
6 Ստրաբ· ԺԲ· Ե· 461–462։

ի Թագաւորութիւնս յայս յարեցան Միւսիա, կրկին Փռիւգիայք, Լիկայոնիա, և Լիւդիա: Վերջինս այս գաւառ՝ անջրպետեալ ի Պակտոլ գետոյ՝ ունէր մայրաքաղաք զԵփեսոս, որ էր գլխաւոր քաղաք Յոնիական դաշնակցութեան, առաջին Թանգարան վաճառուց Փոքրոն Ասիոյ, և ուր գեղարուեստք պայծառացան ծաղկէին: Էին նորա կրկին նաւահանգիստք, յորոց առաջինն երկայնէր մինչև ցմիջնաւէտ քաղաքին, իսկ միւսն կապէր առագաստի ի միջոյ անդ հաստատուց վաճառանոցի[1]: Թէատրոնն Եփեսոսի, քան զոր ընդարձակագոյն ուրեք երբեք չէր կառուցեալ, վեց հարիւր վաթսուն ոտնաչափ էր ի տրամագիծ, և տանէր աւելի քան զվաթսուն հազար հանդիսատես: Ընտանիք ի Հարտարս Ակոպաս, Պրաքսիտելէս և այլք վաստակեցին ի շինութիւն մեհենին մեծի Արտեմեայ Եփեսոս: Չերկերիւր և չքսան սմն կառուցաւ մեհեանն այն, զոր շուրջ պատէին 128 սիւնք, պարգեւք միոյ միոյ ի Թագաւորաց, և իւրաքանչիւրոցն բարձրութիւն 60 ոտնաչափ: Պերգամոն մայրաքաղաք Թագաւորութեանն՝ ի կր ի գեղեցիկ քաղաքաց Ասիոյ. «Պանծագոյն Պերգամոն յԱսիա», ասէ Պլինիոս[2]: Նաւահանգիստս Եփեսոսի ունէր նաւարանս բաւական ի հանդերձել զբազմութիւն նաւուց[3]: Մինջաբերդն Պերգամոնի էր ամրոց անմատոյց պաշտպանեալ երկուստեք ի հեղեղատից. և բնակէին անդ Աստուածունք: Թագաւորքս այսոքիկ նախանձաւոր պաշտպանք գիտութեանց և արուեստից՝ կանգնեալ էին ի մայրաքաղաքի անդ մատենադարան 200,000 մատենից[4]: Պերգամոնք էր վաճառաշահ մինչև յաշխարհս հեռի. արմունք երկրին սիրէին առատ ընդ մեծ մասն Յունաստանի[5]: Ախզի-

1 Փալքէնէր, Եփեսոս. Լոնտոն, 1862:

2 Պլին. Բն. Պմ. Ե. Լ. 126:

3 Առաւել առնէին արդիւնք նաւուց Թագաւորացն Պերգամոնի. (Տիտ. Լիւ. ԼՐ. Խ. 13. ԽՊ. ԻՀ:)

4 Անուանա Պերգամոս լսի ցարդ յայժմեւ եւրոպական բարբառս ի բառն էէր-համէնա (որ է՝ մագաղաթ), որ պատրաստէին երբեմն ի քաղաքիս ի պէտս գրութեան, յետ արդելոյ Պտղոմեանց չհանել յաշխարհէն զպատկերն եգիպտական:

5 Առաւելս Ա արքայ Պերգամոնի տայր Սիկիոնացւոց 10,000 գրեթա ցորեաց. (Տիտ. Լիւ. ԼՐ. Խ.). Եւմենէս Բ 80,000 տայր Հռոդացւոց ի փոխ. (Պոլիբիոս, ԼԱ. ԺԷ. 2:)

կոն՝ որ մոյէրն ընդ Ձոխապոյն քաղաքս Ասիոյ, կառուցեալ էր ի կղզւոջ ուրեք Պրոպոնտեայ կրկին շրջափակ նաւահանգըստօք՝ որոց ընդարձակութիւն բաւական էր ի տանել նաւս իբր երկերիւր [1]։ Հանդոյն Ատրամիտեայ [2] վաճառաշահ մեծ էր խնկոց անուշից, անոպատ քարահատից մարմարիոնի ի Պրոկոննէս կղզւոյ [3]. և այնպէս ընդարձակ էր կցորդութիւն նորա ընդհանուր, զի ոսկի դրամ նորա ընդունել էր ամենայն սեղանատրաց Ասիոյ [4]։ Ազիւղոս քաղաքի էին բովք ոսկւոյ [5]. իսկ Ատտոսի ցորեան հանարկեր ընտրելապոյն քան զամենայն կողմանս աշխարհի, և պահէր սեղանոյ Թագաւորացն Պարսից [6]։

Մարթիւք զբաղ առնուլ բազմամարդութեան և Ձոխութեան մասինս Ասիոյ՝ յերկրախառնն և ի նաւախառնն զօրութենէ նորա, զոր Թագաւորք երկրին առաքէին Հռովմայեցւոց ցաց ի Թիկոնս ի ժամանակս պատերազմանց և աշխարհակալութեան նոցա ի Յունաստան։ Ատտալոս Ա. ի 555, և յետոյ ամաց եւմենէս Բ՝ առաքեցին Հռովմայեցւոց բազմութիւն հինգհարիւրեան պատերազմիկ նաւուց [7]. այլ երկրախառնքն զօրութիւն նոցա նուազ էր յոյժ [8]։ Իշխանութիւն Թագաւորացս այսոցիկ ոչ յոյժ տարածանէր, սակայն էին նոցա քաղաքք հարկատուք. վասն որոյ էր նոցա զանձ բազում, այլ բանակ սակաւաձեռն. յաշխարհէ աստի, որ արդ անուն է և անմարդի, հանէին Հռովմայեցիք հարկս ամբաւ յոսկւոյ և ի ցորենոյ [9]։ Եբեզութիւն յաղթանակին Մանլիոսի, և առաքինութիւնք Տիտոսի Վեսպասիանոսի զայնմանէ ընդ վկայութիւնս երդո-

1 Ատրաբ· ԺԲ· Ը· 492։
2 Աթեն· ԺԵ· ԼԸ· 513· ապ· Ըվայհայզէր։
3 Ծոմէ Մարմարա՝ ի քարահատից ասոյ կալաւ զանուն։
4 Սոփէտ Կի-Ւիւեղէտ, յոլմէ Ծէտէն։
5 Ատրաբ· ԺԲ· Ը· 492, 493։
6 Ատրաբ· ԺԵ· Գ· 626։
7 Տիտ· Վիւ· ԼԲ· ԺԶ· ԼՉ· ԽԳ։
8 Տիտ· Վիւ· ԼԷ· Ը։
9 Մոլագեան իշխան, որ Թագաւորէրն՝ի Կիբիւրէ Փռիւգիոյ, ասէր քանքարս հարիւր, և չափս արմաւոյ 10,000· (Պոլիբիոս, ԻԲ, ԺԷ։ — Տիտ· Վիւ· ԼԸ, ԺԴ, ԺԵ·)· Տէրմիոս քաղաք յիոնիս քանքարս, նոյնչափ և Ամֆէնդոս, Սոգալասոս և ամենայն քաղաքք Պամֆիլիոյ հասոյցանէին· (Պոլիբիոս, ԺԲ· ԺԸ, ԺԹ·)· իսկ քաղաքք կողմանցս այսոցիկ Ասիոյ ըստ առաջնումն սակի զօրավարին Հռովմայե-

տեայ, յայտնեն լիուլի զՀոխուԹիւն Թագաւորութեան պերպաման: Գանգի յետ պատերազմին ընդ Անտիոքոսի և արշաւանաց Մանլիոսի անդր, եմուտ զեղխուԹիւն՝ի Հռոմ[1], զօրաց և զօրավարաց յղփացեալ մեծուԹեամբ յԱսիա[2]:

Յոմիոյ և Եւրեայ վաղեմի հատուածք կլազոմեն և Կոլոփոն և այլք բազումք՝ որք ընդ Պերգամեան ԹագաւորուԹեամբ կային, անկեալ էին՝ի նախնի փառաց իւրեանց: Զմիւռնիա վերստին կառուցեալ յԱլեքսանդրէ, զարմանալի էր տակաւին հրաշակերտիւք իւրովք: Գինիք հռչակաւորք ծովեզերեայցն Յոնիոյ և կղզեաց շուրջանակի, յաձախեին զվաճառականուԹիւն, մանաւանդ՝ինաւահանդիստս Եգեան ծովուն:

Ասիայի էր ՍամոԹրակեայ մեհենին գանձուց ամբաւուԹիւն, զի հարկ առնէ յիշատակել առասնօր որ ինչ պատմի վկզբոյ փոքուէ՝ որ բնակէրն հեռի յԱսիոյ՝ մերձ՝ի ծովափոնս Թրակիոյ. զի զօրականք Սիլլայ՝ի մեհենէ անտի գիցն կաբիրաց աւար առին զարդ ինչ 1,000 քանքարաց[3], (այն է 5,820,000 Ֆրանքաց):

ԺԴ. Կարիա, Լիկիա և Կիլիկիա:

Ի հարաւային ափունս Փռիգիոյ Ասիոյ քաղաք ոմանք՝ի հարուածոյ կամ յերկերիւրոյ ամաց հեռի անխափուտ պահէին զմեծուԹիւն իւրեանց, յոր ժամանեալն էին: Կարիոյ մայրաքաղաք էր Ալիկառնաս, քաղաք հզօր կրկին միջնաբերդիւք ամրացեալ[4], և հռչակաւոր չքնաղակերտիւն յունական արուեստին՝ Մաւսոլեան շիրմանն: Թէպէտ և արդաւանդ յոյժ էր

ցոց հատուցին քանքարս 600 (երիք միլիոն և կէս Ֆրանքս). ետուն դարձեալ 60,000 չափս արմտեաց:

1 Տիտ. Լիւ. ԼԹ. 2:

2 Թէպէտ և Մանլիոս՝ի դարձի իւրում կողոպտեալ՝ի լեռնականաց անտի Թրակիոյ կորոյս մասն ինչ ամբաւ աւարին, սակայն տանէր՝ի յաղԹանակին պատկառոյ 212 լատից, արծաԹ՝ 220,000, և ոսկի՝ 2,103 լատից, և դիպուածմամբ աստիկեցիս 127,000, խառնակիրս 250,000 և Փիլիպպեան դահեկանս ոսկիս 16,320. (Տիտ. Լիւ. ԼԹ. է:)

3 Ապպ. Միհր. պոպէրպմ. կԳ:

4 Ալբիանոս, Պոպէրպմոռմ Ալէքսանդրէ, Ա. իԳ: — Դիոդոր, ժԷ. իԳ:

Էրկիրն, սակայն սովորութիւն էր կարիացւոց վարձկանել իբրև զԿրետացիս՝ ի զինուորութիւն Յունաց[1]։ Ի Կարիա էր յունական քաղաքն Միլետոս քառեակ նաւահանգստօք[2]։ Միլետացիք ինքնին միայնակ՝ ի քաղաքականութիւն աճեալ էին զաւիտեան Սեաւ ծովուն, զաղթականս ոչ ինչ նուազ քան զութեսուն հաստատեալ անդ[3]։

Իւիւոյ՝ որ բնակէրն ընդ միջ Կարիոյ և Կիլիկիոյ, մերթ ազատ և մերթ ընդ օտար լծով, էին քաղաք մեծահարուստք և վաճառաշահք։ Մանաւանդ հռչակաւորն՝ ի նոսա վաղեմի Սպիտնեան պատգամախօսին՝ ոչ ինչ նուազ քան զԴելփեանն երևելեաւ, և ընդարձակ նաւահանգստին՝[4] որ տանէր զամենայն իսկ զնաւատորմիղն Անտիոքոսի արքայի՝ զհրկիզեալն՝ ի Փաբխոսէ յամին 565[5]. ասէր իսկ զՊատարա։ Մեծագոյնն՝ ի քաղաքս Կանանիա՝ ուր ընդ գեան հանգուցեալ էին նաւք, զկնի աւարհարութեան Բրուտոսի անկաւ՝ ի նախնի մեծութենէն[6]։ Ջնոյն հարստահարութիւնս և՝ ի Պարթից կրէր երբեմն վասն հարստութեանցն իւրոց[7]։ Բազմամարդութիւն Իւիւոյ երթայր և նուաղէր ընդ ձեռամբ Հռովմայեցւոց, և յուեթերորդ դարու Հռովմայ՝[8] յեօթանասունն քաղաքաց նորա միայն երեւան և վեց։

Ծովախումբք Կիլիկիոյ ընդ արևելս չէին ինչ բարգաւաճ. մերթ ընդ մակեդոնական, մերթ ընդ եգիպտական և մերթ ընդ ասորեական ձեռամբ անկեալ՝ ապաւէնք էին հինից, զորս խրախուսէին Թագաւորք Եգիպտացւոց հեռու ընդ Սելևկացւոց[9]։ Ի բարձրաբերձ լերանց, որ անջրպետեն զմի մասն դաշտիս, լինէին եւրազակք կողոպտել զբարեբեր դաշտիցս

1 Ասրաբ· ԺԴ· Բ· 565։
2 Ասրաբ· ԺԴ· Ա· 542։
3 Պլին· Բն· պմ· Ե· իթ, և։
4 Ասրաբ· ԺԴ· Գ· 568։
5 Տիտ· Լիւ· ԼԸ· ԼԹ։
6 Սկիւլաքս Կարիանոացի, Նաւագնաց աշխարհին, 39· ապ· Հրատրնի։ — Դիոն Կասսիոս, խէ· ԼԴ։
7 Երոդոտոս, Ա· ճՀՋ։
8 Պլին· Բն· պմ· Ե· իէ· 101։
9 Ասրաբ· ԺԴ· Ե· 571։

տարածեալս ընդ արևեբս (դաշտային Կիլիկիա)[1]։ Բարգաւաճ էր կողմն աշխարհին, զոր ուռոգէին Կուդնոս գետ և Պիւրամոս. վասն զի անդ էր գործարան թանձր կտաւուց, և վաճառք քրքմոյ։ Անդ էին և նախնիքն Տարսոն, քաղաք երբեմն նախարարանիստ, որոյ տուրևառ մեծ էր ընդ Տիւրոսի[2]. և Սոլէս, որում Ալեքսանդր արկ հարկ հարիւր քանքար՝ ի պատուհաս հաւատարմութեան նորա ընդ Պարսիկս[3], և որ ծովեզերեայ բնակութեամբն նախանձ արկանէր Հռոդացւոց[4]։ Սոքա և այլ ևս քաղաք ծովեզերեայք յետ Ճակատամարտին Իսոսի մնին՝ ի կցորդութիւն վաճառականութեանն մեծի, որոց առնչակիանք եղեն գաւառք Սորւոց։

ԺԵ. Սիւրիա կամ Ասորիք։

Հաստատութեամբ պետութեան Սելևկեացւոց յունական քաղաքականութիւն մուտ գտանէր մինչև՝ ի ներքնակողմն Ասիոյ, ուր արևելեան դանդաղութեան՝ յաջորդէր ժրութիւն արևմտեան։ Պարսկութիւնք և արուեստք հելլենականք ծաղկէին՝ ի Փիւնիկեան ծովին մինչև ցեզերս Եփրատայ։ Կաուսեան քաղաք բազումք Ասորիս և Ասորեստան՝ հոյակապք յունական ճոխութեամբ և ախորժակօք[5]։ Ոմանք՝ ի քաղաքաց աստ աւեր կային առ Պլինեաւ[6]։ Սելևկիա՝ կանգնեալ՝ ի Սելևկեայ Նիկատորէ՝ ի բերան Որոնտ գետոյ, ընդ այլսոր քաղաքս կառուցեալս՝ ի նմանէ ընկալաւ զանուն հիմնադրի ցոյն-

1 Սորաբ. ԺԴ. ե. 570։

2 Ոմնէր գետ ևս Տարսոն առ Սորաբոնիս նաւահանգստեան (ԺԴ. ե. 574)։

3 Արրիանոս, Անաբաս, Բ. ե։

4 Պոլիբ. ԻԲ. է։

5 Վէշտասան քաղաքս կաուցեալ Սելևկոս անուանեալս Անտիոք, հինգ՝ Լաոդիկէ, ինն՝ Սելևկիա, երեք՝ Ապամէա, մի՝ Սորաստոնիկէ, և բազումս այլս՝ որ ընկալան գարձեալ յունական անուանս. (Ապպ. Պոպէրապմանի Ասորոց, Ժէ. 622)։

— Պատմէ Պլինիոս (Բն. Պպ. Զ. ԻԶ. 117) զի Սելևկեանք բնակեցուցին զԲաբելացիս՝ ի քաղաքս, որք՝ ի սկզբան յաւանս բնակէին և չէր նոցա այլ քաղաք քան զՆինուէ և քան զԲաբիլոն։

6 Յիշէ Պլինիոս (Բն. Պպ. Զ. ԻԶ. 119) զմի՝ ի քաղաքացս՝ որոյ 70 ասպարէզ էր շրջապատ, և ամրոց միայն էր յաւուրս իւր։

ատրի պետութեան, և եկայ նաւահանգիստ աշխարհամուտ։ Ջնալէն գետով կատուցեալ և քաղաքն Անտիոք՝ եկայ նաւ- խանձոլդ գեղեցկագոյն քաղաքաց Եգիպտոսի և Յունաստա- նի յաձախութեամբ շինուածոցն, լայնարձակ հրապարակօք, հոյակապ մեհենիւք և անդրեօք [1]։ Պարիսպք նորա կանգնեալ 'ի ձեռն Բաբենեոսի Հարտատպետի՝ 'ի հրաշալեաց համարի էր, և 'ի միջոցի դարու աւերակք նորա հրաշագործանէին զան- ցաւորս [2]։ Անտիոքայ քառեակ թաղք էին՝ իւրաքանչիւր ուրոյն պարսպապատ [3]. և շրջաբերութեան հասարակացն պարսպի՝ որ կցորդէր զամենեսեան 'ի մի՝ թուի լեալ վեցից փարսա- խաց տարածութիւն։ Ոչ ինչ կարի հեռի 'ի քաղաքէ անտի բնակէր Դաւինէ բազմազուարճ, ուրոյ անուանն նուիրեալ Ա- պոլոնի և Անահտայ, տեղի էր հասարակաց պաշտամանն, և խմբէին անդ մեծապայծառ ժողք [4]։ Այսպահ՝ երևելի էր ա- րօտիւք իւրովք, և էին անդ Սելևկեայ կոյտք մատակ ձիոց երեսուն հազար, և ձիան մատակախառնձ երեք հարիւր, և փղք [5] հինգհարիւր։ Տաճար արեգական 'ի Հելիոպօլիս (որ արդ կոչի Պաալպէք) էր շինուած հսկայաձև, ոչ ուրեք այնպիսի ինչ երբէք երևեալ [6]։

Ջօրութիւն պետութեան Սելևկիացւոց 'ի ծագ մեծու- թեան էր հասեալ յանկանելն ընդ լծոլ Հռովմայեցւոց։ Տա- րածեալ ձգէր նա 'ի Միջերկրական ծովէ ցՈքսոս և ցԿովկաս, և բովանդակէր զամենայն գաւառս նախնոյ պարս- կական պետութեան, բնակեալս յայլազգի և յայլաշխարհի ժողովրդոց [7]։ Մարաստան երկիր էր արդաւանդահող, և մայ- րաքաղաք նորա Եկբատան, զոր Պոլիբիոս ցուցանէ բստ Ան-

1 Ստրաբ· ԺԶ· Բ· 638։ — Պաւսան· Զ· Բ· յօդ· 7։
2 Յովհաննէս Մալալաս, ժամանակագրութիւն· Ը· 200 և 202, տպ· Տինտորֆ։
3 Ստրաբ· ԺԶ· Բ· 638։
4 Ստրաբ· ԺԶ· Բ· 639։
5 Ստրաբ· ԺԶ· Բ· 640։
6 Ի հազարըմ, որոյ 1,000 ոտնաչափ էր երկայնութիւն, և 300 լայնութիւն, ամբառնայր մեհեանս, կառուցեալ վիմօք կոփածոյիւք 70 ոտնաչափ յերկայնու- թիւն։
7 Սելևկեան պետութիւն բովանդակէր յեօթանասուն և երկու նախարարու- թիւնս· (Ապպ· Պաբերաղմանի Աորտոյ· ԿԲ· 630)։

խութեան և ըստ հաւատալի պերճուԹեան ապարանիցն գեր ’ի վերոյ քան զայլ ամենայն քաղաքս Ասիոյ, մինչեւ աւար հա- րեալ Անտիոքոսէ Գ.[1]։ Բաբելոն՝ երբեմն շահաստան հզօր պե- տուԹեան, և փիւնիկէ՝ ընդ երկար վաճառաշահ քան զամե- նայն կողմանս աշխարհի, մարզք էին Ասորւոց, և հասանէին ցսահմանս ՊարԹևաց։ Կարաւանք՝ ընդ Ճանապարհ, որ ընդ դարս բազում եկաց մինչ անփոփոխ, կցորդէին զԱսորիս ընդ Ադրաբիոյ[2]. ուստի գային նմա ոսխիազ, փղոսկր, բուլիձայք, ռետին և համեմունք. և նաւահանգիստք Ասորւոց էին հան- գրուանք և անդորրք հանելոյ զվաճառան մինչև ցՀնդիկս, ուր Սելևկոս Ա. երԹեալ էր անձամբ կռել դաշինս վաճառա- կցուԹեան ընդ արքային Սանդրոկոտոսի։ Վաճառք երկրիս ելանէին ընդ Եփրատ մինչև ’ի Թապսակ, և անտի սփռէին ընդ ամենայն դաւառս[3]։ Ախչափ հեռաւոր և բազմապատիկ կցորդուԹիւնք յայտնի առնեն զպատճառս բարգաւաճելոյ տէրուԹեան Սելևկիացւոց։ Մոյկր Բաբելացւոց ընդ փո- փոյ ’ի հիւս ոսկեմանս. ծիրանին և կերպասք Տիւրոսի, ապա- կեղէնք, ձեռագործք ոսկերչաց և նեղուկք Սիդոնի՝ երԹային ’ի հեռաստան, և տարածանէր վաճառականուԹիւն նորա մին- չև ցծագս Ասիոյ։ Ի սահմանաց Սիւրիացւոց աշխարհին առա- քէին կերպասք մետաքսեայք մինչև ցդրունս Կազբից (ցԿաս- բից), և անտի ’ի ձեռն կարաւանից ածէին ’ի Տիւրոսիան ծով, ’ի Միջագետս և ’ի Պոնտոս[4]։ Յետ ժամանակի արշա- ւանք ՊարԹևաց կալան զՃանապարհս, և արգելին առաջի Յունաց զկողս Ասիոյ։ Վասն որոյ Սելևկոս Նիկատոր խորհուրդ կալաւ բանալ Ճանապարհ ուղիղ ընդ Յունաստան և ընդ Բակ-

1 Պոլիբ. ժ. իէ. Հասոյց Եկբատան Անտիոքոսի Գ. հարկս չորեքհազար քան- քարաց (քանքար առասիկեցի, որ է 23,284,000 ֆր.), հանեալ յարծաԹափայտ տանեաց մերոյ ’ի մերենից. իսկ Մեծին Ալեքսանդրի կանխեալ հանեալ էր զար- ծաԹն որ ’ի տանիս արքունի ապարանիցն։

2 Երկին Գերհա Ադրաբիա՝ հասուցանէր Անտիոքոսի հարկս 500 քանքարաց (քանքար առասիկեցի, որ է 2,910,500 ֆր.). (Պոլիբիոս, ժ.Գ. թ.)։ — Էր երե- քեմն առատուԹիւն ոսկւոյ յԱդրաբիա. (Յոբ իԼ. 1, 2։ — Դիոդոր Սիկիլիա- ցի. Բ. ծ.)։

3 Ստրաբ. ԺԶ. Դ. 652։

4 Ստրաբ. ԺԱ. Բ. 426, և յայլսդպ։

տրիա՝ պեղելով ջրանցք՝ ի Սեաւ ծովէ՝ ի Կասպիականն[1]։ Բովք ոսկւոյ և արծաթոյ սակաւապիտաք էին յԱմորիս. այլ ոսկի և արծաթ՝ աճեալ յԱլբաբիոյ և՝ ի միջերկրայեայ Ասիոյ՝ ի ձեռն փխանակեցւոց՝ յորդեալ զեղոյր անդ։ Մարթ էր՝ ի միտ առնուլ զջաւր հարստութեան Սելևկիոյ՝ որ՝ ի վերայ Տիգրիս գետոյ՝ ի հարկաց, զոր արկ՝ ի վերայ նորա Անտիոքոս Գ. հազար քանքար[2]։ Եւ հարկք, զորս յանձն առնուին թագաւորք Ասորւոց հարկել հռովմէական պետութեան, էին ամբաւք[3]։

Երկիրն ինքնին յորդէր նմա մեծութիւնս՝ որպէս Հարստութիւն արուեստից[4]։ Եօշ՝ մի՝ ի գաւառաց պարսկայնոյ պետութեան անկեալ ընդ իշխանութեամբ Սելևկեանց՝ այնպէս մեծահամբաւ էր արմտեօքն, զի Եփիպտոս միայն կարէր կալ ընդ նմա[5] ՝ի կշիռ։ Կելեսիրիա (Խոր Ասորիք), որպէս և Փիւնիկեցւոց Միջագետաց՝ անուանի էին անդէմք[6]։ Պաղեստին պատրաստէր առատութեամբ ցորեան, ձէթ և գինի։ Այսպէս բարգաւաճէին Ասորիք յեօթնեերորդ դարուն Հռովմայ, զի իմաստասէրն Պոսիդոնիոս զբնակիչս երկրին անձնատուրս ասէ՝ ի հանապազորդ ծոմս հանդիսից, և բաժանեալ զժամանակ

1 Պլին· ԲՆ· Պպ· Զ· ԺԱ. 131։

2 Պոլիբ· Ե· ՃԴ։ Եթէ բաբելոնեան նոյն քանքարն, որպէս՝ ի ՃահՀ Թուի կարծէ, լիցին երբ 7,426,000 Ֆրանք։ Բազմամարդ էր յոյժ Սելևկիա՝ ի վերայ Տիգրիս գետոյ։ Պլինիոս (ԲՆ· Պպ· Զ· ԻԶ. 122) հանէ զԹիւ բնակչացն ց600,000։ Իսկ Ստրաբոն (ԺԶ· Բ. 638) մեծագոյն համարի զՍելևկիա քան զԱնտիոք։ Քաղաքս այս յայնմդ Բաբելոնի Թուի ժառանգել և զբազմամարդութիւն նորա ըստ մասին։

3 Յամին 565 հաստացանէ Անտիոքոս Գ 15,000 քանքարս (քանքար ատոլկեցի, այն է 87,315,000 Ֆր·)· (Պոլիբ· ԻԱ· ԺԴ։—Տիտ· Լիւ· ԼՀ· ԼԷ·)։ Ի գաշնադրութեան ամին երկրորդի սահմանեցին Հռոմայեցիք հարկս 12,000 քանքարաց ատոլկեցի զուտ ոսկւոյ հաստացանել յ12 ամս, մին մի քանքար 80 լիտր հռովմայեցի (69,852,000 Ֆր·)· (Պոլիբ· ԻՐ· ԻԶ· 19)։ Բաց յայսցանէ ունէր և Եւմենէս առնուլ 359 քանքարս (2,089,739 Ֆր·) ՝ի հինգ ամս· (Պոլիբ· ԻՐ· ԻԶ. 120)։ Տիտոս Լիւիոս (ԼՀ· ԼՀ·) քանքարս 350 միայն դնէ։

4 Սելևկոս Կալլինիկոս հայր Անտիոքոսի առաքէր Հռոդացւոց 200,000 դրխս ցորենոյ (104,000 հլտր·)· (Պոլիբ· Ե· ՃՔ·)։ Ի 556 ատեն Անտիոքոս Հռովմայեցւոց 540,000 չափս ցորենոյ· (Պոլիբ· ԻՐ· ԻԶ. 119)։

5 Ըստ Ստրաբոնի (ԺԵ· Գ. 623) ցորեան և գարի հարիւրապատիկ ատեն անդ, և կրկին անգամ ևս նոյնչափ, զոր չէ ըմբռն հաւատալ։

6 Ստրաբ· ԺՀ· Բ. 640։

նոցա յերկրապտծութիւն, ’ի խրախճանս, և ’ի վերկացութիւն[1]։ Հանդէպ ծովեզր Անտիոքոսի Դ. ’ի քաղաքն Դաբնեայ՝[2] ցուցանէն զպերճանս զեղխութեան աւազանեայ աշխարհին։

Զօրութիւնք յայլ և այլ ժամանակս գումարեալք ’ի Թագաւորացն Ասորւոց յայտ առնեն զբազմամարդութիւն աշխարհին։ Յամին 537 ’ի Հռափիայ Հակատամարտին էին Անտիոքոսի 68,000 զօրականք. իսկ ’ի 564 ’ի Մագնեսիա՝ 62,000 հեծեալազօր և աւելի քան զ12,000 այրուձի[4]. Թէպէտ էին ’ի զօրս անդ և գունդք օժանդակք յայլ և այլ ազգաց։ Հրեայք ևեթ կողմանն կարմելայ կարէին զինել 40,000 այր[5]։

Ոչ ինչ նուազ էր և ծովային զօրութիւն նոցա. Փիւնիկէ ունէր բազում նաւահանգիստս և զինարանս ամենայն տեղիս. որպիսիք էին Ակռադոս (Ռուատ), Բեբլիւտոս (Պէյրութ) և Տիւրոս (Ծուր)։ Վերջինս այս ամբառնայր տակաւ յանկմանէն. նոյնպէս և Սիդոն (Ծայդան), զոր Անտիոքոս Դ. ’ի պատերազմին ընդ Պտղոմեայ չկարացաւ հարկանել՝ վասն զօրաց նորա և պաշարապինդ ամրութեանն և բազմամարդութեան[6]։ Առաւել ազգինք ’ի քաղաքացն Փիւնիկեցւոց վայելէին ընդ ձեռամբ Սելեւկիացւոց գրեթէ ինքնօրէն իշխանութիւն, որ ձեռնտու էր Հարստութեան իւրեանց։ ՅԱսորիս՝ առաջին նաւահանգիստ էր տէրութեան Սելեւկիա ’ի վերայ Միջերկրականին, զոր թաւիեաց Մեծն Անտիոքոս ’ի ձեռաց Եգիպտացւոց[7]. և Լաւոդիկէ առնէր վաճառականութիւն մեծ ընդ Ալեքսանդրիա[8]։ Թագաւորք Ասորւոց տեառք ծովեզերեայց Կիլիկիոյ

1 Աթեն. ԺԲ. Կ. 460. տպ. Վենետկայզեր։

2 Պոլիբ. ԼԱ. Գ։ Երևէլեն ’ի հանդիսիս ստրուկք հազար բարձեալ անօթս արծաթոյ, յորոց փոքրագոյնն կշռէր 1000 դրամակշիռ. դարձեալ և հազար ստրուկք՝ անօթս ոսկիս բերելով և մեծահարուստ ազատաց յաճախութիւն։ Անտիոքոսի հանապազօրեայ կոչնականացն ոչ գոյր թիւ, և ասէր նոցա տանել ընդ իւրեանս այլևս ամբաւ և ազգի ազգի պաշարս համբարոց. (Աթեն. Ե. ԽԶ. 311. տպ. Վենետկայզեր)։

3 Պոլիբ. Ե. ՀԹ։

4 Տիտ. Լիւ. ԼԳ. Լէ։

5 Ասրաբ. ԺԶ. Բ. 646։

6 Պոլիբ. Ե. Հ։

7 Տիտ. Լիւ. ԼԳ. ԽԱ։ — Պոլիբ. Ե. ՄԹ։ — Ասրաբ. ԺԶ. Բ. 639, 640։

8 Ասրաբ. ԺԶ. Բ. 640։

և Պամփիւլեայ, հանէին անտի՝ ի կառուցումն շինուածոց փայտ բազում; ընդ հոսանս գետոյ ինքեանեալ՝ ի լերանց [1]։ Ընտ այսմ օրինակի գումարեաւ Սեբևհեանց գնաւս իւրեանց ընդ Փիւնիկեացւոցն՝ հանէին բանակս հզօրս ընդ ծովն Միջերկրական [2]։

Ի վաճառականութիւն ընդ աշխարհս հետաւորս՝ էին և նաւք բազմաթիւք վաճառականքը, որոց երթևեկ ծածկէր ընդ Միջերկրականն և զԵփրատ, զամենայն ազգի ազգի վաճառս բերելով։ Եւ որք նաւարկէինն ընդ ծով Կարմիր՝ գային կցորդէին ծովեզերեայց Միջերկրականին ընդ ջրանցս։ Եւ թէպէտ Փիւնիկեացւոց ընդ Սպանիոյ և ընդ արեւմտից գործարեալ էր վաճառականութիւնն մեծ, այլ նաւարկութիւն ընդ Եփրատ և ընդ Տիգրիս փոխանակէր ընդ այնր՝ ի տարուբեր արգասեաց եկամտից և ձեռակերտաց Աւորւոց՝ ի սիւնս Փռքաս Աւոյ, ընդ Յունաստան և ընդ Եգիպտոս։ Պետութիւն Սեբևհեանց բերէր զպատկեր վաղնջուց քաղաքականութեան և զվաղնջուց Հոխութեան Նինուէի և Բաբելոնի, կերպարանաւորեալ ըստ յունական հանճարոյ։

ԺԶ· Եգիպտոս։

Եգիպտոս, զոր պարզև Նեղոսի կոչէ Երոդոտ, թէպէտ չհասարէր տարածութեամբն և ոչ ջրոյր մասին Սեբևհեացւոց թագաւորութեանն, այլ էր պետութիւն ամրակուռ։ Քաղաքականութիւն նորա երեք հազար և աւելի ամօք երկայնագոյն

1 Սորաբ· ԺԴ· Ե· 571, 572։

2 Եհան Անախոքոս յամին 558 նաւս հարիւր յարկաժածուխս ընդ ծով, և երկերիւր թեթևընթացս· (Տիտ· Լիւ· ԼԴ· ԺԹ·)։ Եւ էր այս զօրաւորագոյն նաւախումբ Աւորւոց յիշատակեալ՝ ի պատերազմունս նոցա։ Ի Միւռնեան ծովամարտին տորմիղն ընդ զօրավարութեամբ Պոլիքսենեայ էր յինանաւն միայարկ նաւուց կազմեալ (574)· (Ապպիանոս· Պոփերպմոնէ Աւորոց· ԻԷ·)։ Յամին 563 և զվերջին տուեալ մարտ ընդ Հռովմայեցիս՝ ունէր Անախոքոս քառասուն յարկաժածուկ և վեթասուն անյարկ նաւս, և երկերիւր վաճառաբարձս· (Տիտ· Լիւ· ԼԵ· ԽԳ·)։ — Դարձեալ՝ ի յաջորդ ամին փոքր մի յառաջագոյն քան զմարտ Մագնեսիոյ ունէր Անախոքոս՝ բաց՝ ի նաւուց Փիւնիկեացւոց՝ հարիւր նաւս միջատեսման մեծութեամբ, որոց եօթանասուն յարկաժածուկք էին· (Տիտ· Լիւ· ԼՋ· ԽԳ· ԼԷ· Ը·)։ Զօրութիւնս այս ծովական խորտակեցաւ առաջի Հռովմայեցւոց։

էր, զի գիտութիւնք և արուեստք ծաղկէին անդ, մինչդեռ Փոքրն Ասիա, Յունաստան և Իտալիա՝ ի նախնական իւրեանց վայրենութեանն կային։ Ազգաւանդութիւն հռչակաց Նեղոսի ձեռնտու լեալ էր բարգաւաճելոյ բազմամարդ ժողովրդեանն, որպէս զի առ Ամասեաւ Բ, որ ժամանակակիցն էր Սերուխոսի Տուլլիոսի՝ թուէին անդ քաղաք քան հազար[1]։ Ճարտար տեսչութիւն առաջնոցն Լագոսեանց աձեցոյց յոյժ զաղբիւրս մեծութեան երկրին. զի առ Պտղոմեաւ Բ՝ տարեկան մուտք նորա դառնային ց14,800 քանքար (86,150,800 ֆր.) և միւնն և վէց չափ[2] ցորենոյ[3]։ Թող զմուտս եգիպտոսի հարկաց յօտար ազգաց որ էին ընդ նովաւ՝ հասանէր դառնար ց10,000 քանքար՝ ի տարւոջ։ Խոր Ասորիք, Փիւնիկէ և Հրէաստան հանդերձ Սամարեաւ բերէր ամի ամի արքային Պտղոմեայ եւերգեայ 8,000 քանքար[4] (46 միլիոն և վէց ֆրանքս)։ Ի միում ևեթ Հանդիսի ծախէր Պտղոմէոս եղբայրասէր 2,240 քանքար[5] (աւելի քան 13 միլիոն ֆր.)։ Մեծութիւն կուտեալ յարքունի գանձուն, եթէ չիցէն աւելեաց բանք, հասանէին 740,000 քանքար[6] (իբր 4300 միլիոն ֆրանք)։ Յամին 527 կարաց Պտղոմէոս Եւերգէտէս առանց ինչ կարօտութեան առաքել Հռոդացւոց

1 Երոդ. Բ. ձէ։ — Դիոդ. Սիկիլ. Ա. ԼԱ։

2 Չափս այս ցորենոյ (արտաքս բաւական էր՝ ինձեւթ երեսուն հայի. (Ֆրանց, Հատաֆոռնի արչանագրութենաց Յունաց, Գ. 303։ — Պոլիբ. Ե. ՀԹ.)։

3 Պէօխ, Քաղաքական փնտրտուքիւն Աթենացւոց, Ա. ԺԴ. 15։

4 Փլ. Յովսեպոս, Հնութենէ հրէայոց. ԺՒ. Դ։

5 Աթեն. Ե. էջ 203։

6 Ագաթ. Յոռոմբեան, յօդուած 10։— Մարմնէ՝ ի հետագայ իրացս խնամասիրել զամբաւութիւն գանձուց Թագաւորացն Պարսից։ Զի Կիւրոս աշխարհակալութեամբ Ասիոյ յաւել իւր մուտս 34,000 լտերց ոսկւոյ, և 500,000 լտերց արծաթոյ. (Պլին. ԼԳ. ԺԵ.)։ Ած Դարեհիւ որդւով Վշտասպայ ամ յամէ գային՝ ի գանձ արքունի 7,600 քանքարք բաբելոնեանք արծաթոյ (մէն մի քանքար բաբելոնեան էր 7,426 ֆրանք), դարձեալ և 140 քանքար՝ յոռձիկ սկիւթացի հեծելազօրուն, և 360 քանքար ոսկւոյ (4,680 քանքար արծաթոյ) հարկ՝ ի Հնդկաց. (Երոդ. Գ. ՂԴ.)։ Էին ապա և իւր սարեկան հասք 14,560 քանքար (108 միլիոն ֆր.)։ Դարեհ ածէր ընդ իւր՝ ի պատերազմ երկերիւր ուղտս բեռնաբարձս ոսկւոյ և մեծագին սպասուց. (Դեմոսթենէս. Յաղագս ընդդիմախօսութենէն. էջ 185. ԺԵ. էջ 622, տպ. Միւլլեր)։ Դարձեալ ըստ բանից Ստրաբոնի եգիտ Մեծն Ալէքսանդր՝ ի գանձ մեծամեծ գանձս նորա (՝ի Շօշ, ՝ի Պերսէս, ՝ի Պասարգադ և ՝ի Պերսեպոլիս) 180,000 քանքար (իբր 1,337 միլիոն ֆր.)։

3,300 քանքար արծաթոյ, 1,000 քանքար պղնձոյ, և տասն միլիոն չափ ցորենոյ[1]։ Վիսթեան ոսկւոյ և արծաթոյ՝ ի տէրութեան Փարսուոնից վկայեն հետք բուռւց ստասելոց, և բազմութիւն ոսկեղէն սպասուց գտեալոց՝ ի շիրիմս։ Թագաւորք եգիպտոսի զատ զանց ինչ տարածեալ զբազում իշխանութեան իւրեանց և՝ ի Վիքանան, հանէին անտի փայտ՝ ի շինուած։

Ճոխութիւնքս այսոքիկ էին մանաւանդ յԱլեքսանդրիա, որ՝ ի սկիզբն է դարուն Հռովմայ՝ յետ Կարթեդոնի էր առաջին վաճառաշահ քաղաք յաշխարհի[2]։ Երկայնատարած քաղաքին էր 15 մղոն, երեք նաւահանգիստք էին նորա ընդարձակք և անքոյթք, ուր և մեծամեծք՝ ի նաւուց կարէին խարիսխս արկանել[3]։ Հասանէին անդր վաճառք՝ ի Հնդկաց, յԱրաբիոյ, յԵթովպիոյ և՝ ի ծովափանց Աֆրիկեայ. կէսք յոտքերանակս՝ ի Մեռա-Ովմեայ (՝ի հիւսիսակողմն Քոսէյրոյ), և անտի՝ ի Նեղոս[4]. այլք ընդ ջրանցս՝ որ՝ ի նեղոս անդ՝ ի խորհնեղջին Սուէզայ, կամ ընդ նաւահանգիստն Բերինիկեայ նաւարկեալ ընդ ծով Կարմիր[5]։ Ի տիրել Եգիպտացւոց՝ ի վերոյ ծովուս՝ հալածական եղեն հինք Արաբացւոց[6], և հաստատեցան անդ վաճառականք բազումք։ Ի Հնդկաց գային հասմոմունք, բեհեզք և ազգ ազգ նեղկաց, յԵթովպիոյ՝ ոսկի, փղոսկր և ոսնիտազ, յԱրաբիոյ՝ բուլիձայք։ Այս ամենայն վաճառք փոխանակէին ընդ եկեղցին անդ յԵւքսինեան Պոնտոսէ և յԱրևմտեան ծովէն։ Բնիկ երկրին չարտարութիւն նկարակերտ և ասղնեգործ կերպասուց և ապակեղինաց յաւուրս Պտղոմեանց զարգացան նոյնպէս բարգաւաճանօք։ Հնութիւնք հանեալք՝ ի գամբանաց ժամանակին, նկարք զարդուց նոցին, արձանագրութիւնք մեհենադրոշմք, և պապիրք յոյնք հաստատեն զի բազում ազգի ազգի արուեստից չարտարութիւնք էին անծանօթ՝ ի Թագաւորութեան Փարաւոնից, այլ մանաւանդ ժամանեալ՝ ի

1 Պոլիբ· Ե· 29։
2 Ստրաբ· ԺԷ· Ա· 678։
3 Ստրաբ· ԺԷ· Ա· 672. 673։
4 Ստրաբ· ԺԶ· Գ· 664. ԺԷ· Ա· 692։
5 Ստրաբ· ԺԷ· Ա· 683։
6 Դիոդ· Սիկիլ· Գ· 49։

ծագ կատարելութեան։ Գերազանց ձեռագործք և նրբութիւն կերտուածոյ նոցին վկայք են ձեռագիտացն հանճարոյ։ Աւ Պտղոմեաւ Բ՝ բանակ զօրուն կազմէր ՚ի քան զհինգ հեազգեաց և ՚ի չորից բիւրուց այրուձիոյ, յ300 փղաց և յ200 կառաց. զինարանք կարէին հասուցանել զինս երեսանից բիւրուց[1]։ Բուն տորմիղն եգիպտական ունէր հարիւր երկոտասան նաւս առաջին կարգի (՚ի հնգից մինչև ցերեսուն կարգս թիոց), երկերիւր քան և չորս՝ երկրորդ կարգի, և թերթևասոյր նաւս. Թոռ զայս, էին և Թագաւորին աւելի քան չորս հազար նաւք ՚ի նաւահանգիստս պատրաստք հրամանին[2]։ Եւ մանաւանդ յետ Ալեքսանդրի՝ զօրութիւն եգիպտացւոց ընդ ծով ընդարձակէր յոյժ։

ԺԷ. Կիւրենական։

Որ բաժանէրն զեգիպտոս յերկրէն Կարթեդոնի երկիրն Կիւրենական (պետութիւն Տրիպոլեայ), հաստատ երթեւն ՚ի ցունաց երթեալ, ազատ ՚ի լծոյ օտարաց, անկանէր ընդ իշխանութեամբ առաջնոյն ՚ի Պտղոմեանց։ Էին նորա քաղաք բազում վաճառաշահ և մեծափարթամք, և դաշտօրայք պտղաբերք, ուր միակութիւն տարածանէր մինչև ցսպառուած լեռանց[3]։ Վաճառք նորա բազմաշահք էին՝ գինի, ձէթ, արմաւ, քլքուամ, և ազգի ազգի տունկք[4], որպէս Սելփիոն, և այլն[5]։

1 Ապոլ. Յաոաջեան, յօդ. 10։ — Յամին 537 ՚ի Հռոմէիս եգիպտական բանակին էին էլեփանտ բիւր հեռակք, 5,000 հեծեալ, 73 փղք. (Պոլիբ. Ե. ՀՔ. տես և Ե. կե.)։ Պոլիբիոս, որ մանրապատում առնէ զայս ամենայն, յաւելու (ԺԳ. Ե.) զի ռազմիկ ապային աւօրեայ էր ընաս մի (97 Ֆրանք)։

2 Թէոկրիտոս, Հովե-էրգ. ԺԷ. տողք 90–102։ — Աթենէոս (Ե. ԼԶ. 284) և Ապոլիանոս (Յաոաջեան, յօդ. 10) մանրապատում նկարագրեն զաւրմիսն։ — Պոլիմէոս Փիլադելփոսոր էտ կառուցանել նաւ մի քառասուն կարգօք թիոց, որ էր 280 կանգուն յերկայնութիւն և երեսուն ՚ի լայնութիւն. (Աթենէոս, Ե. Ա. 285)։

3 Երոդ. Դ. ձՂ։ Լեռնագաշտաւին Բարկայ զարդիս անապատ՝ մշակեալ էր յայնժամ և առատեալ։

4 Դիոդ. Սիկիլ. Գ. Խթ։ — Երոդ. Դ. ճկթ։ — Աթեն. ԺԵ. Խթ. 487. ԼՀ. 514։ — Ստրաբ. ԺԷ. Գ. 712։ — Պլին. Բն. Պատ. ԺԶ. ԼԳ. 143. ԺԹ. Գ. 38–45։

5 Կարևորագոյնն ՚ի վաճառուց կիւրենական աշխարհին էր Սէլֆիոն, առանձ՝ որոյ արմատ վաճառէր ՚ի կշիռ արծաթոյ։ Չի հանէին ազգ ինչ կամ ինչ կամ խե-

*Երիվարք կխրեճականք՝ որ երապտունք էբրև զարաբա-
կանաց էին՝ խնդրեին և՛ ի Յունաստան [1], և բնակիչք Կիւրենայ
հաձոյացան պարգևս Ալեքսանդրի առաքելին երեք հարիւր
՛ի նժուգից աստի [2]։ Սակայն քաղաքական յեղափոխութիւնք
կանխեալ հատուցեալ էին զեան մեծ վաղեմի բարեբաստու-
թեան երկրին [3], որ երբեմն նաւարկութեամբն, վաճառակա-
նութեամբ և ձարտարութեամբ արուեստից՝ գեղեցկապոյնն
էր Թերևս ՛ի հատուածս գաղթեալս ՛ի Յունաց։*

ԺԸ· Կիպրոս։

*Ի նմանօրինակ բարգաւաճանս յաջողէին բազմութիւն
կղզեաց Միջերկրականին։ Կիպրոս հատուած ՛ի Փիւնիկեցւոց
բնակեալ և ապա ՛ի Յունաց, անց յետոյ ընդ տէրութեամբ
Եգիպտացւոց։ Բնակիչք կղզւոյս ՛ի նախկին հայրենեացն պա-
հէին զսէր վաճառականութեան և զտարաշխարհիկ նաւար-
կութեան։ Գաղաքք նորա գրեթէ առհասարակ ծովափնեայք
էին, ամրացեալք գեղեցիկ հանդրուանօք նաւուց։ Պտղաբեր
Սոսերն էին ՛ի կղզւոջ անդ երեք բիւր եգիպտացի զօրական [4]։
Ճոխագոյն քան զամենայն երկիր ՛ի փայտս շինութեան էր
Կիպրոս, և պղպեբերութիւն նորա գերազանց քան զԵգիպ-
տոսին [5]։ Ի բեր երկրին յաւելուն և քարինք պատուականք,
և պղինձահատք՝ որ ՛ի բազմաց հետէ տային պղինձ [6] առա-*

*Ժի ՛ի գէղ ամենաբոյժ ՛ի պէտս գեղագործաց, և ՛ի համեմունս խահամոքաց։
Յամին 658 ՛ի կալ Կիւրենական աշխարհին մարզ հռովմէական պետութեան, հա-
տուցանէր վոխանակ տարեկան հարկաց զսեղմիոն։ Երեսուն լիտր ՛ի հիւթոյ
անկոյս տարեալ ՛ի Հռովմ յամի 667, ՛ի հրաշալիս համարէր. և ՛ի սկիզբն քա-
ղաքական մարտին՝ ՛ի տիրել Կեսարու հասարակաց դանձուն, եգիտ յարկել
տէրութեան 1,500 լիտր սեղմիոն ՛ի պահեստի ընդ ոսկւոյ և ընդ արծաթոյ· (Պլի-
նիոս, ԺԲ· Խ·)։*

1 Պինդար, Պէռնէան, Դ· Բ։ — Աթեն· Գ· ՍԸ· 392։

2 Դիոդ· Սիկիլ· ԺԷ· Խթ։

3 Արիստոտէլ, Քաղաքագիտութիւն, Է· Բ· յօդ 10։

4 Յովսեպոս, Հնութիւնք հրէական, ԺԳ· ԺԲ· 2, 3։

5 Եւթանաս, Պապմանիան Լենգանէայ, Ե· ՍԶ։ — Եւսեբեայ, Մէյնոսիան Դիան-
ոիսի Պէրիէգեթի 508, 198· տպ· Պէռնհարտի։

6 Սարաք· ԺԴ· Զ· 583։ — Պլին· Բն· Պմ· ԼԴ· Բ, Դ· 94։

տալեաւք, մինչև անտի իսկ կոչել կղզւոյս Գուբրուայ, այսինքն է պոիւնձ։ Էին ի Կիպրոս և մեհեանք բազում, յորս էրևեալն էր Աստղիկն Հարիւրբազնեան ի Պափոս[1]։

ԺԹ. Կրետէ։

Կրետէ ի բազում ազգաց բնակեալ ի դիւցախառն ժամանակաց անտի զհամբաւն հարկանէր, մինչև Հոմերի զհաստիր քաղաքին նորին նուաստել. այլ ի բազում դարուց հետէ անկեալ էր Կրետէ ի նախնի փառացն։ Ազանց վաճառականութեան, առանց բարեկարգեալ զօրութեան ընդ ծով, և առանց մշակութեան՝ ոչ այլ ինչ բերէր, բայց միրգս և փայտս այժմուս նորայն անպտղութեանն ի ժամանակաց անտի առեալ սկիզբն։ Սակայն են իսկ հաւաստիք՝ գոլոյ նորա զեռ ևս բազմամարդ ի ժամանակի նուաճելոյ զայն Հռոմայեցւոց[2]։ Կրետացիք պարապեալ յեղուզակութիւն[3], և վարձկանեալ ի զինուորութիւն, աղեղնաւորք էին անուանիք, և պատերազմէին վարձուք ի բանակս Թագաւորացն Ասորւոց, Մակեդոնացւոց և Եգիպտացւոց[4]։

Ի. Հռոդոս։

Մինչդեռ Կրետէ անկանէր ի վաղեմի մեծութենէն, ընդհակառակն Հռոդոս տարածանէր զվաճառականութիւն իւր, և ոտն առ ոտն յառաջեալ ունէր զտեղի ծովեզերեայ քաղաքացն Յունից և Կարից։ Ի ժամանակաց անտի Հոմերի բազմամարդ էր կղզիս, և էին ի նմա քաղաք երեք մեծամեծք, Լինդոս, Յալիսոս և Կամիրոս[5]. և յի դարուն Հռոմայեցւոց

1 Վէրգիլիոս, Ենէական, Ա. 415։ — Ստաիկիոս, Թէբայէդ, Ե. 61։
2 Ստրաբ. ժ. Դ. 408 և յաջորդ։
3 Պոլիբ. ժԳ. Ը։
4 Էին վարձկանք կրետացիք զինուորեալք ընդ Փլամինեաւ յամին ի 557 (Տիտ. Լիւ. ԼԳ. Գ.), ի զօրս Անտիոքոսի ի 564 ամին (Տիտ. Լիւ. ԼԷ. Խ.), ի պերսեայն ի 583 (Տիտ. Լիւ. ԽԲ. ԾԱ.), և ի Հռոմէական զինուորութեան ի 633։
5 Ինէական, Բ. 656, 670։

հզօրագոյն էր տէրութիւն նորա ընդ ծով յետ կարգեցին։ Քաղաքն Հռոդոս կառուցեալ՝ի ժամանակս Պելոպոնեսական պատերազմին (346), հանգոյն քաղաքացն Փիւնիկեցւոց ունէր կրկին նաւահանգիստս, մին վասն վաճառականաց նաւուց, և միւսն վասն պատերազմականաց։ Տուրք՝ զոր Հռոդացիք՝ի նաւագնացէ խարխեզոյ՝ի նաւահանգստին հանէին, հարիւր եւ դրամակշիռ էր՝ի տարւոջ[1]։ Գաղթականս յայլ և այլ կողմանս ծովեզերեայց Միջերկրականին հաստատեալ էր[2] նոցա, և ունէին զօդ բարեկամութեան ընդ բազում քաղաքս, յորոց յաճախ ընդունէին օգնութիւնս և պարգեւս[3]։ Էին նոցա՝ի մերձակայ ասիական ցամաքի քաղաք հարկատուք կաւնոս և Ստրատոնիկէ՝ որք հատուցանէին 120 քանքարս (700,000 ֆր.)։ Ջնաւարկութիւն ընդ Վոսփոր, զորոյ ջանային ազատ պահել զանցս, ընդ հուպ ապա ընդ ձեռամբ արկին դրեթէ բոլորովին[4]։ Համանգամայն վաճառականութիւն ծովու՝ի Նեղոսէ ցՄէոտեան լիճ՝ի ձեռս նոցա էր։ Նաւք նոցա բարձեալ ստուկս արծաթափին, անդեայս, մեղր, մոմ և միս աղածոյ[5], երթային՝ի ծովեզերս Վիմմերեանն Վոսփորի (՝ի ծոցն Ազով)՝ի խնդիր ցորենոյ, որ գերահամբաւէր յայնժամ[6], և տանէին՝ի հիւսիսային ափունս փոքուն Ասիոյ՝ գինի և ձէթ։ Նաւաստոլմեան իւրեանց[7], և երկրախումբ բանակաւ՝ որ յայլազգեաց ետէր էր կազմեալ, յաջողեցան՝ի բազում պատերազմունս, մղեալ մարտ ընդ Անթենացիս, և մանաւանդ յամին 397 մինչև

1 Պոլիբ· Լ· է· առ Հռոմայ 520։

2 Ստրաբ· ԺԴ· Բ· 558, 559։ Հաւուածք՝ի Հռոդացւոց բնակէին՝ի Հռոդոս որ՝ի Սպանիա, գաղթականք՝ի Բալէարեանս, Գէլա՝ ՝ի Սիկիլիա, Սիբարիս և Բալէապոլիս՝ Իտալիա։

3 Եւ այս պատահեաց նոցա մանաւանդ՝ի ժամանակին, յորում տապալէր մեծահռչակ արձանն Հռոդոսի, և տագնապէր քաղաքն յերեսաց սասանութեան երկրի։ Հերոն բռնաւոր Սիրակուսայ, Պտղոմէոս ազգայ Եգիպտացւոց, Անտիգոնոս Դոսան Թագաւոր Մակեդոնիոյ և Սելևկոս Ասորւոց, առաքեցին նոցա նպաստս· (Պոլիբ· Ե· 27, 28։)

4 Եւ յերաւի տեսանելք թէ որպիսի փութով հռոդացիք ինամ ունէին ըզգաշնակցացն՝ որ էին յաւիւնս Եւքսինեան Պոնտոսի· (Պոլիբ· Իէ· 2·)։

5 Պոլիբ· Դ· ԼՀ։

6 Ստրաբ· է· Դ· 259։

7 Տիտ· Լիւ· ԼԳ· ԺՀ։

§399. և յամին 450 զդէմ կալան յաղթանակաւ Դեմետրի Պո-
լիորկետայ, և ստացան զփրկութիւն մեծարանօք նորա առ
հոյակապ պատկերն Յալիսոս քաղաքի, որ՝ի Պրոտոգենեայ ձար-
տարէ նկարեալ[1]: Ի ժամանակս պատերազմացն Հռովմայե-
ցւոց՝ի Մակեդոնիա և յԱսիա՝ ձեռն եւոեն նոցա Հռոդացիք
հզօր նաւատորմաւ[2]: Եւ տևէր ծովային զօրութիւն նոցա մին-
չև ց.քաղաքային պատերազմին՝ որ զհետ մահուն Կեսարու, անդ
վախճան առեալ:

Ոչ ինչ նուազ քան՝ի վաճառականութեան հաճեաւէր
Հռոդոս յարուեստս և՝ի գիտութիւնս: Ձեռ թագաւորու-
թեան Ալեքսանդրի վարժոց մեծահռչակ եկաց նա անդրիա-
գործութեան և պատկերհանութեան, ուստի ելին Պրոտոգե-
նէս, և Ապոլլոնիոս և Փարնեսեան Ցոյն քանդակագործք:
Էին՝ի քաղաքի անդ անդրկիք երեք հազար[3], և կոթողք հարիւր
և վեց. յոր և գերահռչակ անդրկին Ա.րեւու, մին յեօթանե-
ցունց հրաշալեաց աշխարհի, բարձրութիւն նորա 105 ռանա-
չափ, և ծախք 3,000 քանքար[4] (17,400,000 ֆր.): Դիմէին
անդր՝ի վարժս պերձախոսութեան աշակերտք յամենայն կող-
մանց Յունաստանի, և Կեսար իսկ և Կիկերոն անդ չոգան կա-
տարելագործել զարուեստ Հարտարխոսութեան:

Ասլոց՝ի կղզեաց Եգեան ծովուն կորուսեալ էր գոգյես
ամենայն քաղաքական մեծութիւն, և վաճառաշահութեան
նոցա պայծառութիւն անցեալ՝ի նորանոր տէրութիւնս փո-
քուն Ասիոյ և՝ի Մակեդոնիա և՝ի Հռոդոս: Ոչ այսպէս և Ա.ր-
շխէլագոսեան Յոնիական ծովուն, որոյ յաջողութիւն հանապա-

1 Ի պաշարման անգ Հռոդոսի՝ խորհուրդս խորհէր Դեմետրիոս՝ի հուր դա-
տել զհատարակաց շինուածս, յոր էր և երևելի պատկերն Յալիսոսի նկարեալ՝ի
Պրոտոգենեայ: Դեսպանս առաքեցին Հռոդացիք աղերսաւորս առ Դեմետրիոս
խնայել՝ի հրաշակերտն. և երդուան յետ այնորիկ զպաշարումն, խնայեալ՝ի քաղաքն
և՝ի պատկեր. (Ա.լ. Գէլլ. ԺԵ. ԼԱ.):

2 Յամին 555՝ քան նաւս. ՝ի 556, քան միայարկ նաւս. ՝ի 563 քան և հինգ
միայարկս և երեսուն և վեց նաւս: Վերջինս այս նաւախումբ յերեսուն և՝ի վե-
ցից նաւուց՝ խորտակեցաւ. այլ՝ի նմին իսկ ամի կարացին Հռոդացիք հանել
՝ի ծով քան նաւս: Յամին 584 էին նոցա քառասուն նաւք. (Տիտ. Լիւ. ԼԱ. ԽԶ.
ԼԲ. ԺԶ. Լ.Զ. Խե. Լէ. Թ, ԺԱ, ԺԲ. ԽԲ. Խե.):

3 Պլին. ԼԴ. ԺԷ:

4 Ստրաբ. ԺԴ. Բ. 557:

զսրդէր մինչև յանկանել նորա ընդ լծով Հռովմայեցւոց։ Որ֊ կէսրա, որ ընկալաւ՝ի նաւահանգիստ իւր զնաւատուրս Հռով֊ մայեցւոց, վասն պտղաբերութեան երկրին և քաջադէպ դրւոյն ունէր վաճառականութիւն ընդարձակ։ Ա.յլ յետ Գ. դարուս նախանձորդն Կորնթոսի զեղծեալ ապականէր զսրպէս զՔի֊ զանդիոն և զՅակինթոս, զոր Ագաթարչիս յամին իբր 640 ցու֊ ցանէ առ կարի զեղխութեանն մեղկացեալ[1]։

ԻԱ. Սարդինիա։

Բարգաւաճութիւն Սարդինիոյ էր՝ի գաղթականէն, զոր Կարթէդոն բնակեցոյց անդ։ Բնակիչք կղզւոյս ազատասիրու֊ թեամբն իւրեանց ահարկու էին Հռովմայեցւոց[2]։ Ի 541 ամ֊ի֊580, կոտսին 130,000 այր ընդ սպանեալ, ընդ ձերբակալ ե֊ զեալ կամ վաճառեալ՝ի ստրկութիւն[4]։ Ա.յնչափ էր վա֊ ճառելոյ ամբոխ, մինչև յառակս ասել «Սարդինիացիք՝ի վա֊ ճառս»[5]։ Բնակիչք Սարդինիոյ՝ որ զարդիս համարին 544,000, էին յայնժամ միլիոն մի։ Ցաճախութիւն արմտեաց կղզւոյս և բազմութիւն անդէոց, միս այլ համբարանոց կացուցանէր զնա Կարթէդոնի[6], զոր անյագութիւն Հռովմայեցւոց արագ արագ սպառեալ ծախեաց զամենայն։ Սակայն յամին 552 այնպիսի առատութիւն էր տոհմանկանաց, զի ստիպէին վաճառականք թօղուլ նաւատեաց զցորեան փոխանակ վարձուց[7]։ Հանք քա֊ վուց, և վաճառականութիւն առուի՝ որ ընտրելագոյն էր անդ[8] գրաւէին ամբոխ մարդկան՝ի վաստակ։

1 Ա.թհեն· ԺԲ· Կ· 461։
2 Տիտ· Լիւ· ԻԳ· ԼԴ։
3 Տիտ· Լիւ· ԻԳ· Խ։
4 Տիտ· Լիւ· ԽԱ· ԺԲ, ԺԷ, ԻԸ։ — Թիւ 80,000, մարդկան, զոր կոտսին Սարդինիացիք՝ի պատերազմին Տ· Գրակքոսի՝ի 578 և 579 ամի, ՝ի վաւերական արձանագրութեանց հանեալ էր, որ կային՝ի Հռոմ՝ի տաճարի դիցուհւոյն Մատուտայ· (Տիտ· Լիւ· ԽԱ· ԻԸ·)։
5 Փեստոս, էջ 322, տպ· Օ· Միւլլէր։ — Տիտ· Լիւ· ԽԱ· ԻԱ։
6 Տես՝ի Հէրքն, հա· Դ· յօդ· Ա· պէ· Բ։ — Պոլիբ· Ա· ՀԹ։ — Ստրաբ· Ե· Բ· 187։ — Դիոդ· Սիկիլ· Ե· ԺԵ։ — Տիտ· Լիւ· ԻԹ· ԼՋ։
7 Տիտ· Լիւ· Լ· ԼՀ։
8 Ստրաբ· Ե· Բ· 187։

ԻԲ. Կորնիկա.

Նուաստացոյնք էին քնակիչք Կորնիկայ, Դիոդոր Սիկիլեացի ոչինչ աւելի դնէ քան զ30,000[1]. իսկ Ստրաբոն վայրենի և լեռնաբնակս զնոսա համարի[2]: Ըստ Պլինեայ երեսուն քաղաքք էին կղզւոյս[3]: Ս.րգասիք երկրին էր խէժ, մոմ և մեղր[4], զոր ետուրացի և փոխէացի վաճառականք հատուածով քնակեալք անդ՝ տանէին յօտար երկիր:

ԻԳ. Սիկիլիա:

Սիկիլիա, կոչեցեալն ի նախնեաց ցանկալի օթևարան Դեմետրեայ, կալաւ զանուն իւր ի Սիկանացւոց կամ ի Սիկուլացւոց՝ որ ի վաղ ժամանակաց բնակէին ի կողմն մի Իտալիոյ: Հաստուածք ի Փիւնիկեացւոց, և ապա ի Յունաց եկին բնակել անդ: Չերկու երիր մասն կղզւոյն յարևելակողմն ունէին Յոյնք յամին 371, իսկ Կարթեդոնացիք զարևմտեանն: Սիկիլիա աւ կարի յոյժ պտղաբերութեանն զրգռէր զքաղց երկոցունց ազգացն, և ապա ընդ հուպ զՀռովմայեցւոցն իսկ, որ և յետ տիրելոյ նոցա անդ՝ շահեալան եկաց Իտալիոյ[5]: Սիկերոն ի Հաւին ընդդէմ Վերրէսի ցուցանէ զանչափ յաձախութիւն ցորենոյ՝ զոր առաքէին Սիկիլիա ի տար աշխարհս, և որ անտի քանիծն մեծ էր տասանորդն կամ մասք[6]:

1 Դիոդ. Սիկիլ. Ե. ԺԹ: — Ցընդվզիլ Կորնիկացւոց յամին 373, անկան երկու հազարք ի նոցանէ սրով սուսերի. (Տիտ. Լիւ. Խ. ԼԴ.): — Ի 581 ամին ապաստան ի նոցանէ 7,000 մեռեալ և 1,700 վարեցան ի գերութիւն. (Տիտ. Լիւ. ԽԲ. Է.):

2 Ստրաբ. Ե. Բ. 186–187:

3 Պլին. Գ. Ջ. 12:

4 Դիոդոր Սիկիլեացի. Ե. ԺԹ: — Ի 573 ամին հարկ ի վերայ Կորնիկացւոց արկին Հռովմայեցիք 1,000,000 լեւերս մոմոյ, և 200,000 լիտր՝ ի 581 ամին. (Տիտ. Լիւ. Խ. ԼԴ. ԽԲ. Է.):

5 Կիկ. Երէորէ ամբասպանութիւն ընդդէմ Վէրրէսի, Բ. Բ, ՀԴ: — Արջառք տային ի մանաւանդ մորթ՝ ի չինութիւն վրանաց, և ոչխարք առ սուբ ի պգեստ:

6 Կիկ. Երէորէ ամբաստ. ընդ. Վէրր. Գ. Հ:

*Քաղաք՝ որ լինէր տիրապետութեամբ Հռովմայեցւոց նուա-
պեալ էին ի մեծութենէն, նշանաւորք էին ի ժամանակին՝
զորմէ բանքս են։ Առաջին ի նոսին Սիրակուսա, մայրաքաղաք
Թագաւորութեան Հերոնի՝ ունէր 600,000 բնակիչս, ի վեց
Թագս բաժանեալ. և շրջապատ նորա 180 ասպարէզ (36 հա-
զարաւոր). Հռովմայեցիք յառնուլ զայն պատերազմաւ գոն
անդ աւար Հոն իբր զկարքեդոնին[1]։ Էին և այլ քաղաք
նախորդք Սիրակուսայ մեծութեամբ և զօրութեամբ. որպիսի
էր Ակրականդ՝ որ յառաջնումն Կարքեդոնական պատերազ-
մին ունէր հինգ բիւր զօրականս[2], և ոմն ի գլխաւոր զինա-
րանացն էր Սիկիլեոյ[3]։ Էին և ի Պանորմոն (Բալերմոյ), և ի
Դրեպանոն (Դրեպանի) և ի Լիլիբէոն (Մարսալա) զինարանք,
նաւարան և ընդարձակ նաւահանգիստք։ Նաւակայք Մես-
սինայ տանէին նաւս 600[4]։ Ցարդ իսկ մեծահարուստ է Սիկի-
լիա յիշատակօք հնութեան. զարմանալի են անդ աւերակք
քանի և ոմն մեհենից, մեռասան Թատերոց, յորս մեծահամբ
եաւ Թատրն Տաւրինայ՝ որ տանէր քառասուն հազար հան-
դիսատես[5]։*

*Համառօտապիծս այս նկարագիրս ծովեզերեայց Միջերկրա-
կան երկերիւր կամ երեքհարիւր ամօք յառաջ քան զմեր
Թուականն, շատ իսկ ցուցանէ զտարբերաձեռնս բնակչաց նոցին
այլ և այլ ժողովրդոց։ Ցիշատակ այսօրինակ մեծութեան նոցա
ազդէ տեղւոյն քնաւորապէս չխափանելոյ զնոքա յայսմ հետէ
մեծամեծ պետութեանց գԱրևելս՝ Թօթափել զփոշի երկուց
հազար ամաց, և վերակենցաղ գալ ի քաղաքականութիւն։*

1 Տիտ· Լիւ· ԻԵ· ԼԱ։

2 Պոլիբ· Ա· ԾԷ և ԾՀ։

3 Պոլիբ· Թ· ԻՀ։ — Սորար· Զ· Բ. 226։

4 Տես որ ինչ պատմեն զնորացս Տիտոս Լիւիոս (ԻԹ· ԻԶ·) և Պոլիբիոս (Ա· ԽԱ· ԽԲ, ԽԶ·)։ — Փլորոս, Բ· Ը։

5 Տես ի մատենագրութիւնս զքսին Սիրայ ոմն Ֆալկոյ, Հնոբիոն Սիկիլեոյ։

ԳԼՈՒԽ Ե

ՄԱՐՏԻ ՊԱՏԵՐԱԶՄԱՑ ԿԱՐԹԵԳՈՆԻ, ՄԱԿԵԴՈՆԻՈՅ ԵՒ ԱՍԻՈՅ

(Ի 488 *ամի յ*621)։

Ա. *Ջորակլէս Հռոմայ ընդ կարթլիդոնի։*

Ի տարածանել Հռոմայ զաշխարհակալութիւն իւր մինչև ՚ի ծագս հարաւային Ասալոյ, մերձենայր ՚ի պետութիւն՝ որում հարկ էր նախանձընդդէմ նմա ելանել։

Կարթեգոն, բնակեալ յափունս Աֆրիկեայ մօտաւորապէս Սիկիլոյ, բաժաներ ՚ի նմանէ անցիւք ևեթ Մեդիտերնեայ՝ (Մալղայի), որ զանդունդս Միջերկրականին անջրպետէ յերկուս։ Ցերկերիւրոյ ամաց հետէ դաշինս բազում անգամ կռեր նա ընդ Հռոմայ, և յանդէտս հանդերձելոյն՝ խնդակից ընդ ծերակուտին լինէր ՚ի յաղթութիւնս նորա ՚ի վերայ Եւրոպացւոց և Սամնիտացւոց։

Ի սկիզբն կարթեգոնական պատերազմացն առաւելութիւն Կարթեգոնի յայտնի էր. սակայն տահմանադրութիւնք երկոցունց քաղաքացս տային գուշակել մեզ յերկաքանչիւրոցն հասանել յաղթանակել։ Ազնուապետութիւն հզօր՝ իշխէր ՚ի սմա և ՚ի նմա. այլ ՚ի Հռոմ բազում այն էր զի ազատանէին խառն ընդ ժողովրդեան օրինակս յառնախ ընծայէր հայրենասիրութեան և բնաւից քաղաքական առաքինութեանց. իսկ ՚ի Կարթեգոն պայծառագոյնք ՚ի տոհմից՝ մեծացեալք վաճառականութեամբ, մեղկեալք ապերասան զեղխութեամբ, կացուցանէին զբար անձնանձնդիր և ընչաքաղց՝ ուրոյն յայլոց քաղաքացեաց։ Ի Հռոմ՝ նախկին յորդոր էին փառք, գէնսուր զբաղումն՝ պատերազմ, առաջին պարտք՝ զինուորութիւն։

ի Կարքեդոն ամենայն ինչ զոհէր զօշաքաղութեան և վաճառաշահութեան. իսկ Հայրենեաց պաշտպանութիւն բեռն էր ծանրատաղտուկ՝ Թողեալ՚ի ձեռս վարձկան զօրականին։ Որով յետ պարտութեան դժուարին էր՚ի Կարքեդոն վերստին կազմել բանակ. իսկ՚ի Հռովմ արագ արագ յաջողէր, զի ժողովուրդն հպատակէր զօրաժողովոյ։ Եթէ դէպ լինէր՚ի Կարքեդոն առ նուազութեան դանձուն յապաղել զառաջիկ զօրականն, բանակն լծընկէց՚ի վտանգ զսպետութիւնն արկանէր. իսկ Հռովմայեցին անտրտունջ տանէր չքաւորութեան և աղետից՚ի սէր Հայրենեաց։

Կրօնք՚ի Կարքեդոն՝ քինախնդիր և վրիժագործ յանդիման առնէին զաստուածս, հարկ առնելով ողջել զնա ահաւոր զոհիւք, կամ մեծարել եղծապիղծ պաշտամամբ, որովք ապականեալ և անագորոյն լինէին բարք. իսկ՚ի Հռովմ ուղղախոհ միտք և օգուտ հասարակաց բարեխառնէր զվայրենութիւն հեթանոսական կրօնից, և ոչ ապականէր՚ի սպառ զնմանս բարոյականին[1]։

Դարձեալ և խոխոր մեծ էր ընդ քաղաքավարութիւն տոյա և նոցա։ Ապաքէն բռնութեամբ զինուց նուաճէր Հռովմ զսպպաշուրջ բնակեալս. այլ եթէ օրէն լոկ առնլ, ներելն առնէր զնուր յաղթութիւնս՝ ընտրհելով պարտելոց մեծագոյն հայրենիս, և հաղորդս զնոսա կացուցանելով իրաւանց մայրաքաղաքին։ Եւ դարձեալ, զի առաւելապոյնք՚ի բնակչաց Յամնք էգոյն հաւասարութիւք էին, դիւրին էր Հռովմայեցւոց ընդելացուցանել խառնել զնոսա ընդ իւրեանս։ Իսկ Կարքեդոն օտար՚ի միջի բնաշխարհիկ այլացեղ, այլաշուրջն և այլաբարոյ ազգաց բնակէր Լիբիկէ։ Եւ առեալ հպատակելոցն իւրոց և հարկատու ժողովրդոց զսերութիւն իւր առնէր՚ի ձեռն օգտաճարտ և ընչաքաղց գործակալաց իւրոց. ուստի յաձախ ապստամբու-

1 Ա յսպէս կարծեն Արամպղ, և Հերա խոսքական՝ զկնի յօրինեալ պաշտամունս, պաշտպանք էին առաքինեաց և պատուհասողք չարագործաց. իսկ Մողոք և Հերակլ փիլնիկեցի՚ի պաշտօն առեալ՚ի Կարքեդոն, նոցին միայն էին ընտրհաբաշխ, որք զարիւն անմեղաց պրագնեաք նոցա հեղուին. (Դիոդոր Սիկիլիացի Թ. ԺԴ)։ — Տես զդրօշեալս Մողոքայ գործի մարդապետ՚ի ձեռին. (Ալբ. Մարմորայ, Հնութիւն Սարդինիոյ. տախտ. 23, 51, հատ. Բ. 254։)

թիւնք, և անլուր անգթութեամբ վերատին նուաճմութիւնք։ Անվատահութիւն նորա՝ի հպատակս ստիպեր զինա թողուլ անպարիսպ զամենայն քաղաքս երկրին, զի մի ոտնկոխ և ապաւէն գտցէ ապստամբութիւն։ Վասն որոյ ընդ երեսեալ Ադամոկլէ յԱֆրիկէ՝ քաղաք քրիստոնեայ անձնատուր եղեն նմա անընդդիմանակալ։ Հռոմէ նմին հակառակ պարսպէր զքաղաքն զգաղթականս իւր, և պատուարք Պլակենտիոյ, Սպոլետոյ, Կասիլինոնի և Նոլայ խոչ ընդ ոտն եղեն արշաւանաց Աննիբաղայ։

Քաղաքն Հռոմուղեայ յառաջ և՝ի կորով երիտասարդութեան էր յայնժամ, մինչդեռ կարքեդոնացիք այն ատենն ապականութեան էր հասեալ, յորում տէրութիւնք ոչ ևս են բաւական հանդուրժել զեղծմանց՝ որ ջլատեցին զինա և մեղկեն, և ոչ զեղ դարմանոյ առ՝ի վերկենցաղումն մատուցանել։

Հռոմէոյ ծնայր ապա բաղդն ակնկալել։ Ատի՝ ազգ զինուորական հպատակ հրահանգաց, կրօնից, բարեկարգութեան բարուց, վառեալ սիրով հայրենեաց, և շուրջ պատեալ՝ի հաւատարիմ դաշնաւորաց. իսկ անտի՝ ազգ վաչառական, զեղծաբարոյ, վարձկանք ստամբակք և հպատակք ժպրոհք։

Բ. Առաջին կարքեդոնական պատերազմ։

(490–513)։

Արկին պետութիւնքս այսոքիկ մօրինակ փառասիրութեան, բայց ներհակակիրք, չմարթէին կալ ընդ երկար առ միմեանս առանց վնաս եալ զծովակալութենէ մեծափարթամ խորոց Միջերկրականին։ Սիկիլիա՝ի վեր քան զամենայն ունէր զրգռել զցանկութիւն նոցա։ Տիրէին յայնժամ՝ի կղզւոջ անդ Հերոն բռնաւոր Սիրակուսայ, Կարքեդոնացիք և Մամերտացիք։ Որք յետ ունքս՝ սերեալք՝ի ծննդոց բաղդախնդիր վաղնջուց վարձկանաց Ագաթոկլէ, հաստուած յիտալիոյ բնակեալք՝ի Մեսինա յամին 470, ձեռն արկին՝ի մարտ ընդ Սիրակուսացիս։ Ի սկզբան անդ դիմեցին՝ի խնդիր օգնականութեան առ Կարքեդոնացիս՝ տուեալ նոցա զինջնաբերդ Մեսինայ՝ի վարձ պաշտպանու-

Թեան նոցա. այլ վաղ տաղտկացեալ ՚ի սատկապահանջ նիզակակցացն՝ առաքեցին խնդրել զօրավիղն ՚ի Հռովմայ երբեք ազգակից, զի առաւելապոյնք Խոտալացի զինքեանս ասէին գոլ, որով և գաշնակից Հասարակապետութեան. և այլք՝ էին իսկ կամ համարէին զանձինս Հռովմայեցի[1]։

Ի տատամսել ծերակուտին՝ զօրացաւ Հաւանութիւն հաստարակաց, և Թէպետ չէին լինչ նոցա մեծարոյ Մամերտացիք, սակայն հաստատեցաւ պատերազմ։ Խումբ ի զօրաց արձակեալ անյապաղ ՚ի Մեսսինա, հալածեցին անտի զկարթեդոնացիս։ Ընդ հուսկ և բանակ ջոկեցին անցեալ ընդ կիրճն՝ հարկանէր նախ զՍիրակուսացիս և ապա զկարթեդոնացիս, պահանջէր կալուպեալ ՚ի կղզւոջն։ Ա.յսպէս առաջնոյ կարթեդոնական պատերազմին եղև սկիզբն։

Բազմադիմի հանգամանիք ձեռնտու եղեն Հռովմայեցւոց։ Մի զի կարթեդոնացիք առել լեալ էին Յունաց Սիկիլեայ. երկրորդ անգամ, զի քաղաք դեռ ևս ազատք, համեմատեալ զլեզեոնս Հռովմայեցւոց հրահանգեալս ընդ վարձկան զօրս Աքաեացն և Պիւռոսի և զօրավարաց կարթեդոնացւոց, որոց զամենայն ազգի ազգի եղերեան գործեալ էր յանցանել իւրեանց ընդ այն, ընդունէին զբռնաշխս իբրև ազատարարս իւրեանց։ Դարձեալ և Հերոն իշխան Սիրակուսայ՝ մայրաքաղաքին Սիկիլեայ, այն ինչ զջաւր առեալ զօրութեան զինուց Հռովմայեցւոց, դուշակեաց զնա կուտոյն և զկողմն կալաւ հզօրին։ Նիզակակցութիւն նորա յարատևեալ Հաւատարմութեամբ զամս յիսուն, պիտանի եղև յոյժ Հասարակապետութեան[2]։ Օգնութեամբ նորա յերկրորդում ամի պատերազմին տիրեցին Հռովմայեցիք Աքրականտայ և բազում քաղաքաց ՚ի նեղթաւորմն կղզւոյն. այլ տրմիղ նաւուց կարթեդոնացւոց ունէր զծով և զծովեզերս։

Պահասէր Հռովմայեցւոց զօրութիւն ընդ ծով[3]։ Կարէին արդեօք հայթհայթել բեռնբարձ նաւս, կամ՚ի ձեռն նաւա-

1 Պոլիբ. Ա. Ւ, ԺԱ։

2 Պոլիբ. Ա. ԺՉ։ — Զոնարաս. Ը. 164, և որ գինի։

3 Տե՛ս ՚ի վեր անդր յէջ 76, զի Հռովմ յետ առման Աքաթոնի (Ագաման նաւահանգիստ) զօրացաւ ընդ ծով, այլ էին նորա նաւք պատերազմիկք եռաթիք և

կան դաշնակցաց եռաթև քանի մի[1]. այլ էին նոցա հինգկալ-
դեան նաւք՝ ծանրութեամբն և երկայնութեամբ քաջապէպ
՝ի բեւեռանել զտոմսիլ թշնամեաց: Ծրութիւն անօրինակ էլից
զպահապանութիւն նաւատորմին, կառուցան հարիւր քան նաւք
պատերազմիկք ըստ օրինակի հնգաթի նաւու միոյ Կարթեդո-
նացւոց խրեալ առ ծովեզերք Խաղխոյ, և ՝ի ցանաքի վարժե-
ցան զօրականքն ՝ի թիավարութիւն[2]: Որպէս զի յերկաներեայ
աւուրս սպառազինեալ նաւատորմիղն՝ եհար զԿարթեդոնացիս
առ Միլեաւ (494), և յետ երից ամաց առ Տիւնդարեաւ
(497). և յերկոսին յայտնի նաւամարտս բարձան բնակար-
ծիք զօրութեան Կարթեդոնացւոց ընդ ծով:

Բայց յերկարել մարտին ընդ ցամաք առանց սահմանելոյ ինչ
երկատեաք, ասէ երկոքին եղեն՝ ի մոլ թաւիել զՀիմն յետին
՝ի ծովակալութիւն: Կարթեդոն սպառազինեալ երեքհարիւր
յիսուն յարկաճաճուկ նաւս, իսկ Հռոմ երեքհարիւր երե-
սուն հանդերձս: Նաւատորմիղքն երկոքին հանդիպեցան մի-
մեանց ընդ միջ Հերակլեա Մինոայ և հրամանատանին Եկնոմոյ.
և ՝ի մեծ ծովամարտին՝ ուր 30 բիւր մարդիկ[3] հարան ընդ
միմեանս, յաղթող գտան Հռոմայեցիք: Բայց էր Հանապարհ
Աֆրիկեայ, և Մ. Ատիլիոս Հռեգուլոս խրախուսեալ արդեօք
օրինակաւ Ագաթոկլէի՝ խորհեցաւ ՝ի նեղլոս աշխարհին ածել
զպատերազմն: Նախկին յաջողութիւնք զինուց նորա արկին
ահ այնպիսի ՝ի Կարթեդոն, զի առ ապրեցուցանելոյ զքաղաքն
՝ի սպառնալեաց պաշարման՝ պատրաստէր ձեռնթափ լինել՝ ի

Հնգաթիք: Վասն որոյ յոյժ է հաւանելի Վիւոսի պատմիչն՝ Հռոմայեցւոց յօ-
ժինակ առեալ զՀնգաթի մի նաւ կարթեդոնացի բեկեալ յափշտակ իւրեանց: Ոչ
ինչ ըստ ամենայն արդի գիտութեան խելամուտ եմք կազմուածոց պատերազմիկ
նաւուցն նախնեաց, և ոչ լուծցի ՝ի սպառ խնդիրս այս առանց դիպուածոյ օրի-
նակ ինչ գնոցին մեզ ընծայելոյ:

1 Ի կիր առին Հռոմայեցիքն զեռաթիա Տարենտացւոց, Լոկրեցւոց, Ելիսացւոց և Նէապօլսոյ անցանել նոքօք ընդ կիրճն Մեսսինայ: «Վտուն հնգաթիոց էր ծանօթ յիոսալիա». Պոլիբ. Ա. ի:

2 Պոլիբ. Ա. ի, իԱ:

3 Ի նաւս խուռաքանչիւր էին 300 թիավարք և 120 զօրական, այսինքն 420 այր առ նաւ, որով ՝ի նաւատորմին կարթեդոնացւոց լինէին 147,000 մարդիկ. իսկ ՝ի Հռոմայեցւոցն 138,600: — Պոլիբ. Ա. իե և իզ:

սահմանաց՝ որ էին նմա ի Սիկիլիա։ Հռեգուլոս յանդգնեալ առ անզօր դիմակալութեան Թշնամւոյն, կարծէր ի պայմանս խիստս խոնարհեցուցանել զկարթեդոն, այլ յուսահատեալ Թիեն վառեաց զՕփրիկեցիս ի յետին ձիգն, և Քսանթիպպոս ազգաւ Յոյն, զօրավար քաջ և բազմախնդիր՝ կացեալ ի գլուխ բանակին, ի պարտութիւն մատնեաց զբդեաշխին՝ ի սպառսպուռ ջախջախեալ զբանակ զօրաց նորա։

Հռովմայեցիք՝ որ ոչ երբէք լքանէին յարկածս, ածին զպատերազմն ի Սիկիլիա, և կալան անդրէն զՊանորմոն՝ քաղաք գլխոյ Կարթեդոնացւոց։ Ընդ ամն բազում նաւս խումբք երկաքանչիւրոց յապականութիւն դնէին անտի զսփռնս Աֆրիկեայ, և աստի զծովեզերս Իտալիոյ. ի ներքս կողմն Սիկիլիոյ յաղթականք էին Հռովմայեցիք, իսկ ի ծովս՝ Կարթեդոնացիք։ Երկիցս տորմիղք նաւուց Հասարակապետութեան բեւեան ի մերկաց և ի Թշնամեաց։ Յարկածէն աստի բռնադատեալ ծերակոյտն դադարեաց ի ծովամարտէ, և ամփոփէր պատերազմն զամն վեց յանկեան ուրեք Սիկիլիոյ։ Հռովմայեցիք ունէին զՊանորմոն, Կարթեդոնացիք զԼիլիբէոն և զԴրեպանոն։ Մարթ էր երկարել յոյժ մատրէն երկուստեք անպատմելի. բայց ծերակոյտն ի սպառել զանձուց աշխատէին՝ յօժարական տրուք քաղաքացւոց սպառազինեաց միւս այլ տորմիղ երկերիւր հնգաթիոց, յորում Լուտատիոս զօրավար կացեալ՝ ցիր և ցան կացոյց զխումբ նաւուց Թշնամեացն առ Եգատեան կղզեօք, և տիրապետեալ ընդ ծով՝ սպառնայր ի սով արկանել զԿարթեդոնացիս։ Ի հաշտութիւն խոնարհեցան նոքա ի ժամանակի, յորում մեծանուն զօրավարն Ամիլկար դարձուցանէր ի նոսա զահարկութիւն զօրութեան զինուց նոցա։ Քանզի անչափութիւն ծախուց և տուժից ընդ ամն քան և հինգ՝ լքուցեալ էր զԿարթեդոնացիս, մինչդեռ ի Հռովմ սէր հայրենեաց արհամարհեալ զոյժս գոյից՝ անկոտուր պահէր զանդրդուածութիւն քաջութեան՝ որպէս յաւուրսն յառաջինս։ Հարկ եղև Կարթեդոնացւոց Թողուլ զամենայն քաղաքս իւրեանց որ ի Սիկիլիա, և տալ փրկանս ազատութեան իւրեանց 2,200 քանքարս[1]։ Յայնմհետէ բովանդակ

1 Իբր երեքտասան միլիոն ֆրանք. (Պոլիբ. Ա. կԲ։)

կղզին, բաց՝ ի սահմանաց Հերոնի, եղև հարկատու Հռոմ-
մայեցւոց. և այս առաջին մարզ եկաց Հռոմայեցւոց:

Հանդերձ յաղթանակաւս այսուիկ զինուց՝ եթէ կրեցին Հռոմայեցիք և սուղ ինչ պարտութիւնս, պարտ է ընծայել զայն առաւելապէս անհատատութեան կարդաց պատերազմի՝ որ՝ ի փոխել զօրավարացամ ըստ ամէ փոխիկն: Սակայն բազումք՝ ի բռնակից ոչ վերջանային՝ ի Հարստութենէ և՝ ի յարատեւութենէ. և ծերակոյտն ընտրհատարտ գոհութեամբ վարձատրէր միշտ արժանապէս զվաստակս նոցա: Ահաք՝ ի նոցանէ ընտրեալն զփառս յաղթանակի, ընդ որս և Դուիլիոս՝ որ յառաջնում նաւամարտի յաղթող հանդիսացաւ, և Լուտատիոս՝ որոյ յաղթութիւն վախճան արար պատերազմին Հաշտութեամբ: Իսկ՝ ի Կարթեդոն ընտիրք՝ ի զօրավարաց նշանաւոր կային մախանաց և ապաշնորհութեան քաղաքացեաց: Գանդիպոս յաղթող Հռեգուլեայ արագ արագ մերժէր՝ ի քաղաքէն առ նախանձու ազատանուոյն՝ զորս ապրեցոյցն[1]. և Ամիլկար զտպարտեալ՝ ի դատակնութենէ ատենաց, չընկալաւ յաշխարհին զկարևոր զօրավիճն՝ ի կատարումն մեծամեծ խորհրդոց նորա:

Ի քան և երիս ամն պատերազմին Թէպէտ և պակասէր յաձախ Հռոմայեցւոց հմուտ և միօրինակ զօրավարութիւն, սակայն ոչ վերջացան լեգէոնք յիւրեանց վաղեմի արութենէն, մինչև՝ ի կռիւ խակ զալ ընդ օժանդակ զօրականին՝ վասն չտալոյ նմա տեղի՝ ի վտանգաւոր կայս Հակառամարտին: Վկայէ այսմ և անվեհեր արութիւն Կալպուրնիոսի Փլամմայ ռամկապետի, որ փրկեաց զլեգէոնս՝ ի կրճի ուրեք պաշարեալս Ամիլկառ, զի երեքհարիւրովքն իւրովք պահպանեալ նահանջէին, և գտեալ կենդանի՝ ի դիակոյտս անկելոց, ընդունէր՝ ի քէշխէն պատիկ՝ ի սաղարթից. մրցանակ անփառունակ՝ այլ շատ խակ յայնժամ՝ ի յորդոր դիւցազնական արութեան: Նմանապէս՝ ի նոսա ազնուականք յայն ծաղ բարձրութեան էին հասեալ՝ մինչև հատուցանել և թշնամոյ զարդար իրաւունս. քանզի բռնաշխեն Լ. Կոռնելիոս արար յուզարկաւորութիւնն

1 Պոլիբ. Ա. 13:

շքեղ Աչեռոնի զօրավարն կարքեդոնացւոց, որ արուեստից քաջութեան զկին՝ ի ձեռին անկեալ էր՝ ի պատերազմին ընդդէմ նմա[1]։

Յաւուրս առաջնոյ կարքեդոնական պատերազմին, բազում յարձակմունս գործէին Կարքեդոնացիք՝ ի ծովեզերս Իտալիոյ, սակայն չէղև երբէք հանել նոցա բանակ բազմաձեռն՝ ի ցամաք, չկարենալ գտանել կուսակիցս յազգաց անտի՝ ի մօտոյ նուաձելոց. զի ոչ Սամնիտացիք, և ոչ Լուկանիացիք՝ որ կուսակիցքն եղեալ էին Պիւռռոսի, և ոչ իսկ յունական քաղաքք հարուածոցման Յանդ կղզւոյն խլրտէին յապստամբութիւն։ Ակնարկ իսկ՝ որ յայնկոյս Ալպեանց, որոց փոքր ի յառաջ խլրտեալ էր, և զոր ընդ հուպ տեսցուք գիմեալս՝ ի զէն գալ, անշարժ կային։ Վստահանալով՝ որ՝ ի վերջ կոյս կարքեդոնական պատերազմիս եղեն՝ ի Սալենտացիս և՝ ի Փալիսկեանս, չէին ինչ ծանուցք, և չերևի իսկ խոստեալ նոցա՝ ի պատերազմին մեծ՝ որ ընդ Հռովմ և ընդ Կարքեդոն[2]։

Ա. յս հաստատութիւն նոցա ընդդէմ ամենայն հրապուրանաց ապստամբութեան ցուցանէ զարդարակորով վարչութիւն Հասարակապետութեան, և զգիտել նորա զոհ ունել զպարտեալս։ Ոչ ի ինչ տրտունջ լսել լինէր յեթ մեծամեծ իսկ արկածից, և սակայն վիշտք մարտի ծանրանային չարաչար՝ ի վերայ շինականացն՝ որոց հարկ էր անդադար թօղուլ զանդաստանս աւ՝ ի ընտ զպահպանութիւն լեգէոնից։ Ա. անկին մեծարոյ էր յոյժ ծերակոյտն առաջի քաղաքացւոց, և արտաքոյ այնպիսի էր վարկ հաւատարմութեան, զի յաձախեն նմա անկեղծ նուիրակութիւնք։

Առաջնոյ այսր կարքեդոնական պատերազմի ազդեցութիւն մեծ եղև՝ ի բարս Հռովմայեցւոց։ Մինչև ցայնժամ չէր նոցա կցորդութիւն ինչ անընդհատ ընդ Յոյն. աշխարհահակարութիւն Սիկիլիոյ յաձախեաց զայն և արծարծեցոյց, և վաղ ընդ վոյթ զգացոյց որ ինչ Հելլենական քաղաքականութիւն էր օգտաբերութիւն միանգամայն և վնասակարութիւն։

1 Վալեր· Մաքս· Ե· 1, 2։
2 Տիտ· Լիւ· Հատ. ԺԹ։

Ամառաք կրօնականքը Երկոցունց ազգացս այլազգ էին՝ ի միմեանց, Թէպէտ և Հռովմէական դիցապաշտութիւն չէր մնաց ի յունականին։ Նոյն ցամաքամնդը, խառատակը և ազատախոհ մարդիկ. իսկ Հռովմայեցւոց ոչինչ այսպիսի. այլ խորամուտ էին նոցա հաւատքը, անպաճոյճ և անկեղծ. Թէպէտ և անդատին՝ ի սկզբանէ ընդ քաղաքական իշխանութեամբ արկեալ էր նոցա զկրօնս, և գուն գործեալ օգտակար առնել զայն պետութեան։

Մուծին ցոյնք Սիկիլեայ՝ ի Հռոմ զկրկին աղանդս խռովութեան, որոց սերմանք յետոյ ուրեմն բողբոջեցան, և ոչք Թերևս յարմարագոյնք բնաւորութեան ընծայելոյն՝ ի նոյն՝ քան ընծայողացն։ Աղանդն ստոյիկեան կազդուրեաց զհրահանգս քաղաքական առաքինութեանց, առանց մեղկեալ զնոցայն վաղեմի խստութիւն. իսկ եպիկուրեանն, ընդարձակագոյն ևս տարածեալ՝ ոչ անազդանեաց զառածանել զազգն՝ ի խնդիր հեշտալեաց զգայութեան։ Եւ երկաքանչիւր ուսուցանելով արհամարհել զմահ, զօրութիւն ահեղ յաւելին ժողովրդեան՝ որ հետևող եղև նոցա։

Սպառեալ էր գանձ Կարթեդոնի՝ ի պատերազմէ. խումբ վարձկանաց զրկեալ՝ ի ռամկէ՝ նշխարեցին Աֆրիկէ և՝ ի Սարդինիա. հանձար ևեթ Ամիլկարայ նուաճեաց զնոսա։ Ի հալածահարութենէ ապստամբացն զրզռեալ բնակիչք կղզւոյ՝ զին առին, և յաջողեցան մերժել զնոսա յերկրէն։ Ցայն պատեհ առեալ Հռովմայեցիք միջամուխ եղեն, պատճառեալ ծերակուտին՝ որպէս երթեալն վասն Մամերտացւոց զի էին՝ ի վարձկանս Սարդինիոյ և Խռալացիք։ Ուստ կղզին, և յաւելին յաղթողք այլ ևս հարկս՝ ի վերայ Կարթեդոնացւոց, զի նաւս ոմանս վաճառականս կալեալ էր նոցա՝ ի ծովախնդս անդ։ Ցոր Պոլիբիոս զարմանալ պարտաւէ զվեղծանել նոցա զօրութեամբ[1]։

Կարթեդոնացիք կորստեամբ նաւատորմին և վտարանդութեամբ զօրացն տակաւրայեալ՝ խոնարհեցան՝ ի պայմանս հնազանդ։ Մեկնեալ էր նոցա՝ ի Սիկիլիոյ առանց դժկամակելոյ Սիկիլիա-

1 Պոլիբ. գ. ծ, իկ, իզ։

*ցաց ընդ չա նոցա, այլ ոչ նոյնպէս և՛ ի Սարդինիոյ· զի վար-
ժութիւն նոցա անդ և պետութիւն սիրելի էր ժողովրդեան,
վասն Հասարակաց արդեօք կրօնից, և՛ ի Փիւնիկիոյ յոլովից՛ ի
քաղաքաց անտի սերելոյ[1]: Ազատասիրութիւնք նոցա յաձախա-
ւորք ընդ երկար ժամանակս՝ վիպէին սիրոյ նոցա ընդ վաղեմի
տեարս իւրեանց: Զայնու ժամանակաւ կալան Հռովմայեցիք և
զՎոլսիկա, և՛ ի 516 ամի ց518 վանեցին պատերազմաւ զՎի-
գուրացիս և զքեզս Ակէտաց, ընդ որս խաղաղութեամբ էին՛ ի
քառասուն և՛ ի հնգից ամաց հետէ:*

Գ. Պատերազմ Լիբիկեայ:

(525):

*Մինչդեռ պահէր Հասարակապետութիւնն զինուք զսահ-
մանս իւր՛ ի հիւսիսոյ յերեսաց Ակէտաց և Վիգուրացւոց, և
մարտնչէր՛ ի Սարդինիա և՛ ի Կոլսիկա հակառակ կուսակցու-
թեան Կարքեդոնի, ձեռն էարկ ընդդէմ փոքու բարբարոս ազ-
գի՛ ի միւս այլ արշաւանս, որ չէր խոկ դժուարին, և յոլովից յոյժ
արգասեաց էր նմա առիթ: Գանգի պատերազմին Լիբիկեայ
բանայր առաջի զինուց Հռովմայ Ճանապարհ՛ ի Յունաստան և
Ասիա՝ որ ընդ յաջորդօք Ալեքսանդրի էին յոյժ ծաւացեալ
ընդ յունական քաղաքականութեամբ: Ի հզօրա-
նալ Հռովմայ ընդ ծով՝ անկ էր նմա այնուհետև զգուշութիւն
պահպանութեան նորին: Բնակիչք արևելեան ափանց Ադրիա-
կանին պարապեալ՛ ի յուղկահարութիւն, խոշտանգէին զվա-
ճառականութիւն, համարձակեալ ածել յաձախ զառարհա-
րութիւնս իւրեանց մինչև ցՄեսսինա, և հարկանել զնաւա-
տորմ Յունաց՝ որ յղեալն էր ընդդէմ նոցին[2]: Հինգ այսոքիկ
՛ի Լիբիկեացւոց էին՝ զորս Յոյնք խուժս համարէին, այսինքն
անյոյնս այլազգիս, Թէպէտ և չլինէ ինչ օտար կարծել՛ ի նոսա*

1 Ի Փիւնիկեացւոց անտի ընկալան Սարդենիացիք զքաղաքականութիւն, իսկ Սիկիլիացիք՛ ի Յունաց: Ասի պատճառք բարեկամութեան առաջնոցն ընդ Կարքեդոնացիս, և գարշելոյ՛ ի նոցանէ Սիկիլիացւոց:

2 Պոլիբ. Բ. Դ, ե, ժ:

*ազգակցութիւն ինչ։ Նիզակակից զժպհիք էին նոքա թա-
գաւորաց մակեդոնացւոց, զի հակառակ իսկ նոցին առնուին
յաձախ զինս. ազգ անվեհեր և վայրագ, պատրաստ ի վաճա-
ռել զծառայութիւն իւր և զարիւն, որոց միանգամ կամիցին
առնուլ զայն գնոց. միով բանիւ՝ նման արդի Ա.լպանիացւոց՝
որ համարին սերեալ ի նոցանէ, հալածելոց ի լերանցամէջս
հերեաց արշաւանաց Սլաւաց[1]։*

*Ա.ղքայն Ա.իւրիկեացւոց մանուկ էր, և մայր նորա դիմոյն
Տեառա վարէր զաշխարհն։ Ա.յս ևեթ շատ է ի ցուցանել քանի՛
օտարք էին նոքա ի քաղաքականութենէ Հելլենաց և Հռով-
մայեցւոց։ Դևմետր՝ իշխան ոք Փարոսի (Ա.զլնայ)՝ զինուորեալ
դիմոյին, ունէր զԱեաւն Կորկիւրա ի կալուած (զկղզի որ արդ
կոչի Գուրցոլա), և էր նորա իբրև առաջին պաշտօնեայ։ Զեղև
ինչ դժուարին Հռովմայեցւոց յինքեանս ձգել զիշխանն. և
քանզի Ա.իւրիկեացւոց երաւացի պատճառս տուեալ էր պատե-
րազմի՝ սպանանելով զՏրեշտակ Հռովմայեցւոց[2], արձակեաց
ծերակոյտն վաղվաղակի բանակ մի զօրաց և նաւատորմ առ ի
նուաճել զնոսա (525)։ Եթող Դևմետր զկղզի իւր ի Հռով-
մայեցիս, և եղև նոցա այն առնկուիս տիրել անտի Ա.պոլանիոյ,
Դիւռաքիոնի, Նուարիոյ և մասին միոյ մեծի ծովեզերեայց։
Ա.իւրիկեցիք զամիս ինչ զդէմ կալեալ՝ խոնարհեցան ապա և
խոստացան յետս կալ ի յուղկահարութենէն. Թողին ի յաղ-
թող ի ծովեզերեայ քաղաքաց քանի մի, և հաւանեցան տալ
Դևմետրեայ՝ նիզակակից Հռովմայեցւոց՝ զինամակալութիւն
Թագաւորին իւրեանց[3]։*

*Պատերազմաւ այսուիկ լինքն յանկոյս Հռոմ զսէր և
զվարկ ցունդց առնելոյն։ Ա.թենացիք և մանաւանդ նիզա-
կակցութիւն Ա.քայիոյ ընդհակառակս բազում յոյժ մատուցին
Հռովմայեցւոց, և ընկալան այնուհետև զնոսա ի պաշտպանս
ընդդէմ բազմավտանգ դրացեաց իւրեանց՝ Թագաւորացն Մա-
կեդոնիոյ։ Բայց Ա.իւրիկեացւոց չեղև բաւական խրատն այն
յուղղութիւն, և դարձան վերստին ի տուէր չարիսն յետզա-*

1 Հասան, խորհրդաժողովին պԱնտիոքացոց։
2 Փետր. ԲՌ. ե։ — Ասպ. Պոպերազմանէ Ի.իւրիկոյ, է։
3 Պոլիբ. ԲՌ. ԺԱ, և որ զկնի։

կելոյ ընդ ծով։ Ոմանք պոյ զկնի ամոյ տասոյ միւսոյ ամի ապշաւելին Հռովմայեցիք պատուհասել զԱտրիայիս 'ի խորս Ադրիականին[1], և յետ ոչ բազում աւուրց յանդուգն ծերակուտին՝ ածաւ պատերազմն 'ի Վիրիկ։ Հարկ եղև Դեմետրի խոյս տալ առ Փիլիպպոս արքայ Մակեդոնացւոց, մինչդեռ մնուկ արքայն լինէր դաշնակից համ Հպատակ Հռոմայեցւոցն[2]։ Ցայնս ժամանակս և միւս այլ պատերազմ դրաւէր զուշ Հռովմայեցւոց։

Դ· Արշաւանք ազգաց որ յայսկոյս Ադրիայ։

(528)։

Խորհուրդ ծերակուտին յայտնապէս էր տարածանել զսահմանս իւր 'ի հիւսիսակողմն Իտալիոյ, և պահել զայնս յարշաւանաց կելտաց։ Յամի 522 խորհրդով Փլամինեայ ռամկապետի, մերժեցան Սէնոնք 'ի Պիկենանէ, և երկիր նոցա տուաւ 'ի կալուածս Հասարակաց՝ բաժանել 'ի ռամիկն։ Այս գործ՝ դաշնակ բազկին՝ որ միայր կելտական մօտակայ ցեղից, խռովեաց զնոսա յոյժ, և պատրաստեցան յահաւոր արշաւանս։ Ի 528 ամին կոչեցին նոքա յայնմ կուսակ Ալպեայց ամբոխ խուժադուժ յապգէ Գեսատաց[3] պատերազմողաց։ Մեծ էր ահ երկնչելին 'ի Հռոմ։ Նոյն սէր Հայրենեաց, և նոյն սպառնալիք վտանգի ամենայն ազգաց Իտալիոյ, նոքին ոգւով վառեալ[4] խրախուսեցին զնոսա դիմել 'ի զէն. և կազմեցին բանակ 13 բիւր հեռւակախումբ զօրու և 6,000 այրուձիոյ, և ազգահամար չափահասից կարողաց 'ի զէն հասանէր 80 բիւր։ Թէ զօրաց գաւառն գաւառն ընծայէ զպահակալն սեղեկու-

1 Տիտ· Լիւ· Հռոբնպէէ· Ի· ամ Հռովմայ 533։ — Որոզ· Դ· ԺԳ։

2 Պոլիբ· Գ· ԺԴ, և որ զկնի։

3 Ժողովուրդ բնակեալ ընդ Հռոդանոս և ընդ Ալպեայս· (Պոլիբ· Բ· ԻԲ, ԼԴ։)

4 «Ոչ զՀռովմ միայն համարէին պաշտպանել Իտալացիք ահաբեկք յերեսաց արշաւանաց Կելտաց, այլ քաջ 'ի միտ առնուին, զի զկերկուքեանէ Հասարակաց էին բանք»· Պոլիբ· Բ· ԻԳ։

Թիւն բազմանարդութեան բոլոր Խոալխոյ, որ Թուի լեալ յայնժամ՝ առանց՝ի համար արկանելոյ զտղուկն՝ զոգեաս նոյն ընդ այժմուս[1]. բայց միայն զի կարողք՝ի զէն առաւելուին յոյժ յայնժամ[2]: Վկայութիւնքս այսոքիկ տան զարձեալ՝ի միտ առնուլ՝ Թէ որպէս Սաճիխացիք՝ի քառանկեայ ևեթ առաց հեառ զերծք յաղեառոյ արիւնահեղ պատերազմաց, կարէին դեռ ևս կազմ ունել 77,000 արս՝ի պատերազմ:

Մինչառաւ եղեն ևեթք միմեանս՝ի խորս Եարուբիոյ, և խոտաւէին՝ի Ֆինգալե զպուռնդ զօրաց Հռովմայեցւոց. այլ ընդ յանկարծահաս գալուստ բդեշխին Լ. Եմիլեայ՝ որ գայր՝ի Հռոմինեայ, ահաբեկեալ՝ յետս նահանջեցան. և հանդիպեալ միւսոյ բդեշխին Կայեոսի Ամիլեայ, որ զարձ արարեալ՝ի Սարդենիոյ՝ հանեալ էր զզօրս իւր՝ի Պիսա, փակեալ՝ի մէջ երկուց բանակաց կողեան՝ի սպառսպուռս: Եւ՝ի յաջորդ առն ցեղք Կելտաց վանեալ մի ըստ միոջէ անդր քան զՊատոս, ՝ի պարտութիւն միւսանգամ մատնեցան յաղեառն Ամպոյ. և

1 Ահա ըստ Պոլիբեայ (Բ. ԻԳ.) Թիւ էրկրաքառամբ զօրաց Խոալխոյ.

Բանակք էրկու բդեշխից՝ իւրաքանչիւր՝ի լեգէոնից՝ի 5,200 հեառակաց և յ300 այրուձիոյ	20,800 հեառակ	1,200 հեծ.
Զօրք դաշնակցաց.	30,000	2,000
Սաբինացիք և Եարուբացիք.	50,000 և աւելի քան զ4,000	
Ումբրիացիք և Սարսինացիք՝ բնակիչք Սէննեհանց.	20,000	»
Կենոմանիք և Վենետք.	20,000	»
Ի Հռոմ.	20,000	1,500
Դաշնակիցք (պահեստի զօրք).	30,000	2,000
Լատինք.	80,000	5,000
Սաւնիտացիք.	70,000	7,000
Յապիւգեանք և Մեսապեանք.	50,000	16,000
Լուկանիացիք.	30,000	3,000
Մարսիք, Մարրուվինացիք, Փրենտացիք և Վեստինք.	20,000	4,000
Ի Սիկիլիա և՝ի Տարենտոն կրկին լեգէոնք 4,200 հեառակաց և 200 այրուձիոյ.	8,400	400
Քաղաքացիք հռոմայ և կամաւորիացիք.	250,000	23,000
	699,200	69,100

2 Տես՝ի յիշատակարդութիւն Զումբգայ. Ձեռ բաղմամարդութեան՝ի Հռոմ. Պեռլին, 1841:

լուծանելիականութեան քնակէսց յայսկոյս Ալպեայց, առանց
՚ի սպառ նուաճելոյ երկրի նոցա. զի գաղթականք կրեմոնայ և
Պլակենտիոյ ոչ սակաւ օգնեցին ՚ի պահպանութեան նորա:

Մինչդեռ հիւսիսակողմն Իտալիոյ թուէր բովանդակ գրա-
ւել զուշ Հռովմայեցւոց, դէպք ծանունք անցանէին ՚ի
Սպանիա:

Ե· Երկրորդ կարթիքոնական պատերազմ:

(536–552):

Մինչդեռ Կարթէդոն խոնարհեալ կորուսանէր զպե-
թիեն ծովու, զՍիկիլիա և զՍարդինիա, իսկ Հռովմ ընդ հա-
կառակն՝ հաստատէր աշխարհակալութեամբքն ՚ի Միջերկրա-
նեին, ՚ի Լիբիկէ և յայսկոյս Ալպեայց, յեղակարծումն կեր-
պարանափոխ եղեն լրոք: Վտանգք սպառնացեալք Սիրիկեայ
ոչ ևս էին. զլուխ ամբառնայր Կարթէդոն ՚ի կորանացն, և
Հռովմայ՝ որ սակաւ մի յառաջ հանդարէր ուժաւն քիւր այր
կազմ առնել ՚ի վէն, հասանէր դողալ ընդ հուպ զիրկութենէ
իւրմէ: Անակնկալ այս փոփոխումն պատահէր յերևել միայն
՚ի կարթէդոնական բանակին առն միոյ քաջի պատերազմողի,
ասեմ իսկ Աննիբալայ:

Հայր նորա Ամիլկար՝ զլուխ և առաջնորդ հզօր կուսակցու-
թեան Բարկայ, ապրեցոյց զԿարթէդոն՝ խորտակեալ զապստամ-
բութիւն վարձկանաց: Այս յանձն առեալ զգործ պատե-
րազմին Սպանիոյ, նուաճեաց զազգն պատերազմող, և կազմեաց
լեռնեայն բանակ ահաւոր: Եւ անդստին ծանուցեալ նորա
զքաջութիւն Աստրուբալայ ուրուն պատանւոյ, յինքն զնա
յանկուցեալ էր՝՚ի մոի եղեալ յաջորդ իւր զնա կացուցանել.
վասն որոյ և փեսայացուցեալ զնա իւր, ՚ի նա հաւատացեալ էր
զգաստախտակութիւն որդւոյ իւրոյ Աննիբալայ, յոր եղեալ
էր զամենայն յոյս ցանկալի: Արդ իբրև սպանաւ Ամիլկար յա-
մին 526, փոխանակեաց զնա Աստրուբալ ՚ի զօրավարութիւն,
Յառաջխաղացութիւն կարթէդոնացւոց ՚ի Սպանիա, և
զօրութիւն զինուց նոցա անդ, ահ արկանէր ՚ի ծերակոյտն, որ

անդամին՝ ի 526 ամի քահանապետէր զԿարքեդոնն՝ ի հաստատութիւն նորոգ դաշանց, մի անցանել կարքեդոնական քահանայքն ընդ Նբեր, և մի տալ պատերազմ ընդ ազգս նիզակակից Հռոմայեցւ[1]։

Վերջինս այս պայման Հայէր՝ ի Սապուհատացիս, ընդ որս վէճք էին ցայնժամ Կարքեդոնացւոց։ Հռոմայեցիքն չհանդուրժէին նմին զառաջ բնակս երկրին, պատճառս առեալ՝ ի վկայութենէ առաքելապատում ինչ վկայից՝ որ ժողովուրդս զայս հաստած յԱրդէացւոց յաւուրս Տրդատեան մարտին անդր հանդերձ եկեալ[2]։ Նովին զգուշութեամբ վարէր Հռոմ ընդ դաշնակիցս՝ ի Սպանիա՝ առ՝ ի զինել զշարժուն վաղեմի ոստայնէն իւրոց. և որպէս երբեմն Մաքեդոնացւոց, ցուցանէր և առ զուարթ կարեկցութեան ընդ ազգի միոյ տկարի, որ՝ ի վտանգի կայր յաձախ յերեսաց Կարքեդոնացւոց։ Ահ ինչ հրամանն հասեալ Աստրուբալայ՝ ի զլուխ տանել զնոր դաշնադրութիւն, սպանաւ՝ ի միոյ ումեմնէ՝ ի Կելտաց յամին 534, և բանակն՝ առանց մնալոյ հրամանի՝ ի Կարքեդոնէ, կոչեաց իւր զօրավար զՆնիբաղ՝ որ քան և ինուն ամաց էր յայնժամ։ Հակառակ զաւոյ ոստից՝ հաստատեցաւ ընտրութիւն նորա, և եթէ զեղեւէր առեան խորհրդոյ՝ ի Կարքեդոն, թերևս և յապստամբութիւն իսկ գայր զօրն։ Կատակից բարկայ զօրացան՝ ի խորհրդեան անդ, և հաստատեցաւ զօրավարութիւն պատանւոյն։ Սիրելի յոյժ էր նա զօրականին՝ որ իբրև՝ ի սան իւր հայէր՝ ի նա. և էր նորա իշխանութիւն անպայման՝ ի վերայ զօրացն, և ձեռներէց յամենայն ինչ լինել հինաւուրց զօրքն հանդերձակէր։

Սապուհատացիք պատերազմաւ էին ընդ Տրբոլացիս[3] նիզակակից համի հաստատակ Կարքեդոնի։ Արհամարհեալ Աննիբալայ զդաշինս կռեալս յամին 526, էին պաշարեալ զՍապուն, և կալաւ զայն յետ բազմամեայ պաշարման. զի հանդերձ անլրաւեալ զՍապուհատացիս յարձակմանէն՝ ի վերայ դաշ-

1 Պոլիբ. Գ. Լ։
2 Տիտ. Լիւ. ԻԱ. Է։
3 Ազգ. Պոպէրաչհանի Սպանիոյ. Ժ։

*Նահկյաց իւրոց։ Ի դիմել նոցա առ Հռոմմայեցիս յաղէտս օգնա-
կանութեան՝ ծերակոյտն նուիրակս ևեթ արձակեաց ոմանս
առ Աննիբաղ՝ որ ոչ լուաս նոցա, և այլ՛ ի Կարթեդոն, որք
իբրև հասին, ոչ ևս գոյր Սագունտոն։ Այլ բազում յղեալ
՛ի յաղթականէն լուեցոյց զիաւակցութիւնն ասեալ՝ և ժողո-
վուրդն և զօրականք յաջողուածծուին խրախուսեալք, ըղձանային
՛ի պատերազմ։ Դեսպանք հռոմմայեցիք առաքեալք՛ ի պահան-
ջել տուգանս և զգլուխ իսկ Աննիբաղայ, արհամարհեալք
գարձան կոտակոր, պատերազմ անհրաժեշտ ազդեալ։*

*Հռոմմ անյողդողդ հաստատութեամբն իւրով կազմեցաւ
՛ի պատերազմ։ միւմ՛ ի բռնէշխինցն պատուէր ետ անցանել ՛ի
Սիկիլիա և անտի յԱֆրիկէ, և միւսումն ածել բանակ ՛ի
Սպանիա ընդ ծով, և հալածել անտի զկարթեդոնացիս։ Բայց
Աննիբաղ առանց ծնողաց ելից զբռնութեանն, ջու արար
զօրօք՝ ածել զպատերազմն Իտալիա. և մերթ ՛ի խաղաղու-
թիւն ընդ Աբելիբեաս կամ ընդ Աբեաս խօսեալ՝ առ ՛ի կարող
լինելոյ անցանել ընդ երկիր նոցա, և մերթ ահարկութեամբ
զինուց եհաս նա յաւիւնս Հռոդանոսի։ Այդ եղև Պ. Կոռ-
նելեայ Սկիպիոնի բռնէշխի՝ որ սահմանեաւն էր յաշխարհա-
կալութիւն Սպանիոյ և նաւարկեալ յարևելեան բերան գե-
տոյն, զի վաղ իսկ մտեալ էր Աննիբաղ Իտալիա։ Եթող
նա յաւիժաւ զբանակ իւր ՛ի ձեռս եղբօր իւրում Կնէոսի, և
արագ արագ դարձ արար ՛ի Պիսա, և կացեալ ՛ի գլուխ զօ-
րուն պատրաստելոյ ՛ի պատերազմ ընդ Բոյացիս, անց ընդ
Պադս՝ յոտացեալ հապճեպ շտապաւն հասանել ՛ի վերայ
զօրավարին Կարթեդոնացւոց յինջանել նորա խոնջ և վաստակ
՛ի գաշտատեայս Իտալիոյ։*

*Հանդիպեցան միմեանց բանակքն երկոքին յաւիւնս Տե-
ռենոյ (526)։ Սկիպիոն ՛ի պարտութիւն մատնեալ և վիրաւո-
րեալ՝ յետս նահանջէր ՛ի գաղթականս Պլասկենտիոյ. և միա-
ցեալ նմա ՛ի քաղաք անդր ընդ իշխանակցի իւրում Տիբե-
ղիոսի Լոնգոսի՝ եհ դարձեալ պատերազմ ՛ի Տրեբիա
ընդ Կարթեդոնացիս։ Եւ դարձեալ Աննիբաղ մեծաւ յաղ-
թութեամբ տիրեաց ՛ի վերայ մեծի մասին Լիգուրիոյ և Կել-
տոյ յոյսկոյս Ալբեայց. և բնակիչք երկրին պատերազմօղք*

ընկալան զնա ցնծութեամբ, և զօրացուցին զանակ նորա, որ նաւագեան էր յանցս լերանց՝ կոտսեալ իբր երեսուն բիւր մարդիկ։ Ընդունելութեամբն՝ զոր եգիտ առ Կեսու՝ խրա- խուսեալ զօրաւարն կալքեդոնացի, խորհէր յինքն յանկու- ցանել և զնուազսին՝ աւերասուրեալ ազատութիւն ազգաց ընկճելոց, և արձակելով յետ յաղթութեան զգերեալս առ հասարակ՝ ի դաշնակցաց. քանզի յուսայր զի զերին դարձա- ւոր՝ լցցի նա ի հրեշտակ օգնականութեան։ Ի բանալ դրանց պարսպացոյ 537 ամին եմուտ նա յՅորուբիա, անց ընդ մե- ծաւան Վալ ոի Գիանա, և ձգեալ գՀետ իւր զբանակն հուռ- միական ի Ձախկնա Տրապիզնայ ի վայրս դժպատեհս նմին, ի սպառ ջախջախեաց զայն։

Մեծ էին արհաւիրք ի Հռոմ. իսկ յաղթողն յաստակա- նութիւն եդեալ զՅորուբիա, և ընդ վայր յարձակեալ ի Սպոլետոյ, էանց ընդ Սպեննեանս, և անկաւ յՈւմբրիա և ի Պիկենան, և անտի չաւ ատար ընդ Սաննիտն ի ծովափունս Սպուլեայ։ Եւ զինչ առնել էր արդեօք Ըննիբալայ, որ հա- սեալ ի միջակէտ Իտալեայ, հեռի յամենայն կցորդութենէ հայրենեաց, առանց կարևոր կազմածոյ ի պաշարումն քաղա- քաց, առանց ապահովութեան ի նահանջ, և ունելով ի թի- կանց զբանակն Սեմպրոնեայ։ Մեկնել թերևս և թողուլ զՍպեննեանս ընդ ինքն և ընդ Հռոմ. մերձենալ յազգս՝ որ ինքն միտէին, և աշխարհակալութեամբ գաւառաց հարա- ւային՝ դնել հիմն հաստատուն ի կատարումն խորհրդոց իւ- րոց ուղղակի կցորդութեամբ ընդ Կալքեդոնի։ Յաղթու- թիւն Տրապիզնեայ ոչինչ աներկիւղան գործէր զնա յերկրի թշնամւոյն. քանզի ի Կեստաց որ յայսկոյս Սպլեայց, ամենայն ազգք Իտալիոյ հաւատարմութեամբ էին ընդ Հռոմայեցւ, և չև ևս ոք ի նոցանէ յաւելեալ էր ի զօրս նորա[1]։ Ա. յայնժ Ըննիբ- բալ կայր ճնայր ամիս յոլով ընդ Կասիլինան և ընդ Ա.րպի, ուր մարթի իսկ էր Փաբիոսի Հնարիմաց Հարստութեամբն ի

1 Պոլիբ. Գ. 2։ — «Դաշնակիցք հաւատարիմ կացեալ էին յայնժամ». Տիտ. Լիւ. ԻԲ. ԿԱ։ — «Հաւատարմութիւն՝ զոր ոչ պահէին նոքա ընդ մեզ յարկածս մեր». Ախենաբանութիւն Փաբիոսի, Տիտ. Լիւ. ԻԲ. ԼԹ։

սավ արկանել զսանակն կաղքեդոնական, եթէ ժամանակ զօրավարութեան նորա էր աւարտեալ։ Դարձեալ զի և կուսակացք սահման ցաւոցեալ ընդ յամեցումն մարտին՝ զոր հանդարտէին վատութեան, ամբարձեալ էր զվարդան զայր սակառակար ի բռնութիւն՝ յիշխանակից Եմիլեոսի Պաւլոսի։ Մինչդեռ Անդիբալ կայր յԱպուլիա առ հարկի յաղթութեան զօրականին, յանդուգն խոտրդով պատահեալ նմին Հռովմայեցիք՝ ի պարտութիւն մատնեցան ի սպառ առ Կաննեաւ, և խորտակեցան կրկին բանակք բռնակից կազմեալ յուժ լեգէոնից, և ի նոյնչափ զաշնակցաց. սպանաւ 87,000 զօրականն[1] (538)։ Մին ի բռնակից անկաւ ի մարտին, և միւսն հեծելազօրութեամբ ի Վենուսիա։ Զոր բնութիւն ի Հռովմայեցւոց կողմանէ և ընդ դէմ Անդիբալայ ոչ ինչ կարացեալ ի կաղքեդոն կարճ մի մատանեայ ոսկւոյ կապել ի հեծելոց անկելոց ի Քառատարմարտին[2]։ Յայնմհետէ մատն մի Սաւնիտին, Ապուլից, Լուկանից և Բրուտիոնի յարեցան ի Կաղքեդոնացիս, մինչդեռ քաղաք Յունաց Տարաւակուզիոն Յանաքակղզւոյն կային մնային հաւատարիմ ընդ Հռովմայեցիս[3]։ Զայնու ժամանակաւ ի լուծն ազեաւոյն՝ Լ. Պաուլիոս արձակեալ ընդդէմ Կելտաց՝ հարաւ ի սայր սուսերի, և բեկաւ բանակ նորա յերեսաց Թշնամեաց։

Զարմանալի գտան Հռովմայեցիք յարկածս անդ. ծերացեալ կոյան Հարտատր քաղաքավարութեամբ ընդ առաջ ելեալ վարդանի, չնորհս ունէր նմա զի ոչ անցեալ եղև զփրկութենէ Հաւատարակատեաւթեան. այլ ոչ ևս կամեցաւ վարել ի գործ

1 Ի գունդս զօրաց Հռովմայեցւոց էր և հեծելախումբ սահմեայն. (Տիտ. Լիւ. Իէ. Խգ։)

2 Տիտ. Լիւ. Իբ. խթ. Իգ. ծբ։ — «Յերկրորդումն կաղքեդոնական մարտի՝ հաւատարակաց լեալ էր սովորութիւն տանելոյ մատանի, ապա թէ ոչ անմարթ էր Անդիբալայ երիս պրիւս մատանեաց առաքել ի կաղքեդոն». Պլին. Լգ. Զ. 4։ Ընդհակառակն Ապպիանոս. «Հազարապետաք զօրաց տանէին մատանի ոսկի, և ոք ոք ի ձեռանէ նոցա էին՝ երկաթիս». կարթէդոնական պատերազմաց. Ը. ճէ։

3 «Յունական քաղաք յօժարք ի պահ գաշանցն ընդ Հռովմայ». Տիտ. Լիւ. Իգ. Ա։ — Ի Բրուտիան իսկ Պեանդիս քաղաք փոքրիկ քաջութեամբ մեծաւ դիմակալեաց Անդիբալայ, և կանայք անդ իբրև զարս մարտնչէին. (Ապպիանոս. Ը. խթ։)

զզօրականն փախստեայ ՚ի մարտէ. և արձակեաց զնոսա ՚ի Սիկելիա, պատուէր տուեալ մի՛ զառնալ յՈտալիա, մինչ չև հալածեալ անտի զԹշնամին: Եւ ոչ յանձն էառ փրկել զգե-ներեալս Յունիբալայ, ասելով. Զեն ինչ պիտանիք. հայրենեաց ոք զին ՚ի ձեռին գերի անկանին [1]: Վասն որոյ սովորութիւն էր ասել ՚ի Հռոմ, զի յոյժ այլազգ և վարել ընդ հզօրն և ընդ խոնարհ քաղաքացւոյ [2]:

Ոչ ումեք խորհուրդ ՚ի միտս անկաւ խօսել ՚ի հաշտու-Թիւն. այլ քան զընկեր յառաջամատոյց լինէր փոխանակել զանձն և զինչս ՚ի վերայ հայրենեաց: Հանին նոր լեգէոնս, զո-րաժողով եղեն և ՚ի տարւոյ 8,000 այր, զորս յառաջին Ճա-կատամարտս պատերազմին ազատագրեցին [3]: Ի սպառել գան-ձուց աշխարհին, իւրաքանչիւր ոք ՚ի քաղաքացւոց յընչից իւրոց հանդանակեաց: Տեարք տարւոյ զինուորելոց, հարկահանք սահմանեալք ՚ի հանդերձել համբար զօրականին՝ յանձն ա-ռին զհատուցումն ՚ի վախճան պատերազմին: Իւրաքանչիւր ըստ կարի իւրում ունէր ծախուք իւրովք զազատագիրս ՚ի ծառայութիւն պատերազմիկ նաւաց: Ըստ օրինակի ծերա-կուտին և տիկնայք այրիք, և մանկունք իսկ չև ՚ի չափ հասեալք՝ տանէին զոսկի և զարծաթ իւրեանց ՚ի գանձ հասարակաց: Եւ արգելաւ մի ումեք աւելի քան զսահմանելոց արժէից պա-հել առ իւր զարդս ականակապս, անօթս և զրամ արծաթի համ պղնձի. և զարդուց իսկ կանանց՝ Ոպպեան օրինօք եդաւ չափ և պայման [4]: Եւ ՚ի սուգ մահու՝ երեսուն ևեթ աւուրք սահմանեցան սգոյ ականաց անկելոցն ՚ի մարտի [5]:

1 Եւտրոպ. Գ. 2:

2 Տիտ. Լիւ. ԻՋ. Ա:

3 Տիտ. Լիւ. ԻԳ. ԺԲ:

4 « Ոպպեան օրէնք, առաջարկեալ ՚ի ռամկապետէն Կ. Ոպպիոսէ ՚ի հե-պատոչն Կ. Փաբիոսի և Տիբերիոսի Սեմպրոնեայ (539) ՚ի սահմանալ երկրոր-դի կարթեգոնական մարտի, արգելուին կանանց մի աւելի քան զկէս ոսկւոյ կրել ՚ի զարդ, մի տանել հանդերձս նարօտս, և մի կառօք լծելովք յերի-վարաց շրջել ՚ի Հռոմ ընդ մերն մի, բայց միայն ՚ի գնալ ՚ի զոհ հասարակաց »: Օրէնքս այս առժամանակեայ սահմանեալ, խափանեցաւ ընդդէմ խորհրդոց Գ. Կաւոնի՝ ՚ի 559. (Տիտ. Լիւ. ԼԴ. Ա, 2:)

5 Վալէր. Մաքս. Ա. Ա. 15:

Վիրապոյն էր Անննիբալայ յետ Կաննեան պատերազմին քան յետ Տրասիմենայ խաղալ դէպ ուղիղ՝ի Հռոմ: բայց քանզի այնպիսի ոք զօրավար մեծ՝ անհնարին վարկաւ փոքձել զայն, չէ ինչ անկարեւոր զպատճառան խնդրել: Նախ՝ զի հզօրագոյն զօրութիւն նորա էր յայրուձին նումիդացի, անօ- գուտ՝ի պաշարումն քաղաքի[1]. և դարձեալ զի տիարապոյն էր սովորաբար՝ի պարսպամարտ. որպէս յետ Տրեբեան մարտին չկարաց առնուլ զՊլակենտիա[2]. յետ Տրասիմենեան մարտին ձախողեցաւ առ Սպոլետեաւ. երկոցս դէմ եդեալ՝ի Նէապո- լիս, չկրնեաց յարձակել՝ի նա. և ապա հարկ եղև նմա բաս- նալ զպաշարումն Նոլայ, Կումայ և Կասիլինանի[3]: Զինչ ապա զարմանք լցեն ընդ չկրնել նորա հարկանել զՀռոմ զբազմա- մարդն և զպատերազմատուժ:

Յայտնապոյն քան զամենայն ցոյցս հանձարոյն Անննիբալայ այն իսկ է, կալ նորա զամս հնգետասան Իտալիա՝ զրեթէ՝ի զօրութիւն ևեթ իւր ապաստան, չմարթել իսկ նմա ընդ զպակասութիւն զօրաց իւրոց՝ բայց՝ի նորոց գաշնակցաց, ծախիւք նոցին կեալ՝ անօգնական՝ի ծերակուտէ աշխարհն, ունելով ընդդէմ իւր զերկուս բանակս բղեշխից, և փակեալ՝ի Ցանաք կղզւոջ՝ի նաւահարմից Հռոմայեցւոց՝ որ պահէին զծովախուռնան առ՝ի խափանել զանցս զօրաց ա- ռաքելոց՝ի Կարթագինէ յօգնականութիւն: Գան ևեթ զօր- ծէր հաստատութեամբ ունել կարևոր ինչ վայրս՝ի ծովե- զերս անդ՝ի կցորդութիւն ընդ Աֆրիկեայ: Վասն որոյ յետ Կաննեայ պատերազմին գրաւեաց նա զԿապուա և զՀետ եղև

1 «Յայրուձին էր Անննիբալայ ամենայն յոյս»· Պոլիբ· Գ· ձԱ: — «Հեծելազօրն միայն Անննիբալայ պատճառք էին յաղթութեանց Կալքեդոնի և պարսո- ղեանց Հռոմայ»· Պոլիբ· Թ· Գ: — «Կորուստ նումիդացւոցն հինգհարիւրոց՝ի ծանրագոյն էր Անննիբալայ քան զամենայն կոտորածս, և յետ այնորիկ ոչ ևս՝ի հեծելազօրուն էր նորա առաւելութիւն, որով ցայնժամ յաղթող լեալ էր» (543)· Տիտ· Լիւ· ԻՉ· ԼՀ:

2 «Յուշ լինէր Անննիբալայ ձախողիլ իւր առ Պլակենտիա»· Տիտ· Լիւ· ԻԷ· ԼՓ:

3 Տիտ· Լիւ· ԻԳ· ԺԵ և ԺՀ: — Կալաւ Անննիբալ սովս զԿասիլինոն և զՆա- կերիա քաղաքս· իսկ միջնաբերդն Տարենտոնի դիմակալ լինէր զամս հինգ ան- պարտելի· (Տիտ· Լիւ· ԻԷ· ԻԵ:)

հասանել՝ ի ծով ընդ Նէապօլիս[1], ընդ Կումա և ընդ Բուցեղա: Ա.յլ ոչ ժամանեալ յայն, էառ զՄ.րսի և զՄալապիա յարևելեան եզր ծովուն, ուր ակն ունէր հանդիպել դեսպանաց արքային Մակեդոնիոյ: Եւ ապա արար իւր զԲրուտիոն ամուր ապաստանի, ուստի առնէր զարշաւանս իւր՝ ի քաղաքս ծովեզերեայս, մերթ՝ ի Բրունդուսիոն և՝ ի Տարենտոն, և մերթ՝ ի Լոկրիս և՝ ի Հռեգիոն:

Պատճառք ամենայն պարտութեանց զօրավարացն Հռոմայեցւոց՝ էր նախ զերազանցութիւն նուիրագոյն այրուձիոյն, և յոռութիւն լատինական զօրուն շտապաւ ժողովելոյ[2] քան զՀինաւուրց պատերազմավարձ զօրս Աննիբալայ. և երկրորդ անգամ՝ տարապայման յանդգնութիւն առաջի մեծի զօրավարին, որ ձգէր զհակառակորդս իւր՝ ի տեղի ընտրեալ հիւրմէ: Սակայն Աննիբալ՝ տկարացեալ յոյժ յաղթութեամբք իւրովք, զոչէր յետ կանգնեալ պատերազմին՝ որպէս Պիւռոս զկնի պատերազմին՝ ի Հերակլիա, զի միւս այլ նման օրինակ յաղթութիւն ածցէ իւր կորուստ[3]: Ս. Փաբիոս Մաքսիմոս կոչեցեալ վերատին յիշխանութիւն (539), կալաւ հաստատուն օրէնս մարտի, մինչդեռ Մարկելլոս իշխանակից իւր յանդգնագոյն՝ [4] դիմեալ պատերազմաւ կասեցուցանէր զթշնամին, բռնադատեալ զնա ամփոփել ամրանալ ջրեբղուսի՝ ի հիւսիսոյ զկապուա ունելով և զՎրսի, և՝ ի հարաւոյ զՀռեգիոն և զՏարենտոն: Յամին 543 բովանդակ պատերազմին էր զերկրամբք քաղաքօք. զիջնաբերդն Տարենտոնի պաշարէին կարքեղոնացիք, և զկապուա՝ կրկին բղեաշխք, ամրացեալք յընդդիմանալ յերեսաց քաղաքին, և՝ ի շրջապատանէշս՝ ի յարձականել թշնամոյն՝ ի թիկանց: Աննիբալայ փորձ փորձեալ յարձակմամբ՝ ի տուս և ոչ յաջողեալ, խոտոյ՝ ի վերայ Հռոմայեցւոց մոյ, յուսացեալ բառնալ զպաշարումն Կապուայ, և բաժանել զերկուսին բանակս բղեշխից, առ՝ ի հարկանել զիւուս ուրոյն՝ ի

1 «Իջանէ Աննիբալ՝ ի Նէապօլիս կոյս՝ եղեալ՝ ի մտի՝ ի բռնն առնուլ քաղաք ինչ ծովեզերեայ յընդունելութիւն զօրաց Անտրիկեայ. (Տիտ. Լիւ. ԻԳ. ժե:)

2 Պոլիբ. Գ. ձԶ:

3 Ապպիան. Պատերազմունք Աննիբալայ. ԻԶ:

4 Պլուտարքոս՝ ի Մարկելլոս, ժԱ և ԼԳ:

դաշտավայրն։ Ա.յլ եթէև եհաս ընդ պարսպաւ մայրաքաղաքին, սեսեալ զմեծամեծ դժուարութիւնս զբռամբ ածելոյ զքաղաքն մեծ՝ եմուղ՚ի բայց զկտրհուրդ յարձակելոյ անդր պատերազմաւ, և մեկնեցաւ մինչև՚ի շրջակայ վայրս Հռեդիոն քաղաքի։ Յերկարեաց բնակութիւն նորա զամս բազումս՝ մերթ յաջող և մերթ ձախող բաղդիւ՝ ի հարաւային Ասալիա, որոյ բնակիչք կուսակից նորա էին և բարեկամք. զգուշանայր նա՚ի պատերազմէ, ոչ հեռանայր՚ի ծովափանց, և ոչ իսկ անցանէր ընդ Հարաւային ծայր Սամիսոնի։

Յամին 547 բանակ բազմաձեռն զօրաւարութեամբ Ա.տոտուբալայ՝ միոյ յեղբարց Ազնիբալայ՝ մեկնեալ՚ի Սպանիոյ և անցեալ ընդ Ալպեայս, գայր ընդ երկայնութիւն ծովափանց Ադրիանոսին յարել՚ի նա։ Բանակք երկուց զօրավարացն հարկանէին զԱրքեդոնացիս, առաջինն ընդ զօրավարութեամբ Մ. Լիւեայ Սալինատորի զօրէնի յԱմբրիա, և երկրորդն ընդ զօրավարութեամբ Կլաւդեայ Ներոնի՝ որ զդէմ ունէր Ազնիբալայ՚ի Լուկանիա, և զօրացեալ իսկ էր՚ի վերայ նորա՚ի Գրումենտոն։ Ի խաղալ յառաջ Ազնիբալայ մինչև՚ի Կանուսիոն՝ լուեալ Կլաւդիոսի Ներոնի զբազմութենէ օգնականացն բանակին մերձենալոյ, եթող զբանակեցեալն՚ի պահ Կ. Կասսիոսի տեղակալի, մեկնեցաւ դարձ, երթալոյ ընդ հակակից կողմանէ, և՚ի պարտութիւն մատնեալ մնաց՚ի Մեսապա զԱտրուբալ՝ որ կոչեաւ անդ Հանդերձ բանակաւն ողջոյն[1]։ Յայնմհետէ Ազնիբալ դուշակելով զհանդերձեալ բազդ կալզեդոնի, եթող զԱտրուբալ և զԼուկանիա, մեկնեցաւ՚ի Բրուտիոն՝ որ միայն հաւատարիմ կացեալ էր ընդ նմա. և եկաց անդ այլ ևս առն հինգ՝ մնալով միշտ օգնականութեան զօրաց[2]. և ոչ մեկնեցաւ նա յԻտալիոյ, բայց միայն յորժամ հայրենիք նորա սպառնացեալ՚ի հռովմէական լծոյն՝ որ հասեալ իսկ էին յԱֆրիկէ, կոչեցին զնա՚ի պաշտպանութիւն։

Ի ծովամարտի առ մեծապէս առաքինացան երկուասեք նաւախտովքք. Հռովմայեցիք զամենայն Հիպն՚ի գործ արկին

1 Տիտ· Լիւ· Իէ· Խթ։
2 Ապպիան· Պոփերազմունք Ազնիբալայ, ԾԹ։

առ՝ ի պահել զտէրապետութիւն իւրեանց ընդ ծով. տարմիղք նաւուց նոցա կային յԱսիա, ի Բիւզանդիոն և ի Հելլեզէն, հակէին հանապազ ամենայն զգուշութեամբ ի վերոյ ծովա-փանց Իտալիոյ, և արշաւէին իսկ շուրջ զՎալերեդոնիս, և մինչև ցՅունաստան[1]:

Դժուարութիւն ուղղակի կցորդութեան ընդ Իտալիոյ հարկ առնէր Կարքեդոնացւոց անցուցանել անդր զքօրս իւ-րեանց ընդ Սպանիա և ընդ Ալպիս, ուր զհանապարհայն տառապանայր բանակ նոցա նորանոր օգնականութեամբ, քան խաղացուցանել զնոսա ի հարաւակողմեան ափունս Իտալիոյ: Անհնարաւ դուզնաքեայ ինչ օգնականութիւն ընկալաւ ի հայ-

1 Յամին 536՝ էին Հռովմայեցւոց ի վերոյ ծովու 220 հինգաթիւ նաւք, և 20 փոքունք (Տիտ. Լիւ. ԻԱ. ժէ), որով պահէին նոքա հզօրեալապէս զափունս Սիկիլեոյ և Իտալիոյ. (Տիտ. Լիւ. ԻԱ. ԽԹ. ՍԱ): Ի 537, Սկիպիոն 35 նաւուք խորտակեաց զմի ի նաւատորմից Կարքեդոնացւոց ի բերան Իբէր գետոյ (Տիտ. Լիւ. ԻԲ. ԺԹ), և Սերուիլիոս Կեպիոնս բդեաշխ զօրս Թափեաց յԱփրիկէ 120 նաւուք՝ խափանել զԿարքեդոնացիս ի յղելոյ զօրս ի Թիկունս Աննիբալայ. (Տիտ. Լիւ. ԻԲ. ԼԱ): Ի 538, ի նաւատորմին Սիկիլեոյ յաւելան այլ և այ 25 նաւք. (Տիտ. Լիւ. ԻԲ. ԼԷ): Ի 539, Վալերիոսի Լեւինոսի էին 25 նաւք ի պահ ափանց Ադրիականին, և Փուբլիոսի Սոյնչալի և նաւք՝ հակել ի վերոյ ծովեզերեայց Ոսկոյ. (Տիտ. Լիւ. ԻԹ. ԼՖ). և ապա նաւատորմին Ադրիականին գումարեալ ի 55 նաւս՝ կարպեցաւ ի պահ Մակեդոնիոյ. (Տիտ. Լիւ. ԻԹ. ԼՀ): Ի նմին ամի նաւատորմին Սիկիլեոյ ընդ ծովակալութեամբ Տիտոսի Ոսակիլիոսի, խորտակեաց զԿարքեդոնացիս. (Տիտ. Լիւ. ԻԹ. ԽԱ): Յամին 540 էին Հռովմայեցւոց 150 նաւք՝ (Տիտ. Լիւ. Ի. ԺԱ). ի սմին ամի և ի միւսում՝ նաւատորմին Հռովմայեցւոց պաշտպանեաց զԱպուլիա՝ ի յարձակմանէ արքային Մակեդոնիոյ. և Թափեալ զօրս յԱփրիկէ, ասպատակէր շուրջ զՈւտիկեաւ: Թէև ծովախառն զօրաց նոցա ոչինչ Թուի պակասեալ մինչև ցամին 543, յորում ժամանակի պարտ էր նոցա պահել ի Յունաստան նաւս 50, և ի Սիկիլիա՝ 100. (Տիտ. Լիւ. Ա): Յամին 544՝ նաւք 20 Ամերիոն ի ծովու հանդէպ Հռեգիոնի ապահովել զերթեւեկ համբարա-կիր նաւաց ընդ Սիկիլիա և ընդ պահանորդս Տարենտոնի. (Տիտ. Լիւ. Ի. Ա. Ի): Ի 545՝ նաւք 30 ի տորմէ Սիկիլեոյ հատուածեցան երթևեկել յանդիման Տա-րենտոնի. (Տիտ. Լիւ. ԻԵ. Ե): Ի 546՝ ապստամբելոցդ Կարքեդոն նաւատորմիղ ահաւոր 200 նաւուց (Տիտ. Լիւ. ԻԵ. ԻԸ). ընդդէմ նոցին ելան և Հռովմ 280 նաւս, յորոց 30 պահէին զծովափունս Սպանիոյ, 50 զՍարդինիա, 80 զբերան Տիբերի, 50 զՄակեդոնիա, և 100 զկայ առնուլն ի Սիկիլիա, կազմք ի Թափել զօրս յԱփրիկէ, և հարաւ նաւախառն կարքեդոնի առ Կլուպեաս. (Տիտ. Լիւ. ԻԵ. ԽԹ): Եւ յամին 547՝ միւս այլ յաղթութիւն Վալերիոսի Լեւինոսի ազատ արար ի սպառ զծով ի Թշնամեաց. (Տիտ. Լիւ. ԻԸ. Դ):

բենեակց[1]. Տիտոս Լիւիոս երկոցս միայն ասէ ընկալեալ զօրս, յառաջնումն նուագի 4,000 նռնդապիս և 40 փիղս, իսկ յերկրորդումն որչափ ինչ զօրս Բոմիլիար ինքնին էած յեղը Յոնիական ներգին, մերձ՝ի Լոկրիս[2]։ Ա.յլ աճեռայն զօրք և համբառք պատերազմի Թուին խոխանեալ՝ի Թշնամեաց, և մի՝ի մեծագոյն նաւատրմից բազմութեամբ զօրու և յաձախութեամբ պաշարաց բեկաւ՝ի ծովեզերս Սիկիլիոյ[3]։

Ջարմանալի և հաստատութիւն Հռովմայեցւոց ընդդէմ Թշնամեաց, որ սպառնային նոցա ամենուստ. զի՝ի նմին ժամանակի պատ էր նոցա նուաձել զՆեղոս բնակեալս յայսկոյս Ալպեաց և զՆարբունացիս, մարտնչել ընդ ազգային Մակեդոնիոյ զաշնակցի Աննիբալայ, ժուժկալել՝ի Սպանիա զայրագին և արիւնահեղ մարտի, և՝ի Սիկիլիա զդէմ ունել յարձակմանց Սիրակուսացւոց՝ որ զկնի մահու Հերոնի զինեալ էին ընդդէմ Հասարակապետութեան։ Երից ամաց պէտք եղեն առ՝ի նուաձել զՍիրակուսա, զոր պաշտպանէր Ա.րքիմեդէս։ Ընդ ամենայն ժամանակս երկրորդի կարթեգոնական մարտին կազմ ունէր Հռոմ՝ի վերջոյ ցգետն և երեք լեգէոնս[4], ՚ի քաղաքացոյց միայն և՝ի Լատինաց[5] զինուորեալս, որոց Թիւքան և երից լեգէոնիցն էր երբ տասն բիւր. և չէ այս աւելացութեամբ ասացեալ, եթէ համեմատեցի ընդ ազգա-հանարի 534 տարւոյն, որ հասանէր՝ի Թիւ 270,213 արանց կարողաց ևեթ առնուլ զէն։

Յերեքտասաներորդում ամի պատերազմին դարձաւ յաջողած բազդին՝ի կողմն Հասարակապետութեան։ Պ. Կոռ-

1 «Կարթեգոնացիք պատուիրեալ՝ի պահ Սպանիոյ, ոչ առաքէին Աննիբալայ զօրս՝ի Թիկունս, համարեալ աներկիւղ զյաջողութիւն իւրեանց յԻտալիա»· Տիտ· Լիւ· ԻՖ· ԺԲ։

2 Տիտ· Լիւ· ԻԳ, ԺԳ և ԽԱ։

3 Ապպիան· Պոփերազմունք Աննիբալայ, ԾԲ։

4 Յամին 340՝ էին Հռովմայ կազմ և պատրաստ ուժ և տասն լեգէոնք· ՚ի 541՝ քսան լեգէոնք· ՚ի 542 և ՚ի 543, քսան և երկք լեգէոնք· ՚ի 544 և ՚ի 546, քսան և մի· ՚ի 547, քսան և երկք· ՚ի 551, քսան· ՚ի 552, վեցտասան· ՚ի 553, չորքտասան· ՚ի 554, նուազեալ՝ի վեց· (Տիտ· Լիւ· ԻԲ· ԺԱ–ԽԲ· ԻԵ· Գ· ԻՉ· Ա, ԻՀ· ԻԷ· ԻԲ, ԼԶ· Լ· Ե, ԻԷ, ԽԱ· ԼՍ· Ղ։)

5 «Հռովմայեցիք զՀեռևակս իւրեանց և զՀեծեալս՝ի Հռովմայ ևեթ և՝ի Լատինէ զօրաժողով լինէին»· Տիտ· Լիւ· ԻԲ· Ա։

նելիոս Ալխափոն, որպէ բռնեշխին՝ պարտելոյ առ Տրեբեաս, Հալածական արար զԱրքեդոնացիս՝ի Սպանիոյ։ Ժողովրդեան Հռովմայ կանուխ զուշակեալ զՀաննիբաղ պատանւոյն, վեց ամաց յառաջ կացուցեալ էր զնա փոխանակ բռնեշխի, թէպէտ և քան և չորից եւեթ ամաց էր նա։ Ի զառնալ նմանէ՝ի Հռովմ՝ ընտրեցաւ նա բռնեշխ (549), և անցեալ՝ի Սիկիլիա, և անտի յԱֆրիկէ, երկամեայ պատերազմաւ յաղթեաց Կինեթեայի՝ի դաշտս Զամայ, և հարկ արար ասպին Հռովմայ զվճռել՝ի խնդիր հաշտութեան (552)։ Ընտրհեաց ծերակոյտն յաղթականին պատիւ, քան զոր մեծագոյն ինչ էր մարթ Հասարակապետութեան տալ ումեք՝ի քաղաքացոյց, քանզի եթող՝ի նա սահմանել պայմանս պարտելոց։ Հարկ եղև Կարքեդոնի տալ՝ի դուրս գնաւս իւր և զինել, և հատուցանել 10,000 քանքար (58 միլիոն ֆրանքս), յանձն առեալ զսխտ ամօթագարտ՝ մի ևս՝ի պատերազմ ձեռնարկելոյ առանց հաւանութեան Հռովմայ։

Չ. Երկրորդի կարքեդոնական պատերազմ եղև։

Երկրորդաւս այսոքիկ Կարքեդոնական պատերազմաւ թէպէտ և նուաճեցին Հռովմայեցիք զԿարքեդոն և զՍպանիա, այլ ծանր ծանր տուժիւք։ Ընդ վերջաւորեալ ժամանակ պատերազմին բազմաց յերևելեաց քաղաքացոյց հասանէր կոչուած՝ի Կաննեայ միայն Հակառակորդին երկու հազար եօթն հարիւր ասպետք, երկու գանձաւորք, քան և մի հազարապետք զօրաց, բազումք և՝ որոց երբեմն կացեալ էր բռնեշխ, դառաւոր և չինապետ. պակասեցին և յոլովք յատենակալաց ծերակուտին, մինչև հարկ լինէր՝ի լրումն պակասութեան նոցա ընտրել արս հարիւր եօթանասուն և եօթն յայնցանէ՝ որոց ընդ այլ և այլ պաշտամունս տէրութեան անցեալ էր[1]։ Ա. յլ արկածքս այսոքիկ դժնդակ որպէս մուխ երկաթոյ սնդիկին զբաղս ազգին[2]։ Զգայր Հասարակապետութիւնն կազդուրելոյ

1 Տիտ. Լիւ. ԻԹ. ԻԹ։

2 «Արշաւանք Աննիբալայ, որպէս Կ. Մեառլոս ասէր, զարթոյց զարուեստիւն հռովմէական ժողովրդեան ընկղմելոյ՝ի քուն». Վալեր. Մաքսիմ. Է. ֆ. 3։

զօրութեան իւրոյ և առաջնակային յաջողութեանց. խնդայր իրաւացի խրոխտանօք ընդ յաղթութիւնս իւր՝ չև ևս վիրաւ առեալ արբեցութեան զկարի յաջողակ բազդին, և ծորանոյր կցորդութիւնք զոյժ ի մէջ այլ և այլ ազգաց Խառլեոյ։ Քանզի պատերազմ ընդդէմ արշաւանաց օտարաց աճէ միշտ զՀետ իւր զամենամեծ օգուտ լուեցուցանելոյ զառանին երկպառակութիւնս, և միաբանելոյ զքաղաքացիս ընդդէմ հասարակաց թշնամեաց։ Յոլովագոյնք ի գաշնաւորաց եռուն հաստատ աներկբայելի հաւատարմութեան. և Հատարակապետութիւնն յետ Կաննեան կոտորածին եգիտ զնոր վերկութիւն ձեռնտուութեամբ ուծևատան գաղթականաց՝ որք օգնեցին նմա զօրօք և արծաթով[1]։ Յերկիւղէ Աննիբալայ հաստատեալ էր ըստ յաջողուածոյ բախտի միաբանութիւն ի Հռոմէ և Խառլիա, և ոչ ևս էին գժտութիւնք ի մէջ երկուցունցն գաւառց[2], ոչ ևս հերձուած ընդ մէջ իշխանաց և իշխեցելոց։ Ն զի առաքէր ծերակոյտն զկարևորագոյն խնդիրս յաստեան ժողովրդեան, և ն զի սա լի վստահութեամբ ի ծերակոյտն՝ կանխէր հպատակել վճռոց նորա[3]։

Յաւուրս պատերազմացն Աննիբալայ առաւելապէս ի վեր էրևէին անտեղութիւնք երկպետութեան և ամի ամի նորագեալ իշխանութեան բղեշխից[4]. այլ այս պատճառք տկարա-

1 Խնդրեաց ծերակոյտն յերեանէ գաղթականաց զօր և արծաթ. ուծևատան ի նոցանէ եռուն յօժարութեամբ զայս և զայն. և էին որք եռուն Սկիպիա, Նորբա, Սատիկուլան, Բրունդուսիոն, Փրեկէլ, Լուկերիա, Վենուսիա, Ագրիա, Փերմիոն, Հռիմինի, Պոնսա, Պեսաուն, Կոսա, Բենեվենտա, Խաւռնիա, Սպոլետոն, Պլակենտիա և Կրեմոնա։ Իսկ երկոտասանքն՝ որ չտուին յանձն օգնել, պատճառեալով զգալուել զօրացն և արծաթոյ, էին Նեպետէա, Սուտրիոն, Արդէա, Կալէս, Ալբա, Կարսէոլ, Սորա, Սուեսսա, Սեսխա, Կնրիէոն, Նասնի, Ինսբրուինա. (Տիտ· Լիւ· Ի։ Թ։)

2 «Վէճք և կռիւք լուեցին երկուստեք առ երկրորդիւ կարքեդոնական պատերազմաւ»· Սալուստ· Հպատաճ· Ա· Է։

3 «Քառեակ ցեղք յանձն արարին ծերակուտին՝ շնորհել զերաւունս քուէից Փորմիոնի, Փռնեստայ և Արպինոն քաղաքաց· այլ ընկալան պատասխանի՝ զի ժողովրդեան միայնոյ էին երաւունք քուէից»· Տիտ· Լիւ· ԼՀ· ԼԶ։

4 «Ալեսաւոր յոյժ էրև Հռոմայեցւոց փոփոխութիւն զօրավարաց նոցա առ յոմէ· և կոչէցին արս պատերազմափորձս, երբ ոչ էին ի կռիւ՝ այլ ի հրահանգս զնոսա առաքելով»· Զոնարաս, Տուէգ· Ը· 16։

նալոյ նոցա միշտ առաջի Թշնամւոյն, որպէս ի վեր անդր տեսաք՝ փոխարինէին Հայրենասիրութեամբ։ Յայսմ օրինակ. Փաբիոս էր փոխանակ իշխանապետի, և Մինուկիոս զօրավարի հեծելազնդին ըստ ոչ սովորութեան տուաւ նոյն իշխանութիւն։ Սա վարեալ եռանդեամբ՝ ի վտանգ արկ զբանակն, և Փաբիոս ի վերայ հասեալ ապրեցոյց զայն։ Ծանեաւ յայնժամ Մինուկիոս զսխալանս իւր, և արկ զանձն մատուցեր ընդ հրամանաւ իշխանակցին, հաստատեալ վերատին ինքնակամ զիշխութիւն հրամանատարութեան[1]։ Ոսկ զանդադար փոխոխութեան զօրավարաց՝ հարկն ինքնին խափանեաց զսովորութիւն։ Սկիպիոնք երկու կացին զամն եօթն ի զօրավարութիւն բանակին Սպանիոյ, և Սկիպիոն Աֆրիկեցի յաջորդեալ նոցա՝ եկաց ամն գրեթէ նոյնչափ։ Ծերակոյտն և ժողովուրդ վճռեցին՝ կարել ինչ ի վախճան պատերազմին Խաղիոյ երկարձակել զժամանակ իշխանութեան փոխանակի բզեշխին և կուսակալաց, և հաստատել վերատին զնոյն բզեշխս քանիցս և կարեւոր գտաւցին[2]։ Եւ ապա ի պատերազմին ընդդէմ Փիլիպպեայ զինաւորակարութիւնս այսր յաձախ փոխոխութեան այսպէս յայտ արարին հաղարապետք զօրաց. «Ի ջրից ամաց՝ յորմէ հետէ տուէ պատերազմս մակեդոնականս, անցոյց Սուլ պիկիոս զաւուրս բզեշխութեան իւրոյ գրեթէ ոչքան ի խնդիր Փիլիպպեայ և բանակի նորին. Վիլլիոս եհաս զհետ թշնամւոյն, այլ մինչեւ բախեալ ընդ նմա ի պատերազմ՝ կոչեցաւ յետս. Կուինկտիոս զմեծ մասն տարւոյն կալեալ ի Հռոմ ի պաշտամունս կրօնից, թէպէտ և զօրութեամբ մեծաւ մղէր ապա զպատերազմն, և մարթէր իսկ նմա ի կատարումն ածել զայն ի սպառ, այլ չեհաս ի ժամանակն, զի անցեալ իսկ էր եղանակ ամարայնոյ, և հազիւ կարասցէ նա արդ ի ձմերոցի պատրաստել զմարտս առ ի սկիզբն գարնանոյ վախճան առնել այնմ յաջողութեամբ, զի մի այլ ոք յաջորդեալ խլեսցէ ի նմանէ զյաղթութիւն»[3]։ Եւ վասն իրաւացս այսոցիկ երկարաձգեցաւ ժամանակ իշխանութեան բզեշխին։

1 Տիտ. Լիւ. ԻԲ. ԻԹ։
2 Տիտ. Լիւ. ԻԶ. ե, է։
3 Տիտ. Լիւ. ԼՐ. ԻՀ։

Ա. յապէս կուռ վճռեաց Համեալ պատերազմունք եառն Հաստատուն ունել զվիճուորական իշխանութիւնս և վկաց միոց բանակաց։ Նոյն լեգէոնք կացին ան տան ՚ի Սպանիա, և այլք իբր նոյնչափ ժամանակս ՚ի Սիկիլիա. և թէպէտ ՚ի լրանալ ժամանակի զինուորութեանն արձակէին զհինաւուրց զօրականն, սակայն լեգէոնք կային միայն ՚ի զինուորութեան։ Այսու եղև Հարկ բաշխելոյ կալուածս զինուորաց՝ որք ընտրին զժամանակ զինուորութեան. և յամին 552՝ առաւ հինաւուրց զօրականին Սկիպիոնն, ըստ ամի ամի ծառայութեան նոցա յԱֆրիկէ և ՚ի Սպանիա, երկու երկու արուեստը ՚ի կալուածոց՝ որ բաւական էին ՚ի Սահմնացւոց անտի և յԱպուլեացւոց [1]։

Այս սկսան Հռովմայեցիք ՚ի վարձու ունել զօրս յօտարաց, մերթ ՚ի Կելտիբերաց, և մերթ ՚ի Կրետացւոց աւազելոյ ՚ի Հերոնէ բռնաւորէ Սիրակուսացւոց [2]. և գունդ մի Կելտաց՝ որ զԺգոհ ընդ Կարթեդոնացիս խոյս տուեալ էր ՚ի նոցանէ [3]։

Բազումք ՚ի բնակչաց գաշնաւոր քաղաքաց գային բնակել ՚ի Հռոմ [4], ուր հանդերձ տրամք՝ զօրս պատերազմ Հարկ առնէր, վաճառաշահ և զեղխութիւն երթային և յաւելուին։ Աւարին Սիկիլեոյ՝ զոր եբեր Մարկէլլոս, մնաւանդ ՚ի Սիրակուսայ, զարգացուցեալ էր զախտժակս զեղարուեստից. և պարծէր նա առաջին ինքն լեալ ՚ի մեծարոյ առնել և զարմանալ Հայրենակցաց իւրոց զհրաշակերտս Յունաստանի [5]։ Հանդէսք կրկխական խաղոց ՚ի վերջ կոյս վեցերորդի դարուն սկսանէին ախտժադոյն և լինել։ Յունիոս և Դեկիոս Բրուտոս զառաջինն յամին 490 Հանէն նախ ՚ի հանդէս զուսեռանտիկս, որոց Թիւ յաւելաւ ընդ հուպ մինչև ՚ի ջետ քան և երկու [6]։ Ջայսու ժամանակաւ (559) և ձեւացութիւնք Թատերականք հանդիսին սկեալ ՚ի հանդէս ՚ի ձեռն շինուա-

1 Տիտ· Լիւ· ԼԱ· Գ, ԽԹ։
2 Տիտ· Լիւ· ԻԳ· ԽԹ։ — Պոլիբ· Գ· ՀԸ։
3 Ջոնարաս, Տուէգր· Ը· 16։
4 Տիտ· Լիւ· Լ Թ· Գ։
5 Պլուտարքոս· ՚ի Մարկէլլոս, ԻՀ։
6 Տիտ· Լիւ· ԻԳ· Լ։

ծապեստաց[1]։ Հնարագիտութիւն շահուց սպրդեալ էր յաւագ-
պրեաին, որպէս յայտ առնէ արգել հրամանին առ առեհա-
կալս (Ալեւդեան օրէնք, 536) մի ունել՝ի ծովու նաւս բեռնա-
բաձս աւելի քան երից հարիւրոց սափորից[2]. Թուք աստե-
տաց, որոց ծանրագոյն էին տուրք հարկաց, յաւելեալ էին
Հոխութեամբ հասարակաց, և մերձ էին՝ի բաժանել յերկուս
կարգս, ՝ի զինուորեալս՝ի հեծելազօրուն՝ ունելով երիվար՝ի
հասարակաց, և՝ի պատաղեալս՝ի վաճառականութիւն և՝ի
յանձանձանս երթ և մուխ աշխարհին[3]։ Ի բազմաց հետէ վա-
րեին ասպետք՝ի զործառնութիւնս քաղաքականս[4], և յաձախ
կոչէին՝ի բարձր աւագութիւնս. վասն որոյ բարւոք կոչեր
զնոսա Պերսէոս «Սերմնարան ծերակուտին և մանկտի ազա-
տախտակ, ուստի ելանէին բղեշխք և զօրավարք[5]»։ Ի կար-
գեղոնական պատերազմունս մեծապէս տպաս հարկին հայրե-
նեաց ասպետք՝ արծաթ բազում տուեալ՝ի փոխ առ հան-
դերձել զբանակս[6]. և՝ի մեծանալ ոմանց՝ի նոցանէ ընչիւք
հասարակաց՝ի հոգաբարձութիւն համբարոյ զօրաց, զգու-
շանայր ծերակոյտն՝ի պատուհասելոյ զնոսա, առ՝ի չզայրա-
ցուցանելոյ զՀզօրսն եալ կարգ նոցա[7]։ Ձոխութիւն երկրին
ըստ մասին էր՝ի ձեռս սեաւոյ բազմապոյն կալուածոց, որպէս
բազում իւրաք յայտ է. Թող զայլս, վկայէ այսմ հիւրընկալու-
թիւն մեր՝ի տիկնայն Աղուլևացւոց, որ բնակ մի՝ի զօրաց
հռովմէացւոց փախստական՝ի Հակառամարտն Կաննեայ ևե-
րակերտ յընչից իւրոց յազարակս էր[8]։

Մեծարանք աւագանւոյն նուաղեալ էին, որպէս յայտ է
յընդունելութենէն կարգաց ինչ թեթև ինչ կարծելոց. որպէս

1 Տիտ. Լիւ. ԼԴ. ծԴ։

2 Հեղուկաչափ ինչ վաղեմի յ38 լիտր գաղղիացի։ Ծան. Թարգ։

3 «Ապեաք հռովմայեցիք, զինուորք և վաճառականք». Պղուտ. Ցո-
գեղբ, կե։

4 «Յամի 342՝ի ժամանակս սովուն յանձն եղև միում յասեհականաց ծերա-
կուռեն և երկուց ասպետաց հոգալ զհամբարս հռովմայ». Տիտ. Լիւ. Դ. Գ։

5 Տիտ. Լիւ. ԽԲ. կԱ։

6 Տիտ. Լիւ. ԻԳ. ԽԲ։ — Վալեր. Մաքսիմ. Ե. Զ. 8։

7 Տիտ. Լիւ. ԻԱ. կԳ. ԻԵ. Գ։

8 Վալեր. Մաքսիմ. Դ. Ը, 2։

յետ անկանելոյ Թագաւորութեան՝ ոչ ևս սահմանեալ ՚ի նաղս Հաստրակաց խոխր ինչ հանդիսակատաց։ Ակնածու- Թիւն աւագանւոյ աւելորդ կացուցանէր զամենայն դասակարգութիւնս, և «ոչ երբեք ոամիկ ոք, ասէ Վալերիոս Մաքսիմոս, հանդգնակերպեալ առաջի ուրուք ՚ի ծերակուտէն»[1]։ Ա.յլ ջ360 ամաւ սահմանեցին անդ օրինք զտեղի առեւնակատացց ծերակուտին։ Ի բարեկարգութիւն քաղաքաժողով ընկերութեան՝ խստագոյն պահանջին օրինք բատ նուազելոյ մեծարանաց ընկերական դասակարգութեան։

Հանդամանաց ժամանակին մեծեալ էր այլ և փոխոխութիւնս։ Ոամկապետք ոչ միայն կային և ծնային, այլ և զօրավիգն էին ազնուապետութեան. և ոչ միայն զդաս ոամկին յանդիման ածէին, այլ էր նոցա և մուտ ՚ի ծերակոյտն և ՚ի յանձնաժողս աշխարհին, և վարէին զիշխանութիւն իւրեանց յարդարութիւն և յօդուտ հայրենեաց[2]։ Երբեակ ազգէին միշտ աշխարհաժողով առենից, սակաւ ինչ ևեթ փոխոխութիւն մեծեալ ՚ի նոսա[3]։ Ժողովոյ վիճակաց՝ ձև միայն կայր և ծնայր[4]. իրաւունք նորա օր ըստ օրէ ամիոսիէին ՚ի կացուցանել ևեթ զօրավարս, և ՚ի տահմանել զինդիրս հմայից և պաշտամանց կրօնից։ Հարիւրեակաց առեաւ, որ ՚ի սկզբան անդ էր համախմբութիւն ժողովրդեան՝ որ զէն ՚ի ձեռին ժո-

1 Վալեր· Մաքսիմ· Գ· ե· 1։

2 Ձեր նոցա վարկ վիճակաւն, զի ըստ հռովմէական իրաւանց՝ ոչ ոք յառենակալաց ՚ի պաշտաման իւրում կարէր արկանել քուէս։ (Տես Մոմսէն· Ա· 187·)

3 «Ունէք դեռ ևս զառեան հարիւրեակաց և զառեան ցեղից, իսկ առեան վիճակաց՝ հմայից վասն է միայն»· Կիկ· Վասն պետրախոյին օրինաց, Բ· ժԲ։ — Ի վերջին ժամանակս Հասարակապետութեան չէր ինչ մաան վիճակացն առնել յընտրութիւն առենակալաց, բայց ՚ի քրմացն ևեթ և կառավարապետին գոհից, թէ արդեօք և մեծի քրմապետին· (Տիտ· Լիւ· Իէ· Ը։ — Դիոն· Ուլիպատ· ե· Ա։ — Ասլ· Գելլ· ժե· Իէ։ — Տիտ· Լիւ· Իէ· 2· 36։)

ալեր՝ ի քուէարկութենն յԱրիսեան զաշտի և լընտրութենն զօրավարաց, պահէր զնոյն էրատունս, փոխեալ ևեթ՝ ի մեռանս աչխատհաժողով առեներն։ Ամենայն քաղաքացիք՝ պրեալք՝ ի միում յերեսան և՝ ի հնոլէց ցեղէցն, բաժանէին՝ ի հինգ դաս՝ միշտ ըստ չափոյ Հռոմէացւոց, և մին ի դաս բաժանէր՝ ի կրկին հարիւրեակս, ի մանկահասակս և յերիցագոյնս հասակաւ։ Նախ առեանն ցեղէց, ուր իւրաքանչիւր ոք տայր զվարկ իւր անխտիր՝ առանց զանազանութեան աւագաց և Հնոլէց, երիտասարդ և յաւելեալ հինգտասն օրինադրութեան, որչափ հասկանայր առենի նուազկին իրաւունք։

Ա.յսպէս ահա հռոմէականն սահմանադրութիւն որ թուէին կալ ինալ նոյն, անզգալի ինն օրինակաւ կերպարանս լինէր։ Առեանք քաղաքականք, երիտասարդս տակաւ կայ օրինք, դասք քաղաքացւոց զաւուցեալք՝ ի ձեռն Սերուսի Տուլլեայ, տարւոյ ժամանակ պաշտամանց, զինուորութիւն, ռամկապետութիւն, շինուածապետութիւն, թուէին առհասարակ կալ ինալ որպէս էինն, այլ հարկ իրաց փոխելոյ զայն. սակայն երևոյթն իսկ այն անփոփոխութեան՝ ի բարգաւաճել պետութեան, հռոմէական բարուցն էր բարեմասնութիւն։ Հռոմէացեացիք, երկիւղած օրինապահք հայրենասէր սովորութեանց, թուէին չեղծանել ինչ՝ ի փոփոխելն, զի գնահատեն կերպարան գնոյ օրինացն ածէին. և այսպէս առանց սասանելոյ և տկարացուցանելոյ զզօրութիւն հնոլեան օրինադրութեանցն սրբազանելոյ ժամանակաւ՝ մուծանէին գնորադեւութիւնս։

Լ. Պատերազմ Մակեդոնիոյ։

(554)։

Յաւուրս երկրորդի Կարթեգենական պատերազմին, Փիլիպպոս Գ. արքայ Մակեդոնիոյ յարձակեալ՝ ի վերայ գաղթականացն հռոմէացւոց՝ ի Իլլիւիկ, պրաեալ գաւառս բազումս՝ ի Յունաստան, և գաշնակից լեալ էր Աննիբալայ։ Հարկ էր ծերակուտին ամենայն

վան որոյ ’ի 540 ամաց ց548, կացոյց նաւատորմ հզօր ’ի պահ ծովեզերեայց Եպիրոսի և Մակեդոնիոյ. և միաբանեալ ընդ զաշնակցութեան Եաղացւոց և ընդ Աստալոսի առաջնոյ Թագաւորին Պերզամացւոց, խոնարհեցոյց զՓիլիպպոս ’ի խնդիր խաղաղութեան։ Բայց յետ յաղթութեան Զամայ յամին 553 ’ի յարձակել նորա անդրէն ’ի վերայ ազատ քաղաքաց Յունաստանի և զաշնակցացն Հռովմայ՝ որ էին յԱթիա, պատերազմ ընդդէմ նորա ծանուցաւ։ Չկարէր մոռանալ ծերակոյտն զի ’ի վերջնումն մարտի էր գտեալ մի մակեդոնական օժանդակ ’ի զօրս Կարթեդոնացւոց, և զի էին դեռ ևս ’ի Յունաստան Հռովմայեցիք բազումք վաճառեալք ’ի ստրկութիւն յետ Կաննեայ պատերազմին[1]։ Ա.յսպէս մի մի ’ի պատերազմաց այսը զհետ ածէր, և յաջողուած իւրաքանչիւր ձգէր հարկաւ զՀռոմայեցւոցն կապեալութիւնն զհետ այլոց յաջողութեանց։ Զդրխականն ծով նախ ազատ կացուցին առ ’ի խոնարհեցուցանել զմակեդոնականն զօրութիւն, և ազատել զքաղաքս հռչակաւորս՝ որ խանձարուրք եալ էին քաղաքականութեան։ Անմարթ էր Հռովմայեցւոց զոլ անկարեկիր ընդ աղէտս Ելլադայ, յորմէ ունէին զօրինս, զկիրթութիւնս, զդպրութիւն և զարուեստս։

Սուլպիկիոս՝ զօրավար կացեալ պատերազմին ընդդէմ Փիլիպպեայ, եհան զօրս ’ի ծովեզերս Եպիրոսի, և խաղաց ’ի նեղսն ’ի Մակեդոնիա, ուր յաղթութիւնս բազումս կալաւ ’ի վերայ Թշնամեաց, և մի ’ի տեղեակալաց նորա արձակեալ նաւաք ’ի Յունաստան ազատեաց զԱթէնս ’ի պաշարմանէ։ Եբ կարէր պատերազմին զերկեամ մի. բայց նաւատորմ Հռովմայեցոց զումարեալ ընդ նաւս Աստալեայ և Հռոդացւոց՝ տիրապետեաց ծովուն (555)։ Տ. Կուինկտիոս Փլամինիոս պատանի զեռ և նա զոլով՝ ամբարձեալ ’ի բռնակալութիւն, հանձարովն իւրով և արութեամբ արժանի եցոյց զանձն վատահութեան քաղաքացւոց իւրոց։ Եհան ’ի դաշնակցութենէ ազգային Մակեդոնիոյ զԱքայեցիս և զԲէոտացիս, և օգնութեամբ Եաղացւոց տարաւ յաղթութիւն ’ի Թեսաղիա մերձ ’ի Եահապղուին, ուր Հռոմէականքն լեգէոն զօրացաւ ’ի վերայ մակե-

1 «Աքայիա միայն էին հազար երիվերս ’ի նոցանէ»· Տիտ· Լիւ· ԼԴ· ԺԱ։

դանակաւ հռչակաւոր վտղանգին Փիլիպպեայ Բ, և մեծին Ալեքսանդրի։ Հարկ եղև Փիլիպպեայ Գ. ՚ի խնդիրս հաշտութեան յանձն առնուլ ծանր ծանր պայմանս, յորոց գլխաւորք էին ամիսսիել զբօրս իւր ՚ի քաղաքաց Յունաստանի և Ասիոյ, և մի տալ ընդ ումեք պատերազմ առանց հրամանի ծերակուտին։

Ոչ ի արժան անյիշատակ առնել աստ զլճկու ազատութեան Յունաստանի՝ զոր Տիտոս Լիւիոս ածէ ՚ի պատմութեան իւրում։ զի ի անտի ՚ի միտ առնուլ քանի մեծ համարէր յայնժամ ծերակոյտն զազգեցութիւն բարոյական, և զտոյգ մեծարանս ժողովրդեան՝ զոր ի տանալ ազատ կացուցանելով զնա։

«Ի տօնս Ախթեան խաղուց ձգէր ըստ յաձախ սովորութեան ամբոխ բազում հանդիսականաց, ոչ միայն վասն բնիկ ախտժակացն Յունաց առ ամենայն ազգի ազգի խաղս, այլ և վասն դիպց Կորնթոսի՝ որ բնակէր ՚ի վերայ երկուց ծովուց, և էր դիւրամատոյց նաւահանգստաց։ Այլ ըստ հանգամանաց ժամանակին առաւել ևս զայր խռնէր ամենատան բազմութիւն անբաւ՝ ակնկալութեամբ հանդերձելոյ բազդին Յունաստանի առ Հռոմայեցի, և միոյ միոյ ՚ի ժողովրդոց. և ամենեցուն խորհուրդք և խօսք զայսմանէ էին։ Բազմեցան Հռոմայեցիքն ՚ի կայս իւրեանց, և քարոզն անցեալ եկաց ըստ օրինի ՚ի մէջ կրկինին, ուստի հրատարակին խաղք աշխարհաքարոզ։ Փող հարաւ, եղև լռութիւն, և քարոզ կարդաց. Ծերակոյտն Հռոմայեցի և Տ. Կուինտոս զօրավար, յաղթող Փիլիպպեայ և Մակեդոնացոց, ազատ կացուցանել ՚ի վայելս օրինաց իւրեանց և ապահարկոչեան զկորնթացիս, զփոկէացիս, զԼոկրացիս, զկղզիի Եւբէա, զԱգլիսացիս, զԹեսաղացիս, զՊեռեբացիս, և զԱքայեցիս փրիոռխեայ։ Սոքա ամենեքեան ընդ իշխանութեամբ Փիլիպպեայ կային։ Ի լուր յայտարարութեան՝ յառաջելութենէ խնդութեան չիմարեալ թուէր աշխարհաժողովն, և ոչ ոք հաւատար անվէտ լսեալ։ Հայէին ցոյնք ՚ի միմեանս որպէս ըմբռնեալք ՚ի խաբեայ ախտժ անկեալ՝ որ ՚ի զարթնուլն ցրուին. և ոչ հաւատայեալ լսելեաց իւրեանց, հարցանէին մերձակայիցն՝ թէ չիսալէին ականջք։

Կոչեցաւ դարձեալ քարոզն ՚ի մէջ, վասն ամենեցուն խղճ լինելոյ ոչ միայն լսել՝ այլ և տեսանել զաւետաբեր մեծի աւետեացն. և միտանդամ ընթերցաւ նա զԼՃ[1]ն։ Յայնժամ ոչ ևս տարակուսեալ ընդ բարեբաստութիւն իւրեանց, զաղաղակ հարին ցնծութեան և այնպիսեօք յաձախաւտուր կայթիւք ձեռաց և դիւտաւեօք զազատարարն իւրեանց կարդային, որով յայտնի լինէր զի քան զամենայն բարութիւնս ցանկալի է մարդկան ազատութիւն։ Հանդիսացան ապա խաղք, այլ շատապաս, ոչ զաչս և ոչ զուշ հանդիսականաց ձգեալ։ Մի այն խնդութիւն դրաւէր զոգիս նոցա, և բառնայր ՚ի նոցանէ զայլ ամենայն հաձոյից զգացումն։

«Իբրև վախձան եղև խաղացն, դիմեալ ամենեցուն առ զօրավարն Հռոմէացւոցն, զիմեալք եղանէին մերձենալ ՚ի նա, ունել զաջոյ նորա, ձգել ՚ի նա պատկս ծաղկեայս և նարօտս. և այնչափ էր յաձախութիւն ամբոխին, զի փոքր միւս ևս և հեղձամղձուկ լինէր զօրավարն։ Այլ և ևս էին նորա աւելի քան զերեսուն և երիս աս, և ատեաք տիոյն և արբեցութիւն մեծի վաստացն զօրացուցանէին զնա ՚ի տոկ վտանգին։ Ախտութիւն ազգացն այնոցիկ ոչ առժամայն ինչ եռանդեամբ վճարեալ, այլ երկարէր ազգումն նորա ընդ բազմաժամանակեայ աւուրս ՚ի խորհուրդս նոցա և ՚ի խոս, և ասէին. «Ո՞ւր ունիցի յաշխարհի ազգ՝ որ ծախուք իւրովք և աշխատութեամբ և վտանգօք տայ պատերազմ ՚ի վերայ ազատութեան ազգայ հեռաւորաց խոկ ՚ի տահմանաց իւրոց, և ոչ ևս ծուխն անջրպետելոց։ Հատանէ նա զանխս առ ՚ի բնաջինջ առնել յաշխարհէ զբռնակալութիւն, և կացուցանել իշխան զիրա-ւունս, զարդարութիւն և զօրինս»։ Ի բարեաս ևեթ քարոզն կացին ազատ քաղաքք առհասարակ Ելլադայ և Ասիոյ։ Խորհուրդ անգամ այնպիսւոյ առաջարկութեան չմարթէր առանց նարտհրաշ մեծանձնութեան. իսկ առ ՚ի կատարումն նորին՝ արութեան մեծի և բարեբաստութեան պէտք էին»[1]։

Սակայն առաւել ինն ձեայր ՚ի պատկերին. զի Պելոպոնէս ոչ ևս էր և ևս եւեալ էր յազատութիւն, և Փլամինիոսի յետ

[1] Տիտ· Լիւ· Լ.Գ· Լ.Ե։

հատանելոյ ՚ի Նաբեայ բռնաւորէ Սպարտիոյ քաղաքս բա-
զում՝ զաշխոյս կռէր ընդ նմա, լուծեալ և զպաշարումն վա-
կեղեմնի, խնդալով երկարել զայն. քանզի կասկածէր թէ
գուցէ ահաւորագոյն թշնամի ՚ի վերայ իւր հասցէ Անտիոքոս
Գ, որ վաղ իսկ ժամանեալ էր ՚ի Թրակիա, և սպառնայր զօրս
ծանուս անցանել ՚ի Յունաստան: Վասն որոյ և Յոյնք զաշխա-
կից ՚ի խնդիր շահու իւրեանց՝ պարտաւէին զբռեաշխին հռով-
մայեցի, իբր հատուցանել նորա զգաշն խաղաղութեան
ընդ Փիլիպպեայ, զոր համարէին մարթել նմա ՚ի պարտու-
թիւն մատանել ՚ի սպառ[1]: Բայց Փլամինիոս առնէր պատասխա-
նի, զի չէր իւր հրամանն արկանել յաթոռոյն զՓիլիպպոս, և
զի թագաւորութիւն Մակեդոնիոյ, կարևոր էր որպէս պա-
տուար ընդդէմ բարբարոսաց Թրակիոյ, Իլիւրիայ և Կել-
տաց[2]: Յայնժամ ՚ի ձայն ցնծութեան ամբոխին երթեալ
զօրացն Հռովմայեցւոց ՚ի նաւս իւրեանց՝ մեկնեցան, թողեալ
զքաղաքս յազատութիւն (560). և Փլամինիոս չորս յաթո-
նակել ՚ի Հռոմ; բերելով յանձին զխրատս պաշտպանութեան
Յունաստանի՝ որում ցանկային ընդ երկար յաջորդք Ալե-
քանդրի:

Ը. Պատերազմ ընդդէմ Անտիոքոսի:

(563):

Ծերակուտին քաղաքագէտ տեսութիւն էր՝ ունել զՄակե-
դոնիա ՚ի պատուար ընդդէմ Թրակիոյ, և զՅունաստան ընդդէմ
ընդդէմ Մակեդոնիոյ: Բայց Հռովմայեցւոց յաղաւ կացու-

1 «Զայն բառնային գաշնակիցք, թէ պարտ էր յաւաչ մնել զմարտն և բա-
նալ ՚ի միջոյ զբռնաւորն, զի մի հանապազօր ՚ի վտանգի կայցէ ազատութիւն
Յունաստանի: Շահաւորագոյն էր, ասէին, չառնուլ զնոսա, քան դնել զայն ան-
գործ ՚ի պատեան: Պատասխանի առնէր բդեաշխն. Եթէ պաշարումն Լակեդեմոնի
խափանէր անդ զզօրսն ընդ երկար, որմէք զօրօք կարէր Հռոմ զդէմ ունել
հզօրագունեն և ահաւորագունեն ՚ի Թագաւոս (Անտիոքոսի)». (Տիտ. Լիւ.
ԼԴ. ԼԹ:)

2 Տիտ. Լիւ. ԼԴ. ԺԲ:

յանել զնիզակակցութիւն Ա.քայեցւոց, էին կամք յարուցանել տէրութիւն ինչ կամ դաշնակցութիւն հզօր։ Զի և յայնժամ, որպէս երբեմն, գուն գործէին Ա.Թենացիք, Սպարտացիք, Բէոտացիք, Եսոլացիք, ապա և Ա.քայեցիք՝ կազմել դաշնակցութիւն հելլենական յօգուտ իւրեանց. և իւրաքանչիւր առ ՚ի տիրապետել ՚ի վերայ այլոց, դիմէին փոխանակաւ՝ առ որս ակնկալութիւն էր գտանելոյ առ ժամն հզօրագոյն օգնականութիւն։ Եւ՚ի գուն խակ հելլենական յաճախակղզւոջ՝ Եսոլացիք, որոց ՚ի բաժին և ՚ի յաւելուած աշխարհին խոստացեալ էր ծերակուտին զՓոլիկա և զՆօկրիս, ցանկային ունել զքաղաքս Թեսաղիոյ, զոր բացէ ՚ի բաց զանցային նոցա Հռոմէացիքն։

Վասն որոյ Թէսպէտ և ազատացեալք՝ տակաւին չէին գոհ ոչ Եսոլացիք, ոչ Ա.քայեցիք և ոչ Սպարտացիք, և ամենեքին երազէին մեծանալ։ Եսոլացիք անժոյժք քան զայլս՝ փոքէին երկոց յամին 562 ընդդէմ Թեսաղիոյ, Եւբոյ և Պելոպոնեսոյ միանգամայն։ Եւ յաջողեալ նոցա զՆեմեորիա եւէթ ՚ի բուռն առնել, կոչեցին զԱնտիոքոս Գ. ՚ի Յունաստան՝ կալ ՚ի գլուխ նախնիշանութեանն՝ զոր ընդ վայր հանարէին ընդունել ՚ի Հռոմէացեցւոց։

Ընտրելագոյն բաժին լայնածաւալ ժառանգութեան՝ զոր եթող Մեծն Ալեքսանդր, վիճակեալ էր Անտիոքոսի։ Ի բազում ամաց հետէ ազդ առնէր նմա Փլամինիոս՝ զի էր ՚ի փառս Հասարակապետութեան Թողուլ զՅունաստան, Հռոմ էր ազատարար, և զի ծերակուտին ոչ շատ հանարեալ ազատել զնա ՚ի ձօյ Փիլիպպեայ, կամէր արդ ազատ առնել ՚ի տիրապետութենէ Անտիոքոսի և զամենայն քաղաքս Աւթոյ գաղթականս Ելլադայ[1]։ Այլ որ ապաստանեալն էր առ նմա Աննիբաղ խրախուսէր զնա ՚ի դիմադրութիւն, և քան իւրումն օրինակի ածել զպատերազմն Հռոմայեցւոց։ Ազդ արարին նմա յայնժամ Հռոմէացիքն պատերազմ։ զի պահ ունել ազատութեան Յունաստանի ընդդէմ ասկային էին՝ էր հաւատարիմ կալ ՚ի դաշինսն, և պաշտպան քաղաքականութեան ընդդէմ

1 Տիտ· Լիւ· ԼԴ· ԺԸ։

բարբարոսութեան: Ա.յսպէս՝ ի հրատարակել Հատարակապետութեան զմեծախոհ իմաստ՝ ալոգարշաւութեանէր զնուրն փառասիրութիւն:

Բարբարութիւնք Հռովմայ վաղ իսկ՝ ի մուտս լեալ էին՝ ի Յունաստան[1], և Անտիոքոս եպիտ անդ բազմութիւն նիզակակից յայտնի և՝ ի ծածուկ: Կալմեայ նա գաշնակցութիւն ահաւոր, յոր մտին Ետոլացիք, Ա.թամանք, Ելէացիք և Բիսալտացիք. և իջեալ զօրօք՝ ի Գալլիս, հատ զնուրս և զԹեսսալիա: Հռովմայեցիք ընդդէմ նորա զինեցին զարքայն Մակեդոնիոյ և զԱ.քայեցիս. և օգնականութեամբն Փիլիպպեայ հարեալ զնա՝ ի Թերմոպիլէ՝ ի ձեռն զօրեղին Ա.կիլեայ Գլապրիոնի յամին 563, վանեցին զնա անտի յԱ.սիա. և Ետոլացիք ճնացեալ անօգնական՝ խոնարհեցան յաղերս հաշտութեան, որ ընդհեցաւ նոցա՝ ի նմին իսկ ամի:

Եւ ոչ շատ համարեալ վանել զԱնտիոքոս՝ ի Յունաստանէ, Լ. Ա.կիպիոն՝ որոյ առեալ էր եղբայր նորա յաղթողն Կարթեդոնի՝ զհետ եմուտ Թագաւորին. և Փիլոպատոր առնուլ հռովմէական բանակին անցանել անխոտիան ընդ Մակեդոնիա, ընդ Թրակիա և ընդ Ելլեսպոնտոս, եհաս մինչև՝ ի սահմանս նորա: Յաղթութիւնք Ա.կիպիոնի ընդ ծով առ Մոնեա և ընդ ցամաք առ Մագնեսեա՝ վախճան արարին պատերազմին, ստիպեալ զԱնտիոքոս Թողուլ զամենայն գաւառս յայսկոյս Տաւրոսի, և տուժել 15,000 քանքարս, երիք մասամբ աւելի քան զտուգանն եդեալ՝ ի վերայ Կարթեդոնի զկնի երկրորդի կարթեդոնական պատերազմին: Յայնժամ ծերակոյտն ոչ միայն չկամեցաւ՝ ի մարզ կարգել զԱ.սիա, այլ և ոչ աւելի ինչ քան զարդար և զչափաւոր պայմանս պահանջեաց[2]: Հրատարակեցաւ ազատութիւն ամենայն քաղաքացն Յունաց՝ այնր կողմանն. կալան Հռովմայեցիք զամուր տունս վայրս միայն, և Ռոդացուցին զգաշնաւորս իբրեանց առաքս Ա.տրուց: Թագաւորն Պերգամայ և Հռոդացիք տորմիլաւ նա-

1 «Ա.յլք ևս յազգաց Յունաստանի ոչ ինչ նուազ յանցաւոր գտան՝ ի պատերազմիս, ՚ի մուտս արկեալ զբարերարութիւն Ժողովրդեան Հռովմայ». Տիտ. Լիւ. ԼՋ. ԽՆ:

2 Տիտ. Լիւ. ԼԷ. Խե:

ուց իւրեանց օգնական եղեն Հռոմէացւոց՝ ի պատերազմեանս անդ։ Եւ ետես երկոտղն՝ յաջորդեն Աստուածայ Ա., ընդարձակեցաւ սիրտ նոցա. և Հռոպայկք ընկալան զՎիկիա և զԿարիա։ Ալիսարաթ արքայ Կապադովկիոյ, որ օգնականն լեալ էր Անտիոքոսի՝ տուժեցաւ 200 քանքարս Հռոմէացւոց[1]։

Թ. Պատերազմ յայսկոյս Այրևայց։

(558–579)։

Դէպք՝ ի բարի յաջողեցեալն Հաստրակատեսութեան արքայ արքայ նուաճել զԱրեւելս. ապա թէ ոչ, թշնամիք շուրջ զնովաւ բնակեալք՝ որ ոխայեն ընդ նա հանապազ, մանաւանդ ժամ՝ի ժամ տատապութեամբ կամ զրկմամբ եղեալց իւրեանց՝ որ յայսկոյս Ալեաց՝ յարձակել միտչեն ցմիջակէտս աշխարհին։

Ձի յաւուրս Անտիոքոսի ոչ լուէին պատերազմունք յայսկոյս Ալեաց, ուր ազգն գոռ, թէպէտ բազում անգամ՝ի պատուհան մատնեալ, ոչ դադարէր՝ի վտարանջելոյ։ Վախճան իրաց պատերազմին Մակեդոնիոյ պարտ եւ ծերակուտին Հզօրագոյնս ընդ նոսա վարելոյ. և յամին 538՝ վանեալ զՀռոդուբայիս, զԲոյաբիս, զՆաւոբրագիս և զԿենոմանս, ցածոյց զերան եւացուն խուժադուժ ազգին։ Սակայն Հռոդուբայիք և Բոյք ոչ դէպին դեռ եւս՝ի կռուելոյ, մինչև պատերազմին արիւնահեղ մերձ՝ի Մառեոս յամին 561, և հարուածք և աւերածք՝ի յաջորդ ամս յերեսաց Ի. Փլամինիոսեայ եղբօր յաղթականին՝ի Շանագլուխս, և Սկիպիոնի Նասիկայ, խոնարհեցուցին զԲոյսիս՝ի խաղաղութիւն, որք զկնի երկրին իւրեանց Թողեալ՝ի յաղթողն՝ մեկնեցան յամին 564՝ի կոչմանս Դանուբայ. և յետ երից ամաց Կելտք՝ որ յայսկոյս Ալեաց՝ կարգեցան՝ի մարզս Հռոմայ։

Նոկ Հռոդուբայիք մինչև՝ի վերջ դարուս ժուժկալեցին յամառեալ՝ի կռիւ։ Այլ ոչ էր նոցա դիմակալութիւն, մինչև

1 Ագաթիան. Պատերազմունք Պարսից Ա։

Հռոմայեցւոց՝ ի կարի խիստ հնարս ձեռնարկել. և յամին 374 բիւրս երբ հինգ՝ ի Լիզուրացւոց անտի ածել՝ ի կոզմն մի Սամնիոյ, որ՝ ի պատերազմաց անտի ընդ Աննիբալայ կայր պրեթէ անբնակ։ Եւ՝ ի 381, այլք՝ ի Լիզուրացւոց սփռեցան յայնկոյս Պադոս գետոյ[1]։ Ամ յամէ սահմանք Հասարակապետութեան ընդարձակէին՝ ի հիւսիսակողմն կոյս, և Գաղղացիք[2] և գաղթականք կարևորք ապահովեին զեռ զօրուն[3]. կարգաւորութիւնս այս ընդհատեալ յաւուրս երկարդի կաթքեդոնական պատերազմի, վերստին հաստատութիւն առնոյր, մանաւանդ՝ ի հարաւակողմն Իտալիոյ և յայնկոյս Ալպեայց։

1 Տիտ. Լիւ. Խ. Լ. Խբ. ԻԲ։

2 Ճանապարհք Անբրիանէ՝ ի Բանանիա, ՝ի Պլակենտիոյ՝ ի Ռիմինի և՝ ի Բոնոնիոյ Անգուիլեա. (Տիտ. Լիւ. Լթ. Բ։)

3 ԳԱՂԹԱԿԱՆՔ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՔ. — 488–608։

ԵՍՈՒՆՈՆ (507) *կամ* Եսիան *ըստ* Մոմսընի. Եզի՝ Յովբրիա, ՝ի վերոյ Եսիա գետոյ։

ԱԼՍԻՈՆ (507) *գաղթական Ծովեզերեայ Հետրուրիա. (Աբրիզեան Ճանապարհ). Բալոյ մերձ՝ ի Բորդոյ։*

ՓՐԵՆԵՆԷ (509) *գաղթական Ծովեզերեայ Հետրուրիա. (Աբրիզեան Ճանապարհ). Դորրէ Մագգարիզէ։*

ՊԻՐԿԵՆԱՆՔ (*նախ քան* 536) *գաղթական Ծովեզերեայ Հետրուրիա. (Աբրիզեան Ճանապարհ). Սանդա Սեւերա։*

ԿԱՍՊՐՈՆ (555), *ուստի մեռ՝ ի Սկիւզակիոն (Ս. քուիլակէ) ՝ի Բրուտիոն։ Ի 631 միացեալ ընդ գաղթականին Մինեռվիա։*

ՊՈՒՏԷՈԼԵԱՆՔ (560) *Ծովեզերեայ գաղթական՝ ի Կամպանիա. Բոյցուոլի. կուսակալութիւն։*

ՎՈՒԼՏՈՒՌՆՈՆ (560) *Ծովեզերեայ գաղթական՝ ի Կամպանիա։ Գասպէլլմարէ կամ Գասպէլ ուի Վոլտուռնոյ. կուսակալութիւն։*

ԼԻՏԵՌՆՈՆ (560) *Ծովեզերեայ գաղթական՝ ի Կամպանիա։ Դոր ուի Բադրիա, մեռ՝ ի լիճն Բադրիա. կուսակալութիւն։*

ՍԱԼԵՌՆՈՆ (560) *Ծովեզերեայ գաղթական՝ ի Կամպանիա. Սալեռնոյ։ Երկք ամօք յառաջագոյն վճռեալ։*

ԲՈՒՔՍԵՆՏՈՆ (560) *Ծովեզերեայ գաղթական՝ ի Լուկանիա. Բոլիբատրոյ։*

ՍԻՊՈՆՏՈՆ (560) *Ծովեզերեայ գաղթական Յապուգիա. Սանդա Մարիա ուի Սիբռնդոյ։ Երկիցս հաստատեալ գաղթականս։*

ՏԵՄՊՍԱ (*Տեմեսա*) (560) *Ծովեզերեայ գաղթական՝ ի Բրուտիոն։ Թերևս մերձ՝ ի Դորրէ ուէլ Բիանոյ ուէլ Գասպէլէ։*

ԿՐՈՏՈՆ (560) *Ծովեզերեայ գաղթական՝ ի Բրուտիոն. Գոդրոնէ։*

Նուաճմամբ գաւառիս այսորիկ՝ ի տարս, վախճան արար Հռոմէ՛ և այլոց ոչինչ ծանուցց պատերազմաց։ Յամին 577՝ նուաճեաց զԽաղխացիս, ՚ի 579՝ զԱրզէնիացիս և զՎոլիկացիս. և յամին 569 մինչև ց573՝ տարածեաց զաշխարհակալու-Թիւն իւր ՚ի Սպանիա, յաղթեալ նոցին իսկ Թշնամեաց՝ որ զիւր կալեալ էին կալքեդոնին։

ՊՈՏԵՆՏԻԱ (570) *ծովեզերեայ գաղթական ՚ի Պիկենոն. Բորգոյ ան Բոգենցա կամ ան Բիգանապլ։*

ՊԻՍԱՒՐՈՆ (570) *ծովեզերեայ գաղթական յՈւմբրիա կելտաց. (Փլամինեան Ճանապարհ). Բէզարոյ։*

ՊԱՐՄԱ (571) *յայսկոյս Պադոան ՚ի կելտս. (Եմիլեան Ճանապարհ). Բարմա. կուսակալութիւն։*

ՄՈՒՏԻՆԱ (571) *յայսկոյս Պադոան ՚ի կելտս. (Եմիլեան Ճանապարհ). Մոտենա. կուսակալութիւն։*

ՍԱՏՈՒՌՆԻԱ (571) *լեառնաբնակ (՚ի միջնաշխարհն). Սատուռնիա։*

ԳՐԱՒԻՍԿԷ (573) *ծովեզերեայ գաղթական լեառնաբնակ (՚ի հարաւակոյս). (Ափրելեան Ճանապարհ). Սան Գվէմինիենոյ կամ Լէ Սալինէ։*

ԼՈՒՆԱ (577) *լեառնաբնակ (՚ի հիւսիսակողմն). (Ափրելեան Ճանապարհ). Լունի՝ մօտ ՚ի Սարզանա։*

ԱԻԳՍԻՄՈՆ (597) *գաղթական ծովեզերեայ ՚ի Պիկենոն. Օզիմոյ։*

ԳԱՂԹԱԿԱՆՔ ԼԱՏԻՆՔ. — 488–608։

ՓԻՐՄՈՆ (490) *՚ի Պիկենոն. (Վալերեան Ճանապարհ). Ֆերմոյ։*

ԵՍԵՈՆԻԱ (491) *՚ի Սաւինիա. Իզեռնիա։*

ԲՐՈՒՆԴԻՍԻՈՆ (510) *յԱդրիական կալտրիա. (Եգնատեան Ճանապարհ). Պրինտիզի։*

ՍՊՈԼԵՏԻՈՆ (513) *յՈւմբրիա. (Փլամինեան Ճանապարհ). Սբոլեթոյ։*

ԿՐԵՄՈՆԱ (536) *յայնկոյս Պադոան ՚ի կելտս. Գրեմոնա։ Ամրացուցեալ ՚ի 560 ամին։*

ՊԼԱԿԵՆՏԻԱ (536) *յայսկոյս Պադոան ՚ի կելտս. (Եմիլեան Ճանապարհ). Բիաչենցա։*

ԿՈՊԻԱ (Երկիր Թուրքաց) (561) *՚ի Լուկանիա։*

ՎԻՒՈՑ *կամ* ՎԻՒՈՆԱ ՎԱԼԵՆՏԻԱ, *կոչեցեալ նոյնպէս Հիւրոյ ՚ի Բրուտոն. (565 կամ Թէրևա 515.) Պիեմոնա, Մանդէ Լէոնէ։*

ԲՈՆՈՆԻԱ (565) *յայնկոյս Պադոան ՚ի կելտս. (Եմիլեան Ճանապարհ). Պոլոնիա։*

ԱՓՈՒԻԼԻԱ (573) *յայնկոյս Պադոան ՚ի կելտս. Ապուլիա։*

ԿԱՐՏԷԱ (573) *՚ի Սպանիա՝ նեղուցն Ճիպրալտարայ։*

Ժ. Պատերազմ ընդդէմ Պետրեայ:

(583):

Ի քան և հինգ ամաց հետէ խաղաղութիւն էր ընդ Փիլիպեայ արքային Մակեդոնիոյ, ի պարտութիւն մատնեալ էին Եւոլացիք, նուաճեալ էին ժողովուրդք Ասիոյ և առաւել ևս զոյն մանն Յունաստանի ելեալ յազատութիւն: Նիզակակցութիւն Աքայեցւոց պատեհ առեալ զհանդուրժողութիւն իւր՝ ի պատերազմին Հռովմայեցւոց ընդդէմ Անտիոքոսի՝ մեծացեալ էր, և Փիլոպեմենի միաբանեալ ընդ նմա զԱպարտա, զՄեսսենա և զՁակինթոս կղզի. այլ սոքա ոչ հանդուրժեալ տիրապետութեան Աքայեցւոց, յետ տակաւուց կամեցեալ էին ի բաց կալ ի նոցանէ. զալով չափ կանխագուշակ բանիցն Փիլիպեայ, որ յետ պատերազմին ի Եաննադլուխ՝ ասէր դեսպանացն Թեսսալացւոց Թէ զղջասցին ընդ Հռոպ Հռովմայեցիք ընդ ազատ կացուցանել իւրեանց զազգս՝ որ չգիտեն վայելել յազատութեան, և որոց գժտութիւն և նախանձ յարուսցեն անդուլ աղմուկս վտանգաւորս[1]: Որպէս և եղեն իսկ. զի Ապարտա և Մեսսենէ գլուխ ամբարձեալ՝ կուէին զՀռովմայեցիս ի Թիկուն: Փիլոպեմեն անխնայ հարեալ զԱպարտա, ի մատնէրն ընդ Մեսսինայ՝ անկաւ: Անիշխանութիւն և առանին պատերազմ պատահեալ կեղեքէին զԹեսսալիա և զԵւոլիա:

Մինչդեռ պատրաստեալ էր Հասարակապետութիւն ի խաղել զպատառս զայսոսիկ, միւս այլ ոտն յանդգնաբար գայր գրգռել զցասումն նորա ընդդէմ իւր: Բազդին զբազմութիւն Թշնամեաց յարուցանել ընդդէմ Հռովմայ՝ Թուէր ինն ևս ի մատնել զնոսա ի ըստ միոջէ ի ձեռս նորա: Անդուլութիւն Ովրատեանցն ի ևս ի ապանանելոյ զերեսին Կուրատեանս՝ խրատ էր ծերակուտին՝ անմոռաց հատուտել ի մէն:

Պերսէոսի ժառանգեալ ընդ աթոռոյ հօրն զմիթելեալ ոխ նորա, պարտ առեալ զխաղաղութիւն՝ յաձախեալ

[1] Տիտ. Լիւ. ԼՊ. 12:

էր զլօրս իւր և զպանձս, միաբանեալ ընդ իւր դաշնակիցս, և շարժեալ ընդդէմ Հռովմայ զԹագաւորս և զազգս Ա.րևելից։ Թող զպատերազմսն բնակիչս երկրին, պատրաստէր զազգս խաղաղ ժառանգս, զԽուրիկեցիս, զԹրակացիս, զԲաստառնացիս՝ քնա-
կեալս մերձ ի Դանուբ։ Եւ հակառակ ոխոյն դաշանցին, որով էր օրէն Թագաւորաց Մակեդոնիոյ առնել պատերազմ յա-
կսանց ծերակուտին, ընդարձակէր Պերսէոս լուծեայն զսահ-
մանս ի կոզմն Թրակիոյ, գնէր պահանոցս ի քաղաքս ծովե-
զերեայս Յնոս և ի Մարոնէա, գրգռէր ի պատերազմ զԴար-
դանացիս[1], նուաձէր զՊոլոպս, և յառաջ խաղայր մինչև ի Դելփիս[2]։ Ձգնէր յինքն արկանել զԱքայեցիս, և Հարտար-
մոութեամբ սիրել լեալ էր Յունաց։ Եւմենէս Բ, ազգայ Պերգամոյ, երկուցեալ որպէս զհայր իւր Ատտալոս Ա՝ ի բռնակալութենէ Մակեդոնիոյ, ծանոյց ի Հռոմ զվտանգի դաշանցին օրինազանցութեան։ Երկիւղ յերեսաց հզօր էշխա-
նին, և երախտիք Հաստատակամութեան, որոյ ընդարձա-
կեալ էր զսահմանս տէրութեան նորա յեթ պատերազմին Ասիոյ, յորդորէին զնա ի պահել զբարեկամութիւն ժողովր-
դեան Հռովմայ։ Ի 582՝ եկն նա ի Հռոմ և ներծարեալ ի ծերակուտին, գրգռէր զՀռովմայեցիս ընդդէմ Պերսեայ, ամբաստանեալ զնա ի խորհուրդս փառասիրութեան և թշնա-
մութեան ընդդէմ նոցա։ Ամբաստանութիւնք նորա շարժեցին ոխերիմ ատելութիւն ընդդէմ Եւմենեայ, որ ի դառնալ իւրում յերկիրն իւր՝ հանդիպեալ աւազակաց հարաւ ի նոցա-
նէ կարեվէր։ Կասկածք եղեն՝ և ոչ վայրապար՝ զարքային Մակեդոնիոյ, և զայն շատ հանարեցաւ Հաստատակամու-
թիւնն առ ի պատերազմ ընդդէմ այնորիկ, որոյ զօրութիւն սկսանէր խիթ արկանել ի նա։

Պերսէոս յանդուգն ի խորհուրդս, կարճամիտ ի գործ երևէր։ Մերժեալ խրոխտանօք ի սկզբան զբողոք Հռովմայե-
ցւոց, ճոպար ի Թեսաղիա բանակի նոցա. և ի չեռն զօրավա-
րաց Հարեալ զնոսա, մինչ ոչ գոյր նոցա ոչ զօրավար քաջ և

1 Տիտ· Լիւ· խԱ· ԺԹ։
2 Տիտ· Լիւ· խԱ· ԻԲ։

ոչ կարզ օրինաւոր, այլ զնոսա ՚ի կիրճն՝ ուր դիւրին էր նոսա ՚ի սպառապուռ ածել նոցա կոտրած։ Յայնժամ ՚ի հաշտութիւն հրաւիրեաց զՊ. Լիկինիոս Կրասոս. այլ թզուաշինն հռովմայեցի, թէպէտ և ՚ի պարտութիւն մատնեալ, պատասխանի առնէր հռովմէական անպրպուռելի անդուլթեամբ, զի էր հնար խաղաղութեան, առանց անձնատուր լինելոյ Պերսէոսի և ՚ի կամ ծերակուտին յանձն առնելոյ զարքայութիւնն իւր[1]։ Զանպիտեալ Թագաւորին յայնչափ աներկիւղութենէ նորա, յետս կոչեաց զբօս իւր, և եթող թշնամւոյն նահանջել խաղաղութեամբ։ Այլ անհմտութիւն զօրավարացն հռովմայեցւոց, բռնութիւնք նոցա և անկարգութիւնք զօրականին՝ ուծացուցեալ էին զՅոյնս, որոց բնաւորապէս հաճոյատոյն էր իշխան որ ապստակիւ՝ քան զօրաւոր որ զօրավար. վասն որոյ և էր նոցա անհաճոյ յաղթանակել Մակեդոնացւոց ՚ի վերայ հռովմայեցւոց. զի հասարակին հելլենական քաղաքականութեան բեւեռանել զյանձնապատասխանութիւն արեւմտեայցն բարբարոսաց։

Ոչինչ յաջողագոյն եղեն եւք պատերազմացն հռովմայեցւոց յամին 584 և 585։ Մին ՚ի բժեշկից նոցա յանդգնեալ յարձակեցաւ ՚ի Մակեդոնիա ընդ կիրճն կալլիպեւկեայ. ուր հասանէր զօրաց նորա սպառապուռ ջախջախել, եթէ արիացեալ էր Թագաւորն զդէմ ունել նոցա անդ. այլ նա ՚ի մերձենալ լեռնանկին՝ լոյս ետ անտի, և հռովմայեցիքն մեկնեցան ՚ի բազմաւանդ վայրացն անշնաս[2]։ Ուր ուրեմն ՚ի միտ առեալ ժողովրդեան զհարկ կացուցանելոյ ՚ի դերակայից զոք ՚ի զօրս բանակին զօրաւար, ընտրեցին զՊաւղոս Եմիլիոս ՚ի բժեշկէ, որ ՚ի պատերազմունս բնաւկեաց յայսկոյս Ադեայց զվինուտրական հանճարոյ իւրոյ տուեալ էր զփորձ։ Վաղ իսկ բազումք ՚ի Գալլատացւոց բանտարկեալ լինէին ընդ Պերսէայ. Հրովպացիք և Թագաւորն իսկ Պերսէոս էին ՚ի զօրավիճակն նորա. Հռոդացիք և Թագաւորն իսկ Պերսէոս, յետոյ միաբոյ բախտին ՚ի կալմն արբայիւն Մակեդոնիոյ,

1 Տիտ. Լիւ. խԲ. կԲ։
2 Տիտ. Լիւ. խԱ. ե։

առաջարկէին նիզակակից լինել ընդ նմա. և Պերսէոս դիւրահաւան լինէր նոցա ՚ի դաշնակցութիւն յեղակարծ թեւանալոյ նորա: Մինչ այս մինչ այն՝ խաղայր շատակեր բանակն Հռոմէական առաջնորդեալ խնամոյ նորա ՚ի միում ևեթ Չախատանոցին վախճան լինէր պատերազմին ՚ի Պիդնա յամին 586, ցուցեալ միանգամ զառաւելութիւն զօրութեան լեգէոնից Հռոմայեցւոց քան զՄակեդոնական փաղանգին: Այլ և ոչ փաղանգն տեղի եւս անփառունակ, զի Թէպէտ և լքեալ ՚ի Թագաւորէն՝ որ փախստեամբ զանձն ապրեցուցանէր, այլ սպառազինքն մակեդոնականք անկան արիաբար անխնայութք ՚ի ռազմիցն իւրեանց:

Իբրև լսեան Եմեննէս և Հռոդացիք զպարտութիւն Թագաւորին, ամենայնիւ վաղ ապաշաւանօքն մուտացուին առնել տարակուսանաց իւրեանց ընդ բաղդ Հռոմայ[1]: Ի նմին ժամանակի և Լ. Անիկիոս նուաճեաց զԻլլիւիկէ, ձերբակալ առեալ զԿենտիոս: Ջատուցաւ Մակեդոնիա ՚ի չորս գաւառս ազատս, այսինքն կալով ՚ի նոսա իշխանաց ընտրելոյ ՚ի նոցունց, բայց ընդ պաշտպանութեամբ Հասարակապետութեան: Եւ օրինք սահմանեցան նոցա մի ազգակցանել ընդ իրեարս, և մի փոխառնուլ տուրեաւուք զանշարժ սեպհուածս գաւառ ընդ գաւառի[2], և հարկ նոցա կէս ՚ի կէս նուազեալ: Թուի և առաջին տարի վարել Հասարակապետութեան նոքին օրինօք, զոր վարեցաւն յամին 416՝ ՚ի լուծանել զդաշնակցութիւն Անտիոքայ, և ապա յամին 449՝ զՀերմիկեանցն: Նոյնպէս բաժանեցին և զԻլլիւիկէ յերկս, և քաղաք կանխեալք ՚ի հնազանդութիւն՝ ապահարկ եղեն, այլոցն կիսով չափ նուազեալ հարկ[3]:

Ոչ աւելորդ ինչ համարեցայ ՚ի ներքս ածել առ զդիպուածն Թիւն Տիտոսի Լիւեայ զօրինացն՝ զոր ընկալան յայնժամ Մակեդոնիա և Լիւկիէ. «Սահմանեցաւ, ասէ, ազատութիւն հնարհել Մակեդոնացւոց և Լիւկիեցւոց, առ՚ի յայտ առնել ամենայն աշխարհի, զի Հռոմայեցիք զկնի իւրեանց ածէին ՚ի

1 Տիտ· Լիւ· խե· իև, և որ զկնի:
2 Տիտ· Լիւ· խե· իթ:
3 Տիտ· Լիւ· խե· իզ:

տալ աշխատիմ ոչ առ՝ի ծառայեցուցանել զազգս, այլ առ՝ի կացուցանել զնոսա ազատս. որ ազատքն էին՝ առահովել զաշխատութիւն նոցա, և ունել ընդ Թագաւորօք՝ քաղցրագոյն և արդարագոյն գործել զնոցայն վարչութիւն. և խնդրեմուտ առնել զնոսա, զի եկք պատերազմաց՝ որ ընդ Թագաւորս նոցա և ընդ Հասարակապետութիւնն իտալիոյին՝ լոյծ ազատութիւն ժողովրդոց, և Հռոմ զփառս ևեթ յաղթութեան կալցի»[1]:

Յունաստան և մանաւանդ Եպիրոս եռաւն զվրէժ վատթարութեան իւրեանց յառաջ մատանեալ զօրացն Պաւղոսի Եմիլիոսի: Նախ՝ի դաշնակցութենէ Աքայեցւոց, վասն յողդողդեցայ Հաւատարմութեան նոցա, ապք իբրև Հազար՝ի գլխաւորաց յանցաւորք կամ կասկածաւորք՝ի կողմնակցութիւն Մակեդոնացւոց, առաքեցան պատանդ՝ի Հռոմ[2]:

ԺԱ. Բաղավաթոռթեանն Հռովմայ յեղափոխումն:

Ի տանել Հասարակապետութեան զգենս իւր յաղթականս՝ի ծովեզերեայս Միջերկրականին գրեթէ առհասարակ, գՀետ երթեալ էր օրինաւոր պիտոյիւ և ազնուական իմաստից: Փոյթ հանդերձելոյ իւրոյ մեծութեանն, և գոյութեան իսկ, Հարկ ինն՝ի վերայ գնելը նմա մերել ընդ Կարթեգինէ՝ի ծովակալութիւն. անտի կուռ գիմեանց կնի՝ի վերայ եկեալ պատերազմունք՝ի Սիկիլիա, ՝ի Սարդինիա, ՝ի Սպանիա, Իտալիա և Աֆրիկէ: Հարկ եղև նմա դարձեալ Հարկանել զազգս պատերազմողս բնակեալս յայսկոյս Ալպեաց՝ յատակութիւն տհմանաց իւրոց: Իսկ՝ի Մակեդոնիա և Աֆիա ակամայ ատեր նա արշաւանս՝ վասն օտարոտի Թագաւորացն ուխտազանցութեան և դաւադիր լինելոյ և ժեռատիար նիզակակցաց իւրոց:

1 Տիտ. Լիւ. խե. ԺԸ: — «Անցեալ իմաստութեամբ էին օրինք եղեալք Մակեդոնացւոց՝ի պաւղոս Եմիլեայ, զի Թուէին տուեալ՝ի վարձ ծառայութեան գաշնակցաց, և ոչ պարտեղոյ Թշնամեաց. և փոյթ կրացն՝ որ միայն ազգին է Թերութեան օրինաց, ընդ ամս բազումս չեգիա լինէ՝ի նոսա ուղիւ». Տիտ. Լիւ. խե. ԼՆ:

2 Պոլիբ. Լ. Ժ. ԼԵ. Զ:

Վասն որոյ պարտ էր նմա յաղթել առ՝ի չտեսանելոյ զտապալել չինուածոյն՝ զոր հեղմամբ այնչափ արեանց կանգնեալն էր. և զարմանալի խակ է, զի յետ յաղթութեանն առաւել ձեռն առ գաշնակիցս գտաւ, նեղոյլ առ պարտեալս և չափաւոր՝ի պահանջանս իւր: Թողոյր Թագաւորաց զջուք գահուն, և ազգաց զօրինս իւրեանց և զազատութիւն. և չէր նորա ցայնժամ կարգեալ՝ի մարզ Հռոմայ, բայց միայն զկողմն մի Սպանիոյ, զՍիկիլիա, զՍարդինիա, և զկեալս որ յայսկոյս Ալեացն: Ի Սիկիլիա կալաւ նա սերտիւ ընդ ամս չիստն գնել զգահակցութիւն ընդ Հերոնի բռնակալին Սիրակուսայ: Յանդգոյզ օգնականութենէ որա՝ի միտ առնոյր ծերակոյսն Թէ քանի լաւագոյն էր գաշնակցութիւն անկասկածելի քան զերկապետութիւն: Ի Սպանիա ընդարձակեաց նա զսահմանս ցեզափեաց, որ յանձն առին գաշնակից լինել ընդ նմա: Ցետ Հանիբաղայ՝ի Եռնադլուխս, և առա՝ի Մազնեսիա՝ ոչ ընկէց նա յամօտաց իւրեանց զՓիլիպպոս և զԱնտիոքոս. և որ ինչ յառաջ քան զյաղթութիւնն, զնոյն և ապա առաջի եդ պայմանս Անտիոքոսի: Եւ ոչ յետ պատերազմին Պիւդնայ կոչ ծանէր նա զՊերսէոս, եթէ չէր առա յայտնապէս ուխտազանց լեալ. այսու ամենայնիւ օրէնս արդարս էառ Մակեդոնիոյ: Աղտարութեամբ վարէր նա յայնժամ և ընդ վաղեմի իւրումն ստոխ. զի՝ի գժտել Մասինիսայ ընդ Կարթագինի և ընդել՝ի ծերակուտէն Թիկունս օգնականութեան, և ծերակոյան պատասխանի՝ զի՝ի նպատաստ խակ իւր՝ չառնոյր յանձն զարդարութիւն առնել ոտնկոխ[1]:

Պաշտպանութիւն Հռոմայ պահեաց զթագաւորութիւն Պաղեստիոյ Փիլոմետորի և քեռ նորա Կլէոպատրայ Եգիպտոսոյ[2]: Դարձեալ և յորժամ յետ յաղթութեանն՝ի Պիւդնա գայլն Թագաւորք՝ի խնդակցութիւն և՝ի խնդիր հոլանաւո-

1 Տիտ· Լիւ· Խ. Խ: — Ի վկայութենէ Տիտոսի Լիւեայ, զոր ածեմ, յայնի է տեսանել զի խելթայր Մասինիսաս յարդարութենէ ծերակուտին առ՝ի շահ օգտի իւրոյ· «Եթէ յաջողէր Պերսէոս, և Կարթագէն զկիսաւ գոսանէր՝ի պաշտպանութենէ Հռոմայ, ոչինչ ապրելոյր զՄասինիսաս՝ի բռնն առնուլ զԱֆրիկէ ըստ իւրով»:

2 Տիտ· Լիւ· Խե· ԺԹ:

լութեան նորա, ծերակոյտն արդարութեամբ մեծաւ կատարեաց զամենայն ազերս նորա: Եւ ամենէս վասն կատարածաւորն լինելոյ՝ առաքեաց զեղբայր իւր զՈւտաւոս՝ի Հռոմ: որպա ընտրս գտեալ առ ծերակուտին, համարձակեալ խնդրել մանն ինչ զթագաւորութեան Պերգամոյ, առիւծեայս հրաժա-
րել՝ի խնդրոյն: Կոտրատոյ արքային Թրակիոյ դարձոյց ծե-
րակոյտն զորդի նորա առանց փրկանաց, ասելով՝ թէ չէր օրէն
ժողովրդեան Հռոմայ՝ի վաճառ հանել զարերարութիւնս
իւր[1]: Եւ զի մի ասիցեմ՝ի գժտիլ Պրուսիասայ արքային
Բիւթանիոյ ընդ Գալլատացիս, յայտ արար նա զի արդարու-
թիւն ևեթ թելադրէր իւր՝ ուր՝ի նոցանէ գոլ ձեռնտու[2]:

Ո՛րպէս ապա այնքան մեծախոհութիւն՝ի դիտումնս, այն-
քան մեծանձնութիւն՝ի յաջողուածս, և այնքան խոհակա-
նութիւն՝ի գործս, ի հակառակն թուին յերեւիլ՝ի քան
և երկուս ասն՝ի պատերազմէն որ ընդդէմ Պերսեայ՝ միևնոյն
ցերծութեն կալքեդոնական պատերազմ: Քանզի բազմին կարի
լիմն յաջողուած շլացուցանէ զմիտս ազգաց ոսկես զթագաւո-
րաց: Ի տեսանել Հռոմայեցւոց զի ոչ ևս էր ոք որ զդէմ ու-
նէր զօրութեան իւրեանց, քանզի ցայնժամ չէր ուրուք զդէմ
կալեալ նոցա, զամենայն ինչ այնուհետև օրէն համարեցան
ինքեանց: Ոչ ևս՝ի պաշտպանութիւն դաշնակցաց, ի պահ
տանմանց իւրեանց, և՝ի բեկումն դաւակցութեան զէն առ-
նուին. այլ առ՝ի հարկանել, առնել զոկասս, և՝ի
ծառայութիւն իւրեանց վարել զազգս: Յուշ լեալ և այն, զի
յողդողել ազգաց՝ որ վեր՝ի վերոյ հաւատարիմք երևեալ
և՝ի գաղտնիս նուիրեցին միշտ ապստամբութիւն, և սխակա-
լութիւն Թագաւորաց՝ որ զբէն իւրեանց Թագուցանէին՝ի
վերուն երեսս խոնարհեալք, յաձախէին զկատակածանս Հռոմ-
կանակերտութեան և առաւել ևս զպահանջանս, և վտահա-
գոյն զնա կացուցանէին՝ի վերայ հպատակաց՝ քան՝ի վերայ
դաշնակցաց: Զուր ջանայր ծերակոյտն չխոտորել՝ի նախնեացն
աւանդից. չէր նորա այլ ևս զօրութիւն բառական սանձահա-

1 Տիտ. Լիւ. խե. խճ:
2 Տիտ. Լիւ. խե. խդ:

ել զփառասիրութիւն քաղաքացւոց. տահմանադրութիւնք որ աձեցուցանէին զսկզբնաբոյս տիոց առաքինութիւնս՝ մոլութեանց ևէթ այնուհետև զարգացելոյն Հռովմայ տածէք լինէին: Ոչ ևս հնազանդէին զօրաւորք. բռնաշխին կն. Մանլիոս հարկանէր զԳալղատացիս Ալպիս՝ անհրամանն Ի ծերակուտէն[1]. Ա. Մանլիոս արշաւէր ընդքնիշխան Յատրիա[2]. Կ. Կասիոս բռնաշխ Թողեալ զգաւառ իւր յայնկոյս Ալպեայց, ձեռներէց լինէր մեծ Ի Մակեդոնիա ընդ Լիւրիկէ[3]. Փուլիոս կուսակալ ապստամբեալ ընդհարման զկնճռոմանս, զազգ բնակեալ յայնկոյս Ալպեաց՝ որ խաղաղութեամբ էին ընդ Հռովմայ[4]. Պոպիլիոս Լենաս անպատճառ յարձակեալ հարկանէր զԱտտալեատս, և բիւր մի Ի նոցանէ Ի վաճառ հանէր. և այլք զարձեալ հարստահարէին զԱպանիացիս[5]: Եւ այս ամենայն Ի պարտաւանս ծերակուտին յանկէին աներկբայապէս. բռնաշխք և կուսակալք անընդունել լինէին և դատափետք իսկ. անպատուհաս մնայր անհնազանդութիւն, և Ի դէպ եւանէին դատախազութիւնք: Թէպէտ և յամին 599 Լ. Լենտուլոս բռնաշխ դատափետ լեալ իբր հարստահարիչ, բայց անխափան վերատին ամբաստնայր Ի բարձրագոյն աւագութիւնս[6]:

Յորչափ Ի չափաւոր ինչ գործառնութիւն վասն անձուկ տահմանաց ընտրէին կուսակալք և բռնաշխք, չէր ինչ օգտակար քան զընտրութիւն նոցին տարւոյ. զի սովին կանոնաւ Ի սակաւ ինչ ժամանակի հաղորդս լինէին բարձրագոյն աւագութեանց բազումք Ի դիւաւորաց քաղաքացոյց, յազատանային և Ի ռամկէն: Իշխանութիւնք՝ որոնք հասանէր նոցա վարել աւագի աչաց քաղաքակցաց իւրեանց աւ Ի պահու քան Ի շահ, պարտս Ի վերայ դնէր նոցա արժանաւորս գոլ այնո-

1 Տիտ· Լիւ· ԼԸ· Խե:
2 Տիտ· Լիւ· ԽԱ· Է:
3 Տիտ· Լիւ· ԽԱ· Ա:
4 Տիտ· Լիւ· ԼԹ· Գ:
5 «*Զոմանք էին Ի բերանս ամենեցուն՝ զի և պետք գաւառացն Ապանիոյ հակառակ կային հարստահարելոյ զաղնուականս և զհպծս*»· Տիտ· Լիւ· ԽԳ· Ե:
6 Վալեր· Մաքս· Զ· Թ· 10:

ցիկ. այլ իբրև ածէին զնեգէոնս իւրեանց՝ ի տար աշխարհ, զօրավարք անպայման իշխանութեամբն, հետ յամենայն պարտաւորէր տեառնէնք մեծանային աւարաս պարտեցոյց, և առ՝ ի կուտել նեթ ինչս՝ ի տակաւառն ժամանակս իշխանութեան իւրեանց՝ հետամուտ լինէին աւարտութեանց: Յաձախութիւն ընտրութեան առենակալաց, յաձախեցուլ զընտրելս, յաւելս զհետամուտս՝ որք ոչ ի ինչ՝ ի հնարից Թողուին առ հասանելոյ՝ ի նոյն: Վասն որոյ յիրաւի խնամատարէր Մոնթէսքիէօ, զի «Օրէնք՝ իմաստութեամբ սահմանեալք առ՝ ի մեծացուցանել զհասարակապետութիւն փոքրիկ, ՝ի մեծանալ նորա ջնասակարք նմա եղանէին. զի գործ էր նոցա ՝ի քանէ կացուցանել ազգ մեծ, և ոչ ազգի մեծի առաջնորդել՝:

Զապերասանութիւն կրնցս երկոքումբ մարթէր սանձահարել. ցածուցանելուլ զեռանդն աշխարհակալութեան, և նուազելուլ զթիւ հետամտից իշխանութեան՝ յառնելն զայն երկարատև: Բայց Թէպէտ և ժողովուրդն ինքնին քնաւորապէս խելամուտ լեալ պիտոյից դարմանոց այսր Թերութեան օրինաց, երկարէր զժամանակ իշխանութեան նոցա՝ յոր վըտահն էր, վասն որոյ կամէր կացուցանել զՍկիպիոն Աֆրիկէացի իշխանապետ մշանջենաւոր[2], սակայն որք նորոգիչքն պանծայինն գոլ, որպիսի ոք էր Պորկիոս Կատոնն՝ ատրուկ հնաւանդ սովորութեանց, տարապարտման խստութեամբ օրէնս տային հրատարակել՝ մի ումեք երկից հետամուտ լինելոյ բդեշխութեան, և մի կանխել քան զտես՝ ի խնդիր լինելոյ բարձր աստիճանաց:

Ա.յս ամենայն հնարք ընդդէմ ելանէին առաջարկելոյ դիտաւորութեանն: Ի պահել անխափան զտարեւոր ընտրութիւն, ազատ ձեայր առտարել ցանկութեան ոմանց. և՝ ի մերժել զառոյգն հասակ՝ ի բարձրագոյն պաշտամանց, ընկէն չէին ընտիր ընտիր ձիրք բնութեան կանուխ՝ ի նմա՝ ի վեր երևեալք, որոց տարօրինակ գերազանցութեան զերծուցեալ էր յաձախ զՀռոմ՝ ի ծանր ծանր արկածից: Չի տեսեալ

1 Մոնթէսքիէօ, Յաղագս ջէնտրնէան և անկման Հռովմէական պէտրնէան, թ. 66:

2 «Սկիպիան կշռամբէ զժողովուրդն, որ կամէր զինա բդեաշխ և մշանջենաւոր իշխանապետ կացուցանել»: Տիտ. Լիւ. Լ.Ը. ՃԶ:

խակ էր տուրա յամին 406 զՄարիոս Վալերիոս Կորուս քոան և երից ամաց՝ ի բռնշխուԹիւն ամբարձեալ՝ և յաղԹող Սամնիտացւոց՝ ի լեառն Գաւրոս. նոյնպէս և Սկիպիոն Սէրվիլեցի փոխանակ բռնշխի կացեալ քոան և չորից ամաց, աշխարհակալեր զՍպանիա և խոնարհեցուցանէր զԿարԹեդոն. դարձեալ և Կուինտոս Փլամինիոս բռնշխ յերեսնամեայն տանէր յաղԹութիւն՝ ի վերայ Փիլիպպեայ՝ ի Թանագըսիս: Եւ Սկիպիոն Նասիկեան՝ հանդերձեալ կործանել զԿարԹեդոն, բռնշխ ընդհուպ կացեալ վաղ քան զօրինաւորն հասակ՝ սահմանեալ յօրինադ անտի Կատոնի:

Կատոն արդարակորով և անաչառ հանդարտական գոլեալ արդեօք էին միտք՝ զառաջս առնուլ զառածմանց բարուց. բայց փոխանակ զպատճառան նախ՝ ի բաց բառնալոյ՝ ընդ արդասիս կռուէր. փոխանակ ամրացուցանելոյ զիշխանուԹիւն՝ օգնէր՝ ի սկզբուԹիւն նորին. փոխանակ Թողլոյ ազգաց ազատուԹիւն լինել, սոխակր զծերակոյտն՝ ի նուաձել ընդ իւրև զամենայն. և փոխանակ իմաստուն ընտրուԹեամբ ընդունելոյ որ լինչ գայր՝ ի ցունաստանէ, զամենայն լինչ եկամուտ անխտիր դատապարտէր[1]: Ի խաւուԹեան Կատոնի մեռանիլն էր՝ քան խնդալն առաքինուԹիւն. զի յաւուրս հանդարտականուԹեան իւրոյ մերժեաց զՄանլիոս՝ ի ծերակուտէն՝ վասն հանբոյր տալոյ նորա կնոջ իւրում՝ ի տուէ յանդիման դատերացն. սխորժէր օրէնս կարդել վասն զարդուց և զեղխուԹեան տիկնանց հռոմէացեացւոց. և դարձեալ առ՝ ի ցոյց անտեսուԹեան շահու անձին՝ ի մեկնելն՝ ի Սպանիոյ վաճառէր զերիվարն, իբր անխնայելով յօգուտ հանդարտականուԹեան զծախս հանապարհին[2]:

Բայց էին ծերակուտին այլք, Թէպէտ և ոչ այնչափ խիստք, այլ խոհականագոյնք՝ ի լինդիր պետոյիւ ժամանակին. այլք ցանկային բառնալ զզեղծմունս, զօրացուցանել զքաղաքավարուԹիւն ըստ չափոյիւ, սանձահարել զանէնչ աշխարհակալու-

1 Կատոն գիտելով զոյն լեզու՝ Թարգմանաւ խօսէր ընդ ԱԹենացիս. (Պլուտարքոս՝ ի կոպն հանդիսիւ, ԺԸ.): Հռոմէացեացդ սովորուԹիւն էր վաղվի՝ ի լատին և ի յոյն բարբառս խօսել ընդ օտարս. (Վաղեր. Մաքս. Բ. Ե. 2:)

2 Պլուտարքոս՝ ի կոպն հանդիսիւ, Ը և ԺԵ:

Թեան, և ընդունել՝ ի Յովհաննէ՝ որ ինչ բարին էր։ Եւ եւ-
բեբելքն՝ ի տուա՝ Սկիպիոն Նասիկա և Սկիպիոն Եմիլիանոս[1].
որոց առաջինն ոչ ինչ մերժէր՝ ի կարևորացն առ՝ ի համբոյր
գործել զբարս և յաւելուլ զպիտուԹիւն մարդկայինն, և երկ-
ոտիդն սիրող էր նորոց մուտից և համարէր տատարիչ Տերև-
տեայ։

Ընդարձակ էր խոսիանել զանհրաժեշտ բերումն ժողովրդեան յոր ինչ ամբաստնայ զիտս և ազնուագոյն գիմանս գործէ։ Յովհաննէս բերէր յոտալիա զպարուԹիւնս իւր, զաբեւտս, զպիտուԹիւնս և զհարտարախօսուԹիւն. յաղին 597 յորժամ եկին հրեշտակուԹեամբ Յովհաննայու քաղաքէն՝ ի Հռոմ երեքին խնդատասէրքն անուանիք, կարնէադէս Ձենմանէս, Վիոգինէս ստոյիկեան, և Կրիտոլայոս պերիպատեան, դիւրդեցաւ քաղաքն ամենայն։ Վիմ էին պատանիք խոհեմ-վին՝ ի տեսանել զնոսա և՝ ի լսել. և ինքնին իսկ ծերակոյտն հաճ և հատան էր ընդ մեծարանս արանցն, որոց հանձար հանդերձեալ էր կրթել բանասիրուԹեամբ զիտս անկրթս[2]։ Կատան միայն անտղբելն, համարելով անփորձ հատակին արուեստիւքն այնպիսիք յեղծումն ապականուԹեան վաղ զտուածնել և կորուսանել զսէր գիտուց, զոն գործեաց՝ ի բաց արձակել զիմաստասէրսն։

Նոյն ինքն իրաւարար երԹեալ գԺտուԹեանն՝ որ ընդ Մասինիսա և ընդ ԿարԹեդոն, և ևս գայրացոյց զայն. զի նա-խանձեալ ընդ վաղեմի ոտիսն Հռոմայեցւոց դէռ ևս մեծուԹիւն և յաջողուԹիւն, ոչ դադարէր՝ ի յեղեղելոյ ընդդէմ նորա զդատաւճիռն հռչակաւոր. «Պարտ է կործանել զԿարԹեդոն»։ Ուր Սկիպիոն Նասիկա հակառակ կայր կործանման ԿարԹեդոնի, անզօր ամենևին համարեալ գնա՝ ի ՀԹասել, և շատ իսկ զօրաւոր յահարկուԹիւն ժողովրդեան՝ ի փրկուԹիւն և՝ ի զգուշուԹիւն յանկղնատալոյ յանիրաւուԹիւնս, որ անխտասփռելն է տարապայման մեծուԹեան պետուԹեանց[3]։ Այլ ըստ արկածից բազմին յաղԹեաց խորհուրդ Կատոնի։

1 Տիտ. Լիւ. Հատընտիր, ԽԸ։ — Վալեր. Մաքսիմ. Դ. Ե. 10։
2 Զրուցատիք. ՚ի կապան Համարձակաւ, ԼԴ։ — Ակլ. Գելլ. Զ. ԺԴ։
3 Տիտ. Լիւ. Հատընտիր, ԽԹ։

«Հարկ է Աշմարտութեան առաւածբեղէն իմն գոլ, առ որն ’ի մեծանուն մերոց մատենագրաց, զի վերնակը արդարակրօն մարդկան այնպէս ճեռասակար գտանին մարդկութեան, որպէս մոլութիւն՝ որ վերնակին է չարաց»։

Կատոն դատափետելով զվերատրս ’ի քաղաքացոց, ևս և զԱկիսիոն Սիրիկեցի, ուսուցանէր Հռովմայեցւոց երկբայել զառաքինութենէ[1]. զի առաւելագանցութիւն նորա ’ի դատախազել, և կիրք ’ի դառել, կասկած տային զարդարութենէն նորա[2]։ Դատապարտելով զմոլութիւնս, յորոց և ինքն էր զերծ, ջատեր զգօրութիւն կշտամբանաց իւրոց[3]։ Ի կշտամբել զժողովուրդն երբ դատախազ և երբ դատաւոր, առանց ջանալոյ հրահանգօք և օրինօք ամբաստնել զնոսա, նմանէր ալքայեն Պարսից, ասէ ոմն ’ի բազմահմուտ Գերմանացոց, որ բրածեծ տայր առնել զծով առ ’ի հալածել զմրրիկս[4]։ Սգեցութիւն նորա անգօր ’ի խափանել զչեզափոխութիւն քաղաքականութեան, արդասիս աղետաւորս ’ի վերայ էած այնր ժամանակի տեսչութեան[5]։ Ծերակուտին հրաժարեալ ’ի չափոյն և յարդարութենէ, որ ցայնժամ ամենայն գործոց իւրոց էին դրօշմ և կնիք, փոխանակեաց ընդ այնր զխոտանկութիւն, զյանդգնութիւն և զկարգ աւենակործանս։

Ի սկիզբն եօթնեերորդի դարուն ամենայն ինչ անտես լինէր յերեսաց Հռովմէական գօրութեան։ Սգաստութիւն ժողովրդոց, Թագաւորութիւնք և Հասարակապետութիւնք բառնային ’ի միջոց։ Կործանէր Կարքեդոն, զէնըմնկէց լինէր Յունաստան, Մակեդոնիա կորուսանէր զազատութիւն, և Սպա-

1 «Հաչէր Կատոն անգութ ընդդէմ մեծութեան Սկիպիոնի»· Տիտ· Լիւ· Լ.Ը· ԾԴ։

2 «Պ· Կատոնի էին միտք դաժան, լեզու խիստ և համարձակ»· Տիտ· Լիւ· Լ.Թ· Խ։

3 «Ընդդէմ վաշխառուաց Հանդուգնակէր, և ինքն ծանր տոկոսօք տայր ’ի փոխ զարծաթն, զոր ’ի կալուածոց իւրոց առնոյր· պարտաւէր զվաճառս տոկոսմանեաւոյ, ինքնին իսկ ընդ օտար անուամբ ’ի նոյն առևտուր պարապեալ»· Պլուտարքոս· ’ի կատոն Համարեակ, ԼԳ։

4 Տրումանն, Հռովմէական պատմութիւն· Ե· էջ 148։

5 «Վերջին գործ քաղաքական կենաց նորա եղև վճիռ կործանման Կարքեդոնի»· Պլուտարքոս· ’ի կատոն Համարեակ, Լթ։

նախ զնա՛ն ի Նոսմանտիա, յետ ոչ բազմաց և Պերպաւոնի զնոյն կրեալ բաղդ։

ԺԲ. *Երրորդ պատերազմ կարթագենական։*

(603–608)։

Կարթեդոն առեալին միշտ և կասկածելի Հռովմայեցւոց, Թէպէտ և խոնարհեալ՝ սակայն կանգուն կայր տակաւին։ Սպասանէին զհամախոհութիւնն ընդ Մակեդոնացիս՝ դժկամակս միշտ ընդ լուծ նոցա, և զդիմակալութիւն կելտիբերեանց նմա՛ի յանցանս հաւսարէին։ Ցամին 603 վերատին պրպռեալ էր մարտ ընդ Մասինիսսա և ընդ Կարթեդոնացիս։ Եւ զի լսա վերջնումն գաշնադրութեան չէր օրէն ոտգա տալ պատերազմ անհրամանն, խորհուրդ կալաւ ծերակոյտն զայլ կողմն ունել։ Կատն կամէր անյապաղ պատերազմ։ իսկ Սկիպիոն Նասիկա հաւանեցոյց հրեշտակս միւսանգամ արձակել, համոզել զՄասինիսսա՛ի թողուլ զերկիրն՝ զորմէ վէճն էր։ Ցանձն էառ և ծերակոյտն Կարթեդոնացւոց՝ յիմաստուԹիւն դեսպանացն ապաստան առնել զինդիրն. այլ խառնիճաղանձն Կարթեդոնի յուզեալ յարանց, որք յաղմուկս խռովութեան զկիրս ամբոխին յօգուտ իւրեանց՛ի վար արկանեն, ստահակեալ անարգեցին զդեսպանս Հռովմայեցւոց, և հալածական մերժեցին զդլխաւորս՛ի քաղաքացւոց[1]։ Ապստամբ բունԹիւն ազեաւալն. քանզի՛ի սպառնալ վտանգի արտաքուստ, ամենայն խլրտումն ժողովրդեան՛ի կործանումն է աշխարհին[2]. որպէս՛ի կոխել օտարի զաշխարհն՝ միաբանական է ամենայն յեղափոխութիւն տեսչութեան։ Բայց ծերակոյտն Հռովմէացւոց կան պարտ համարէր երկարաձգել զպատճն վասն սպանիական պատերազմին, ուր Սկիպիոն Եմիլիանոս հազարապետ էր յայնժամ զօրուն։ Որպէս երԹեալ յԱֆրիկէ խնդրել յարքայն Մասինիսսայ զփոխակոյտն սահմանեալ՛ի մարտ ընդդէմ

1 Տիտ. Լիւ. Հատընտիր, ԽԸ։

2 Ի Կարթեդոն ազգին հրամայէր, *՛ի հռոմ* ամենայն իշխանութիւն՛ի ձեռս ծերակուտին էր. (Պոլիբ. Զ. ԾԱ։)

*Կեղծեցաւ, ականատես եղև անոր սրինահղել պարսու-
Թեան Կալբեդոնացւոց. և անտի շարժեցան Հռովմայեցիք
խառնիլ՝ ի պատերազմին. քանզի էին կամք Ծերակուտին Թո-
ղուլ Յ.փրիկէ միահեծան տէր զԹագաւոր Նումիդիոյ, որոյ
վաղ իսկ յՈվկիական ծովէ ցԿիւրենեական աշխարհն ձգէր
իշխանութիւն[1]։*

*Ցուր ջանացաւ Կալբեդոն արդարացուցանել զինսպս իւր
՝ի ձեռն հրեշտակաց՝ ի Հռովմ, զի չկարաց պատահել խնդրոյն։
Ուստիկ անձնատուր եղև Հռովմայեցւոց (604) և զդեաշխ
երկու՝ Լ. Մարկիոս Կենսորինոս և Մանիլիոս Նեպոս՝ հասին
անդր ութ բիւր զօրականօք (605)։ Կալբեդոն խնդրեաց
հաշտութիւն, և եդան նմա պայմանք տալոյ՝ ի դուրս զամե-
նայն զինս իւր. և եթ հանդերձ 2,000 պատերազմիկ կազմա-
ծովք։ Ա.յլ՝ ի յաւելուլ ընդ հուպ աստուպահանջ հրամա-
նին մեկնելոյ բնակչաց՝ ի քաղաքէն տան մըռնաւ՝ ի նեղըս
՝ի ցամաք, զառնացեալ Կալբեդոնացւոց ընդ տարապայման
խառնութիւնն՝ ձեռն արկին՝ ի նախնին իւրեանց ժրութիւն.
կազմեցին միւսանգամ զինս, շարժեցին զժողովուրդն, արձա-
կեցին՝ ի բանակն զԱստրուբալ՝ որ արագ արագ գումարեաց
եօթն բիւրս մարդկան՝ ի Նեփերիս, և կացոյց զբեդեաշխս
յերկեքայս ընդ ելս մարտին[2]։*

*Բանակն հռովմէական եղեալ դիմակալութիւն մեծ, որում
ոչ ակն ունէր, և վտանգեալ զօրավարութեամբ Մանլեայ՝
փրկեցաւ՝ ի ձեռն Սկիպիանի Եմիլիանոսի հազարապետի. և
յայնմհետէ ամենեցուն աչք՝ ի նա հայէին։ Վասն որոյ՝ ի դառ-
նալ նորա՝ ի Հռովմ յամին 607 ընտրեցին զնա բեդեաշխ՝ ի հա-
սակի երեսուն և վեց ամաց, յանձնեալ նմա զգործ պատե-
րազմին՝ որ կերպարանափոխ եղև այնուհետև։ Քանզի պա-
տեալ պաշարեցաւ ընդհուպ Կալբեդոն մեծաւլաստակ աշխա-
տանօք՝ ի ցամաք կուսէ փակէին պատնէշք զքաղաքն՝ պարսպա-
բեալ զպաշարողս, և՝ ի ծովէ ամբարտակ հսկայապործ հա-
տանէր զամենայն կցորդութիւն՝ արկեալ զքաղաքն՝ ի սով։*

1 Տիտ· Լիւ· Ծ· ԺԶ։
2 Ապպիան· Կարթեդոնական պատերազմունք, Ղ.Գ, և որ գինի։

Բայց Կարքեդոնացիք կատուցին ՚ի նեղքին նաւահանգստի՝ միւս այլ նաւատորմիղ, և պեղեցին ելս անտի ՚ի ծով։ Ակիսիոն խաղաց ՚ի ձմերոյն ընդդէմ քանակին ՚ի Նեփերիս, և ՚ի քա- նալ դրանց գարնանոյ՝ էառ զառաջին պատնէշն. և ապա ու- րեմն յետ եռամեայ պաշարման, և երկուստեք արիական չգանց, առին Հռովմայեցիք զքաղաքն և զինջնաբերդն Բիւրսա և հիմնայատակ կործանեցին։ Ստորեւթալ անձնատուր եղև հինգ բիւրիւք բնակչօք՝ ծնայորդօք ամբաւ բազմութեան քա- ղաքին. այլ ՚ի վերայ մահարձանի մոյ այրեացաւեր պարսպին կայեալ չքնաղագործեաւ կին վերջնոյ զօրավարին Կարքեդո- նացւոց, անիծանէր զայր իւր՝ որ չէր ՚ի վերայ հայրենեացն մեռեալ. և խողխողեալ զերկուս մանկունս իւր հասէր զանձն ՚ի բոց հրդեհին։ Տխուր օրինակ ազգի՝ որ անձամբ անձին ՚ի վերայ ածէ սպառապուռ կործանումն, թէպէտ և ոչ անփա- ռունակ կործանեալ։

Ի մնանել դաչինեպատակ նաւուն ՚ի Տիբեր լի մեծահա- րուստ աւարաւ՝ բերելով զաւետիս մեծի յաղթութեանն, դղրդեցաւ քաղաքն ողջոյն, և գիրկս արկեալ միմեանց լինդա- կից լինէին ընդ բարեբաղդութիւնն։ Յայնժամ Հռովմ զեր- ծեալ յամենայն կասկածանաց, զկայ զի էր դշխոյ աշխարհի. սակայն աւեր Կարքեդոնի եղեռն էր մեծ, զորոյ Կայիոս Գրակքոս, Յուլիոս Կեսար և Աւգոստոս Քանդակն բառնալ զնախատինս։

ԺԳ. Կարգել Յռոմաոցոյն, Մակեդոնիոյ, Եռամանոյ և Պերգամոյ ՚ի մարգս։

Բարձաւ ՚ի նմին ամի և ինքնօրէնն վարչութիւն Յունաց։ Բանզի յաւուրց պատերազմին Պերսեայ Հզօրագոյն էշխանու- թիւն Հռովմայ պահէր ՚ի բարեկարգութեան զԱքայիա. այլ ՚ի դառնալ պատանդացն յամին 603, որ դիպաւ յաւուրս խռո- վութեան Մակեդոնիոյ, զարթեաւ ատելութիւն երկպառա- կելոյ ամբոխին։ Սրագ արագ ՚ի վեր երևեցան գԺտութիւնք ընդ դաշնակցութիւն Աքայեցւոց, և ընդ քաղաքս Պելոպոնե-

այ, զոր ցանկայինն նոքա նուաճել, և զոյց պատուհասէին զվհատելութիւնն յաւէր և՛ ի կոտորած։

Ոչ յաւուց և Սպարտա զբուխ ամբառնալ, և պերծանէս վառէր՝ ի հուր մարտի։ Ընդ վայր ձգնեցան Հռովմայեցիք զառաջս առնուլ հանրական աղիւին։ Պատգամաւորք ծերակուտին ածին՝ ի Կորնթոս զվճիռ բաժանելոյ զՍպարտա, զՍիկիւոն և զՈրքոմենոն Արկադիոյ՝ ի դաշնակցութենէն։ Ընդ այս լուր Աքայեցիք ընդ սուր հանին զվաւերեմնացիս՝ որ էին՝ ի Կորնթոս, և լցին նախատանօք զինուորական Հռովմայեցւոց[1]*։ Զև՝ ի խաւսութիւն ձեռն արկեալ ծերակուտին՝ խոհեցաւ կոչել զնոսա՝ ի հաշտութիւն, այլ և ոչ նոցոց պատգամաւորացն լսել եղեն բանք։*

Յայնժամ դաշնակցութենն Աքայեցւոց միաբանեալ Յնբիա և՛ ի Բէոտիա՝ յանդգնեցան յայտ առնել պատերազմ ընդդէմ Հռովմայ, պիտելով զի պատերազմէր նա՝ ի Սպանիա և ՅՍիրիկէ. այլ հուպ ընդ հուպ խորտակեցան՝ ի Սկարփէ Լոկրիացւոց յերեսաց Մետելլեայ, և՛ ի Վեւոպետրա՝ մօտ՝ ի Կորնթոս՝ յերեսաց Մումմիոսի։ Պատուհասակոծ եղեն քաղաք ի դաշնաւորաց. Կորնթոս յատար մատնեցաւ, և Յունաստան նուաճեցաւ իբր գաւառ Աքայից ընդ Հռովմայեցւոյք (608)[2]։

Սակայն յետ յաղթութեանն՝ Մումմիոս, ըստ Պոլիբեայ իսկ վկայութեան[3]*, եցոյց չափաւորութիւն մեծ և անզօրաքաղութիւն։ Ոչ կործանեաց զանդրիս Փիլոպեմենայ, ոչինչ կալաւ վասն անձին յատարկ Յունաց, և եկաց միոց յայնպիսւոյ չքաւորութեան, մինչև ծերակուտին տալ օժիտ դստերաց նորա՝ ի զանձուց աշխարհին։*

Չայնու ժամանակաւ ծանրանայր ձեռն ծերակուտին և՛ ի վերայ Մակեդոնիոյ. քանզի առ վերջինսն Կարթեգոնական պատերազմաւ՝ բաղդաւորեալ ոք՝ ի Յունաց, Անդրիսկոս ա-

նուն, որպէս Պերսեայ զինքն անուանեալ՝ ապստամբեցուցեալ

1 Յունարեն, ԼՂ· Ա։ — Տիտ· Լիւ· Հատընտիր, ԾՒԱ։ — Պոլիբ· Ա, Բ, Գ։
2 Պատառն· Խ· ԺԶ։ — Յունարեն· ԼՂ· Բ։
3 Պոլիբ· Խ· ԺԱ։

էր զաշխարհն Թրակացւոյ գնդաւս։ Եւ հալածեալ՝ ի Թեսաղիոյ յերեսաց Սկիպիոնի Նասիկայ, եմուտ անդր վերստին. ապան զՅովհեռիոս Թաղնա, և ուխտ եդ ընդ Կարքեդոնացիս. այլ նկուն լեալ՝ ի Մեսեղեայ առաքեցաւ շղթայակապ՝ ի Հռոմ։ Յետ ոչ բազում ամաց և այլ ուրուք ձեռն արկեալ խաբէութեամբ՝ ի ժառանգութիւն գահոյն Պերսեայ, ծերակոյտն՝ ի մարզս Հռոմայեցւոց զՄակեդոնիա (612)։ Ջնոյն արար և ընդ Լիբիկէ՝ յետ նուաճելոյ զՊրեփացիս (618)։ Ա.յսչափ յաշխարհութիւն յաղթանակաց չէր երթեք Հռոմայեցւոց տեսեալ. Ակիպիոն եմիլիանոս վասն Աֆրիկեայ առնէր յաղթանակ, Մեսեղլոս վասն Մակեդոնիոյ, Մումիոս վասն Աքայիոյ, և Փուլխոս Փլակիոս՝ Լիբիկեայ։

Խաղաղացեալ այնուհետև ծերակուտին յարևելից և՝ ի հարաւոյ, զարձոյց զամենայն զօրութիւն իւր՝ ի Սպանիա՝ որ ոչ երթեք նուաճեալն էր՝ ի սպառ, և այն ինչ կազդուրեալ վերստին զառնոյր՝ ի զէն։ Յետ խաղաղութեանն հաստատելոյ՝ ի ձեռն Սկիպիոնի Աֆրիկանեայ և Սեմպրոնիոսի Գրակքոսի՝ նորանոր ապստամբութիւնք լեալ էին անդ. Լուսիտանացիք զրգռեալք՝ ի Կարքեդոնացւոց՝ զէն առեալ էին յամին 601, և յաղթութիւնս՝ ի վերայ Մումիոսի և յաջորդի նորա Գալբայ կանգնեալ (603)։ Գալբայ անարժան մատնութեամբ զերիս բիւրս՝ ի գերեաց՝ ի մահ մատնեալ էր. ամբաստանեալ՝ ի Կատոնէ յատենի ծերակուտին՝ անպարտ և արձակեալ։ Յետ այնորիկ և այլ ուրուք՝ ի զրեշխից ոչինչ նուազ զրժանս զոր-ծեալ. զի Լիկինիոսի Լուկուլլոսի մեռեալ՝ ի Կաւկա՝ որ անճառ-տուրն լեալ էր, երկուս բիւրս՝ ի բնակչացն կոտորեալ, զայլս՝ ի վաճառ ածեալ էր[1]։

Ընդ այսչափ անպիտութիւնս ծանրացաւումն լեալ բնակ-չաց հարաւայնոյն Սպանիոյ, ազգասիրութիւն՝ որպէս սովորն է՝ յարոյց նոցա վերժխտելիս ախոյեան։ Վիրաւոր ապրեալ՝ ի կոտորածոյ Լուսիտանացւոց, և՝ ի տուարածական կենաց՝ ի զօրավարութիւն ամբարձեալ, ձեռն էարկ համախոհիւքն՝ ի պատերազմ. և զանս հինգ յաղթող եղեալ զօրավարացն Հռով-

1 Ընդհան. Պատերազմաց Սպանիոյ, ԾՒ։

մայեցւոց, յարոյց և զնեւտիբեւս ի վտարանջուեթիւն. Մինչդեռ Մեսեղլոս Մակեդոնացին ընդ տուս պատուիրէր, փաքիոս անօգնական ծնացեալ առաջի Վխրիաեթայ՝ պաշարեցաւ ի կիրճս լերանց, և հարկ եղև նմա խոնարհել ի հաշտութիւն: Ա.յլ ի սպանանել Վխրիաեթայ դաւով, ոչ ևս յերկբայս ծնային եւք մարտին. այլ մահ նորա այսպէս ի դէպ յաջողեալ Հռովմայեցւոց, կասկածաւոր առնէր զնէպոն՝ որ յաջորդեան էր եղեալ իւրում փաբեայ: Եւ իբրև եկին սպանողք խնդրել զվարձս դաւադանութեանն, պատասխանի արար նոցա Նէպոն, զի Հռովմայեցւոց չէ հաճեալ երբէք ընդ սպանութիւն զօրավարի յիւրոց զօրաց[1]: Յայնժամ հնազանդեցան Լուսիտանացիք, և լեգէոնք արշաւեցին մինչև Յովիան:

Ի գաղարել մարտին յարևմուտս՝ գումարէր զՆումանտեա[2], ուր զամն հինգ յոլովք ի բռնէն ի պարտութիւն մատնեցան: Եւ յամին 616, յորժամ Մանկինոս բռնաշխ շուրջ պաշարեալ ի Թինաեաց, առ ի փրկել զզօրս իւր՝ յանձն էառ խաղաղութիւն ամօթագարտ, հանգոյն այնմ՝ որ առ Կաուդինեան կրձին, մերժեաց ծերակոյտն զպայմանս խաղաղութեանն, և ետ շղթայակապ զզօրավարն ի ձեռս Թինաեցոյն: Նոյն ազէտք մնային և Տիբերեայ Վրակքոսի գանձապետի՝ որ երաշխաւոր լեալ էր գաշանցն. այլ զի ունէր նա շնորհս առաջի ժողովրդեան, մնաց ի Հռոմ: Ցդէմ կալան Նումանտացիք ընդ երկար ուծաւ քաջութեամբ, մինչև հարկ լինէր յաղթականին Կարթեդոնի գալ ինքնին յառաջ վարել զպաշարումն. և թէպէտ բազում աշխատ լեալ ընդդէմ քաղաքին, ապայն տակաւ ևեթ կարաց նուաճել զայն: Պարտեցաւ Սպանիա, այլ ոչ ազատութեան եկաց մնաց անդ տակաւին ընդ ամն բազում:

Թէպէտ և անկումն Թագաւորութեանն Պերգամոնի կրասեր է յոյժ ժամանակաւ քան զդէպս՝ զոր պատմեցաք, այլ յաւելումք և զայն ասասցուք՝ որպէս հեռանայ առաջարկութեան

1 Ե՛տրոպ· Դ· է:

2 Բաղաքն Կարթագէն Սպանիա, մերձաւ հեռի ի Սոլնոյ առ Տաէրոյի՝ կառուցեալ է ի տեղի հնոյն Նումանտիոյ· (Մխիթարեան, Աշխարհագրական բառագիրք Սպանիոյ):

Հռովմայեցւոց ծառայեցուցանելոյ զազգս առհասարակ։ Ա֊տալաս Գ՝ Ձիւաղն անգթութեան և յիմարութեան՝ ի մեռա֊նել իւրում ելթող կտակաւ զարքայութիւնն իւր ժողովրդեան Հռովմայ։ Եւ յառաքել Հռովմայեցւոց զօրս առ ի ժառանգել զայն, Ա.րիստոնիկոսի հարձորդւոյն եւմենեայ ապստամբեցու֊ցեալ զժողովուրդն՝ ի պարտութիւն մատնեաց զբդեաշխին Լիկինիոս Կրասոս։ Ա.յլ յետ սակաւուց՝ ոմ ի յաջորդաց բդեշխին խնդրեաց զվերջ պարտութեան նորա, և ձերբա֊կալ արար զԱ.րիստոնիկոս. և թագաւորութիւնն Պերգամայ հանդարտեալ՝ յաւելաւ ի մարզս Հռովմայ իբր կուսակալու֊թիւն Ասիոյ (625)։

ԺԴ. *Բռնանդակութիւն պատմիցդ։*

Ըստ ընդարձակել սահմանաց Հասարակապետութեան՝ յաձախէին մեծամեծ աւազութիւնք, և առնուին այլ եւս կարևորագոյն կերպարան։ Բդեաշխք և փոխանակք բդեշխից և կուսակալք՝ ոչ միայն զօսար աշխարհաց ունէին զառեչ֊թիւն, այլ և զՏաւղոյ։ Չի որպէս վկայէ Ա.պպիանոս, ի գա֊ւառս ուրեք ցամաքակղզւոյն փոխանակք բդեշխից վարէին իշխանութիւն[1]։

Ինձեակ էին մարզք Հռովմայ. ա. Ակէտք յայսկոյս Ա֊պեաց. — բ. Ապանիա յայնկոյս. — գ. Ապանիա յայսկոյս. — դ. Ասդրենիա և Կոթիկա. — ե. Սիկիլիա. — զ. Ա.իրիկէ հիւսի֊սայինն. — է. Ա.իւրիկէ. — ը. Մակեդոնիա և Ա.քայիա. — թ. Ասիա։ Վասն որոյ ընտրէր ժողովուրդն ամի ամի երկուս բբ֊դեաշխս և եօթն կուսակալս ի տեսչութիւն գաւառացն այսո֊ցիկ հեռաւորաց. այլ սովորաբար չէր օրէն թէև ածել զա֊ւազութեանցս, չև անցեալ ընդ պաշտօն գանձապետի կամ շինուածապետի. և չէր մարթ կալ շինուածապետ՝ առանց մե֊ծախրթեամ Հռոմայեցւոյն. զի առ ի գտանել շնորհս առաջի ժողովրդեան՝ հարկ էր նոցա ծախել ինչս բազումս ի հան֊դէս ոճնէց և ի հասարակաց շինութիւնս։ Փարթամացս միայն

1 Ապպիան. Պոփբոպմոն֊ տոպտոյոն֊. Ե. Գ. 38։

էր հետամուտ լինել բարձու պաշտամանց. վասն որոյ և ազ-
նուապետացդ էր պահել զերակայ աստուածութիւն, յորում
ակնարկ զամ մի կամ երկուս տահմանիչն զլսոյդ լսդնածա-
ւալ Թագաւորութեանդ. և գոն գործէր ազատանին խոսխա-
նել զմուտ պաշտամանց նորահաս մարդկան։ Յամին 535 ց621,
ընդ ութսուն և վեց ամն, յինանց ևեթ ազգատոհմիդ կացին
ութսուն և երեք թզեաշխք։ Ձեռ այնորիկ ընդ ամն իբր էր-
կոտասան՝ի Մեռելեան տանէ երկոտասան ևեթ այր հասին
յայլ և այլ աստղութիւնս (630–642)[1]։ Ձկրաւն ապա նաբխ՝
բռնաւոր Սպարտայ՝ ասէր առ Կոմնկոտիս Փլամինիոս. «Ա-
ձեզ լսա չափս գոյից տահմանի այրուձին և հետեւակ։ Ա-
նուազունս է իշխանութիւն, և բազմութեան բաժին՝ հպատա-
կութիւն։ Օրինադրիս մերոյ Լիւրկեայ այլազգ եղեն կամք.
չթողուլ զիշխանութիւն՝ի ձեռս ումանց՝ի քաղաքացոց, որոյ
միաբանութիւն կազմէ զձեղդ ծերակոյտ, և ոչ տալ միոյ կամ
երկուց դասուց առաւելութիւն օրինական»[2]։

Ձարմանք են բռնաւորին Յունաստանի զուամկապետու-
թենէ իմաստասիրել առ Հռովմայեցին։ Բանզի յեղափոխու-
թեամբն հանդերձ մուծելով յաւեանս քաղաքացոց, զո-
րոյ բազում ուրեք գժուարին էր գիտել զվասն էրն, պահէր
ազատանին զնախահպատութիւն իւր, և չէր օրէն հարցանել
զժողովուրդն՝ չև առեալ զկարծիս ծերակուտին[3]։ Հռովմէա-
կանն սեպհութիւն, միշտ ազնուապետական, երեմայր և յա-
ւելեալ՝ի հարստահարութիւն ըստ մեծանալ աշխարհին. և
կորուսանէր նա ըստ ազդեցութեան, որ ինչ ժողովրդ խոս-
նոյ ստանայր ըստ իմաստութեան և օրինաւոր ըղձից լաւագու-
նի ապատնուց։

Դարձեալ՝ի սկզբանէ անտի Հասարակապետութեան էին
՝ի նմա կրկին հակառակ կուսակցութիւնք՝ կիսոց գոն գոր-
ծելով տարածանել զիրաւունս ժողովրդեան, այլոց ամիսել
զայն։ Ւ հասանել առաջնոցն յիշխանութիւն, յուշ լինէին
ամենայն օրէնք անցելոց ժամանակաց ազատականք. իսկ յիշ-

1 Վհլ. Պատմ. Բ. ԺԱ։
2 Տիտ. Լիւ. ԼԴ. ԼԱ։
3 Տիտ. Լիւ. ԽՆ. ԻԱ։

*խել այլոցն՝ խափանէին օրէնքն այնոքիկ։ Վասն որոյ է զի տե-
սանեմք նոյոզեալ երկոցս զվալերեան օրէնս, որ սրբազանէրն
զտողք առ ժողովուրդն, և է զի՛ ձեռն Գենուկեայ յամին
412[1] հրաւարակեալ զօրէնս՝ որ արգելուին զընտրել զոք
վերատին՛ ի բռնակալութիւն չև անց տասուց՛ ի վերայ ան-
ցեալ, և զնոյն իսկ խափանեալ ընդ հուպ, և ապա անդրէն
հաստատեալ՛ ի 603, և միւսանգամ յաւուրս Սիլլայ ընդունե-
լի լեալ. և դարձեալ յերկիս այլ և այլ ժամանակս նոյոզեալ
զօրէնս՝ որ մերժէին զապատապիտս յաշխարհաժողովոյ, անզօր
առնելով զքուեայս նոցա[2]։ Է զի առանեմք զգուշութիւնս
խիստս ընդդէմ կաշառակրծութեան, հարստահարութեան
և վաշխոյ հուպ ընդ հուպ նոյոզեալ, և է զի զիրաւունս ժո-
ղովրդեան կացուցանելոյ քուրս մերթ բարձեալ և մերթ
ընդարձակեալ[3]։ Պոմպեան օրէնք յամին 557 և 559 արգելուին մի
առնել բրածեծ զայր քաղաքացի, և մի դատաւինք մնհու՛ ի
վերայ ածել ումեք՝ մինչև հարցեալ զհան ժողովրդեան։ Եւ
ապա Սիլլան Եմիլիանոս առ՛ ի դերև հանել զօրէնս զայս՝
այլ հարկանել զօտար զօրականն բռնով, իսկ զիւրան ուռուք
որթոյ[4]։ Ի սկիզբն եօթներորդ դարուն ընդունելի եղև դա-
նի քուէարկութիւն յամենայն ընտրութիւնս. յամին 615՝
յընտրութիւնս առենակալաց, ՛ի 617՝՛ի վճիռս ժողովրդեան՛ի
դատապարտութիւն, ՛ի 623՝ յընդունելութիւն առաջարկեալ
օրինաց։ Եւ օրինադրութեամբ միանգիւնական հարցափորձի,
որ սահմանեցաւ յամին 605, կամք էին խափանել զհարստա-
հարութիւնս գաւառաց. այլ օրինադրութիւնքս այսոքիկ մերթ
ընդունելի լեալ և մերթ խափանեալ, ոչ կարէին դէզ դար-
մանոյ մատուցանել չարեաց քաղաքաժողով ընկերութեան։*

1 Տիտ. Լիւ. Է, Խ։

2 Յամին 555, 585, 639 (Տիտ. Լիւ. Խե. ժե.)։ — Ասկլ. Վիկտոր, Ընտ-
անութ., Կ։

3 Լիկինիոս Կրասոս ռամիպատես՛ ի 609 առաջարկեաց տալ ժողովրդեան
ընտրութիւն քրմապետաց, որ ցայնժամ՛ ի ձեռս քրմաց գասուն էր։ Հաստա-
տեցաւ առաջարկութիւնս այս յամին 650 Դոմիտեան օրինօք, և գարձեալ խա-
փանեցաւ՛ ի ձեռն Սիլլայ։

4 Տիտ. Լիւ. Հոփընփէր., Ծ։

Ա.ըհաւկան տառաքինութիւնք իմնասուն ազնուապետութեան կալեալ էին ցայնժամ զՀաստատակապետութիւնն՝ի միաբանութեան և՝ի մեծութեան, իսկ յոտնութիւնք նորա հանդերձեալ էին հինն՝ի վեր տապալել զնա ընդ հողս։

Յուցաք եբր՝ի հանդիսի զերևելի երևելի անցս երեք հարիւր երեսուն և երից ամաց ժամանակի, յոր ազդութիւն այնպիսի երևեցոյց Հռոմէ, որում ոչ ոք յազգաց հաւասարել կարացաք։ Յաւելնայն կուսէ՝ զոգ[1]ես՝ի նմին ժամանակի ընդարձակեր նա զընիկ սահմանս իւր։ Ընդ հիւսիս, ընկճեալ զԿելտս յայսկոյս Ալպեացն և անցեալ ընդ Ալպիս. ընդ արևմուտս և ընդ հարաւ՝ կալեալ զինու զօրութեամբ զմեծամեծ կղզիս Միջերկրականին և զմեծ մասն Սպանիոյ։ Կարթեդոն ասէս նորա հզօր՝ ոչ եւս էր՝ի միջի։ Ընդ արևելս ծածկեցին զաղթականք նորա զծովեզերս Ադրիականին. նուաճեցան Վիւրիկեցիք, Խարիացիք և Դալմատացիք։ Թագաւորութիւն Մակեդոնիոյ եւաց մատոյց Հռոմէական հարկատու, և լեզիոնք հասին մինչև՝ի Դանուբ[1]։ Իսկ անդր եւս՝ երկիր էր անծանօթ, հայրենիք խուժադուժ ազգաց, զեր եւս անզօրք յահարկութիւն։ Յունաստան և կղզիք նորա, փոքրն Ասիա մինչև ցՏաւրոս, խանձարուրք քաղաքականութեան, յաւէտ՝ի հռոմէականին ինքնակալութիւն. և այլ եւս գաւառք Ասիոյ ընկալան զօրինս նորա, և կամ զօրութեան նորա անսային։ Եգիպտոս, հզօրագոյն՝ի թագաւորութիւնս ժառանգաց Ալեքսանդրի, ընդ իւրեանակալութեամբ էր նորա։ Հրեայք խնդրէին դաշնակից լինել ընդ նմա։ Մինչերկրականն լինէր լճակ հռոմէական։ Ոչ եւս տեսանէր Հռոմ շուրջ զինրև արժանաւոր ախոյեան ընդդէմ իւր։ Բայց Թէպէտ և ոչ ի՛ նոյն վտանգ սպառնային նմա արտաքուստ, սակայն առանին էին նմա իւրք ծանունք և ժժգոհութիւն ժողովրդոց։

1 Արշաւանք ընդդէմ Սկոտաեանց՝ յամի 619։

ԳԼՈՒԽ Չ

ԳՐԱԿՈՍԵԱՆՔ, ՄԱՐԻՈՍ ԵՒ ՍԻԼՎԱ

(621–676)։

Ա. Հաստատակամութիւնն որ ինչ յայնժամ հանգամանաւք։

Անզօրաբարոյութեան և ստոյիկեան առաքինութեանց անցեալ էր ժամանակ, ունեալ զամն իբր չորեքարիւր. յորս նեղհակակիր կարծեաց և շահու էր երկեք յուզեալ պատերազմանց արիւնահեղս, հայրենասիրութեան ազատութեոյ և ուղղախոհութեան ոամկին գիտացեալ խորշել յանհնարին ազեաց անտի։ Ա.յլ՝ի սկիզբն եօթնեերորդի դարուն կերպանոխս եղեն իւք. և չէր այլ ինչ տեսանել այնուհետև յառաջարկութիւնս նորաձևութեան և՝ի բարձաձգութիւնս, բայց աղմուկս և պատերազմունս ընտանիս, կոտրածս և տապրութիւնս։

«Հաստատակամութիւնն, որպէս Սաղոստիոս ասէ, ընկալաւ զիւր մեծութիւն յիմաստուն քաղաքավարութենէ տակաւուց ոմանց լաւ քաղաքացւոց»[1]. և մարթ է յաւելուլ զի և կործանումն նորա սկիզբն էառ յօրէ, յորմէ պայազատք նոցին ոչ ևս արժանաւորք նախնեացն իւրեանց կացին։ Քանզի բազումք՝ի նոցանէ՝ որ յետ Գրակքոսեանց հասին իշխանութեան, այնպէս անձնախնդիրք անագորոյնք երևեցան, զի յերեսս նոցին դժուարէին է ընտրել՝ այր՝ի նոցանէ հնչուն անուն։

1 Սաղոստիոս, հպատակ։ Ա. Ը։

Յուլիան կանգուն կայր Կարքեդոն, որպէս զի յանդիման դայլոյն Հաւոմայ պահ անձին ունիցի, այնպէս գուն գործէր Հաւոմ պահել զարդարութիւն և զգօնութիւն իմաստից նախնեացն իւրոց. այլ յանկանել միանգամ Կարքեդոնի, ՚ի նուաճել Ելլադայ և ՚ի պարտել Թագաւորացն Ասիոյ, գտաւ այնուհետև Հասարակապետութիւնն առանց ամենայն փրկաւէտ անձից ՚ի զառածանս անկոպար իշխանութեան[1]:

Սալուստիոս այսպէս նկարագրէ զայր ժամանակի հանգամանս Հասարակապետութեանն. «Ան ինչ զերծեալ Հռոմայեցիք յերկիւղէ Կարքեդոնի՝ պարապ առին տալ զանձինս ՚ի հերձուածս և ՚ի կռիւս, ամբառնային այնուհետև ամենուստ ազմուկք և յոյզք ապստամբութեան և տնտական պատերազմունք: Նուազունք ոմանք հզօրք՝ որոց առաջի յուսապինք ՚ի քաղաքացոյց վաստակաւ ինդրկին չնորհս գտանել, տիրապետիչին ընդ մեծարոյ անուամբ մերթ ծերակուտին և մերթ ժողովրդեան: Ոչ ևս անուն բարւոյ և չարի քաղաքացւոյ էր վարձ գոլոյ բարեբար կամ չնաւակար հայրենեաց, քանզի ամենեքեան առհասարակ էին ապականեալք. և որչափ մեծափարթամ որ էր և կարողագոյն անպատուհաս անկղնտանալոյ ՚ի չարէս, եթէ միայն պաշտպանէր զանկարգութիւնս ժամանակին, նոյնչափ այր արդարոտրոմ համարէր: Ոչ ևս այնուհետև, որպէս երբեմն, տակաւ ապականէին վաղեմի բարք, այլ հեղեղօրէն յորդէր զեղծումն. և մանկտուցն յայն չափ զեղխութեան և արծաթսիրութեան զառածանէին կեանք, մինչև ՚ի դէպ իսկ առացաւ զազգէն զայնմանէ՝ չունել ժառանգութիւն հայրենի, և ոչ այլոց թողուլ զայն»[2]:

Ընդարձակել պետութեան, յաձախել կցորդութիւն ընդ օտարս, սպրդել մտանել նորոց փիլիսոփայական և կրօնական իմաստից, գանձ անբաւ ածեալ Հռոմայեցւոց ՚ի ձեռն պատերազմանց և վաճառաշահութեան, այս ամենայն գործակից

1 «Յաձախէր ապականութիւն, զի ՚ի կործանել Մակեդոնիոյ՝ սկրտպետութիւն աշխարհի անեղկեցոյ երևէր այնուհետև Հռոմայոյ»· Պոլիբ· ԺԱ· Կ:

2 Սալուստ· Հպռոաջ· Ա· ժ:

լինէին՝ ի սպառապուռ յոռութիւն ազգին։ Փոխանակութիւն
ինն լինէր ժողովրդոց իմաստից և բարուց։ Այսի Հռովմայե-
ցւոց զօրականաց և վաճառականաց և հարկահանաց՝ երամն-
վին սփռելոյ ընդ աշխարհս հաճօրէն[1], ամէնր տեղւոջ և ցանկա-
լիս՝ ի մէջ պերճութեան և զրպանաց արևելից. և անտի
օտարազգիք, մանաւանդ Ցոյնք, դունդապունդ զեղեալ յոտա-
լիա՝ ընդ զարգուն արուեստս խրթանց բերէին և զարհամար-
հանս նախնեացն կարպաց։ Ջնոյն ազդեցութիւն ներգործէին
նոքա յայնժամ՝ ի Հռովմայեցիս, որ էին՝ ի հնոքեսասանելոյդ
և՝ ի վերջասանելոյդ դարու արար՝ ի գալլիացիս Խառնիս. որ
թէպէտ և առաւելեալ յայնժամ հանճարով, այլ ապակա-
նեալ էր բարուք։ Հրապոյրք մոլութեանց դժուարայաղթք լի-
նին, ընդ կերպարանօք վայելչութեան, հանճարոյ և գիտու-
թեան երևեալ։ Որպէս և յառնային դարս յեղափոխութեան,
և աստ յօդակապք բարոյականք թուլացեալ, և զեխութեան
և անսանձ զբաղթութեան դերեալ էր զառնային կարգ
մարդկան։

Արկին դէպք նշանաւորք՝ հարուր վաթսուն և ինն ամօք
հեռի յիրեցաց, վկայեն որ էին խարխր էր ընդ բարս այսր և
այնր ժամանակաց։ Ինչպես հրեշտակ՝ ի Պետրոս գանձուք՝ ի
Հռոմ առաքեալ՝ ի խնդիր հաշտութեան, չեզոխ զոք կաշա-
ռակուրծ առնել (474). և զարմացեալ ընդ մեծախրատութիւն
և ընդ հայրենասիրութիւն ծերակուտին, նամանեցուցանէր
զնա ժողովոյ Թագաւորաց։ Իսկ Ցուդուրթ եկեալ՝ ի Հռոմ
(643) ՝ի ջատագովութիւն անձին, սպառեաց արար զգանձս
իւր՝ ի գնել զգաստասան ամենեցուն, և էր արհամարհու-
թեամբ քաղաքին մեծի, ՝ի մեկնելն դոչէր. «Քաղաք պիտա-
պին, կորնչեսս ընդ հուպ՝ եթէ գնող ոք գտցի»[2]։

1 Ընչափ էր բազմութիւն վաճառանդեաց հռովմայեցւոց, զի Մինդաս՝ ի
սկիզբն պատերազմին, ՝ի միում աւուր միանգամայն ընդ ամենայն երկիր եչխա-
նութեան իւրոյ տայր կոտորել՝ ի նոցանէ հնգետասան բիւրս, ըստ Պլուտարք-
քեայ (ի Սէլլա, խՀ)· իսկ ըստ Մեմնոնի (ի Մասենագարանին Փոտեայ, գիչա-
գիր ՄԻԳ, ԼԱ.) և ըստ Վալերեայ Մաքսիմոսի (Թ. Բ. 3.)՝ ութ բիւր։ Փոքրիկ
քաղաքն Կիրտա յԱֆրիկէ դիմադարտեալ ընդ Ցուգուրթայ Խառնացւովք եւթ
իւրովք. (Սալլուստիոս, Ցուգուրթ, ԻՉ։)

2 Սալլուստ. Ցուգուրթ, ԻԲ։

Քանզի ազգն առհասարակ յեզափոխեալ գտանէր ՚ի նոր յայս պայման. վասն որոյ յաձախէր խաժամուժ ՚ի քաղաքանէն, պակասէին բնակք գիւղօրէից, անկանէր միջակութիւն, տեսլիք մեծամեծ կալուածոց յիւրեանցան զփոքունս յարկէին, աձէին ՚ի բազմութիւն զաւակապուծք և ազատագլուք, և տուրք ՚ի գործս ազատաց ձեռնեղէց լինէին: Չիմաստութիւն ոչ ևս համարէր յազատանոյն ՚ի բարձրագոյն փառս և ՚ի գլխաւոր պարոս: Կրօնք, խարխափ հաստատութեան Հաւատոյ, կորուսանէին զիւրեանց նախնին զօրութիւն. և դաշնակիցք պարտասեալ էին օժանդակել ՚ի մեծութիւն ինքնակալութեան Հռոմայ, առանց հաղորդ գտանելոյ իրաւանց քաղաքացւոյ[1]: Եւ էին այսպէս ժողովուրդք կրկին՝ քաջ զանազանեալք ՚ի միմեանց. ժողովուրդ դաշնակցաց և հպատակաց, և ժողովուրդ Հռոմայ: Դաշնակիցք՝ ՚ի կարգի ներքնոյ էին միշտ. օժընդակ խումբք ՚ի նոցանէ՝ բազմանային քան զմայրաքաղաքին, կիսով ևս առնուին ոռձիկ, և պատուհասի զանից ներքոյ անկանէին, յորոց ազատ էին լեզէոնք: Ի յաղթանակս անպատմ գումարք նոցա ՚ի յեռմին կարգս՝ զՀետ յաղթականն կառաց զօրավարին ակնկոտ և լուիկ զՀետ գնային: Այս չէր ինչ օտար զնոյն պատիւ ընձեռանել նոցա, ՚ի միտ առեալ զյարդ անձանց և զվաստակս: Ժողովուրդն բնիկ անուանեալ Հռոմայեցի՝ յանձուկ գաւառի ամիսոսեալ ՚ի Ներեայ մինչև ցԿումա, խրոխտանային ՚ի նոյն յաւագնանանութեան: Եւ էր Թիւ ժողովրդեանն երեսուն կամ քառասուն բիւր[2], յերեսուն և հինգ ցեղս զատուցեալ, յորոց չորք միայն էին ՚ի Հռոմ, այլք ՚ի գիւղօրէս: Եւ Թէպէտ ՚ի վերջինս յայտոսիկ համարէին բնակիչք գաղթականաց, և յոլովադունից քաղաքաց Իտալիոյ, այլ առաւելապէսիկ Իտալացւոց զուրկ էին ՚ի քաղաքական իրաւանց, և հուպ առ դուրս խակ Հռոմայ էին գեռ ևս քաղաք անժառանգք իրաւանցս, որպիսիք էին Տիբուր, Պրենեստ, Սիգնիա, Նորբա[3]:

1 «Խակ Հռոմ ոչ կամէր ընդունել ՚ի Թիւ քաղաքացոյ զայնոսիկ, որոց օգնականութեամբն հասեալ էր յայն մեծութիւն, և խրոխտացեալ արհամարհէր խակ զհամարիւն և զհամաազգութիւնդ ժողովրդս». Վէլլ. Պաաերկ. Բ. ԺԵ:

2 Տես զցուցակ ազգահամարին ՚ի ծանօթութիւն 3 յէջ 235:

3 Մոմսէն, Պաֆռաթիան Հռովմայ, Ա. էջ 785:

Փարթամագունից՝ ի քաղաքացոց բաժանելով յիւրեանս գնալուածս հասարակաց, որ էր իբր երկու երրորդ մասն բովանդակութեան երկրին աշխարհակալելոյ, պարտութեալ էր՝ ի վերջ գրեթէ զամենայն խակ երկրին ընդ ձեռամբ Իւրեանց, և զի սակարկութեամբ ընդ տեարս փոքունց կալուածոց, և զի բռնի յափշտակութեամբ, արտաքոյ խակ սահմանաց Իտալիոյ[1]: Եւ ասպա՝ յորժամ Հասարակապետութիւնն դշխոյ կացեալ Միջերկրականին, թէպէտ՝ ի պատճառս բաժից և հասից, և թէ՝ ի ձեռն վաճառականութեան՝ ընդունէր անբաւութիւն ցորենոյ և արմտեաց յարդաւանդագոյն գաւառաց, միջակութիւն նոցին անփոյթ թողաւ Իտալիա, և արտոյտք փոխեցան յարօտս և՝ ի ձոխ երէցս: Դարձեալ և արօտք, սակաւուց բազկաց կարօտք, ընտրելագոյն թուէին տեարց մեծամեծ կալուածոց, վասն որոյ լայնածաւալ կալուածք՝ ի ձեռս սակաւուց էին, և գրաւեալ էր ասպետաց գնաւ խակ աղքատս մեծութեան աշխարհին: Բազումք՝ ի նոցանէ հրաժարեալ՝ ի կարգէ հեծելազօրուն, մնքսապետս լինէին և սեղանաւորս, և զվաճառականութիւն գրեթէ բովանդակ գնառամբ ածեալ: Ընդ ամենայն սահմանս հռովմէական տէրութեան կացեալ նոցա՝ ի մնքսապետական ընկերութիւն, ժողովէին հարկս և բաժս՝ ի գաւառաց, կազմեալ տիրապէս ազնուապետութիւն ձոխութեան, որոյ զօրութիւն յաւելցեր օր քան զօր, և՝ ի քաղաքական կռիւս զօրանայր կողմն՝ ուր էր նորայն աղդեցութիւն:

Եւ այսպէս ձոխութիւն երկրին ժողովէր՝ ի ձեռս աւազանդն՝ որ յազատ և՝ ի ռամիկ համախմբեալ, պակասէին հանապազօր ազատք՝ ի գաշտօրայս: Վասն որոյ յամին 620, եթէ արժան իցէ հաւատս ընծայել Պլուտարքեայ[2], օտարականք միայն էին յԱտտուրիա երկրագործք և հովիւք, և ամե-

1 Երկիրն յափշտակեալ՝ ի Վռոնտոն քաղաքէ՝ էր երեք բնիւր արտավար: Յամին 342 առաւ այն՝ ի ձեռն հատարակելոյ՝ ի վարձու. այլ յետ սակաւ ժամանակի յոտիսն և՝ ի ջրից վարձկանաց հասոտտուելոյ անդ՝ մնայր մի միայն քաղաքացի բնակիչ երկրին, այլոց առ հասարակ անցեալ յազատատանին հռովմայ. (Մոմսըն, բ. 75: — Կիկերոն, Ցուդուդ տոպոխոպոնիան ընդդէմ Վերեոի, Ի, և որ վկնի:)

2 Պլուտարքոս՝ ի Տիբերիոս Գրաքոս, Թ:

նայն ուրեք այնպէս բազմացեալ գերեաց, մինչ զի՛ ի Սիկիլիա միայն քան բիւրք՛ ի հոցանէ զկնի առին յատուածքուն[1]: Եւ՛ ի 650՝ Թագաւորն Բիւզանդիոյ յայտ արար չկարել տալ գումարս օժտական զօրաց, զի մանկտի աշխարհին այն ինչ յարեան հասեալ՝ ի գերութիւն վարէր՛ ի Հարկահանաց Հռովմայեցւոց[2]: Ի ծննդավաճառս Դեկտի վաճառէին՛ ի միում աւուր բիւր մի ստրկաց, և բարձեալ՛ ի նաւս առաքեցան Յոտալիա[3]:

Տարապայման բազմութիւն ստրկաց ոչ միայն զնաւակար էր քաղաքաժողով ընկերութեան և պատճառք տկարանալոյ[4], այլ և զժպատեհ վանն ազատագրելոց: Քանզի յաւուրց անտի Սերուխոսի Տուլէայ քաղաքացիք հանդարտէին նոքա, այլ առանց երաւունս ունելոյ քուէից. ազատք իսկապէս, բայց կապեալք սովորաբար ընդ երբեմն տեարս իւրեանց. զոլով նոցա բժիշկք և զեղարուեստք և քերթողք, չէր օրէն ոչ ինքեանց և ոչ որդւոց նոցա հասանել՛ ի կարգ ծերակուտին, կամ մանել՛ ի դաս քրմապետաց, կամ ամուսնանալ ընդ ազատ օրիորդի, կամ զինուորել՛ ի լեգէոնս, բայց միայն՛ ի ծանր վտանգս: Ի զի ընդունել լեալ յընկերութիւնս քաղաքականս, և ի զի մերժէին յայնց, հանդիսանալեալ խստութեն գերեաց ժամանակի, որ՛ ի խափշիկ և՛ ի սպասաւոր ծնողաց, երկոցունցն և սնութեան հաղորդք՝ բերէին միշտ զինքք սերնդեան իւրեանց[5]:

1 Դիոդոր Սիկիլ· հպ·ա, կդ· գ:

2 Դիոդոր Սիկիլ· հպ·ա, կզ· կչ 147· տպ· Ընկկհայզէր:

3 Սարաք· ժդ· ե· 570:

4 «Երկեան միշտ նախնիք մեր՛ ի բնաւորութենէ ստրկաց, ևս և՛ ի գաշակ ծնելոց կամ ընդ յարկաւ տեառն իւրեանց, և՛ ի ծնէ զակրատկութիւն ուսելոց: Իսկ զմերան ըստ ազգաց իւրաքանչիւր համարեալ, որոց միւսմ միւսմ են այլ և այլ բարք և այլ և այլ դէք, թէ արդեօք և չեն իսկ նոցա դէք, զանարդ և զնաան՛ ի խուռն ժողով մարդկան ոչ այլ իւիք մարթ է ստանձել, բայց ահարկութեամբ»· Տակիտոս, Տրէգր· ժդ· ի:

5 Յամին 442՝ համարտակաքն Ասպիոս կլաւդիոս կեկոս եւս արձանագրել զատագէս յիւրաքանչիւր ցեղս, և համարձակ արար որդւոց նոցա մուծանել՛ ի ծերակոյան· (Դիոդոր Սիկիլ· ի· կգ): — ի 450՝ համարտակքն կ· Փաբիոս Հռուբլիանոս (Մաքսիմոս) փակէ զնոսա՛ ի քառեակ ցեղս քաղաքացոց· (Տիտ· Լիւ· Թ· ի2)· զ530 ամաւ այլք՛ ի համարտակալոց բանան նոցա մուտ յամենայն ցեղս· ՛ի 534՝ համարտակալքն Լ· Եմիլիոս Պաապոս և կ· Փլամինիոս հաստատեն

Տարապրեալ՝ ի խումբս քաղաքացւոց, բազմացուցանէին ընդ զաւակագործս զխռովիչ Հռոմէացն, առ որս յաղթողն Կալբեղանն և Նումանտիոյ արդար արհամարհանօք առեալ էր խօսել, որպէս առաջեալ նորա երբեմն. «Լուռ լերուք այգ չէքդ ի Թիւս որդւոց Խաալիոյ». և ի չհանդարտելն նոցա՝ յաւելուլ. «Ոչ երկեայց ի նոցանէ՝ զորս շղթայակապս եառու աճել այսր, Թէպէտ և խորտակեալ էին նոցա արդ շղթայք»[1]: Նբրև գումարէր ժողովուրդ քաղաքին յաւեանի՝ առանց դրծակցութեան ցեղից գիւղօրէից՝ որ ազատագոյնքն էին, գիւղացի գտանէր յաւեանին հրապոյրս, յորս հզօրագոյնք էին հաշտաք ընտրելեաց և գիւրագին բաշխս ցորենոյ: Ոչինչ նուազ ներգործէր ի նա և ամբոխն զուրկ ի քաղաքական իրաւանց՝ ի խռնելն ի հրապարակի, և որպէս ի խորհուրդս աւեանին Անգլոյ՝ գոն գործել ազատական և շարժմանք ազգելոյ ի վերայ մուտ քաղաքացոյ:

Դարձեալ և նախապատիւ ազգատոհմք՝ իրրոտասանօք ընդ նախնեացն արուեստիւնս, կամէին եւեթ պահել զկալուածս իւրեանց և զինչնանուեթիւն, առանց հոգ ի մուծ ունելոյ արժանաւոր գոլ նոցին. և անգոնել էին Թուէր նոցա կրթուեթիւնն այն խոսս, որով բաւական լեալ էին առ ամենայն պաշտամունս[2]. որպէս զի մարթ էր ասել, Թէ գոյր յայնժամ ի Հռոմ ազնուապետուեթիւն առանց ազատանոյ, և ռամկապետուեթիւն առանց ռամկի:

Էին ապա անիրաւուեթիւնք՝ որոց կարևոր էր բարձումն, պիտոյք զորս պարտ էր ընուլ, և զեղծմունք կարօտք սանձելոյ.

անդրէն զկարգ 450 ամին (Տիտ. Լիւ. Հպատ., Ի). ի բաց առեալ՝ որոց էին որդիք հնգամենից և ի վեր, կամ կալուածք աւելի քան 30,000 դահեկանաց (խե. ժե). ի 585՝ համարակալն Տիբերիոս Սեմպրոնիոս Գրակքոս մերժէ զնոսա ի ցեղից գիւղականաց, ուր մուծեալ էին վերսանին, և ժողովէ զնոսա ի մի ցեղ քաղաքացոց Եսկուլէանոց. (Տիտ. Լիւ. խե. ժե: — Կիկերոն, Վասն հոէպորէի, Ա. Թ. 38): — (639.) «Եմիլեան օրէնք ներուն ազատագրաց վարկս տալ ի քառակ ցեղս քաղաքացոց». Աբրելիոս Վիկտոր, Վասն էրեւելի սրանց, ՀԲ:

1 Վալեր. Մաքսիմ. Զ. Բ. 3: — Վէլլ. Պատերկ. Բ. Դ:

2 «Գիտեմ իսկ Հռոմայեցիս, որոց բգեաշխ կացեալ՝ ապա ձեռն արկին ընթեռնուլ զպատմուեթիւնս նախնեացց և զօրէնս զինուորական արուեստի Յունաց». Ճառ Մարէոսի ի Սալուստիոս, Յոգուրթ, Չե:

քանզի ոչ օրինք ընդդէմ զեղխութեան և բարձաձգութեան, և ոչ հնարք ընդդէմ ազատագրոյ կարիցին բժշկել զվէրս հաւատոյ։ Պէտք էին ապա, որպէս ի ժամանակի Աթեպ- նեայ Ստոլնի (378), ձեռնարկել ի դարմանս ազգիս, տալ առաւել տեղութիւն իշխանութեան, ընդհկել զերաւունս քաղաքացւոյ և ազգայ Խաղիոյ, պակաս առնել զթիւ տուրկայ, այլ և խնդիր տեարց կալուածոյ, բաշխել ժողովրդեան զկա- լուածս յանիրաւի տացեալս, և այսպէս կենդանանորոգ զեր- կրագործութիւն յարուցանել։

Տեսանել տեսանէր ամենայն ոք մտացի զայսոսիկ ազէտս, և ի խնդիր լինէր դարմանոյ։ Թող զայլս, և Կայիս Վելիս՝ բարեկամ Սկիպիոնի Եմիլեանոսի, Թերևս ի տուին իսկ Թա- խանձանաց խորհէր առաջի առնել զկենսաւէտս նորոգու- Թիւնս, այլ երկիւղ խռովութեան կասեցուցանէր զինս ի խորհրդոյն[1]։

Բ· Տիբերիոս Գրակքոս։

(621)։

Տիբերիոս Սեմպրոնիոս Գրակքոս միայն իրախտաւեաց յայն։ Էր նա ծննդեամբ տոհմիկ, ձրիւք բնութեան և պերճախոսու- Թեամբ երևելի[2], որդի Գրակքոսի՝ որոյ երկիցս կացեալ էր բռնաշխ, և Կոռնելեայ դստեր Սկիպիոնի Աֆրիկեցւոյ[3]։ ՅուԹևառասնամեայն՝ Տիբերիոս ընդ զօրավարութեամբ Սկի- պիոնի Եմիլիանոսի որդւոյ մօրեղբօր իւրոյ գինուորեալ էր ի կործանումն Կարթեդոնի, և առաջին ընդ պարիսպն վերել- կեալ[4]։ Գանձապետ ապա Մարկինոսի բռնշխի կացեալ ի Սպանիա, միջնորդ լեալ էր հաշտութեան Նումանտիոյ։ Սի-

1 Պլուտարքոս· ի Տիբերիոս Գրակքոս, Ը։

2 «Տիբերիոս Գրակքոս առհմիս, գեղով և յորդաբուղխ ճարտարախոսութեամբ իշխան»· Փլորոս, Գ· ԺԴ։

3 Վէլլ· Պաաերկ· Բ· Ե։ — Սենեկա Խնամառակը, Յաղագս Մխիթարութեան առ Մարկիա, ԺԶ։

4 Պլուտարքոս· ի Ջոգախնէիոս Ագիոյ և Տ· Գրակքոսէ, Դ։

ոյ բարեաց խրախուսեալ[1], քաջ՝ի բացեայ՝ի շահասլից առաքինութեամբ, գուշակէր զառաջիկայ վտանգս, և տեղեայր զառաջս առնուլ նոցին՝ մինչդեռ էր ժամանակ։ Յաջորդ ամբառնալոյ նորոյ՝ի ռամկապետութիւն, յամին 621, ձեռն էարկ՝ խորհրդով իմաստասէր և երևելի արանց՝՝ի խորհուրդն երկնեալ՝՝ի Սկևռիանէ Եմիլիանոսէ[2], բաժանելոյ յաղթութեան զկալուածս Հասարակաց[3]։ Ժողովուրդն ինքնին բողբէր խնդրէր զայն, և որմունք Հռովմայ ծածկէին հանապազ վերապրօք նոյն բողբոջ[4]։

Տիբերիոս յաւելեալ առ ժողովուրդն, եցոյց Հարստասիրութեամբ զառնեայն պատճառս կործանման հռովմէական զօրութեան, նկարեալ նոքա՝ի պատկերի՝ զիշխանութիւն քաղաքացւոց սիրելոց ընդ Իտալիա առհասարակ, որոց ոչ գոյր և ոչ տեղի հանդուցանելոյ զկոչիծ՝՝ի պատերազմաց մարմինս իւրեանց, յետ հեղելոց զարիւնս իւրեանց՝՝ի վերայ հայրենեաց։ Յաւել և զգործս դժպհիս անհեթեթ բռնակալութեան առնակալաց ոմանց, որոց տարապարտ՝՝ի սպանդ վարեալ էր զարս անմեղս[5]։

Խօսեցաւ ապա զսարկաց արհամարհանօք, ցուցանելով զնոսա խուռնայոյզս, կասկածաւորս, ելուզակողս անօգուտս՝՝ի զինուորութիւն, և վնասակարս քաղաքաժողով ընկերութեան,

1 «Սուրբ և արդար՝՝ի խորհուրդս իւր»։ Վէլլ. Պատերկ. Բ. ԻԳ։— «Ազնուական ինն փառասիրութեամբ վառեալ»։ Ապպիան. Քաղաքական պատերազմունք, Ա. Ա. Զ։

2 Պլուտարքոս՝՝ի Տ. Գրակքոս, Թ։

3 «Ի Թախանձանաց Դիոփանեայ հռետորի և Պլուտոսի իմաստասիրի, և խորհրդով քաղաքացեաց Հռովմայ՝ առաքինութեամբ և համբաւով երևելեաց, ընդ այլոց բազմաց և Կրաստոսի մեծի քրմապետին, Մուկիոսի Սկեւռոլայ մեծահռչակ օրէնսգիտի՝ որ բդեաշխն էր յայնժամ, և Ապպիոսի Կլաւդիոսի աներոյ իւրոյ»։ Պլուտարքոս՝՝ի Տ. Գրակքոս, Թ։

4 Պլուտարքոս՝՝ի Տ. Գրակքոս, Թ։

5 Աբլոս Գելլիոս յիշատակէ երկուս հատուածս յատենաբանութենէ Կ. Գրակքոսի, որ ըստ մերումն կարծեաց՝ Տ. Սեմպրոնիոսի Գրակքոսի են։ Ի միում յանդիման առնէ զմիոյ ուրուք յաղատորդւոց տալ ապանանել զգիւղական ոք, որոյ զուարճանալ էր զնա՝՝ի դնալ նորա դեսպակաւ։ Յերկրորդումն պատմէ զբդեշխի ուրուք տալ բռածեծ առնել զայր հռչակաւոր՝՝ի Տեանոն քաղաքի, զի կնոջ իւրոյ կամելով լոգանալ՝ ապաւէն զբաղանիս քաղաքին էր գտեալ։ (Աւլ. Գել. Ժ. Գ։)

*հաւատեալ զբանն վարդանայ եւ թեամբ նոցա՝ ի Սիկիլիա յա-
ռաջ քան զառկաւ լինչ ժամանակ: Յաւել ապա առաջի առ-
նել օրէնս լինչ Հանդոյս օրինացն Միհինեայ Ստորնի խոսով-
նելոց: Վասաւորութիւն օրինացն էր հանել մանն ի կալուա-
ծոց Հասարակաց գրաւելոց յաղատանուցն յանիրաւի. Թոդլով
իւրաքանչիւր հինգ հարիւր լծվարս, և երիվերիւր և յիսուն
վանն միոյ միոյ յորդոց նոցա, ետուլ նոցա կալուածոցն այս-
ցիկ ի ստացուած յաւիտենական. և հաւելոյն յայնոցանէ լա-
բաժին լինել վիճակաւ ի քաղաքացիս Հռոմայեցւոց և յօժըն-
դակ զօրս Իտալացիս, ժառանգել նոցա զայնս որպէս ի հօրէ,
պատուիրանաւ մի օտարացուցանելոց լինչ յայնցանէ, և փոխա-
նակելով զոյնն լինչ տուրս ասի ասի ի գանձ աշխարհին: Եւ
տեարց կալուածոց առնել հատուցումն ընդ տուժիս մանին
լինչ կալուածոց նոցա: Ա.յս առաջարկ, զոր նախնի մատեան-
դիրք առհասարակ արդարոցի դասին և խոհական, յուզեալ
աղմկեցոյց զաւազորեարն: Մերժեաց զայն ծերակոյտն, և
մինչդեռ ժողովուրդն մերձ էր ընդունել զայն, առաքեան
Ոկտաւիս Կեղինա, կաշառակուրծ՝ ի քաղաքացոյց մեծա-
տանց[1], եղ հակառակ նմին վճիռ անդարձ: Տիբերիոս խոսով-
նեալ յանկարծ յառաջարկութենէ իւրմէ, ձեռն էարկ՝ ի
խորհուրդ յանդուգն և հակառակ օրինաց, ընկենոյց զառաքե-
լեան ի վերայ տեղեաց քաղաքացւոց: Վճռեաց ժո-
ղովն զընկերացումն նորա, և հրատարակեցան օրէնք. ընտրեցան
եռասեռք՝ առ՝ի գլուխ տանելոց զգործն՝ Տիբերիոս, և եղբայր
նորա Կայիոս, և աներ նորա Ապպիոս Կլաւդիոս: Յաւել նա
միւս ևս առաջարկութեամբ տալ սահմանել զի արծաթն՝
Թոդեալ յարքայէն Պերգամոնի ժողովրդեան Հռոմայեցւոյ, վա-
ճեցի՝ ի ծախս պիտոյից՝ մտանելոցն՝ ի ժառանգութիւն բա-
ժանել կալուածոց[2]:*

*Թէպէտ ազատակային օրէնք վճռով գիւղական ցեղից
վայն Հասատատութիւն առնուին[3], սակայն կուսակիցք ժո-
ղովրդեան՝ ի ցնծալից ուրախութեան անդ յարձանակս ա-*

1 Ապպիան. Քաղաքական պատերազմունք, Ա. Ս. 12:
2 Գլուսարք. ՚ի Տ. Գրակքոս, ԺԶ:
3 Ապպիան. Քաղաքական պատերազմունք, Ա. Ս. 13:

ծին զՏիբերիոս, կոչելով զնա ոչ միոյ միայնոյ քաղաքի բարե-
բար, այլ և հայր ժողովրդոց Հռոմայեցւոյ ողջոյն։

Տեսեալք լայնածաւալ կալուածոց, հարեալ՚ի կարիս ցան-
կալի էրս իւրեանց, յոյժ՚ի բացեայ էին՚ի մանակից լինելոյ
յաղթանակին. և ոչ շատացեալ ընդ փոյձ յաւիշատակելոյ զաս-
փոս քուէից՚ի հաստատել օրինացն, այլ խնդրէին ապանա-
նել և զՏիբերիոս[1]։ Զի որպէս ասէ Մաքքիաւէլլի, «Ա՛ռա-
ւել ածաբեն մարդիկ զվարթանութիւն քան զպատիւ, և
յանաւութիւն ազատանոյն Հռոմայեցւոյ՚ի պաշտպանութիւն ըն-
ձեռ իւրեանց՝ ստիպէր զժողովուրդն՚ի հնարս ծայրայեղս»[2]։

Գլխաւորք՚ի հակառակորդաց, տեսեալք ածամած կալուա-
ծոց, որպիսիք ունէին ռամկապետն Ակտաւիոս և Սկի-
պիոն Նասիկա, զամենայն հնարս հնարէին աղարտել զՀռոմեա-
օրէնսդրին օրինացն՝ որ զրկէր զնոսա՚ի մեծութենէն. և Պոմ-
պէոս յառենակալաց ծերակուտին հանդրձակեցաւ յաւուր
միում ասել թէ ազբայրն Պերպաննայ առաքեալ էին առ Տիբե-
րիոս պատուհան ծիրանի և թագ, առհասարակ հանդեր-
ձեալ թագաւորութեան նորա[3]. իսկ Տիբերիոս՚ի պաշտպա-
նութիւն անձին ձեռնարկէր՚ի գործս, զորս իղձք լինէին յան-
կուցանելոյ վայրապար զժողովուրդն քան հասարակաց շահ
օգտի ազդէին նմա։ Երթայր և զայրանայր կուիւն, և բարե-
կամք նորա ստիպէին դառնալ անդրէն՚ի պաշտօն ռամկապե-
տութեան, առ՚ի դառնալ ապաւէն ընդդէմ յարձակմանն
թշնամեաց անմատոյց իշխանութեամբն անվնասելի պաշտպա-
նեալ։ Վասն որոյ կոչեցաւ ժողով. այլ ամբաստանեցուկ Տիբե-
րեայ էր անդ, զի բնակիչք դիւղօրէից արդելեալք՚ի հունձս՝
չկարացին անդամ կոչոյն[4]։

Տիբերեայ կամք էին բարեկարգութիւն միայն, այլ յան-
գէտս յարուցանէր ազմուկ յեղափոխութեան, յորոյ՚ի կա-
տարումն պակասէին նմա կարեւոր բարեմասնութիւնք։ Խառ-
նուրդ իմն նորանշան էր՚ի նմա հեզութեան և յանդգնու-

1 Պլուտարքոս՝ ի Տ. Գրակքոս, ժԲ։
2 Մաքքիաւելլի, ճառս պՏիտոսէ Լիւեայ, Ա. Խ։
3 Պլուտարքոս՝ ի Տ. Գրակքոս, ժԶ։
4 Ափպիան. Քաղաքական պատերազմունք, Ա. Բ. 14։

Թեան. մըրկէր, այլ ոչ վիտէր շանթել։ Շուրջ պատեալ՝ի համախոհից երթայր յատեան քաղաքացւոյ՝ վկայանելով՝ի կամ նոցա քան արիւնթեամբ։ Մինչդեռ ժողովուրդն հաւանեալ՝ի Կապիտոլ ձեռնարկէր՝ի քուէարկութիւն, Փուլիոս Վլակկոս առեղակալ էկն ազդ առնել Տիբերեայ՝ զի Հռոմ յատենի ծերակուտին շուրջ պատեալ՝ի սրիկայ իւրեանց երդնուին՝ի կորուստ նորա։ Ընդ այս գոյժ նորալուր յուզեալ հծծէին որ շուրջ գնովանն կային. և՝ի հարցանել հեռաւորաց զպատճառս շփոթից, Տիբերիոս զձեռս՝ի գլուխ էած առ՝ի տալ նոցա իմանալ զպատահարս վտանգին[1]։ Վախեցեալ յայնժամ Թիբերեայ Հռոմ առ ծերակոյտն, և ջարոյ մասին վարկուցեալ զձեռան ածել՝ի գլուխ, ամբաստան եղեն գնանել զթագաւորութեան Թեկն ածել։ Եւ ծերակոյտն ընդ մեծ քրմապետին Սկիպիոնի Նասիկայ՝ի Կապիտոլ· ցրուեցան զօրքն Տիբերեայ՝ի նմանել, և սպանաւ նա անդ երեքհարիւրով յիւրոցն անտի առ դրան սրբասլայրին։ Ծնդրեցան ամենայն կուսակիցք նորա, և զնոյն պատուհաս կրեցին, ընդ որս և Դիոփանէս հռետոր։

Ընկաւ պաշտպան դատին, այլ դատն կայր կանգուն, և հաստատակաց կամք ստիպէին զծերակոյտն՝ի և հակառակել կատարման ազատակային օրինաց, և փոխանակ Տիբերեայ կացուցանել ոտիկան՝ի լարաբաժին կալուածոց զՊուպլիոս Կրասոս դաշնաւոր Գրակքոսեանց· ողբայր ժողովուրդն զմահ անկեալն, և անէծս դահճացն կարդայր։ Ոչ ընդ երկար վայելեաց՝ի յաղթանակ իւր Սկիպիոն Նասիկա. և առ՝ի փրկել զնա՝ի հաստատակաց վրէժխնդրութենէ՝ առաքեցին զնա Յունիա, և անդ վճարեաց զկեանս իւր թշուառութեամբ։

Էին էին և արդեօք ոչ սակաւք՝ի կատարումն օրինացս։ Նախ զի սահմանք հաստատակաց կալոռածոց չէին քաջ որոշեալ· սակաւուց՝ի վերայ այնոցիկ երաւունք, և առաւելապոյնք յայնցանէ անխմանալիք։ Դարձեալ և գինք կալուածոցն փոխեալ ամենևին. և պարտ էր հատուցանել զտոյժս՝ որոց արօրադրեալ էր զերկիրն անհշակ, կամ՝ի լաւագոյն ածեալ

1 Պլուտարքէ՝ի Տ· Գրակքոս, ժԶ· ԻԲ։

պայման։ Ի վերայ այսոցիկ և բազում ուրեք ՚ի վիճակաց անտի էին բազինք և շէրխիմք, զորս փոխել յայլ տեղս՝ սեղանակատուԹիւն էր առ նախնիս։ Տեառքն հաւատարակաց կաղուռաճոց հասատ արարեալ զԹիկոնս իւրեանց ՚ի ծերակոյտն և յասպետս, ՀարտարուԹեամբ առաջի առնէին զայս աւետարուԹիւնս։ Ոչինչ նուազ և Խոտալցիք բողոքէին ընդդէմ բաժանման կաԹուաճոց, գիտեալ քաջ զի և ինքեանց էր այն օգտակար քան Հռովմայեցւոց։

Մարտինն յուզելոց զայրացուցեալ էր զոգիս, և կուսակից երկաքանչիւր կողմանց պարտ առեալ օրէնս ընդդիմամարտս առաջարկէին. և զի ըստ առաջարկուԹեան Յունիոսի Պէննուսայ յուզէր խնդիր մերժելոյ ՚ի Հռովմայ զեկս առհասարակ (628), առ ՚ի բառնալ զկուսակիցս ժողովրդեան. և է զի ըստ բողոքոյ Մ. Փուլուեայ՝ զկրաւունս քաղաքացեաց ընդհել Խոտալացւոց (629)։ Մերժեցաւ բողոքս այս առիԹ խուռվուԹեանց՝ և ծերակոյտն առ ՚ի հեռացուցանել զՓուլուխոս՝ յղեաց զնա ընդդէմ Սալուվիացւոց՝ արշաւելոց ՚ի Մասիլիա։ Սակայն և ինքեանք դաշնակիցք չհանդուրժեալ ընդ արհամարհուԹիւն իրաւանց իւրեանց՝ բռնուԹեամբ զինուց փորձէին պահանջել զայն, և զաղԹականք լատինք բնակեալք ՚ի Փրեկել կանխեցին յապստամբուԹիւն, այլ նկուն եղեն անդէն, և կոչնակեալ բազմացան ՚ի Հռովմ ԹեւԹն ածել զռամկապետս Խոտալցեայ Գրակքոսի։

Գ. կայիոս Գրակքոս։

(631)։

Քանզի կայիոս Գրակքոս պահէր ՚ի սրտի իւրում՝ երբ առանձ սրբազան՝ զկորնդրս եղբօր իւրոյ, և զկնի խնդրելոյ զվրէժ արեան նորա։ Ցետ հարկանելոյ երկոտասան պետրազունս, զառնայր ՚ի Հռովմ ԹեւԹն ածել զռամկապետ-

տուեան։ Ընդ գալուստ նորա սասանեցաւ աւազդութիւն. և առ՚ի խափանել զազդեցութիւն նորա՝ ամբաստանեաց կուսակից լեալ ինա ապստամբացն՚ի Փրեհել. այլ անուն և եթ նորա զբաղմանց յինքն ձգէր զկարեկցութիւն։ Յաւուր ընտրութեան նորա, բազմութիւն յոյժ քաղաքացւոց հասանէր՚ի Հռոմ յամենայն կողմանց Իտալիոյ, մինչև Ադրիատեան դաշտին անձկանալ խուռնին, և բազմաց զկարիս իւրեանց առ՚ի առնեաց բարձանց[1]։ Ադեալ նորա զնչխանութիւն ռամկապետութեան, առաջարկեաց ժողովրդեան բազում ինչ օրինս՚ի հաստատութիւն. յորոց կէսք էին ուղղակի ընդդէմ թշնամեաց եղեօր իւրոյ[2], և այլք կարեւոր յոյժ՚ի քաղաքավարութիւն, զոր արժան խակ է նշանակել։

Նախ քան զամենայն առաւելոյր զօրութիւն ռամկապետական իշխանութեան՝ անպայման օրինօք վերատին ընտրութեան[3], որ տայր դրոշմ ինն տևողութեան պաշտամանց նորա ինքնին խակ ծանուցանէ։ Երկրորդ՝ զի օրէնք յորեանոյ, որ մերթ՚ի կիր առեալ և մերթ անգործ թողեալն էր[4], յանկուցանէր՚ի նա զբազումս՝ շնորհելով աղքատ քաղաքացւոց անխտիր ամիս յանոյ չափ մի յորեանոյ. վասն որոյ տային կատուցանել շաբաթանս մեծամեծս յորեանոյ[5]։ Ընդ միւս մտանէր և զօրակոչին, նուաղելով ժամանակ զինուորութեան[6], արգելով մի

1 Պլուտարքոս՚ի Կ. Գրակքոս, Ե։

2 Օրէնքս այսոքիկ արգելուին առեներակալաց անկելոց յիշխանութենէ՚ի ձեռն ժողովրդեան՝ չվարել զոր և է պաշտօն, և ընդունելի առնէր զպատասխանատուութիւն զառեներակալէ՝ որոյ առանց դատաստանի տարտղրեալ էր զոք՚ի քաղաքացւոց։ Առաջինն յայտնապէս ընդդէմ էր Ոկտաւիոսի, զոր Տիբերի տուեալ էր ընկենուլ՚ի պաշտամանէն. խակ երկրորդն ընդդէմ Պոպլիեայ, որոյ տարտղրեալ էր՚ի դատաւորութեան իւրում զբարեկամն Տիբերի. (Պլուտարքոս՚ի Կ. Գրակքոս, Ը։)

3 Ափպիան. Քաղաքական պատերազմունք, Ա. Գ. 21։

4 Յամին 336՝ առեներական շինուածապէտք Փուրուիոս Պոպլիկոլ, և Փլամինիոս՝ բաշխեցին ժողովրդեան հարիւր բիւր գրուա սիկիլեան յորենոյ, երկուց փողոյ պրիւ մի»։ Տիտ. Լիւ. ԼԳ. ԽԲ։

5 Ափպիան. Քաղաքական պատերազմունք, Ա. Գ. 21։ — Կիկերո. Տուսկուլեանք, Գ. Ի։

6 Պլուտարքոս՚ի Կ. Գրակքոս, Է։ — Ըստ բանից Պոլիբիոսի, ժամանակ զինուորութեան սահմանէր տասն տարի. զի որպէս ընթերանուածք՚ի Պլուտարքոս, «Կայիոս Գրակքոս առէ ցհամարակալս. Տասն պատերազմունս միայն հրամայեն ինձ օրէնք, խակ ես երկուտասանս մղեցի»։ Պլուտարքոս՚ի Կ. Գրակքոս, Դ։

լուլ հատուցանել՝ ի գանձուց աշխարհին զծախս հանդերձից նոցա, զոր՝ ի ռոճկէ իւրեանց Թողուին ցայնժամ։ Հաստատութիւն նորանոր բաժից յաւել զմուտս գանձուց աշխարհին. և նորանոր գաղթականք[1] հաստատեցան ոչ յԻտալիա միայն, այլ և՝ ի մարզս պետութեան արտաքոյ Ցամաք կղզւոյն[2]։ Ազարակային օրէնք, պատկանաւորք բնակութեան գաղթականացս, առին հաստատութիւն վասն դարձուցանելոյ, որպէս և հաւանեալը, յոտիկանս կատարման նոցա զօրինաւորն իշխանութիւն զնախանեաւքն[3]։ Երկայն և ընդարձակ

1 ԳԱՂԹԱԿԱՆՔ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՔ. — Ե. Շ.ջան։

ԴԵՐՏՈՆԱ (630) *՝ի Լիգուրիա. այժմեան Դորթոնա։*

ՓԱՒՐԱՏԵՐԻԱ (630) *՝ի վոլսքս. (մեծագոյն Լատին). այժմեան Ֆալերագէրրա. գաղթական Դրակքոսեանց։*

ԱԿՈՒԻ ՍԵՔՍՏԻՔ (631). Էզ (բերան Հռոդանոսի). վերնագրաւ կոչեցեալ գաղթական, որ ամրոց միայն էր։

ՄՒՆԵՐՈՒԻԱ (Սկիլակիան) (632), *՝ի Կալաբրիա. այժմ Սքուիլլանէ. գաղթական Դրակքոսեանց։*

ՆԵՊՏՈՒՆԻԱ (Տարենտան) (632), *՝ի Կալաբրիա. այժմ Դարենդոյ. գաղթական Դրակքոսեանց։*

ԿԱՐԹԵԴՈՆ (Յունոնիա) (632), *յԱֆրիկէ. գաղթական Դրակքոսեանց, սկզբնաւորեալ միայն։*

ՆԱՐԲՈՆ ՄԱՐՏԻՈՍ (636), *՝ի Նարբոնեան Գալլիա, այժմ Նարբոն. ձեռնտուութեամբ Դրակքոսեանց։*

ԵՊՈՐԵՏԻԱ (634), *՝ի Կելտս յայնկոյս Պադոսի. այժմ Իվրէա։*

Յայս չորս ժամանակի ոչ ևս լաւին գաղթականս հաստատեր Հռոմ։ Դաշնակիցք և լաւինակոչ քաղաքանին սկսանէին պահանջել զերաւունս քաղաքացւոյ. նմանութիւն խաղոյ ըստ բարբառոյ և ըստ բարուց այնչափ էր զօրացեալ, զի աւելորդ էր այնուհետև՝ թէ արդեօք և վաճառաւոր՝ հաստատել նոր գաղթականս լաւինս։

Գաղթականք Դրակքոսեանց կոչեցան՝ հաստատեալքն՝ ի բնէ՝ ի նպաստս ազգաւանութեան, և ոչ որպէս էրբեմն՝ վասն խորագէտ քաղաքավարութեան։

Կարքեդոն և Նարբոն առաջին գաղթականք էն բնակեալք արտաքոյ Իտալիոյ հակառակ կարծեաց՝ որով ցոյն վայր վարէին։ Մեակ գաղթական՝ զոր մարթ եցէ յառաջ բերել, հանդիպեալ երիցագոյն ժամանակաւ, և ի Իտալացւոցն՝ հիմնեալ՝ ի Սպանիա՝ ի ձեռն Սկիպիոնի յամին 548 վասն հինաւուրց իւրոց զօրականին, որ ըղձայրն կալ մնալ յաշխարհին։ Ընդհեգաւ նմա երաւունք քաղաքացւոյ, այլ ոչ և անուն գաղթականի։ Սոցին սակի էին և բնակիչք Ակուէ Սեքստեայ։

2 Վէլլ. Պատերկ. Բ. 2, ԺԵ։ — Պլուտարքոս՝ ի Կ. Գրակքոս, Ե. Ը։

3 Ապպիան. Քաղաքական պատերազմունք, Ա. 9. 19, և որ գինն։

Հանատարհք ձգեցան ՚ի Հռոմէմայ, կցոլոքելով զմայրաքաղաքն ընդ այլ և այլ գաւառս Իտալիոյ [1]։

Որոշումն գաւառաց սահմանելը ցայնժամ յետ ընտրութեան բղեշխից, որով կարէր ծերակոյան որպէս զրեթէ ըստ իւրումն տեսութեան բաժանել զարձս ատաղութեանց։ Ու՛ ՚ի դերև հանելոյ զՆռնարս փառասիրութեան և զօշաքաղութեան՝ օրինադրեցաւ, զի յառաջ քան զընտրութիւն բղեշխից որոշեսցէ ծերակոյան զպաւառս տեսչութեան նոցա [2]։ Վասն ամբառնալոյ զպատիւ անուան քաղաքացւոյ՝ նորոգեցան Պօրկեան օրէնք, չտալ դատաւճիռ մահու [3] քաղաքացւոյ, բայց միայն քրէական յանցաւորաց, և զայն մի առանց հաւանութեան ժողովրդեան։ Որով դարձեալ հաստատէին օրէնք բողոքելոյ առ ժողովուրդն, որպէս ՚ի սկզբանէ արձանագրեալ էին յօրէնս երկոտասան Տախտակաց։

Ա՛ռաւել ևս Կայիոս Գլակքոս դուն գործեաց ՚ի հաւաստութիւն. առաջարկեաց նա զիրաւունս քաղաքացւոյ շնորհել գաշնաւորաց՝ որոց իրաւունք լատինացւոյ միայն էին, և ընդարձակել զշնորհն առ ամենայն բնակիչս իսկ Իտալիոյ [4]։ Կամէր դարձեալ զի յաշխարհաժողովն օրէն իցէ ամենեցուն անխտիր ձգել զվիճակ նախապատուհրեալս, այսինքն զիրաւունս կանխելոյ ՚ի քուէարկութիւն [5]. զի մեծ էր զօրութիւն պատուոյն, առաջնոց քուէից ազդեցութիւնս իմն դիպ հաստատել. այլ մերժեցան առաջարկութիւնք նորա։ Եւ դարձեալ, նախանձընդդէմ իշխանութեան ծերակուտին՝ եդ ՚ի մտի հանել նմին հակառակ զասպետս, զորոց բարձրացոյց զասպետութիւն պատուոյն նորանոր նախամանութեամբք։ Եւ կարգել օրէնս կալեալ հաւանարակալին վարձել յԱսիա զկալուածս ա-

1 Պլուտարքէ՚ի կ. Գրակքոս, թ։ — Ապպիան. Քաղաք. պատերազմ. Ա. գ. 23։

2 Սալուստ. Յուգուրթ, ժէ։ — Կիկերոն, Ախենաբ. պատասխան Բրեթուիոյ, ը, ժե։ — Ախենաբ. պրաբեայ, իէ։

3 Կիկերոն. Ախենաբ. պհոռիերեայ, գ։

4 Պլուտարքէ ՚ի կ. Գրակքոս, է, ժ։ — Ըստ վէլլ. Պատերկ. (բ. զ.) «կամէր նա տարածանել զիրաւունս զայս և յամենայն ժողովուրդս Իտալիոյ մինչև ցԱլպս»։

5 Սահմանն Սալուստիոս, Առաջին բոլոր առ կեսար, է։ — Տիտ. Լիւ. իզ. իբ։

ռեալս՝ ի բնակչաց քաղաքացն նուաճելոց [1]։ Կալան յայնժամ սասեռք զտուրս և զտաստանորդս գաւառացն այնոցիկ՝ ոյոց անդաստանք լսատանց անկանէին ժողովրդեան Հռովմայ [2]. և որք երբեմն տեառք կալուածոյն էին, եղեն վայելուչք ևեթ բերոց նոցա։ Մանաւանդ ապա կացոյց Կայիոս զտասեռս երանելոց դատաստանի, որ ցայնժամ ծերակուտին միայն էին իրաւունք, որ կաշառակրծութեամբն արհամարհ լեալ էր առաջի ժողովրդեան [3]։ Երեք հարիւր տասեռք յաւելան յայնժամ յերեք հարիւր տեճեռակալս ծերակուտին, և քննիչք ամենայն դատից այնուհետև կացին վեց հարիւր դատաւորք [4]։ Ա. յոս օրինակաւ յինքն յանկոյց զայնոսիկ, որ ցայնժամ Թըշնամիք էին ժողովրդականին, սատարք ձախողելոյ խորհրդոյ Տիբերիոսի Գրակքոսի։

Յաջողութեան ռամկապետին էր սահման. այնչափ էր վստահութիւն ժողովրդեան ի նա, զի նմա Թողուին զերաշխունս ընտրութեան երեքարիւր սասեռոց, յորոց ընտրէին ապա դատաւորք. և յընծայեցուցանել ևեթ նորա՝ կացուցին բղեաշխ զՓաննիոս՝ հանախոհ նորա և կուսակից։ Կամեցեալ ապա ցուցանել զարդարակորով միտս իւր առ դատաստութեան, զարձոյց ի Սպանիա զցորեանն՝ զոր ի բնակչաց անտի առեալ էր ինքնահրաման Փաբիոս փոխանորդ կուսակալն։ Էին ապա ի ժամանակին յայնմիկ ռամկապետք ամենիշխան. յանձն էր նոցա գործ մեծ, վարէին ըստ հաճոյս զնուաս հասարակաց գանձուն, Թելադրէին զընտրութիւն բղեշխիւ, քննէին զգործս կուսակալաց գաւառաց, առաջարկէին զօրէնս, և տային կատարել զայնս։

1 «Սեմպրոնեան օրինօք կարգեցան տուրք կալուածոց՝ որպէս յԱսիա»։ Կիկերոն, Երրորդ դատախազութիւն ընդդէմ Վերրեսի, Զ։ — Տես վասն խնդրոյս ի Մոմսէն, Վաղէի արչանագրութենէ լատինական. էջ 100, 101։

2 Անգամանաք՝ որ ի մարզս՝ կալուածք են ժողովրդեան Հռովմայ. իսկ տեարք նոցա համարին զժառանգութիւն ևեթ նոցա ունել, կամ զվայելս բերոց։ (Կայիոս, Օրինագրութենէ, Բ. է։)

3 Յանդիմանէին ծերակուտին զարդի օրինակս յանցաւորութեան Կոռնելիոսի Կոտտասայ, Սալինատորի, և Մանեայ Ակուիլեայ՝ յաղթողին Ասիոյ։

4 Սակայն Հաստինեսին Տիտոսի Լիւիոսի (Կ) խօսի զվեցհարիւրոց ասպետաց, փոխանակ երից հարիւրոց։ Տես ի Պլինիոս, Բն. պատմ. ԼԳ. է։ — Ասկոնիոս Քուղտիանոս պատբերազմանէ, Ա. Գ. 22։ — Պլուտարքոս. ի Կ. Գրակքոս, է։)

Ա.յս ամենայն գործք Կայիսի՝ յոլովագունից շահաւոր՝ ցածոյց առ ժամանակ մի զեռանդն հակառակութեան, և լռեցոյց։ Ծերակոյան ինքնին հաշտեր՝ի վերին երեսս ընդ Կայիսի Գրակքոսի. այլ՝ի սրտին մերձեալ պահելով զխ՝ յարոյց նմա սատան զայլ ոք՝ի ռամկապետաց, զԼուխս Դրուսոս, յանձն արարեալ նմա հայթայթել հնարս առ՝ի յանկուցանել անդրէն զսիրտ ժողովրդեան՝ի ծերակոյան։ Կայիսի Գրակքոսի կամեցեալ էր դաշնակցայ՝ որոյ էին երեսունք հարիւրք՝ տալ և զերեսուն քաղաքացեաց. Դրուսոս յաւէլ մի և զան հարկանել զնոսա որպէս Հռոմայեցի քաղաքացիս։ Ընդ օրինաց Գրակքոսեանց, ՚ի վերայ կալուածոց բաժանելոյ յաղքատ քաղաքացիս՝ էին բաժք՚ի մուտս գանձուց աշխարհին. Դրուսոս ազատ առնէր զնոսա՚ի բաժից տալոյ[1]։ Եւ առ՚ի հաստատել զպատուականս օրինաց, ընդունել զերդ հարկս ոտանց գաղթականաց, իւրաքանչիւր երից հազարաց քաղաքացոց։ Եւ՚ի վերայ ամենայնի կարեւոր Թուէցաւ հեռացուցանել զԿայիսս Գրակքոս՝ յանձն արարեալ նմա ածել զգաղթականս վեց հազար մարդկան ժողովեալ յամենայն կողմանց Իտալիոյ[2], առ՚ի կանգնել զնոսա՚ի կործանմանէն։

Մինչեւ էր նա՚ի Հռոմ, ներպատրաստեաց զբանն։ Բանզի առաջարկութիւնք Դրուսոսի հաճոյ թուէին մասին ժողովրդեան, և անտի՝ բարեկամին Կայիսի փութեայ ծայրայեղ նախանձայուզութիւն ջատակար լինէր ընդդէմ։ Ոպիմիոս՝ սպարիս Թշնամի Գրակքոսեանց՝ ընծայեցուցանէր զանձն՚ի բռնակալութիւն։ Կայիսի երազել լեալ խորամանկ հնարիցն, հաստեպ տագնապաւ զարձ արար՚ի Հռոմ՚ի խնդիր ռամկապետութեան զայս երկրորդ անգամ; այլ ոչ յաջողեաց նմա. զի Ոպիմիոս բռնաշխ կացեալ՝ արտաքսեաց՚ի Հռոմայ զամենեսեան՝ որ չէին Հռոմայեցիք, առ՚ի հարկանել զահաւոր կողմնակցութիւնն ընդդէմ առաջանոյն, և կրօնական պատճառանօք փորձէր յետս կոչել զվերջին հաստատութեան կալքեդոնական գաղթականին։ Իբրև

1 Պլուտարքոս· ՚ի Կ· Գրակքոս, ԺԲ։
2 Ափպիան· Քաղաքական պատերազմունք, Ա· գ· 24։

Եհաս օր իրացն սահմանելոյ, կանխեցին կողմանք երկաքանչիւր ի կապիտոլ։

Ի բազմաւորանսն Հանդամանս ժամանակին, յաներկիւղ նուիրեին Հասարակաց, եւ ծերակոյտն բղեշխին իշխանութիւն անսուղոյ, յայտ արարեալ զի պարտ էր ջնջել զբռնատէրս, որպէս դաւաճանութիւն յորջորջէր միշտ զախոյեանս ժողովրդեան. և յապահովագոյն յաղթութիւն ժողովեաց զունդս օտարոտիս։ Ոպիմիոս բղեշխն ի գլուխ գնդի միոյ աղեղնաւորաց կրետացւոց՝ խորտակեաց անաշխատ զպուգաղն բազմաճըմփս։ Փախեաւ կայիոս, և Հալածեալ ի հետամտից՝ ջուաւ զիւրովքին։ Ջնոյն անցս կրեաց և Փուբլիոս։ Գլուխ ոամկապետին ածաւ յաղթանակաւ, և երեք Հազար այր արկեալ ի բանտ՝ խեղդամահ եղեն։ Ագարակային օրինք և ազատութիւն Խաղխոյ լռեցին առ ժամանակ մի ի տագնապէ ոյ զծերակոյտեան։

Ա. յս եղև վախճան Գրակքոսեանց. երկոքին ազգ ի սերնդոյ բազուքեան օրինաց աշխարհին եղեն զոհ անձնասիրութեան, զօշաքաղութեան, և կանխակալ կարծեաց՝ որ դեռ ևս բռնակալէին։ Կորեան նոքա, ասէ Ագպիանոս[1], քանզի բռնութիւն ի գործ արկին ի կատարումն գերզեխիկ խորհրդոյն[2]։ Եւ կարի յիրաւունս, զի յաշխարհի՝ ուր ի չորեքարիւր ամաց հետէ կարգք ինչ իրաց օրինս եղեալ մեծարէին, կամ պարտ էր նոցին պատուաւ կալ, և կամ ունել բանակ ընդ ձեռամբ։

Սակայն Գրակքոսեանց ոչ մեռանէր գործն ընդ նոսա. կային մնային ընդ երկար յոլովագոյնք օրինաց նոցա։ Ագարակային օրինք կատարեցան ըստ մասին. աւագորեարն գնեաց ապա վերատին զբաժինս կալուածոց իւրոց կորուսեալս[3]. և ոչ բարձան ի սպառ արգասիք օրինացն այնոցիկ, բայց յետ Հնգետասան ամաց։ Ոպիմիոս բղեշխն գործակից լեալ կառաւարծութեամբն՝ յոր ամբաստանեցաւն Յուգուրթ, և

1 Ագպիան. Քաղաքական պատերազմաց. Ա. Բ. 17։

2 «Ձեմ ես ի բղեշխից, որ յանցանս Համարին գովել որպէս քաջ առնելս զԳրակքոսեանս՝ որոց խորհրդականութիւն, իմաստութիւն և օրինք, ուղղութիւնս մեծամեծս առեալ ածին ի բազում մասունս վարչութեան». Կիկերոն Բ. վան ագարակային օրինաց, Ե։

3 Ագպիան. Քաղաքական պատերազմաց. Ա. Գ. 27։

զորմէ ընդ Հռուս լծին մեզ բանք, զնոյն անցս Սկիպիոնի նա-
սիկայ կրեաց, ըստ օրինակի նորա ընկալեալ վախճան աղետա-
ւոր: Զարմանալի է արանց երկոցունց՝ որ նուաճեցին զաս-
տանդնութիւն՝ զրաւել զկեանս իւրեանց յերկիր օտար, նշա-
ւակ կացեալ առելութեան և արհամարհանաց քաղաքացիոց
իւրեանց: Սակայն յայտնի են պատճառքն. քանզի կամէին
զինուք նուաճել զմիտս, զորս զէնք չմարթին յաղթահարել:
Ի հատարակաց բարեբաստութեան ցնորք ինչ վտանգաւոր
խորհրդոց՝ ի վեր երևեալ, և չև արմատացեալ յաշխարհին,
փոքու իւիք բռնութեամբ փարատին՝ ի բաց. իսկ յորժամ ըն-
կերութիւն քաղաքաժողով տուայտեալ՝ ի ստոյգ և՝ ի կարևոր
պետոյն՝ պահանջեցեալ նորոգութիւն, յաջողութիւն բռնադա-
նութեան ոչ է տեւական. մտածութիւնք ընկճեալք՝ ան-
դրէն՝ ի վեր երևին անդադար, որպէս զվիշապն առասպելեալ
՝ի հարիանել մոյ՝ ի գլխոց նորա՝ հարեալ ընդ մոյ արձա-
կեալ:

Դ· Փառնապազ Յուգուրթայ:

(637):

Սահաւապետութիւն խորհեցեալ՝ ի Հռոմ յաղթահա-
կեր՝ ի վերայ ռամկին. բայց էր արդեօք նորա զօրութիւն ամ-
բառնալոյ առաջի օտարաց զպատիւ Հռովմէական անուան:
Ոչ այսպէս. դէպք՝ որոց տեսարան կացցէ Սփրիկէ, ցուցցեն
զնուաստահոգութիւն արանց՝ որ տենչային կալ՝ ի գլուխ վար-
չութեան աշխարհի, յառաքինութենէ նախնեացն իւրեանց
ուրացեալք:

Յուգուրթ, հարձորդէ Միկիպսայ արքային Նումիդիոյ,
մեծանուն հանդիսացեալ էր՝ ի լեգէոնս Հռովմայեցւոց՝ ի պա-
շարման Նումանտիոյ: Վստահացեալ նորա՝ ի հնարս՝ զոր ունէր
առաջի ժողովրդեան Հռովմայ, եդ՝ ի մտի յինքն վտարել
զժառանգութիւն Միկիպսայ՝ զրկեալ զերկոսին որդիս նորա
հարազատս զՀեմպսալ և զԱդերբալ: Ձերկոցադոյնն՝ ի նոցանէ
տուեալ սպանանել, յաւել՝ ի վերայ դաւաճանութեանն՝ և
կաշառակուրծ առնել զոստիկանս Հռովմայեցիս, որ եկեալ

էին բաժանել զթագաւորութիւնն ընդ նա և ընդ Աւեդբալ, և՝ ի ձեռն նոցա լինէին շոլթել զընտրեալսդ մանն աշխարհին Հնդից։ Եւ ոչ այսչափ միայն, այլ ընդ Հռում տէրսդեսեալ բռնութեամբ զլինուց տէրութեանն ողջոյն, կորոյս և զԱդեբեալ։ Արձակեաց Ծերակոյտն ընդդէմ նորա զբռեաշխին Կալպուրնիոս Բեստիա. այլ և սա կաշառաբեկ լեալ խըրև զոտիկանն, արար ընդ նմա խաղաղութիւն ամօթապարտ։ Բայց անօրէնութեանց այսքանեաց ոչ էր մարթ չգալ՝ ի լոյս։ Ա. Մեմիոս Հարաւ ընդ բռեշխին՝ ի դարձի նորա, և սուիպեաց զՅուգուրթ գալ՝ ի Հռոմ՝ ի պատասխանատուութիւն անձին. և աստ պատճառս առեալ յուշ արար զբռեղոք ժողովրդեան և զանօրէն գնացս ազատանոյն բանիւքս այսոքիւք.

«Յետ սպանութեան Տիբերեայ Գրակքոսի, զորմէ ասէր աւազորեան զթագաւորութեան թեւին ածել, խնամ քննութիւնք եղեն ընդդէմ ժողովրդեանն Հռոմայեցւոյ։ Նոյնպէս և յետ մահուն Կայիոսի Գրակքոսի և Մարկոսի Փուլուեայ, քանիք՝ ի քաղաքացոցդ ոչ խոզխոզեցան՝ ի բանս. և մահունցս այսոցիկ ոչ օրէնք լինէր, այլ նոցին ազնուականացն հաճոյք արարին վախճան։ Այլ հանդերձ թէ հաւատացեալ ժողովրդեան զիւր իրաւունս՝ սկիզբն իցէ բռնակալութեան, և օրինաւոր պրեպի խափանել զայն արեամբ քաղաքացւոց։ Յանգեալ ան հեծէքիք դուք՝ ի սրտի ընդ յափշտակութիւն հասարակաց գանձուն, և վասն թագաւորաց և ժողովրդոց ազատաց հարկաւոր գոլց սակաւուց ոմանց ազնուականաց, յորոց՝ ի ձեռս են գանձք և աւազութիւնք։ Սակայն նոքա զայնպիսի եղերունս կարել գործել անպատուհաս ոչ շատ հանդերձ, յանդգնեցան և զօրէնս և զփառս աշխարհիդ, և զբերութիւնս տհասարակ զաստուածոյնս և զմարդկայինս մատնել թշնամեաց։... Եւ ոյք ոմանք լցեն յարձակեալքդ՝ ի վերայ Հասարակապետութեանս. արք անօրէնք, որոց ձեռք իւրեանց արեամբ շաղախեալ են, որոց չիք չափ ազահութեան. ախրատք և գոռոզք, որք զՀաւատս և զպատիս, զկրօնս և զառաքինութիւն, զպատուականս և զանպատուականս շահաւէտս համարին։ Վէպ՝ ի նոցանէ զկոտորած ոամկապետաց ժողովրդեան, այլք զանիրաւ ամբաստանութիւնս, և բազումք արիւն-

հեղուԹիւնս ՚ի ձեզ՝ պատսպարան անձանց գործեմ։ Եւ որչափ ինչ ոք չարաչար անօրինեալ նոյնչափ առաւել անքոյթ և աներկիւղ գտանի։... Եւ որ յոյս այսուհետև միաբանուԹեան ՚ի միջի կայցէ։ Նոքա տիրապետել խնդրեն, դուք ազատս կեալ. նոքա անիրաւել, դուք խափանել զանիրաւուԹիւն. միով բանիւ՝ ընդ դաշնակիցս ձեր իբրև ընդ Թշնամիս, և ընդ Թշնամիս ձեր իբրև ընդ դաշնակիցս վարիմ» [1]։

Առաջի արար ապա զամենայն եղերունս ՅուդուրԹայ. և իբրև յոտին եկայ սա առնել պատասխանի վասն անձին, Կ. Բաբիոս ռամկապետ՝ ընդ որում համախոհն լեալ էր յաւագային, լռեցոյց զնա։ Ասի ինչ հասանէր նուիրապետին ժողովել զարգասիս անԹիւ կաշառակրծուԹեանցն, դասաՀանեալ ՚ի Հռոմէ զբազմավաստակ հեռատուտ գահուն՝ զՄասինիսայ, առեալ եղև հատարակաց, և ստիպեցաւ դառնալ յԱֆրիկէ։ Վերատին յայնժամ սկիզբն եղև մարտին, և Ալբինոս բղեաշխն երկարաձգէր զայն կռիւս։ Եւ ՚ի կոչելն ՚ի Հռոմէ յաշխարհաժողով, եԹող զգօրավարուԹիւն եղբօր իւրում Ալբոսի փոխանակի կուսակալին. որոյ զօրք հրապուրեալ անդէն ՚ի ՅուդուրԹայ, տեղի եառն պաշարելոյ ՚ի Թշնամեացն, որ խոնարհեցոյց զԱլբս ՚ի հաշտուԹիւն ամօԹալից։ Ծանրացաւսն եղև ընդ այն ժողովուրդն ՚ի Հռոմէ, և առաջարկուԹեամբ մերոյ ՚ի ռամկապետայ՝ եղև յոյզ և խնդիր զամենեցունց, զորոց կասկած համախոհուԹեան էր ընդ ջալոյս ՅուդուրԹայ։ Պատուհասեցան առհասարակ, և որպէս յաՀախ յայսպիսի դէպս պատահէ՝ վրէժխնդրուԹիւն ժողովրդեան անց ըստ սահմանի արդարուԹեան։ Եւ յետ սաստիկ վիՀից՝ կարգեցին զՄեսեղոս զայր պատուական ՚ի կուսակցացն աւագորեցոյն, և յանձն արարին նմա զպատերազմ Ալբինեայ։ ՀաւանուԹիւն հատարակաց՝ բռնադատեալ զծերակոյտն ՚ի պատուհաս կաշառակրծուԹեան՝ յաղԹեաց ընդդէմ չարախտաւալոր կրից. և զայս առաջինն նուագ, ասէ Սալուստիոս, անձամբ ժողովրդին զբռնակալ գոռոզուԹիւն ազատեալ[2]։

1 Սալուստ. ՅոգուրԹ., ԼԱ։

2 Սալուստ. ՅոգուրԹ., Ե։

Ե. *Մարիոս:*

(647):

*Գրակքոսեանք կային, որպէս կարգ բանից է ասել, ա-
խոյեանք քաղաքականք դատի ժողովրդեան. իսկ Մարիոս զօ-
րական գԺնեայ: Ծնունդ անյշան, մարգեալ՚ի բանակի, քա-
ջութեամբ իւրով՚ի բարձր աւագութիւնս հասեալ, բերէր
յանձին զբռտութիւն և զխաւսկրութիւն դասուն՝ որ զգայր
զինկՃուսին իւր: Ջօրաւար երևեալ, այլ գլուխ երկպառակու-
թեան. հակամէտ՚ի բնէ՚ի բարին և յարդարութիւն, ՚ի վերջ
կոյս կենացն լինէր գահասկրութեամբն անգութ և անողորմ[1]:*

*Ի պաշարման Նումանտիոյ՝ նշանաւոր եղեալ՝ ամբարձաւ՚ի
պաշտօն ռամկապետութեան, յորում ցուցաւ անաչառ ամե-
նևին[2]. այս առաջին աստիճան եղև նմա՚ի վերելս բաղդին:
Տեղակալ Մետելլեայ կացեալ՚ի պատերազմին ընդդէմ Յու-
գուրթայ, գոն գործեաց դնել զզօրավարն. և ապա յաջո-
ղեաց նմա ազգախառնել ընդ ազնուական տոհմի, հարսնա-
ցուցեալ ինքեան զՅուլիա Հօրաքոյր Կեսարու: Սզդեալ՚ի բնէ
կամ խելամտեալ հասու լինէր, զի գոյր ընդ պաշտօնակալ
ժողովրդեամբ՝ ժողովուրդ զաւակագործ և գաշնակից՝ որ
ինդրէր՚ի համար տէրութեան մտանել:*

*Մեծանուն քաջութեամբն՚ի զինուորութեան, այլ և
հնարագէտ նենգանօք հասեալ՚ի բռնշխութիւն, յանձն եղև
նմա պատերազմին Նումիդիոյ. և մինչև մեկնեալ՚ի քաղաքէն
ազդու բանիւք առաջի արար ժողովրդեան զոխակալութիւն
և զմիտս ռամկապետութեան ժամանակին.*

*« Պատերազմ ընդ Յուգուրթայ մղել ինձ հրամայեցէք. և
դժպհի եղև այս ազատանուոյն. խորհեցարուք ազգէմ, լաւա-*

1 « Մարիոս չեմոտ ինչ աս՚ի բրտացուցանելոյ զբարս նր » . Պլուտարք, ՚ի Սիլլա ԼԹ: — « Էր (Մարիոս) հանճարեղ, արդարակորով, անպաճոյճ, քաջա-
հմուտ՚ի զինուորութեան, զՃոխութիւն և զդրդանս առհասարակ արհամար-
հեալ, փառաց ևեթ էր ցանկացող » . Սալուստ. Յուգուրթ. ԿԳ: — Մարիոս ծնեալ
էր մերձ ՅԱրբինոն, ՚ի կերէսատէ, որ այժմ կոչի Գաղամարկ (Տուն Մարիոսի):

2 « Մեծարոյ լինէր յաչս ժողովրդեան և ազատանուոյն » . Պլուտարք. ՚ի Մա-
րիոս. Դ:

*գ՞ին էին ալդեօք փոխել զընտրութիւնդ և՝ ի գնդէ ազնուա-
կանաց զոք առ այս գործ արձակել, այլ՝ ի վաղեմի զարմէ և
ձոխ նախնեացն կենդանապրօք, բայց անփորձ զինուց. որ՝ ի
մեծի պատերազմիս տոկալ քան զամենայն՝ որ դեռևիցէ, և
շտապեալ տագնապեալ՝ կալցի զոք՝ ի ժողովրդենէ խորհրդա-
կան գործոց իւրոց։... Ի կշիռ աճէք ալդ ընդ խրոխտ ազա-
տանւոյն՝ զՄարիոս զայր նորահաս։ Որոց միանգամ՝ ի լոյ և
ընթերցանութեամբ գիտակ են նոքա, մասին ինչ ակամաւս
գաւեալ եմ, և մասին գործակից, և որ ինչ նոքա՝ ի գիրս՝ ես՝ ի
զէն և յատակրիզել ուսոյց։... Ա՛րհամարհեն նոքա զիմ ան-
տհմութիւն, և ես զնոցայն ապիկարութիւն. նոքա չիս
զբաղէ, իսկ ես զանարժան գործս նոցա մեզադրեմ։ Ա՛ի է
բնութիւն և հատարակաց ամենեցուն ըստ իմում կարծեաց,
այլ որ քաջագոյնն է, նա է ազնուական։... Եթէ իրաւունս
համարին դոքա անպոռնեըն զիս, անպոռնեացեն և զնախնիս
իւրեանց, որք իբրև զիս յատաքինութենէ ընկալան զազնուա-
կանութիւն։... Ա՛յլ ելոյծ իսկ լատադոյն ստանալ զազնուա-
կանութիւն, քան զժառանգեալն՝ ի նախնեաց եղծանել։

«Չկարեմ ասացէն՝ ի հաստատութիւն վստահութեանդ
առ իս՝ ածել՝ ի մէջ պատկերս և յաղթանակս նախնեաց ի-
մոց. այլ թէ պէտք լինէն, ածից նիզակս, դրօշս, ախոյեանս և
այլ քան զայնցանակս զինուորութեան, և՝ ի վերոյ այսոցիկ և
սակս ընկալեալ՝ ի լանջս։ Սոքա են ինձ պատկերք, սոքա ազ-
նուականութիւն. ոչ ժառանգեալ ոտիկս զնոցայն, այլ քա-
զում Չգամբ և վտանգօք կենաց ինքնին՝ ի բուռն ածեալ»[1]։

Յետ ատենաբանութեանս, յորում յայտնապէս երևի
եռանդն օրինաւոր՝ պահանջելոյ յաղնուապետական վարչու-
թեան զհաւատարմութիւն, զօրաժողով լինէր Մարիոս՝ հակա-
ռակ նախնեացն սովորութեան՝ ի զաւակագործս, քան՝ ի
քաղաքացիս։ Ի հինաւուրց իսկ զօրականէն դիմեցին գուն-
դագունդ զինուորել նմին։ Ձարտարութեամբ բազմաւ՝ ի
գլուխ տարաւ նա զպատերազմ Յուգուրթէ. այլ զինան ինչ
փառացն խորեաց՝ ի նմանել զանձապետս նորա, Պ. Կոռնելիոս

1 Սալլուստ. Յուգուրթ, 2b։

Սիլլա: Սա այս այր՝ որ ընդհուպ եկեալ ի հանդէս՝ էր ծնեալ դեամբ ամենատեսիկ, փառասէր, բուռն, խրոխտ, յանձնապատան և յամենայն ինչ ձեռնհաս: Յաղթութիւնք՝ որ բազում ձգամբք յաջողէին Մարիոսի, ընդառաջել թուէին Սիլլայ: Մարիոս պարտեաց զնիշխանն նուաիդացի, քայց Սիլլա բերեալ յանդգնութեամբ ձերբակալեալ զնա, զրաւ արար մարտին: Այսի սկիզբն էառ՝ ի մէջ փոխանակի բդեշխին և մանկահասակ զանձաւորի նորա նախանձընդդէմ հակառակութիւն, որ փոխեցաւ ապա յոխերիմ առելութիւն: Կային սոքա երկոքեան՝ մին ախոյեան ռամկապետութեան, իսկ միւսն ակնկալութիւն ամենատէրութեան: Վասն որոյ ծերակոյտն կարի յոյժ պանծացուցանէր զՄետելլոս և զՍիլլա, զի մի լինի ժողովրդեան հաւասարել զՄարիոս ընդ առաջին զօրավար[1]: Այլ ոչ յաջեցին դէպք ծանութիւք՝ ի դերև հանել զնոսա զայսոսիկ:

Ի կատարել Մարիոսի զպատերազմին Յուգուրթայ, վասնզ ահաւոր՝ ի վերայ հասանէր Իտալիոյ: Ընդատին՝ ի 641 ամի ծանր զաղթականութիւն բարբարոսաց յատակ խաղայր ընդ Ալպիկէ՝ ի կելս՝ որ յայսկոյս Ալպեաց, ի պարտութիւն իսկ մատնեալ՝ ի Նորիկիա (՝ի Քարնիոլա) զբդեաշխին Պապիրիոս Կարբոն: Սոքա էին Կիմբրացիք, և հասանէին որ՝ ի նոսա բազք, լեզու, աւարառութիւն և պատահարք՝ վկայէին զնոսա ազգա-

կից Կելտաց[2]: Անցեալ սոցա ընդ Հռետիա, հասին՝ ի Հելուետիա, և զկնի իւրեանց ձգեալ զայլ և այլ ժողովուրդս Թափառականս, յաղարտ վարեցին ընդ ամենայն զԿելտաստան. յամին 645՝ մօտ հասեալ՝ ի Պրովինկիա՝ մարզ Հռովմէականս, խնդրէին՝ ի Հասարակապետութենէն երկիր՝ ի բնակութիւն: Եւ՝ ի գալ բդեշխին բանակաւն հանդերձ ընդդէմ նոցա, հաղիւ զնա բարբարոսքն, և մտին՝ ի Պրովինկիա: Անտի և Տիգուրացիք (647)՝ լեռնաբնակք Հելուետիոյ, իջեալ՝ ի լերանց՝ սպանին զբդեաշխն Լ. Կասիոս, և ընդ լծուլ անցուցին զզօրս նորա: Նախաշաւիղ էր այս չարագոյն և աղետից: Քանզի միւս այլ երկոտիւղ արշաւանք Կիմբրաց, և կրկին այլ պարտու-

1 Պլուտարքոս՝ ՚ի Մարիոս, ժ:
2 Պլուտարքոս՝ ՚ի Մարիոս՝ ժթ:

Թիւնք յաւիտեան Հռոդանոսի, յամին 649, Էարկ արհաւիրս սաստիկս. և հասարակաց վարկ սահմանեաց զՄարիոս՝ որպէս զվիայն կարող վրկել զՏալիա. իսկ ազատանէն յայնժամ յերեսաց վտանգին ոչ ևս խորհէր զինչհանուԹենէ[1]: Կարգեցաւ ապա ըստ ոչ օրինաց Մարիոս զայս երկրորդ անգամ բռեաշխ յամին 650, և եկաց զօրավար պատերազմին ընդդէմ Կելտաց:

Զօրավարս այս մեծ պարտպեաց զան ոչ սակաւ՝ի նորոգել զհրահանգս զօրականին, մարզել զնոսա, և ընտելացուցանել ընդ նոր Թշնամիս, որոց տեսիլ ահ արկանէր՝ի նոսա: Վասն որոյ ամի ամի վերատին հաստատէր Մարիոս՝ի բռեշխուԹեան, անհրաժեշտ կարևոր համարեալ վասն պատերազմին՝ի 650 ամէ մինչև 654 հնոլոյս կալ նմա բռեաշխ, խորտակել զնոսա բերայիս՝ որ միաբանեալ էին ընդ Ամբրոնս և ընդ Տևտոնս՝ մերձ յԱլուէ Սեքստիէ (Էզ), անցանել Իտալիա և՝ի սպառ ջախջախել հուպ՝ի վերին զԻմբերացիս ապրեալս՝ի յետին պատերազմէն, և ոլք՝ի Սպանիոյ յերեսաց Կելտիբերաց հաւաքեալքն էին: Կոտորածքս այսոքիկ ահագինք և նախճիրք սպառապուռ ժողովրդոց, հեռացուցին առ ժամանակ մի՝ի սահմանաց ՀասարակապետուԹեան զնուաժս:

Վեցկոյս բռեաշխս կացեալ (654), ազատարարն Հռոմայեցւոց և Իտալիոյ, ազնուական ակնածուԹեամբ ոչ կամեցաւ յաղԹանակել միայնակ առանց իշխանական իւրոյ Կատուլոսի[2], և ոչ բաւ սահմանս իշխանուԹեան իւրոյ հաստատել անցանել՝ընդհեաց գնդապետն երկոցունց, որ՝ի Կամերեայ եկեալ էին յօգնականուԹիւն և առաքինացեալ՝ի պատերազմին, զիրաւունս քաղաքացւոց[3]: Ա.յլ ժանտացոյց նա զիրաս իւր մեզապարտ հնարիւք նենգուԹեան: Քանզի միաբանեալ ընդ խռովայոյզ առաջնորդս հեղձուածոյ ռամկին, գրգռեաց զնոսա՝ի վատանջուԹիւն, և՝ի ձախտել իրացն՝ մատն եղև նոցա: Ի մերժել իշխանաց զօրինաւոր իղձս ժողովրդեան և զիրաւացի խորհուրդս, խռովիչք զէն զօրաւոր՝ի ձեռս առնուն զայն՝ի սպառ

1 Պէտառիք. ՚ի Մարիոս, ԺԱ:
2 Պէտառիք. ՚ի Մարիոս, ԻՀ:
3 Պէտառիք. ՚ի Մարիոս, ԻԹ:

կարեացն իւրեանց և չարաշահութեան. այսպէս յարհամարհել ծերակուտին զամենայն առաջարկութիւն քարեկարգութեան՝ զոր խոստովանէր պատրաստակս և նեցուկ թիւր խորհըրդոց իւրեանց։ Ա. Ապպուլէոս Սատուրնինոս ձեռասուն Մաքսիմոսի և Գալիկիա՝ չարաբարոյք, զառածան յանհնարին չարս։ Սատուրնինոս յարոյց վերատին զինդիր ապարակային օրինացն Գրակքոսեանց, և ծայրայեղ զառանցեալ՝ առաջարկեաց զբաժանումն կալուածոց, զոր՝ի Կիմբրաց գինուք էր գրաւեալ. և զայս խորհուրդ կամէր նա՝ի գլուխ տանել ահարկութեամբ և սպանութեամբք։ Ի շփոթս խռովութեան յոյզ վեաս յընտրութիւն բղեշխից յաւին 655, ցեղք քաղաքացիք՝ի կռիւ ելին ընդ ցեղս գիւղօրէից։ Սատուրնինոս՝ի միջոյ աղմկին առեալ ընդ իւր գունդ մի յանդուգն մարդկան՝ տիեցաց Կապիտոլին և անդ ամրացաւ։ Մարիոսի բղեշխի յանձն եղև ցածուցանել զաղմուկն. սա՝ի սկզբան անդ ձեռնտու լինէր աղմկին, խորհրդով կացեալ անզործ. ապա՝ի տեսանել գի լաւք՝ի քաղաքացւոց առհասարակ՝ի գէն դիմելն և խազմարտքն անօգնական Թողուին՝ի խառնիճաղանճէ խակ քաղաքին, առեալ գունդս ինչ զօրաց՝ հաս կալաւ զեղս Կապիտոլին. և անդէն՝ի սկսանել զյարձակումն, զինքնակէց եղեալ ապստամբք՝ անձնատուր եղեն։ Բայց Մարիոս Թոյլ ետ ժողովեան սուր՝ի վերայ եղեալ կոտորել զնոսա, որպէս Թէ առ՝ի կորուսանել զպաղանիս խռովութեանն ընդ նոսա։

Հանգոյն լինն ապստամբութեանն Սատուրնինոսի էր խնդիր ապատութեան Իտալացւոց։ Այսքէն պահանջք նոցա՝ մերժեալ յետ մահու Կ. Գրակքոսի, և ապա յերկարաձգեալ՝ի մերձենալ Կիմբրաց՝ որք Յանախակղզւոյն առհասարակ սպառնային աղէտս, աստկազոյն յետ խորտակելոյ ժիւոյն՝ի վեր երևէին։ Փոյթ դաշնակցաց յօգնութիւն Իտալիոյ, արութիւն քաջութեան՝ զորոյ զփորձ տուեալ էր նոցա՝ի պատերազմունս Յ.Կուէ Սեքստիոյ և՝ի Վերկելլա, յաւելոյր զվրաւունս նոցա՝ի Հռոմայեցիս գրելոյ։ Բայց Թէպէտ և քաղաքապէտք ունէք խոհականք համարէին դէպ ժամանակ հաձելոյ զինգն Իտալացւոցն, սակայն բազմաթիւ և հզօրագոյն կողմն՝ հակառակ կայր ընդէմն. զի ըստ առաւելուլ նախանձանութեանց

քաղաքացւոց, նոյնպէս և հռովմէական զօրավարութիւն գժուա-
ւանէր հաղորդս այնոցիկ զօտարս առնելոյ: Մ· Լիւիոս Դրու-
սոս (663) ռամկապետ՝ որդի նախնոյն Դրուսոսի՝ ունելով՝ ի
Հռովմ բազմութիւն յոյժ սակից, և պաշտպան հանուրց քա-
ղաքաց իտալացւոց ծանուցեալ, հանդրձակեցաւ ձեռնամուխ
լինել՝ ի կենցաղօգուտն բարեկարգութիւն. այլ հարկ եղև
նմա յաղթել ծանունց ընդդիմութեանց: Զեր ինչ նմա ան-
ծանօթ վաղ իսկ կազմել դաշնակցութիւն ահաւոր ժողովը-
դոց Հարաւայնոյն և արևելեան Իտալիոյ, և առաջնորդաց
նոցա բազում անգամ խորհել՝ ի համաչխարհի վտարան-
ջութիւն: Դրուսոս խորհրդակից նոցա, հանդարտեր զնո-
սա Հարտարութեամբ, և առեալ էր՝ ի նոցանէ խոստումն
զաչացու հլութեան: Աներկբայելի թուէր յաջողութիւն
ռամկապետին. զի յինքն յանկուցեալ էր նորա զժողովուրդն
բաշխիւք յորեցոյ և ընտրհւ կալուածոց. ծերակոյան թուէր
անզօր ամենևին, ահաբեկեալ ընդ սպանութիւն Դրու-
սոսի յառաջ քան զաւուրս ինչ աշխարհահաժոյռ առնի.
զի Իտալիա ողջոյն՝ պարտաւոր եղեալ զծերակոյան ամ
բաստանէր, և անհրաժեշտ՝ ի վերայ կայր այնուհետև պա-
տերազմ:

Յառաջ այսպութիւն Հռովմայեցւոց ջառնելոյ հաղորդս
քաղաքական իրաւանց իւրեանց զՎտալացիս՝ ի բազմաց հետէ
պատճառաք էին աղխաց: Յառաջ քան զամն աւելի քան զեր-
կերիւր՝ պատերազմն Լատինացւոց և վտարանջութիւն բնակ-
չաց Կամպանիոյ, զհետ Կամնեաց պատերազմին, առի շարժե-
ցան: Ի նմին ժամանակի (536) Սպուրիոս Կարուիլիոս առա-
ջարկեաց ծերակուտին ընդունել երկուս ասենակալս յամե-
նայն ժողովրդոց Լատինի յառեան իւրեանց. և յաւելու Տի-
տոս Լիւիոս[1], զի «՝ի մինչեւ ցսոսման շարժեցաւ առեանն, և
մանաւանդ Մանլիոս ձայն բարձեալ գոչէր. Գոյ տակաւին՝ ի
սերնդոց բղեշխին՝ որ երբեմն ապատնայր՝ ի Կապիտոլին խոց-
խոցել ձեռամբ իւրով զՎտարհացին, որ յանդգնեցեալ գալ՝ ի
ժողով վիճակացն»: Սկա հատուածիք հարկ պահանջեալ

1 Տիտ· Լիւ· Խգ· իբ:

լութեան հռոմէական ազնուապետութեան ընդդէմ առնայի՝ որ տանանելն կարէր իւրումն նախնիքեանց: Ա.յլ ի ժամանակէ անտի զօրանայր խորհուրդ հաւատարութեան, և չէր մարթ ապահոս առնել զայն:

Զ. Պատերազմ դաչնակցաց:

(663):

Պատերազմն այս քաղաքական, որ Պատերազմ դաչնակցաց կոչի, եցոյց դարձեալ Թէ քանի՛ անզօր է բռնութիւն զինուց ընդդէմ օրինաւոր ըղձից ազգաց, և ելից զերկիրն առաքեամբ և աւերակօք: Երեսուն ելուզք ընտիր ընտիրք՝ ի քաղաքացւոց անկան ի Հակատամարտի[1]: Եւ Թէպէտ յաղթել յաղթեաց Հռոմ, այլ դատ պարտեցան յաղթականքն. զի յետ պատերազմին՝ որ առ՝ի առանալ ևեթ զկրաւնս քաղաքացւոց մղէր, շնորհեցաւ այն յոլովագունից ազգաց Իտալիոյ: Յետ ոչ բազմաց ամիսոիեաց զայն Սիլլա, և հաւատի քննութեամբ այլ և այլ ազգահամարաց գտանեմք՝ զի յաւուրս Կեսարու[2] եղև ամենեցուն ազատութիւն:

1 Վ*ելլէոս Պատերկուլոս*, Բ. ԻԵ:

Ա՛ Հռոմ. Ազգահամար

2 187 80,000 Առաջին ազգահամար առ Սերուխոսի Տուլլիոյ. (Տիտ. Լիւ. Ա. ԽԴ: — Դիոնեսիոս Ալիկառնացի. Գ. ԻԲ: — Եւտրոպիոս Ա. Է:)

245 130,000 (Պլուտարքոս՝ ի Պոբլիկոլա, ԻԴ:)

278 110,000 (Ամէլի քան). (Դիոն. Ալիկ. Թ. ԻԵ.) — 119,309 ըստ Եւտրոպիոսի. (Ա. ԻԴ.) և 120,000 ըստ Գ. Սիւնկելլոսի, (432, տպ. Պոննն:)

280 130,000 (Սակաւ մի ամէլի քան). (Դիոն. Ալիկ. Թ. ԼՉ:)

Կրկ 286 8,714 (*այսպէս*). (Տիտ. Լիւ. Հոպընթէր, Գ. տպ. Օ. Յան): Ուշադրեա՛ ի 118,000:

295 117,319 (Տիտ. Լիւ. Գ. ԻԴ:) — 117,219 ըստ Հոպընթէրոյ:

331 120,000 (Կանոնք Եւսեբեայ, ոլիմպիադ. ՀԹ, 2: 115,000 ըստ այլոյմ ձեռագրի:) Ա՛յս հաւուռած պտուղս ի հայկական Թարգմանութեան:

365 132,573 (Պլին. Բնակ. պատ. ԼԳ. ԺՉ. տպ. Սիլվիկ:)

415 165,000 (Եւսեբիոս, ոլիմպ. ՃԺ. 1:)

Յաւուրջ քան զօրն պայմանեալ ՚ի վեր յանկարծ եւ շուխտն ապստամբութեանն. քանզի գնահիչք Սկուտլնի զայրացեալ ընդ բռնութիւն կուսակալին Հռովմայեցւոց, սպանին զայրն. եւ զի առեղծ ինչ պատրաստ էր ՚ի վտարանդութիւն, հուպ ընդ հուպ ապստամբեաց աշխարհն առեղծ: Արաջնորդութիւն ՚ի պաշնակից ուղղէր ՚ի ծածուկ զառեղծ. սահմանեալ էին զօրավարք եւ բանակ կազմեալ: Ի նիզակակցու-

Ամ Հռովմ. Ազգահամար

422 } 250,000 (Տիտ. Լիւ. Թ. ժԹ:) — Գ. Սիննկելլա (ժամանակագրա-
435 } ըէն, 525) *ունի զթիւ համարոյ* 260,000:

460 262,321 (Տիտ. Լիւ. ժ. Խ:) — Հոպընպէրտ, 272,320: — Եւսեբիա (ոլիմպիադ. ՃՒԱ. 4.) *պրեալ՝* 270,000. *Հայկական Թարգմանութիւն*, 220,000:

465 272,000 (Տիտ. Լիւ. Հոպընպ. ժԱ:)

474 287,222 (Տիտ. Լիւ. Հոպընպ. ժԳ:)

479 292,334 (Եւտրոպիա Բ. ժ:) — 271,234 *ըստ* Տիտոսի Լիւիոսի (Հոպընպ. ժԴ:)

489 382,234 (Տիտ. Լիւ. Հոպընպ. ժԶ:) *Ուղղագրեա ՚ի* 282,234:

502 297,797 (Տիտ. Լիւ. Հոպընպ. ժԸ:)

507 241,212 (Տիտ. Լիւ. Հոպընպ. ժԹ:)

513 260,000 (Եւսեբիա, ոլիմպ. ՃԼԴ. 4:)

534 270,213 (Տիտ. Լիւ. Հոպընպ. Ի:)

546 137,108 (Տիտ. Լիւ. Հոպընպ. ԻԷ ԼԶ:) — *Զայս մեծ նուաղութիւն վերակացուք ընծայեն ոմանք պատրուաստութեանցն և կոտորածոց յաւուրցին ՚ի հինգ ամս երկրորդի կարքեդոնական պատերազմի. ուր Տիտոս Լիւիոս սակաւ ինչ փոփոխութիւն դնէ յառեղն. «Որ ինչ էրն յաւուրցդոյն քան զպատերազմին, սակաւ ինչ նուազեալ». որով կարծելի է պրչին ախալել ՚ի Թիւս ազգահամարին, և ընթեռնուլի* 237,108:

550 214,000 (Տիտ. Լիւ. ԻԹ. Լե. — Արիանոպէր ամենաթողով փոխիլ Կապիտոլեայ): — *Համարակալաց, որպէս քաջայայտ գաւանի այս ասացեալ, սորածեալ էր վերհանութիւն նուրեանց և ՚ի զօրս, դարձեալ բազումք ՚ի դաշնակցաց և ՚ի Լատինաց գային ունել բնակութիւն ՚ի Հռովմ, և մնանէին յազգահամարն:*

561 143,704 (Տիտ. Լիւ. Լե. Թ.) *Իցէ ասա միւս այլ վերակաց անկատարեալ, զոր պարտ է ընթեռնուլ* 243,704: *Դարձեալ մարթ է կարծել զի Թերևս համարակալք չգնէին յազգահամար Ժողովրդեան զղօրականն ՚ի պատերազմունս:*

566 258,318 (Տիտ. Լիւ. ԼՐ. ԼԶ.) Հոպընպ. 258,310: *Բազումք ՚ի դաշնակցաց յանուն Լատինաց մնանէին յազգահամարն:*

576 288,294 (Տիտ. Լիւ. Հոպընպ. ԽԱ.) *Թուք նախորդի և յաջորդի*

Թեան ազգաց ընդդէմ Հռովմայ երևելիք էին Մարսիկք և Սաբինացիք. նոքա շարժեալ առաւել յազգային խրոխտ քաջութ քան յոխտակալութենէ. իսկ տոքա ընդ հակառակն, յոխտիւիմ առելութենէ ընդդէմ Հռովմայեցւոց՝ ի ժամանակաց անտի երկարատև պատերազմաց՝ ի վերայ ազատութեան իւրեանց, նորոգելոց ապա առ արշաւանօք Աննիբալայ: Բաժանեցին երկոքին տոքա յիւրեանս զգերագոյն հրամանատարու-

Ա՛ Հռովմ. Ազգահամար

ազգահամարոյն ընդունելի առնեն մեզ զայդ հաշիւ, թէպէտ և՝ ի ձեռնագիր մատեանս 258,294 է միայն:

581 269,015 (Տիտ. Լիւ. Խր. ժ.) Հոպընպ. 267,231: Պատճառք նուազութեան ազգահամարին 581 ամին՝ ըստ Տիտ. Լիւ. էր հրամայէր վարտաւին Պոստումիոսի բդեշխի, որ հրամայէր դաշնակցաց ամենացւոց երթալ՝ ի քաղաք Ծննգեան իւրեանց՝ ի մատանել յազգահամարն. նոյնպէս ըստ հրովարտակի բդեշխին Կ. Կլաւդիոսի. այնպէս զի ոչ ոք՝ ի դաշնակցաց մատանէր յազգահամար՝ ի Հռովմ: (Տիտ. Լիւ. Խբ. ժ:)

586 312,805 (Տիտ. Լիւ. Հոպընպ. Խե:)

591 337,022 (Տիտ. Լիւ. Հոպընպ. Խզ:)

595 328,316 (Տիտ. Լիւ. Հոպընպ. Խէ:)

600 324,000 (Տիտ. Լիւ. Հոպընպ. Խը:)

608 334,000 (Եւսեբիոս, ոլիմպ. ձՃը:)

613 327,442 (Տիտ. Լիւ. Հոպընպ. Ծդ:)

618 317,933 (Տիտ. Լիւ. Հոպընպ. Ծզ:)

623 318,823 (Տիտ. Լիւ. Հոպընպ. Ծթ:)

629 394,726 (Տիտ. Լիւ. Հոպընպ. կ:)

639 394,336 (Տիտ. Լիւ. Հոպընպ. կգ:)

667 463,000 (Եւսեբիոս, ոլիմպ. ձՀդ:)

684 900,000 (Տիտ. Լիւ. Հոպընպ. ՂԸ:) — Դիոն կասիոս (Խգ. իե.) *պատմէ զի ազգահամար լեալ հրամանաւ կեսարու յետ քաղաքական պատերազմաց, նուաղեալ յոյժ ցուցանէր զթիւ ժողովրդեան (δεινὴ ὀλιγανδρωπία): Ապպիանոս (Բ. 102) ասէ թէ թիւս այս հասանէր նոքա՝ ի միս անցելոց ազգահամարին: Ըստ Պլուտարքեայ (կեսար, ԽԵ.) ՝ի 320,000 քաղաքացոյ մանուց՝ ի համար յառաջ քան զպատերազմն՝ ոչինչ աւելի գտանէր կեսար քան զ150,000: Ընդհանուր տոքա զկանկ բաշխելոց ցորենոյն ընդ ցուցակի ազգահամարին. տես՝ ի Սուէտոնիոս, կեսար, ԽԱ:*

Յայտնապէս ասէ Օգոստոս՝ ընդ ամս 684 և 726 ոչ լեալ ազգահամար, «յետ միւսոյ ամին և քառասնիերորդի». (Ինքնակալութեան Ա-ինէիոյ, տախտակ 2.) Թիւս քաղաքացւոց գտանելոց՝ ի ժամանակին էր 4,063,000, որչափ ինչ գոգցես կարծել կեսար՝ ի վեր հանել-

Թիւն։ Սակայն կարգ վարչութեան դաշնակցաց Թուէր օրինակ լինի Հռովմէականին. դիտաւորութիւն նորոյ դաշնակցութեան էր փոխանակել զԻտալիա ընդ Հռովմայ, և փոխանակ տիրապետութեան քաղաքի միոյ, կացուցանել՛ի տիրապետութիւն զամգ մի մեծ։ Կարգեցաւ առեան աւազորերոյ, կամ մանաւանդ ժողով ազգային, յորում իւրաքանչիւր քաղաքի էին նուիրակք. ընտրեցան և գրեաշխք երկու Կ. Պոմպեդիոս Սիլան՝ Մարսիկ ազգաւ, և Կ. Պապիոս Մուտիլոս՝ Սամնիտացի։ Եւ սահմանեցաւ՛ի մայրաքաղաք Կոտինիոն՝ փոխեալ զանուն քաղաքին Իտալիա կամ՛ի Վխտելիա, որ՛ի բարբառ Ոսկաց, նշանակէր[1]։

Ըստ պակասէին դաշնակցաց ոչ զօրաւորք հմուտք և ոչ զօրական ընտիր և պատերազմասէրք. յերկաքանչիւր բանակ՝ նոյն զէնք էին և նոյն հրահանգք։ Սկիզբն եղև պատերազմին՛ի վախճան 663 ամին, և մէջր երկուստեք զայրագին, տարաժեալ՛ի միջերկրայս Իտալիոյ, ՛ի հիւսիսոյ՛ի հարաւ՝՛ի փերմիանէ ցԳրումենտան Լուկանիոյ, և յարևելից յարևմուտս՝՛ի կաննեայ մինչև ցԼիրիս։ Բազում նախձիրք՛ի պատերազմունս անդ գործեցան, կալով մարտին երկուստեք անպարտելի. և այնքան աստի և անտի պակասեցին զօրք, մինչև հարկ լինել զազատագիրս իսկ և զտարուկս զինուորելոյ։

Ամ Հռովմ. Ազգահամար

(Փոա, Մոպէնոպոան, Զեռնագիր Դ։ — Հոպֆֆ պոպմ. ատլ. Միւլլէր, գ. 606։)

726 4,063,000 *կաւարած քաւութեան՛ի ձեռն Օգոստեայ՛ի վեցերորդաւմ բռնշխութեանն, իշխանակից իւր ունելով զՄ. Ագրիպպա.* (Յիլոպոլոան Անիւրիոյ։)

746 4,233,000 *երկրորդ քաւութիւն՛ի ձեռն Օգոստեայ, ինքնին միայնակ։* (Յիլոպոլոան Անիւրիոյ։)

767 4,037,000 *ըստ Յիլոպոլոանի Անիւրիոյ. 9,300,000 ըստ Եւսեբեայ Յամանաքրոնեան. երորդ վախճան քաւութեան՛ի ձեռն Օգոստեայ և Տիբ. Կեսարու՝ իւրոյ իշխանակցի, ՛ի հիւպատոսին Սէքս. Պոմպոսի և Սէքս. Ապուլէոսի։*

1 Կրկին բառքս այսոքիկ գտանին՛ի դրամս իտալականս հատեալս՛ի ժամանակի պատերազմացս։ Դնեալ մի՛ի կոյսերական Մատենադարանին բերէ զդրոշմս ITALIA՛ի տառս լատինացիս, և՛ի միւս կողմն զանուն Պապիոսի Մուտիլոսի՛ի տառս ոսկացիս. ϽΙΤΛΙΑ·Ͻ, Gai PAAPI G(ai fili)

Ի սկզբան անդ յաղթութիւնս մեծամեծս կալան պաշնակիցք։ Մարիոսի փառք եղեն զյառաջադիմութիւն նոցա խափանել, թէպէտ չէին նմա այլ զօրք՝ բայց միացորդք գնդապետին ձախողութեամբ զինուց զեղծեալք։ Օգնէր բախտն և աստղ նոր Սիլլայ, յաղթող գնա ուր և երևէր կացուցանելով. այլ ժանտացոյց նա զիւառս արութեանցն իւրոց սոսկալի անպիտութեամբք ընդդէմ Սամնիացւոց, ընդ որս թուէր պատերազմել՝ ոչ առ՝ի նուաճել գնոսա, այլ առ՝ի բնաջինջ առնել։ Մարդասիրատոյն կամ մանաւանդ խորագիտոյն գտաւ ծերակոյտն՝ ինքնակամ ընդհարել զիրաւունս քաղաքին Հռոմայ ամենայն հաւատարիմ դաշնակցաց Հասարակապետութեան, խոստանալով և այնոցիկ՝ որ զէնընկէցք լինէին։ Նոյն օրինակ վարեցաւ և ընդ Վեղս՝ որ յայսկոյս Պադոսի. իսկ դրացեաց նոցա բնակչաց՝ ի ձախակողմն Պադոսի՝ ընդհեաց զիրաւունս Լատինի։ Ի խոհական հնարից աստի երկպառակեցան դաշնակիցք[1], և քաղաքն՝ ի նոցանէ հպատակեցին։ Սամնիացիք գրեթէ միայն ոչ գային՝ ի պատերազմելոյ՝ ի լերինս իւրեանց յուսահատ մըղեզնութեամբ։ Սակայն և ազատութեան խոտից էին սահմանք, պահելով Հռոմայեցւոց զաւառելութիւն յաշխարհաժողովս։ Յերեսուն և՝ ի հինգ վաղեմի ցեղս յաւելան ութ այլ յորս գրեցան խոտացիք առհասարակ. և զի քուեայք ըստ ցեղից հաշուէին և ոչ ըստ գլխոց, յայտ է թէ ազդեցութիւնն նորոց քաղաքացւոց թուէր և ոչ ինչ[2]։

Եօրուրիացւոց չէր ինչ մանր՝ ի դաշնակցաց պատերազմին. ազատանին հաւատարիմ էր Հռոմայ, և ժողովուրդն կայր նոքա՝ ի տրկութեան։ Օրինք որ տային խոտացւոց զիրաւունս Հռոմայեցւոց, և յանուն օրինադրին Լ. Յուլեայ Կեսարու բռնչխի՝ կոչէին Յուլեան օրինք, ածին յՆեորուրիա յեղափոխութիւն մեծ, և ցնծութեամբ եղեն ընդունելի։

Մինչդեռ՝ ի հրդեհ պատերազմաց վառէր Խոտիա, Մինդատ Ջ՝ Թագաւոր Պոնտոսի պատեհ առեալ կամէր տկարութեամբ Հասարակապետութեանն մեծանալ։ Յամին 664 յար-

1 Հատոյան ընդ այս առաջարկ Եօրուրացիք. (Ապպիան. Քաղաքական պատերազմունք. Ա. ե. 49։)

2 Վիճ. Պատեր. Բ. Ի։ — Ապպ. Քաղաքական պատերազմունք, Ա. ե. 49։

Ձակեցաւ ՚ի Բեւթանիա և ՚ի Կապպադովկիա, և մերժեաց անտի զԹագաւորս դաշնակից Հռովմայ։ Ի նմին ժամանակի բանագնաց լինէր և ընդ Սամիսացիս, խոստացեալ նոցա արծաթ և զօրական։ Ա.յեպիսի էր յայնժամ առեալութիւն օտար ազգաց ընդդէմ Հռովմայեցւոց, զի՚ի ձայն հրամանին Միհրդատայ յարեաւ Ասիա, և ՚ի միում ևեթ աւուր ութ բիւր Հռովմայեցիք խողխողեցան[1]։ Վաղ իսկ վախճան լինէր դաշնակցացդ պատերազմի, և բաց ՚ի Սամիսացւոց՝ Խալիս ողջոյն հպատակեալ պարտապ տայր ծերակուտին ուշ ունել և գաւառաց հեռաւորաց։

Է· Միտ։

(666)։

Սիլլա փոխանակ վաստակոց իւրոց կարգեալ էդեսացին, նմա յանձն եղև խաղալ զնալ պատուհասել զՄիհրդատ։ Եւ մինչ զեռ պատրաստէր նա, Պ· Սուլպիկիոս ռամկապետ այր ա՜նուանի, այլ անխիղճ, միաբանեաց ընդ իւր հզօր կուսակցութիւն։ Էին նորա և բարեմասնութիւնք և թերութիւնք բազմաց այնր ժամանակի որերոյն, երևելոց ՚ի հանդիսի երկպառակութեանց[2]։ Էանց նա ՚ի գլուխ վեցհարիւրոց առաքեալ Հռովմայեցւոց՝ զորս ծերակուտականս[3] կոչէր, ՚ի վաճառ Էհան հրապարակաւ վիրաւորն քաղաքացւոց՝ առանձ զայն ազատագրաց և օտարաց, և ընդունէր զդինան ՚ի վերայ սեղանոց ՚ի հրապարակամիջի կանդնելոց անդ[4]։ Էառ զվէմ ոսկի ևս զայն զոր բառնալոյ զպատրանս Յուլեան օրինաց, որ կեղծուպատուէր ընտրիւ զրկէր վաճառիս հիրաւանց իսկ՝ զորս թուէրն ընտրել, և փոխանակ կալոյ նոցա յուր նոր ցեղս, զրեաց զնոսա յերեսան և ՚ի հինգ վաղեմի ցեղսն։ Ոչ առանց բուռն

1 Տես գծանօթութիւն 1, յէջ 209։

2 «Պ· Սուլպիկիոս ուղղութեամբ մտացն կամէր յինքն ձգել զվարկ ժողովրդեան· պերճախօսութիւն նորա, ժիր և գործօն կեանք, հանճար և բազդ երևելի առնէին զնա»· Վ.էլլ· Պատերկ· Բ· ԺՀ։

3 Պլուտարքոս· ՚ի Մարիոս, ԼԶ։

4 Պլուտարքոս· ՚ի Սիլլա, ԺԱ։

հակառակութեանց եղև այս ընդունելի. բայց Սուլպիկիոս օգնականք էին նոր քաղաքացիք առհասարակ, և կուսակիցք ռամկին և Մարիոս: Սղմուկ խռովութեան յաղթեաց կալաւ զընտրութիւնն. և Սիլլա փախստեամբ գերծեալ՝ի սպառնալեաց մահու՝ի տուն Մարիոսի, շուտ տագնապաւ մեկներ՝ի Հռովմայ: Սուլպիկիոս տիրեալ քաղաքին, յորոց ազդեցութեանց շարժէրն՝ յայտ արար, տալով յանձնել ծեռնադրն Մարիոսի զԱխիա և զզօրավարութիւն պատերազմին ընդդէմ Միհրդատայ: Բայց բանակն Սիլլայ էր՝ի Կամպանիա, և՝ի մտի եդեալ էր նորա կացուցանել զպահանջմունսն իւր: Մինչդեռ կուսակիցք Մարիոսի բռնանային՝ի Հռովմ ընդդէմ հակառակակողմանն, զօրականք Սիլլայ առաստանայինն՝ի սերտս իւրեանց վասն լեգէոնից ոսկի զօրավարին իւրեանց զրկելոյ զինքեանս՝ի Հոն աւարաց Ասիոյ, և երդնուին առնուլ զվրէժ նորա: Ինց՝ի գլուխ նոցա Սիլլա, և՝ի Նոլայ քաղաքէ խաղաց՝ի Հռովմ ընդ իշխանակցի իւրում Պոմպէի Հռուփոսի՝ որ այն ինչ հասեալ դուսմարեալ էր ընդ նմա: Բազմք՝ի գլխաւորք սպայից չիշխէին զՀետ նորա գնալ, այնչափ մեծ էր տակաւին ահարկութիւն յաւերժական քաղաքին[1]: Վայրապար գային ընդ առաջ նորա հրեշտակութիւնք. խաղայր նա յառաջ և եկեալ մտանէր՝ի փողոցս Հռովմայ: Զէմ ունէին բնակիչք, ընդդէմ նորա ելին և Մարիոս և Սուլպիկիոս, այլ յանդուգն զօրութեամբ յաղթանակեաց Սիլլա: Ա.յս առաջին անգամ դէպ լինէր մտանել զօրավարի յաղթութեամբ՝ի Հռովմ, և զկնի՝ի ձեռին՝ի քուրն առնուլ զիշխանութիւն:

Լուեցոյց Սիլլա զաղմուկն, արգել զաւարհարութիւն, կոչեաց առեան ժողովրդեան, արդարացոյց զանձն. և վասն ապահովելոյ զառաւելութիւն իւրոյ կողման՝ի հասարակաց խորհուրդս, ետ հաստատել վերստին զառաջին կարգն՝ առնլոյ նախ զհաւանութիւն ծերակուտին յառաջարկել օրէնս: Փոխանակ առեղի ցեղից՝ կարգեցաւ առեան հարիւրեակաց, ոչինչ աւելի թողեալ առաջնոց քան զընտրութիւն՝ի ձեռանէ ա-

1 Ապպիան. Քաղաքական պատերազմներ, Ա. է. 57:

*աւգուստեանց[1]։ Եւ եւս Սիլլա ապանանել զՍուլպիկիոս, խա-
փանեալ զօրէնս նորա. և զին Լհետս զկնոյ Մարիոսի, ոչ
զնուաս ածեալ զն իւր իսկ տակաւ մի յաւազջ գտեալ էր ապա-
ւէն՝ի տան ստախին։ Տարագիր արար զաւազջնորդս կուսակցաց
ռամկին. այլ բազմաց՝ի նոցանէ միւնչև մտեալ նորա՝ի Հռոմ՝
նոյս տուեալ էր անտի։ Նոյնպէս և Մարիոս հանդերձ որդւովն
ընդ բազմադիմ վտանգս անցեալ՝ գերծեալ էր յԱֆրիկէ։ Ոչ
բազում ինչ արեանց Թոյլն լեալ հեղմունք՝ի խուռնութեան
անդ, և բաց՝ի Սուլպիկեայ՝ էյիշեն վիպագիրք ժամանակին
զայլ ոք յերեսելոց՝ի մահ վարեալ։ Ոչ ընդ երկար տեւեաց
նախկինն այն ահարկութիւն Սիլլայ. զի անդէն՝ի վեր երևե-
ցան եպերանք գործոց նորա՝ի ծերակուտին և՝ի ժողովրդեան,
ոյք յամենայն դէպս ցուցանէին զգժիւանակութիւն իւրեանց։
Հանդերձեալ էր Սիլլա երթալ անդրէն զօրաւարել բանակին
Ասիոյ. իսկ զօրավարութիւն Իտալիոյ վիճակեալ էր Պոմպէի։
Ս. յԼ սպանութիւն տուա՝ի զօրաց իւրոց եւս՝ի միտ առնուլ
հանդերձելոյ իշխանապետին՝ քանի՛ անկայուն էր իշխանու-
թիւն նորա. և ջանացաւ լուծցուցանել զհակաւակութիւնս
յարուցեալս ընդդէմ իւր, ընտանեօքն յաւեան ընտրութեան
գործիցէ ընդ ընտրեցեալս՝ զվ. Կոռնելիոս Սիննա, որ հռուակից
վիպեալն էր Մարիոսի, բայց միայն պահանջեալ՝ի նմանէ ա-
ռաջի աւետեցուն երդումն հաւատարմութեան։ Բայց Սիննա
յետ ընտրութեանն՝ի գործիս, չեկաց՝ի խոստմանն.
իսկ միւսն գործէաշխ կն. Ոհտաւիանոս չունէր ոչ զօրութիւն և
ոչ ժրութիւն բաւական՝ առ՝ի կշիռ պահելոյ զապրեցութիւն
իշխանակցին։

Սիլլա գահելոյ բազմեալ յաւեան ընտրութեան գործ-
խոյ՝ ազատարեաց տպա՝ի Կապուա յաւազջնորդութիւն բա-
նակին՝ի Յունաստան ընդդէմ զօրավարացն Մհհրդատայ։ Իսկ
Սիննա կամէր լստ օրինաց Սուլպիկեայ հաւատարել զնոր քա-
ղաքացիս ընդ աւազջոց[2], և խնդրէր զդարձ տարագրելոցն,

1 Ապպիան. Քաղաքական պատերազմունք, Ա. է. 59։ — «Ժողովուրդ Հռոմայ առ
իշխանապետութեամբ Լուկիոսի Սիլլայ, ժողովով հարեւրեկաց զաղատութիւն
քաղաքաց ընկալաւ». Կիկերոն, վասն պան խոյ. Լ։

2 «Տուեալ ժողովրդոյ Իտալիոյ զներաւունս հռոմայեցւոյ՝ զաւուցին զնոսա
յուրն ցեղս, զի մի՛ի զօրութենէ և՝ի բազմութենէ նորոց քաղաքացեաց հասցէ

*ձայն տալով ստրկայ՝ ի գէն։ Փութացան ընդդէմ նորա ծեր-
բակոյն և ռամկապետք՝ տալ վճիռ անկանելոյ՝ ի բռնեչխու-
թեանէն։ «Պատուհաս արժանաւոր, ասէ Պաւերկուրաս, այլ
օրինակ բազմավտանգ»[1]։ Մերժեալ՝ ի Հռովմայ դիմեաց նա
՝ի Նոլա ապաստանել առ Սամնիացիս, որ դեռ ևս կային՝ ի
գէնս։ Անտի բանագնաց լեալ ընդ Հռովմէական բանակին՝ որ
դէմ կայր խլրտելոյ Սամնիացւոյ, և առաքեալ զբօրականին
յօժարութիւն, եկն եամուտ՝ ի բանակ անդր՝ խնդրելով օգնու-
թիւն ընդդէմ թշնամեաց իւրոց։ Ատենաբանութիւնք նորա
և խոստմունք հրապուրեցին զգեդէոնս, որոց զօրավար գնա՝ ի
ձայն բարբառոյ կարդացեալ՝ չոգան զկնի նորա միամտու-
թեամբ։ Յայնմ վայրի տեղեակալք Մարեայ՝ Կ. Աերտոլիոս և
Կն. Պապիրիոս Կարբոն, տարապրեալք՝ ի Սիլլայ, ընթանային
ընդ հիւսիսային Իտալիա զօրաժողով լինել. և ծերունին Մա-
րիոս նաւէր յետուրիա, և ընդ հասանել նորա անդր՝ յան-
դիր ապստամբութիւն։ Ջի Նտրուրացիք զամենայն չարեաց իւ-
րեանց պատճառս զծերակուտիւն արկեալ, համարէին վրէժ-
խնդիր իւրեանց առաքեալ՝ ի դէպ զտոխն ազատանոյն և Հո-
խից, և զինուորեալ ընդ նմաւ՝ գնային ինն յաւար և՝ ի կողո-
պուտ հռովմէական քաղաքին։*

*Ս. դուրս հասեալ կայր պատերազմին. ոչ ևս աստանօր
Իտալացիք միայն, այլ և Հռովմայեցիք՝ ի միասին ընդ նոսա խա-
ղային ընդդէմ Հռովմայ։ Ի հիւսիսոյ Մարիոս, Աերտոլիոս և
Կարբոն յաւուրջ գային բազմաձեռն զօրօք. Կիննա տիրեալ
Կամպանիոյ՝ մտանէր՝ ի Լատիոն, միւսդէս բանակն Սամնիա-
ցւոց ընդ այլ կողմն գրոհ տային անդր։ Ընդդէմ հնոքեցունց
բանակացն ի միայն ունէր ծերակոյտն հանել՝ ի Հռոմ, զան-
դառակ կն. Պոմպէի Մտրաբոնի. որ Թէսալիա և էր զօրագլուխ
Հարուած, բայց և խորամանկ քաղաքագէտ՝ որ յաղթիւ անդ
աին ունէր ամբաստանել յիշխանութիւն։ Ասկնեալ նորա՝ ի
վերա պատուոյ առաջնոցն, և զի ի՛ր շնորհիւն այնուհետև լեցին նոքա բռնագոյնք
քան զշնորհաւորս։ Այլ կիննա ըստ օրինակին Մարիոսի և Սուլպիկեայ՝ խոս-
տացաւ ընդ առաջին ցեղս խառնել զնոսա. և ըստ խոստմանն նորա գային խառնէին
նոքա յամենայն քաղաքաց Իտալիոյ»։ Վէլլ. Պաաերկ. Բ. Ի։

[1] Վէլլ. Պաաերկ. Բ. Ի։

զօրանիւտ ձմերոցացն որ յԱպուլիա, զայր հասանէր շուտափու տու պարտաւոք Հռոմէացւոյ՝ վաճառել զվաստակս իւր ծերակուտին կամ լինել ընդ Մարիոսի և ընդ կուսակցաց նորա ի բաւական։ Այլ գիտաց վաղ՝ զի հզօրագոյնք էին յոյժ վտանգեալքն, մինչև յոչինչ դրել զզօրութիւն նորա. և զօրք իւր զինուորեալք ի Պիկենտիկ և յերկրէն Մարսից՝ չկամէին վանն ծերակուտին ընդ վաղեմի իւրեանց դաշնաւորս պատերազմել. և Թողուին իսկ արդեօք զզօրավար իւրեանց, եթէ չէր գնացս խափանեալ արուեստից և արագամտութեան ոմանց նորա՝ որ էր յայնժամ քաջանամենի, և որ եղեւն ապա Մեծն Պոմպէոս։ Զի ի յափշտակել լեգէոնից յաւուր միում զզօշս իւրեանց և ի սպառնալ գնալոյ խմբովքին ի քաց, պատանին Պոմպէոս արկեալ զանձն առ դրան բանակին, ձայն տայր զօրսն կոխել զնովքն՝ եթէ գնալ կամիցին[1]։ Իսկ Պոմպէոս Ստրաբոն ի նախատանաց անխուսեալն արկածիցն զերծաւ կանխահաս մահուամբ, ըստ ումանց ըմբռնեալ ի ժանտ ախտէ, իսկ ըստ այլոց պատմագրաց՝ ի բանակամիջի անդ շանթահարեալ։ Իսկ բանակն մնացեալ անզօրավար՝ էանց ի կողմն Թշնամւոյն. ոչ ևս գոյին պաշտպանք ծերակուտին, ապստամբէր խառնաղանձն. և Հռոմ եթաց զզրունս առաջի Կիննայ և Մարիոսի։

Յաղթականացն անպատուեցին չէր երբէք լսել լեալ առ Հռոմայեցիս. այնպիսի չարալուկ տանջանօք սպանանէին որ միանգամ յաշխուատեսականաց անտի ի ձեռս նոցա անկանէր։ Ստուկք յազատութիւն ածեալ ի Կիննայ՝ ընդ բազում յաւուրս յամենայն եղերունս անկղնտանային։ Սերտորիոս միայն ի զէնս ելեալ կուսակցութեան ոմանց, ոչ ի սպառ մերկեալ յօրինաց արդարութեան, պատուհասած առնէր զթշուառականն՝ կոտորեալ ի նոցանէ արս իբր չորս հազարս[2]։

Մարիոս և Կիննա զէն ի ձեռին յաւաջ խաղալով ընդ դէմ Հռոմայեցւոց, հրամարակէին զի խորհուրդ իւրեանց էր ապահովել Իտալացւոց լուծն զերծաւնս Հռոմայեցւոց, բա-

1 Պլուտարքոս· ի Պոմպէոս, գ։
2 Պլուտարքոս· ի Սերտորիոս, ե։

դեպչես 668 ամին անձամբ զանձինս յայտ արարեալ: Զկր մարթ հակառակել մեծի զօրութեան նոցա. նոր քաղաքացիք տային նոցա յօգնականութիւն լեգէոնս երեսուն, այս ինքն հնգետասան բիւր մարդիկ[1]: Յետ երեքտասան աւուրց իշխանութեան իւրոյ յանկարծանահ լինէր Մարիոս, և կոխին առնէին կորոյս զմի միայն այր՝ որոյ համբաւ և յետ մահուն պատուարան եղև նմա: Դէպք ինչ՝ ի պատճառս յուզարկաւորութեան նորա պատահեալ՝ տան մեզ՝ ի միտ առնուլ զբարս զայնր դարու մարդկան, և զհանգամանս խառնութեան ժամանակին: Հարկ էր ածել նուէր ինչ անասնոյ՝ ի վերայ զեզմանին, և սահմանեցաւ՝ ի զոհ քրմապետն Կ. Մուկիոս Սկեւոլա՝ մի՝ ի մեծարոյ ծերունեաց ազատանոյն: Այծաւ նա հանդիսիւ՝ ի խարոյկ յաղթողին Կիմբրաց. եհար զինա նուագողն, այլ անվարժ ձեռինն միսեալ զերկաթ՝ ի փոքս նուա, չեզև նմա մահաբեր: Վասն որոյ՝ ի դառնալ իւրում՝ ի կեանս՝ ի դատ կոչեցաւ յանդիման Փլաւիոսի Փիմբրիայ ռամկապետի, փոխանակ զի չէր նորա ազատօրէն զհարուածն ընկալեալ[2]:

Մինչդեռ Հռոմ և Իտալիա ողջոյն ընկալեալ կայր յարհաւրս անիշխանութեան, հալածէր Սիլլա՝ ի Յունաստանէ զզօրավարս Միհրդատայ Զ, և կանգնէր կրկին յաղթութիւնս՝ ի Քեռոնէա (668), և մերձ Յոլքոմենոն (669): Եւ մինչ էր նա՝ ի Բէոտիա, Վալերիոս Փլակկոս առաքեալ՝ ի Կիննայ՝ ի տեղի նորա՝ իջանէր ընդ ծով՝ ի Յունաստան, և մտեալ՝ ի Թեսաղիա՝ անտի անցանէր ՅԱխիա: Զհետ եղև նմա Սիլլա, աճապարեալ խօսել՝ ի խաղաղութիւն ընդ ազգային Պոնտոսի՝ առ՝ ի կարող լինելոյ զօրօք իւրովք անցանել Յիտալիա: Դէպք՝ ի բարի յաջողեցին նմա. զի Միհրդատայ պէտս ունելով դար-

1 «Կիննա վառահանայր՝ ի բազմութիւն նորոց քաղաքացեաց, յորոց էին նորա երեք հարիւր վաշտք՝ բաժանեալ յերեսուն լեգէոնս: Եւ առ՝ ի տալ համաձայնութիւն զկարևորն վարկ և իշխանութիւն, դարձոյց զերկուսին Մարիոսեանս և զայլ վառապետսն». Վելլ. Պատերկ. Բ. ի:

2 Զի էր՝ ի էրոյ ընկալեալ էր զնշտոսածն. Այս ձև բանիցս Թուխ իմն՝ ի կուռոց սուսերամարտիկաց առեալ, որոց սկիզբն՝ ի մարդապետից անուն եղև, որ առնէին՝ ի յուզարկաւորութիւնս: — Տես Կիկերոն, ի պաշպան. Սէքս. Հոսկիոսէ. ժՐ. ԼՀ: — Վալ. Մաքս. Թ. ժԱ. 2:

մեռ ասանելոյ ժեռաւոցն կրեցոյ, և սեռանելով միս այլ թշնա-
մի՝ ի վերայ իւր Հասեալ զիոխամարտել Վալերիոսի Փլակիոսի
զգաղատաժամեան Փլաւիոս Փիլբրիոս, որոյ ապանեալ զզօրսաւար
իւր՝ կացեալ էր ի գլուխ բանակին Ասիոյ և ի բուռն առեալ
զՎերգամոն, խոնարհեցաւ ի պայմանս առաջարկեալս ի Սիլ-
լայ, և դարձոյց առնս զամենայն գաւառս՝ որոց տիրեալ էր,
յաւելեալ նաև և արծաթ։ Խաղաց յայնժամ Սիլլա ի Վի-
զիա ընդդէմ Փիմբրիայ, որոյ ի մերձենալ յաղթողին Բեր-
նեայ՝ ոչ ևս կարացեալ Հրամայել զօրաց իւրոց, և տեսեալ
զնոսա Թօթափեալս յինքեան՝ զի երթեալ յարկէն յոտս իւր,
և սպառնացեալ խակ յերեսաց Սիլլայ, չոգաւ զինուիլն՝ այն
որ սպանողն լեալ էր Փլակիոսի։ Ոչ ևս գոյր խափան խորհր-
դոյն Սիլլայ ի վերայ Իտալիոյ, և պատրաստեր Հանել ընդ
կառավին Թշնամեաց իւրոց որ ի Հռոմ՝ զառաջնոյն նոցին
յաղթանակ։ Յառապատել անդ զինաւ իւր՝ գրեաց առ ծե-
րակոյտն զզրաւ պատերազմին Ասիոյ և զգործ իւր ի մօտոյ։ Եւ
յաւելոյր. Յաջողեաց ինձ ի գլուխ երից առից նուաճել ի
Հռոմէականն պետութիւն զՅունաստան, զՄակեդոնիա,
զՅունիա և զԱսիա, ամիրսիել զՄիհրդատ ի սահմանս իւր, և
առաջին ի Հռոմայեցւոյս՝ ընդունել հրեշտակութիւն յաղթող-
էն Պարթեւաց[1]։ Բազում ունէր ապա զանխրատութեանց գոր-
ծելոց ընդդէմ իւրոցն, և ընդդէմ կինջ իւրոյ՝ որոյ դիմեալն
էր ընդ բազմութեան փախստէից ապաւինել ի բանակ իւր։
Եւ առանց ընդունայն սպառնալեաց՝ յայտ առնէր զխորհուրդ
իւր Հաստատելոյ զինու զօրութեամբ զբարեկարգութիւն,
խոստանալով ոչ ևս ձեռնարկել ի խորհուրդն մեծ ազատու-
թեան Իտալիոյ. և աւարտեր զբանն, լուաց քաղաքացւոց՝
ղօղոց և Հնոց՝ մի երկնչել յերեսաց իւրոյ։

Նամականէն այն ընդունելի լեալ ծերակուտին՝ ևս քան
զևս զայրացոյց զյաջորդս Մարիոսի, և Հեղեղք արեանց վերըս-
տին ընթանային։ Կիննա, զայս ջորդորդ անգամ տուեալ կար-
գել զինքն բռնեալս, և կին. Պատերիոս կարգեն իշխանակից
նորա, շուտ տագնապաւ ժողովեալ զուզազ մեծ՝ պատրաս-

1 Պլուտարքէ. ի Սիլլա, Զ։
2 Ափպիան. Քաղաքական պատերազմունք, Ա. Թ. 77։

*ակին զգէմ ունել բան կարի զմերկին՝ որ ՚ի վերայ կայր։ Ար-
հեցաւ Պինեա՝ զի պարտ էր անցանել Սիլլայ ընդ երկայնու-
թիւն Աղրիականին առ ՚ի վաճել յԻտալիա ՚ի հիւսիսոյ, զա-
մարեաց բանակ ծանր մօտ յԱնկոնա, ըմբռնել զինա ՚ի չուն՝
բաղխեալ ընդ նմա յԵպիրոս կամ՚ի Լիւրիկէ։ Բայց զօրա-
կանն բան մեծի մասին իտալացի, և աներկեայ ընդ խոստումն
Սիլլայ, և արհամարհոտ իւրոց զօրավարին՝ հեատէր համար-
ձակ չանցանել ընդ ծով։ Կամեցաւ Պինեա պատուհասակոծ
առնել զառաջնորդս հեատելոցն, այլ ՚ի խոռվ ապստամբու-
թեանն սպանաւ ինքն։ Կարբոն, որ գայրն յաջորդել նմա ՚ի
զօրավարութեան, երկուցեալ զի նոյն անցք և ընդ ինքն ան-
ցանիցեն, խոստացաւ ապստամբաց չմեկնել Իտալիոյ։*

*Էջ Սիլլա ՚ի Բրունդուսիոն յամին 671՝ քառասուն հազար
զօրօք, կալեալ ՚ի հնոլից լերկանէ, ՚ի վեց հազար այրուձիոյ,
և յօդնական գնդից Պելտոնեան և Մարեդոնից. իսկ նաւա-
տոլին էին հազար վեց հարիւր նաւք[1]։ Զօ արար ընդ Ար-
պեան Հանուպարն, և եհաս ՚ի Կամպանիա, ի անդամ տալ
Հակատամարտ ոչինչ հեռի ՚ի Կանուսիոնէ[2]։ Բերէր ընդ իւր
զգանձս առեալս ՚ի Միհրդատայ, և զկապուտ մերենից Յունաս-
տանի, որ առաւել քան զձարտարութիւն նորա ՚ի պատերազմ
հզօրք էին ՚ի հրապուրել։ Ընդ հասանելն Իտալիա՝ ժողովեաց
զաքսորեալս, և զամենեսեան՝ որ գարշէին յանհեթեթ և յան-
ողորմ վարչութենէն յաջորդացն Մարիոսի։ Դարձեալ և մե-
ծամեծ ազգատոհմից ապրելոց ՚ի կոտորածէն մնայորդք՝ ինք-
նակամ գիմէին ՚ի բանակ նորա իբր յանքոյթ ապաստան։ Մ.
Լիկինիոս Կրասոս եկաց մի ՚ի քաջաց տեղակալաց նորա. և
նա. Պոմպէոս որդի Ստրաբոնի, զօրավար քան և երկոց ամաց,
կազմեալ բանակ ՚ի Պիկենան, եհար գերիս գունդս թշնա-
մեաց, և եկն մատուցանել ՚ի տապս Սիլլայ զառաջ իւր՝ վաղ
իսկ ահաւոր։*

*Ի սկիզբն 672 ամին եմուտ Սիլլա ՚ի Հռոմ. ապատ-
ստաւ խորտակեաց մերձ ՚ի Սիպնիա զլեգէոնս կրասերոյն Մա-
րիոսի՝ որ ՚ի չնորհս անուանն հասեալ էր ՚ի բռնշխութիւն։*

1 Ապպիան. Քաղաքական պատերազմաց, Ա. Թ. 79։
2 Ապպիան. Քաղաքական պատերազմաց, Ա. Ժ. 95։

ՅաղթուԹեամբս այսու Հնազանդեցուցանէր Սիլլա զՀռոմի· այլ Կարբոն՝ի Հիւսիսոյ յայսկոյս Ալպեայց և Լետրուրիա, ԹէՀ պէտ բազում անգամ՝ի պատուԹիւն մատնեալ առաջի Պոմպէի և այլոց տեղակալաց Սիլլայ, սակայն յամառեալ չտայր նոցա տեղի. և Սամնիացիք՝ի հարուց ամենայն զօրուԹեամբ իւրեանց պատրաստէին յօգնուԹիւն Պրենեստա քաղաքի՝ որ պաշարեալն էր՝ի Սիլլայ, և պաշտպանէր՝ի կրտսերոյն Մարիոսէ: Զօրավարն Սամնիացւոց Պոնտիոս Տելեսինոս ոչ զօրեալ հալածել զպաշարողս, երԹևեր՝ի մեր խորհուրդ յանդուգն առ յուսահատուԹեան՝ զրոհ տալ ամենայն զօրօքն իւրովք՝ի վերայ Հռոմայ, և յանկարծ՝ի բուռն առեալ զքաղաքն աւար հարկանել: Գոչէր նա առ զօրականն. «Ի հուր դառեցուք զմեզ զոյց՝, զի ցորչափ ոչՋնջեալ կան անդ՝ չէք ազատուԹիւն Իտալիոյ»:

Զոր արարեալ դիՀելախառն երագընԹաց՝ խոյս ետ Տելեսինոս՝ի զգուշուԹենէ ասելն. այլ Սամնիացիք վաստակաբեկ հասեալ՝ի պատնէշս Հռոմայ՝ չկարացին յարձակել՝ի քաղաքն. և Սիլլա պարապ առեալ եկն եՀաս ընտրելովք լեգէոնաւքն զօրուն յօգնուԹիւն քաղաքին: Եւ լինէր պատերազմ բազմադիմի առ դրունս անդ յաւուր կալանդացն Նոյեմբերի՝ի 672 ամին. և երկարէր գործ դառնուԹեանն մինչև գիՀերամէջս: Ականակ Թև Հռոմէական բանակին Հարեալ՝՝ի փախուստ դարձաւ, ոչինչ օգնելով Ձգանցն Սիլլայ՝՝ի ժողովել զնոսա. անկաւ Տելեսինոս՝՝ի խառնուրդս մարտին, և կրաստոս՝ որ յաջումն զօրավարէր, կանգնեաց յաղթուԹիւն մեծ: Սամնիացիք ապրեալք՝՝ի կատարածէն՝՝ի ծագել առաւօտուն զէնքն կէց լեալ անձնատուր եղեն[2]:

Սմմի և աւելի Հանց միտել Իտալիա առնոյր՝՝ի սպառ խաղաղուԹիւն, Հարկ լեալ Հնարս անողորմս և մահուամբ՝՝ի կէր

1 Վէլլ. Պաուէր. Բ. ԻԷ: — Սամնիացիք այսու օրինակաւ յայտ առնէին զՀռոմայեցիս, ակնարկելով՝՝ի գայլն մատակ անուցիչ հիմնադրի քաղաքին: Ի վաղեմի ուրիք սամնիական դրամի գտանի ցուլ նշանակ Իտալիոյ՝ յերկիր կործանելով զգայլ. և բերէ դրամն զանուն Կ. Պապիոսի Մուտիլոսի մակդրեալ Եմպերատոր, որ՝՝ի բարբառ Ոսկաց նշանակէ Ինքնակալ, և է լատինականն Իմբէրատոր:

2 «Ընդ վախճան եղև երկուց ազէտաւոր պատերազմաց. իտալականին՝ որ կոչի և դաշնաւորաց պատերազմ, և քաղաքականին, որք տևեցին զամս տասն. պա-

արկանել, և հրատարակել Սիլլայ զահապին յայտարարու-
Թիւնն ոչ ումեք՝ ի Թշնամեացն ներելոյ: Ի Պրենեստա ամե-
նայն առեղակալք համախոհք Մարիոսի՝ խողխողեցան, և քնա-
կիչք քաղաքին եղեն ձարակ սրոյ: Իսկ քնակիչք Նորբայ՝ մատ-
նութեամբ նուաձեալ, Թաղեցան ինքնակամ ընդ փլատակօք
քաղաքի իւրեանց առ՝ ի չլինելոյ անձնատուր:

Սիլլա՝ որպէս առ՝ ի հասանել յիշխանութիւն զամենայն
ինչ փոխանակեաւ էր, զանկարգութիւն զօրուն[1], զաւարհա-
րութիւն քաղաքաց, զկոտորած քնակչաց, և զընակչինք քար-
ձուին Թշնամեաց իւրոց, նոյնպէս և առ՝ ի կալ յիշխանու-
Թեանն փոխանակեաց զամենայն: Ի նուաւակատիս զարձի իւ-
րոյ՝ ի ծերակոյտն ետ խողխողել առ մեհենին Բելլոնայ
զերեք հազար Սամնիացիս՝ որ անձնատուր լեալ էին[2]: Բա-
զումք՝ ի քնակչաց Նոլայի զրկեցան յիրաւանց քաղաքա-
ցւոյ, որ ընդհեաներն էր նոցա յետ դաշնաւորաց պատերազ-
մին[3]: Հնարեցաւ նա նոր ինն պատուհաս զտարապրու-
Թիւն[4]. և տարապիր արար՝ ի Հռովմայ ևեթ չորեք հազար
եօթն հարիւր քաղաքացիս, յորս էին ինննաւն առեղակալք,
հնգետասան բռեաշխք, և երկու հազար եօթն հարիւր առ-
պետք[5]: Ծանրանայր ձեռն նորա մանաւանդ՝ ի վերայ Սամ-
կաս առնելով հնգետասան բիւր մարդիկ, յորս քան և չորս կացեալ էին բռ-
դեաշխք, եօթն կուսակալք, վաթսուն շինուածոպետք, և իրր երկերիւր առե-
նակալք ծերակուտին»· Եւտրոպիոս, Ե· 2:

1 «Տածէր Սիլլա զանկարգութիւնս զայսոսիկ՝ շռայլելով պարգեւս զօրաց ի-
րոյ անչափ, առ՝ ի հրապուրել և յինքն ձգել զզօրս հակառակակողման»· Պլու-
տարքոս՝ ի Սիլլա, ժ2:

2 Դիոն Կասսիոս (ԼԴ, ձԼ2· յօդ· 1·) հասուցանէ զթիւս զայս յոլի հազար, Ապպիանոս յերիք հազար· Վալերիոս (Թ· Բ· 1·) յիշատակէ երիս լեգէոնս:

3 «Յոլովք՝ ի դաշնաւորաց և՝ ի Լատինացւոց զրկեցան՝ ի ձեռն միոյ ուրուք՝ յի-
րաւանց քաղաքացւոյ, որ՝ ի վարձ բազմադիմի և արժանաւոր վաստակոց
տուեալ էր նոցա»· Աթենաբանոսիւն Լնպիդոսէ՝ ի Սալուստ· Հատուածք, Ա· 5: —
«Ժողովուրդն Հռովմայ խորհրդով իշխանապետին Սիլլայ յաւենի հարիւրեակաց
եբարձ, որպէս տեսաք, զերաւունս քաղաքացւոյ զյոգունց ազատ քաղաքաց, և
զրկեաց զնոսա՝ ի կալուածոց իւրեանց... : Բայց խափանումն այն իրաւանց քա-
ղաքացւոյ ոչ ինչ յերկարեաց քան զբռնակալութիւն զինուց իշխանապետին»:
Կիկերոն, Ճառ վասն տան իւրոյ, Լ:

4 Ապպիան· Քաղափան պատերազմաց, Ա· ԺԱ· 95: — Վ. Մաք· Պատերկ· Բ· ԻՀ:

5 Ապպիան· Քաղափան պատերազմաց, Ա· ԺԱ· 95:

նիայեաց, երկուցեալ յարձակմանէ նոցա, զոր գրեթէ եւ զնացիսն արար[1]: Թէպէտ յաղթանակ նորա էր՝ ի նուաճումն ոմանց, սակայն և զաղատութիւն ազնուագունից և երեւելեաց տոհմից ընդ գերիս ունէր. և անլուր ինն անզգամութեամբ նոյնպէս և ընդ տիկնայս գնայր[2]: Յուցակք տարագրութեան կախեալ՝ ի հրապարակի և գրեալ՝ ի նոսա անուանք այնոցիկ՝ զորոց էր կասկած, ահ արկանէին յաղգատոհմն. և ակնարկել նեթ յայնս ծաղրս կամ արտատուօք՝ յերեսն հանելոյ[3]: Մ. Պլեւտրիոս սպանաւ վասն նուաղելոյ խրոյ՝ ի սեսիլ տանջանաց Մ. Մարիոսի կուսակալի[4]: Ի վեր հանել զտարագրելոց վայրս Թագատի, և մատնել գնոսա՝ ի մահ, էր վարձուց արժանի. և խրատանչելուր ումեք՝ ի մատնչաց մինչև երկոտասան հազար դրամակշիռ (իբր 11,640 ֆր.)՝ ի գանձուց աշխարհին եղանէր վարձ[5]: Իսկ օգնել նոցա, կամ ունել բարեացութիւն և զոր և է կցորդութիւն ընդ Թշնամիս Սիլլայ՝ յանցանք էին գլխատարտութեան: Ընդ բովանդակ խռովեալ՝ ոչ միանգամ գլխատուեալ էին Մարիոսի և Կարբոնի և Նորբանոսի՝ սպանան կամ տարագրեցան, և ինչք նոցա աճան՝ ի վաճառ հասարակաց: Ի սերունդս իսկ նոցա ձգէր պատուհասն, և անժառանգէին որդիք նոցա և թոռունք՝ ի տացուածոց հարց իւրեանց տարագրելոց, և մերժէին՝ ի պաշտամանց հասարակաց[6]: Զայս ամենայն անապատոյն վրէժխնդրութեան գործս հասատաւէին Վալերեան օրինք հրատարակեալք յամին 672, որ կացուցեալ իշխանապետս զՍիլլա, տային նմա իշխանութիւն անսահման: Բայց Թէպէտ և Սիլլա անձին պահեալ էր գիշխանութիւն գերագոյն, սակայն թողոյր ամի ամի կարգել զբռնաւորս, որպէս ապա և առ ինքնակալօք կատարէր:

Հաստատեցաւ խաղաղութիւն՝ ի Հռոմ, և հրատարակեցաւ նոր սահմանադրութիւն՝ որ գարձուցանէր ազատանուագն

1 Սարաքան· Ե· Դ· 207:
2 Դիոն Կասսիոս· ԼԴ· ձԼ:· յօգ· Ա:
3 Դիոն Կասսիոս ԼԴ· ձԼ:
4 Վալեր· Մաքս· Թ· Ե· 1:
5 Պլուտարքոս՝ ի կոչն Ո-փիլեցի, ԻԱ:
6 Ափպիան· Քաղաք· պատերազմ· Ա· ԺԱ· 96:— Տիտ· Լիւ· Հատընտիր, ՁԹ:

զնա իշխանութիւն։ Կարծէր իշխանապետան Թէ կարգ հիմ նեալ բռնութեամբ՝ ի լռին էր անձնական օգտի՝ կարկին յեր կարակեաց լինել քան զինքն։ Դիւրագոյն է փոխուԹիւն առնել օրինաց, քան խափանել զընԹացս հակառակ կարծեաց։

Եղծան Գրակքոսեանց օրէնք. ծերակոյտն վերատին ընկալաւ անհատնական իշխանութիւն դատելոյ. գաղԹականն Կապուայ՝ զոր բնակեցուցեալ էր ռամկին՝ աւերեալ, յաւելաւ երկիրն՝ ի գանձ հասարակաց։ Սիլլա անձին գրաւեաց զգլխաւոր իշխանութիւն համարակալի, զոր խափանեալն էր, կարզելոյ զառեղակալս ծերակուտին. և եմոյծ յաւեան անդր՝ փոխանակ սպանելոյն յաւուրս առանին պատերազմաց՝ երեք հարիւր ասպետս։ Օրէնս կարգեալ քրմաց՝ զարձոյց՝ ի նոսա զընտրուԹիւն քրմապետաց և զկառավարչապետի, բարձեալ զայն յաւեանէ ժողովրդեան։ Ամիսեաց զինչանութիւն ռամկապետացն՝ Թողուլ՝ ի նոսա զկրաւնս ևԹ պաշտպանուԹեան[1], և արգել նոցա մի ԹԷկն աճել զբարձրագոյն առնակալուԹեանց[2]։ Համարէր հեռացուցանել այսուիկ զպահապետս՝ ի պաշտամանեն՝ որոյ ոչ ևս էր ինչ զօրուԹիւն։

Ընկալաւ՝ ի Հռոմէ բիւր մի նորոց քաղաքացւոց՝ որ կոչեցան Կոռնելեանք[3], ընտրեալ՝ ի տարւոյ անտի՝ որոյ տեառքն տարագրեալ էին. նոյնօրինակ ազատագրուԹիւնք եղեն և Իտալիա։ Սիլլա զրեԹէ բնաջինջ արարեալ էր զնշտրուցեալս և զՄարիեսեան. արդ զերկիր նոցա առնայր՝ բնակեցոյց անդրէն, ժառանգս առացուածոց ասէսցուածոյ իւրոց կացուցեալ զզօրականն, զոր ամենք՝ ի պատմագրաց հատուցանեն՝ ի ԹԷու անհնարին՝ ի քառասուն և եօԹն լեգէոնս[4], և՝ ի հինաւուրց զօրացն արար քան և երիս զաղԹականս զինուորականս յերկրէ անդ, զոր առեալ էր յապստամբ քաղաքաց անտի[5]։

1 Ապպիան. Ա. ԺԱ. 100։ — Վէլլ. Պաաերկ. Բ. ԼԱ։ — ՊաշտպանուԹիւն, որով պաշտպանէր ռամիապետն գինեզոյ առ ինքն։

2 Ապպիան. Քաղաք. պոպէրալ. Ա. ԺԱ. 100, և որ զինէ։

3 Ապպիան. Քաղաք. պոպէրալ. Ա. ձ։ (Տես վասն արձանագրուԹեանն էգէզոյ յապստամբացն՝ ի պատիւ խշխանապետին, և գտեալ յԻտալիա, ՝ի Մոմսէն, Վիէն լոպին արչանագրութիւնք. էջ 168։)

4 Տիտ. Լիւ. Հոպիտէրտ, ՁԹ։

5 Ապպիան. Քաղաք. պոպէրալ. Ա. ԺԱ. 100։

Ա. յս ամենայն ինքնիշխան կարգաւորութիւնք ՚ի հակառակութենէ էին թելատրեալ, եւ որ առաւ և անդր՝ առ ՚ի հաստատել զկարգ և զիշխանութիւն։

Վասն յաջորդութեան աւենակալութեանց դարձ արարին ՚ի կարգս նախնեաց[1], մի թեկն ածել զբռնեշխութեան՝ և անցեալ ընդ կուսակալութիւն, և մի զկուսակալութեան՝ մինչև կացեալ զանձապետ։ Սահմանեցաւ հասակ երեսնաւոր ՚ի զանձապետութիւն, քառասնամեայ ՚ի կուսակալութիւն և ՚ի դատաւորութիւն, քառասուն և երեք ՚ի բռնեշխութիւն։ Ընդ միջ այլ և այլ աւագութեանց պահանջէին օրինք միջոց երկուց ամաց, և տասանց վասն նոյն աւագութեան. այնպէս խստիւ պահէին այս օրինք, զի Լուկրետիոս Ոփելլա՝ մի ՚ի կարեւոր հանախոհից Սիլլայ՝ յարհամարհէն զայն առ ՚ի հասանել բռնեշխութեան[2], ՚ի մահ վարեցաւ։ Եւարձ իշխանապետն յաջառագրաց զիրաւունս վարկ տալոյ, յասպետաց՝ զպատուոյ կայս ՚ի Թասեբս, և ՚ի վարձուորաց ՚ի կալուածս հասարակաց՝ զհատուցանել նոցին պաշտօն բաշխելոյ զցուբեան. արգել զժողովս՝ խռովարարս հասարակաց խաղաղութեան. և առ ՚ի չափ դնել զբռնեշխութեան, սահմանեաց օրինս ծախուց[3]։

Յաւել և օրինս ՚ի կարգադրութիւն գաւառաց առ ՚ի բռնակալել զվարչութիւն և զյանձանձանս նոցին։ Ի գործառնութիւնս քաղաքականս ՚ի Հռոմ պարտադիրն բռնեշխութ երկոքին և ուր կուսակալք յամի իշխանութեան իւրեանց. և առաք կացեալ փոխանակ բռնեշխի կամ կուսակալի՝ առնուին զիշխանութիւն միոյ ՚ի տանն գաւառաց, որ տեղի առ մի։ Վասն որոյ աւելորդ էին այնուհետեւ նոր օրինք վիճակաց ՚ի հաստատութիւն իշխանութեան նոցա, և զի կային ՚ի նմին մինչև ցդարձ իւրեանց ՚ի Հռոմ։ Յետ հասանելոյ յաջորդին՝ առնուին ետ աւուրք շնորհեալ էին նոցա կալոյ ՚ի գաւառի

1 Ափպիան. Քաղաք. պատերազմ. Ա. ԺԱ. 100։ — Անգամին ՚ի 574 ամէ առհմանեալ էր հասակ կարեւոր վասն այլ և այլ աւագութեանց։ (Տիտ. Լիւ. Խ. ԽԴ։)

2 Ափպիան. Քաղաք. պատերազմ. Ա. թ. 101։ — Տիտ. Լիւ. Հատընտիրք, Զ թ։

3 Աւլոս Գելլ. Բ. ԻԴ։

4 Կիկերոն, Ընտանեկան նամակներ, գ. 6, 8, 10։

անդ։ Յաւելան Թիւք զատուորաց, գանձապետաց, քրմաց և հաւատմալից[1]։ Ամ յամէ պարտ էր ընտրել քսան գանձապետս, որ պատրաստէին՝ ի ընդ զպահպանութիւն Թուոյ ծերպակուտին, քանզի պաշտօնս այս տայր նոցա մուտս՝ ի ծերպակոյտն։ Բազմացոյց Սիլլա զաւեանս արդարութեան. սահմանեաց օրէնս ընդդէմ Սիկարեանց առ՝ ի կարճել զսպանութիւնս՝ որ գործէին Հռոմէացիս, և օրէնս ընդդէմ անիրաւութեանց՝ առ՝ ի պաշտպանել զքաղաքացիս՝ ի Թշնամանաց. և մարթ է ասել, զի լուծին այսր օրինաց էին օրէնքն սահմանեալք ընդդէմ քրէական յանցանաց[2]։ Ի համար քրէական յանցանաց զկնասպարտութեան գրէին և հարստահարութիւնք առեներակալաց՝ ի յանձանձոս գաւառաց։ Իսկ ոչխրք զկնասուրք ընդդէմ հասարակապետութեան էին՝ մերկնել կուսակալն՝ ի գաւառէ իւրմէ անհրաման՝ ի ծերպակուտէն, ածել զօրս արտաքոյ սահմանաց կուսակալութեան իւրոյ, ինքնահրաման ձեռնարկել՝ ի մարտ, և բանադնաց լինել ընդ օտար զօրաւարս։ Եւ ոչ՝ ի միջէ՝ ի յանցանաց սոսկ անպարտ էր Սիլլա։

Յամին 675 հրաժարեաց Սիլլա յիշխանութենէն. գործ անօրինակ՝ զոր միայր նմա գործել։ Ան որոյ՝ ի սուգ նստուցեալ էր զազգատոհմս բազումս, եմուտ միայնակ՝ ի տուն իւր ընդ մեծարանս հպատակութեան ամբոխին։ Ան հնչափ էր ազդեցութեան իշխանութեան նորա զոր ելոյ, և զոր անմուատելն ունէին անձնասպահք հաւատարիմք իւր ի կառնեցանց՝ ի Հռոմ[3], զի և՝ ի խոնարհել նորա՝ ի կարգ սակ քաղաքացւոյ Թողուին, նմա տակաւին գործել իշխանաբար. և առուրբ յառաջ քան զմահ իւր, որ դիպաւ յամին 676, արար դատաստան անողորմ, և ոչ խղձեաց տալ խողխողել առաջի

1 Տիտ. Լիւ. Հոպընոյէտ, ՁԹ։ — Տակիտոս. Տուբէյէտ. Թ. ԻԲ։ — Ասկոն. Վիկատր, Աբր անոսանիս. ՀԵ։

2 Կիկերոն, պհոեպոյէ. Բ. ԼԹ։ — «Ընդ օրինօքս վաղիճն առ նախնեօք բազում ինչ. մասանութիւնք՝ ի բանակի, ապմուկք՝ ի Հռոմ, արհամարհութիւն վառաց Ժալովդեան Հռովմայ՝ զեղծանելով սահմանեալին իշխանութեամբ իւրով». Տակիտոս, Տուբէյէտ, Ան. ՀԲ։

3 Ապպիան. Քաղաք. պոփերապ. Ան. ԺԲ. 104։

աչաց իւրոց զՎրանիոս կուսակալ զամբաստանեաւն ի հարկս ահարուեցուն[1]։

Մեծաշուք կառարեցաւ հանդէս յուզարկաւորութեան նորա, որպիսի չէր երբէք լսեալ. ածաւ զիաւն նորա ի դաշտն Արմաւեան, ուր յայնժամ զթագաւորս միայն օրէն էր թաղել[2]։ Եթող նա զՎռոմիա նուաճեալ, այլ ոչ հնազանդեալ. զաւազութեան յիշխանութեան, այլ առանց բարոյական զօրութեան՝ զհամախտն իւր ձոխացեալ, այլ յահի յերկիւղի ընդ ձոխութիւն իւրեանց. զբազումն ընդ բռնակալութեամբ իւրով կոծանեալ, այլ մնչելով ընդ հարստահարութիւնն։ Եւ զի երկարեմ. զիտաց Հռոմէ զի կայր այնուհետեւ անպատուար առաջի յանդգնութեան զօրականին ուրուք բարեբաղձի[3]։

Ը· Որ ինչ իշխանապետութեանն Սիլլայ զիւր ևկեալ։

Ի յիշատակ պատմութենէ առնոյս վերջոյ, և մանաւանդ իշխանապետութեանն Սիլլայ, յայտնապէս կ՚ի միտ առնուլ զի չէր մարթ Վռոմէոյ կալ անտերունչ։ Օրինադրութիւնք առաջնոյն ուրեք խոտարհէին առաջի զօրութեան միոյ ուրուք, որ ոչ լոկ ի հանախտէից իւրոց զանազեր զօրաւիգն, այլ և ի տարտամ աւերակին, որ խոնջ ի հակառակ կուսակցութեանց՝ խնդրէր կարգ և խաղաղութիւն։ Եթէ ի ջախոյն կացեալ էր Սիլլա, սկիզբն հաւանաբար ի նմանէ առնոյր անուանեալն Ինքնակալութիւն. այլ իշխանութիւնն նորա եղև այնպէս անազգային և կոլինեան, մինչև զեղծմանց ազատութեան յետ մահու նորա ի մուացօնս անկանել, ամենեցուն զբռնաւորութեանն միայն յուշ ածելով զեղծմանն։ Ոչնչակ կուսակցութիւն ռամկին զօրանայր, նոյնչափ վաղեմի օրինադրութեանց

1 Մնայր մահու իշխանապետին առ ի չտալ ի գանձ աշխարհին զարծաթն զոր պարտէր· (Պլուտարքոս· ի Սիլլա· խզ։)

2 Ապպիան· Քաղաք· պոփերազմ· Ա· ԺԲ· 106։

3 Սիլլա ընդունէր անուն մականի Փելիքս (Երջանիկ) (Մոմսէն, Պատմ լսփին արյանագրութիւնք· էջ 168·) կամ Փառապս, այսինքն է Բախտաւոր, ըստ Պլուտարքոսի Պառեկուսայ։

կոչնչէր զօրութիւն։ Չի որպէս ամենակալութիւն դիւրահաս
ման և կարեկիր՝ զշահ օգտի իւրոյ լաւ ևս ՚ի միջէ միայնոյ
կարծէ միշտ պաշտպանեալ, քան ՚ի քաղաքական ժողովոյ
մարդկան, պատրաստ էր նա ապաստան առնել զբախտ իւր
այնմ՝ որ վաստակօք իւրովք քան զայլս գեր ՚ի վերոյ ամբառ
նայր։ Գրակբոսեանք, Մարիոս և Սիլլա հետզհետէ սահման
նեցին ըստ հաճոյս զբազդ Հասարակապետութեան, առ ոտն
կոխեալ անպատուհաս զօրինադրութիւնս և զսովորութիւնս նախ
նեաց. այլ վաղ էանց թագաւորութիւն նոցա՝, զի կուսակ
ցութեանց միայն էին առաջնորդք։ Փոխանակ խնամելոյ զամե
նեցուն միահամուռ զինչս և զշահ իտալական ազգին ողջոյն,
մասին ինչ ևեթ ձեռն տային այսմ կամ այնմ զաւսւ։ Վէպք
կամէին հայթայթել առաւելապէս զբարօրութիւն զաւակա
գործաց Հռոմայ, զազատութիւն իտալականաց, և զինախիղ
խանութիւն ասպետաց. իսկ այլք զբարեշնորհութիւնս ազա
տանուցն. վասն որոյ երկաքանչիւր ՚ի գերև ելին։

Ա՛ռ ՚ի հաստատել կարգ ինչ տեղական, կարեւոր էր ոք՝ որ հասարակաց մարդկան կարեաց գեր ՚ի վերոյ անցեալ, միա
ւուծ բերէր յանձին զգլխաւոր բարեմասնութիւնս, և զարդա
րացի խորհուրդս զմիոյ միոյ առաջնոցն, և խորշէր ՚ի թերու
թենանց նոցա և ՚ի սխալանաց։ Ի մեծանձնութիւն և ՚ի սէր
ժողովրդեան ամենապետաց ոմանց՝ պարտ էր յաւելուլ զհան
չար պատերազմական երևելի զօրավարաց, և զնորախոհուրդ
միտս իշխանապետի՝ ՚ի բարեկարգութիւն աշխարհին և ՚ի
պաշտպանութիւն առագանուց։

Ա՛յլ քաջայարմար այսպիսւոյ մեծի գործոյ գոյր խոկ, այլ թերևս ՚ի համբաւոյ խոկ իւրմէ ոչ ինչ օգնեալ՝ հասանէր
նմա ճեալ տակաւին ընդ երկար անծանօթ, եթէ խորագնին
աչաց Սիլլայ չէր հանեալ զնա ՚ի լոյս ՚ի խառնել ժողովրդեան,
և չկացուցանէր զնա հալածանօք ՚ի կէտ տեառութեան հասա
րակաց։ Եւ էր այրս այս կեսար։

1 « Ոչ է մարթ ժխտել զի Սիլլա զթագաւորն ունէր յայնժամ իշխանութիւն, թէպէտ հասարակապետութիւն » . Կիկերոն, ճառ ՚ի պաշտպան հա
ւանմայէց. Ի՝ե։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅՈՒԼԻԱՅ ԿԵՍԱՐՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

(654–684):

Ա. *Առաջին արք կեսարաց:*

Յաւուրս ժամանակաց՝ յորս Մարիոս յաղթութեամբք իւրովք ՚ի վերայ Կիմբրաց և Տևտոնաց ազատէր զԻտալիա յահագին արշաւանաց, ծնանէր ՚ի Հռոմ այն՝ որ յաւուր միում նուաճեալ վերատին զԱֆրիկա և զԵրմանացիս, խափանելոց էր ընդ երկար զասպատակութիւն խժից, տալոց էր ազգաց հաստատութիւն իրաւանց իւրեանց, ապահովելոց էր հռովմէական քաղաքականութեան զտևողութիւն, և իշխանաց ազգաց՝ որ գալոց էին՝ աւանդելոց էր զանուն իւր ՚ի սրբազան հնից իշխանութեան:

Կայիս Յուլիոս Կեսար ծնաւ ՚ի Հռոմ յ12 Յուլեայ յամին 654[1]. ՚ի պատիւ նորա ամիան այն՝ որ կոչէր Կուինտիլիս,

1 Մեծանուն գերմանացի մատենագիրն Մոմսէն (Հռովմէական պատմ. գ. 15) ջնդունի զայս թուական 654. և փոխանակ այնր դնէ, թէպէտ զգուշութեամբ՝ զ652. վասն զի ՚ի ժամանակէ անտի Սիլլայ օրինադրեալ հասակ բարձր աւագութեանց՝ էր երեսուն և եօթն ամ ՚ի շինուածապետութիւն, քառասուն ՚ի դատաւորութիւն, քառասուն և երկք ՚ի բդեշխութիւն: Եւ քանզի Կեսար ատենայիան շինուածապետ էր ՚ի 689, դատաւոր ՚ի 692, բդեաշխ ՚ի 695, ուրեմն եթէ ծնեալ էր նա ՚ի 654 ամին, զամենայն ատենակալութիւնս՝ երիս երիս ամօք քան զօրինաւոր հասակն գտանէր կանխեալ:

Առաքինութիւնս Թէպէտ ոչ թեթև ինչ թուի, սակայն առաջի այլոց պատմիան վկայութեանց ինքնին լուծանի: Եւ գիտեմք զարձեալ զի ՚ի Հռոմ չպահէին իսկ զրեթէ օրէնք՝ ուր զերևելոց ումեքէ էր խնդիր: Լուկուլլոս ամբարձաւ յառաջին բարձ աւագութեան յառաջ քան զահմանեալն յօրինաց անտի հասակ: Պոմպէոս եկաց բդեաշխ յերեսուն և ՚ի չորս ամ հասակին. (Ապիան.


կոչեցաւ Յուլիս, և՛ ի 1900 ամաց հետէ զմեծն առնեն կրէ զա-
նուն: Էր սա որդի Կ. Յուլիոսի Կեսարու[1] կուսակալէն, որ

Քաղաք· պոպէրապ· Ա· ԺԴ): — Տակիտոս այսպէս խօսի վերայց· «Ա-նախնիս մեր ատենակալութիւնս այս (այն է գանձատուրութիւն) վատակոց եւեթ վարձք էին· զի յայնժամ ամենայն ումեք հանձարել քաղաքացւոյ երաւունք էին թեկին ածէլ զպատուոց, և ոչ ինչ խոչընդոտ եր հասակի, հնելն պետահասակն ևս գոլ՝ ոչ արգելոյր լինանելոյ ի էդիլիտուրիան և յիւլիանապետուրիան». (Տարեգիրք, ԺԱ· ԻԲ): — Դարձեալ յընդունել զկարծիս Մոմսէնի, հարկ լինէր ասել զծնունդ Կեսարու ոչ՛ ի 652, այլ՛ ի 651· զի եթէ ծնեալ էր նա յամենայն յուլիոյ՛ ի 652, չմարթէր լինել քառասուն և երից ամաց յառաջ քան զ695 յամենայն յուլիսի· և զի ընտրութիւն էդիլիից կանխէր վեց ամսով յառաջ քան զմեռս նոցա՛ ի պաշտօն իշխանութեան, ապա՛ ի յուլիսի 694 ամին պարտ էր ունել զօրինաւորն հասակ, որով ձգէր ծնունդ նորա՛ ի 651: Այլ Պլուտարքոս (կեսար, ԿԹ), Սուետոնիոս (կեսար, 2Ը), Ափպիանոս (Քաղաք· պոպէրապ· Բ· ձ1Թ) միաձայնին զի յիսուն և վեց ամաց էր Կեսար՛ ի սպանանելն՛ ի 15 մարտի 710, որ ծնունդ նորա ածէ կրկին՛ ի 654 ամին: — Դարձեալ ըստ Վելլէյոսի Պաուերկուլեայ (Բ· ԽԹ), այն ինչ յարբունս հասեալ Կեսար՝ կարդեր՛ ի Մարիոսէ և՛ ի Կիննայ քուրմ Արամազդայ· և զի այս հասակ՛ ի հռոմ զօրեքառասանամեայք համարեր, և բռնեցեալ Մարիոսի և Կիննայ հանդիպի յամին 668, ապա Կեսար ըստ այմ հաշուի պառներ յայնժամ՛ ի զօրեքառասանեւորդում ամի հասակին: Նոյն ինքն մաենապիրն յաւելու թէ էր նա իբր ութեասան ամայ՛ ի մէկնելն՛ ի հռոմայ յամին 672, խոյս տալով յերեսաց սարսափութեանցն Սիլլայ· և այս ևս յաւելու՛ ի հասասաութիւն մերոց կարծեաց:

Սկիզբն զինուորութեան Կեսարու էղև յԱսիա՝ յառաջին Միտիլենեայ՛ ի 674 (Տիտ· Լիւ· Հոռընոբէր, 2Թ), որով համարին ամք քան ծառայելոյ նորա հայրենեաց: Ըստ Սալուստեայ (Կատիլինեան պատեր· ԽԹ) ՛ի կալն Կեսարու զինուորեալ՝ ի նմին տանէ յամին 272, 281, 307, 324· և յետ բռնչութեան առ Կապեա կացեալք յամին 330, 351, 362, 367, և իշխանապետ նաև կացեալ Կ· Յուլիոս Յուլոս յամին 402, այլ ծնունդք նոցա անծանօթք են: Ուղղափիծ աղբերանութիւն Կեսարու սկսանի՛ ի Սէքստոսէ Յուլիոյ Կեսարէ, որ էկաց կուսակալ յամին 546: Ի պատմութենէն մակագրելոյ Հռովմ ըստ պլիտոնեան բաղմահմուտ վարժապետին Վ· Տրումանեայ (հտ· գ· էջ 120· Քէօնիկսպէրկ, 1837)

յանկարծամահ եղև ՚ի Պիզա զ670[1] ամաւ, և Աբելեայ՝ լե-
ւնելն տոհմիկ Ժողովրդեանն։

՚ի կիր առնումք զազգաբանութիւն ասեն Յուլեանց, զմի ինչ ՚ի նմա զանազա-
նելով զոր բացատրութիւք յատուկնուն ծանօթութեան յիվ 266։



Հաւատարմագոյն կարծիք առ նախնիս զծագմանէ անուանն Կեսարու, հա-
մարին Յուլեոսի ապանեալ փիլ ՚ի մարտի ուրեք. զի ՚ի փիւնիկ լեզու կիսոյ՝
փիլ լսի։ Դրամք Կեսարու քրմապետի հաստատեն զկարծիս զայս, ՚ի միւս
կողմն դրամոյն բերելով փիլ՝ որ կոխէ զօձ. (Գոհէն, Դրամ. Բզեվթէ, տախ. Ի.
10։) Եւ յայտ է, զի նշանակէր ինչ այլազանականք հռովմէական դրամոց՝ են իբր
կնիք տոհմից խօսունք։—Պլինիոս այլ ևս ասուգաբանութիւն տայ անուանս Կե-
սար. «Նախահայր Կեսարեանց ՚ի հատանելոյ արգանդի մօրն կալաւ զանունն,
(զի կիսոս ՚ի լատին բարբառ նշանակէ՝ հատեալ). վասն որոյ Կեսարեանք կոչեցան
և կիսոնք՝ որ ինոյն բերէ նշանակութիւն». (cæsus. cæsones.). (Բն. Պմ. Ի. Թ)։
— Փեստոս այսպէս ասուգաբանէ (էջ 57). «Կեսար ՚ի հերաց վարսից ասացաւ,
*վարսաւոր ծնեալս** »։ Իսկ Սպարտիանոս (Վարք Եւիոսի Վերոսի, Բ.) համառօտէ
զայլ և այլ ասուգաբանութիւնս այսպէս. Կիսար՝ կամ ՚ի փղէն (որ ՚ի բարբառ
Մաւրիտանացւոց Կիսար ասի) համարին զգլուխք և զմուռք զնախահայր Յու-
լեանց յորջորջեալ վասն ապանանելոյ նորա զգազանն ՚ի մարտի, կամ զի ՚ի մեռանել
մօրն՝ հատամուխ արգանդին ծնաւ, կամ զի ՚ի յարգանդէ մօրն գլխաւոր եկն ՚ի լոյս,
կամ զի խաժակն էր (որ լատիներէն կիսիս ասի, cæsius,) և քան զհասարակաց
մարդկան բնութիւն հզօրագոյն»։ (Տես Խիդորոս, Որոգինէս. Թ. Գ. 12)։ — Սե-
լուսիոս, Մէնոռիան Էնէսիանին, Ա. 290, և Կասաւբոնին Մանասէ, էջ 71։)

1 Պլինիոս, Բն. Պմ. Է. Ը Գ։ — «Ամաց վեշասաներից էր կեսար յորժամ մե-
ռաւ հայր նորա». Սուետոնիոս. Ա։

* Գանգի վարսք ՚ի լատին բարբառ ասի կիսարիես (cæsaries), որպէս և ՚ի հայումն Գէս,
Գիսաւ։ (Ծան. Թարգմ.)։

*Նախնեօք իւրովք և ինամեալ ժառանգէր կեսար կրկին մեծարանս, զոր տան սերունդ վաղեմի, և պայծառու- Թիւն՝ ի վերայ յաւելեալ։ Ըստ միում համարէր նա սերեալ Այնքիսեայ և Այտղիանէ[1]. իսկ ըստ միւսումն էր նա ազգական երևելոյն Մարիոսի, որոյ կին ածեալ էր զՀօրաքոյր իւր զՅուլիա։ Ի մեռանել այրոյ մեծի զօրավարին յամի 686, արար՝ի վերայ նորա կեսար Ճառ դամբանական, յորում յուշանէր զազգաբանութիւն իւր այսպէս. «Հօրաքոյրն իմ Յուլիա, առ՝ի մօրէ ծնունդ է Թագաւորաց, իսկ առ՝ի Հօրէ դիւցախառն. քանզի մայր նորա էր՝ի Մարկեանց[2], և Հռեբա Մարկիոսեանք Անկիոսէ Մարկիոսէ են սերեալ։ Տոհմ Յուլեայ, յորմէ եմ, Այտղիանէ իջանէ։ Վասն որոյ ազգ մեր ընդ արքայական դրոշմ Թագաւորաց, որ հզօրագոյնքն են՝ի մահկանացու՝ յաւելու զվեհափառ սրբութիւն անմահից, որք տիրեն և Թագաւորաց»[3]։

Ա.յս խրոխտապանծ փառաւորութիւն նորա ընդ ազգատոհմ իւր՝ յուշանէ ուրախս մեծարկը հնութիւն տոհմի՝ի Հռոմի։ Կեսար իջեալ յազգատոհմն՝ յորում այնչափ ազգ ականատուք կացեալ էին, յանկայր ընդ հետս նոցին գնալոյ. անդատին՝ի մանկութենէ յայտ իմն այսպէս առնելով՝ զի ազնուականութիւն պարտս՝ի վերայ ածէ, և ոչ նմանել կամիլ այնոցիկ՝ որոյ գնացք կարծեցուցանէին ազատս՝ի պարտուց կացուցանել զանձնաւսկանս։

Աւրելիա՝ կին ազնուամիտ և զգաստ՝[4] ոչ սակաւ զարգացոյց զբարեմասնութիւնս նորա իմաստուն և բարեխնամ դաս-

1 «Սերեալ էր նա յազնուական տոհմէ Յուլեանց, որ ըստ հաւաստարիմ վաւերի կարծեաց՝ սկիզբն առնոյր Այտղիանէ և Այնքիսեայ». Վէլլ. Պաթերկ. Բ. ԽԱ։

2 Քանզի ցեղն Մարկեան՝ մի յերևելի ազատ տոհմից Հռոմայ՝ ընդ նախնիս իւր համարէր զնոսա Մարկիոս՝ որ ամուսնաւորեալ ինքեան զՊամպիլիա դուստր Նումայ Պոմպիլիոսի, ծնեալ էր՝ի նմանէ զԱնկոս Մարկիոս, որ Թագաւորեաց՝ի Հռոմ յետ մահու Տուլլիոսի Ոստիլիոսի. (Պլուտարքոս՝ի Կոընելիոս, և՝ի Նումա, ԻԶ։)

3 Սուետոնիոս, Կեսար, Զ։ Վկայութիւնս այս ըստ սովորական Թարգմանութեան անխնամալի է, քանզի զMartii reges Թարգմանեն Մարիէոսեան Ընագաւրս, փոխանակ Թագաւորելոյ՝ տոհմ Մարկիոսեանց որ Հռեբա կոչին։

4 Պլուտարքոս՝ի Կեսար, Ժ։

տիարակութեամբն, և պատրաստեաց զնա արժանաւոր կարգին՝ զոր պահէր նմա բազդն[1]։ Նախակրթութենէնս այս՝ի ձեռն բարեպատրաստ և առաքինի մօր՝ հաւասար ազնուագունից ընդաւթոյս բարեմանութեանց ազդէ միշտ՝ի վերայ առաջնոյ կայից մերոց. և ընկալաւ Կեսար զարդասիս նորին։ Դարձեալ և վարժապետ նմին եկաց Մ. Անտոնիոս Գնիփոն Գալլացի խնամտասէր և հռետոր, մեծահանճար և բազմահմուտ, նեկուսա՝ի յոյն և՝ի լատին դպրութենէնս՝ յորս պարապեալն էր յԱլեքսանդրիա[2]։

Ի յունաստան էին միշտ խանձարուրք գիտութեանց և արուեստից, և լեզուն Դեմոսթենեայ էր ընտել գիտնակաց ամենեցուն Հռովմայեցւոց[3]. *վասն որոյ մարթ էր կրկին բարբառս Իտալիոյ հանճարել զյոյն և զլատին, որպէս և եղեն առ Կատոնէաւ կայսերք*[4]։ *Կեսար յերկոսին և խօսէր նոքին գիտութեամբ, և յանկանել ընդ հարուածողն Բրուտոսի՝ վերջին բանք նորա՝ի յոյն բարբառ եղեն՝ի ջրթանցն*[5]։

Թէպէտ և զբօսասէր, այլ ոչ ինչ անփոյթ առնէր, ասէ Սուետոնիոս, ստանալոյ զգիտութիւնս՝ որ առաջնորդէին նմա յաւարտութիւն։ Եւ զի ըստ սովորութեան Հռովմայեցւոց էր մարթ հասանել ումեք յառաջին աւարտութիւնս առանց ազգի ազգի վաստակոց, ազատորդիք՝ չև ևս՝ի սպառ օտարացեալ՝ի նախնեացն, չկային պարապորդ. խնդրէին կրօնական պաշտամունս՝ առ՝ի տիրել խղճի մտաց, անուեսական պաշտամունս՝ առ՝ի յանձանձել զօգուտ աշխարհին, վէճս և առեներանութիւնս՝ առ՝ի յիւրեանս գրաւել զոգիս ձարտարախօսութեամբ, և զինուորական իսկ գործս՝ առ՝ի շլացուցանել

1 «Այսպէս Կոռնելիա մայր Գրակքոսեանց, Աբելիա մայր Կեսարու, Ատիա մայր Աւգոստոսի, որպէս պատմի, ինամ կալեալ դաստիարակութեան որդւոց իւրեանց, արարին զնոսա արս աւադս». Տակիտոս, Տրամախօսութիւն հռետորաց, ԻՀ։

2 «Մեծահանճար, ուշիղ, վարժ հաւասարապէս՝ի յոյն և՝ի լատին բարբառ». Սուետոնիոս, Վասն երևելի քերականաց, Ը։

3 «Ի յոյն խօսից սկիզբն առնել մանկանն լաւագոյն համարիմ». Կուինտիլիանոս, Հրահանգ ատենախօսութեան, Ա. Ա։

4 Կլաւդիոս ուզեալ զբանս իւր առ հիւր ոք որ խօսեր յունարէն և լատիներէն, ասէ. «Եւ զի գիտաս դու զկրկին բարբառ մեր». Սուետոնիոս, Կլաւդիոս, ԽԲ։

5 «Καὶ σύ, τέκνον;» (Եւ դո՞ւ որդեակ). Սուետոնիոս, Կեսար, 2Ե։

զհետս պայծառութեամբ փառաց։ Կեսար՝ ի փոյթ երևեալ լինելոյ՝ ի մէջ առնեցուն, ոչ շատ հանարեալ պարապել՝ ի վարժս բանասիրականս, մատեանս ևս կանուխ յօրինեաց, յոց յիշատակին Դրուսոսի Հերքիղեայ, Որթերգոթիւն Եղիսպոսի, Քաղուած ընտիր բառից[1], և մատեան զՀնդայոթեանց[2]։ Ոչ մատենից Թուի լեալ ոգոյն և ընտիր, զի եւս նմա զվարկ քաջի մատենագրի, կոչեալ զնա օրինակագիր պատկառելի՝ ի բառին բարբառ[3]։ Այլ յարուեսա քերթողութեան չյաջողեալ ասէ զնա Տակիտոս[4]։ Սակայն պահին տողք ինչ նորա՝ ի յիշատակ Տերենտեայ, որոց ոչ պակասէ վայելչութիւն[5]։

Ապա ուրեմն կրթութիւն կայցէ երևելի զկեսար՝ միջնէ կացեալ նորա մեծ։ Ընդ բարուքեան սրտի կցորդէր նա հանճար մեծ, ընդ անընկճելի արութեան[6] Հարստահոսութիւն, որ առնոյր ձգէր զհետ զունկնդիրս[7]. յիշողութիւն

1 Սուետոնիոս, կէսար, ԾԶ։

2 «Մանուկ գեռ ևս դոլով Թուէր սկրող տարագրու պերճախօսութեան, որ սեպհականն էր Սորաբոնի կեսարու, և՝ ի գիրս իւր զՀայեհյեռեալ էր նորա բազմամ լինէ հատուածս՝ ի Ճառից հռետորիս զԱրգիացւոց»· Սուետ· կէսար, ԾԸ։

3 Աւլ· Գելլ· Դ· ԺԶ։

4 «Քանզի կեսարու և Բրուտոսի յօրինեալ է և քերթուածս, և՝ ի հատարակաց մատենագարանս եգեալ։ Քերթողք հետևակք իբրև զԿիկերոն, այլ քան զնա բարեբաստիկք, զի սակաւուց է ծանօթ առնել նոցա քերթուածս». (Տակիտոս, Տրամախօսութիւն հռետորաց, ԻԱ։)

5 «Tu quoque, tu in summis, o dimidiate Menander,
Poneris, et merito, puri sermonis amator.
Lenibus atque utinam scriptis adjuncta foret vis,
Comica ut æquato virtus polleret honore
Cum Græcis; neque in hac despectus parte jaceres!
Unum hoc maceror et doleo tibi deesse, Terenti.»

«Դու իսկ ինքն, ով դու կիսատ Մենանդր, ընդ վեհսն կաս՝ ի դաս,
Իրաւամբք ըստ արժանի, սիրող յղտատակ զուտ բարբառոյ։
Այլ զի՛ էր Թէ և կորով դոյր՝ ի քո տուտ ոգորկագեղս,
Զի զօրութիւն կատակերգակ զուգատպատիս փայլէր ընդ Յոյնս.
Եւ ոչ յայսմ մասին արհամարհեալ անկեալ գնէիր.
Ընդ այս ևէթ ապիկիզիմ զի չեք՝ ի քեզ, Տերենտիէ»։

Սուետ· վարք Տերենտ· Գ· Ե։

6 «Առատաձեռն միտս՝ ի շռայլել, արիասիրտ գեր՝ ի վերոյ մարդկային բնութեան և մտաց»· Վէլլ· Պատերկ· Բ· ԽՁ։

7 «Ի Ճարտարախօսս Հռովմայ վկայեալ յամենեցունց զերկրորդն ունէր տեղի»· Պլուտարքոս՝ ի կեսար, Գ։

նշանաւոր [1], առաստաձեռնութիւն անչափ, և որ չքնաղապիւտն է՝ հանդարտութիւն՝ ի ցասման [2]։ «Քաղցրութիւն նորա, ասէ Պղատոնիկը, բարեբարոյութիւն և մարդասիրութիւն, որ գէր՝ ի վերոյ քան զհասակն էին՝ ի նմա, սիրելի առնէին զնա ժողովրդեան» [3]։ Ոչ անձամբ հանարիմ յերուսալ առտանօր կրկին դէպ կրտսերապոյնս ժամանակաւ։ Պատմէ զնմանէ Պղատոնիկը՝ զի յաւուրս պատերազմացն իւրոց ըմբռնեալ երբեմն՝ ի սահիկ մըրկէ, և խոցս տուեալ՝ ի հիւղ մի, ուր մի ևեթ էր սեռեակ անձուկ՝ անբաւական բազմաց, խնամ կալաւ Թողուլ զայն Ոպիոսի ումեմն՝ ի սպայից իւրոց՝ որ խօթն էր, և ինքն բացօթեայ անցոյց զգիշերն, ասելով որոց մերձն կային. «Պարտ է զպատուոյ տեղիս տալ աստգաց, այլ հիւանդաց զկարևորն»։ Եւ այլ երբեմն՝ ի Հաշել իւրում առ Վալերիոսի Կանի՝ ի Մեդիոլան, ածաւ՝ ի սեղան կերակուր խոհրեալ. և՝ ի քրմինջել ընկերացն՝ կշտամբեաց Կեսար զանկրաւութիւն նոցա առ ասունջականն, և ասէ. «Գզաստ կ՚ը չուտելոյ՝ ի կերակրոյ՝ որ անախորժ Թուի ձեզ. այլ տրտունջ բառնալ զայդմանէ՝ ընդդէմ է պատշաճից» [4]։

Դէպք այսոքիկ Թէպէտ և դուշնաքեայք՝ սակայն նշանակք են բարեսրտութեան Կեսարու, և զգուշութեան բարեկրթ առնն՝ որ դիտէ պատկառ կալ միշտ պատշաճից։

Յընդաբոյս բարեմասնութիւնս յայսոսիկ՝ գեղեցիկ զաւակութեամբ զարդացեալս, յաւելուին և մարմնոյ բարեմասնութիւնք՝ զի էր նա բարձրահասակ և գեղապատշաճ անդամովք, որով զանազանէր յամենեցունց [5]։ Աչք սևաթոյր, հայեցուածք խորագնին, դէմք գունատ, ունչք ուղղաձև և երկայն,

1 «Քանզի ոչ Որտենսեայ, ոչ Լուկուլլոսի, և ոչ Կեսարու այդքան յիշողութիւն էր մատց, որպէս՝ ի քեզ միտք սրբազան տեղեաւ և ժամանակաւ, որ՝ ի հրամայելն քոմ՝ զամենայն աւանդան տայր՝ ի դուրս»։ Լատինոս Պակատոս, Նեբրոդ՝ ի Թէոդոս, ԺԸ. 3։ — Պլին. Բն. Պտմ. Է. իե։

2 «Թէպէտ և գիտէր՝ ի չափու ունել զցասումն, սակայն սիրելի ևս էր նմա չկարել ցասնուլ»։ Սենեկա, Ճառ վասն բարեմասնութեան, Բ. իԴ։

3 Պղուտարքոս՝ ի կեսար, Դ։

4 Պղուտարքոս՝ ի կեսար, իթ։

5 «Յարտաքին բարեմասնութիւնս՝ որ երևելի կացուցանէր զնա յամենայն քաղաքացիս իւր, յաւելցեր կեսար ոգի բուռն և հզօր»։ Վէլլ. Պատերկ. Բ. իԱ։

բերան փոքր և բարեձև, սակաւ մի լայնաշուրթն՝ որ ընծայէր դիմաց նորա դրոշմ բարեհամբոյր բարոյից, լայնութիւն ձա֊ կատուն զիմացականին նորա յայտ առնէր զօրութիւնս։ Երեք նորա էին յոյր՝ ի մանկութեան. այլ՝ ի կիսանդրիս դրօշեալ՝ աներկբայապէս՝ ի վերջին ամն կենաց նորա, ծիւրեալ երևին՝ զխորհուրդ աշխատութեան՝ ի դէմս բերելով[1]*։ Զօրաւոր էր ձայն նորա և քաջազրակ, շարժուածք ազնուական, և յատե֊ նային մատունս մարմնոյն պատկառելի*[2]*։ Մարմին նորա փափուկ՝ ի սկզբան, զօրացաւ ապա տակաւապիտութեամբ և յանհար֊ թութիւնս եղանակաց վարժեալ*[3]*։*

Ընդատին՝ ի մանկական տիոց կրթեալ՝ ի հրահանգս մար֊ մնոյ, խիզախ էր՝ ի հեծելութիւն[4]*, տոկայր դիւրաւ ան֊ տաղութեան և վաստակոյ*[5]*. ժուժկալ՝ ի հանապազօրեայ կերանս, առողջութիւն նորա չէր ինչ այլայլեալ՝ ոչ յատաւե֊ լութենէ վաստակոյ և ոչ յատաւելազանց զրպանոյ, երկից անգ կրեալ՝ ի Կորդուբա և՝ ի Թափոս ախտ ինչ ջղային, որ տարապարտ կարծեցաւ վերնոտութիւն*[6]*։*

Փոյթ մեծ էր նորա յօրինուածոյ կերպարանոյ բոլոր ան֊ ձին. զերծոյր խնամով զմօրուսն, և տայր խլել զհերս զմե֊ րուացն արտաքուստ. ժողովէր զիւսակս իւր արուեստա֊ բար՝ ի Հակառն, որք ապա՝ ի յատաչել հասակին ծածկէին զվնասուածս Հակատու նորա։ Սոպատանէին՝ ի նմա տեսողք զանասովոր եղանակ ծայրիւ մատանն քորելոյ զգլուխ իւր, թէ գուցէ յօրինուած վարսից եղծանիցի[7]*։ Զգեստք նորա էին*

1 Սուետոնիոս, կէսար, խե։

2 «Ձայն նորա, շարժուածքն, կերպարան վիհ և ազնուական, և եղանակ խօսից առանց ինչ արուեստականութեան». Կիկերոն, Բրուտոս, Հե. գաղափա֊ րեալ՝ ի Սուետոնիոսէ, կէսար, ըե։

3 Պլուտարքոս՝ ի կէսար, ժԸ։

4 «Ընդատին՝ ի մանկութենէ վարժ էր նա՝ ի հեծելութիւն, և կիրճ՝ ի ձիար֊ ձակ արշաւանս, լքեալ թողեալ զամենայն, ձեռն զձեռամբ յետս կոյս ածեալ». Պլուտարքոս՝ ի կէսար, ժԸ։

5 «Առանց խնդրելոյ ախորժ առ՝ ի հպատակիլ ևեթ կարեաց առնոյր կերա֊ կուր, և ասէր զանձն քնոյ». Վէլլ. Պաաերկ. Բ. խԱ։

6 Սուետոնիոս, կէսար, ըԳ։ — Պլուտարքոս՝ ի կէսար, ժԸ և ըԸ։

7 «.... Ի տեսանել իմում, ասէր Կիկերոն, այնպէս արուեստաւորաբար զվարսս նորա յարմարեալս, և զծայրիւ մատին քորել նորա զգլուխն, չհաւատայի թուէ

արուեստակեալ, պատմուձան նորա եզրաձիրանի մինչև ՚ի Թեզանիան ծոպիւք զարդարեալ, և վեր ՚ի վերոյ հանդերձեալ զեաւ գօտեաւ զմիջօք, որպէս սիրատարփիցն և մեղկ պատահեաց ժամանակին էր տարազ: Բայց Սելևս ՚ի մտոտի արտաքին կերպարանաց նորա անպատրելի, կրկներ յաձախ երկնչել ՚ի գօտելոյծ պատանւոյն [1]: Սիրող էր նաև նկարակերտ և դիւշեալ պատկերաց, և ականակապ զարդուց. և տանէր միշտ ՚ի մատն, ՚ի յիշատակ ազգատոհմին, մատանի՝ քանդակեալ ՚ի նմա պատկեր տպատազէն Ատղկան [2]:

Ատանց յերկարելոյ առացից. էին ՚ի Կեսար ըստ բնակչանէն և ըստ բարոյականին բնութիւնք կրկին, դուն ուրեք կցորդեալք ՚ի միում անձին: Չի ընդ փափկութեան ազատանուց բերէր յանձին զաձառուստ կազմուած առն պատերազմողի, ընդ ընտրտս մտաց՝ զիմաստութիւն խորհրդոց, ընդ խղձս զեղխութեան և արուեստից՝ զբուն տեսչ զինուորական խիստ և պարզ կենաց: Միով բանիւ, բերէր նա յինքեան զվայելչութիւն կերպարանաց՝ ի հրապուրել, և զկորով բնութեան՝ ի հրամայել:

Բ. Կեսարս հռչածումն յետնագ Միտոյ:

Ա.յսպիսի ոք էր Կեսար՝ ի հասակի ուժեւառան անց, յորում ժամանակի ՚ի բուն էտ Սելևս զիշխանապետութիւն [3]: Վաղ իսկ յինքն ձգէր նա զայս ժողովրդեան՝ ի հռովմ՝ անուանքն, հանձարով, համբոյր բարուքն՝ որ հաձոյ էր ամենեցուն, և աւելի իսկ Թերևս կանանց:

Ի հնոտս Մարիոսի առն հօրաքեռ իւրոյ՝ կարգեցաւ ՚ի ջրբեթռանութեան ՚ի քրմապետութիւն Ատրանզդայ [4]: Ի վեշ

ինձ Թէ այր այդպիսի կարեցէ երկնել խորհուրդ աստիրաւութեան կործանելոյ զհասարակապետութիւն». Պլուտարքոս՝ ՚ի կեսար, Դ:

1 Սուեաոն. կեսար, խե: — Դարձեալ ասէր կիկերոն. «Խաբեցայ ընդ ձև գօտեւորելոյն». և ակնարկէր ՚ի պատմուձան նորա ատորոքարշ, որ տայր նմա կերպարան մեղկութեան. (Մակրոբիոս, Սատուռնալիանք, Բ. Գ):

2 Գիտե կատոս, խԳ. ԽԳ:

3 Վելլ. Պատերկ. Բ. խԱ:

4 Սուետոնիոս (կեսար, Ա) *սահմանեալ ասէ զկեսար ՚ի քրմապետութիւն Ատրանզդայ. Վելլէյոս պատերկուլոս* (Բ. ԻԳ) *կարգեալ զնա ՚ի քրմապետութիւն:*

*տասանամեայ խօսեցեալ, ակամայ արդեօք, զԱստուածիա դուստր տասեան մեծատան, ՚ի մեռանել հօր նորա եղեալ զխոստումն իւր[1], առ ՚ի խնամեռնալ ՚ի միւսում ամի ընդ կուսակրօնս Թեան ոամկին, կին ածեալ յամին 671 զկոռնելիա դուստր Լ. Կոռնելիոսի Կիննայ, երբեմն իշխանակցին Մարիոսի և նոցին հաճախոհի: Ի սմանէ ծնանիր յամին երկրորդի զՅուլիա, որ եղև ապա կին Պոմպէի[2]: Խեթիւ հայիր Սիլլա ընդ յարել պատանւոյն, յոր աներեւոյն աչք՝ մինչև ինչ գործեալ էր նորա հայհին ՚ի նա, այնու անձուկ զօրիւ ՚ի հակառակորդս իւր. փորձիր տիպել զնա զի արձակեսցէ զկոռնելիա, այլ եպիտ զնա անյողդողդ: Մինչդեռ աներեայն ինչ խոնարհիր առաջի կամաց նորա, մինչդեռ ՚ի հրամանէ նորա արձակիր Պիտան զԱննիա՝ զայրին Կիննայ[3], և Պոմպէոս մերժիր անարգանօք զկին իւր՝ զդուստր Անտիատիոսի զրաբելոյ ՚ի կենաց ՚ի պատճառս նորա[4], և ածիր ՚ի հիւթիւն զՄիլիա զարջու իշխանապետին, կեսար հաստատուն կայր յազատութեան վիրաւորեալ զգլուխ իւր ՚ի կլնու:

Վասն որոյ հասկածաւոր եղեալ կեսար զրկեցաւ ՚ի քրմու-

Ըստ մերում կարծեաց՝ առնմանեալ ՚ի պաշտօն քրմապետութեան, այլ չև եա հանդիսացեալ. զի առանց կատարման հանդիսին՝ առնմանեալ միայն համարիր ՚ի նոյն: Եւ հաւաստիք չհանդիսանալոյ նորա այն իսկ է, զի կարծեաց Սիլլա խափանել զքրմապետութիւն նորա. և գործեալ ըստ Տակիտոսի (Տ՚ընեփէ, Գ. ՃԸ)՝ յետ մահուան Կոռնելեայ Մերուլայ քրմապետութիւն Ապոլոնիդայ գտաբեաց զամս եօթանասուն և երկու, առանց ընդհատելոյ պաշտաման նորա: — Որով յայտ է քրմապետութեանն կեսարու չհամարել խափարէս ՚ի քրմապետութիւն, վասն չմոռանելոյ նորա ՚ի պաշտօն:

1 «Թողեալ զկոռնելիա՝ որ ՚ի մանկութեան նորա խօսեալ էր նմա». Սուետոնիոս, կեսար, Ա: — Բանք Սուետոնիոսի պարզապէս ցուցանեն խօսեալ զկոռնելիա և ոչ ամուսնացեալ, քանզի Թողուլ ասէ և ոչ արձակել, ըստ ճշդիւ նշանակութեան լատինական բային: Պլուտարքոս առաջին ամուսին կեսարու ասէ զկոռնելիա, Թէպէտ և համարի զՊոմպէա երրորդ նորա կին. (Պլուտարքոս. ՚ի կեսար, Ե:)

2 Պլուտարքոս, ՚ի կեսար. Ե:

3 Վէլլ. Պատերկ. Բ. ԽԱ:

4 «Որպիսի ապերասանութիւն ածել ՚ի ատեն կին յոյն առ կենդանութեամբ նախ առն իւրոյ, և հալածել անտի անարգաբար և անպիտաբար զԱնտիատիա, որոյ հօր նորա փոքր մի յառաջ փոխանակեալ էր զկեանս իւր վասն փեսային, որ անարգէին զդուստր նորա». (Պլուտարքոս, ՚ի Պոմպէոս, Ը:)

թենէ՝ և յօժարէ կինոջն, անժառանգաբար և յընչից ազգատոհմին: Հարկ եղև նմա թաքչել՝ի երջանկայս Հռովմայ առ՝ի զերծանել՝ի տարապրուքենէ. զոր առնոյին փոխէր երեւիօթս, թէպէտ տեղոյն տապալեալ. սակայն ձերբակալ լեալ՝ի խռովէ սիկարեանց վարձելոց՝ի Սիլլայ, որոցառ զգլխաւոր նոցա գնոանելիս Փապիտս կաշառաւ երկուց քանքարաց արծաթոյ (իբր 12,000 ֆր.)[2], և ապրեցոյց զկեանս իւր: Ոչ ինչ աւելորդ հանարիմք նշանակել առաջոր, զի՝ի հասանել կեսարս՝ի զերագոյն իշխանութիւն, և՝ի հանդիպել նմին ինքեան Փապիտայ, ներողամիտ գոյաւ առ նա անյիշաչարութեամբ[3]: Թափառէր նա յայնժամ առ Սաբինացիս: Արտաքին նորա և հաստատութիւն, ազնուատոհմութիւն, և երբեմն քրմապետութիւն, շարժէին զամենեսեան՝ի կարեկցութիւն: Եւ վաղվաղակի ազգ հոյակապք, որպիսի ոք Սրբելոյն էր Կոտտա՝ մօրեղբայր նորա, որպիսի ոք Մամերկոս Էմիլիոս իսկ խնամի նորա, բարեխօսէին վասն նորա[4]: Եւ առաքինի կուսանք, որոց բարեխօսութիւն ևեթ զդէմ ունէր ամենայն բռնութեան, ոչ խնայեցին զաղերս[5]: Յայնքանեաց Թախանձանաց յաղթահարեալ Սիլլայ, ուր ուրեմն տեղի եւ ասէ. «Քաջ է, եղիցի որպէս և կամիք դուք. այլ գիտասջիք՝ զի որում զջնորհէք զայդ խնդրիկ, պատրաստեցէք յաւուր միում զվրէժս աւազակութեան, յորոյ վերայ պատերազմեցաք՝ի միասին. Հաւատացէք ինձ՝ զի Մարիոս բազում բերիւ յինքեան պատանիս»[6]:

1 Սուէտոնիոս, կեսար, Ա:

2 Պլուտարքոս, ՚ի կեսար. Ա: — Սուէտոնիոս, կեսար, ՀԴ: — Վասն արժէից քանքարաց տես էջ 102, ծանօթութիւն. 3:

3 Սուէտոնիոս, կեսար, ՀԴ:

4 Սուէտոնիոս, կեսար, Ա:

5 Եսաեան կուսանաց արտօնութիւնք մեծամեծք էին. ՚ի հանդիպել նոցա յանցաւորի՝ որ ՚ի մահ ածէր, ազատութիւն շնորհէր նմա. (Պլուտարքոս, ՚ի Նոմա, ԺԴ:) — Վաղեր. Մաքս. (Ե. Դ. 6) պատմէ զդէպս. «Կլաւդիա Եսաեան սեռեալ զմի՝ի ռամկապետաց՝ որ գնայր խնդրանել բռնութեամբ զհայր իւր զԱպպիոս Կլաւդիոս Պուլկեր՝ի յաղթական կառացն, արկ զանձն ընդ ռամկապետն և ընդ հայր իւր իշխանութեամբն խափանելոյ զբռնութիւն»: — Կիկերոն (Ագենաբ. ՚ի պաշտպ. Կելիոսի, ԺԴ) ակնարկէ՝ի սոյն յայս դէպս նշանաւորս:

6 Սուէտոնիոս, կեսար. Ա:

Եւ կարի իսկ քաջ գուշակէր Սիլլա. քանզի Կեսար Հանդգն Մարիոսի էր զօրավար մեծ, բայց ընդարձակապոյն Հանճարով պատերազմի. Հանդգն Մարիոսէ Հակառակ սակաւապետութեան, այլ առանց կրից սաստկութեան և անպիտանութեան. և Հանդգն դարձեալ Մարիոսի՝ ոչ զլուխ կուսակցութեան, այլ այր սահմանեալ վասն իւրոյ դարուն։

Գ. Կեսարս նոր յԱսիա։

(673–674)։

Ոչ կամեցաւ Կեսարս կալ անկարեկիր՝ ի վնաս արիւնահեղ բռնակալութեան Սիլլայ, եւ գնաց յԱսիա, և եպիտ անդ հիւրընկալութիւն՝ ի Նիկոմեդէայ արքայէ Բիւթանիոյ. և յետ սակաւ միոյ կցորդ եղև մարտին ընդդէմ Միհրդատայ, որ տևէրն ցայնժամ։ Այլաւորդիք՝ որ՝ ի վարժս զինուց զհետ գնային զօրավարի բանակին, մտերմացեալ յարէին՝ ի նա որպէս վտանակից։ Ըստ այսմ օրինակի ընկերեր Կեսար Մ. Մինուկիոսի Թերմոսի կուսակալին[1], որ առաքեաց զնա առ Նիկոմեդէս՝ ի խնդիր օգնականութեան՝ ի պաշարումն Միտիլենեայ, ուր տիրեալ էին զօրք Միհրդատայ։ Յաջողեցաւ Կեսար՝ ի գործն, յոր առաքեալն էր, և՝ ի դարձին ձեռնտու եղև առնոյն քաղաքին. և վասն ազատելոյ իւրոյ զկեանս միոյ ուրուք՝ ի զինուորացն հռովմայեցւոց՝ ընկալաւ՝ ի Թերմեայ պսակ քաղաքական[2]։

Ոչ յետ բազում ինչ աւուրց դարձ արար՝ ի Բիւթանիա պաշտպանել զդաս ուրումն՝ ի սանից իւրոց։ Յաձախել նորա յարքունիս Նիկոմեդէայ՝ պատճառս ետ ամբաստանութեան զնանալ զկնի անելոյ՝ ի գործ ամօթալի։ Սակայն զկցորդութիւնն Կեսարու ընդ Բիւթանացիս՝ բնաւականապէս օրէն է ընծայել հնոյ հնութեան նորա ընդ հիւրասէր ասպնջականութիւնն ընկալեալ՝ ի նոցանէ. որոյ աղագաւ հասանէր միշտ նոցա յօգնութիւն, և պաշտպան իսկ եւկաց նոցա, որպէս է տեսանել՝ ի

1 Մուռենիոս, կեսար, Բ։

2 Մուռենիոս, կեսար, Բ։ — Պլինիոս, ժԲ. Գ։ — Ակլ. Գելլ. Ե. Զ։

հատուած ինչ ձառի նորա՝ պահեալ յԱւլոսէ Գելլիոսէ[1]։ Սակայն այնպիսի պատճառք խեղաթիւրք գնացից նորա ընծայեցան, մինչև՛ ի վէձս ուրեք ծերակուտին գտանին բանք նախատանաց զնամանէ, և յերգս անպատմ զօրականին՝ որ յաղթական կառաց նորա զՀետ գնային[2]։ Ա.յլ երկիծանութիւնքս այսոքիկ, որ յատելութենէ քան՛ ի ձշմարտութենէ յառաջ գային, որպէս ասէ նոյն ինքն Վիկերոն, յաստղոտիւն առնուել յեգեալ քան՛ ի հաշատոխ[3], տարաժամ՛ ի Հակառակորդաց իւրոց ծաւալեցան. այն է՛ ի յոյզս Հակառակութեան՝ յորժամ երկպառակ կողմանք առ՛ ի վաստհամբաւել զմիմեանս՝ ոչինչ

1 Կ. Կեսար, քրմապետ՝ յատենաբանութեան իւրում զԲիւթանացւոց այսպէս սկիզբն առնէ. «Հիւրամեծարութիւն ազգային Նիկոմեդեայ առ իս, զոր բարեկամութեան որ կցորդէ զիս ընդ այնոսիկ՝ զորոց ինդիր է առաս, ընկերն ինձ, ով Յունիոս Մարկէ, խոյս առ՛ ի պաշտամանէս (այն է՛ ի ջատագովելոյ զԲիւթանացիս). քանզի մտհոս չէ պարտ եղծանել զիւիշատակ գնացելոցն՝ առ մերձաւորս նոցին կենդանի մնացեալս, և ոչ առանց ամօթապարտ վատութեան մտրճէ է լքանել զանս, որոց պարտիմք պատապարան լինել յետ մերոց մերձաւորաց». Ալ. Գել. Ե. ԺԳ։

2 «Ոչ ինչ կարաց առնանել Համբաւոյ պարկեշտութեան նորա, առէ Սուետոնիոս, բայց միայն բնակութիւն նորա առ Նիկոմեդեայ. այլ այն կեղտ ծանր էր և ճնայուն, և նշաւակ կացոյց զինա երկիծանաց ամենեցուն։ Ջառացից զքաջածանօթ տողից Կալուսի Լիկինիոսի.

« Որ ինչ գոյր Բիթինիոյ և զըլկոլին կեսարու »։

Լռեցից զբանից Դոլաբելլայ և Կուրիոնի երկցու։... Անցից լռութեամբ և զՏրուալարտաւիօք Բիբուլէայ՝ որով զնշաւակէր նա հրապարակաւ զիշխանակից իւր կոչելով զինա նախատանիօք Դվոյ Բիթինիոյ։.. Մ. Բրուտոս պատմէ՝ Ոկտաւիոսի ուրուն, որ առ խելայեղութեան ասէր զամենայն, ողջունեալ արքայ զՊոմպէոս, և արքայուհի զԿեսար՛ ի բաղնաժողով ակնթի։ Նոյնպէս և Կ. Մեմմիոս դարձեալ զինա՝ զի ապատաւորէր Նիկոմիդեայ ընդ լռացեալս ապաս և գինի՛ ի սեղանի, յանկանէ յանուանէ յիշատակելով ընդ կոչնականս զբազումս՛ ի վաճառականաց հռովմայեցւոց։ Եւ Վիկերոն յաւուր միում յատենի Ծերակուտին, ուր պաշտպանէր Կեսար զդատ Նիւսայ դատեր Նիկոմեդեայ, յիշատակելով զերախտիս Թագաւորին առ ինքն, ասէր ցնա. «Թողցուք տղաչեմ զայս ամենայն. այլ չէ ինչ զանխուսափ որ ինչ ետուն քեզ և զոր՛ ի քէն ընկալաք»։ Ի յաղթանակին Կեսարու՛ ի վերայ Կելտաց, զօրականք յերգիծանս՝ զորս սովորութիւն էր երգել զՀետ կառաց յաղթականին՝ յաւելին զտող զայսոսիկ քաջածանօթս.

« ԸզԳալլիա Կեսար նուաճեաց, Նիկոմեդէս ըզԿեսար.
Ցաղթանակէ այժմ Կեսար՝ որ զԳալլիա նըւաճեաց.
Նիկոմեդ ոչ յաղթանակէ՝ որ նըւաճեացն ըզԿեսար »։

Սուետ. Կեսար. ԽԹ։

3 Վիկերոն, Համառօտ առ Ատտիկոս, Բ. ԺԹ։

Թոդոսին 'ի զրպարտութեանց [1]։ Այսպիսութեամբ հանդերձ բարուց ժամանակին՝ ոչինչ այնպէս ընտանեկար կարէր լինել պատուոյն Կեսարու, որպէս ամբաստանութիւնքս այսոքիկ· զի յոխորթիւն այնպիսի ոչ միայն առեալ էր 'ի զօրականին [2], այլ անկղնութեանց ընդ օտարի՝ ոտնհարութիւն հռոմէական պատուոյ։ Վասն որոյ Կեսարն, որոյ հնարիրութեանն պարտ էր առաջս ինա կացուցանել յայսպիսի կասկածանաց, արդարացի ցասմամբ մերժէր զայն յանձնէ [3]։

Յետ նախկին գինուորութեան իւրոյ 'ի պաշարման Մխտէ-լենեայ, գինուորեցաւ Կեսար և 'ի ծովամարտի ընդդէմ հինից հելլէնեցւոց՝ ընդ ձեռամբ Պ. Սերուիլեայ փոխանակ բդեշխին (676), որ ապա խաւարչացի կոչեցաւ տիրապետեալ Խաւարնոյ՝ ուր որջացեալ էին նոքա [4], և մասին Կիւլիկիոյ։ Ա. յԼ ոչ երկարեաց ընդ Սերուիլեայ, զի 'ի լուր մահուն Սիլլայ դարձ արար 'ի Հռոմ [5]։

Դ· կեսարու դարձ 'ի Հռոմ։

(676)։

Յերկարաձգել Հասարակապետութեանն՝ վտանգ առնէին պատերազմի 'ի վերայ կայր· քանզի բդեշխք երկոքին Կեսարեան

1 Համբաւքս այսոքիկ և այլ ևս զրպարտութիւնք սփռեցան 'ի Թշնամեաց Կեսարու, որպիսիք ոմանք էին Կուրիոն և Բիբուլոս, յեղեղեալ առեպ 'ի ծաղրական տարեգիրս Տանուսեայ Գեմինոսի (Սուետոնիոս, կեսար, թ), զորոց առ ոչինչ համարէր Սենեկա զվկայութիւնս· «Գիտես իսկ քանի արհամարհ են տարեգիրքք Տանուսիոսի, և որպիսի ինչ կոչին»· (Սենեկա, նոաղ· ՂԳ)։ Կասուլլոս այ իսկ զանուն գայթ արհամարհանաց, նոաղ· ոչբանէ, յոր ակնարկէ Սենեկա։

2 «Ի բանակին Մարիոսի էր քեռորդի մի նորա Կայիոս Լուկիոս, որոյ շամբելեալ 'ի սէր մերոյ 'ի գինուորացն իւրոց՝ անկաւ գնովաւ բռնաբարել գնա։ Զօրականին ձգեալ զսուր սպան զայրն ժանտ· և ածեալ յատեան Մարիոսի, փոխանակ պատուհասի գովեալ 'ի նմանէ՝ ընկալաւ պատիս, զոր սովորութիւն էր տալ 'ի վարձ արուեստի»· Պլուտարքոս, 'ի Մարիոս, ԺԵ։

3 «Ոչ դժկամակէր Կեսար գնա ի բանտաւէնն գնա հարեալ 'ի սէր Կլէոպատրայ· այլ ոչ հանդուրժէր գնա ի համբաւէնն գնա սիրեալ 'ի Նիկոմեդեայ· երդնոյր իսկ գնա գրպարտութիւն էր այն»· Տիոկասիոս, Յուլիոս Կեսար, էջ 30· տպ· 'ի Բարիզ 1678։

4 Որոսիոս, Ե· ԻԳ։

5 Սուետոնիոս, կեսար, Գ։

դոս և Կատուլոս ներհակախոհք՝ կազմ և պատրաստ էին գալ՛ի կռիւ։ Վեսպազիոս ընդդէմ կամաց Սիլլայ ամբարձեալ՛է բդեշխութիւն՝ սադրանօք Պոմպէի խառնս յուզէր. և որպէս Փլորոս ասէ, «Վառեաց զՀրովհ քաղաքական մարտի՛ն խարոյկ իշխանապետին»[1]։ Կամէր խափանել զկոնսելեան օրէնս, դարձուցանել ռամկապետաց զնրաւունս նոցա, և դաշնակցայց զկալուածս նոցա[2]։ Ա.յս ամենայն հայթայթանք ընդդէմ կարգաց տեսչութեան հաստատելոց յիշխանապետին՝ ըստ մտի էր Կեսարու. և ջանային իսկ հակառակորդք իշխանապետին հրապուրակ խոստմամբ ձգել զնեսար՛ի դաւակցութիւն՝ որ մեքենայէրն յայնժամ, այլ նա հրաժարեաց[3]։

Երդմնեցոյց ծերակոյտն զբդեաշխս գալ ընդ երեսս՛ի հաշտութիւն, և համարէր հաստատել զխաղաղութիւն տալով երկաքանչիւր նոցա վարչութիւն զինուորական՝ կուսակալութեամբ, Կատուլոսի Իտալիա, և Վեսպոսի՛ն Կելտս յայսկոյս Ալպեաց։ Ի գնալ Վեսպոսի՛ն դաւաւ նէր՝ էանց ընդ Եարուբիա, ուր համախոհք Մարիոսի եկին յարեցան՛ի նա։ Այլ եղև ծերակուտին, և կոչեաց զնա՛ի Հռոմ՛ի վերջ կոյս տարւոյն յաշխարհաժողով[4]։ Յայնժամ եթող նա զերուսս կուսակալ բանակեալ մերձ՛ի Մոդենա, խաղաց զօրօք իւրովք՛ի վերայ Հռոմայ։ Եւ՛ի պարտութիւն մատնեալ առ Սիլուեստեան կամքնջաւ առաջի Կատուլոսի և Պոմպէի, մեկնեցաւ՛ի ծովամնեայս Եարուբիոյ. և յետ վերատին պարտութեան՝ խոյս եառ՛ի Սարդինիա, ուր զրաւեաց Թշուառութեամբ զկեանս իւր[5]։ — Իսկ Պերպենա տեղակալ նորա ժողովել զկայց ծնայց զօրականին, էանց՛ի Սպանիա յարել՛ի Սերտորիոս։

Խնաստութեամբ հեռի եկայց կեսար՛ի խռովութեանց աստի. զի ոչ միայն էր վատահ՛ի բարս Վեսպեայ[6], այլ խոր-

1 *Փլորոս*, Գ. ԻԳ։
2 *Ապպիան.* Ա. ճԽ։
3 *Սուետոնիոս*, կեսար, Գ։
4 *Սալուստիոս*, Հպատ-ի քրէ, Ա. էջ 363։
5 *Փլորոս*, Գ. ԻԳ։
6 *Սուետոնիոս*, կեսար, Գ։

հէր ևս արդեօք ի նշխանապետութեան Սիլլայ էր՝ ի վերայ անցեալ բազում ժամանակ, ահարկութիւն մեծ էր նորա և օգտից՝ ի նամանէ ակնկալութիւն բազում. վասն որոյ էր մարթ հակառակ կողմանն՝ մինչև՝ ի վերայ մատց փոխոխութիւն գործեալ, յայլոյել զինուք: Պարտ էր՝ ի սկզբան ներմուծել ևեթ՝ ի միտս Հաստրակաց՝ աղարտեալ բանիւք զարհուրս բռնակալութեանն անկելոյ:

Սոլորակաև Հանատարհ մտից՝ ի քաղաքական պաշտամունն՝ էր դառնալոյ ընդդէմ աւազաց ոմանց[1]. չէր լինչ վոյթ զեղլոյ դառին. շատ էր գալ՝ ի յայտ նշանաւոր լինչ առնութեանն, և տալ ցոյցս հայրենասիրութեան:

Կոռնելիոս Դոլաբելլա՝ մի՝ ի մեռլոցաց Սիլլայ, պատուեալ բռնչիութեամբ և յաղթանակաւ, և երկու ամօք յառաջ կուսակալ Մակեդոնիոյ, ամբաստանեալ լինէր՝ ի Կեսարէ վասն հարստահարութեանցն գործելոց յառուս կուսակալութեան իւրոյ (677): Թէպէտ և անդառնալոյ էլ նա յառնէին՝ որոյ դառաւորք էին ձեռասունք իշխանապետին[2], սակայն ոչինչ պակաս գովութեան Հաստրակաց արժանի լինէր Կեսար վասն իշխելոյ իւրոյ դառախտել զառնէ՝ որում պատուարանք էին ազգք աւազք, և պաշտպան նորին Հարստախօսք երևելիք՝ Որտենսիոս և Լ. Արքելլոս կոտաս: Եւ դարձեալ այնպիսի իմն պերճախօսութեան արար հանդէս, զի այս առաջին առեներգանութիւն նորա կացոյց զնա անդառին իսկապէս հռչակաւոր[3]: Յաջողութեամբս այսուիկ խրախու-

1 «Ի պատիւ համարէին Հռովմայեցիք զդառախտազութիւնս՝ որոց չէին լինչ պատճառք անձնական կրից, և հաճոյ էր նոցա հալածել պատանեաց զյանցաւորս հանգոյն անվհեր ջանց յարձակելոց ընդդէմ երէց վայրենեաց»· Պլուտարքոս, ի Լուկուլլոս· Ա:

2 Պլուտարքոս, ի Կեսար, Դ: — Ասկոնիոս, ճառ վասն Սկաւրոսի, ժ.Զ· ճ· 245· տպագր· Շիւց:

3 Վալ· Մաքս· Ը· Թ· յօդ· 3: «Քան և մինչ ամի էր Կեսար յամբաստանելն զՈրտենսիոս առեներգանութեամբն, զոր ցարդ ընթեռնում պանչանոք»· (Տաւիտոս, Տրամախօսութիւն պէռէպորաց, ԼԴ:) — Ըստ կարգի ժամանակագրութեան՝ զոր ընտրեցաք, Կեսար փոխանակ քան և մինչ՝ քան և երկոց ամաց գոնէ լեալ յայնժամ: և զի Տակիտոս՝ ի նմին վկայութեան վրիպել զան երևուս, տալով Կրասոսի դառախտազն Կարրհնի զան ննևեւտասան, որ էր քան և մի ամաց,

սեալ, եկաւոչ արար ձգեաց զև. Անտանիոս Հիբրիդա յատեան Մ. Լսիուլլոսի դատաւորի՝ վասն ատպատակելոյ նորա Հեծե-
լազնդաւ՝ ի կոզմանս Յունաստանի, մինչդեռ Սիլլա դարձ առ-
նէր յԱֆրիկէ[1]: Դարձեալ և առ անպարտ արձակեցաւ ամբաս-
տանեալն, այլ յաձախեաց Հռչակ հայրենասիրութեան դա-
տախազին: Ոչ իսկ արդեօք առենաբանեալ նորա և յայլ դատս
անծանօթ մեզ: Տակիտոս յիշատակէ զՋատագովութիւն
նորա վասն Դեկիոսի ուրուն սամնիացւոյ[2], որ ոչ արդեօք
նոյն ինքն, զորմէ ասէ Կիկերոն խոյս տուեալ՝ ի տարապրու-
թենէն Սիլլայ, և դեռևս մարդասէր ընդունելութիւն առ
Աւլոսէ Կլուենտիոսէ[3]: Ա. յապէս կեսար ձեռներէց լինէր համ
արձակ՝ ի պաշտպանութիւն Յունաց կամ Սամնիացւոց հար-
ստահարելոց, որոց բազում ինչ կրեալ էր յառաջ քան զայժ-
մու կարգ տեսչութեան: Յինքն յանկուցեալ էր նորա մանա-
նանդ զբարեկամութիւն Յունաց, որոց կարծէք՝ մեծարոյ՝ ի
Հռոմ՝ յաձախէին զվարկ և զՀամբաւ:

Յարձակմունքս այսոքիկ ձգէին՝ ի նա զաչս ժողովրդեան, և
յայտ առնէին միանգամայն զարհուրելի նորա. քանզի Համա-
խոհք Սիլլայ առհասարակ զեռ ևս յիշեանութեան կային:

Ե. կեսարս նոր՝ ի Հռոտս:

(678–680):

Կեսարս Թէպէտ և արարեալ էր իւր անուն Հարստա-
խօսութեամբն, խորհեցաւ հեռի կալ՝ ի շփոթից՝ որք յուզէին
Իտալիա, և անօգուտ ևս արդեօք Համարեալ առաջարկու-

հաւանական է վերնել նորա նոյնպէս և՝ ի կեսար: Ապաքէն նոյն ինքն կասկիս
ասէ զոխս իւր՝ ի գէմս Կիկերոնի: «Քանզի վաղագոյն քան զամենեսեան մատեայ
՝ի հրապարակախօսել և ամաց քան և միոյ զայրն ազնուատոհմ կոչեցի յա-
ռեան». (Ձհռէպորաց, Գ. Ի. 74): Կրասոս հռետոր ծնեալ յամին 614, ամ-
բաստան յառնէր զկարբոնէ ըստ Կիկերոնի՝ ի 635. (Ձհռէպորաց, Ա. Իշ. 121):

1 Պլուտարքոս. ՝ի կեսար, Գ: — Ասկոնիոս, Մեինուինեան ճառին «Ի սպիտակա-
փայլ պատմուճանի». էջ 84, 89, տպ. Որելլեայ:

2 Տրամախօսութեան ձհռէպորաց. ԻԱ:

3 Կիկերոն, ճառ ձկլուենպէոյ, ՄԹ: Ձեռագիրք Կիկերոնի ունին զանուանդ՝ Կն.
Դէնիպիոս:

Թեան իւրում և տապնապ իսկ անձին կալ՝ի Հռոմէ: Օգնէ յաձախ քաղաքագէտ մարդկան առ տակաւ մի հեռանալ յաչէ· զի խոյս տան այսպէս՝ի վտանգաց հանապազօրեայ անվախճան վիճից, և վարկ նոցա փոխանակ տկարանալոյ՝ և ևս զօրանայ բացակայութեամբն: Վասն որոյ՝ի Ձմերանէ 678 ամին մեկնեցաւ Կեսար վերստին յԻտալիոյ՝ երթալ՝ի Հռոդոս՝ի կատարումն մակացութեանցն: Կղզիս այս յայնժամ միջակէտ գիտութեանց, բնակարան հռչակաւորագունից իմաստասիրաց, վարժոց էր ազատորդւոց. Վիկերոնի իսկ գնացեալ էր անդր ամօք ինչ յառաջ յաշակերտութիւն:

Եւ՝ի նաւել անդր՝ ձերբակալ եղև Կեսար՝ի հինից մօտ՝ի Փարմակուսա կղզեակ, ի՝ի Սիւռա կղզեաց յԱրշիպելագոս՝ի մուտս ծոցոյն Ադրամէտի[1]: Հինգ այսոքիկ յետ պատերազմին իսկ պ. Սերուիլիոսի Իսաւրացւոյ, առպատակէին ընդ ծով բազմաթիւ նաւատոմսաւ: Խնդրէին՝ի նմանէ փրկանս քան քանքար արծաթոյ (116,420 ֆր.), իսկ նա խոստացաւ յիսուն (291,000 ֆր.). որով հարկ էր նոցա մեծարել զգերին, և վաճառել ընդ նմա մարդասիրապոյս: Աւաքեաց նա զբարեկամութիւն, ընդ որս և զի՝ի տարկաց մերկասացւոց զնպիկրատ, խընդրեալ՝ի մերձաւոր քաղաքաց զդուստր արծաթոյն[2]: Թէպէտ յայսպիսի դէպս պարտականք էին գաւառք և քաղաք գտանակիցք հատուցանել զփրկանան, սակայն ոչինչ նուազ զարմանալի է և ցոյց Հոխութեան կողմանցն այնոցիկ, զի երիտասարդ ոք քան և չորից ամաց ձերբակալեալ՝ի կղզեակ մի փոքուն Ափոյ՝ տայր վաղվաղակի՝ի փոխ գումար մեծ:

Կեսարու մնացեալ միայն ընդ բժշկի ումեք և ընդ երկուս ստրուկս՝ի մէջ վայրենաւիտ աւազակացն, գիտաց պատկառելի լինել նոցա. և զաւուրս քառասուն եկաց ընդ նոսա առանց լուծանելոյ գիւշիկս ոտից և գլխոյ, առ՝ի չտալ կասկած փա-

1 Կղզիս այս Փերմաքոյ կոչեցեալ արդ՝ է՝ի մուտս ծոցոյն Հասէմ-Գալէսի: Պլինիոս և Սուէտան Բիւզանդացի միայն յաշխարհագրաց յիշատակեն զսա. և վերջինս այս յաւելու Աստուածոյ մեծանուն զօրավարին Փիլիպպեայ Մակեդոնացւոյ ապաստեալ աստ՝ի հրամանէ մեծին Աղեքսանդրի:

2 Պոլիենոս, Արուեսպ պոպերաղի, էր. ԻԳ:

3 Սուետոնիոս, Կեսար, Դ:

խաեաւթ ապրելոյ՝ ի լայղ[1]։ Ոչ իբրև գերի երևեալ՝ ի նոսա, առ Պլուտարքոս, այլ որպէս իշխան շուրջ պատեալ՝ ի թիկնապահս. և զի խաղայր ընդ նոսա, և զի քերթուածս արտասանէր, սիրելի միանգամայն և ահաւոր. առեր նոցա ընդ խաղ. «Եթէ լսցի ինձ միանգամ զերծանել՝ ի ձեռաց ձերոց, կախեցից զձեզ զփայտէ»[2]։ Սակայն՝ ի յիշատակել զՀռոմէ՝ յուշ լինէին նմա վէրք և հեռք, որ էին անդ, և ստէպ յերեզերէր. «Քանի՞ խնդայցէք կրասոս՝ ի պիտել ուր կամն»[3]։

Իբրև ընկալաւ՝ ի Միւեռեայ և յայլոց քաղաքաց զիբրեկանն, հասոյց անդէն հինից. և եղեալ՝ ի ցամաք՝ ձեպէր՝ ի սպառազինել նաւս, փութայր՝ ի վրէժխնդրութիւն։ Եհաս՝ ի վերայ նոցա մինչ խարխս արկեալ կային՝ ի նաւահանգստի անդ կղզւոյն. զերեաց զբեթէ զամենեսեան, և էառ զաւար նոցա։ Անտէոս զնոսա՝ ի բանտ Պերգամոյ՝ տալ՝ ի ձեռս Յունիոսի Սիլանոսի փոխանակի բղեշխին Ասիոյ, որում անկ էր պատուհասել զնոսա։ Բայց Կեսարու վաձառել կամելով զգերին առ՝ ի շահել ինչ, և Յունիոսի հրաժարելով, դարձաւ Կեսար՝ ի Պերգամոն, և եւս զնոսա՝ ի խաչ հանել[4]։

Անտի էանց՝ ի Հռոդոս աշակերտել Ապողոնիոսի Մոլոնի՝ որ յայնժամ վեհագոյն վարժապետն էր Հարտարախոսութեան, և որոյ եկեալ էր՝ ի Հռոմ յաւուրս 672՝ հրեշտակ՝ ի Հռոդացւոց։ Զայսու ժամանակաւ Մ. Ասրելիոս կոտառա փոխանակ բղեշխի, մի՝ ի մօրեղբարց Կեսարու՝ ընտրեցաւ կոսակալ Բիւթանիոյ, որ կոտակաւ՝ ի Նիկոմեդեայ արքայէ Թողեալ էր ժողովրդեան Հռոմայ, և կարզեցաւ զօրաւոր ընդ Լուկուլլեայ ընդդէմ վերոյհին արշաւանաց Միհրդատայ։ Կոտառա՝ ի պարտութիւն մատնեալ ընդ ծով և ընդ ցամաք մերձ՝ ի Քալկեդոն՝ ի մեծի տագնապի կայր. և խաղայր Միհրդատ՝ ի Կուզիկոն քաղաք դաշնակից Հռոմայեցւոց, զոր զերծոյցն

1 Վէլլ. Պատեր. Բ. ԽԱ։

2 Պլուտարքոս՝ ի Կեսար, Բ։

3 Պլուտարքոս՝ ի Կրասոս, Ը։

4 Սուետոնիոս իբր գործ մարդասիրութեան զդիակունս ևեթ ասպատակացն պատմէ կախեալ զփայտէ, յետ խեղդամահ առնելոյ զնոսա Կեսարու, առ՝ ի կարճել զտագնապ մահու նոցա. (Սուետոնիոս, Կեսար, Հդ։ — Վէլլ. Պատերկ. Բ. ԽԲ։)

ապա Լուկուլլոս։ Եւ դարձեալ՝ եւման զօրաւոր ալքայկն Պոնտոս առպատակէր՝ ի Փռիւգիա, և կոտրեալ անդ զամենայն Հռոմեցեայս, տիրէր՝ ի բազում գաւառս Տարսոս Փոքրն Ասիոյ։ Եշուկ մարտին, և վտանգ դաշնաւորաց ընդոստուցին զկեսար յոտանկնէն. անց յԱսիա, և զօրաժողով լեալ ինքնահրամանն, հալածեաց՝ ի գաւառէն զկողմնապետ Թագաւորին, և կալաւ՝ ի հնազանդութեան զքաղաքս, որոց կեղակարծ էր և գայթ՝ ի գայթի հաւատարմութիւն[1]։

Զ. Քրմապետութիւն Կեսարայ։ հազարապետ կայ զօրուն։

(680–684)

Մինչդեռ պատերազմէրն կեսար՝ ի ծովեզերեայս Ասիոյ՝ բարեկամաց նորա չէր մոռացեալ զինա. և կարեւոր համարեալ նմա դրամ ինչ ալբատան՝ կացուցին զինա քրմապետ փոխանակ մօրեղբօր նորա Լ. Աւրելիոսի Կոտտայ, որ յամին 680 բռնաշխ կացեալ, և՝ ի միտս ամի յանկարծամահ եղեալ էր՝ ի Կեղտս[2]։

Սոխակեցաւ նա վասն այսորիկ դարձ առնել՝ ի Հռոմ, մինչ դեռ յածեալ ջղջկին հէնք ընդ ծով՝ ի վերջ արեան ընկերացդ իւրեանց։ Առ՝ ի դիւրաւ խուսել յերեսաց նոցա, էանց ընդ Հանդրկին ծոց՝ ի նաւ քառաթի՝ երկոքումբք միայն բարեկամօք և տան տիկօք[3]։ Եւ՝ ի նաւարկելն՝ առագաստս լինչ նշմարեալ՝ ի հեռուստ, ձեռն էարկ՝ ի վաղակաւորն՝ ծանրագնոյ տալ զկեանս իւր։ այլ՝ ի դերև եղեալ երկիւղին, եհաս ողջամբ Յոտալիա։

Եւ ընդ հասանելն՝ ի Հռոմ ընտրեցաւ հազարապետ զօրուն՝ բազմագոյն յոյժ քուէիւք քան զընտրեալսն իւր Կ. Պոպիլիոս[4]։ Այս իշխանութիւն՝ ի վերայ հազար արանց՝ առաջինն աստիճան էր աւագութեան դիւրամատոյց ազատորդւոյ, ընտրութեամբ ազգաժողովին կամ զօրավարաց[5]։ Ոչ թուի

1 Սուետոնիոս, կեսար, դ։

2 Վէլլ. Պատերկ. Բ. ԽԴ։ — Ասկոնիոս, ի վերայ ճառին Կիկերոնի որ վասն Պիսոնի. տպ. Ոքսֆորդեայ։

3 Վէլլ. Պատերկ. Բ. ԾԴ։

4 Սուետոնիոս, կեսար, ե։ — Պլուտարքոս՝ ի կեսար, ե։

5 Հազարապետք զօրուն յընտրութենէ զօրավարաց կացեալք, կոչէին սովո-

Կեսարու պատեհ առեալ զյեղափոխութիւնն հանգամանաց՝ առ՚ի ձեռնամուխ լինել՚ի կարևոր պատերազմունս՝ յորս էր Հասարակապետութիւնն, և շահաւէտին զինք ամենեսեան։

Սերտորիոս մներ՚ի Սպանիա յաջողութեամբ զպատերազմն սկսեալ յամի 674 ընդդէմ զօրավարացն Սիլլայ։ Յամին 677 ՚ի յաւելու՚ի նա Պերպեննայ երեսուն գնդիւք[1], կազմեալ էր բանակ հզօր՝ պահել արութեամբ զդրօշ Մարիոսի, և տուեալ 300 Հռովմայեցւոց անուն ծերակուտի։ Եւ յաղթող լեալ Մետելլեայ ընդ ամն բազումս, մեծաւ զինուորական հանճարովն, հզօր ազդեցութեամբն՚ի Կելտիբերս և՚ի Լուսիտանիացիս, և զբոլսմբ առեալ զկիրճս լերանց[2], խորհէր հասանել անցանել զԱլպիս. զոր Սպանիացիք անդստին անուանէին երկրորդ Աննիբալ։ Ա.յլ Պոմպէոս առաքեալ շուտափո՚ի Սպանիա, եկն զօրացոյց զբանակ Մետելլեայ, և բարձ զամենայն յոյս ակնկալութեան Սերտորիոսի մնանելոյ Իտալիա, և վանեաց իսկ զինա անդր քան զՊիրենեանս։

Սակայն երկոցունցն իսկ զօրավարաց ջանք և չգունք ոչ կարացին նուաճել զՍպանիա, զոր յամին 680 ՚ի սպառ զոզջեա նուաճեալ էր Սերտորիոսի։ Ա.յլ յետ սակաւ միոյ՚ի ձախողութենէ զօրավարաց նորա, և՚ի դասալիք փախստեանէ զօրացն, կորոյս և ինքն զվստահութիւն։ Հանդերձ այսու ամենայնիւ մարթ էր նմա տակաւին ընդ երկար, եթէ վատ մտանութեամբ Պերպեննայ չէր զրաւեալ՚ի կենաց։ Պերպեննայ յաջողեալ Սերտորիոսի՚ի զօրավարութիւն բանակին, այլ ոչ ինչ օգտեալ սպանութեամբն՝ առելի եղև զօրութիւն և արհամարհ. և հուպ ընդ հուպ՚ի պարտութիւն մատնեալ յերեսաց Պոմպէի և ձերբակալ լեալ՝ սպանաւ սրա-

բաբար Ռուֆուսեանք, զի ընտրէին ըստ օրինաց Հռովմէական Ռուֆոսի. իսկ՚ի ժողովրդենէ ընտրեալքն հազարապետք՝ կոչէին Թողվականք, և համարէին իսկապէս առենակալք. (Տաճուն Ակամանիա, Մէյնուելեան աոաջնոյ ափենաբանուելեան կինէրան ընդդէմ Վէրէսի, էջ 142. տպ Որելլեայ. և Փեստոս, ՚ի բառն Ռուֆոսեան, էջ 261, տպ. Միւլլէր։)

1 Պլուտարքոս. ՚ի Սերտորիոս, ԺԵ. ԺՉ։

2 «Վատ իսկ կալեալ էր Թշնամւոյն զկիրճս՝ որ ածէին Իտալիա. բայց իւր (Պոմպէի) վանեալ էր զնա՚ի սաորոսկ Ալպեան լերանց վերստին՚ի Սպանիա»։ Սալուստիոս, Նամախանի Պոմպէի առ Թերոյպն։

խոշևսոշ: Ս.յսպէս վախճան եղև Սպանիական մարտին յա֊ մին 682:

Բայց Լուկուլլոս ոչ դադարէր յԱմիտա ՚ի հարկանելոյ զՄիհրդատ. նորա արուեստաւք զդէմ կալեալ, բանադնաց խակ լեալ էր ընդ Սերտորեայ. այլ յետ այնորիկ պարտեալ ՚ի Լուկուլլոսէ ՚ի Կապադովկիա (683), խոյս տայր առ Տիգրան արքայ Հայոց առ անել իւր, որ հարեալ ընդ հուպ մեծաւ պա֊ տերազմաւ, կորոյս զմայրաքաղաք իւր զՏիգրանակերտ:

Ապատակէին յայնժամ բարբարոսք յարևելս ՚ի սահմանս դլուխս Մակեդոնիոյ. հինք Կիւլիկիոյ առաջակէին համարձակ ծովէ ՚ի ծով, և Կրետացիք զէն առնուին յազատութիւն: Ծա֊ ռայասատամբ պատերազմ յարտս վարէր Վոտալիս. քանզի տրուակք անժառանգեալք, Թէպետ և սահիկ կոտրածիւ հուաձեալք ՚ի Սիկիլիա ՚ի 620 ամէ մինչև յ623, վերատին զլուխս ամբառնային: Չի զիտէր առեալ էր նոցա զօրութեան իւրեանց. մանաւանդ այնու՝ զի ՚ի քաղաքական մարտս կոխին իւրաքանչիւր առ ՚ի յաւելուլ հանախտն՝ յազատութիւն կո֊ չէր զնոսա:

Յամին 681, եօթանասուն սուսերամարտիկք պահեալք ՚ի Կապուա վտարանջեցին, և առաջնորդ նոցա էր Սպարտակոս, երեքին զօրական՝ գերեալ և վաճառեալ իբրև զգէն: Չև ՚ի զլուխ եկեալ տարւոյն, այնպէս ինն ստուարանայր զունդ նո֊ ցա, մինչև հարկ լինել Հռովմէական բանակաց դիմել ընդ դէմ նոցա, և Սպարտակոսի յաղթող լեալ ՚ի Պիկենան՝ խոր֊ հեալ խակ խաղալ ՚ի վերայ Հռովմայ քառասուն հազարաւ[1]: Բայց սահմանել մեկնել ՚ի հարաւակողմն Իտալիոյ՝ գերկեամբ ժուժկալեաց ՚ի կռիւ ընդդէմ զօրութեան Հռովմայեցւոց, մինչև Լիկինիոս Կրասոս յամին 683 ուղ լեգէոնօք ՚ի պար֊ տութիւն մատնեաց զնա ՅԱպուլիա: Սպարտակոս անկաւ ՚ի մարտի անդ, և ապրեալքն ՚ի գերեաց անտի բաժանեցան ՚ի քառեակ խումբս, որոց մին ՚ի խուսել իւրում ՚ի Կելտս հա֊ րեալ ՚ի Պոմպէոսէ՝ որ դառնայրն ՚ի Սպանիոյ, ցկոր և ցան եղև. խակ գերեալքն ՚ի պատերազմին որ ՅԱպուլիա վերջ հա֊

1 Վէլլ. Պատերկ. Բ. Լ. և 100,000՝ ըստ Ապպ. Քաղաք. պոլեմոս. Ա. ձժ:

զար այր՝ կախեցան ընդ երկայնութիւն Հանապարհին ի կա-
պուտս ցՀռոմէ:

Մարթ էր ակնարկս պատեհ առնուլ զդէպս զայսոսիկ յա-
ռաջադէմ լինելոյ յարուեստ զինուց, այլ նա անդորձ կայր
վասն կուսակցացն ԱԹէ Սիլլայ զօրավարելոյ բանակացն. զի ի
Սպանիա զօրավարէին Մետելլոս՝ եղբայր կնոջ իշխանապե-
տին, և Պոմպէոս՝ երբեմն նորին քաջագոյն տեղակալ. Այս-
լոա զօրավարէր Կրասոս՝ Թշնամի Ակտարուս, և Հանդոյն նո-
ցին կուսակից Սիլլայ. Այսիա՝ Լուկուլլոս վաղեմի բարեկամ
իշխանապետին, որոյ ընծայեալ էակ էր նմա զՅիշատակա-
գիրս իւր ի: Որով ամենայն ուրեք ընդ առաջ ելանէին Ակտա-
րուս իւրք՝ զոր չկամէր պաշտպանել, կամ զօրավարք՝ որոց չկա-
մէր զինուորել: Ի ժամանակին յայնմիկ Ակտարիոս յանդի-
ման առնէր ի Սպանիա զկողմն՝ զոր կամակար արդեօք ընդու-
նէր Ակտարս, այլ զարհուրէր նա ի քաղաքական պատերազ-
մաց: Վասն որոյ պինդ կացեալ ի խորհուրդս իւր՝ Թուէր յա-
ռաջին ամն կենաց իւրոց խոյս տալ լինամուլ ի գնելոյ ընդ
հակառակորդս իւր և ընդ ինքն միջնորմն անանցելի, որ յետ
արեանհեղութեան՝ բաժանէ միշտ զմանկունս միոյ հայրե-
նեաց: Գոն գործէր պահել բարձրագունի իւրումն հանդեր-
ձելոյ բաղդի՝ զանցեալ կեանս իւր անարատ յամենայն բռնու-
թենէ. որպէս զի փոխանակ երևելոյ առյաղայս գլուխ կոչ-
ման՝ քաղաքացիս:

Հասարակապետութեան, որոյ ամենայն ուրեք յաղթա-
նակեալն էր, մնայր յաղթանակել և ի վերայ զօրավարաց ի-
րոց յաղթականաց: Կրասոս և Պոմպէոս խրոխտացեալ ընդ
յաջողութիւնս իւրեանց՝ խաղային զօրօք ի վերայ Հռովմայ ի
խնդիր կամ ի յափշտակութիւն իշխանութեան: Զէր մարթ
ծերակուտին վստահել ի Պոմպէոս, որոյ տակաւ ինչ յառաջ
պրեալ էր ի Սպանիոյ նամանաւանի սպառնալից՝ խնդրել զի-
նուք վրէժս ի հայրենեաց, եթէ ոչ հատուցանէին իւր օգնա-
կանութիւն ընդդէմ Ակտարիոսի[2]: Ի նոյն ժամանակութիւն

1 Գլուտարք. ի Լուկուլլո. Ը:
2 Սալուստիոս, Հոպոխիէ, գ. 258:

*վառեալ Պոմպէոս և կրասոս, ոչ ոք յերկաքանչիւրոցն կա-
մէր կանխել արձակել զզօրս նւր, երկաքանչիւր ածեալ
զնւրան առ դրունս քաղաքին։ Վասն որոյ երկոքին խակ ընտրե-
ցան ՚ի բղեշխութիւն, երկոցունցն խակ ընտրհեցաւ առնել
յաղթանակ. և ՚ի հաւահմայից և ՚ի հասարակաց հաւանու-
թենէ ստիպեալ ՚ի հաշտութիւն, ալ բարեկամութեան ե-
տուն միմեանց, արձակեցին զզօրս, և հասարակապետութեան
եղև առ ժամանակ մի խաղաղութիւն անակնկալ*[1]։

1 Ապպիան. Քաղափան պատերազմունք, Ա. ԺԹ. 121։

Պատկերասրահ Ազգային Սեմերդպրեվ

ԳԼՈՒԽ Ը.

684–691։

Ը. Որ ինչ՝ ի ժամանակին յայնմիկ հանգստանալ Հասարակապետութեան։

(684)։

Ի վաթսուն և երից ամաց հետէ կեղեքեր Իտալիա յաւանին պատերազմունս՝ ի հասանել Պոմպէի և Կրասոսի՝ ի բռնակալութիւն։ Այլ փոխանակ խաղաղութեան՝ որում ցանկային ամենեքեան, և զոր հաշտութիւն երկոցունց ոտիցն թուէր խոստանալ, բազմապէսի կիրք և հակառակ իրերաց տենչք յուզէին տակաւին՝ ի ծոցի Հասարակապետութեան[1]։

Սիլլայ՝ ի մոի եղեալ էր հաստատել զնա անդրէն՝ ի վերոյ առաջնոց հիմանց նորա, այլ զամենայն թողեալ էր նորա ընդ խնդրուքք։ Ստացուածք և կեանք ինքնին միոյ միոյ՝ ի քաղաքացոյ էին՝ ի ձեռս հզօրագունին։ Ոչ ևս էին ժողովրդեան իրաւունք քուէից և մանր օրինաւոր յընտրութիւնս. աղքատութեան կորուսեալ էր զբաշխոյս ցորենոյ, ռամկապետից զբազմապատկեան արտունութիւնս, և հզօր դասու ասպետից պայմանաձանս քաղաքական իրաց և զտնտեսութիւն գանձուց աշխարհին։

Ոչ ևս էր ապահովութիւն արդարութեան՝ ի Հռոմ, և ոչ իրաւանց քաղաքացւոյ Իտալիա, որ այնպէս ծանրագնի տուգեաւքն էր, և ոչ՝ ի գաւառս խնամք հպատակաց և դաշնակցաց։ Դարձուցեալ էր Սիլլայ զարտունութիւնս աւազակ-

1 «Հասարակապետութիւնն, որպէս բանից կարգ է ասել, կարեվէր և հիւանդ, կարօտէր հանգստեան, թէպէտ և ծանրագնի հասանէր նմա տանալ պայն»։ Սալուստիոս, Հոպոխիէ, Ա. 68։

բերոյն, առանց մարթելոյ դարձուցանել ՚ի նոսա զառաջինս սասա զօրութեան. զտարերս ևեթ ապականութեան արկեալ ՚ի գործ, և օգնական իւր առեալ զնուաստ կերս, Թողոյր զՀետ իւր ընկերհաշտութեին ապիկար, և ժողովուրդ բոլորովին երկպառակ. քանզի բաժանէր երկիրն ՚ի Ձոխացեալս ՚ի բանակալութենէ, և ՚ի կողոպտեալս ՚ի նմանէ, վասն երկնչելոյ կորուսանել զառացեանն, այլոց ակն ունելով առանալ անդրէն զկորուսեանն։

Սզառաջելարն պանծացեալ ՚ի մեծութիւնս իւր և ՚ի նախնիս, և զակատեալ ՚ի վայելս զեղխութեան, հեռացուցանէր յաւազութեանց զնորատունսն մարդիկ[1]. և երկարատև իշխանութեամբն համարէր սեփական իւր զբարձր աւազութիւնս։ Կատն յաւերնաբանել իւրում՚ի ծերակուտին գոչէր. «Փոխանակ առաքինութեանց նախնեացն մերոց՝ է ՚ի մեզ զեղխութիւն և ագահութիւն. կարօտութիւն պետութեան, և Ձոխութիւն իւրաքանչիւրոց։ Պանծալք ՚ի փարթամութիւն, և սիրեմք զդատարկութիւն. չիք խոհր ընդ յոտին և ընդ լաւ. զամենայն վարձս առաքինութեանց կապակ գահավիրութիւն։ Եւ չեն ինչ զարմանք. զի ուր իւրաքանչիւր ոք զանձին ևեթ խորհիցի, առանին՝ հեշտութեան, և աստ՝ արծաթոյ և ընծայ սպաս տարցի[2]»։

Ի բազմաց հետէ ընտրութիւնք՝ արծաթոյ վաճառէին առանց ամօթոյ, և ոչ մի ինչ ՚ի հնարից անարժան համարէր առ ՚ի հասանել աւազութեան։ Լուծուլեալ ինքնին առ ՚ի ձեռս ածել զկուտակալութիւն Սզոյ՝ ոչ ամօթ համարեցաւ միջնորդ

1 «Տեսանեմք ցոր վայր երթեալ ժամանեն նախանձ և գրգռութիւն ՚ի սիրտ ազատորելոյ վառեալ յաւաքինութենէ և ՚ի ժրութենէ նորատունսն մարդկան։ Ի սուտ ինչ շուրջ յածել զաչս՝ քանզի գտանեք և որոգայթք լարին մեզ ՚ի նոցանէ։... Անյագնոյթ իմն և այլասեռք թուին նոքա, այնչափ ինչ միտք և կամք նոցա հակառակ մերոցս են». Կիկերոն, Երկրորդ գործողութիւն ընդեմ Վերեսի, Ե. 71։ — «Ազնուականքն երեսից աւանդէին զայս գերագոյն բարձ աւագութեան (գրգռելութեան ասեմ) ինքեանց միայն սեպհականեալ զայն. և ոչ ոք յանտոհմից, թէպէտ և ականաւոր և վաստակաւոր, արժանի գտանէր այնմ պատուոյ. զի ՚ի կեղտ իմն համարէր նմա անտոհմութիւն». Սալլուստիոս, Յուգուրթ, կգ։

2 Սալլուստիոս, կոփէինա, ծբ։

զբռոյն առնուլ զտարփածուն Կեղեգոսի[1]։ Եահայտաձառ խոշկի մտաց այնպէս ի տիրոյթս էր հասարեալ, մինչև միջտարփաց կաշառակուրծ ընտրութեան ունել իմն պաշտօն և անուն ըստ օրինի, և կոչել թաւխուղն՝ որ գնէին զքուեայս, թարգմանեալ՝ որ միջտարփէին, պատուիրչ՝ առ որս յատանդ կայր արծաթն հատուցանելի[2]։ Էին բազում գաղտնի ընկերութիւնք՝ առ ի պատանդել զիրաւունս քուէից, զատուցեալք ի տանեակս՝ որոց պետք անսային գերագունի գլխոյն, որ սակ արկեալ վաճառէր թեկնածուաց աւագութեան զքուեայս ընկերութեանն՝ արծաթոյ, կամ գաշնի ինչ ի շահ օգտի իւրոյ կամ իւրայնոցն։ Ընտրութիւնք ըստ մեծի մասին ի ձեռս սոցա էր, և Կիկերոն ինքնին՝ որ պարծէրն առեալ ընդ միաձայն հաւանութիւն կալոյ իւրոյ բռեաշխ, ի նոցանէ ունէր զառաջելագոյն մասն քուէից[3]։

Ասեանք ծերակուտին այնպէս յայտնի զամենայն վճիռս իւրեանց վաճառէին, մինչև Կիկերոնի բարձրաձայն նշաւակել զնոսա ասելով. «Ցուցից հաւաստեօք զչարահնար մեքենայս, զքարուսականս՝ որ ապականեն զդատողական իշխանութիւն ծերակուտին ի տան ամաց հեառ յանձնեալ նմին։ Նուիրէք յինէն ժողովուրդ Հռովմայ, թէ ուրպէս առաքեալ զատ ընդ ամն իբր յիսուն անընդհատ արար իրաւունս, առանց ուրուք յատենակալաց իւրոց անկանելոյ ի գոյգն ինչ կասկա-

1 Պլուտարքոս՝ ի Լուկուլլոս, Թ։

2 Կիկերոն, Առաջին պատգամաբերութիւն ընդդէմ Վէրրեսի, 8, 9, 12։ Երիւրդ պատգամաբերութիւն, Ա. 29։ — Ստանուն Ասկոնիոս, վասն առաջնոյ պատգամաբերութեան ընդդէմ Վէրրեսի. էջ 145. տպ. Որլլեայ։ Առեներաւանութիւնք Կիկերոնի լի են յիշատակութեամբ պաշտօնէիցս այսոցիկ կաշառելոց զքուեայս և զդատաւորս։

3 «Ի վերջին ամն յայսոսիկ, որք՝ որոց արուեստ էր հնարիւք որսալ զքուեայս ընտրութեան, յաջողէին չանիւք ի ձեռս բերել զամենայն՝ զոր ենդրէին ի քաղաքացոց ցեղի իւրեանց։ Գուն գործեա՝ ու և է հնարիւք ձգել ի քեզ զանկեղծ ապաստարութիւն նոցա, և զհաստատուն կամս յաջողելոց։ Կալցես զոր ենդրես, եթէ հաստուցանիցես որպէս պարան է. և վստահ եմ թէ կալցես, քանզի յերկուց ամաց հեառէ ջոլք յընկերութենէ հզօրագոյնք յընտրութիւնս, այսինքն են Մարկոսի Փոնդանեայ, Կուինտոսի Գալլեայ, Գայիոսի Կառնելեայ և Գայիոսի Որկիւեայ, խոստացեալ են քեզ։ Ընդ էի ի յանձն առնուլ քո զգաստ արանցդ, և գիտեմ որ ինչ խոստումն եղև քեզ, և որ ինչ երաշխաւորութիւն տուաւ յընկերաց նոցա». Ի Խնդիր Բժեչխոնիեան ասպետաւ կիներոն չեղբօրէ իւրմէ Կուինտեայ, Ե։

ծանս կաշառակուրծ դատաստանի. և ուրպէս՝ յորմէ հետէ՛ ի ձեռս ծերակուտին ամիսոխեցւոյ դատողական իշխանութիւնն, յորմէ հետէ կապտեցաւ ժողովուրդն յերեսանց՝ զոր ասէր՛ ի վերայ մոյ մոյ՛ ի մէնջ, և· Կալիդիոս կարաց ասել՛ ի դատապարտելն իւրեան, թէ չմարթէր առ՛ ի դատապարտել զիւրսակալ ոք պահանջել առանց նախատանաց նուազ քան զ300,000 սեստերաս. ուրպէս՝ Պ· Սեպտիմիոս առեղակալ ծերակուտին յանցաւոր դատել հարստահարութեան առաջի Ողտենեայ դատաւորի, յաւելաւ՛ ի տուգանս նորա և կաշառածին ընկալեալ՛ ի նմանէ՛ ի դատաւորութեան իւրում: ուրպէս՝ և· Հերենիոս և և· Պոպիլիոս առեղակալք՝ ըմբռնեալք՛ ի զօրաց գանձուց աշխատիչն, և Մ· Ամիլիոս՛ ի քրէական յանցանս, զոր՛ ի հարցափորձի՝ զի կաշառս ընկալեալ էր նոցա վասն իրիք՛ ի վճռոցն. ուրպէս զոմն ումանք՛ ի ծերակուտէն, որոց իբրև ելանէին անուանք՛ ի սափորոցն՝ զոր ունէր և· Վերրէս դատաւոր յայնժամ՝ ՛ի քաղաքին, վաղ ընդ փոյթ ջրքան տալ զվարկ իւրեանց ընդդէմ ամբաստանելոյն՝ առանց լսելոյ զդատ նորա. և ուրպէս դարձեալ զոմն ոք՛ ի ծերակուտէն, որ դատաւոր՛ ի նմին դատի բազմեալ՝ առնոյր արծաթ և յամբաստանելոյն՝ առ՛ ի կաշառել զընկերս իւր, և՛ ի դատախազէն՝ առ՛ ի տալ վճիռ դատապարտութեան ամբաստանելոյն: Այլ՝ ինձ արդ առաղել լաւ արժան բառական[1] նէն զյոռութիւնս զայս, զնախատինս և զաղէտս, որոց պարտաւոր զոմանի ողջոյն իսկ առեան ծերակուտէն»:

Հանդերձ ամենայն խստութեամբ օրինաց ընդդէմ զջնաքաղութեան զօրավարաց և հարկահանաց, և հանդերձ պաշտպանութեամբ աւագանւոյն Հռոմայ՛ ի վերայ ազգաց նուաճելոց[2], հեծէին նոքա ընդ հարստահարութեամբք կուտակալաց. և Վերրէս եկաց նախատիպ ժամուհ ապիրատութեանս, ինչպէս գոչէլ Կիկերոնի. «Հեծեն զաւառք առհասարակ, տրտնջեն ազինք ամենայն ազատք, բողոքեն թագաւորութիւնք հանօրէն ընդդէմ զջնաքաղութեան մերոյ և հարստահարութեանց:

1 Կիկերոն, Առաջին գործակալութիւն ընդդէմ Վերրէսի, 13:

2 «Ամենայն քաղաքաց ազգաց նուաճելոց են մի մի պաշտպանք՛ ի Հռոմ»· Ապպիան· Քաղք· պոփերազմունք, Բ· Դ:

Ընդ մեզ և ընդ Ովվիան չկոչ տեղի, Թէպէտ և հեռաւոր և Թէ անծանօթ, ուր անկրաւորութիւն մերոյ ժամանակիս և բռնակալութիւն մերոյ քաղաքացոց չկոյ հասեալ»[1]: *Բնաւ կինչ օտար աշխարհաց առ՝ի ընտրել զտարապայման պահանջ կուսակալաց և արքանեկաց նոցա, և առ՝ի հաստուցանել հարկահանաց զտուրս, բռնադատէին առնուլ արծաթ՝ի փոխ: Եւ զի՝ի Հռոմէ ևեթ էին փոխառուք, հարկ էր ծանր տոկոսեօք առնուլ փոխ. և աւազանին զՀետ վաշխից զսակաւ տեալ՝ ունէր զդառնս ընդ ձեռամբ:*

Զօրականն ինքնին՝ի քաղաքական մարտս էր ապականեալ, և զօրավարաց ոչ ևս էր փոյթ զհրահանգաց նոցա: «Փլամինիոս, Ակուիլիոս, Պաւլոս Եմիլիոս, ասէ Վիոն Կասիոս, հրամայէին քաջակիրթ զօրաց՝ որոց ուսեալ էր հնազանդել լուիկ հրամանի զօրավարաց իւրեանց: Կանոն կենաց նոցա էին օրէնք. ընդ ազնուականութեան անպատճոյճ կեանս յանձին բերել՝ի կշիռ պայմանին ամիսուիէին զծախս իւրեանց. առաջ քան երկինչել՝ի թշնամեաց: Իսկ յաւուրս Սիլլայ, քանզի զօրավարք բռնութեամբ զինուց՝ քան արժանեօք ամբառնային յաւարտութիւն, և սոքայքին ընդդէմ միմեանց զէն առնուլ քան ընդդէմ թշնամեացն, հարկ լինէր նոցա յինքեանս յանկուցանել զզօրն: Զօրավար կացեալ՝ շուայլէին զոսկի՝ի վայելս զօրականին, ծանրագնի զվաստակս նոցա գնեալ: Ի վաճառ հանէին զհայրենիս անխնայ. և զանձինս անպատմ տային՝ի տարկուիթիւն ապիրատից, առ՝ի նուաճել ընդ ձեռամբ նոցա զարս լաւս քան զինուս: Ա՛յս էր որ հալածեացն զՄարիոս՝ի Հռոմէ, և որ դարձոյցն զնա անդր ընդդէմ Սիլլայ. այս էր որ էան կինն ապանանել զՈկտաւիոս, և Փիմբրեայ՝ զՓլակկոս: Ակզբնապատճառ չարեացս եկաց Սիլլա, այն որ առ՝ի

1 Վիկերոն, Երէսուէ դոպոխոզոֆիե ընդդէմ Վէրրէսի, գ. 89: Յաւելու Վիկերոն և՝ի Թզթի ուրէք. «Ի տառապանաց քաղաքակցաց մերոց մարթ է մեզ խնամառակրել որ ինչ բնակիչք գաւառաց կրեն՝ի հարկահանաց: Յորժամ՝ի բաց բարձան բազում բաժք յԻտալիոյ, ոչ ևս զհարկաց լինէին արտունջք, այլ զբռնութենէ հարկահանաց. և աղաղակք Հռոմայեցւոց՝ի հայրենի երկրին, զաս իսկ յայտ առնեն զտառապանս դաշնակցաց՝ի ծագս հռոմէական պետութեան». — Համեմատ առ Կոռնիփոս, Ա. Ա. Բ:

հրապուրել յինքն զզօրս այլոց զօրավարաց՝ բռնալով սիրեաց զսակի ՚ի բանակին »[1]։

Օտարացեալ էին ՚ի ժամանակաց, յորս զօրականն յետ կարճատև պատերազմի՝ թողեալ զկնի դառնային անդրէն յաօր։ զի այնուհետև զամն բաղումն կացեալ ընդ զինուք, և զՀետ յաղթականն զօրավարին դարձ արարեալ տալ քուեայս ՚ի դաշտ Ա.րխին, ոչ ևս էր քաղաքացի, այլ մարտիկ դէտակին ՚ի պատերազմ։ Ի կատարել պատերազմացդ արձակէին զօրավարք զզօրս, և ծածկէր Խաղխա յանթիւ բազմութենէ հինաւուրց զօրաց, որք խառնէին ընդ զաղթականս կամ սիրէին ընդ գաւառս, պատրաստք ՚ի գնալ զՀետ ուրուք՝ քան հնազանդել օրինաց։ Ա.յսպէս բնութիւնք էին հինաւուրց զօրականացն Մարխոտ և Սիլլայ։

*Եւ թող զայս, սակաւանաց յառաջս տեղութիւն ծայրագոյնս անչափութեամբ կարկին, յորոց վերայ հաստատեալ կայ։ Եւ քանզի Հռովմայ զվեսաւոր զօրս պատերազմ էր, առնային օրինադրութիւնք ՚ի սկզբանէ հետէ հայէին ՚ի զինուորութիւն։ Բզէաշխք, առաջին առենակալք Հասարակապետութեան, ընտրեալք ՚ի ձեռն հարուրեակաց, այսինքն ժողովրդեան՝ որ վաճառել ՚ի զին ընտրէր զնոսա, էին զօրավարք։ Բանին կազմեալ ՚ի պատուականաց ազգին՝ տայր երդումն ոչ Հասարակապետութեան, այլ զօրավարին՝ որ զինուորեալ զնոսա ածէր ընդդէմ թշնամւոյն։ Երդումնս այս պահեալ երկիւղածութեամբ, կացուցանէր ինքնիշխանս զզօրավարս ՚ի վերայ զօրաց իւրեանց. և զօրք նոցա յետ յաղթութեան յօժարութեամբ տային զօրավարաց իւրեանց զմեծարանաց առնուն իրանց իրաւունս։ Եւ զինչ ապա բնականապէս յետ յեղափոխութեան իսկ աշխարհին, քան հաստատել զօրականին ձչմարիտ ժողովուրդ, և զօրավարաց ընտրելոց ՚ի նմանէ՝ օրինաւոր իշխանս Հասարակապետութեան։ Ձեղծմանց առհասարակ արմատք յանցեալս տարածանին, և գտանեմք զսկզբնապատճառս զօրութեան պրետորական գնդին առ ինքնակալօք՝ յառաջ եկեալ ՚ի սկզբնական կարգադրութենէ Հարուրեակաց

[1] Դիոն· Կասսիոս, 22, Հատուածք· ՃԱ, տպ· Կրոյ։

հաստատելոց ՚ի ձեռն Սերուխոսի Տուլլիոսի, և յիրաւանցն զոր ետ նոցա։

Թէպէտ չև ևս էր յայնժամ զօրականին այս առաւելութիւն զօրութեան, սակայն ոչ թեթև ինչ էր ազդեցութիւն նորա ՚ի վճիռս առնելին։ Ու սովորելովքն յաղնուականն վերանգս պատերազմաց, էր և բանակ ինն կազմ ՚ի խոռվութիւն, առնկեալ յաշխարհէն կամ յիւրաքանչիւրոց ոմանց՝ ՚ի գլխաւոր քաղաքս Իտալիոյ, և մանաւանդ ՚ի Կապուա։ Սոքա էին տասերամարտիկքն կազմք և պատրաստք հանապազ յօգնականութիւն որոց վարձկանէինն զնոսա, եթէ ՚ի վէճս ընտրութեանց[1], և եթէ ՚ի գինուորութիւն յառաքին պատերազմունս[2]։

Ա.յսպէս ամենայն ինչ դիմէր ՚ի կործանումն։ Ընդանայնական բռնութիւն տայր գինիանութիւն, և կաշառակուրծ գեղծումն զաւենականութիւնս։ Ոչ ևս ծերակուտին էր պետութիւն, այլ զօրավարաց. ոչ ևս այլ Հասարակապետութեան էին բանակք, այլ զօրավարաց՝ որք ածէին զնոսա ՚ի յաղթութիւն։ Տարեկք ապականութեան բազմազգիք ձգնէին զաշխարհն. դատաւորաց կաշառակրծութիւն, ընտրութեանց վաճառաշահ, ինքնիշխանութիւն ծերակուտին, բռնութիւն փարթամաց՝ որք հարստահարէին զաղքատն տոկոսեօք, և առան կոխէին զօրէնս անպատուհաս։ Երկպառակեր Հռոմ՚ի հակառակ կարծիս. վէպք յանցեալն միայն տեսանելով զփըրկութիւն, պատկառ կային ՚ի զեղծմունս, թէ գուցէ միով ՚ի քարանց խախտումն՝ զշինուածն ողջոյն տապալեսցէ. իսկ այլք յամրութիւն նորին՝ ընդարձակել կամէին զխարիսխն և զպատգամն նորին գործել նուազ երերուն։ Նոքա յօրինադրութիւնս Սիլլայ յեցեալ, իսկ սոքա զՄարիոսին կալեալ զանուն ՚ի նշանակ ակնկալութեանց։

Ծանուցք խնդրոց Հարկ է ունել կերպարան լինի պատմական առ անձնաւորեալ զտենչանս իւրեանց և զերերումն։ Ի լինել ուրուք միանգամ ընդունելի, մուտացնք լինին թերու-

1 Կիկերոն, Յաղագս պաշտամէից, Բ. 17։ — Ղամպանի առ Կոռնիպոս, Բ. 2։ — Պլուտարքոս. ՚ի Բրուտոս, ԺԴ։

2 Փլորոս, Գ. ԻԱ։

Թեանցն նորա, և եղեբանց իսկ, և մեծապարծումթիւնք ևեթ նորա յիշատակին։ Ա.յսպէս ՚ի Հռոմէ վերադիմնդրումթիւնք և կոտրածք Մարիոսի անյիշատակ լեալ, յաղթումթիւնք ևեթ նորա յիշատակին, որովք զերծաւ Իտալիա յարշաւանաց Կիմբրացւոց և Տեւտոնաց. աւասիկ ազէտք նորա, զոլեալ եաւ ամենայն իւր ընդդէմ ազնուապետութեան։ Ա.րա՜ վելութիւն կարծեաց հասարակաց յայտնի երևէր ՚ի բանս Չարտարախօսաց, համախոհացունից իսկ ծերակուտին։ Ա.յսպէս Կատուլոս և Կիկերոն ՚ի խօսելն զՄելլայ կամ զՄարիոսէ, որոց զրեթէ հաւասարապէս անգութ էր բռնակալութիւն, պատ համարիմն պարսաւել զառաջինն և պանծացուցանել զերկրորդն[1]։ Սակայն օրինաւք Մելլայ զեռ յազգոջ կայիմն, և համախոհք նորա ամենիշխանք, իսկ Մարիոսին ցրուեալ և անզօր[2]։

Վՙայ՝ որ ՚ի վաթսուն և վեց ամաց հետէ տեւէր ընդդէմ ծերակուտին նոյնին պնդութեամբ՝ չէր ինչ յաջողեալ, վասն չանկանելոյ երբէք պաշտպանութեան ոմանից յանդգնողի համ յանկաշառ ձեռս։ Գրակբոսեանց պակասէին զօրք, Մարիոսի՝ իշխանութիւն անարատ ՚ի հարստահարութենէ, և պատերազմին դաշնակցաց՝ անընդդիմութիւն ազգային միաբանութեան, որոյ գլուխ էր Հռոմ։ Իսկ Սպարտակոս առաջնամարտեալ զտրուակս, անդր և այս քան զնպատակն ապարՀանէր, և յաջողութիւն նորա սպառնայր կործանումն բոլոր աշխարհին, վասն որոյ եւ ՚ի դերև։ Ա.ռ ՚ի յաղթանակել կանխակալ կարծեաց՚ի բազմաց հետէ յաճախելոյ ընդդէմ հռոմ-

1 «Անուն Կ. Մարիոսի առնն մեծի, զոր երրեմն մարթեմք կոչել Հայր հայրենեաց, վերածնող ազատութեան մերոյ և փրկիչ Հասարակապետութեան». Կիկերոն, ճառ վասն Հոռքէրիոսի, ժ։ — «Ունիմ ինձ երաշխաւոր զյաւուրս ձեր ընդդէմ Սիլլայ». Դիոն Կասիոս, Լ.Զ. ժէ, Պերնաբանութիւն Կոքոլնեայ ՚ի Ծէրմանիա։ — «Ո՞ւր կայ գոանել այր ծանրաբարոյ, անյողդողդ, երևելի քան զինա (քան զՄարիոս) արիութեամբ, զգուշութեամբ և երկիւղածութեամբ». Կիկերոն. ճառ վասն Բալբեայ, ի։ — «Ոչ միայն ընդ օրինօք նորա (Սիլլայ) արկանեմք զանձինս մեր, այլ առ ՚ի խափանել յոռեգոյն անկարգութիւնս և ծանրագոյն սղեաս՝ հաստատեմք զինասին հասարակաց իշխանութեամբ». Կիկերոն, Երկրորդ պատիւանութիւն ընդդէմ Վերրեսի, գ. 35։

2 Պլուտարքոս. ՚ի կեսոր, Զ։

*Մխակաս պետութեան՝ կարօտէր ժողովուրդն առաջնորդի ու-
մեք պետապունի վաստակօք, և յաջողութեան դիպաց՝ որոց
պժուարին էր լինել կանխատես: Ասյլ էև ևս յայնժամ յե-
րևան եկեալ էր Հանճար Կեսարու, և յաղթողն ևեթ Սեր-
տորեայ Պոմպէոս՝ Հանդիսանայր անցեալքն և մեծապոծ
քաջութեամբք:*

Բ. Բռնիչխուրիւն Պոմպէի և Կրասոսի:

*Հակառակաւ գնացից Կեսարու մեծացեալ էր Պոմպէոս՝ի
քաղաքական պատերազմունս: Ի քան և երեքամենի ընկա-
լեալ էր նորա՝ի Սիլլայ զանուն զօրավարի մեծի[1], և համարէր
առաջին յարս պատերազմողս ժամանակին, նշանաւոր լեալ
Լատալիա, ի Սիկիլիա և յԱֆրիկէ ընդդէմ կուսակցաց Մա-
րիոսի, զորս ետ անխնայ կոտորել՝ի սուր սուսերի[2]: Բաղդն
ինքնին ձեռնտու լեալ էր նմա միշտ. ի Սպանիա մահուամբն
Սերտորիոսի կալեալ էր նորա անջան գյաղթութիւն, և՝ի
գարձի ւրուամ՝ փախստէից զօրացն Սպարտակոսի յեղակարծ
պարտութեամբ և կոտորածիւ ստացեալ գփառս գրաւ առնե-
ցեայ ահաւոր ապստամբութեանն. և ընդ հուպ դէպք՝ի բարի
յաջողեացեն նմա ընդդէմ Միհրդատայ գյաղթութիւնս կու-
լէեայ: Վասն որոյ իրաւամբք ոմն յերևելի մատենագրաց
ասէր, ի դէպ ժամանակի հասեալ միշտ գՊոմպէոս կատարել
՝ի փառս իւր գպատերազմունս յաղթութեամբք՝ որ՝ի փառս
այլոց պատրաստեալ էին[3]:

Ոամիկն՝ որ ողջունէ գյաջողուածս բազդին հաւատար
հանձարոյ, յաձախէր յայնժամ յաղթականին Սպանիոյ ըզ-
հարկ մեծարանաց. իսկ ինքն, որ չափաւորն էր մտօք և ան-
պարծ, վաստակոց իւրոց գրեր գչնորհս բազդին: Ինդրէր գիշ-

1 Պլուտարքոս. ՝ի Պոմպէոս, ԺԲ:

2 Եա սպանանել Պոմպէոս գԿարբոն, գՊերպեննա և գԲրուտոս գՀայր սպա-
նողն Կեսարու՝ որ անձնասուր էր լեալ նմին. իսկ Կարբոն՝ պաշտպան կա-
ցեալ էր մանկութեան իւրոյ և ապրեցուցեալ զժառանգութիւն իւր հայրենի.
(Վալեր. Մաքս. Ե. Գ. 3):

3 Ցիտանց առ Համիլտոնէի, Կոյնէտ, հա. Ա. էջ 30:

խանութքին առ՝ի Հռոմանալ նովաւ՝ քան յօգուտ արկանել զայն. ըղձակեր լինէր այնմ, ոչ առ՝ի յաղթող կացուցանել զկողմն մի կամ զկարգ, այլ առ՝ի վայելել՝ի նոյն խաղալեթեամբ՝ հաձելով զերկոսին եւ կողմանս: Վասն որոյ իշխանութքին՝ որ Հանապարհ էր Կեսարու, կէտ նպատակի էրնամ: Աղբարակորով էր, այլ երկիւղ, և գործ լինէր յանդէպս որոյ շողոմիկնն գնա: Բարեշնորհ և անկարօտ երևեալ ծածկէր զգահասիրութքիւն իւր, և հեռի առնէր յանձնէ զամենայն կասկած թեկն ածելոյ զպերապետն իշխանութեան[1]: Ջօրավար քաջ՝ի տուղորական պատերազմունս, արար իւր առնուն ցոլշափ դէպք չեղեն քան զկար նորա գեր՝ի վերոյ. և մեծ էր յայնժամ հանքաւ նորա՝ի Հռոմէ: Գնացք նորա միշտ էւ ցայնժամ ցուցանէին գնա առաջնորդ լեալ մանաւանդ հռակցութեան ազատանուոյն, այլ չնորհս կամելով գտանել առաջի ամենեցուն, և խնամուտ լեալ կարևորութեան զատելոյ ինչ ինչ յօրէնս, նախ քան գնուտ իւր՝ի Հռոմ՝ի հանդէս յաղթանակին՝ի վերոյ Կելտիբերաց, յայտ արար գիտուս իւր հաստատելոյ վերատին զարտունութքիւնս ռամկապետութեանց, վախճան առնելոյ առպատակութեանց և հարստահարութեանց՝ի զատուս, և զարձուցանելոյ զանազատութքիւն յատեանս, և մեծարանս առ զատաւորս[2]: Եւ էր յայնժամ ինքն սահմանեալ՝ի բռնակալութքիւն, և խոստմունք իւր յուզեցին զկին զկղձս Հասարակաց, զի մանաւանդ չարաչար տնտեսու-

1 «Բնաւորեալ էր անփոյթ երևել որում հեռամուտն էր»· Դիոն Կասսիոս, Լ.Զ· Է:— «Պոմպէոս այնչափ նենգ ամիտ էր, որչափ չափաւոր ոք՝ի գէմս երևէր»· Սալուստիոս, Հոպո-խիէէ, Բ· 176:

2 «Յատենաբանել Պոմպէի զառաջին զայն նուագ առ ժողովուրդն առ դրան քաղաքին երբև սահմանեալ՝ի բռնակալութքիւն՝ էին՝ի խնդիրս, որ Թուէին ըղձալի յոյժ լինել նոցա, և յայտ առնէր պղխաւորութքիւն իւր հաստատելոյ զկշռութքիւն ռամկապետաց: Ընդունելի էղէն բանք նորա ցայսվայր յաղօտաձայն հծծիւն հաւանութեան· այլ՝ի յաւելուլ զպաւառաց յաղարտ վարուքն և զհապճեպութքիւն, զառենից անուանարկութքիւն, զպաւաւորաց անամօթութքիւն, և զկորնդուրդ իւր բառնալոյ զանպատեհութքիւնն զայնոսիկ և բարեկարգելոյ, ոչ ևս հծծիւն եւթ լսելի լինէր, այլ ծափաձայն ամենեցուն ազաղակ, որում ժողովուրդն յայտ առնէր զառնչանս իւր»· Պլիկերոն, Ընտիր պատճառաբանութքիւնք վերրէմ վէրրէոէ, 15:

թիւն կուսակալութեանց և կաշառակուր զօշափաղութիւն ծերակուտին՝ ի դատաստանս՝ տային պահանջել ժողովրդեան ուժգին զվերատին հաստատութիւն արտունութեանց ռամկապետութեան, թէպէտ զեղծեալ էին նոքօք ռամկապետք[1]։ Ի բռնակալութենէ իշխանութեան յառաջ գան միշտ տարապայման իղձք ազատութեան։

Ոչ ըստ Ճարտար սադրանաց Կեսարու արար Պոմպէոս՝ նախ քան զմտանելն՝ ի Հռոմ զինքնակամ յայտարարութիւն զգօրծոց իւրոց, որպէս հանարին բազումք՝ ի մատենագրաց, այլ ըստ հզօրագոյն հրապուրանաց հաստատակաց կարծեաց։ Սպասէր զարուն զարուէր գնա վասն չինդրելոյ նորա զշահ իւրեանց[2], այլ կուսակից զօրաց ժողովրդեան ուրախ լինէին. և Կեսարու տեսեալ զի ըստ մտի իւրում և ըստ սրտի գործեր Պոմպէոս, հաստատեցաւ օգնել նմա հզօրեղապէս[3]։ Խորհէր արդեօք զի յայն տարեբս ապականութեան, յայնչափ յարհամարհանս օրէնսց, յայնչափ նախանձընդդէմ գժտութեանս և՛ ի զառաջանս գահախրութեան, իշխանութիւն միոյ ուրուք՝ զոր բաղդն դեր՝ ի վերոյ ամբառնայր՝ կարէցէ առ ժամանակ մի ապահովել զհանդերձեալս Հասարակապետութեան։ Սնկէղծ էր արդեօք այս օգնականութիւն. էր իսկ որպէս կարծեմք, այլ ոչ առանց ազնուականի լինի նախանձորդութեան. և ոչ գոյր նմա տեղի երկիւղի առ՝ ի չհարթելոյ զձանապարհ, յորում հաստատեալ նէր նմա յաւուր միում պատահել Պոմպէի։ Որ գիտակն է զօրութեան իւրոյ, զգայ նախանձ նենգաւոր ընդդէմ կանխելոց քան զինքն՝ ի նոյն ասպարէզ. այլ մանաւանդ ձեռն տայ նոցա, զի առաւել ևս փառք են նմա՝ ի հատանելն զհետ նոցին։

1 Կատուլոս հարցեալ զհատատութենէ իշխանութեան ռամկապետաց, պատասխանի արար այսոքիւք հզօր բանիւք. «Ծերակոյտն չառնէ իրաւունս՝ ՚ի գայթակղութիւն լեալ ժողովրդեան. և եթէ ըստ ակնկալութեան հուովմէական ժողովրդեան կամէր նա առնել դատաստան, չլինէր այսպէս ցանկալի իշխանութիւն ռամկապետաց». Կիկերոն, Առաջին դատախազութիւն ընդդէմ Վէրրէսի. 15։

2 «Ոչ այլ ինչ պարտաւէին՝ ի նմա թշնամիք իւր, բայց զի նախադասէր ծերակուտին՝ զժողովուրդն». Պլուտարքոս՝ ՚ի Պոմպէոս, Ի։

3 «Զնոն եւս ամենայն զօրութեամբ իւրով որոց կամէին հատատել զիշխանութիւն ռամկապետաց». Սուետոնիոս, կէսար. Ե։

Քանզի չկը Ճիգն նմանութեան՝ ու՛ր միայնակ մարթ կայէ ումեք հասանել՛ի նպատակն։

Պոմպէի իշխանակից էր Մ· Լիկինիոս Կրասոս, այր մեծանուն, և նշանաւոր լեալ զօրավարութեամբն՝ որպէս առաքս, բայց առաւել ևս Հոխութեամբն և սիրելի և հաճոյական բարուք հզօրացեալ։ Սա յաւուրս Սիլլայ արարուք տաբգրեցոյն Հոխացեալ, ժառանգէր Թաղս ողջոյն՛ի Հռոմէ, կառուցեալս յետ բազում հրդեհից. Հոխութիւն նորա հասանէր մինչև՛ի չորեքարիւր բիւրս ֆռանքաց[1], և զայն համարէր Հոխութիւն՝ եթէ ուրուք ձեռն հասանիցէ՛ի ոտձիկ բանակի մոյ զօրաց[2]։ Թէպէտ և բռնանայր՛ի նման արծաթսիրութիւն, այլ առանց խափանելոյ ազահութեամբն զառաւաձեռնութիւն։ Տայր փոխ բարեկամաց իւրոց առանց վաշխից, և էր զի սիրէր և պարգևս առաւաբար։ Քաջահմուտ էր՛ի զօրութիւնս և երևելի՛ի Հարտարախոսութեան. ձեռներէց լինէր յամենայն իսկ՛ի գաւս, զորս Պոմպէոս, Կեսար և Կիկերոն ոչ յանձն առնուին պաշտպանել. և պատրաստական ձեռնտուութեամբն որոց կարօտ էին նպաստից նորա, որոց փոխ՛ի նմանէ լմնդրէին, և որոց Հասանել՛ի պաշտօն, առատաբար զօրութիւն զուզակշռէր Պոմպէի։ Զի սորա Թէպէտ և մեծամեծ քաջութիւնս վՀարեալ, սակայն սաստ լինի մեծութեան և իշխանութեան բերելով յանձին, և փախչէր բնաւորեալ յամբոխ և՛ի տեսարանաց՝ օտարացուցանէր յիւրմէ զառաքինին, ու՛ր Կրասոս դիւրամատոյց գոլով և՛ի խառն ռամկին պարապեալ միշտ՛ի գործառնութիւնս, յինքն ձգէր զնոսա մարդասիրութեամբն[3]։ Չէր նա անյողդողդ՛ի խորհուրդս իւր, ոչ՛ի հաստատակաց և ոչ յառանձին կեանս, և չէր ևս ոչ բարեկամ անխտիրս և ոչ թշնամի անհաշտ[4]։ Եւ քանզի պատշաճագոյն գործ էր այլոց քան անձին՝ հասանելոյ յաւագութիւնս, օգտակար յոյժ եղև Կեսարու՝ որ զամենայն ջան՛ի գործ էարկ մեբրմանալոյ ընդ նմա։

1 7,100 քանքարս· (Պլուտարքոս՛ի Կրասոս, Բ։)

2 Պլուտարքոս՛ի Կրասոս, Ր։ — Կիկերոն, Յողագս պաշտօնէից, Ա· Ը։

3 Պլուտարքոս՛ի Կրասոս, Է։

4 Պլուտարքոս՛ի Կրասոս, Ը։

«Երեք հերձուածք էին յայնժամ՝ի Հռոմէ, ասէ Պլուտարքոս. և առաջնորդք հերձուածոյն Պոմպէոս, Կեսար և Կրասոս. իսկ Կատոն՝ որոյ զօրութիւն ոչ հաւասարէր փառասէր, զարմանալի էր քան հեռաւելն։ Խոհականք և զգաստք՝ի քաղաքացոյ կուսակից էին Պոմպէի. ժիրք և ձեռնհասք և յանդգնութիք զհետ ակնկալութեանցն Կեսարու լզձային։ Իսկ Կրասոս՝ի միջասահմանին կալով երկոցունց կուսակցութեանցն, երկոքումբքն իսկ ջանայր վարել յօգուտ»[1]։

Ա. նախկին քրեշխութեամբն իւրով ոչ յայլ ինչ թուի ուշ եդեալ Կրասոսի, բայց՝ի շուայլել և՝ի կալ զգուշութեամբ անմէտ՝ի կուսակցութիւն։ Արար նա զոհ մեծ Հերակլեայ, և նուիրեաց նմա զտասանորդ եկամտից իւրոց. ետ ժողովրդեան մեծահաց կոչումն՝ բնիւր մի պատրաստեալ սեղանս, և բաշխեաց իւրաքանչիւր ումեք՝ի քաղաքացւոց ցորեան՝ի թոշակ եռամսեայ[2]։

Պոմպէոս կարևորագունից ևս իւրոց պարապէր. զի՝ի թիկունս իւր ունելով զԿեսար, ընդունելի արար բազում օրէնս՝ հակառակ օրինադրութեանցն Սիլլայ։

Ա. աջնի յօրինաց անտի էր՝ տալ վերատին ռամկապետաց իրաւունս առաջարկելոյ օրէնս, և բողոքելոց զայնցանէ հաւաստութեամբ ժողովրդեան. վաղ իսկ յամին 679 տուեալ էր նոցա և իշխանութիւն հատանելոց յայլ առենակալութիւնս։

Երկրորդն հայէր յարդարութիւն առնից. քանզի փոխանակ թողելոյ՝ի ձերակոյտն զամենայն իշխանութիւն գաւառապահան, կուսակալն Աբեղիոս Կոտտա մօրեղբայր Կեսարու՝ առաջարկեաց օրէնս՝ի միութիւն հատարակաց շահուց, առնուլ զերիս մասն գաւառօրաց յերեցունց գաւուց, այն է՝՝ի ձերակուտէն, ՝ի կարգէ ասպետաց, և՝ի հազարապետաց գանձուն, առաւելապէն մասամբ՝ի ռամկէն[3],

1 Պլուտարքոս. ՝ի Կրասոս, Ը։

2 Պլուտարքոս. ՝ի Կրասոս, Ա և ԺԲ։

3 «Զգաստութեան պաշտօն զոր Կ. Գրակքոսն հանեալ՝ի ձերակուտէն տուեալ էր ասպետաց, և Սիլլայն անդրէն՝ի նոցանէ առ ձերակոյտն գործոյ, բաժանեաց Կոտտա յերկուսին՝ի նոսա հաւասարապէս». Վէլլ. Պաթերկ. Բ. ԼԲ։

Ս.յԼ օգտակարապոյն Հնարք՝ ի դեղ դարմանոյ վէրաց Հաւարակապետութեան՝ եղև մուրհակն մուացութեան Պետիոսի ռամկապետի վասն ամենեցուն, որոց՝ ի քաղաքական պատերազմի զէն առեալ էր։ Ի Թիւս նոցա էին ապրեալք բանակին Վեսպեսեայ՝ որ ծնացեալ էին՝ ի Սպանիա՝ ի մատնել Վեսպասիոսի՝ ի պարտութիւն, ընդ որս և Լ. Կոռնելիոս Կիննա եղբայր հինջ Կեսարու։ Սա ինքն Կեսար՝ յաւելուածոյ իւր, որոց Հաւատածք ևեթ Հասին առ մեզ՝ ի ձեռն մատենագրաց, զամենայն ջան՝ ի գործ էարկ ընդունելի առնելոյ զառաջարկութիւնն զայն[1]։ «Երկարագոյնս եցոյց թէ քանի՞ պատշաճ էր արագ արագ սահմանիլ զհնարս հաղորդելոյ, և խելարուռտ արար զնոսա զի չէր մարթ գտանիլ ժամանակ պատեհագոյն քան զայն»[2]։— Ընդունելի եղև առաջարկութիւնն առանց Հակառակութեան, և ամենայն ինչ Թուէր ձեռնտու՝ դառնալոյ անդրէն յառաջին սահմանադրութիւնս։ Համարակալութիւն, յեօթնևտասան ամաց Հետէ խափանեալ վերատին Հաստատեցաւ, և Լ. Գելլիոս և Կ. Լենտուլոս Հանդրկաւ կացեալ՝ այնպէս անուշադիր խստիւ վարէին զիւրեանց պաշտօն, մինչև վաթսուն և երեք այր՝ ի ծերակուտէն արտաքսել, զձեռնտատուն Սիլլայ՝ որպէս Թուի Հաւանելի։ Ի Թիւս արտաքսելոցն էին նշանաւորք Կայիոս Ասինոնիոս՝ ամբաստանեալն յառաջագոյն՝ ի Կեսարէ, և Պուպլիոս Լենտուլոս Սուլա, բղեսաչխ 683 տարւոյն։

Ս.յս ամենայն յեղափոխութիւնք առաջարկեցան՝ ի Պոմպէոսէ կամ ընդունելի եղեն նմա, առ՝ ի հաձել զամբոխն՝ քան՝ ի հնազանդութիւն վճռելոյն։ Կորոյս նա այսուիկ զհզօրագոյն ներգոյն հաստատութեան իւրոյ՝ որ էր աւազորեայն, առանց սահմանելոյ՝ ի միւսում կողման զառաջինն տեղին, զոր կանխեալ գրաւեալ էր Կեսարու։ Բայց Պոմպէի յանդգնեալ՝ ի քաջութիւն իւր՝ համարէր ոչ ումեք գլեալ զիւրև՝ ի սահ

1 «Ապաքէն առ ազգակցութեան մերոյ Թուի ինձ ոչ ինչ՝ ի ջանից, ՝ի Հգանց և ՝ի հնարից Թողեալ»· կեսար, առ Աւլոսի Գելլեսի, ժԳ· Գ։— Նոնիոս Մարկել լոս, վասն այլ և այլ նշանախոսութեան բառից, ՝ի բառն Necessitas։

2 Սալուստ· Հպատ֊ֆիլ֊, Ա· 68։

զօրութեան. և դէպք՝ի բազում յաջողեալ միշտնման, սովորեալ էր տեղւոյն տալոյ առաջի իւր խրոխտանացն Սիլլայ, և վեհափառութեան օրինաց: Քանզի հակառակ կամացն Սիլլայ, և առանց զօրինական պայմանին կատարելոյ, ՚ի քան և ՚ի վեց ամի տիոցն ընկալեալ էր զիշատս յաղթանակի. և դարձեալ ընդդէմ օրինաց ընտրեալ էր նմա երկրորդ անգամ յաղթանակել, և բռնակալութիւն արտաքոյ խակ Հռովմայ և առանց անցանելոյ ընդ օրինաւոր դասակարգ աստիճանաւորութեանց: Վասն որոյ ապաստանեալ յանձն փորձիւ անցելոյն, վստահ յառաջիկայսն, և նեղկայիւքն հրապուրեալ, կարելի համարէր խոցել զառապարեանն ՚ի շահ օգտի նոցա՝ առանց ուծացուցանելոյ զնոսա յինքեանէ, և ընթեալ զախտաժակս և զկիրս ժողովրդեան՝ առանց կորուսանելոյ զիշատս իշխանութեան իւրոյ: Ի վերջ կոյս բռնակալութեան իւրոյ, այն որ առաջինն էր յաւազանին Հաստարակապետութեան, և որ գեր՚ի վերոյ ամենեցուն հաճարէր զանձն, յանդիմանեն եղև որպէս մի՚ի սինկքոր զօրականէն ՚ի տարեկան հանդէս համարոյ աստեղաց: Հիացումն մեծ եղև առ ժամն համարակալաց բաղմելոյ յաւեհի անդ՝ ՚ի տեսանելն զՊոմպէոս անցեալ՚ի միջոյ ամբոխին, սպասք հանդերձանաց բռնակալական իշխանութեան զառաջեաւ, ածելով զերիվարսն իւր կալեալ զանձէից: Ամբոխին միտքն ցայժամ լուռ ևեթ կացեալ, գոչեաց յայժամ զարմացեալ ընդ այրն մեծ՝ որ փառս անձին համարէր անցանել՚ի կարգ ստեղաց, և հպատակել սովորութեան օրինաց: Ա՛յլ՚ի հարցանել համարակալաց՝ թէ էր նորա մղեալ զամենայն պատերազմունս պահանջեալ յօրէնացդ, արար նա պատասխանի. «Ա՛յժ, արարի ինձէն զամենայն, զի չէր ոք զօրավար քաց յինէն»[1]: Ա՛յս խրոխտ պատասխանի յայտ առնէ, զի գնացք Պոմպէի էին կեղծիք հաստութեան, և անբերելի կերպ գոռոզութեան, ըստ բանից Մարկոսի Ա՛ուրելեայ:

1 Պ՚րուտարքոս. ՚ի Պոմպէոս, ԻԱ:

Գ· Գանձապետության կեսարու:

(686):

Ոչ անարժան ինչ անձին հասանելով այնուհետև կեսարու զկրօնական պաշտամունս, այլ առ՚ի տալ նոցին ազդուԹիւն՚ի միտս մարդկան, խնդրեր պարապ· և ընդ հուպ եառն զայն դէպք: Ոչ յետ բազմաց ինչ կալոյ նորա գանձապետ և ընդունելի լինելոյ յատեան ծերակուտին՝ մեռան հօրաքոյր նորա Յուլիա և կին իւր Կոռնելիա, և փութայր կեսար առնել՚ի վերայ նոցա Հառաջամանական, առ՚ի յայտ առնել սուրբ զքաղաքական առԹիւն իւր[1]: Սովորութիւն էր՚ի Հռոմի խօսելոյ ներբող վկանանց, բայց զվախճանելոց անցեալ գաւուրըք: Կեսար լսեալ ոչ սովորութեանն՝ ընկալաւ զհառաջադոյն առնելոյ դրուատիս զմանկամարդ կինոջէն, զոր Պլուտարք[2] ընծայէ դիւրապգած սրտի նորա և բարեհամբոյր բարուցին: Բայց ժողովուրդն ոչ միայն գովէր զկեր նորա առ ընտանիսն, այլ առաւել և բարձրացուցանէր զքաղաքավարական միտս նորա՝ որ համարձակէրն ներբողել զայրն Յուլեայ զանուանին Մարիոս, որոյ պատկեր մոմեղէն լսեր հրամանի Կեսարու ածեալ՚ի հանդէս անդր յուղարկաւորութեան, զայս առաջին անգամ յետ տարապրութեանն Սիլլայ գայր յերևան[3]:

Յետ պաշտելոյ զվերջին պարտան առ ամուսին իւր՝ չոգաւ Կեսար գանձապետութեամբ ընդ Աֆտիտեայ վէտոսի կուսակալէ՚ի Սպանիա որ յայնկոյս[4]: Գանզի բաժանէր յայնժամ Սպանիա յերկուս մեծամեծ գաւառս. ՚ի Սպանիա որ յայնկոյս՝ կոչէցեալ ապա Տարակոնեան, և ՚ի Սպանիա որ յայնկոյս՝ բովանդակելով զԲետիկէ և զԼուսիտանիա[5]: Սահմանագլուխք գաւառացս էին Ձղիւ որոշեալ՝ որպէս Թուէ,

1 Պլուտարք· ՚ի կեսար, ե: — Սուետոնիոս, կեսար, զ:

2 Պլուտարք· ՚ի կեսար, ե:

3 Պատկերք Եննեայ, Հռոմուլոսի և Թագաւորաց Երկայնն Ալբայ հանդիսանային ՚ի յուղարկաւորութեան առհմին Յուլեայ· (Տակիտոս, Տրէգր, Դ· թ:)

4 Պլուտարք· ՚ի կեսար, ե: — Վէլլ· Պատ· Բ· խգ:

5 Կիկերոն, Ճառ վՄանիլեան օրինաց, ԺԲ· պիոնպեայ, Բ:

այլ հանգրվեալ յայնժամ՝ ի մեջ երկոցունցն տահմանաց անտառի կաստողիևսի որ արդ կոչի Սիերրա Նէվատա և Քալիֆորնիա[1]։ Եւ ոչ չիզապոյն՝ ի հիւսիսակողմն էին եզեալք տահմանաց. զի չև ևս Ամերիկայիք էին՝ ի սպառ նուաճեալ։ Մայրաքաղաքք այնր կողմանն Սպանիոյ էր Կորդուբա, ամենու կուսակալեին[2]։

Գլխաւոր քաղաքք կցորդեալք անդստին ընդ միմեանս աներկբայապէս գինուորական Հանապարհօք, էին միջակէտք հանուրցն կցորդութեան, յորս գումարէին ժողովք՝ ի յանձնառու իրաց աշխարհին։ Ժողովքս այսոքիկ կոչէին համաժողովութիւն Հռոմայեցւոց[3]. զի ժողովականքն էին քաղաքացիք Հռոմայ բնակեալք յաշխարհին։ Կուսակալք կամ փոխանորդք նոցա ամի ամի բազմէին անդ նախագահ[4]. և իւրաքանչիւրոց՝ ի գաւառացն Սպանիոյ էին ժողովք բազումք։ Յաւելեալ դարու մերոյ Թուականութեան էին ժողովք երեք՝ ի Լուսիտանիա և չորք՝ ի Բետիկէ[5]։

Վեսար փոխանորդ երթեալ կուսակալին՝ ի քաղաքս յայսմիկ, գահերէց բազմէր ժողովոյն՝ առնել իրաւունս, և երբեմն լինէր հաշտարար և արդարակորով մտօք[6], ցուցանելով Սպանիացւոց փոյթ մեծ՝ ի բարեվարութիւն նոցա[7]։

Եւ քանզի բարք արանց ասպատց յայտնին՝ ի դէպս դուզնաքեայս, չէ լինչ աւելորդ նշանակել աստ զանմոռաց ընտրհա-

1 Կեսար, Պատերազմ քաղաքական, Ա. ԼՀ։

2 «Սէքստոս Պոմպէոս ունէր զկորդուբա, որ գաւառին այնորիկ գլխաւոր քաղաք համարէր». Կեսար, Պատերազմ Սպանիոյ, Գ։ — Պլուտարքոս՝ ի Կեսար, ԺԷ։

3 Կիկերոն, Երիորդ դատախազութիւն ընդդէմ Վերրեսի, Բ. 13։ — Պաւլոս Սարկաւագ՝ ի բառն Conventus. Միւլլեր, էջ 41։

4 Կիկերոն, Երիորդ դատախազութիւն ընդդէմ Վերրեսի, Բ. 20, 24, 30։ Գ. 29։ — Ղամպանի ընդանէիան, ԺԵ. Դ։

5 Պլին. Բն. Պատ. Գ. Ա. և Դ. Լե։ Երբեմն ազգաժողովք Լուսիտանիոյ գումարէին Եմերիտա, ի Պաքսուլիա՝ որ արդ կոչի Պէյա և ի Սկալաբիս. և չորք Բետիկեայ՝ գումարէին ի Գադէս, ի Կորդուբա, Ճաստիգի, և ի Հիսպալիս. որ արդ կոչին Քատիչէ, Քորտուվա, Էչիճա և Սեւիլիա։

6 Դիոն Կասիոս, ԽԴ. ԼԹ, Խա։

7 «Ի սկզբանէ անտի գանձապետութեան իմոյ ցուցի երկցապոյն գութ և ինամ գաւառիս այսմիկ». Ախենաբանութիւն Կեսարու ընդ Սպանիացիս՝ ի Հիսպալիս, Կեսար, Պատերազմ, Սպանիոյ, Խբ։

կալիս Կեսարու զմարզամիրութենէն Վեռոսի ընդ իւր։ Պլուտարքոս աւանդէ զանքակ բարեկամութիւն նոցա միշտ ընդ միմեանս, և զի Կեսար յամբաւնալ իւրում՝ ի կուսակալութիւն՝ փութացաւ կացուցանել զանձնապետ զորդի Վեռոսի, այնպէս յայնժամ երախտապուշ՝ որպէս յետոյ եղև անկիշաչար։

Այլ սէր փառաց և գիտակցութիւն մեծամեծ բարեմասնութեանց իւրոց մղեր զնա՝ ի հանդէս կարևորագոյն գործոց անժոյժ տենչանօք, զոր յայտնեաց իսկ ընդ հուպ։ Զի յաւուր միում յելանելն յայց՝ ի Գադէս, որպէս երթեմն Աննիբալ և Սկիպիոն[2], մեծահռչակ մեհենին Հերակղեայ, և՝ ի տեսանել անդ զանդրին Աղեքսանդրի, աւաղեր զանձն հատաչելով՝ զի և նա ինչ արարեալ էր իւր՝ ի հասակի՝ յորում առնն այնպիսի մեծի նուաճեալ էր զաշխարհ աւեղայն[3]։ Զի էր յայնժամ Կեսար երեսուն և երկուց ամաց, իբր՝ ի հասակի՝ յորում Աղեքսանդր։ Ինդրեաց ապա հրամանն դառնալոյ՝ ի Հռոմ, և ընկալաւ. այլ զՀանապարհային զկայ էառ՝ ի Կելտս յայնկոյս Պադոսի[4] (687)։ Գաղութք հաստատեալք անդ վայելէին յիրաւունս Լատինի, ընտրհեալ նոցա՝ ի Պոմպեայ Մարգոնէ, և զիրաւունս նա Հռոմայեցի խնդրէին, այլ՝ ի զուր։ Գալուստ Կեսարու՝ որ կանխածանօթն էր նոցա նպաստաւորութեամբն իւրով գաւառաց, դղրդեցոյց զընակիչս երկրին ոք Համարէին զնա պաշտպան գատի իւրեանց և խընդրատածոյ։ Անչափ էին յոյզք՝ ի նոսա, մինչև երկուցեալ ծերակուտին Հարկ Համարեցաւ Թողուլ առ ժամանակ միայն տալիս զլեգէոնս յղեալս՝ ի բանակն Սկիպ[5]։

Ջօրութիւն Պոմպէի տևէր տակաւին, Թէպէտ և յաւուրց բղեշխութեան իւրոյ ծնացեալ առանց Հրամանատարութեան՝ որպէս և խոստացեալն էր յամին 684 չընդունել կուսակալութիւն մինչև՝ ի կատարած իշխանութեան իւրոյ[6]։ Այլ միտել

1 Պլուտարքոս· *ի* կէսար, ե։
2 Տիտ· Լիւ· ԻԱ· ԻԱ։ — Փլորոս, Բ, ԺԷ։
3 Պլուտարքոս· Ջոսգոիչիո Անէքսանդրի Ե կէսարոս, ե։ — Սուէտոնիոս, կէսար, է։
4 Սուէտոնիոս, կէսար, Ը։
5 Սուէտոնիոս, կէսար, Ը։
6 Վէլլ· Պատերկ· Բ· ԼԱ։

*նորա՝ի կողմն ժողովրդեան կասկածելի առնէր զնա ծերա-
կուտին, բնաւորեալ ազնուապետութեան կասկածել զնոցա-
նէ, որք ամբառնան և զզօրութիւն իւրեանց սպառնեն արտա-
քոյ: Ա.յլ այս իսկ յաւելեալ ևս քան զևս զօրել չկեսար ընդ
Պոմպէի. վասն որոյ օգնէր նմա ամենայն ազդեցութեամբ
իւրով. և առ առաւել ևս ամրապնդելոյ զկցորդութիւն իւր
ընդ նմա, կամ առ սէր գեղաւորի և ընտիհալոյ օրիորդին,
հարստացոյց իւր՝ի դառնալ իւրում յետ սակաւուց զօրիորդն
Պոմպէա զազգակից Պոմպէի զԹուռն Սիլլայ[1]: Եւ էր յայնժամ
կեսար դատաւոր վայելչութեան, յոյս կուսակցութեան ռամ-
կին, և միայն այր հասարակաց անփոփոխ՝ի միտս և՝ի գնացս:*

Դ. Գաբինեան օրենք:

(687):

*Անկումն պետութեան՝ի վերայ կայ աներկբայելի, յորժամ
օգտակարապոյն խորհուրդք՝ի փառս պշխարհին, փոխանակ
յառաջ գալոյ՝ի նախահայեաց տեսութենէն իւրմէ, խնդրեն
յանկման և յաձախ ևս՝ի վատանուն մատղիանէ, որ միջնորդք
են անարգք, Թէպէտ և հաւատարիմք, հասարակաց կար-
ծեաց: Ա.յսպէս աստանօր առաջարկութիւնք փոխանակ յա-
ռաջ գալոյ՝ի ծերակուտէն, մատուցան յարհամարհ մատղ-
կանէ, և՝ի բռնութենէ ժողովրդեան եղեն ընդունելի: Ա.րա-
ջին առաջարկութիւն եղև գՀինէից, որ ձեռնտուութեամբ և
խրախուսանօք Մ.իհրդատայ՝՝ի բազմաց հետէ ասպատակէին
ծովէ՝ի ծով, յապականութիւն դնելով զծովեզերեայս: Հարկ
անհրաժեշտ՝ի վերայ կայր՝ ածել նոցա պատուհաս ասասիկ:
Բազդախնդիրքն յանդգնութք յաձախեալք՝ի տնաւեան պատե-
բազմունս, պետութիւն իմն կազմեալ էին իսկապէս, և սպա-
սազինեալ տոլմիղս նաւաց, խաղային՝՝ի Ա.լիկիոյ՝ որ միջա-
կէտն էր նոցա, և գտանէին տեղի ապաստանի՝՝ի քաղաքս
մեծամեծս[2]: Ա.ւար առեալ զբազմախառնն նաւահանգիստն*

1 Դուստր Կ. Պոմպէոսի Հռուֆոսի և Փառատոյ գասեր Սիլլայ: — Պլուտարքոսի Կեսար, Ե: — Սուետոնիոս, Կեսար, Զ:

2 Նաւք հինէից աւելի էին քան զՀազար, և քաղաքք նուաճեալք չորեք հարիւր. (Պլուտարքոսի Պոմպէոս, ԻԳ):

Գայետայ, հաւնարձակեալ ևս էր նոցա լինլանել անտի յՈատիա, գերել զընտակիչս նորա, խորտոյզ առնել զտորմիլ նաւուց Հռովմայեցւոց՝ որում հրամայէր մի՛ ի բդեշխից, և գերել կուսակալս երկուս[1]։ Ո՛չ միայն օտար ազգաց պատգամաւորք առաքեալք՛ ի Հռոմ, այլ և հրեշտակք Հասարակապետութեան անկեալ էին՛ ի ձեռս նոցա, և Հռովմայ հարկ լեալ կրանօք յանձն առնուլ փրկանաւորել զնոսա[2]։ Խափանէին և զցուրեան՝ զանհրաժեշտ կարևոր հաճեար քաղաքին։ Ի դարմանս այսքանեաց կրանաց՝ առաջարկէր Ա՛լբս Գաբինիոս ռամկապետ յանձն առնել զպատերազմն ընդդէմ հինից միում ումեք զօրավարի՝ տալով նմա եռամեայ իշխանութիւն լուծլ, զօր բազմացեուն, և զօրապետս բազումս՛ ի ձեռանէ նորա[3]։ Ա՛նքն ժողովրդեան ընդունելի եղև անդէն առաջարկին, թէպետ արհամարհ ոք էր առաջարկուն, և անուն Պոմպէի հնչէր՛ ի բերան ամենեցուն. բայց «ծերակուտին, ասէ Դիոն Կասիոս, լաւագոյն արդեօք թուէր տանել ամենայն աղետից յերեսաց հինից, քան տալ Պոմպէի իշխանութիւն այնպիսի»[4]. և մաղապուր զերծանէր՛ ի ժողովարանէ անտի ռամկապետն խռովարար։ Զի այն ինչ ծանուցեալ ժողովրդեան զհակառակութիւնն ծերակուտին՝ դիմեցին՛ ի ժողովարան անդր ապատնաւէօք կոտորելոյ՛ ի սուր սուսերի զծերակոյտն՝ եթէ չէր նորա փախստեամբ ապրեալ[5]։

Ընդ քուէիւք ժողովրդեանն արկեալ առաջարկութիւնն, և կեսարու ընդդէմ կատուլոսի և Կ. Որտենսիոսի պաշտպան կացեալ այնմ, ընդունելի գտաւ, և յանձն եղև Պոմպէի իշխանութիւն եռամեայ փոխանակի բդեշխի ծովէ՛ ի ծով և ընդ ամենայն ծովեզերս ցկիսուն մղոն՛ ի ներքս. հնարհեցաւ նմա 6,000 քանքար (35 միլիոն ֆր.)[6], քան և հինգ զօրա-

1 Պլուտարքոս՛ ի Պոմպէոս, ԻԲ։

2 Կիկերոն, ճառ վՄանիլեան օրինաց, ԺԲ։

3 «Ա՛լբս Գաբինիոս էր ռամկապետ ոք քաղաքացի, և չէր ինչ՛ ի նմա սէր բարւոյ հասարակաց»։ Դիոն Կասիոս, ԼՋ։ Զ։

4 Դիոն Կասիոս, ԼՋ։ Է։

5 Պլուտարքոս՛ ի Պոմպէոս, ԻԶ։

6 Դիոն Կասիոս, ԼՋ։ Ի։ — Ափպիանոս, Պոռէրոմ. Միհրդատայ, ՂԴ։

պետք ’ի ձեռանէ, և իշխանութիւն ժողովելոյ նաւս և զօրս որչափ ինչ պիտոյ լինիցին։ Դաշնակիցք, օտարքն, և մարզք՝ հրաւիրեցան յօգնութիւն արշաւանին։ Սպառազինեցան նաւք հինգհարիւր, կազմեցաւ բանակ հարիւր քսան հազար հետևակաց և հինգ հազար այրուձիոյ։ Ծերակոյտն եւս ակամայ հաւանութիւն օրինացն, որոյ օգտակարութիւն այնպէս յայտնի եղև՝ զի ընդ հրատարակելն նուազեաց գին ցորենոյ Իտալիա[1]։

Պոմպէոս կալաւ խորհուրդ քաջ առ’ի ջնջել զհին յիշատակ ծովու. զաւոյց զծովեզերեայս Միջերկրականին յարձանացն Հերակլեայ մինչև ցՆեղոսպոնտոս և ցհարաւային ափունս Սեաւ ծովուն’ի տան բաժինս[2]. և միամիտ’ի նոցանէ կացուցեալ հրամանատար’ի զօրագլխաց իւրոց՝ պահելով իւր զամենեցուն տեսչութիւն, չոգաւ միացեալ զօրօքն’ի Կիլիկիա։ Ա.յս մեծախոհ կարդաւորութիւն պահէր զամենայն ծովեզերս՝ չթողուլ հինից կայս ապաստանի, և տայր պարապ խորտակելոյ զտորմիղս նոցա, և ըմբռնելոյ զնոսա յատաւնս անդ իւրեանց։ Յերիս ևեթ ամիս ապահովեցոյց անդրկն զծովս, Թափեաց’ի հինից հազար բերդարեայս կամ քաղաքս պարսպապատս, կործանեաց երեք հարիւր քաղաքս, կալաւ ութ հարիւր նաւս և քսան հազար գերի, զոր էած’ի միջերկրայս Սխիոյ կառուցանել քաղաք՝ զոր յիւր անուն կոչեաց Պոմպէոպօլիս[3]։

Ե. Մանիլեան օրէնք։

(688)։

Ի լուր երեցս այսոցիկ մեծանայր և ևս հռչակ անուանին Պոմպէի՝ որ’ի կրեաւէ էր յայնժամ, և խորհեցան Հռովմայե-

1 Պլուտարքոս.’ի Պոմպէոս, ԻԷ։ — «Յաւուր՝ յորում կացուցէք զինա զօրագլուխ ծո- վախուժք բանակին, տարտապետման’ի ժամանակին յայնմիկ գին ցորենոյ՝ նուա- զեաց յանկարծ, որպէս’ի մեծի խաղաղութեան հանձք առաս հազիւ մարթէին առնել զչափ այնպիսի բարութեան». Կիկերոն, ՀՄանիլեան օրինաց, ԺԵ։

2 Փլուտոս և Ապպիանոս չեն ըստ ամենայնի միաբանք’ի բաժանումն հրամա- նատարութեանցս. (Ապպիանոս, Պոփերալ Միհրդատայ, ՂԵ։ — Փլուտոս, Գ. Զ։)

3 Վիկտ. Պատերկ. Բ. ԼՒ։ — Պլուտարքոս.’ի Պոմպէոս, ԻԹ։

ցնք հաւատալ նմա միւս այլ պատերազմ։ Լուկուլլեայ Թէպէտ մեծամեծ յաղթութիւնս ընդդէմ Միհրդատայ և Տիգրանայ կանգնեալ, բայց բանակ նորա յԱխիա՝ի վտանգի կայր։ Զա-
խողէին իւրք նորա, ոչ ևս անսային նմա զօրքն, խաւսէին նորա դրդռէր զնոսա՝ի տրտունջ, և գալուստ երկոցունց փոխանակաց բռնէին՝ի Կիլիկիա՝ Ակիլլեոսի Գալաբրիոնի և Մարկոսի Հռեքսայ՝ սահմանելոց՝ի կուսակալութիւն մասին ինչ գաւառաց՝ որ ցայնժամ ընդ ձեռամբ Լուկուլլեայ էր, նուաճեցեալ զմեծարանս իշխանութեան նորա[1]։

Ա.յս ամենայն արկին՝ի միտս Մանիլլեոսի ռամկապետի առաջարկել ժողովրդեան՝ տալ Պոմպէի զկուսակալութիւնս Լուկուլլեայ, յաւելեալ՝ի նոսա և զԲիւթանիա, պահելով զիշխանութիւն նորա՝ի վերայ ծովուց։ «Ոչ այլ ինչ էր այս, ասէ Պլուտարքոս, բայց արկանել ընդ ձեռամբ միոյ ուրուք զամենայն պետութիւնն Հռովմէական, և զրկել զԼուկուլլոս յարգասեաց յաղթութեանցն իւրոց»[2]։ *Զի ոչ երբէք տուաւ իշխանութիւն այնպիսի՝ ումեք՝ի քաղաքացւոց, ոչ Սկիպիոնի երիցու առ՝ի խորտակել զԿարթագէդոն, և ոչ կրտսերոյն առ՝ի կործանել զՆումանտիա։ Եւս քան զևս վարժէր ժողովուրդն՝ի տեսիլ միանալոյ իշխանութեանց՝ի ձեռին միոյ ուրուք՝ՙի հնարս վրկութեան։ Ծերակուտին զառաջարկութիւնս զայսոսիկ եպերեալ որպէս ապերախտութիւն, ամենայն զօրութեամբ ընդդիմանային. իսկ Որտենսիոս պնդէր, զի՝ի յանձն առնուլն տալ զամենայն իշխանութիւն միում ումեք ոչ զոք արժանաւորագոյն այնմ քան զՊոմպէոս գոյր գտանել. բայց յաւելոյր՝ զի չէր պարտ կուտել՝ի վերայ միոյ ուրուք այնչափ իշխանութիւն*[3]։ *Դարձեալ և Կատուլոս բողոքէր զկոտանէնք ազատութեան, և հարկ համարէր այնուհետև դիմել յանտառս և՝ի լերինս առ՝ի կալ յազատութեան*[4]։ *Ընդէն հաւասարկէ Կիկերոն՝ի նաւակատիս մտից նորա՝ի ծերակոյտն յօրինէր Ճառ վսեմ, որ և պահի ցարդ, ցուցանելով զի առ՝ի*

1 Դիտե՛ս կատարած, Լ֊Ը· ԺԴ և ԺԵ։
2 Պլուտարքոս· ՚ի Պոմպէոս, ԼԱ։
3 Կիկերոն, ճառ վՄանիլեան օրինաց, ԺԵ։
4 Պլուտարքոս· ՚ի Պոմպէոս, ԼԱ։

ատյպ շահ հասարակաց պարտ էր յանձնել զպատերազմն զօրավարի՝ որոյ կանխակալ մեծաւմեծ յաղթութիւնք, ջախջախութիւն և անզօրաքաղութիւն՝ երաշխաւոր լոյծ հանդերձ ձեղոյն։ Եւ վախճան արարեալ բանիցն, ասէր. «Բազումք՝ ի զօրավարաց յոտնուկ եւեթ մեծանալոյ ձեռն՝ ի գործ առնեն՝ ի պատերազմ։ Զգիտիցե՞ն զայս ոք ոչ օրէն համարին տալ միում ումեք զամենայն իշխանութիւն. և չտեսանիցե՞ք իսկ մեք զի ոչ առաքինութիւնք միայն Պոմպէի զնա մեծ կացուցանեն, այլ և յոտնութիւնք այլոց»[1]։ Իսկ կեսար ամենայն հնարիւք օգնէր Ջգանց Կիկերոնի[2] յընդունելութիւն օրինացն, որ հասարակաց հաւանութեամբ և քուէիւք աշխարհաժողով առեն էին եղև ընդունել։

Պատահեաւ իսկ էր հայրենեաց Լուկուլլոս, և անպէտութիւն էր բառնալ՝ ի նմանէ զփառս կատարած՝ պատերազմին՝ զոր յաջողութեամբ սկսեալն էր[3], և յաղթութիւն նորին այլոյ պահէր. և ոչ վերկեր անդ նախատեսութիւն ոմանցին, որ յաձախ՝ ի ժուռարին դէպս Ջգրտապոյն դատ քան զազգաժողովն դրաւեալ աչառանօք այսր կամ այնր ուրուք կամ տոհմի. և դէպք ընդ հուպ արդարացուցին զնա։

Յաւեսեալ Լուկուլլոսի՝ ի Հռոմ զյաղթութիւն մարտին՝ չև ևս էր Միհրդատ վհատեալ. քանզի ոմանքիմ թշնամին այն Հռոմայեցւոց՝ որ՝ ի քան և՝ ի չորից ամաց հետէ տակաւր՝ ի կռիւ, և արկածից բախտին չէր երբեք լքուցեալ զնա, թէպէտ և անցեալ զվաթսնամեայնիւք և արդ ևս հարեալ՝ ի մարտի, չկամէր խոնարհել՝ ի հաշտութիւն, բայց պայմանօք՝ զորս չէր մարթ ընդունել Հռոմայեցւոց։ Վասն որոյ չէր ինչ անօգուտ համբաւ Պոմպէի ընդդէմ այսպիսւոյ ոսոխի։ Սասա եւեթ իշխանութեան նորա բաւական էր ածել զկարգս հրահանգաց՝ ի զօրս և ահաբեկել զթշնամին, որպէս և եղեն իսկ. զի ընդ երեսեն նորա՝ նորոգեցան կարգք՝ ի բանակին, և եկայց ծնայց

1 Կիկերոն, ճառ վՄանիլեան օրինաց, ԻԳ։

2 Դիոն կասսիոս, Լ.Զ. ԻԶ։ — Պլուտարքոս՝ ի Լուկուլլոս, Ծ. ՄԲ։

3 «Ի սակապետն Մանիլիոս, կաշառակուր և վատ գործի փառասիրութեան այլոց». Վել. Պաուերկ. Բ. ԼԳ։

ընդ դրօշու նորին հինաւուրց զօրականաց, որոց վաղ իսկ ընկալեալ զարձակուրդ՝ խորհէին դառնալ յերկիր իւրեանց[1]. էին նոքա ընտիր զօրք քառակիս, և կոչէին վալերեանք[2]։ Ասեն և Տիգրանայ լուեալ զգալուստ Պոմպէի ձեռնթափ լինել յօգնականութենէ աներոյն իւրոյ, յայտ արարեալ զի այնմ հետէ զօրավարի յանձն առնոյր լինել անձնատուր[3]. այսչափ ի զօրութենէն անուան միոյ ուրուք քան զայլս[4], ասէ Կասիոս Դիոն։

Նոյնպէս և Մանիլիոս խնդրէր զնորոգութիւն օրինաց Կայխոսի Գրակքոսի, որով հաստատեալն արուեստութեամբ հանրութենէս ժողով փոխանակ վիճակաւ ընտրելոյ յատաջնոց կարգաց ժողովրդեան, ընկալեալ լինէր յամենայն դասուց, և քառնայր յընտրութիւնն՝ զիտակ արժանապատուութեան և ճոխութեան, և զրկէր զկարի իսկ փարթամապոյնս յիշխանութենէ ընտրութեան[5]։

Ոամկապետաց էր սովորական, որպէս տեսանեմք, առնել

1 «Իսկ վալերեանց լուեալ զնա ծերակուտին Հռովմայ հրաման ազատութեան առեալ էր ինքեանց, անդէն վաղվաղակի լքին զդրօշս». Դիոն Կասիոս, ԼԶ. ԺԵ։

2 Վալերեանք կոչէին զօրք Վալերիոսի Փլակիոսի, որոց անցեալ ընդ հրամանատարութեամբ Փիմբրեայ՝ թողեալ էր յԱսիա զզօրավար իւրեանց, և յարեալ *'ի Սիլլա։ «Նոյն գունդ զօրաց ընդ հրամանաւ Պոմպէի, որ վերոյն զինուորեաց զՎալերեանս, ոչ ևս խորհէին յատատամբութիւն. այսչափ գեր *'ի վերոյ ի այր քան զայլս». Դիոն Կասիոս, ԼԶ. ԺԶ։

3 «Ոչ ամօթ համարիմ, ասէր, անձնատուր լինել այնմ՝ զոր բազդին գեր *'ի վերոյ քան զայլս առ հասարակ ի ամբարձեալ». Վելլ. Պատերկ. Բ. Լէ։

4 Դիոն Կասիոս, ԼԶ. ԺԶ։

5 Ի համեմատութենէ բանից ինչ Կիկերոնի ընդ Սալուստեայն *'ի միտ առնուլ ի զայս. քանզի Կիկերոն *'ի Ճառին իւրում վասն Մուրենայ (ԻԹ) ասէ այսպէս. «Զքուէից խառնակութիւն խնդրեցեր, զՄանիլեան օրինաց տեղութիւն, զհաստատութիւն ընտրութեան, զարժանապատուութեան և զքուէից»։ Յայտ ի զի չակնարկեր այսուհետ Կիկերոն *'ի Մանիլեան օրէնս վասն ազատագրաց, այլ *'ի Կայխոսի Գրակքոսի. զի և Սալուստիոս զնոցունց օրինաց գրեթէ նովին բանիւք ասէ. «Ա յլ վասն կարգելոյ զատենակալս ոչ ինչ անտեղի թուեին ինձ օրէնք, զոր Կ. Գրակքոս *'ի ատենապետութեան իւրում հրատարակեաց՝ *'ի հնոցէ դասուց խառն *'ի խուռն ընտրել վիճակօք զհարեւրեակս. զի այսպէս հաստատեալ պատուով և ընչիւք և առաքինութեամբ եկեալս զմիմեամբ առնել փութացին». Սալուստ. Նամախանի առ Կեսար, Ե։

առաջարկութիւնս նպաստաւոր ռամկին քան թէ լաւագոյն արանց աւատաց։ Ա.յլ քաջութիւն՝ ի նոյնանալ առ զօշաքաղու-թեան կամ անցեալ քան չափ տարաժամ եռանդեամբ կամ յետսալիտ կարծեօք՝ ջնասակար լինելին դիմելոցն՝ ի սպասա-ւորութիւնս նոցին։ Մանկլիոս ձեռն էարկ վերատին յանկարծ յամին 688 ՚ի լինդիս՝ որ խռով մեծ արկանէր միշտ ՚ի Հռոմէ-նա՝ ՚ի քաղաքական ազատութիւն ազատագրելոց։ Պատրանօք արար ընդունել զհաստատութիւն Սուլպիկեան օրինաց, որ քաւեայս ընդհէր ազատագրաց՝ բաժանելով զնոսա յերեսուն և ՚ի հնգեսին ցեղս, իբր թէ հաւանութեամբ Կրասոսի և Պոմպէի։ Ա.յլ ծերակոյտն խափանեաց զայն յետ սակաւ ժա-մանակի ընդունելութեանն՝ միաբանութեամբ առաջնորդաց ռամկին, որք ոչ համարէին հաճութեամբ հաստատակաց լեալ զհաստատութիւնն[1]։

Չ. Կեսարս կալ հիւռաճապետ։

(689)։

Մինչդեռ աներևոյթ յաջողութիւնք թուէին պարտառնու-զնալս՝ որ պաշտէին յայնժամ, Կեսար որ կայրն ՚ի Հռոմէ՝ կարգեցաւ վերատեսուչ Ա.պպեան Հանապարհին (687)[2]։ Հոգ Հանապարհաց սիրելն առնէր ժողովրդեան զայնոսիկ, որ առանց զօշաքաղութեան պարապէին ՚ի նոյն. իսկ Կեսար այն-չափ առաւել սիրելի եղև, որչափ զի և յընչից իւրոց առա-տաձեռնէր ՚ի ծախան, մինչև ՚ի վտանգ ընդ պարտուք անկա-նելոյ։

Զկնի երկուց ամաց (689) շինուածապետ կարգեալ ընդ Բիբուլոսի՝ արար մեծապարծութիւնս այնպիսիս, մինչև դրուա-տիս Հրապարակաւ ընդունել՚ի ռամկէն՝ որ սիրողն է միշտ տեառնանաց։ Հրապարակն յորջորջեալ Ա.պեան վասն ազգա-ժողովոյն այդր գումարելոյ, Փորոնն, ապարանք մեծամեծք, և կապիտոլն լինքնին շքեղազարդ յօրինեցան։ Կամարակապք

1 Դիտն կասախս, գ. ԼԶ. Խ։
2 Պլուտարքոս՝ ՚ի կեսար, ե։

առաժամանակեայք կանգնեցան, ՚ի տեսիլ ածել ընդ նոքօք երս մեծագինս[1]։ Ծախքս այսոքիկ չէին ինչ անասելոր, զի յաւուրց յաղթանակի իշխանապետին Պապկրխոսի Կուրտոլի՝ տվողաթիւն էր շինուածոցապետացս յաւելուլ զեղազարդել զՓորոնն[2]։ Կեսար մեծահռչակ ետ կատարել զնաղս հռովմէականս, զոճն Կիւբեղեայ, և տեսարանս գեղեցիկս գազանաց և տաբատարակաց, որ չևևս ցայնժամ ածեալ էին ՚ի տեսիլ, ետ ածել ՚ի հանդէս[3]։ Թիւ մարտիացն հասանէր, ըստ Պլուտարքեայ, ցեղբեքարիւր և քսան զոյգս. առ ինձ ոչչափ արհամարհ գրէին զվեանս այսր ցեղի մարդկան։ Կիկերոն առ Ատտիկոս այնպէս գնոցանէ գրէ, որպէս մեք արդ զձիոց առապարհականաց[4]. և զգօնաւորէն իսկ Ատտիկոսի էին տաբատարակք, որպէս բազմաց յաւազգորելոց ժամանակին։ Աւրինդուշտ խոպոքս այսքիկ, որ տռնալն են մեզ, բերէին ցայնժամ զկերպարանս կռօնից՝ որ ՚ի սկզբան անդ այն ևեթ կինք էր նոցին, և խմբէին ՚ի պատիւ մեռելոց[5]. կեսար ՚ի նուէր յիշատակի հօր իւրոյ անասելոր շքով կատարէր զայն[6]։ Ընդ բազմութիւն տաբատարակաց նորա ահաբեկեալ ծերակոյտն, հրաման արար՝ մի ևս քան զսահմանեալն թիւ տաբատել զնոսա։ Բայց թէպէտ և Բիբուլոս իշխանակից նորա զկէս ծախուցն տայր, սակայն ժողովուրդն կեսարու հասարէր զայն ամենայն պերճ ձոխութիւն պարտուց պաշտամանն նոցա։ Վասն որոյ տոկոր էր Բիբուլոս նմանեցուցանել զանձն մեհենին Կաստորի և Պոլիկևքս

1 Մաւետանխոս, կէսար, ժ։ — Պլուտարք· ՚ի կէսար, Ե։

2 Տիտ· Լիւ· Թ· Խ։

3 Դիոն Կասիոս, ԼԷ· Ը։

4 «Տաբատարակքն զորս գնեցեր՝ են ստացուածք ամենագեղեցիկք, զի քաջանալոցս զնոցա ասեն գոլ· զորս եթէ կամք լեալ էին քեզ վարձկանել յերկիրս գալին արդի գէպս, ընտիր արդեօք զկինս նոցա»· Կիկերոն, Նամականի առ Ատտիկոս, Գ· Գ։

5 Սերուիոս, Մէնի· Գ· Գրոց, Ենէականին, տող 67։ — Տերտուլիանոս, Զնոսիերց, Ե։ — Տիտ· Լիւ· ԻԳ· Լ· ԻԹ· Խ։ — Վալերիոս Մաքսիմոս· Բ· Գ· յօդ· 7։

6 «Ի շինուածապետութեան կեսարու, որ տպա եկաց իշխանապետ, ՚ի տալ նորա խաղս գամբանական ՚ի պատիւ հօր իւրոյ, ամենայն տպատք կրկնեին արծաթեայք էին, գէղարդունք արծաթեայք շողային ՚ի ձեռս յանցաւորաց, և վիէին ՚ի գաղանս վայրենիս· օրինակք, որոց հետևի արդ անհնչան խոկ քաղաքանին տպատ»· Պլին· Բն· պատ· ԼԳ· Գ։

տեայ, որ երկոցունց երկուսութեկաց եղբարց նուիրեալ յանուն Կատարի ևեթ միշտ յիշատակէր[1]։

Ի ծախս ծանուցս խաղուցն այնոցիկ ոչ այլ ինչ նկատեր առաքանին, բայց ունայն պարծանս և մեծախտութիւն. և ուրախ լինէր ընդ շռայլութիւն չինուածապետին, զուշակելով՝ ի մերձ ընդ մերձ կործանումն նորա՝ զվախճան զօրութեան նորա։ Բայց կեսար՝ ի ծախել զպանձս՝ ի զուարճութիւն ամբոխին, ոչ՝ ի վաղանցուկ եւանդն յայն հատատեր զինուորիւր օգտի նորին, այլ հատատագոյն ևէտ նպատակի երից էր զարթուցանել՝ինամս զիշխատակս փառաց և ազատութեան։

Ոչ շատացեալ ձեռնտու լինել՝ի բազում հնարս նորոգութեան՝ ձգել զՊոմպէոս զհետ երից կարծեաց, և փորձել միանգամ կենդանացուցանելոյ զիշխատակ Մարիոսի, ձեռն էարկ՝ ի հետազօտել յայտնապէս զկարծիս հատարակաց։ Մինչդեռ փառասրութիւն շինուածապետութեան նորա մեծարոյ յոյժ ռամկին առնէր զնա, ետ կանգնել՝ի ծածուկ զախոյեանս Մարիոսի կործանեալս երբեմն՝ի Սիլլայ, և հրամայեաց դնել զայնս գիշերային՝ի Կապիտոլին[2]։ Ի վաղիւ անդր յերևել պատկերացն ոսկեփայլ Յարտարարուեստ քանդակեալ, և զարդարեալ արձանագրութեամբք՝ որ յուշ ածէին զյաղթութիւնս նորա ընդդէմ Յուգուրթայ, Կիմբրաց և Տեւտոնաց, սկսաւ աւազակն քրթմնջել և պարսաւել զկեսար, զի էշխէր յարուցանել զնշանակս խռովութեան և զիշխատակս խափանեալս. այլ համախորհք Մարիոսի խուռն դիմեալ՝ի Կապիտոլ, հնչեցուցանէին զրուսաւեօք զկամարան գիցանուէրս։ Բազումք ևս այնք էին՝ որ զերարտօսր գորովեալ հեղուին՝ի տեսիլ մեծարոյ կերպարանաց երբեմն զօրավարի իւրեանց, և քարոզէին զկեսար յաջորդ արժանաւոր մեծի զօրավարին[3]։

Խռովեալ ծերակոյտն ընդ այս հանդիսակութիւն՝ փութացաւ գումարել յատեան. և կոչատիս կառուցն՝ որոյ

1 Սուետոնիոս, կեսար, ծ։
2 Սուետոնիոս, կեսար, ժԱ։
3 Պլուտարքոս՝ի կեսար, Զ։

հայր նորա մի էր ՚ի սպանելոյն ՚ի Մարիամ, ամբաստանեալ զկեսար կոծանիչ Հասարակապետութեան՝ ասէր. «Ոչ ևս ՚ի ծածուկ պեղէ նա զհիմունս նորին, այլ յայտնապէս խրատ տայէ զայն»[1]: Մերժեաց կեսար զամբաստանութիւնն, և հաստատ նորա խնդամիտք ընդ յաղթութեանն գոչէին միաձայն՝ թէ «Յաղթեալ է նա և ամենայն հակառակորդաց իւրոց, և օգնականութեամբ ժողովրդեան կալցի զառաջինն բարձ ՚ի Հասարակապետութեան»[2]: Ոչ ևս այնուհետև կոտակցութիւն ոմանցին էր անառաջնորդ:

Ի կատարել պաշտաման շինուածապետութեան իւրոյ՝ խնդրեաց կեսար երթալ կացուցանել զնգիստոս մարզ Հռոմայ[3], կատարելով զկտակ արքային Պտղոմեայ Ալեքսի կամ Ալեքսանդրի[4], որոյ թողեալ էր ըստ օրինակի այլոց թագաւորաց զտէրութիւն իւր ժողովրդեան Հռոմայ: Բայց երկեալ էր Համբաւ կտակին[5], և չէիցէր իմն ծերակոյտն[6] մոռանալ ՚ի ժառանգութիւն այնպիսւոյ Հոխ գառաւի, երկուցեալ՝ որպէս յետոյ և Աւգոստոս, մի զօրաւոր յոյժ կացուցանել զկուսակալ աշխարհին: Ա.յս գործ կարկեալ զնգիստոս ՚ի գառան Հռոմէականն՝ փառաւոր էր յոյժ և շահաւէտ. զի որում յանձնէին՝ տայր նմա իշխանութիւն մեծ զինուորական և գանձուց մեծաց տնտեսութիւն: Կրասոս ևս հետամուտ եղև այնմ: այլ յետ բազում վիճից՝ մերժեաց ծերակոյտն զնախանձընդդէմ պահանջմունս նոցա[7]:

Զայսու ժամանակաւ միջոցեւ Կրասոս գուն գործէր զի

1 Պլուտարքոս. ՚ի կէսար, Զ:

2 Պլուտարքոս. ՚ի կէսար, Զ:

3 Սուետոնիոս, կէսար, ԺԱ:— կիկերոն, Առաջին ճառ պՀգարակային օրինաց, Ա. 16:

4 Յուստինոս, ԼԹ. 5:— պարապմունք Բորբիոսի, Յաղագս ապէնաբանութեան կինէրոնի «զԱրքայութենէ Ալէքսանդրիոյ», էջ 350, տպ. Որէլլեայ:

5 կիկերոն, Երիրդ ճառ պՀգարակային օրինաց, ԺԶ:

6 Աւգոստոս ընդ այլ օրինս սէրութեան օրինագրէր ՚ի բաց առնուլ պՀգիպտոս և ՚ի ուրեք ՚ի ծերակուտէն կամ ՚ի գերագոյն ատեանց երթալ յՀգիպտոս առանց իւրոյ հրամանին, զի մի գուցէ ՚ի բռնակալել գահատիրի ուրուք պատահեսցի՝ սովեցոյն Խոսրևս. զի կալեալ անդ զմուտս ծովու և ցամաքի՝ մարթէր նմա պահ ունել անձին փոքու ջոկատիս ընդդէմ մեծազօր բանակաց». Տակիտոս, Տարեգրութիւն, Բ. ԺԲ:

7 Սուետոնիոս, կէսար, ԺԱ:

բնակչաց՝ ի ևեթս յայնկոյս Պաղտոն տացին իրաւունք քաղաքացւոց Հռովմայ, ոամկապետն Գայիոս Պապիոս ընտրեալ արար զօրինս մերժելոյ՝ ի Հռովմայ զօտարս առ հասարակ[1]։ Եւ քանզի դոհոզութիւն Հռովմայեցւոց օտարս համարէր զամենեսեան՝ ոչ էինն՝ ի բուռ կարկինք[2], որոշայեն այն լարէր մանաւանդ ընդդէմ բնակչաց յայնկոյս Պաղտոն՝ հանախտահից կեսարու, որոց վաղ իսկ խոստացեալ էր նա ընդունել զանուն քաղաքացւոյ՝ որ ոչն ընտրէր նոցա, զի մի զուգէ լոյսն և նոցա մտանել յաշխարհաժողովս։ Զի յորմէ հետէ յազատութիւնն գրեցան Իտալացիք, զժուարին էր ընտրել՝ որոյ ումանց էին իրաւունք քուէարկութեան, և որոց ոչ. որովհետև յաձախ և տրուիք ինքնին դաւով կցորդ լինէին ընտրութեանց[3]։

է. Կեսարու դաւադիր կալ խնդրոց և վիճից։

Զեռն էարկ անդրէն Կեսար՝ ի վէճս քաղաքականս յորս զեալ՝ ի սկիզբն պաշտաման իւրոյ ընդդէմ հարստահարութեանցն՝ որ յաուաջն գործէին, որոց զեռ ևս կենդանի էին պաշտօնեայք։ Ոչ կորոյս երբէք զդէպս ածել՝ ի գլուխ նոցա զխստութիւնն օրինաց, կամ անուանարկ կացուցանելոյ զնոսա առաջի ամենեցուն։

Յերկարաձիգ քաղաքական խոովս՝ ի վեր երևեալ էին ազգինչ եղեռնագործ մարդկան՝ Սիկարեանքն կոչեցեալ[4], որք յամենայն ազգի ազգի ոճիրս սպանութեան և աւազակութեան անկղնտանային։ Անդատին՝ ի 674 ամէ հետէ հրովարտակ խիստ արարեալ էր Սիլլայ ընդդէմ նոցա, այլ ազատ կացուցանէր անտի զպաշտօնեայս վրէժխնդրութեան իւրոյ վար-

1 Դիոն Կասսիոս, ԼԶ. Թ։

2 «Օտար համարիք զիս՝ զի ազատ քաղաքի եմ ծնունդ։ Եթէ առ օտարս ունիք զմեզ, որոց վաղ ուրեմն անուն և կարգ քաջ իսկ հաստատեալ կան՝ ի հնումն և՝ ի կարծիս հասարակաց, քանիծն և համարելի էին յաչս ձեր օտար հեռամուտքն, ընտիր ընտիրք Իտալիոյ, որ ամենուստ գան՝ ի խնդիր առնելոյ կալուածոց և աւագութեան»։ Կիկերոն, ճառ վասն Պ. Սիլլայ, Ը։

3 Տես Տրուման, Յուլիանդ, 147։

4 Յ. Պաւլոս, վճիռք, Ե. 4, էջ 417. տպ. Հուշքէ։— Յուստինիանոս, Օրէնք, Դ. ԺԸ, յօդ. 5։ — Ուլպիանոս, ի վերայ պատճառաց ֆոլանուկի Բդեչխի, է։

ձեալ ՚ի Հասարակաց գանձուց [1]: Բայց և սքա սահելութեան և կշտամբանաց Հասարակաց նշաւակ էին. և թէպէտ Կատանի ընդունելի արարեալ էր զօրէնս՝ յետս դարձուցանելոյ զարծաթն կշռեալ՚ի դին գլխոյ տարապրելոց [2], սակայն ոչ ուրուք ցայնժամ Հանդգնակեալ էր դատախազել ընդդէմ նոցա [3]: Կեսար ընդդէմ օրինադրութեանն Սիլլայ մատոյց առ բաստանութիւն զնացանէ: Գահերէց կալով իւր որպէս դատաւոր խնդրոց և վիճից, յատեան կոչեցան Լ· Լուկիոս՝ որ հրամանաւ իշխանապետին սպանեալ էր երիս ՚ի տարապրելոց, և Լ· Բելլիենոս հօրեղբայր Կատիլինայ, սպանող Լուկրետիոսի Ոփելայ, և դատապարտեցան [4]: Եւ Կատիլինա՝ դատախազութեամբ Լ· Լուկիեյոսի Քարտաղոսոյ և պատմագրի, որ քաղեալ էր Կեսարու, առաքեալ վասն սպանանելոյ իւրոյ զերևելին Մ· Մարիոս Կրատիդիանոս, եւ անդատապարտ յաւետենէն [5]:

Ը· Դատակցութիւնք ընդդէմ Ներակուսին:

Մինչդեռ Կեսար դուն գործէր օրինօք ընդդէմ սահմանադրութեանց Սիլլայ, կուտակցութիւն փառասոլ և ժիգոհ մարդկան յուսահատելոց ընդ պարտեօք ՚ի բազմաց հեառ փոքձէր դատաձանութեամբ հասանել աւազութեան: Ընդ որս էին յամէն 688, Կն· Պիսոն, Պ· Սիլլա, Պ· Ավտրոնիոս և Կատիլինա: Սքա և կենօք և բարուք զանազանեալ, հաւասարապէս էին վատանունք. սակայն ոչ պակասէին նոցա համախոհք ՚ի ռամկէն՝ զորոց շոգոմէին նոքա զկարիս, և յաւազակացն՝ որոց քաղաքական տեսութեանցն և ախտակատութեան

1 «Եւ սպա ՚ի հրահանգս ընդդէմ Սիկարեանց, և ՚ի խափս առաջարկեալ ՚ի կուռնելեան օրինաց, յաւել ինսաակարս դատել և զայնոսիկ՝ որոց յաւուրս սահպատութեան ընկալեալ էր արծաթ ՚ի Հասարակաց գանձուց ՚ի վարձ՝ ածելոց իւրեանց զգլուխս քաղաքացւոց Հռոմայեցւոց առ Սիլլա»· Սուետոնիոս, կեսար, ժԱ:

2 Պլուտարքոս· ՚ի կոփան, ԻԱ: — Դիոն Կասիոս, ԽԷ· Զ:

3 Կիկերոն, Երրորդ ճառ վՀգարկոյին օրինաց, Դ:

4 Դիոն Կասիոս, ԼԷ· ժ: — Ասկոնիոս, Մէն· ՚ի վէրայ ճառին Կիկերոնի «Ի սպիտակ պատմուճան», էջ 91, 92· տպ· Որելլեայ:

5 Ասկոնիոս, Մէնուէնեան ճառին «Ի սպիտակ պատմուճան», էջ 91:

սպասաւորէին։ Յամին 688 Պ. Սիլա և Աւտրոնիոս սահմանեալք՝ ի բռնակալութիւն, վասն մարթանօք հեռանալոյ աւազուեցեան, մերժեցան՝ ի կարգէ ծերակուտին։ Շինչիւն հասարակաց խառնէր՝ ի գաղտնորոգայթ հնարս նոցա և զանոնք ևս Աբատոսի. բայց մարթ ինչ էր արանցս այսոցիկ՝ որոց հակառակ էին հանգամանք և խորհուրդք, միաբանել մնանել՝ ի գաւակցութիւն ոմանց։ Էկդ և այս մի յանառելութեանց զտպարտութեան՝ խառնել՝ ի մի գաւակցութիւն զնոսա, և զԱբատոս՝ վասն ամբաւ գանձուց։ Դարձեալ և զայն արժան է նկատել, զի հաւասկցաց երկպառակութեանն հարկ էր ջանալ յիւրեանս ձգել և առնել հակառակ կողմանն առնել զայր, որպիսի որ Աեսարն էր աներկբայապէս՝ վասն համբաւոյն և առատաձեռնութեան և արիութեան։

Դէպք էին, որ թէպէտ և անյայտ միացեալ, այլ զի շուկ մեծ յարուցին յայնժամ, յայտ առնեն ցմէր վայր զառաջեալ էր անկարգութիւն։ Մի՝ ի գաւակցաց կն. Պիտն՝ որ միաբանեալ էր՝ ի գաւաճանել զԱտտոս և զՏրկուատոս բռնաշխս, սակայն՝ ի ձեռն Արատոսի ընկալաւ՝ ի ծերակուտէն գնալ գանձապետութեամբ փոխանակ կուսակալի՝ ի Սպանիա որ յայսկոյս։ Հաւանեցաւ ծերակոյտն հաւատալ՝ ի նա զգաւառն առ՝ ի զերծանելոյ՝ ի նմանէ, կամ՝ ի յոյս գտանելոյ՝ ի նմանէ օգնականութիւն ընդդէմ Պոմպէի, որոյ զօրութիւն էրթայր և լինէր ահարկու։ Ս.յԼ յամին 691՝ ի հասանել նորա՝ ի Սպանիա նախ՝ սպանեալ լինէր յուղեվից զօրացն, կամ ըստ այլոց՝ ՝ի գաղտնի պատուիրակաց Պոմպէի[1]։ Իսկ Կատիլինա անբնական՝ ի յաղէտից բարեկամաց և յիւրոց իսկ պարտութեանց, առաւելագոյն ևս եռանդեամբ խնդասիրէր՝ ի դաւակցութիւն և՝ ի բարձ բռնակալութեան։ Ինքնակարագոյն թշնամի էր նա ծերակուտին, և կեսար ձեռն տայր նմա հասանել ըղձից։ Անպատրուակ հակառակութեամբ օգնէր նա ամենեցուն՝ որոց մարթէր ջնաւակար լինել թշնամեաց իւրոց, և նպաստաւոր՝ ի փոխարութիւն կարգաց։ Դարձեալ և հարկ էր յայնժամ

1 Սալուստ. Կատիլինա, ԺԹ։

ամենայն կուսակցութեանց իրաւախտ լինել ընդ այնուհետև, որ ունէին ընտրմս առաջի ժողովրդեան։ Ապա անկին ընկալաւ ընդ ընծայեալս յընտրութիւն զկ· Աստուածոս Հիբրիդա, զայր անպիտան, պատրաստ՝ի կաշառակրծութիւն և՝ի մատնութիւն[1]։ Վիկերանի խոստացեալ էր յամին 690 զառագոյ կալ Կաթոլիկոսեայ[2], և ամաւ յառաջ բդեաշխին Տարկուաստոս, այր սաստիկ ամեծար՝ի ծերակուտին, զառագոյնեաց զնոյն ինքն յամենայն տանուտէնէ հարստահարութեան[3]։

Թ. Դիմարտութիւնք կազմիոյ կուսակցութեան ևոր։

Տեսանելի զի ըստ արկածից ժամանակացս հարկ էր արանց երեւելեաց՝ի նոյն համարի լինել ընդ այնուհետև, զոր անցեալ գնացք նոցա պարտաւորէր զնոսին առնել։ Վասնզ մեծ այն է՝ զի՝ի ժամանակս յեղափոխութեանց, յորժամ ընդ անցեալ փառս և ընդ անծանօթ ապառնի առաջի կայցէ ընտրութիւն, յառաջամասայց լինին ազգ յանդգնութիւնք և անխիղճք, խակ երկչոտքն և ստրուկք կանխակալ կարծեաց՝ կան անծանօթք համ խաւխան արկանեն ընթացից աշխարհին՝ի նոր չանսասարս։ Վնաս մեծ է պետութեան՝ որ՝ի յոյզս խռովութեան կայցէ, արանց առաքինեաց համ լաւաց, որպէս կոչէ զնոսա Վիկերոն, ջնդումնել զնոր մտածութիւնս՝ զոր մարթ է նոցա ուղղել չափաւորելով. զի անտի զՀետ գան անկարկատելի հերձուածք։ Գանգի ազգ՝ բազում այն է զի անկեացք՝ գործի առնուն զբարի համ զչար կարիս ամբոխին, և ազգ մեծարոյք՝ անպարծք համ գժկամակք՝ հակառակ կացեալ ամենայն յառաջադիմութեան, յամառ դիմակալութեամբ իւրեանց յարուցանեն արգարացի ցասումն և բռնութիւնս աւազելիս։ Հակառակութիւն վերջնոցս այսոցիկ կրկին ունի անտեղութիւնս. մի՝ թո-

1 Պլուտարքոս՝ի Կիկերոն, ժե։

2 «Պատրաստիմ արդ՝ի ժամուս՝ի ջառագոյնութիւն կաթուղիկոսեայ իմոյս նախանձորդի։ Ահն ոչնիմ զի՝ի կացուցանելն զնա անպարտ՝ գիւրագոյն գոլոյ զնա՝ի յիրաւախոհութիւն երից մերոց։ ապա թէ ոչ, գիտացից զինչ գործել եցէ ինձ»։ Կիկերոն, Նամականի առ Աթտիկոս, Ա։ ԺԲ։

3 Կիկերոն, Վասն Պ։ Սիլլայ, իԹ։ 81։

*ղուլ ասպարէզ ազատնուաստագունից քան զինքեանս, և միւս
ևս՝ հաստատել յերկեսայս զիտոս երեքեաւս բազմութեան,
ոյք վան արժանապատուութեան կարծողաց և ոչ վան լաւու-
թեան կարծեաց՝ ընտրեն զկուսակցութիւն։*

*Յայտնի օրինակ իրացս՝ որ ինչ անցք անցանէին յայնժամ
՝ի Հռոմէ։ Զի՛ր իակ իրաւացի երկմտել՝ի նախադասել զկու-
սակցութիւն՝ որոյ գլխաւորք էին արք հոյակապք, Որտենսիոս,
Կատուլոս, Մարկէլլոս, Լուկուլլոս և Կատոն, քան զմիւսն՝
որոյ առաջնորդք էին Գաբինիոս, Մանիլլիոս, Կատիլինա, Վա-
տինիոս և Կլոդիոս։ Զինչ օրինաւորապոյն յայս թուռնեայց
վաղեմի ազնուատոհմից՝ քան զդիմակալութիւնն զայն ամե-
նայն փոփոխութեան, և զյօժարութիւն՝ զամենայն ինչ նոր՝ հաճա-
բեալ եղջերուաքաղ լինի կամ սեղանակապութիւն։ Զինչ
խոհականագոյն նոցա՝ քան զարմանալ ընդ հաստատուն-
գեղոյն Կատոնի, որ տակաւին մանկահասակ՝ զմահ յանձն առ-
նոյր, քան պաշտպան կալ յաւուր միում դատի դաշնակցաց՝ որ
պահանջէին զերաւունս քաղաքացւոց Հռոմայեցւոց[1]։ Ո՛րպէս չան-
տալ խոհականագոյն Կատուլոսի և Որտենսեայ՝ որք պնդապէս
ջատագովէին զնախամանանութիւնս ազնուականաց, և երկըն-
չէին՝ի բուռն բերմանէ հասարակաց՝ ժողովել՝ի սի որ զամե-
նայն իշխանութիւն։*

*Եւ սակայն դատ և խնդիր պաշտպանեալ յարանցդ յայդ-
ցանէ վճռեալք էին՝ի կորուստ, որպէս և ամենայն ինչ՝ որոյ
լցեալ էցէ ժամանակ։ Թէպէտ և արք աւագքինիք, սակայն
խափան լինէին բարեկարգ ընթացից քաղաքականութեան.
քանզի պակասէին նոցա կարևորագոյն հանգամանք՝ի դէպս
յեղափոխութեան, ասեմ իակ՝ զարդարակուռ կշռութիւն
պնոյից ժամանակին և զարկածից հանդերձելոց։ Փոխանակ
դուն գործելոյ ապրեցուցանել զոր ինչ մարթէին՝ի նաւաբե-
կութենէ նախնի տեսչութեան՝ որ խորտակէրն հարեալ զա-
հաւոր ժայռի ապականութեան քաղաքական բարուց, չհա-
ւանէին զի սահմանադրութիւնք՝ որոց հաստուցեալ էր զհաստա-
տակապետութիւնն յայն ծագ մեծութեան, կարկոցեն յայն-*

1 Պլուտարքոս՝ ի կապն, Գ։

ժամ ածել նմա զկործանումն: Վասն որոյ զարհուրեալ յերե-
սաց ամենայն փոխոխութեան՝ հաւատարակս նզովէին զնո-
վարար յանդգնութիւն ոսկեպսեաց ոմանց և զկրաւորի
բոլոր ժողովրդոց: Բայց այնչափ մեծ էր ազդեցութիւն նոցա,
և մոռածութիւնք սրբազանեալք հնութեամբ ժամանակին
այնպիսի ունէին զօրութիւն, մինչև մարթ իսկ էր նոցա արգե-
լուլ տակաւին զյաղթանակ ժողովրդեանն, եթէ չէր Կեսարու
՝ի գլուխ կացեալ նմին և յաւելեալ բոլորից նորա սաստ և զօ-
րութիւն անտեղեակսալն: Ընտ նմանութեան բանակի զօրաց՝ ոչ
է մարթ հաւաքցութեան յաղթող լինել, բայց ընդ առաջնորդ-
դութեամբ գլխոյ արժանաւորի՝ ի հրամայել. և որք միանգամ
զինի Գրակքոսեանց կանգնեցին զօր՝ ի յեղափոխութիւն,
ամենեքեան արեամբ շաղախեցին զայն, և պարտաւոր գոյն
իբրև խոռվայոյզք: Իսկ Կեսար ամբարձ զայն, և կալաւ ան-
շաղախ յարկեն: Ա՛ ի կազմել զնոր կողմնակցութիւն, ապա-
քէն ՝ի կիր էարկ նա երբեմն և պաշտօնեայս անարգս, բայց և
քաջագոյն ՝ի Հարտարապետս չկարէ կառուցանել շինուած,
եթէ ոչ նիւթովք՝ զոր առձեռնպատրաստ գտանէ: Ա՛յլ
Հաստատուն նորա փոյթ և ջան այն էր՝ միաբանել ընդ իւր
զարս արժանաւորս և մեծարոյս, և ոչ խնայեաց ՝ի Հին առ
Հինքն յանկուցանելոյ մի ըստ միոջէ զՊոմպէոս, զԿրասոս,
զԿիկերոն, զՄերուխլիոս Կեսոն, զՊ. Փուբիոս Կալենոս,
զՄեր. Մուլսիկիոս և զայլս բազումս: Ի ժամանակս յեղափո-
խութեան, մինչդեռ վաղեմի յօրինուածոյն Հասեալ վախճան,
և նորոյն չև ևս լոյծ առեալ Հաստատութիւն, մեծագոյն դը-
ժուարութիւն ոչ այն է յաղթել խափանաց նորոյ առեջու-
թեան՝ զորս ուխտիք փոփոքէ աշխարհն, այլ ամրա-
պնդել զայն ՝ի վերայ միաբանութեան արանց պատուականաց
Հաւանելոց ընդ յեղափոխութիւնն և անյողդողդից յօրինս
բարեյաջողութեան:

ԳԼՈՒԽ Գ.

691–695։

Ա. Կիկերոնի և Ակուտիոսի կայ՚ի բղեշխուորթեն։

(691)։

Յամին 690 ընծայեցան յընտրութիւն բղեշխութեան Կիկերոն, Ա. Անտոնիոս Հիբրիդա, Լ. Կասիոս Լոնգինոս, Կ. Կոռնելիկոս, Կ. Լուկինիոս Սակերդոս, Պ. Սուլպիկիոս Գալբա և Կասիլինա[1]։ Իրազեկ լեալ ծերակուտին դարանացն՝ որ՚ի բազմաց հետէ պատրաստէին, խորհուրդ կալաւ զգէմ ունել նենգաւոր հնարից Կասիլինայ, ժողովելով զամենայն քուեայս՚ի նպաստ Կիկերոնի. և միաբան հաւանութեամբ ընտրեցաւ նա, և եկաց բղեաշխ՚ի սկիզբն 691 ամին։ Ընտրեալ նա այս ըմբոյր զթերի իշխանակցի նորա Անտոնիոսի։

Գերահռչակեալն՚ի Հորտատոսիոս Կիկերոն՝ որ այնչափ հզօր եղև բանիւք, ծնեալ էր Ա. Կամինոս յանուշան ծնողաց։ Սա զինուորեալ առ ժամանակ մի՚ի պատերազմին դաշնակցացն[2], արար իւր ապա առնաբանութեամբ իւրովք հասարակ բաւ մեծ, մանաւանդ ջատագովութեամբ Ռոսկիոսի պատանւոյն՝ զոր իշխանապետն կամէր զրկել՚ի հայրենի ժառանգութենէն։ Յետ մահուն Սիլլայ առաքեցաւ գանձապետութեամբ՚ի Սիկիլիա։ Յամին 684 դատախազ անտեղեակ եկաց դժնդակութեանցն Վերրեսի. և ապա յամին

1 Սակոնիոս, ի ճառ կիկերոնի «ի պատմուճան սպիտակ», էջ 82. տպ. Ովբելեայ։

2 Գլուտորգ. ՚ի կիկերոն, գ։

688՝ *Եկայ դատաւոր ամբծուԹեամբ մեծաւ և արդարու-ԹեամբՔ, որ ընդ ամենայն ընԹացս առնակալուԹեան նո-ցա կացուցին ինձ երևեԼի։ Սակայն մեծարանք քաղաքա-ցւոց չէին բաւական յամենայն ժամանակի ամբառնալ զինա յառաջին բարձ աւագուԹեան. այլ ոտիկս Սալուստիոս ասէ, «Երկիւղ դատաձանուԹեան եղև պատճառ մեծուԹեան նո-ցա. քանզի յայլ դէպս գոռոզուԹիւն ազնուականաց ոչ կա-րէր տանել այսօրինակ ընտրուԹեան, և իբր պղծել համարէր զբռնակալուԹիւն, եԹէ այր նորամուտ՝[1] Թէ և արժանաւոր՝ ընդունէր զայն։ Ա.յլ'ի վերահաս վտանգին նախանձ և ամ-բարտաւանուԹիւն տեղի եառն»[2]։ Ազատանուցն Հռոմայ-շատ իսկ կորուսեալ Թուէր զազդեցուԹիւն իբր, զի'ւ բազ-մանգ ժամուն առաւել համարէր ունել զօրուԹիւն առն միոյ նորամտի'ւ վերայ ժողովրդեան, քան այլում ումեք յին-րոյ անտի։

Կիկերոն'ւ ծնեալ և'ւ յօժարուԹենէ էր կուսակից ժո-ղովրդեան. սակայն երկմտուԹեամբն և շողմանախուԹեամբ և երկիւղիւ նորաձևուԹեանց՝ ապատատրէր ատելուԹեան մերձ աւագորեցոյն և մերձ ժողովրդեան[3]։ Ուղղախոհ էր, այլ փոքրոգի. և չտեսանէր ինչ արդարակորով կշռուԹեամբ, ուստի անճնասիրուԹեան նորա կամ օգտի չէր ինչ վտանգ։ Ի բռնեալ զկողմն ունէր ծերակուտին, զդէմ կալեալ ամենայն աւագերիցն օգտակարաց ռամկին։ Կեսար մեծարէր զհանճար նորա, այլ ոչ վստահէր'ւ ջոյս բարուց նորա. վասն որոյ հակառակ եկայ ընտրուԹեան նորա, և Թշնամի նմին յամենայն աւուրս բռնեշխուԹեան նորա։

1 Նոր կամ նորամուտ կոչէին, որոց ոչ ոք'ւ նախնեաց'ւ բարձ աւագու-Թեան էր ամբարձեալ. (Ապպիանոս, Քաղաքական պատերազմունք, Բ. Ը)։ Ա.յսմ վկայէ և Կիկերոն յառնէն. «Նախկին նորամուտ ես ինքն եմ, զոր'ւ բազում ա-մաց հետէ կարգեցէք բռնաշխ, որպէս յիշէքդ ամենեքին. և գերածայրեան իշ-խանուԹիւն՝ ուր ազատուԹեան Թուէր լինն շրջապատանէջ զմուտս առհասարակ փակեալ, դուք առ'ւ կացուցանել զնա'ւ գլուխ ձեր՝ զամենայն պատանէջս կոր-ծանեցէք, և կամեցայք բանալ այնուհետև առաջի արժանեաց զամենայն ձա-նապարհ». Կիկերոն, Երէրդէ ճառ վՆգաբոյին օրինաց, Ա։

2 Սալուստ. Կատիլինա, ԻԳ։

3 «Կիկերոն մերձ սոցա ձեռն տայր և մերձ նոցա, առ ցանկալի լինելոյ երկանչիւրոց և կողմանց». Դիոն Կասիոս, Լ.Զ. ԻԶ։

Բ. Ագաթակային օրենք Հռուլոսի:

Ի մուտս Ակիերոնի՝ ի պաշտօն՝ ռամկապետն Պ. Սերուիլիոս Հռուլոս առաջարկեաց անդրէն զագարակային օրէնս, որ՝ ի գարուց հետէ յուզէին սահակապէս եթէ զպօշաքաղու-Թիւն զաւակագործաց և եթէ զցասումն ծերակուտին:

Օրէնքս այսոքիկ սահմանէին վաճառել՝ բացառութեամբ ինչ՝ զկալուածս այն ինչ ստացեալս, և զայլս ոմանս՝ որ չէին ինչ շահատէաք պետութեան, և գնել արծաթոյն կալուածս Հռոմայեցոց սահմանեալ սակիս, առ՝ ի բաժանել զայնս աղքատ քաղաքացւոց: Կացուցանել՝ ըստ եղանակի յընտրութեան մեծի քրմապետին, քուէիւք ԼԱ ցեղից ընտրելոց վիճակաւ յերեսուն և՝ ի հնգից անտի, զորս ակնարկս տան կամ տանեսեաս, և տալ նոցա իշխանութիւն լուծել և ազատ ընծան հինգ՝ բաշխելոյ կամ վաճառելոյ զկալուածս Հռոմայեցոց պետութեան, և զտացուածս իւրաքանչիւրոց ուր և կացին: Եւ մի զոք կարգել՝ ի պաշտօնն յորոց չլցեն՝ ի Հռոմէ, որով մերժէր՝ ի բաց Պոմպէոս. և զիշխանութիւն տանեսեացդ հաստատել օրինօք վիճակաց: Նոցա միայնոյ յանձնել զերեսունս տանց տալ հրամայեցեալ որ ինչ տէրութեան և որ առանձնակացոց էին: Կալուածոց հասարակաց՝ որ ոչ վաճառէին, հարկս ծանուցանել[2]: Տանեսեացդ տալ իշխանութիւն պահանջելոյ՝ ի զօրավարացդ՝ բաց՝ ի Պոմպէոսէ՝ զհաման առնլին, և զարծաթոյ տուելոյ նոցա յաւուրս պատերազմի, չև ևս առանձինելոյ՝ ի գանձ աշխարհին, կամ՝ ի շինուածս ուրեք ծախելոյ: Հրամայեաց տալ նոցա բնակեցուցանելոյ գաղութս, ուր և պատշաճ Թուեցի նոցա, և մանաւանդ յերկիրն Սուելայ և յագարակս Կամպանիոյ, յորս հինգ հազար քաղաքացիք Հռոմայեցի հանդ-

1 Կիկ. Երէց ՃՈՒ վան Ագարաիոյին օրինաց, ԻԸ:

2 Ձէին՝ ի Թիւս այսոցիկ կալուածք ընտրհեալք գաշտին, որով ազատ գոանէր յօրինաց տան Ափրիկէ, որ յաւուրց Սկիպիոնի լեալ էր՝ ի կալուածս հասարակապետութեան, և՝ ի Պոմպէոսէ ընտրհեալ հեծեալայ: Ի Կամպանիա իւրաքանչիւրոց՝ ի գաղթականաց պարտ էր ունել արտաւարս տան, և յերկրին Սուելայ՝ երկուասան:

պերձեալ էին գաղթել։ Բոլանդակ ատացեալ զամենայն մա֊ տակարարութիւն հասից և գանձուց տէրութեան ՚ի ձեռս նոցա տալ, և կարել նոցա սակրաւորս տանել յառաջոյ, հար֊ցանել հմայս, և ընտրել յատկետայց անտի արս երկերիւր ՚ի կատարումն հրամանաց իւրեանց ՚ի գաւառս՝ անթողեքելի։

Ընդ մեծամեծ օգուտս ոչ սակաւ և անպատշաճու֊թիւնք էին օրինացս։ Սպաքէն սխալեր Հռուլոս՝ ոչ սահման֊նելով զվայրս գաղթականացն՝ զորս կամէր. քացառութիւնս երկուս առնելով, զմին հակառակ և զմիւսն ՚ի նպաստ Պոմ֊պէի. և տալով ատենպետաց իշխանութիւն անսահման, որով պատճառս տային նոցա լսել հաճոյս և լսել շահու իւրեանց գոր֊ծելոյ. սակայն առաջարկութեանն նպատակ մեծ էր քա֊ղաքական։ Կալուածք հասարակաց՝ հարստահարութեամբ յափշտակեալք կամ ՚ի գաղթականացն Սիլլայ գրաւեալք, ոչ ևս էին ՚ի միջի։ Եւ օրէնք դարձուցանէին զայնոսիկ յառաջին իւրեանց պայման, սահմանելով վաճառել զերկիրս կալեալս զինուք։ Դարձեալ և բազում այնչափ կալուածք գրաւեալք ՚ի Սիլլայ ՚ի գանձս հասարակաց, և ընծայեալք և կամ վա֊ճառեալք ՚ի նմանէ անարդ գնով հանախտահիւ իւրոց՝ ետուն֊էին ինչ յարտ, զի ՚ի վէճս էին և չգտանէր ոք առացող նոցին։ Այս ուրեմն Հասարակապետութեան հասեալ յօգնականութիւն աղքատանաւտին՝ օգտակար ինչ գործէր յամբառնալ զվինս կալուածոցն և յատկացուել զժառանգս նոցին։ Վասն որոյ օրէնքն Հռուլոսի առուգիս էին օրէնք ազատութեան ՚ի տու֊գանաց։ Ընդ են անիրաւութիւնք առեալ ժամանակաւ հաս֊տատութիւն, զորս պարտ է հաստատել և օրինաց՝ առ ՚ի բառ֊նալ զպատճառս վէճից, տալով ապահովութիւն կենաց, և առացուածոց զիւրաքանչիւր յարտ։

Եթէ մեծի Հարստահաւոյն գիտացեալ էր ամբառնալ ՚ի վեր քան զինուորիս իւրաքանչիւրոց ոմանց և կուսակցութեան, պաշտպան արդեօք կայր՝ որպէս զնեաւր՝ առաջարկութեան ոմանցն, ուղղելով որ ինչ ՚ի նմա կարի ինքնիշխանականն էր կամ յոյժ տարտամ։ Այլ շուրջ պաշարեալ ՚ի միաբանու֊թենէ առաքանուցն, և կամելով հաճոյ լինել առաջեւոց՝ որոց ձեռնակալ էին օրէնքն, հակառակ եկաց նոցին իւրով պեր֊

Հախօսութեամբն, առաւարայուցանելով զթերութիւնս նո-
ցին. զի ասէր թէ սակաւուց միայն գտանէր այնուիկ օգտա-
կար. և նպաստաւոր Պոմպէի երևեալ, խափանէր զընտրու-
թիւն նորա՝ ի թիւս տանուպետաց՝ վասն հեռաւորութեան նո-
րա: Տայր՝ ի ձեռս սակաւուց ոմանց իշխանութիւն՝ ի վերայ
Թագաւորութեանց, որպէս Եգիպտոսի և մեծատարած գա-
ւառաց Ասիոյ. Կապուայ կալ մայրաքաղաք Իտալիոյ, և Հռով-
մայ շուրջ պատեալ՝ ի զինուորական գաղթականաց արբանե-
կաց տասանց նորոց բռնակալաց՝ կորուսանել զազատութիւն:
Ձուլանէր անտեղի և անհեթեթ՝ գնել երկիրս փոխանակ
բաժանելոյ զհասարակաց կալուածս, և անմարթ իսկ բռնա-
պատել զժողովուրդ մայրաքաղաքին երթալ տառապել յան-
պատանս: Եւ ապա առ՝ ի յայտնապոյն և առնել զկրկնակի
չարաշահութիւն օրինադրին, ցուցանէր աներոյ Հռովմայեցւոյ մե-
ծացեալ յաւարէ տարապրելոյ, և նոքին իսկ Հռովմայեցւոյն պա-
հեալ անձին իւրում իշխանութիւն կալոյ տանուպետս:

Սակայն Կիկերոն՝ ի պարտաւել անդ զառաջարկութիւն Հռովմայեցւոյ, բայայայտ և պարզէ զքաղաքավարական միտս նո-
ցա, զի ասէ. «Նոր օրինօքս մեծանան գրաւոյք կալուածոց աէրութեան, և զերծանիցեն յարժանահաս բարկութենէ հա-
սարակաց: Քանիք տարակուսեալ կան մեծահարուստ առա-
ջուածովքն, և չկարեն տանել աւերութեան որ ընդ առաջ
բաշխեալ Սիլլայ զուպտոյն է: Քանիք կամին վաճառել զայս,
և չգտանեն զոք որ գնեսցէ. քանիք զուն գործեն իւ և է
հնարիւք՝ ի բաց տալ զայս: Եւ դուք, Հռովմայեցիք, վաճա-
ռիցէք զհաս ձեր՝ զոր հարքն ձեր ստացան այնչափ քրտանց և
արեան, առ՝ ի յաձախել զմեծութիւն և յատակհոլել զան-
դորութիւն ժառանգողաց զինչս յափշտակեալս՝ ի Սիլլայ»[1]:

Թուի առա յայտնապէս՝ զլանալ Կիկերոնի զհարկ անդորր
առնելոյ ժառանգութեան նորոց բազմաթիւ աւերից, որոց
ստացեալ էր յայտնեսեաց ինչ ազգային ընչից: Սակայն յետ
ոչ բազմաց յառաջարկել այլոց ուրուք՝ ի ռամկապետաց առ
բառնալ՝ ի քաղաքական նուաստութենէ զորդիս տարապրելոց,

1 Կիկերոն, Երկրորդ ճառ վնասակար օրինաց, իջ:

ընդդէմ դարձաւ նա. իբր ոչ եթէ անկրաւ համարեալ զայն, այլ զի մի գուցէ վերստին հաստատութեան նոցա՝ ի քաղաքական իրաւունս՝ զհետ գայցէ և հատուցումն ստացուածոց նոցա, որով թուէր նման առնային կարգաց վեր՝ ի վայր տապալել[1]: Այսու անհեթեթ հակաստութեամբ մարտնչէր Վիկերոն ընդդէմ երկուց հաշտարար օրինաց. միում՝ զի ապահովէր, միւսումն՝ զի անհանգիստ առնէր զատացողս ընչից տարապրեց: Եւ ընդդէր էր՝ զի գերահանձար մարդկան, որոց չկրեն հաւանեալ միտք, բազում այն է՝ զի ոչ յայլ ինչ օգնեն հանձար, քան՝ ի պաշտպանել նոքին դիւրութեամբ զհակառակգոյն միաձայնից խնդիրս: Սակայն յաղթանակեցին կարծիք Վիկերոնի գերազանցութեամբ նորա, և առաջարկութիւն Հռոմէացւոցն՝ թէպէտ և ըղձալի յոյժ ոմանց՝ եդուտ՝ ի ծերակուտին հակառակութիւն այնպիսի, զի չև յաշխարհաժողով եղեալ մերժեցաւ:

Վեսար նեցուկ կայր ազատականին օրինաց. զի յաւելուին նոքօք արժէք կալուածոց, զի ազգային ընչից նորոգէր յարդ, զի յաձախէին ազխուրք գանձուց աշխարհին, զի խափանէին շռայլութիւնք զօրավարաց, և ազատեր Հռոմ՝ ի խռովայղձ և՝ ի վնասակար խուժանին՝ զգօնացուցեալ զնա յանբանականն գնացից և զերծուցեալ՝ ի թշուառութենէ: Պաշտպան եւայց նա ժառանգութեան մանկանց տարապրելոց, զի մարթ էր այսուհետ խափանել՝ ի սպառ զմի յանկրաւութեանց նախնոյ վարչութեան:

Են յաղթութիւնք՝ որ փառապարգեւք յաղթողացն էն քան պարտելոց. այսպէս էր յաղթութիւն Վիկերոնի. մերժումն ազատականին օրինաց և բողոքոյ որդւոց տարապրելոց՝ յաձախեաց զարտունջ ամբոխին: Խուռն բազմութիւն քաղաքացւոց ատելութիւնք ի զրկանաց և յոռնակոխ լինելոյ արդարութեան՝ առաւարացուցին զխուժդս հանախտից, որ գաղտագողի այսուհետ խափանել՝ ի սպառ զմի յանկրաւութեանց նախնոյ վարչութեան:

[1] Վիկերոն, Նամախանի առ Ատթիկոս, Բ. 1: — Պլուտարքոս՝ ի Կիկերոն, ժէ: — «Մինչդեռ մանկանն Հռոմայեցի վաստակաւոր և արժանապատիւ յայնպիսի հանգամանս էր՝ զի ընդունելութիւն նոցա յաառեանս՝ տապալէր զատելութիւն մեր, յաշս էգեալ զինշանութիւն նոցա՝ խլեսցի խափանել զմեզ նոցին՝ ի ժողովս և յաւագութիւնս»· Վիկերոն, ձառ ընդդէմ Լ· Պիսոնի, Բ:

պատրաստէին յարպետութիւն, և կեսարու սրամտեալ ընդ արհամարհել ծերակուտին զնախանձն խոհական քաղաքավարութիւն՝ որով բազում անգամ ապրեալ էր Հռոմի'ն բազմադիմի խառնութեանց, եղ 'ի մեծ ջանալ առնոյն հնարիւք պահել զհինանս իշխանութեան նորա։ Ի սոյն միտս հաւանեցոյց զառաքեալսն Տ. Լաբիենոս, զայն՝ որ էրևն ապա մի'ն հաւատարիմ զօրավարաց իւրոց, յարուցանել ամբաստանութիւն եղեռնատարութեան՝ որ ուղղակի հարկանէր զգեղծումն պետութեան միավ'ն նախամանուկեանցն իւրոց[1]։

Գ. Դատ Հռաբիրիոսի։

(691)։

Ի բազմաց հետէ յորժամ առանձին կամ արտաքին խառնութեանց աղմուկք երկեղուկս արկանէին, սովորութիւն էր զգուշանալ քաղաքին որպէս'ի ժանտախտի պաշարման՝ հրամայել բղեշխից սրբազան ձևոնն. Հակել զի ոմի' գոյցէ վնաս ինչ հասցէ Հասարակապետութեան։ Այսահման էր յայնժամ խնդիր բղեշխից[2]. և 'ի ժանտախտի խառնութեան վարէր ծերակոյտն յաձախ տալլին ինքնիշխանութեամբ՝ տալ 'ի մահ զխռովարարս ոմանս առանց առեղական կարգաց։ Եւ ըստ յաձախելոյ խռովութեանց՝ յաձախապէս և սովորութիւն լեալ էր ձեռնարկել 'ի յետինս յայս։ Ընդ վայր ռամկապետք բողոքէին զայսմանէ՝ որ խափանէրն զառևտրական օրէնս աշխարհին, օրինաւոր առնէր զանիրաւ սպանութիւնս, և յատակ ընդ պատերազմի փոխէր զՀռոմ։ Ներեսիոս վերատին փորձեաց բթացուցանել զզէնս զայս ահաւոր 'ի ձեռս ծերակուտին։

Երեսուն և եօթն ամօք յառաջ որպէս ասացաք, յառնուլ Սատուրնինոսի յախտուն պաշտպանի ազատականին օրինաց՝

1 «Կամին բառնալ զառևտրն ապաւէն Հասարակապետութեան, զառևտրն երաշխաւորութիւն'ի դէպս զժուարինս»։ Կիկերոն, ճառ վասն Հռաբիրիոսի, Բ։

2 «Այս գերագոյն իշխանութեամբ՝ զոր ըստ օրինաց Հռոմայեցւոց առանդէր ծերակոյտն բղեշխից, կարող էին զօրաժողով լինել, պատերազմ մղել, 'ի հպատակութեան հնազանդութեան ունել որ և է հնարիւք՝ զազգս դաշնակիցս և զքաղաքացիս, իշխանաբար վարել առանին և 'ի զօրս։ ուր յայլ դէպս առանց կամաց ժողովգեան ոչ մի ինչ իրաւունք են 'ի տուս բղեշխից»։ Սալուստ։ Կատիլինա, ԻԹ։

յաղվիւ ուրեք խռովութեան զկապիտոլ, քարոզ կարդաց զհայրենիս գոլ՝ի վտանգի: Կոչեաւ՝ի կուռն անդ ռամկապետն, և Կ. Հռաբիրիոս առեալ ծերակուտին պարծէր իբր իսկ սպանեալ զնա: Ձեռն այնչափ առնոյ Լաբիենոս յարեաւ դատախազ Հռաբիրեայ ըստ վաղեմի օրինացն յաղագս մարդասպանութեան, որ ոչ ներկեր սպանողին՝ իբր քրէական յանցաւորի՝ գնալ վտարանդի ուր և կամէրն, և Թշնամի հասարակաց յայտ արարեալ գնա՝ արժանի համարէր սատիկ և Թշնամանալոց պատուհասից[1]: Ամբաստանութիւնս այս յուզեաց աղմուկ մեծ. և ծերակուտին՝ի միտ առեալ զի ընդդէմ իշխանութեան իւրոյ էր հարուածն, չկամէր զի դատափետ լինի ոք վասն կատարելոյ զոր ինչ իւր իսկ հրամայեալ էր: Իսկ ժողովուրդն և ռամկապետք պնդէին ածել զամբաստանեալն յատեան և ամենեցուն յուզէին ոգիք: Համարէր Լաբիենոս վկայ՝ի լինել մեզ՝ի հօրեղբարց իւրոց՝ սպանեալ ընդ Սատուրնինոսի, յանդգնեալ գնել՝ի տեսիլ Ս. Քրիսեան դաշտի զպատկեր խռովայոյզ ռամկապետին, և ոչ երկուցեալ յօրինակէ Սեքստոսի Տիտոսի՝ որ դատապարտեցաւն երբեմն վասն պահելոյ ևեթ՝ի տան զպատկեր նորին ինքեան Սատուրնինեայ[2]: Ածաւ դատն ըստ նախնոյ սովորութեան առաջի երկպետացն. և առնապետն կացոյց զկեսար, և զհօրեղբօրորդին նորուն Լուկիոս Կեսար, դառն: Բայց Թէպետ և վասն նորին իսկ բուռն դատախազութեան առաջի Ջատագովիցն նորա Որտենսեայ և Կիկերոնի հերքեցան օրէնքն այն՝ որ յաղագս մարդասպանութեան[3], սակայն Հռաբիրիոս ոչ զերծեալ՝ի դատակնքոյն՝ բողոք կալաւ առ ժողովուրդն: Բայց այնպէս զայրացեալ էր զրգռութիւն ոգւոց ընդդէմ նորա, զի վտանգ՝ի վերայ կայր անդարձ հաստատելոյ վճռոյն: Յայնժամ առնապետն Մետելլոս Կելեր մարթանօք իւրովք խափանեաց զդատն, խոնարհեցուցեալ զդրօշն կանգնեալ՝ի Յանիկուլա[4]: Բանզի նշանակ էր այն առաջադրեալ Թշնամեաց յերկիր Հռովմայ. վասն որոյ

1 Սալուստ. Կատիլինա, ԾԲ:
2 Կիկերոն, Ճառ՝ի պաշպանութիւն Տոմիտիոսի, Թ:
3 Սուետոնիոս, Կեսար, ժԲ:
4 Դիոն Կասիոս, Լիբ. ԻԶ, ԻԷ:

պատարկին ամենայն ատեանք, և ժողովուրդն դիմէր ՚ի զէն։ Սկսեալ էին յոյժ Հռովմայեցւոց սովորութիւնք իւրեանց, և զի զարձեալ սովորութիւնս այս ներկր ատենակալաց լուծանել ըստ կամի զժողով քաղաքացւոց, պատճառք կարևորք էին առ պատկառ կալոյ նմին։ Լուծաւ ժողովն վաղվաղակի, և ոչ ևս էլ խնդիրն յատեան։ Սակայն կեսար համարէր հասեալ ՚ի կէտ նպատակին իւրոյ. զի ոչ խնդրեր նա զմահ Հռաբիրեայ, ընդ որում ապա յիշխանապետութեան իւրում մարդասիրութեամբ խոկ վարեցաւ, այլ կամէր միայն ցուցանել ծերակուտին զզօրութիւն կուսակցութեան ոսոխին, և տալ նմա ՚ի միտ առնուլ, զի այնուհետև չէր մարթ նմա՝ որպէս յառաջ գրաւոքեանց՝ տալ ՚ի մահ զհակառակորդս իւր՝ պատճառաւ հօք հասարակաց փրկութեան։

Որպէս զամենայն դէպս պատեհ առնոյր կեսար աղաչել զնախնին կարգ վարչութեան, նոյնպէս և ամենայն փութով պաշտպան կայր գաւառաց, որ վայրապար սպասէին արդարութեան և պաշտպանութեան ՚ի Հռովմայ։ Օրինակ լիցի, ՚ի նմին ամի ամբաստան եղև նա զկ. Կալպուրնեայ Պիսոնէ, որ բռնաշէն կացեալ էր յամին 687, և սպա կուսակալ ՚ի Կեղտս յայնկոյս Պադոսի, և դատախազ եկաց ընդդէմ նորա՝ զի առանց օրինաց տուեալ էր նորա սպանանել զոմն ՚ի բնակչաց աշխարհին։ Եւ թէպէտ ամբաստանեալն անպարտ արձակեցաւ զօրութեամբ Կիկերոնի, այլ կեսար ետ բնակչաց յայնկոյս Պադոսի հաւաստիս զվերինդրութեան օգտի նոցա և զնուաճոց պաշտպանութեան։

Դ. Քրմապետութիւն կեսարու։

(691)։

Ոչ յամեաց և ժողովուրդն փոխադարձել նմա յայտնապէս հաւաստիս սիրոյ։

Իշխանութիւն քրմապետի՝ մի ՚ի կարևորաց աստի ՚ի Հասարակաց էր, և տայր զօրութիւն մեծ որում առնոյին զանձամբ զիշխանութիւնն զայն. քանզի կրօնք խառնէին ՚ի Հռովմ յամենայն գործս Հասարակաց և իւրա-

քանչիւրոց: Ի մեռանել Մեսեղլոսի Պիոսի քրմապետի յամին 691, երևեցաւ՝ որպիսիք ումանք էին Պ. Սեւուէրոս Խաւբիկոս, և Կ. Լուտատիոս Կատուլոս՝ իշխան ծերակուտին, հետամուտ եղեն փոխանակել զնա՝ ի պաշտամանն: Չհետ եղև այնմ և Կեսար, և առ՝ ի ցուցանել անշուշտ զարժանաւորութիւն իւր՝ հրատարակեաց, որպէս աներկբայելի թուի յայնժամ, մատեան մի ընդարձակ զհմայական իրանց, և միւս այլ աստղաբաշխական՝ տալ ծանօթս յհատակի զկիւտից Ալեքսանդրեան վարժարանին[1]: Սերուիլիոս Խաւբիկոս և Կատուլոս՝ յաղագս անցելոց իւրեանց գնացիցն և մեծարանաց առաջի ժողովրդեան՝ վատահ էին ընդ իւրեանց ընտրութիւն, մանաւանդ զի յաւուրց անտի Սիլլայ ոչ խառնելով ժողովրդեան յընտրութիւն մեծի քրմապետին՝ ի ձեռս քրմաց դասուն միայն էր ընտրութիւնն: Լաբիենոս առ՝ ի դիւրել կեսարու զվերթել յայն բարձր աստիճանն՝ էառ զվէճիս առաջի կին, որ թողոյր զընտրութիւնն՝ ի քուեայս ժողովրդեան: Ա. յայ հնարագիտութիւն տպչնապեցոյց զայլ հետամուտս. այլ նոցա ոչ յուսահատեալ՝ ձեռն արկին ըստ սովորութեան կաշառակուր առնել զընտրողս: Կուսակիցք առ հատարակ աստիճանին միաբանեցին ընդդէմ Կեսարու. այլ նա հնարիւք ընդդէմ հնարից նոցա մարտուցեալ, զդէմ կալաւ նոցա՝ առեալ՝ ի փոխ ահագին բազում: և առ՝ ի յաղթութիւն՝ զի տայց նա ըստ Ապպիանոսի՝ յինքն ձգել և զաղբատանիսն առատաձեռնութեամբ, և զվարթոմն՝ յորոց փոխ առեալ էր[2]: Կատուլեայ գիտելով ծանրաբեռնեալ զկեսար ընդ պարտիւք և անգիտացեալ բուսոյ բարուց նորա, մատուցանէր նմա զամար մեծ ահագին՝ առ՝ ի տալ նմա հրաժարել՝ ի հետա-

1 Մակրոբ· Սատուրնալիա, Ա· ԺԶ: — Պլինիկիանոս, Զ· էջ 716, տպ· Փուչ: — Մակրոբիոս (անդ) յիշատակէ զԺ·Զ գիրս մատենագրութեան կեսարու զնմանէ: — Դիոն Կասիոս, ԼԶ· ԼԶ, ասէ այսպէս· «Փոխանակ զի ձեռնտու և օգնական լեալ էր Լաբիենոսի ընդդէմ Հռաբիրեայ, և չէր հաւանեալ ընդ դատակնիք Լենտուլեայ»: Սակայն վերոյ մատենագիրս հելլէն· զի քրմապետութիւն կեսարու էրէց է քան զդատաւորութիւն Կատիլինայ: (Տես զվէճիս Պատերկուլոս, Բ· ԽԴ):

2 Ապպ· Քաղաք· պատերազ· Բ· Ա· Ը· ԺԴ:

մոռանել: Ա.յլ նա պատասխանի արար՝ զի պատրաստ էր աւելի խակ քան զչուանդն զայն ՚ի փոխ առնուլ՚ի յաջողու-թիւն ընտրութեան իւրոյ[1]:

Եհաս ուր ուրեմն օրն մեծ սահմանելոյ զտաղդ Կեսարու. և յերթալ նորա յատեան՝ խորհուրդք տխուրք յուզէին յե-ռանդն մտաց նորա. խորհէր զի՚ի ձախողել իրացն՝ հասանէր նմա գնալ վտարանդի վասն պարտուց, և գիրկս աճեալ մօր իւրում ասէր. «Կամ քրմապետ տեսցես զիս այսօր, և կամ փախստեայ»[2]: Ա.յլ շքեղ յաղթանակ պսակեաց զՀռոմն նո-ցա, և ՚ի լուծն ընդունելութեան նորա, առաւել ելլեն նմա քրե-քայք ՚ի ցեղից անտի հակառակորդաց իւրոց՝ քան նոցին հա-կառակորդացն յամենայն ցեղից միանգամայն[3]:

Յաղթանակս այս յաւել կատաղ ծերակուտին՝ թէ դուցէ Կեսար այնու ազդեցութեամբն ՚ի վերայ ժողովրդեան զեղծ-ցի. այլ ոչ փոխեաց նա զկնայս իւր:

Մինչև ցայնժամ բնակէր նա ՚ի չափաւոր ուրեք տան, ՚ի փողոցն կոչեցեալ Սուբուրա. իսկ ՚ի կալն քրմապետ՝ փոխեաց զբնակութիւն իւր ՚ի հասարակաց տպարանս ՚ի Սրբազանն անուանեալ պողոտայ[4]: Ի չքնաղութիւնս այս հարկ առնէր նմա ՚ի պայծառազոյն կեանս, որպէս և իմաստասիրել՚ի մե-ծածախ հանդերձանաց ընդունելութեան ուրուք ՚ի քրմաց, յորում երևէր նա՝ իբրև Թագաւոր արարողապետ, զոյց Մակրոբիոս աւանդէ մանրապատում զգանկալի վէպս[5]: Դար-

1 Պլուտարքոս. ՚ի կեսար, է:
2 Պլուտարքոս. ՚ի կեսար, է:
3 Սուետոն. կեսար, ժԳ:
4 Սուետոն. կեսար, ի՚Զ:
5 Ի 23 ամենայն աւդուտոսի, յաւուր հանդիսի նաւակատեաց Վենուսեայ քրմին Ադիսի, ապարանքն զարդարէին և անկողինք փղոսկրեայք արկանէին ՚ի գահլճի կոչնոց: Յառաջին երկուս գահլիճս էին քուրմքն Կ. Կաուսուլոս, Մ. Եմի-լիոս Լեպիդոս, Դ. Սիլանոս, Կ. Կեսար, արարողապետ, և... Յուլիոս Կեսար հաւահմայ: Իսկ յերրորդումն էին Եսուեան կուսանք: Եւ համագամոյն կարգ էին այսպէս. ՚ի սկզբան անդ՝ խոնջունք ազգի ազգի, տորգիկք, ծնեբեկ, հաւք պարտրակք, և ընդ նոքօք կարկանդակք ՚ի խոնջունեաց ծովու և գետոց (զորս յիշատակէ Պլինիոս), ՚ի Թզկացիկ Թռչնեկաց և ՚ի մանէ այծեման և վարազու պատրաստեալ. Թռչունք գարձեալ գկրատարարքն, Թզկացիկք, և կոնքեղք ծի-րանածինք խահամրքեալք ալերբ: Յերկրորդումն սպասու՝ պտկունք առեանց

ձեռալ և ամենրաատան Հոյակատ կառոյց նա՝ ի վերայ Նեմեայ լճակին՝ մերձ յԱրկիւեա։

Ե· Դաւակցութիւն Կաստիլիոյ։

Կաստիլիոնա, զորմէ վաղ իսկ՝ ի վեր անդր եղեն մեզ բանք, երկիցս ձախողեալ՝ ի խնդիր բռնակալութեան՝ դալձեալ յաջին 692 հեառամուտ եղև այնմ, ոչ դադարեալ և՝ ի խորհրդոյ դաւակցութեան։ Բարեպատեհ թուէր ժամանակն՝ զի Պոմպէոս յԱսիա էր, խաղս անդադար՝ ի զօրաց, և Անտոնիոս իշխանակից Աւիկերոսի՝ թափարտեալ՝ ի դաւակցութիւն։ Վէր՝ ի վերոյ էր խաղաղութիւն, կարիք ոչ՝ ի սպառ շինչեալ, և տենչ և շահ իւրաքանչիւր առ ոսն կոխեալ՝ բազմադիմի հնարս ընձեռէին նախայարձակ յանդգնելումն յաղթուկս [1]։ Զորս միանգամ կոզոպտեաւն էր Սիլլայ, և զորս Ճոխացուցեալ՝ բայց վաճառեալ էր նոցա զարդիւնս անբաւ առատին, հաւասարապէս էին ժժգոհք· որպէս զի՝ ի նոյն խորհուրդ վէր՝ ի վայր տապալելոյ զամենայն՝ միաբանէին և հարստահարեալքն և հալածեալքն հարստահարութեան։

Յամենայն ազգի ազգի եղերունս անկղնտացեալ Կաստիլիոնայ՝ յանդգնութիւնս անդ իւր երակեր կործանել զանկասելութիւնս· այլ մարթ իսկ էր կասկածել քան Աւիկերոսի՝ զի էին նորա և կամք՝ ի հուր և՝ ի սուր դառելոյ զամենայն, որպէս և յոլովք՝ ի պատմագրաց զՀետ Աւիկերոսի յաւելուն։ Սա ինքն այր ազնուատոհմիկ, դանձասէր կացեալ յառին 677, երևելի լեալ էր՝ ի Մակեդոնիա՝ ի զօրս Կուրիոնի· յառին 686՝ դառաւոր, և՝ ի միտս առի կոտակալ կացեալ էր յԱփրիկէ։ Պարտաւէր յառենեցունց վասն շահալեալ իւրոց՝ ի մանկութեան զձեռս իւր՝ ի սպանութիւնս Սիլլայ, և վասն զոլոզութեանն ընդ ժանտաժուռս մարդկան՝ ի պղծագործ մծղնէութեան, խոզի, գլուխ վարազու, պղակունս ձկան և պտկանց խոզի· բազ ընտանի և վայրենի խարշեալ, նապաստակք, թռչունք խորովեալք, և՝ ի նաշխոյ հաց Պիկենեան»· Մակրոբիոս, Սատուրնալիան, Բ· Գ։

1 «Յայն առհման հասեալ էր, զի առ՝ ի տապալել զկառիսարեալ պետութիւնն շատ էր մեմե և խակ մղուելի յանդգնելոյ ուրուք»· Պլուտարքոս՝ ի Կիկերոն, ԺԵ։

թիւնս և յայլ ոմիւրս. և չէր նման գատանել պատճառս սրբելոյ յանձնէ զկեզտ անուանն, եթէ չէր առեներգուն գիտելի՝ զի քաղաքական կուսակցութիւնք՝ ի յաղթելն քանի՛ անխնայք էն՝ ի զրպարտել զպարտեալս։ Եւ դարձեալ պարտ է խոստովանել, զի յոյժ հանդարտութեամբ՝ որով գատապարտ առնէին զինա՝ հաստատակաց էին բազմոց ականատուր արանց ժամանակին. որպիսի ոք և Ա.նատոլիոս էր՝ իշխանակից Վիկերոնի, որում ապա պաշտպան եկաց սա։ Չէր մարթ Կատիլինայ՝ առն այնպիսւոյ հանձարեղի և գործօնէի՝ մտաբերել յանզգամութիւն այնպիսի՛ ի կատարած և՛ ի հրդեհ, և թագաւորել՛ի վերայ աւերակաց և դիականց։ Այլ ևս է՛ի միտ առնուլ զչիմարտուԹիւն՝ ի նկարագրէն՝ զոր տայ Վիկերոն յետ եօԹն ամաց մահուն Կատիլինայ, յորժամ Հանդարտագոյն խմաստասիրեալ Հարստահաւոսին մեծի՝ նկարէր յերանգս ոչ այնպէս տխուր զինա ինքն, զոր այնչափ ոգեղէն ընծայեցուցեալ էր յառաջադոյն։ «Կատիլինայ, զոր չկարէքն մոռանալ, էին խակ՝ որպէս Թուի ինձ, եթէ ոչ խակապէս, գէթ յերևմանն մեծամեծ առաքինութիւնք։ Վեհակիցէր նա ընդ արս Թուրս, այլ կեղծէր մեծարել զարժանաւորս։ Հրապոյրք յոտնուԹեան տիրէին նմա, այլ ոչ ինչ նուազ եռանդեամբ պարապէր յաշխատուԹիւն և՛ ի գործ։ Բոց յանկուԹեանց տոչորէր զսիրտն, այլ էին՛ ի նմա և ախորժակք պատերազմական վաստակոց։ Չկարծեմ երևեալ երբէք ուրեք յաշխարհի այր, որոյ այնպիսի անհեթեթ խառնուրդս բազմապիսի և ներհակակիր հանգամանաց յանձին կցորդեալ լոյէ»[1]։

ԴաւակցուԹիւնս այս՛ ի խնդալեզոյ առաջնորդին տարտծեալ էր ոչ սակաւ. և դաւակիցք էին՛ ի նոյն յատենակալաց խակ ծերակուտին և յատենաց և յազատորդւոց, և բազմուԹիւն յոյժ յերևելեաց՛ ի դաշնաւոր քաղաքաց։ Վիկերոն՛ ի վերայ հասեալ դատաստանին, ժողովեաց զծերակոյտն՛ ի տաճար ՄխաբանուԹեան, և՛ ի վեր եհան նոցա զկրան՝ որոց տեղեկացեալ էր. եցոյց զի՛ ի հինգ կալանպատն նոյեմբերի յայտնելոց էր ապստամբուԹիւն Լետրուրիա, և՛ ի վաղիւ անդր աղմուկ

1 Վիկերոն, ճառ վասն Մ. Կելիոյ, ե։ Խօսքեցաւ Ճառս յամին 689։

խռովութեան յառնելոյ ՚ի Հռոմէ: զի ՚ի վաղուց էին կեանք բռնէն, և ամենայն ուրեք շեղջակուսեալ զինք և հնարք ՚ի հրապոյրս սուսերամարտից՝ ցուցանէին զահաւոր պատրաստու-
թիւնս: Կասիլինա կոչեցեալ յառեան և հարցեալ ՚ի բռնէն, զոչէր՝ թէ բռնակալութիւն սակաւուց ոմանց, զօշաքա-
ղութիւն նոցա և անգթութիւն էին չքմարիտ պատճառք անձ-
կութեանն՝ յորում տառապէր Հասարակապետութիւնն: Եւ ապա մերժեալ արհամարհանօք զխորհուրդս ապստամբու-
թեան՝ յոր ամբաստանէին, ասէ ապառնալեօք. «Ժողովուրդ Հռոմայեցւոց մարմին է հուժկու, այլ անգլուխ. ես ինքն եղէց նմա ՚ի գլուխ»[1]: Եւ զայս ասացեալ՝ էլ յառեանէն, թողեալ զծե-
րակոյտն ապշեալ և ահաբեկ: Յայնժամ էս առեանն զվճիռն սովորական, հրամայեալ բռնէն հանել՝ զի մի՛ զոյգ զեան զեան
ևիչ հասցէ Հասարակապետութեան:

Ընտրութիւն բռնէն վասն ամին երկրորդի, որ յաջո-
ղեալն էր յայնժամ, եղև ՚ի 21 Հոկտեմբերի յամին 691՝ և կարգեցան Սիլանոս ընդ Մուրենայ, որով զայս երրորդ ան-
գամ՚ի դէպն էլ ակնկալութիւն Կասիլինայ: Այսոքեաց նա յայնժամ ընդ ամենայն կոզմանս Իտալիոյ ապա Հաւատարիմս ինքեան, ընդ որս զԿ. Մանլիոս՝ յԵտրուրիա, զՄեպտիմիոս՚ի Պիկենան, և զԿ. Յուլիոս՝ յԱպուլիա պատրաստել զապստամ-
բութիւնն[2]: *Ի քեռան Տիբերի գումարտակ մի հաւատարմին, սահմանեալ երբեմն ընդդէմ Հինից, հրամանի նորա միայր*[3]: *Ի Հռոմ էսկ փոյթ յանդուգն փորձեցաւ ՚ի սպանութիւն Կի-*
կերոնի:

Ծերակոյտն վերատին կոչեցաւ յառեան յ8 Նոյեմբերի, և Կասիլինա ժպրհեցաւ զալ նստել ընդ էշխանակից իւր: Ա-
կերոն ՚ի միում՚ի Հռչակաւոր ատենաբանութեանցն կշտամ-

1 Պլուտարքոս· ՚ի կիւերտն, ժթ:

2 Սալուստոս· կապիլինա, իէ, իՀ:

3 Երևի այս ՚ի բանից անուն փլօրոսի (Գ· 2·) զինուսուցմունքն՝ որում առաջնորդէր Լ· Գելլիոս, և ՚ի բանից կիկերոնի (Առաջին ճառ յեսս դաւչին, է): Լ· Գելլիոս յայտնի եցոյց զՀասարակապետութեան, և առաջարկեաց ընտրհել քաղաքական պաշտ կիկերոնի· (կիկերոն, նամականի առ Աթտիկոս, ժԲ· իՁ· — ճառ ընդդէմ Պիսոնի, Գ· — Ա֊ղոս Գելլիոս, Ե· 2):

բեալ զնա զառնապէս, կայծակնացայտ զաւտախտազութեամբ բռնադատեաց զնա ելանել յաւետնէն[1]։ Կատիլինա՝ի վազել անդր՝ ընդ ատս երեք հարիւր՝ի համախոհից իւրոց՝ մեկնեցաւ գնաց յարել՝ի Մանլիոս[2]։ Ցաւուրն յայնմիկ գոյժ զաւ- նութեան յաձախեալ ամենուստ՝ արկին՝ի տագնապ մեծ զՀռոմ, և ապշութիւն տիրէր՝ի քաղաքին։ Հանդիսից և խնջոյից յաջորդէր յանկարծ տխուր լռութիւն։ Ջօրաժողով լինէին, պահս ոտաոտս կային և այլ տեղիս կացուցանէին։ Կ. Մարկիոս Հռեքս արձակէր՝ի փեսուլ, Կ. Մետելլոս Կրետի- կոս՝ յԱպուլիա, Պոմպոնիոս Հռուֆոս՝ի կապուա, Կ. Մետել- լոս Կելեր՝ի Պիկենան, և բղեաշխն Կ. Անտոնիոս անցանէր զօրօք յԵտրուրիա։ Կիկերոնի ուճացուցեալ էր զնա՝ի զաւա- կցութենէ՝ Թողեալ՝ի նա զմեծաշահ կուսակալութիւն Մա- կեդոնիոյ[3], և ընդ այնր ընկալեալ զկեսս, յորմէ ևս հրաժա- րեաց ասաց՝ ոչ կամելով՝ի ընտել ժամանակի բղեշխութեանն մեկնել՝ի Հռոմայ փոխանակութեամբ բղեշխի։ Գլխաւորք՝ի զաւադրաց, յորս առաջինք էին զաւտարն Լենտուլոս և Կե- թեգոս՝ կացեալ՝ի Հռոմ, փութով մեծաւ պատրաստէին զաւպատմբութիւնն, միաբանեալ ընդ իւրեանս և զՏրեշտակս Ալոբրոգաց։ Կիկերոնի իրազեկ լեալ զաղտ՝ի ձեռն լրտե- սաց իւրոց, և մանաւանդ Կուրիոսի, դիտէր զկատարմունս նոցա. և հաւաստիս անժխտելիս՝ի ձեռս բերեալ՝ ետ ձերբակալ առնել զնոսա. և դատարեալ զծերակոյտն, ծանոյց նոցա զխորհուրդ դաւակցութեանն։

Լենտուլոս սոխակեցաւ հրաժարել՝ի դաւաւորութենէն. իսկ յինուանց դաւակցացն՝ որք առանց պատասխանի տալոյ զտան պարտաւորք յերեսն ընդդէմ Հասարակապետութեան, հնգե- քին ևեթ չկարացին խոյս տալ, և ետ զնոսա բղեաշխն՝ի պահ առենակալաց։ Լենտուլոս յանձնեցաւ ազգականի իւրում Լէն- տուլեայ Սպինթերայ, Լ. Ստատիլիոս՝ Կեսարու, Գաբինիոս՝ Կրասոսի, Կեթեգոս՝ Կոռնիփիկիեայ, և Կեփարիոս՝ որ՝ի

1 Կիկերոն, Առաջին կատիլինեան, Ա. — Երկրորդ կատիլինեան, Ա։
2 Սալուստ. կատիլինա, ԼԲ։
3 Սալուստ. կատիլինա, Լ, ԼԱ։ — Պլուտարքոս՝ի կիներոն, ԺԸ։

փախչելն իւրում էր ըմբռնեալ կն. Տէրենտիոսի առեւտրականէ[1]։

Առաջի կայր ծերակուտին առնել դատաստան, յորում՝ ի վտանգի կային ամենայն կարգք առեւտականք։ Դատաստան պահուհասն չէր անկ իշխանութեան նորա. ոչ բռնչխին և ոչ ժողովոյ առնին էին իրաւունք դատապարտելոյ զոք՝ ի քաղաքացւոց Հռոմայեցւոյ՝ առանց ժողովրդեան։ Այլ այս պատիժս և է, սահման իմբեցաւ ժողով ծերակուտին այս վերջին անգամ՝ ի 5 դեկտեմբերի՝ առ՝ ի սահմանել զպատիժ պատուհասի դատացւոց. և էին նուազագոյնք թուով առեւտականք քան զայլ առուրս։ Առաքելոցն՝ ի նոցանէ դժուարամիէին տալ վճիռ մահու ընդդէմ քաղաքացւոյ մեծապատուի, սակայն միաբանեցին՝ ի դատաւճիռք մահու հակառակ Պոպլեան օրինացն։ Յետ նոցա խօսեցաւ Կեսար զառնաբանութիւնս զայս մեծի մտադրութեան արժանաւոր.

« Որոց միանգամ զերկբայելեաց առաջի կայ խորհել, ո՛ հարք հանգրեալք, կարևոր պէտք են ազատս լինել յատելութենէ, ի բարեկամութենէ, ի ցասմանէ և ի զորովոյ. զի ուր այսոքիկ կրձիին՝ ի նեղըս անկանիմն, դժուարին կայ այնուհետև ընտրել զճշմարտութիւն։ Եւ ոչ քնաւ երբէք որ հանձին կայ հանգրեալսն և իրաւանց հպատակեաց. զի եթէ զգուշասցիս մտացդ՝ զօրանան. իսկ եթէ կիրք տպրդեալ՝ ի քեզ տիրապետեն, ոչինչ զօրեսցեն միտք այնուհետև։ Բազում կին մարթէր առաջի ածել, ո՛ հարք հանգրեալք, թագաւորս և ժողովուրդս, որք՝ ի բարկութենէ կամ՝ ի զթութենէ ածեալք զօրծեցին անխորհուրդս. այլ լաւ ևս համարիմ առել՝ որ կին հարքն մեր ազատ՝ ի կրից ուղղութեամբ և կարգաւ զօրծեցին։ Ի Մակեդոնական մարտին՝ զոր ընդ արքային Պերսեայ մղեցաք՝ քաղաքն Հռոդացւոց մեծապայծառ և հոյակապ՝ որ օգնակացութեամբ ժողովրդեան Հռոմայեցւոյ մեծացեալ էր, հաւատաւորութեամբ և քաջութեամբ զատս մեզ. այլ՝ ի վախճան մարտին խորհուրդ՝ ի մէջ առեալ հարք մեր զՀռոդացւոց, զի մի՝ ի պատճառս ոմն կամ պանձուցն քան անկրաւութեանց կարծեցեալն պատե-

1 Սալուստ. Կատիլինա, ԽԱ։

լսեմ՝ ի վերայ ածել նոցա, անպատուհաս թողլին զնոսա։ Նոյն պէս և յառաջին Պունիկեան պատերազմունս Կարթեդոնացիք ստէպ զրժէին դաշանց՝ ի խաղաղութեան և՝ ի զինադադս, այլ նոքա ոչ երբէք պատեհ առեալ այնպիսի ինչ արարին. զի ոչ որ ինչ արժանն էր նոցա, այլ որ ինչ ինքեանց պատշաճական, զայն խնդրէին։ Ւ սոյն և ձեզ պարտ է զսուն դնել, հարք հանապրեալք, զի մի Պ. Կնոտուլեայ և դաւակցաց նորա ոձիքն զօրացին՝ ի ձեզ քան զպատիւ ձեր, և մի ցասմանն ձերոյ առաւել տեղի տայցէք քան թէ հաճեցուցանէք։ Զի եթէ արժանի յանցանացն նոցա զոյր պատուհաս, զոլել զոլէի և ես զնոր խոստովանութեամբ անցանէք քան զմիտս, պարտ համարիմ զօրինադիր պատուհասն ածել զնոքօք։

Ոըք յառաջ քան զիս ետուն զխրեանց կարծիս, բազումք Հարտար և զեղեցիկս ողբացին զաղէտս Հասարակապետութեան, եզեալ՝ ի շար զպատերազմին զժնդակութիւնս, զպարտեցոյն արկածս, զկուսանաց յափշտակութիւն և զպատանեաց, զկորզել որդեկաց՝ ի գրկաց ծնողաց, զտխինացն մատնել՝ ի հաճոյս յաղթականաց, զկապտել մեհենից և տանց, զկոտորածս, զհրդեհս. համառօտ ասել՝ զինուք, դիակամբք, ողբովք լցեալ զամենայն։ Ա՛յլ, ո՛վ դիք անանձն, առ ինչ օգտին ցեղն բանքն. միթէ առ օխերիմն զձեզ գործել դաւադրութեան. այլ որ յայդպիսի և յայդքան եղեռանէ մեծէ ոչ շարժի, զինա և բանիւք ոք երբէք չկարասցի վառել։ Զի և չէ իսկ այդպէս. ոչ ումեք՝ ի մահացուաց անկրաւութիւնք ընդդէմ նորա գործեալք՝ թեթևք թուիցին երբէք. այլ յաճախապոյն այն է, զի քան զոր էն՝ ծանրագոյն համարիմն։ Ասն առն ըստ բազմին լոկ և ազատութիւն, ո՛ հարք համագրեալք. որ անկած և անընշան կենօք կեայ, եթէ ուրեք՝ ի ցասումն զառածանիցի, տակաւուց հասանէ՝ ի դիտութիւն, զի և հաճեսցեն հաւատալ և բազմին. իսկ որ՝ ի մեծ իշխանութիւն ամբարձեալ կեան, ամենայն գործք նոցա հրապարակագոյժ լինիմն։ Ա՛յսպէս՝ ի մեծի բազմի անձուկ է ազատութիւն։ Ոչ կողմնակցութիւն, ոչ հեռ, և ոչ բնաւ վայել է նոցա ցասումն. քանզի որ յայլս ցասումն ասի, յառագործեալն վհատութիւն և խժդժութիւն կոչի։ Եւ արդարեւ, ո՛ հարք համագրեալք, ինձ այնպէս

թուէ, զի ամենայն տանջանք խիստք ոչ ինչ են առ դատաստանացն եղեռամբք. այլ բազումք ՚ի մարդկանէ զյետինս ևեթ յիշեն, և մոռացեալ զանցեալս մեղապարտից, զպատուհաս նոցին բամբասեն՝ եթէ խստագոյն քան զարժանն էցէ լեալ։

«Գիտեմ քաջ որ ինչ Դեկիոս Սիլանոս այր հզօր և արի խօսեցաւ նախանձու Հասարակապետութեան. և ոչ յայս գործ կարեւոր առ ընդհուպս ինչ կամ առ թշնամութեան արար ինչ. զի տեղեակ եմ բարուց առնն և զգօնութեան նորա։ Սակայն վէիս նորա, չասացից անզուարթ, քանզի զինչ ինչ ընդդէմ այնպիսի մարդկան անզուարթ լինել մարթեցի, այլ օտար թուէ ինձ ՚ի հոգւոյ Հասարակապետութեանս։ Սպաթէն երկիւղ կամ ցասումն ընդ ոմին հարկեցոյց զքեզ, Սիլանէ, առաջարկել զայդ նոր պատուհաս յընտրելդ քում՝ ի բռնաշէս։ Սէրտդ ինձ ասել զերկիւղէն, զի աչալուրջ զգուշութեամբ հոյակապ առն բռնշխոս բազմութիւնք պահապանաց սպառազինք կան մեզ ՚ի պահ. իսկ զպատուհասին մարթիմ ասել Ճշմարտապէս, զի ՚ի վիշտս և ՚ի թշուառութեան՝ հանգիստ է մահ, և ոչ տանջանք, որ չարեաց մահկանացուաց վախճան առնէ, և անդր քան զնա ոչ հոգոյ և ոչ տխրութեան կայ տեղի։ Սլ երդուեալ յանմահ դիս, հնար չգտաւեալ ՚ի վէիս քոնդակս բռնաճեճ առնել զյանցատուս. մինդ զի օրէնք Պօրկեայ արգելուն զայն. սակայն են և այլ օրէնք որ զքաղաքացւոյ յանցատուին հրամայէ չբառնալ զկեանս, եթէ զաքսորանս յանձն առնուցու։ Մինդ զի ծանրագոյն կայ բռնաճեճ առնելդ քան զրաւել՚ի կենաց. այլ զինչ խիստ և ծանր ըմբռնելոցն յայնքան ոչինչ. իսկ եթէ թեթևագոյն, կայ ինչ ՚ի ձեռս ոգևկալ օրինաց ՚ի մանուն, և ՚ի մեծամեծս զանց առնել զնոքօք։ Սլ ո՞ իսկ պարտաւոյն է որ ինչ ընդդէմ քրէնքուր մատնչաց պետութեան լեալ վէիս. ժամանակն, օրն, և բաղդն՝ որ ըստ հաճոյս իւր տիրէ ազգաց։ Ի դէպ պատահէ նոցա որ ինչ և պատահեսցէ. այլ դուք, ո՛ հարք հանապրեալք, խորհեցարուք որ ինչ զայլոց սահմանէք։ Սլեղոյն օրինակ չար ՚ի բարեաց սկիզբն էած. այլ յորժամ հասցէ պետութիւնս ՚ի ձեռս ոգևտաց և անբարեաց, օրինակս այս նոր ՚ի պատշաճից յանպատշաճս և ՚ի վայելչութենէ յանվայելուչ փոխեսցի։

«Սպարտացիք յետ նուաճելոյ զՄԹինա՝ կարգեցին արս ելեսուն ՚ի վարչութիւն իրաց Հասարակաց. ոչքա ձեռն արկին ՚ի սկզբան անդ կոտորել զարս ժանտագործս և զատելիս ամենեցուն առանց քննութեան դատաստանի: Խնդալոյր ընդ այս ժողովուրդն իրաւունս նոցին տալով. այլ իբրև տակաւ զօրացաւ իշխանութիւն նոցա, այնուհետև ըստ հաճոյս և զառաքինիս՚ի քաղաքացւոց խառն ընդ անօրէնս բառնային՚ի կենաց, ահ ինաշ ցորդացն արկանելով: Այսպէս ընկճեալ քաղաքն ընդ լծով ծառայութեան, զանիւր խնդութեանն ելոյծ զծանր վրէժ: Եւ առ մերովք ժամանակօք յորժամ յաղթականն Սիլլա տայր խեղդամահ կոտորանել զՀռոմապիտոս և զնմանիս նորա՝ ոչք յաղէտս Հասարակապետութեան զօրացեալ էին, ո՛ ոչ գոլեր զգործ նորա, իրաւացի համարելով կոտորել զարս անօրէնս, խառնարարս և աղմկիչս աշխարհին: Այլ այն ապա սկիզբն լինէր մեծի կոտորածին. զի որ միանգամ ցանկայր տան կամ դեղջ, կա և անօթոց կամ հանդերձից ուրուք, զամենայն ձիգն դնէր՚ի Թիւս տարապրելոց զինս յաւելուլ: Եւ այս օրինակ ոչք ընդ Հռոմապետեայ խնդային ընդ մահ, ՚ի նոյն և ինքեանք մատնեցան, և չեղև խեղդամահ կոտորեան վախճան, մինչև ոչ եւս Սիլլա զիւրան ձոխութեամբ:

«Եւ ես իսկ ոչ՚ի հիւպատոսէն Մ. Տուլլիոսի և ոչ վասն ժամանակիս խնիթաւ, այլ զի՚ի մեծի քաղաքիս բազում և զանազան են խորհուրդք մարդկան: Մարթ է յայլում ժամանակի, և այլում ումեք բզեզնի, որոյ դարձեալ զօրութիւնք լցեն՚ի ձեռին, զսուտ ինչ ձշմարիտ համարել, և ըստ օրինակիս ըստ այսմիկ վճռել ծերակուտին սուր ածել. և ո՛ վախճան արասցէ յայնժամ կոտորածին, կամ ո՛ չափ դիցէ այնմ:

«Նախնեաց մերոց, ո՛ հարք համապրեալք, ոչ հանճար պահկասէր և ոչ արիութիւն, տակայն չարզեալք նոցա ամբարտաւանութիւն նամանող լինելոյ բարի բարի կարգաց օտարաց: Զգինս և զնեաս պատերազմականս՚ի Սամնիտացւոց, զբազում յօրինուածս նաւածութիւնս առեալք՚ի Տուսկեանց ընկալան. մինչ բա նիւ, որ ինչ առ դաշնակից ազինս և առ թշնամիս պատշաճ ինչ Թուէր, մեծաւ փութով հետևոյ նոցին լինէին. բա համանրեալ զբարեկամանձ նամանութիւն՝ քան Թէ մախալ ընդ բա-

*ըիս։ Զայնու ժամանակաւ զՀետ երթեալ և Յունացն տովրու-
թեան՝ բրածեծ, պատուհասակոծ առնէին զքաղաքայիս և զա-
տակինսիք մահու՝ ի վերայ ածէին յանցաւորաց։ Ա.յլ երբև զար-
գացաւ պետութիւնս, և՝ ի բազմութենէ քաղաքացւոց զօրա-
ցեալ երկպառակ գժտութիւնք՝ սպրդեալ՝ ինեըքս մտին անաե-
զաց լարել որոգայթ և այլ սոյնպիսիսք, ի վեր երևեցան յայն-
ժամ Պորկեան և այլ ևս օրէնք, որ տարապրութիւն յանցաւո-
րաց ընտրեցին։ Ա.յսր աղագաւ առաւելապէս երաւունս համա-
րիմ, ո՛ հարիք համապրեալք, մի ինչ նորս գործել։ Հզօր արդա-
րեւ առաքինութիւն և իմաստութիւն էր՝ ի նոսա, որք՝ ի գուշ-
նաբեայ իշխանութենէ կացուցին զպետութիւնս զայս մեծ,
քան՝ ի մեզ՝ որ հարիւս պահեմք զառ՝ ի նոցանէ ժառանգեալս
առացուած։ Կամք ուրեմն էին ապձակել զգոտս, զի երթիցեն
զկատիլինեայ բանակն առուարտացուցանել։ ոչ բնաւ երբէք։
Ա.յլ այս է իմ խորհուրդ՝ ի գանձս հասարակաց գրաւել զինչս
նոցա, և զնոսա՝ ի կալանս ունել յամուր ամուր քաղաքս Իտա-
լիոյ, և մի ումեք լիցի օրէն առաջարկել ծերակուտին կամ
ժողովրդեան զարձակուրդ նոցա. և որ այլազգ ինչ գործեացէ,
հանարեացի զնա ծերակոյտն Թշնամի պետութեան և փրկու-
Թեան հասարակաց»[1]։

Ընդ այս ազնուական տարազ խօսից առն քաղաքավարի
առաքե՛ ի կլուռ զՀռոմ առեղծանութիւնս Հարտարախօսից՝
որք զատակինսիք մահու՝ ի վերայ ածէին. յորոց Կիկերոն զո-
ՀԷր ասելով. «Կամիմ կորզել՝ ի կոտորածէ զկանայս ձեր, զման-
կունս, և զկոյսանուէր կուսանս՝ քրմուհիս Եստայ. զմեհեանս և
զբազինս յահագին անարգանաց, զբեղեցիկ հայրենիս մեր՝ ի
գժնդակ հրդեհէն, և զհատիս յաւեր կործանմանէ[2]։ ...Կա-
մին զաւազանք արախտողիտ սատակել զամենեսեան, զի մի
ճնասցէ զբ առ՝ ի լալ զՀասարակապետութիւնն, և ողբս առ-
նուլ՝ ի վերայ վերատակաց այսպիսւոյ մեծի պետութեան...»[3]։
Եւ յաղագս կատիլինայ ասէ. «Այլ զեղատու զբ ընդ ամենայն*

1 Սալլուստ. կոպէլինա, ՄԱ։ — Ազատիան. Քաղաք. պատերազմ. Բ. Զ։
2 Կիկերոն, Ճորրորդ կոպէլինեան, Ա։
3 Կիկերոն, Ճորրորդ կոպէլինեան, Բ։

Խաչէս. լսէ՛ք ոք ստեղծանողի, ժանտագործ, աւազակ, հայրասպան, կեղծիչ կտակաց, հրապուրիչ, ցոփակեաց, վատնիչ ժառանգութեան և շնաբարոյ. լսէ՛ք ոք դարձեալ կինն անուանարկ, պղծիչ ոք մանկութեան, ժանտաժուռտ և եղծաւործ ոք, որ ոչ խոստովանեցաւ մեղիւմ և կենակից զոլ Կաթուղիկոսի»[1]։ Զի և չէ այս զգօն և անուշադիր դատաւորի լեզուս արժանաւոր։

Կիկերոնի և զհիմնադիրսն քարոյականին անտես արարեալ, ուր փոխանակ մանուածանդ պէտք են՛ի հատուածութիւն իւրոյ դատին, ՛ի լինդիր ելանել անցից՛ի պատմութիւնս առ՛ի մահ վարելոյ հանդարձակ զքաղաքացիս Հռոմայեցւոց։ Պանծայ նոքա ընդ օրինակս նախանձելիս ընդ սպանութիւն Տիբերիոսի Գրակքոսի՛ի Սկիպիոնէ Նասիկայ, և Կայիոսի Գրակքոսի՛ի Լուկիոսէ Ոպիմեայ բղեշխէ[2], մոռացեալ զի յառաջ քան զսակաւս մի՛ի միում յերևելի ատենաբանութեանցն զերկուսին ևս կոչեր մեծանուն ռամկապետս, զերապանծ հանձարս և սոյզ բարեկամս ժողովրդեան[3]. և յաւելցուր՝ զի սպանողք Գրակքոսեանց՝ ձեռն միեալ՛ի նուիրական անձինս, առելիք եղեն և արհամարհք յաչս քաղաքացոյց իւրեանց։ Կիկերոն ինքնին հատուցեալ վրէժ ընդ հուպ՝ տարապէր եղեալ վասն խաւարութեանն ընդդէմ հանախոհից Կատիլինայ։

Բանք Կեսարու այնպէս ազդեցին՛ի միտս ժողովոյն, զի բազումք յառնականացն, ընդ որս և եղբայրն իսկ Կիկերոնի, ՛ի նորին կարծիս եղեն[4]։ Դեկիմոս Ալբանոս սահմանեալ բղեաշխ, ՛ի չափու կալաւ զիւր կարծիս, և Կիկերոն իսկ ետ բևեր խուսափել յերաշխաւորութենէ յասելն. «Եթէ զհետ երթայք կարծեաց Կեսարու, որ հանարեալն է միշտ՛ի կոչին ժողովրդեան, վճիռն որ՛ի նմանել եղեալ՝ ապրեցուսցէ զիս արդեօք՛ի մըրկէ ամբոխին»[5]։ Սակայն ոչ դատարեաց նա՛ի նոյնելոյ զի տային անյապաղ ամբաստանեալքն՛ի մահ։

1 Կիկերոն, Երէցագր կոփնիենան, Գ։
2 Կիկերոն, Առաջին կոփնիենան, Ա, Բ։
3 Կիկերոն, Երէցագր ճառ վերջալոյսին օրինաց, Ե։
4 Առաւոտն. կէսաւր, ԺԲ։
5 Կիկերոն, Զորագր ճառ ընդդէմ կոփնիայ, Ե։

Աւաւել քան զամենեսեան Կատոն խրախուսէր զերկմտութիւն յոլովագունից՝ ի ծերակուտէն բանիւք՝ որ հզօրագոյնս ազդէին՝ ի սիրտս նոցա. քանզի փոխանակ ամբաւանալոյ զիւրս նոցա յիմաստս բարձուն և՝ ի հայրենասիրութիւն, յուշ առնէր զշահ օգտի նոցա և զվտանգ, և ասէր. «Երդուեալ յանմահ դիս, ի՛ ձեզ ինքեանս բողոքեմ՝ որ զսպարանս ձեր, զպարակս, զանդրիս և զնկարս նախամեծար առնէք միշտ քան զհաւատարմութիւնն. եթէ զգոյս ձեր որ զինչ և իցեն պահել ախորժէք, եթէ՛ի վայելս ձեր խնդրէք պարապ, սթափեցարուք՛ի թմրութենէ, և խնամ կալէք հաւատարմութեան»[1]: Այս բանք հաւասար էին ասելոյ. եթէ կամիք վայելել խաղաղութեամբ կինչս ձեր, տուք զդատաւճիռք ամբաստանելոցն՝ առանց լսելոյ նոցա: Որպէս և արար ծերակոյտն:

Դէպք ինչ՛ի յոյզս անդ վիճից պատահեալ եցոյց թէ ոլորպէս Կեսար կամակատար էր ի միտս զարթուցանելը: Ի սատկութեան անդ վիճից մատուցաւ Կեսարու տումնակ, զոր ընդեղեցաւ նա անդէն: Բայց Կատոնի և այլոց ատենակալաց համարելով զայն յոժեքէ՛ի դաւակցաց գրեալ, պահանջեն ընթեռնուլ զայն՛ի լուր ատենին: Եւ տայ Կեսար զտումնակն Կատոնի՝ որ աւ իւր էր բազմեալ. և նորա տեսեալ՝ զի քեռ իւրոյ Սերուիլեայ գիր սիրոյ էր գրեալ աւ Կեսար, արկանէ զայն աւ նա ցասմամբ՝ ասելով. «Կա՛լ զդա, արբեալդ»[2]: Այլ տարապարտ էին Թէնամանքն. զի ինքն իսկ վիպէր ժուժկալութեան Կեսարու յասէր ապա, յամենեցունց՝ որոց կործանեալ էր զհաւատարմութիւնն՝ Կեսարու եթէ կործանեալ զայն ատուաղ[3]: Յայտնագոյն ևս արար Կատոն զխելթ կամակատարութեան իւրոյոյն, յասէր. «Ի հաւատարակաց և՛ի մեծի վտանգի՝ եթէ Կեսար միայն կայ աներկիւղ, այնչափ ևս առաւել ինձ և ձեզ է ահարկու»[4]: Եւ ոչ աստ վկայ առեալ Կատոն, յետ՛ի մահ դատապարտելոյ զամբաստանեալն, զայն աւ նա ցասմամբ՝ ասելով. «Կա՛լ զդա, արբեալդ»[2]: Այլ տարապարտ էին Թէնամանքն. զի ինքն իսկ վիպէր ժուժկալութեան Կեսարու յասէր ապա, յամենեցունց՝ որոց կործանեալ էր զհաւատարմութիւնն՝ Կեսարու եթէ կործանեալ զայն ատուաղ[3]: Յայտնագոյն ևս արար Կատոն զխելթ կամակատարութեան իւրոյոյն, յասէր. «Ի հաւատարակաց և՛ի մեծի վտանգի՝ եթէ Կեսար միայն կայ աներկիւղ, այնչափ ևս առաւել ինձ և ձեզ է ահարկու»[4]: Եւ ոչ աստ վկայ առեալ Կատոն, յետ՛ի մահ դատապարտելոյ զամբաստանեալն,

զայն աւ նա ցասմամբ՝ ասելով. «Կա՛լ զդա, արբեալդ»[2]: Այլ տարապարտ էին Թէնամանքն. զի ինքն իսկ վիպէր ժուժկալութեան Կեսարու յասէր ապա, յամենեցունց՝ որոց կործանեալ էր զհաւատարմութիւնն՝ Կեսարու եթէ կործանեալ զայն ատուաղ[3]: Յայտնագոյն ևս արար Կատոն զխելթ կամակատարութեան իւրոյոյն, յասէր. «Ի հաւատարակաց և՛ի մեծի վտանգի՝ եթէ Կեսար միայն կայ աներկիւղ, այնչափ ևս առաւել ինձ և ձեզ է ահարկու»[4]: Եւ ոչ աստ վկայ առեալ Կատոն, յետ՛ի մահ դատապարտելոյ զամբաստանեալն,

1 Սալլուստ. կոփլինա, ԾԲ:
2 Պլուտ. ի կոպն, ԻԸ: — Տես ի Զոսիմոսէ Անէկտոտէն և կեսարս, է:
3 Սուետոն. կեսար, ԾԳ:
4 Սալլուստ. կոփլինա, ԾԲ:

փոլձէր՝ ի յետին տագնապ արկանել զԿեսար, ընդդէմ նոցա դարձուցեալ զկարծիս՝ զոր՝ ի նպաստ նոցա էր տուեալ. և առաջարկեաց առեծին հատանել՝ ի գանձ հասարակաց զինչս նոցա։ Եւս քան զևս զայրացաւ յայնժամ վէչն. և Կեսար անարժան եցոյց զպարծն, զի մերժեալ որ ինչ ըստ մարդասիրութեան մասին առաջարկեալն էր նմա՝ ըստ խստութեան ևեթ մասին ընդունէին զառաջարկութիւնն, ծանրացուցանել զաղէտս դատապարտեալոցն, և յաւելուլ զպատուհաս նոցին[1]։ Եւ՝ ի չլինել բողոքոյ նորա ընդ ծերակուտին, աղաչէր երդմնեցուցանէր զամենապետս վարել իրաւամբք իւրեանց և կալ իրաւարար՝ ի միջի. այլ և ոչ նոքա անսային բանից նորա։ Եւ՝ ի սաստկանալ աղմկին յոյժ յոյժ, ստիպեալ բռնիչխին վախճան առնել վտանգաւոր կռուոյն՝ հաւանեցաւ ընդ վճռոյ ծերակուտին զպրաւմանէ ընչից։

Մինչդեռ խառնիճաղանճն արտաքոյ զրգռեալ՝ ի համախոհից դաւակցաց՝ զաղաղակ հարկանէին աղմկաւ, առեալք պահանոյքք շուրջ զառաջարան Մխաբանութեան ցասուցեալ ընդ բանս Կեսարու և ընդ երկարել վիճիցն, զրոհ ետուն՝ ի նեղլեալս յատեանն՝ և շուրջ պատեալ զնովաւ՝ բանիւք սպառնալեաց զինն ընդդէմ նորա վերայուցանէին, ոչ քրմապետութեան նորա ակն ածեալ և ոչ հանդերձելոց առենակալութեան. բայց Մ. Կուրիոն և Վիկերոն արգելին զնոսա վեհանձնօրէն[2]։ Պաշտպանութեամբ նոցա խոյս ետ Կեսար՝ ի տուն իւր, բողոքեալ չգառնալ անդրէն՝ ի ծերակոյան՝ մինչ չև սպառհոլեալ բռնիչխից զբարեկարգութիւն և զվճռոց սպառնութիւն։

Յայնժամ փութացաւ Վիկերոն դատաւորօքն հանդերձ առ դատապարտեալս, և էած զնոսա՝ ի բանտ Կապիտոլին, ուր և սպանան վաղվաղակի։ Նակ խուժանն անդէտ եղելոցն, հարցանէր տագնապեալ զբանտարկեալոցն. առ որս Վիկերոն.

«Ոչ ևս են՝ ի միջի»[3]։

Հաւանեալ ևս թէ չէր Կեսար՝ ի թիւս դաւակցաց, այլ

1 Պղտոտեալք. *՝ի կիլիբոն*, իՀ։
2 Սպրտաս. *կոպիլինա*, խթ։
3 Սուէտոն. *կեսար*, Ը։

զայս զբսպարտութիւն զնամանէ՝ կիսոյ փոքրոգութեան, և այլոց առելութեան պարտ է ընծայել։ Ո՞ ոչ գիտէ, զի՛ւ վտանգաւոր ժամանակս տկար պետութիւնք ընկերշակութիւն գաղղիոյ Համարին միշտ զկարեկցութիւն առ ըմբռնեալս՝ի նոյն, և ոչ լինայեն՝ի զրպարտութենէ զսոխս իւրեանց։ Առեալ Թեամբ ոխային ընդ Կեսարու Կ. Կառուլոս և Կ. Պիսոն, և շուրջ պատեալ զբզեչխիւ՝ ջանային տալ նմա գրել և զնա՛ի Թիւս Համախոհից Կատիլինայ, սակայն Հակառակ եկաց Կիկերոն։ Հանդերձ այսու Համբաւեցաւ նա կցորդ գաւառցութեան, և ընդունելի եղև Համբաւն այն յաչագիտաց նոցա բազմաց[1]։ Եթէ ընդ նոսա լեալ էր Կեսար, ազգեցութիւն նորա բաւական էր տալոյ արձակել զնոսա անպարտս յաղթանակաւ[2]։ Ա.յնպէս մեծարէր նա զանձն, և այնպէս մեծարոյ էր առաջի ժողովրդեան, զի չէր մարթ նմա յանձն առնուլ ընդ գողուզի և անարդ Հնարիւք Հասանել իշխանութեան։ Ոչ՝ափ և գահասէր ոք էր, չՀնարի՛ւ ծածուկ՝ եթէ լսատ օրինի մարթ է նմա ժամանել ըղձից։ Վստահ էր Կեսար ընդ գնացս իւր՛ի բզեչխութիւն, և ոչ երբէք անժուժ ժուժիւն մատնուաւ լինէր փառասիրութեան նորա։ Եւ գարձեալ գժպհի լեալ էին նմա միշտ առանձին պատերազմունք. և ոչպէս մարթ էր մոռանել՛ի գաւակցութիւն ռամկին ընդ վատանուն մարդիան՝ այնմ, որոյ չէր յանձն առեալ երբեմն Հաղորդ գտանել Հնարից Կեպիդոսի՝ որ զօրաւարն էր յայնժամ։ Եթէ մեղապարտ Հանաչէր Կիկերոն զԿեսար, ընդէր ոչ ամբաստան լինէր զնամանէ, այն որ ոչն երկեաւ ամբաստանել միով տուա վկայիւ զայրն Հոյակապ զԻկինիոս Կրասոս[3]։ Ո՞րպէս աւուրբ յառաջ քան զգաւակնութիւն Հաւատոյր՛ի Կեսար զպահպանութիւն միոյ՛ի գաւակցաց։ Ա.ռնէր իսկ զնա

1 Սալուստ. Կոտլինա, խթ։

2 «Երկիւղ էր յիշխանութենէ նորա, և՛ի բազմութենէ բարեկամաց՝ որ Թիկունք նորա էին. քանզի աւելնեցուն Հաստատութեամբ՛ի մեկ եղեալ էր՝ ընդ Կեսարու զամբաստանեալն անպարտ արձակել, քան Կեսարու պատուհասակից նոցա լինել». Պլուտարքոս՛ի Կիկերոն, իէ։

3 «Ի նոյն ինքն՛ի Կրասոսէ լուայ ես ասպա, զի հաչակէր յայտնապէս՛ի կիկերոնէ մինչեւ ցայսաւր զանգութ Թշնամանան». Սալուստ. Կոտլինա, խը։

անպարտ ՚ի նորոգել ամբաստանութեանն զինանել։ Եւ առանց յերկարելոյ, եթէ կեսար՝ պատչս լեցի մեզ ապա տեսանել՝ լաւ համարէր ըստ Պլուտարքեայ առաջին լինել ՚ի գեղջ ուր թէք յԱլպս քան երկրորդ ՚ի Հռոմ; պրպէս յանձն առնոյր կալ ՚ի ձեռանէ կատիլինայ։

Ապա չիք ինչ կեսարու ՚ի գործս յայս զոր չլոյծ մարթ մեկնել պարզաբար։ Պարսաւել պարսաւէր զդաւակցութենն, այլ ոչ կամէր առ ՚ի նուաճել զայն՝ զարտուղել ՚ի յաւիտենական կանոնաց արդարութեան։ Ցուշ ածէր արանց կուրացեալոց յերկինս զ և ՚ի կրից, զի բռնութիւն անօգուտ զՀետ իւր ձգէ միշտ զրգռութիւն աղետաբեր։ Ցանցից անցեալց ածէր հաւաստիս, զի չափաւորութիւն է առաքինագոյն խորհրդականն յառնեղայնէ։ Բայց և յայտ է՝ զի թէպէտ անպատնէշ զյոլովագոյնս յաւաջնորդաց դաւակցութեան, սակայն չէր անկարելիր խնդրոյն որ ոչ էր օտար յիւրայնոյն ըստ բնական բերմանն և ըստ հասարակաց թշնամեաց։ Ցաշխարհս պատահեալս քանիք են որ ըղձան կործանելոյ կարգաց պետութեանն, այլ առանց դաւակցութեան։ Ա.յսպիսի էր և կեսար։

Ուր ընդհակառակն գնացք Կիկերոնի և ծերակուտին չկարեն ՚ի սպառ արդարանալ։ Ջանցանել ըստ օրինս թերևս հարկն պահանջէր, բայց այլ ընդ այլոց կերպարանս տալ խուովութեան վանն առնելոյ զայն ատելն, զառաջանել ՚ի զրպարտութիւն վանն ընկճելոյ զամբաստանեալս, ՚ի մահ դատապարտել առանց տալոյ տեղի պատասխանւոյ, ակներև հաստատ էին ակարութեան։ Ջի եթէ չէր կերպարանափոխ արարեալ զիւրս Կատիլինայ, ձայն տայր առ բողոքն նորա խուսափիլս առհասարակ վաստակաբեկ ՚ի լծոյ ծառայութեան Հռոմայեցւոյ, ընդ որով հեծէին կորանօք. այլ հռչակեցեալ էր թէ մտաբերել նմա ՚ի հրդեհն, ՚ի կոտորած և յաւարառութիւն աշխարհին. զի ասէին. «Վաղ իսկ լուցեալ են զամբարձք, արդէն սիկարեանք յիւրաքանչիւր կայանս անցեալ, և դաւակից ևս ընդ մեզ զարհուրեցուցին մարդկեղէն, յաւիշատակեալ ՚ի միմեանց զանդամանութիւս խոշխոջելոյն»[1]։ Ընդ այսպիսի շրջակ համ

1 Ե ընթեռնուլ ՚ի պատմագիրս ժամանակին զառատաբանագաւառս վեպս ըստ

բաւոյ սիրեալ Հարտարութեամբ, և ընդ կուտական բանս՝ զրս ինքն իսկ Վիկերոն ծաղը առնէր ասպա[1]*, յօժարութիւն ժողովրդեան միտեալ՝ի սկզբան յապստամբութիւն, վոխէր յանկարծ՝ի հակառակն*[2]*։*

Ոչ ի մարթ ժխտել՝ զի Կատիլինա, որպէս զամենայն ա-ռաջնորդս ապստամբութեանց, միաբանեաց ընդ իւր արս՝ որոց էր ինչ կորուսանելոյ, այլ մանաւանդ ակնկալութիւն շահելոյ· բայց արժան էր հաւատալ՝ զի առաւելապոյնք՝ի համախոհից նորա էին լեալ արք եղեռնաւորք և ժանտա-ժուռք։ Ըստ վկայութեան նորին իսկ Վիկերոնի՝ էին՝ի նոսա և արք պատուականք բազումք[3]*· զի և՝ի զաղթականաց և յազատ քաղաքաց ազնուականք գային միաբանել ընդ Կատի-լինայ։ Յոլովք յորդւոց սենեկալաց, ընդ որս և Ա. Լուս Փու-լուիս*[4]*, ըմբռնեցան յանցանելն իւրեանց առ ապստամբեան, և՝ի հարց իւրեանց՝ի մահ վարեցան։ Մանկտին Հռովմայ պրեթէ առհասարակ, ըստ Սալուստեայ, զՀեռ յանդուգն*

համոյից հնարեալս՝ի կորուստ զաւակացս։ Որպէս այն թէ կամեցեալ Կատիլի-նայ կատել երդմամբ զգործակիցս չարեաց իւրոց՝ մատուսակեալ էին զարիւն մարդոյ խառնեալ՝ի բաժակ· (Սալուստիոս, Կոպիլինա, ԻԲ)։ Իսկ ըստ Պլուտարք-քեայ, սպանեալ նոցա զոք, և՝ի յօշելոյ մարմնոյն կերեալ· (Պլուտարք· ՚ի Կե-ղերս, ԺԴ։ — Փլորոս, Դ· Ա)։

1 Խոստովան եղև ինքն իսկ Վիկերոն՝ ՚ի հաստրակաց տեղեաց՝ՙի պէտս գաղտն առեալ զամբաստանութեանն զայնոսիկ։ Ի թղթի ուրեք իւրում առ Ատտիկոս նկատարկէ նա զանցս լինչ անցեալս՝ՙի ծերակուտին սակաւ լինչ յետոյ քան զգալն Պոմպէի՚ի Հռովմ, և ասէ գովեալ զօրավարին զծերակուտին և՚ի գործս առհասարակ, առանց լինչ յաւելոյ առ նա, խնա առ Վիկերոն· և՚ի վերոյ ածէ· «այլ Կրասոս յոմն եկաց, և բազում պերճախօսութեամբ խօսեցաւ զինմա-նէ.... Համառօտ ասել· մատեաւ նա յամենայն հասարակաց գէղից՚ՙի ատր և՚ի հար, զորոց սովորութիւն է ինձ ձառել· և գիտես դու որպիսի բազմադիմի օրինակաւ՚ի ձառս իմ, որոց գերազոյն գաղաւորդ խակ ես»· Վիկերոն, Նամականի առ Ատտիկոս, Ա· ԺԴ։

2 «Խաժամուժն՝ որ՚ի սկզբան անդ նորասկրութեամբն իւրմէ լինէր պատերազ-մին, փոխեալ զմիտս՝ գարշի արդ՚ի խորհրդոց Կատիլինայ, և զՎիկերոն մինչև յերկինս ամբառնայ»· Սալուստիոս, Կոպիլինա, ԽՀ։

3 Սալուստիոս, Կոպիլինա, ԼԹ։ — Դիոն Կասիոս, ԼՀ· ԼԶ։

4 «Բազումք՚ի մեծատոհմ ազգաստրդոց յարեալ էին յայրս այս չարաբարոյ և գեղծիս»· Վիկերոն, ճառ վասն Մ· Կելիոսի, Դ։ «Ժողովեալ էր գինարև արս յետամիս և յանզգուշս, միանգամայն և ոչ սակաւս յառաքինեաց և՚ի քա-ջաց հեղծուպատակս կերպարանաւ առաքինութեան»· Վիկերոն, ՚ի նոյն, Զ։

խոհրդոյ՝ դաւաձանին ընթանայր, և խաժամուժն ողջոյն սիրոյ նորութեան՝ հաձիր ընդ գոլծն[1]։

Հաւանեալ ի թէ Կատիլինա ապատուամ ոք լեալ էցէ և անգութ՝ ըստ նմանութեան Մարիոսի և Սիլլայ, և հաւաստի էակ ի ջանալ նորա բռնութեամբ հասանել յիշխանութիւն. այլ թէ կարացեալ էցէ յանկուցանել՝ ի խնդիր իւր այնչափ ազս երևեալս հրապուրանօք, և գնատալիս ողջոյն վէր՝ ի վայր գոլոլեալ, առանց յայտ առնելոյ մեծ իմն և արիական, չէ և չէ այս հաւանելի։ Զի թէպէտ և յառաջագոյն կողմնակից էր Սիլլայ, այլ գիտէր թէ գլուխ Մարիոսի միայն կարէր ժողովել բազմաթիւ կուսակցաց. վասն որոյ՝ ի բազմաց հեառ երկիւղածութեամբ պահէր առ իւր զարծուիդլուխն արծաթի՝ որ առաջնորդ երբեմն լեալ էր լեգէոնից մեծի զօրավարին[2]*։ Եւ բանք իսկ նորա առ համախոհս իւր՝ զնոյն մեծարանս հաստատեն. զի բողոքէ նա վասն բաղդի Հասարակապետութեան՝ ի ձեռս սակաւուց մնալոյ, որք անհաղորդս առնեն զայլս պատուոյ և մեծութեանց*[3]*։ Գրէ նա առ Կատուլոս՝ այր մեծարոյ, ընդ որում հանապատղորդէր զմեերումն իւր, զնամակս զայս՝ յորում է պարզութիւն և մեծախոհութիւն. և որ՝ ի նմա հանդարտութիւն ոգւոյ՝ դէմ ընդդէմ հակառակ է բուռն ուժգնութեան Կիկերոնի.*

«Լ. Կատիլինա առ Կ. Կատուլոս ողջոյն։

«Վասնզի քոյդ հաւատարմութիւն արդեամբք իսկ ծանուցեալ՝ ի ծանր վտանգիս հաձոյական իմն ակնկալութիւն նպաստից ինձ մատոյց։ Վասն այսորիկ՝ ի վերջին ժողովն չմոռանձինս ջատագով, և եդի՝ ի մոռ անպարտ անմեղութեամբս իմով շահանալ. զոր՝ ծն և ծն արասցեն ինձ դիք, զի գիտես դու ձշմարտութեամբ։ Անհրաժեշտութեամբք և նախատանօք դրգռեալ՝ ի վարձուց վաստակոցս և ձարտարութեանց զրկեալ, և յիշխանութիւն՝ որ ինձ անկն էր՝ չմարթացեալ հասանել, բուռն հարի ըստ իմում սովորութեան վարել զգաստ թշուա-

1 Սալուստ. կապիչինա, ԺԸ։

2 «... *իսկ արծուիդլուխն այս արծաթի, որում բազկին կանգնէր՝ ի տան*». Կիկերոն, Երկոտք կապիչինեան, Զ։

3 Սալուստ. կապիչինա, Ի։

ռաց։ Իբր ոչ եթէ զպարտս երաշխաւորեալս լինէին չկարէի հաւատացանել լընդէց իմոց, ուր և զընկալեալսն լինէին յայլոց անուն՝ հաւատացանէր Աւրթլիա Որեսթիլլա առաստակէս իւրովքն և դատէրն իւրոց մեծութեամբք, այլ զի զանարժանս ոմանս պատուեալ տեսանէի, և զիս տուտ կասկածանօք օտարացուցեալ։ Այսու խորհրդով օրէն համարեցայ ըստ հարկի հանգամանացս զՀետ լինել պահելոյ զանձին պատիւ։ Բազում այլ ինչ կամէի գրել, այլ ազդ եղև ինձ՝ զի բռնութիւն՝ի վերայ իմ պատրաստի։ Եւ արդ յանձն առնեմ քեզ զՈրեսթիլա, և՝ի քո հաւատարմութիւն առնեմ զնա ապաստան, զի զգուշացիս նմա յերեսաց անիրաւութեանց, երդմնեցուցեալ զքեզ՝ի սէր որդեկաց քոց։ Ողջ լիջիր»[1]։

Նոյն իմաստք վայլեն և՝ի բանս վտարանջելոյն առաքելոյ դուխեառք Մանլիոսի, զի ասէն. «Երդուեալ՝ի դիս և՝ի մարդիկ, իշխանդ, զի ոչ ընդդիմ հայրենեաց զինեալ ի մեր, և ոչ՝ի միաս ուրուք յարուցեալ, այլ՝ի պահ զգուշութեան անձանց յերեսաց անիրաւութեան։ Թշուառք և կարօտեալք՝ի հարստահարութենէ և յանպատութենէ վաշխառուաց, յոլովք՝ի մէնջ զրկեալք՝ի հայրենեաց, և աներեսքեան՝ի համբաւոյ և՝ի գոյից. այլ մեք ոչ իշխանութեան ելք՝ի խնդիր և ոչ փառաքանութեանց հետամուտ, որոց վասն պատերազմունք են՝ի մարդիկ, այլ զազատութիւն խնդրեալք՝ զոր ոչ ոք՝ի բարերոյ յանձն առնու կորուսանել, բայց միանգամայն ընդ կենդանութեան։ Այս քեզ արդ և առ ծերակոյտ պաղատիմք, զի թոյլ տացեն մեզ զուտ քաղաքացեաց»[2]։

Վկայութիւնք այսոքիկ շատ իսկ յանդիման ածեն զՀզրկիս նկատակալ ապստամբութեանն, և հաւաստի առնեն՝ զի կուսակալքն Կաստիլիոյ չեին արհամարհելք, այլ յարատեւողք՝ի հաստատութիւն մտաց իւրեանց։ Ծերակոյտն՝ի հրատարակել զքննութիւն հայրենեաց զկատիլիոս և զՄալլիոս, խոստանայր մեղսակից մոռացութեան և երկերիւր հազար սեստերս[3] ոմն-

1 Սալլուստ. կապիտան, Լբ։
2 Սալլուստ. կապիտան, Լգ։
3 Սալլուստ. կապիտան. Լ։

նելոց՝ ի կուսակցութենէ Թշնամւոյն. «այլ յայնչափ բազմութենէ, ասէ Սաղուստիոս[1], ոչ ոք՝ ի վարձուց անտի յոտից բեալ յայանեաց զդաւակցութիւնն, և ոչ ոք Թողեալ զդիրս Կատիլինայ՝ ի բաց գնաց՝ ի բանակէն։ Այսչափ բռնութիւն էարկին իւրեանց ախտ ժանտ զբազմաց՝ ի քաղաքացւոց ապականեալ էր գլխաւս»։

Բայց Թէպէտ և Կատիլինա էր այր անխիղճ և անօրէն, սակայն հաւատոյք լսոտ օրինի պաշտպանելոյ նորա զինդիր իւր՝ զոր ամբաստանելն կամէր՝ այն իսկ էն, զի ոչ միայն չէտ ազատութիւն ստիպաց՝ որպէս արարին Սիլլա, Մարիոս և Կինննա, տալով օրինակ էար՝ ի հրապոյրս առաջնորդաց ապստամբութեան, այլ և ոչ յանձն էտ վարել նոքօք[2] մերժելով զառաքինս Կենտուլեայ, որոյ զպատգամն զայս նշանաւոր առաքեալ էր առ նա, Թէ «Թշնամի Հռոմայեցւոյ հրատարակեալ վճռական ծերակուտին, առ լինչ մերժես զատրուկս»[3]։ Եւ զի՞ է լինէր երկարել. ոչին իսկ վեհմական երևեալ՝ ի մեծի մարտին ցուցանէ, զի՝ ի վտարանդեալսն՝ որ հանարին ամբոխ սինկլտոյ վտարանդի մարդկան, պատրաստ՝ ի ցրել անդիմադարձ[4], էր հաւատարմութեան հայրենասէր և ճշմարիտ նախանձ ազգի։

Բանակքն երկոքեան պատահեցան միմեանց՝ ի դաշտավայրն Պխստոյայ՝ ի 5 յանուարի յամին 692. մնէին մարտ առաւել, և յանդոյս լինել Կատիլինայ՝ ի յաղթութենէ, ոչ ոք՝ ի զօրականէն յետս նահանջէր. ամենեքեան ըստ օրինակի զօրավարին իւրեանց զկն՝ ի ձեռին յիւրաքանչիւր կայս անկան դիակնացեալ, խոնեալք շուրջ զարծուռնէն Մարիոսի, ախոյեանն պատերազմին՝ որ ընդդէմ Կիմբրաց, զփառաւորեալ զրօշիւ իրաւանց ժողովրդեան[5]։

1 Սաղուստ. Կոպէննա, ԼԶ։

2 «Իակ զատրուկս, որ՝ ի սկզբան գունդագունդ առ նա գիմէին, մերժէր՝ ի բաց. վատահացեալ՝ ի զօրութիւն դաւակցացն, ոչ օգտակար համարէր՝ ի վէճս քաղաքացւոց խառնել զատրուկս». Սաղուստ. Կոպէննա, ԾԶ։

3 Սաղուստ. Կոպէննա, ԽԴ։

4 «Մարդիկ որ յոտս մեր անկցին, ոչ եթէ՝ ի ցուցանել մեր նոցա զայր առաջի, այլ՝ ի լուր վճռոյ պատուհասին». Կիկերոն, Երիրդէ Կոպէննէան, Գ։

5 Սաղուստ. Կոպէննա, ԿԱ։

Ապաքէն յանցաւոր էր Կաթիլինա յանդգնութեամբն՝ և տապալել բոնի զօրինս աշխարհին, այլ ոչ ինչ աւելի գործէր նա քան զՄարիոս և քան զՍիլլա։ Երազէր զիշխանապետու թիւն յեղափոխելոյ աշխարհին, զկործանումն սակաւապետու թեան, և որպէս Դիոն Կասիոս ասէ, զխոխութիւն օրինաց Հասարակապետութեան և զապստամբութիւն դաշնակից ազգաց [1]։ Սակայն յաղէտս Հասարակաց լինելոց էր յաղթութիւն նորա. զի յանաւուրց ձեռաց չյաջողէն բարւոք տեսակք [2]։

Զ· Վրիպել Կիկերոնի՛ ի կարծիս իւր։

Կարծէր Կիկերոն բնաջինջ արարեալ զկուսակցութիւնն, այլ խաբէր. ՚ի դերև ևէթ եհան զպատակցութիւնն, ՚ի բաց բարձեալ զդատն մեծ յանխորհուրդ մարդկանէ՝ որք ՚ի վտանգ արկանէին զայն. սպանութիւն դատակցաց՝ ըստ ոչ օրինաց՝ յաւել զօրութիւն չիշատակի նոցա, և դառն յաւուր միում չնչին Կատիլինայ ծածկեալ ծաղկաստիւռ [3]։ Մարթ խակ է ըստ օրինի հակառակ օրինաց գործել յորժամ քաղաքա ցուկ ընկերութիւն կայցէ ՚ի վտանգի կորստեան, և արիւական հնարից անհրաժեշտ պէտք լինին առ ՚ի փրկութիւն. և պե տութիւնն օգնականութեամբ բազմութեան ազգին բերել յանձին զգէնս վրէժխնդրի օգտից և կամաց նորա։ Խակ յերկ պատակել ազգի և ժողովրդեան՝ եթէ լցէ պետութիւնն ՚ի ՚ի պատակելոց կողմանց, յայնժամ առ ՚ի դերև հանել զդա տակցութիւն, պարտ է ամենայն երկիւղածութեամբ պատկառ կալ օրինաց. քանզի անդ ամենայն հնարք արտաքոյ օրինաց՝ ոչ ևս թոյլ հասարակաց օգտի լինաւր, այլ անձնասիրութիւն.

1 Դիոն Կասիոս, ԼԷ· ծ։

2 Ինքնակալն Նաբոլէոն ՚ի Ցիշատակարանս Սրբոյն Հելենեայ յառաջաբանն պիտ զկարծիս պատմագրաց՝ որք համարին խորհիլ Կատիլինայ յաւար և ՚ի հուր մատնել զՀռոմ, և ամբաստանալ ՚ի վերայ վերստակաց հայրենեաց։ Համարէր զայն Նաբոլէոն, ասէ Ցը Լազ–Կազ, նոր իմն կուսակցութիւն ըստ Մարիոսին և ըստ Սիլլային, որ ՚ի ձախողելն՝ էառն ՚ի գլուխ առաջնորդին կուսակալ զամենայն ա վարական ամբաստանութիւնն, որ առնին յայնպիսի դէպս։

3 Կիկերոն, ճառ վասն Փլանկոսի, ԼՀ։

և առաւելապոյնք ժողովրդեան անզգամագանք և թշնամիք պատրաստ են միշտ գումթ ունել ընդ ամբաստանեալ՝ որպիսի ոք և լիցի, և դարմանել զխաստութիւն պատուհասին։

Ընդ եւս յաջողութեան գործոյն յայլոյ խնդրս լեալ կիկերոն, փառասիրութեամբն ծաղրելի զանձն ընծայեցոյց[1]։ Համարեցաւ զանձն հաւասար Պոմպէի, և գրեաց առնա յոխորտանութիւք որպէս յաղթական, այլ ընկալաւ ՚ի նմանէ պատասխանի ցուրտ[2]. և եռես ընդ հուպ ՚ի գլուխ եղեալ զգուշակութիւն կեսարու, եթէ «ի մուտացնս անկանին յանցանք մեզա պարտից կարի խոկ ծանումնք, և պատուհասն նոցին միայ չիշատակ, եթէ խաստգոյն քան զարժանն լիցի լեալ»[3]։

Յառաջագոյն խոկ քան զպատերազմին Պհարսայ մինչդեռ տակաւին տևէր հալածումն ընդդէմ համախոհից Կատիլինայ, հասարակաց ոգիք հակառակ էին որում գրգռէրն զնոսա. և Մեսելլոս Նեպոս այն ինչ եկեալ յԱսիոյ ՚ի Պոմպէոսէ առաքեալ, յայտնապէս պարսաւէր զգնացս Կիկերոնի։ Ի կատարել պաշտաման քրէշխութեան իւրոյ իբրև կամէր նա խօսել առ ժողովուրդն ՚ի պարծանս անձին, Մեսելլոս ոամկապետ եխոյց զբերան նորա գոչելով. «Որ արդէն ամբաստանեցոց չտալ պատասխանի վասն անձանց իւրեանց, մի՛ տացէ և ինքն վասն անձին պատասխանի»։ Եւ հրաման ետ նմա զսովորութեան երգումնն միայն տալ՝ թէ չէր ինչ նորա գործեալ ընդդէմ օրինաց։ Բայց Կիկերոն կրկնեաց անդրէն. «Երդնում՝ զի փրկեցի զՀասարակապետութիւնն»։ Եւ թէպէտ զայս խրոխտ բարբառ գրուատեցին կատոն և որք շուրջն կային՝ ոչ ջանեալ զնա Հայր Հայրենեաց, այլ այս նոցա եռանդն լիցի եթէ առօրեայ[4]։

1 «Էած ՚ի վերայ իւր զկշտամբանս հասարակաց, ոչ առ չարութեան գործն՝ այլ առ սովորութեանն անապարծելոյ. քանզի յամենայն ժողովս ծերակուտին և ժողովոցն կամ գառատուրաց՝ առեալ յերկրէր զանուանս կատիլինայ և Լենտուլոսի»։ Պլուտարքոս՝ ՚ի Կիկերոն, Լ։

2 Կիկերոն, Նամակաց ընտանեաւն, ե։ է։ թուղթ առ Պոմպէոս։

3 Սալլուստ։ Կատիլինա, ԻԱ։

4 Զէ ինչ ուրախ եղեալ առաջնոյր ՚ի թղթոց զկարս Հաւիցն խօսելոց ՚ի նմանէ յամի քրէշխութեան իւրոյ։ «Կամ էղև և ինձ, ասէ, առնել առնաբանութիւնս քաղաքականս (զսա օրինակի Դեմոսթենեայ), զորս մարթ է քրէշխականս

Լ· *Դատաստրիճն Կեսարու:*

(692):

Այնու յառաջ սահմանեալ Կեսար՝ ի դատաւորութիւն՝ ի Հռոմէ, յամին 692 եմուտ՝ ի գործ պաշտաման իւրոյ: Ընդու- լա՝ երբեմն իշխանակից նորա՝ ի շինուածապետութեան և յայտնի հակառակորդ՝ յաւելաւ նմա ընկեր: Ըստ յաւելու զօրութեան իւրոյ, Թուէր առաւել ևս՝ ի սպաս ծառայու- թեան Պոմպէի վարել նոսա, որ յետ մեկնելոյն՝ ձնագեալ էր միայնակ յոյս ակնկալութեան կուսակցաց ժողովրդեան: Առաւել քան զամենեսին ջանացաւ Կեսար տալ սահմանել յաղթողին Մհրդատայ պատիւս անսովորս[1]. որպէս՝ երևել՝ ի կրկէս խաղուց յաղթական պատմուճանաւ՝ պսակ ար- դեղն՝ ի գլուխ, և՝ ի տեսիլ Թատերց էզրաճիրանի արկա- նել զանձամբ՝ նշանակ առեներակալաց[2]: Եւս առաւել զուն զօրճեաց պատրաստել Պոմպէի զմի՝ ի հաձոյից անձնասիրու- թեան, զոր մեծապրէին յոյժ Հռոմայեցիք:

Ձի ոմոց յանձն էր կառուցումն շինուածոց հասարակաց, ՝ի կատարել շինուածոյն՝ ընտրէր նոցա պատիւ զրոշմելոյ՝ ի նման զանուն իւրեանց: Կատուլոսի արձանագրեալ էր զիւր ա- նուն՝ ի վերայ մեհենին Ա.րամազդայ՝ որ հրկէզ լեալ՝ ի կա- պիտոլին յամի 671, յանձնեալ էր նմա՝ ի Սիլլայ կանգնել զայն վերատին: Բայց զի չև էր կատարեալ մեհեանն, ը-

կոչել: Առաջին և երկրորդ՝ զագարակային օրինաց· մի՝՝ի ծերակուտին՝ի կալանդս յանուսարի, և միւս՝ առաջի ժողովրդեան· երրորդ՝ վասն Ոճանի· չորրորդ՝ վասն Հռաբիրիոսի· հինգերորդ՝ վասն որդւոց տարապրելոց· վեցերորդ՝ վասն հե- ռանալոյս՝ ի գաւառս· եօթներորդ՝ որով հալածեցաւն Կատիլինա· ութերորդ՝ ՝ի վաղիւ անդր յետ փախստեան նորա խօսեցեալ առ ժողովուրդն· իններորդ՝ յորում առաւել եկին Ալոբրոգք վկայել յաւենի· տասներորդ՝ ՝ի ծերակու- տէն՝ ի 3 դեկտեմբերի: Են և երկու, ոչ որպէս զայլսն երկոսինք, ՝ի յաւելուած իմն երկուց առաջնոցն վասն ազգարակային օրինաց »· Կիկերոն, Նամակաւն առ Ատ- պիկոս, Բ· Ա:

1 Վ՚ելլ· Պատերկ· Բ· Խ: — Դիոն Կասսիոս, Լ՚Է· ԻԱ:

2 Սուետոն· Կեսար, ԽՋ:

զքեզայ Կեսար զանպահպանութենէ օրինաց, և ամբաստան եղև խորեալ Կառուլեայ յարծաթոյ անտի սահմանելոյ ի շինուած մեհենին, և առաջարկեաց յանձն առնել Պոմ պէի ի գարձի նորա ի գլուխ տանել զշինուածն, գնել անդ զանուն իւր փոխանակ Կառուլեայ, և առնել զնուա կատիս նորին[1]: Այսուիկ Կեսար ոչ միայն զմեծարանաց իւրոց հաւասարս տայր Պոմպէոսի, այլ և ի շնորհս ևս ժո ղովրդեան գործէր՝ հակառակելով միում յառաջամեծար առաջնորդաց ազնուապետական մասին:

Ընդ լուր ամբաստանութեանն խռովեցաւ ծերակոյտն, և առ շուտ տագնապի դիմելոյ յատեան առ ի հերքել զառաջարկութիւնն՝ մուտս գնալ ըստ սովորութեան ի խնդակցութենէ նորոց բռնակալից[2]: Այսմ յայտ է զի չև ևս գաղարեալ էր յայնժամ գրգռութիւն երկուասեռք: Կառուլոս պաշտպանէր անձին, սակայն առանց մարթելոյ ելանել ի բեմ: և ի զայրանալ աղմկին՝ տեղի ետ Կեսար բռնութեան, և վախճան եղև երկոցն[3]:

Բայց յաստմն ռամկին ոչ գադարէր ընդդէմ ծերակուտին, իշխելով իսկ բողոքել գառաքելոցն ընդդէմ սպանութեան հանախոհին Կառիլինայ: Մետելլոս Նեպոս օգնեալ ի բարեկամաց նոցա, և ի հռաւակցաց պաշտպանին իւրոյ և Կեսարու, առաջարկեաց օրէնս՝ հոչելոյ զՊոմպէոս բանակաւ իւրով ի պահ գգուշութեան քաղաքին, ի պաշտպանութիւն քաղաքացւոց, և առ ի խափանել զի մի ևս ոք առանց օրինական հարցափորձի վարեսցի ի մահ: Ծերակոյտն և մանաւանդ Կատոն և Կ. Մետելլոս՝ շլացեալ ի յաղթութենէ սպանութեան բանակին, ուժգին զդէմ կալան առաջարկութեանն:

Յաւուր քուէարկութեան ցերեկոյ, ընդ առեանն աղմկաւոր Կատոն անց բազմեցաւ ընդ մէջ Կեսարու դատաւորի և Մետելլեայ ասպատեռի, առ ի խափանել զխօսակցութիւն նոցա ընդ իրեարս: Անդ էր տեսանել հարուածս աստի և անդ

1 Դիան կատխոս, Լէ. ԽԴ. ԽԶ. ԺԴ:
2 Սուետոն. Կէսար, ԺԸ:
3 Սուետոն. Կէսար, ԺՋ:

ոի և չկահիւն սուսերաց[1], և երկոցունց կողմանց հալածել զնոսա յատեանէն։ Եւ՝ ի յաղթել կողման ծերակուտին, Մեսսելլա սահիպեալ՝ ի փախուստ, բողոք եբարձ զի քոնսուլեան տայր սեղի, և զի գնայր առ Պոմպէոս՝ որ գիտէրն զերկաբանչիւրոց և առ նմանէ զվէժ։ Ա.յս առաջին նուազ էր ոամկապետի մեկնել՝ ի Հռովմայ, և երթալ ապաստանել՝ ի բանակ զօրապետի։ Ծերակոյտն ընկէց զնա՝ ի պաշտամանցն, և զկեսար՝ ի դատաւորութենէ[2]. այլ Կեսարու արհամարհեալ զայն՝ կալաւ զսակրատուս իւր, և դատէր զդատաստան։ Իսկ իբրև ազդ եղև նմա զի խորհէին ձեռնարկել՝ ի բռնութիւն ընդդէմ իւր, ինքնակամ հրաժարեալ՝ ի պաշտամանէն՝ մեկնեցաւ՝ ի տուն իւր։

Սակայն ժողովուրդն ոչ լռեաց ընդ նախատինս օրինացն. յետ երկուց աւուրց խռնեցաւ զբնակութեամբ Կեսարու՝ ի դուխն աղաղակի ստիպել զնա դառնալ յիշխանութիւն իւր. իսկ նա ցածոյց զամբոխն կալ՝ ի պարտս իւր։ Ծերակոյտն որ՝ ի շուինդն աղմկին դումարեալ էր յատեան, եւս կոչել անդր զկեսար, և շնորհս կալեալ նմա վասն յարդելոյ նորա զօրիցն, դարձոյց՝ ի նա զդատաւորութիւնն։

Ա.յսպէս Կեսարու կացեալ անխոտոր յօրինական կարգաց, բուռն առնէր ծերակուտին զարտուղել անտի։ Ա.ռեալս այս, երբեմն անյողդողդ՝ բայց և խոհական, ոչ ևս տեղի տայր իշխանութեան. ոամկապետի և դատաւորի հարկ լինէր խոյս տալ յինքնահաճոյ գործոց նորա։ Յաւուրց անտի Գրակքոսեանց՝ բռնութիւնքս այսոքիկ՝ ի վեր երևէին, և զի յերեսաց աւագորէրոյն, և ի զի յերեսաց ոամկին։

Իրաւախոհ լինել ծերակուտին ընդ Կեսարու յերկիւղէ ապստամբութեան ոամկին՝ ոչ ինչ վհատեցոյց զատելութիւն թշնամեաց նորա, և ամբաստանեցին զնա անդրէն՝ ի հանախոհութիւն դաւակցութեան Կատիլինայ։ Ի գրգռութենէ նոցա՝ Վետտիոս, երբեմն լսեալ Կիկերոնի՝ ի յայտնութիւն դաւ-

1 Դիմն Կատիլինա, Լէ. Խգ։ — Սուէտոն. Կեսար, ժԶ։ — Կիկերոն, Ճառ վասն Սէքսթիոսի, ԻԹ։

2 Սուէտոն. Կեսար, ժԶ։

ւոյն, եկակոչ ապար զնա յատեան Նումիոսի Նիկերայ զանձա-
պետի[1], և Կուրիոս, որում սահմանեալ էին վարձք հրապա-
րակականք, ամբաստան եղև զնմանէ առաջի ծերակուտին։
Երկոքին ևս վկայէին զմիաբանութիւն նորա ընդ դաւակից,
որպէս թէ՝ ի բերանոյ նորին իսկ Կատիլինայ լսեալ։ Ոչ ինչ
գժուարին եղև Կեսարու առնել վասն անձին պատասխանի,
զԿիկերոն կարդացեալ՝ ի վկայութիւն, որ ոչ երկմտեաց ար-
դարացուցանել զնա։ Յերկարել առեալն՝ շուկ ամբաստանու-
թեանն տարածեցաւ ընդ քաղաքն ողջոյն, և խուժանն խո-
թացեալ ընդ բաղդ Կեսարու՝ եկին խռնեցան և խնդրէր զնա.
և այնպէս լինի զայրացեալ թուէր, զի առ՝ ի խաղալել զնա՝
կարևոր համարեցան Կատոն առաջարկել ծերակուտին առ-
նել հրովարտակ բաշխելոյ ցորեան աղքատանոցին. որով ծան-
րանային պարտք տարւոջէ՝ ի վերայ հասարակաց գանձուն ա-
ւելի քան զքանքարս 1,250 (7,276,250 ֆր.)[2]։

Ընդդիմացաւ ծերակոյտն սուտ ցուցանել զամբաստանու-
թիւնն. զրկեցաւ Կուրիոս՝ ի խոստացելոյ վարձուցն, և վէտ-
տիոս արկաւ՝ ի բանտ, հազիւ զերծեալ՝ ի ցասմանէ ամբոխին՝
որ կամէր յօշ յօշ պատառել զնա առ բեմին[3]։ Բանտեցաւ
և գանձապետն Նումիոս, փոխանակ զի ելծող ամբաստանել
յատենի իւրում զպատասուր՝ որոյ իշխանութիւն՝ ի վեր էր
քան զնա[4]։

Ոչ շատացեալ Կեսարու լինքն ձգել զժողովուրդն, գողա-
նայր և զբարեկամութիւն մեծահեաց Հռովմայեցւոց. և թէ-
պէտ զակատեալ էր նա՝ ի սէր կանանց, սակայն յայտնի երևի
լինարութեան տարփածուաց քաղաքական տեսութիւն նորա.
քանզի տակաւ զրեթէ առհասարակ էին զօրք կցորդութեան
ընդ որեարն՝ որ կայր կամ կոչեցեալն էր՝ ի կարևոր ինչ
պաշտօն։ Սերտ մտերմութեամբ լեալ էր ընդ Տերտուլլայ՝
տիկնոջ Կրասոսի, ընդ Մուկեայ՝ տիկնոջ Պոմպէի, ընդ Լո-
լեայ՝ զաւեր Ասլոսի Գաբինեայ՝ որ եկաց բռնաշխ յամին 696,

1 *Կիկերոն, Համառօտ առ Ատտիկոս*, Բ. ԽԴ։
2 *Պլուտարքոս՝ ի կեսար*, Ը։
3 *Սուետոն. կեսար*, ԻՀ։
4 *Սուետոն. կեսար*. ԻՀ։

ընդ Պատումեայ տիկնոջ Սերուխոսի Սուլպիկեայ՝ որ ամբաստանաւ՝ի բռնակալութիւն յամին 703, և յաւելաւ՝ի ձեռն կնոջ իւրոյ՝ի կուսակիցս կեսարու։ Ա.յլ առաւել քան զամենայն տիկնայն մեծարէր նա զՍերուխիա քոյր Կատոնի, զմայրն Բրուտոսի, որում պարզևեաց յատաջնումն բռնակալութեան իւրում մերգարիտս ի վաթսուն բիւր սեստերաց (1,140,000 ֆր.)[1]. այս կցորդութիւն նորա չհաւատալ առնէ զհամբաւ Ջանից Սերուխեայ տուիտյուցանելոյ զկեսար ընդ դուստր իւր Տերտուխա[2]։ Ա.յլ թէ՝ի ձեռն Տերտուլլոյ լոյծ լեալ հաշտութիւն կրաստոսի ընդ կեսարու, եթէ յանիրաւութեանց ծերակուտին և՝ի նախանձուէ իւրմէ ընդդէմ Պոմպէի ածեալ յայն, չունիմ ինչ ասել։ Հաշտութեանս այսորիկ պատճառ լոյծ որ ինչ էն, բայց կրաստոս հաւատարմութիւն լեալ ընդ նմա յամենայն խնդիրս նորա կարևորս՝ յաւուրց անտի բռնակալութեան Կիկերոնի։

Ը. Ոձիրք կլոդեայ։

(692)։

Զայսու ժամանակաւ նշաւակութեան մեծի դէպք եղեն։ Կլոդիոս պատանի տոհմիկ և մեծատիրութեամբ, փառասէր և խիզախ, տուիտյր Պոմպէայ կնոջ կեսարու. այլ առ մեծի զգուշութեան Աւրելեայ սկեսուրն նորա՝ դժուարին էր միայնակ այցելութիւն պատանւոյն առ բամբիռն[3]։ Կլոդիոսի ծրտաեալ՝ի հանդերձ կանացի, եգիտ պատեհ մտանելոյ՝ի տունն նորա՝ի ժամու՝ յորում կատարէր նա զիշերուի ընդ տիկնայն զխորհրդատուհիս՝ի պատիւ ժողովրդեան Հռովմայ[4]։ Ա.րդ-

1 Սուետոն. կէսար, Ը։

2 Սուետոն. կէսար, Ը։

3 Պլուտարքոս.՝ի կէֆերոն, Ին. — ՝ի կէսար, ժ։ «Ջոհս այս կատարեցաւ՝ի ձեռն Եսոպոյ կուսանաց՝ մատուցեալ վասն ժողովրդեան Հռովմայ, ՝ի սան առեղնակալի ուրուն հրամանատարի, արտօրոլութեամբ՝ զորս չէ օրէն յայտնել, նուիրեալ՝ի պատիւ դիցուհւոյ ուրուք, որոյ անուն խակ անդիտելի է մարդոյ, և զոր Կլոդիոս բարի անուանէ, վասն նեղելոյ նորա իւր զայնակաի ոձիր»։ Կիկերոն, Ի պատասխանի հմայից, ժէ։ Դիցուհիս այս բարի՝ որ-

լեալ էր առն մարդոյ Հաղորդել՝ի պաշտամունս անդ, զոր մերձակայութիւնն իսկ նորա պիղծ առնէր: Ծանուցաւ կըղեհս՝ի ձեռն ուրուք յաղախնեաց, և արտաքսեցաւ անտի առ մօթով: Զայն բարձին քրմապետք ընդդէմ սեղանակատուն Թեանն, և հարկ եղև Նաամանայ վերատին սկիզբն առնել խորհրդաւօծնիցն: Ա.ապօրեաքն, որ Թշնամի գիտէր իւր գնըղեհս, զայն պատեհ էառ ընկճելոյ զայրն, և՝ի տագնապ արկանելոյ գնեաւր: Իսկ ոս առանց կամելոյ քննել յանցաւորի նոյն Պոմպէա Թէ անպարտ, արձակեաց գնա՝ի բաց: Ա.ոեան Ծերակուտին, չորեքհարիւր քուէիւք ընդդէմ հնգետասանից՝ յորոց հակառակ կըղեայ փուրիչ ամբաստանութեան: Պատասխանի առնէր նա այլուր լեալ զայն օր, և բաց յԱ.ըեղեայ էր ոք՝ որ հակառակ նորին վկայէր: Կեսար իսկ հարցեալ՝ պատասխանէր չգիտել. և յարդարացուցանել զգնացս իւր՝ի զգուշութիւն պատուոյ և օգտի իւրոյ՝ ասէր. «Չէ պարտ կնոջ Կեսարու կասկած անգամ տալ զանձնէ»: Ա.յլ Կիկերոն ըստ անարգ սադրանաց Տերենտեայ կնոջ իւրոյ, վկայեաց տեսեալ՝ի Հռոմ զկըղեհս յաւուր յայնմիկ[1]: Ներողամիտ ցուցաւ ժողովուրդն առ Կըղեհս, կամ Հանգեալ զանցանան պատուհասի արժանաւոր, և կամ զի կիրք քաղաքավարականք յաղթէին երկիւղածութեան կրօնից: Եւ ինքն իսկ Կրասոս զամենայն հնարս հնարեցաւ, և եա ամբաստանելոյն արծաթ բաւական առ՝ի կաշառել զդատաւորս՝ որ անպարտ կացուցին զինա. զի առաքինութիւն քուէից՝ի նպաստ նորա եղեն, երեսաւն և մի հակառակ քան և հնգից[2]:

Ծերակոյտն յաստեալ ընդ այս օրինազանցութիւն, եա ըստ խրատուց Կատոնի վճիռ քննութեան դատաւորացն ամբ

պէս զյոլովագոյնս յերկրաւոր դիցն հեթանոսաց, համարիր յաւերժահարսն բարեբար՝ շահապետս պաղծութեան արտօրէից և յղութեան կանանց: Զի՛ էրայն կատարիր զոն այս՝ի միում յաւուրց՝ի սկիզբն գեկտ. ՝ի տան բդեշխին կամ գատաւորի՝՝ի ձեռն բամբչան նորա և Եաոեանց: Սկսանիր ոճին զոհիւ քաւութեան խոզենեաւ, և պաղատանաւք՝՝ի յաջողութիւն ժողովրդեան Հռոմայ:

1 Կիկերոն, Ընտիր ատ— Ընթերց, Ա. ժԴ:

2 Կիկերոն, Ընտիր ատ— Ընթերց, Ա. ժԶ:

3 Կիկերոն, Ընտիր ատ— Ընթերց, Ա. ժԷ:

բաստանելոյ՝ի կաշառակրծութիւն[1]։ Եւ քանզի յատեանսդ այն
ոչ էին նոքա, կարգ ատեանսդ զկողմն կալեալ զնուրոցն՝
զատաւ յայտնապէս՝ի ծերակուտէն։ Ա.յսպէս յանցաւորու-
թեանն Կլոդեայ կրկին եղեն եւք ծանուցք. նախ՝ աշխար-
հազոյժ առնել զհաւաստիս փոխանակելոյ զարդարութիւն
ընդ արծաթոյ, և միւս եա՝ արկանել միւսանգամ զատեաս՝ի
կողմն ժողովրդեան։ Յաւելան և այլ պատճառք զժուրթեան
նոցա. քանզի հարկահանք խնդրէին նուազել զվարձս կա-
լուածոյ Ասիոյ, որ ծանրաբեռնեալ էր՝ի վերայ նոցա վասն
անհետ պատերազմացդ՝ի վերայ հասելոյ. և հերքեցաւ խնդիր
նոցա հակառակութեամբ Կատոնի։ Որ թէպէտ օրինաւոր էր
հերքումն, այլ՝ի հանգամանս ժամանակին յոյժ անխոհեմ։

Թ. Դարձ և յաղթանակ Պոմպէի։

(692)։

Մինչդեռ՝ի Հռոմ յաձախէին անդրէն հերձուածք, Պոմ-
պէոս կատարէր զպատերազմն Ասիոյ՝ խորտակեալ յերկուս
Հակառամարտս զՄիհրդատ, և փախստական տարեալ զնա
յանկն Եփրատայ՝ի հիւսիսակողմն Հայաստանի, և ապա՝ի
Կոլքիսական՝ի Վիտակուբիա, յարևելեան եզր Սեաւ ծովու[2]։
Անտի յառաջ խաղայր մինչև ցԿովկաս՝ի պարտութիւն մատ-
նեալ զընակիչս լերանցն զապգս երկուս, զՍղուանս և զԻբե-
րացիս, որ զդէմ ունէին նմա։ Եւ չու արարեալ զառուս երթի՝
եհաս՝ի ծովն Կասբիական. և ոչ ևս ունելով երկիւղ յերեսաց
Միհրդատայ՝ զոր հալածեալն էր յերկիր բարբարոսաց, դարձ
առնէր ընդ Հայաստան, և հնազանդեալ անդ զարքային Հայոց
զՏիգրան, ուղղէր անտի զընթացս իւր ընդ Տարս, անցանէր
ընդ Տաւրոս, բաղխէր ընդ արքային Կոմագենոյ, պատերազ-
մէր ընդ Թագաւորին Մարաց, յարձակէր յԱսորիս, դաշինս
կռէր խաղաղութեան ընդ Պարթևս, ընդունէր զՆռնազան-

1 Կիկերոն, Նամականի առ Ատտիկոս, Ա. ԺԶ։
2 Ապաց. Պոպէոսի Միհրդատայ, ճԱ։

պատճուն Աղաթացւոց Նաբատեանց և զԱղիաոբուբէայ արքային Հրէից, առնոյր զերուսաղէմ[1]։

Յայնմ վայրի Մհրդատ՝ որոյ արիութիւն և խորհուրդք թուէին յաւէտ՚ի վտանգս և յարկածս, ձեռն էարկ՚ի գործ քաջայանդուգն։ Գանգի պատեալ զարևելեան ափամբ Աեաւ ծովուն և գաշնակցեալ ընդ Սկիւթս և ընդ ժողովուրդս Տաւրից, գայր հասանէր՚ի ծովեզերս Կիմմերեանն Ելլեսպոնտեայ։ Եւ ապա՚ի յանդգնագոյն ևս խորհուրդ մտաբերեալ, քանագնաց լինէր ընդ Կեղտս, միաբանէր զնոսա ընդ իւր, և խորհէր խաղալ գաւառս Գանուբայ, անցանել ընդ Թրակիա, ընդ Մակեդոնիա և ընդ Իւրիկէ, հատանել զԱլպս, և զօրէն Աննիբալեայ անկանել Իտալիա։ Մհրդատայ էր ձեռնարկ եղեալ լինել՚ի խորհուրդ այսպիսի. այլ հարկ եղև նմա ձեռնթափ լինել անտի, թօթափեալ զօրացն՚ի նմանէ. Փառնակ որդի նորա՝ մատնաւ եղև հօրն, և ինքն անձին արարեալ՝ մեռաւ՚ի Պանտիկապէ (Կերչ)։ Յայնժամ Պոմպէոս կարաց տնօրինել ըստ կամի զամենայն՚ի լայնածաւալ և՚ի մեծահարուստ գաւառս անդ՝ որ տարածեալ ձգին՚ի Կասպից ծովէն մինչև ցծովն Կարմիր։ Փառնակ ընկալաւ զարքայութիւն՚ի Վոսփորէ։ Տիգրանայ՝ կորուսեալ զման թագաւորութեան իւրոյ, ամիներեցաւ՚ի Հայաստան։ Զորրորդապետին Գալլատիոյ՝ Դեոտարոսի՝ ընդարձակեցաւ երկիր տէրութեանն, և Աղիոբարզանայ թագաւորութիւն Կապպադովկիոյ՝ կանգնեաւն անդրկէն վտանն նորա։ Բազում նախարարք և իշխանք գաշնակից և բարեկամք Հռովմայեցւոց մեծապարգև մեծարեցան, և երեսուն և ինն քաղաք նորոգեցան կամ՚ի հիմանց կառուցան։ Համառօտ ասել, Պոնտոս, Կիլիկիա, Ասորիք, Փիւնիկէ՚ի մարզս Հռովմայ կարգեալ՝ ընկալան զօրէնս յաղթականին, յոր և կացին ընդ դարս բազումս[2]։ Ամենայն ծովեզերք Միջերկրականին, բայց Եգիպտոսէ, մտին ընդ հարկաւ ծառայութեան Հռովմայ։

Ի վախճանել պատերազմին Ասիոյ, արձակեաց Պոմպէոս

1 Ագաթիան. Պատերազմ Միհրդատայ, ձգ։
2 Դիոն կասիոս, Լէ. ի։

առաջի երեսաց իւրոց զՊուպիոս Պիսոն կալպուրնիանոս տեղապահ իւր՝ որ Թեկին ածէր զբռնեշխութեան, վասն որոյ և խըն-դրէր զյապաղումն աշխարհաժողովոյ։ Ընդհեցաւ նմա հայցուածն, և միաբան հաւանութեամբ կարգեցաւ Պիսոն՝ ի բղեաշխ՝[1] ընդ Մ· Վալերիոսի Մեսալայ՝ յամին 693, յահարկութենէ Պոմպէոսի փութացեալ ամենեցուն կատարել զխղճմնորա· քանզի անդէտ խորհրդոյ նորա՝ երկնչէին թէ գուցէ՝ ի դարձին իւրում խաղայցէ վերատին՝ ի վերայ Հռովմայ յաղթականաց բանակաւն։ Ա՛յլ Պոմպէոս եկեալ՝ ի ցամաք՝ ի Բրունդուսիոն յանեաւն յանուարի՝ ի 693, արձակեաց զզօրս իւր, և եհաս՝ ի Հռոմ առանց թիկնապահաց ընդ քաղաքացիս՝ որ խուռն ընդ առաջ եկեալ էին նմա[2]։

Յետ այնր առաջին գոհութեան հասարակաց, չեգիտ Պոմպէոս այլ ինչ ընդունելութիւն՝ որում ծնայրն· և վիշտք ևս ընտանեկանք յաւելուին ծանրացուցանել զբերեւումն յուսոյ նորա։ Իրազեկ էր՝ ի հեռաստ անկարգութեան կնոջ իւրոյ Մուկիայ, և եղեալ էր՝ ի մոլ արձակել զնա՝ ի բաց[3]։

Մախանք՝ պատուհաս հասարակապետութեանց՝ յարձակեցան ընդդէմ նորա· ասագրեարն ոչ թագուցանէր զինքեանս իւր, խնդրեալ ինն զվերժ երկիւղին՝ յոր յաւելոյր և իւրաքանչիւր ուրուք առանձնական ատելութիւն։ Նուիրեցոյ ոչ ներէր նմա զկորուստ զօրավարութեան բանակին Ասիոյ· կրասոս չհանդուրժէր՝ ի համբաւոյ նորա· կատոն, թշնամի ամենեցուն՝ որք քան զայլս՝ ի վեր ամբառնային, չկարէր բառնալ զնա, որում զլացեալ ևս էր զդուստր քեռ իւրոյ· Մետելլոս Կրետացի՝ մերժելոյ պահէր ոխ՝ ի սրտի վասն յաւիշատակելոյ նորա յիւրմէ զաշխարհակալութիւն Կրետեայ[4]·

1 Տիոն Կասիոս, ԼԶ· ԽԴ։ — Հակառակ այլոց պատմագրաց՝ հաստատէ Տիոն Կասիոս, յաւելեալ աշխարհաժողովին· (Պլուտարքոս· ՚ի Պոմպէոս, ԽԲ)։

2 «Ըստ մեծութեան երկիւղին յաւելուս ինդութիւն՝ ի տեսանելն զմոտանել նորա՝ ի հայրենիս որպէս զմի՝ ի քաղաքացւոց»· Վելլ· Պատերկ· Բ· Խ։

3 Կիկերոն, Նամականի — Աթտիկոս, Ա· ԺԲ։

4 Մինչդեռ զկեա էր Մետելլոս՝ ի բուռն առնուլ զԿրետէ, արձակեաց Պոմպէոս զմի ոք՝ ի զօրավարաց իւրոց՝ ի բաց առնուլ զայն՝ ի նմանէ, զի ընդ ծովակալութեամբ իւրով էր կղզին այն։

և Մեսեղլոս Կեղեր՝ի խոր խոցեալ էր վասն արձակելոյ նորա զքոյր իւր զՄուկիա[1]։ Իսկ Կիկերոն՝ որոյ վարկ զմարդկանէ փոխոխէր ըստ առաւել կամ նուազ մեծարելոյ նոցա զվասն իւր, գտանէր զերբեմն դիւցազն իւր ոչ ևս արդարալորով և մեծախոհ[2]։

Չգացեալ Պոմպէոսի զի չարակամութեան հասանէր նմա հանդիպել, զամենայն դուն գործեալ և արծաթ բազում ծախեաց առ՝ի հաւուցանել՝ի բռնչխութիւն զՄիտրանիս՝ զի յառաջնոց զօրապետաց իւրոց, վաստհացեալ՝ի ձեռս բերել նուաճ երկու ինչ՝ որոց առաւելապէս ցանկայր. զհաւանութիւն ամենայն գործոց իւրոց յՈմէրն, և զբաշխումն կալուածոց՝ հինաւուրց զօրականին իւրոց։ Թէպէտ և հակառակութիւն մեծ լեալ, սակայն ընտրեցաւ Լ. Սիրանիս՝ի բռնպետս ընդ Կ. Մեսեղլոսի Կեղերի։ Սակ մինչև առաջարկեալ Պոմպէի զօրինան՝ որոց ցանկայր, և զի չև էր մտեալ՝ի Հռոմ, խնդրեաց յաղթանակ, որ և շնորհեցաւ նմա այն երկօրեայ. սակայն մեծապայծառ կատարեցաւ հանդէսն՝ բազում երևելի տպաւորք՝ի 29 և յ30 ամենան սեպտեմբերի յամին 693։

Տանէին յառաջոյ տախտակս՝ յորս արձանագրեալ էին անուանք գաւառացն նուաճելոց սկսեալ՝ի Հրէաստանէ մինչև ցԿովկաս, և յայնմանց Վոսփորի մինչև ցեզերս Եփրատայ. անուանք քաղաքաց և Թիւ նաւուց աւար առելոց՝ի հինից. անուանք երեսուն և հինգ քաղաքաց բազմամարդելոց, և մեծութիւնք յաւելեալք՝ի գանձս աշխարհին 20,000 քանքարաց (քան զ11,500 բիւրս Ֆրանքաց). Թող զառաւաձիր բաշխոյս առ զօրականն յորոց մէն մի՝ Թէ նուազ՝ էառ դրամական 1500 (1455 Ֆր.)[3]։ Հասք պետութեանն, որ յառաջագոյն 5000 բիւր դրամական էին (4850 բիւր Ֆր.), հասին յ8150 բիւր (7900 բիւր Ֆրանքաց)։ Ի մեծագին իրս աճեալս՝ի տեսիլ ժողովրդեան՝ երևելի էր հաւաքումն գոհար ականց

1 Դիոն Կասսիոս, Էդ. Խթ։

2 «Ոչ մի ինչ ուղղութիւն, ոչ ամբծութիւն, ոչ ինչ՝ի լաւութենէ շարժեալ՝ի քաղաքական տեսութիւնս նորա. ոչ ինչ մեծախոհ, զօրաւոր և աշխուժական»· Կիկերոն, Համախանի առ Ատտիկոս, Ա. ԺԹ։

3 Պլուտարքոս՝ի Պոմպէոս, Խէ։

քանզ ակեղց արքային Պոնտոսի[1], տախտակ սատրնջի միապա-
ղաղ յերկուց քարանց պատուականաց, չորս ոտնաչափ յեր-
կայնութիւն, և երեք՝ ի լայնութիւն, յեռեալ յոսկի մահկա-
ճև, ՚ի կշիռ երեսուն լտեղց. բազմոյք սեղանոյ երեք ծանրա-
գինք յոյժ. անօթք յոսկւոյ և յարկանց պատուականաց բազ-
մաթիւք, բաւականք՚ի սպասս իննուց սեղանոյ, երեսուն և երեք
պահք մարգարտեայք, երեք պատկերք ոսկեձոյլք Աթենա-
սայ, Արեսի և Ապողոնի. և բլուր ոսկեղէն՝ ՚ի խարխախ քարա-
կուսի, զարդարեալ ազգի ազգի պտղովք և նմանութեամբ
եղջերուաց և առիւծուց, ցանկապատեալ որթով ոսկեղինաս,
պարզև արքային Ասիտաբուլեայ. մեհենեակ նուիրեալ Մու-
սայից, յորում էր գործի ժամացոյց. բազմոց ոսկեղէն՝ որ հա-
մարէր Դարեհի որդւոյ Վշտասպայ, անօթք զմուսոյ[2]. պատկեր
արծաթի Փառնակայ արքային Պոնտոսի նուաճողի զԱխեոս,
ժամանակակցին Փիլիպպեայ Գ. Թագաւորին Մակեդոնիոյ[3].
պատկեր դարձեալ արծաթի կրտսերոյն Միհրդատայ, և
հսկայաձև կիսապատկեր նորա ոսկի՝ յոմն կանդուն՚ի բար-
ձրութիւն. նոյնպէս և գահոյք նորա և գաւազան արքունի.
կառք գերանդազինք ոսկեզարդք[4], և ապա նորին խակ Պոմպէի
պատկեր աղնեգործեալ մարգարտօք: Հուակ ապա և ծառք
չև ևս մինչև ցայսժամ անդամնօր երևեալք, իբր չնաշ-
խարհիկ ինչ և Թանկագին, ոսկեհատ և ապրաւմ[5]: Առաջի
կառաց նորա ընծանային Լասթենէս և Պանարէս կրետացիք՝
յափշտակեալք՚ի յաղթանակէն Մետելլոսի կրետացւոյ[6],
գլխաւորք՚ի հինից. արքայորդին Տիգրանայ Հայոց Թագաւո-
րի, և բամբիչն նորա և օրիորդ արքայադուստր. դշխոյ տիկին
Զոսիմա՝ այրի երկուցն Տիգրանայ. Ոլթակէս իշխան Կոլքիա-
ցւոց. Արիստաբուլ Թագաւոր Հրէից. քոյր Միհրդատայ, հան-

1 Պլինիոս, Լէ. ե:

2 Անօթքս այսոքիկ ցանկալիք գային՚ի Կարամանիոյ. յորոց ցոլանային գոյնք ծիածանի, և ըստ Պլինեայ մի միայն յանօթոցս յայսցանէ վաճառեցաւ 70 քան-
քարոյ (առաւել քան 300,000 ֆր.). (Պլինիոս, Լէ. է և ը):

3 Պլինիոս, ԼԳ. ՅԴ: — Ստրաբոն, ժ.Բ. 545:

4 Ափպիան. Պոփէրալ Միհրդատայ, ճԺԶ:

5 Պլինիոս. ԲՆ. Պոփ. ժ.Բ. Թ և ՅԴ:

6 Դիոն Կասսիոս, ԼՉ. Բ: — Վէլլ. Պաւէրկ. Բ. ԼԴ. Խ:

զերծ հնազեքումբք որդւովքն. կանայք իշխանացն Սկիւթացւոց. պատանդք Աղուանից և Վրաց, և Թագաւորացն Կոմագենայ: Պոմպէոս էր ի կառս՝ զգեցեալ ի ձև Ալեքսանդրի Մեծին ականակուռ[1]. և զի երբեմն յաղթեալ էր նորա այս, վասն յաղթութեանցն որ Ասիոյ, Եւրոպա և Ասիա, աճէր առաջի նորա ախոյեան մեծ՝ արձանագրեալ ի նմա. ի վերայ բոլոր աշխարհի[2]:

Եբեղութիւն հանդիսին մեծի շողոմէր զվէս ամբարհաւանութիւն ազգին, այլ ոչ զինքնիւէց առնէր զյաչախագոյս: Եւ քանզի ոչ մեծաց ինչ ձգանց էին արգասիք յաղթութիւնք յարևելս, հակառակորդք Պոմպէի անարգէին զվաստակս նորա, մինչև ասել կատոնի՝ թէ Ասիա ընդ կանայս պատերազմէին զօրավարիւք[3]: Եւ ի ծերակուտին Լուկուլլոս և այլք յատրեցոյ մեծարոյք՝ մերժեցին զառաջարկութիւնն հասատեալ զանձնայն գործս Պոմպէի, չհաւանեալ ոչ ընդ դաշինսն կռեալս ընդ Թագաւորս, ոչ ընդ փոխանակութիւն գաւառաց, և ոչ ընդ հարկահանութիւնս, զանձնայն ընդ խնդրուքն արկեալ:

Եւ ոչ անդ զկայ առեալ, յամին 694 յամեանն յաստեղի[4] առաջարկէր Լ. Փլաւիոս ռամկապետ ազատել զերկիրն՝ տուեալ յամին 521 ի կալուած հասարակաց և ապա վաճառեալ, և սահմանել զայն հինաւուրց զօրականին Պոմպէի առ ի բնակեցուցանել անդ զաղքատեանս. և զադարակս հասարակաց զվոլատերրայ և զՍուրետինն յՅետրուբիա, որ գրաւեալ ի Սիլլայ ի գանձս աշխարհին՝ և չև ևս էին բաժանեալ, բաշխել աղքատ քաղաքացւոց[5]: Ջծախս առաջարկութեանն ունէին ընտ հնգամեայ հարկք գաւառաց նուաճելոց[6]: Կիկերոն որ կամէր հաճել զՊոմպէոս, առանց ինչ ամաչելոյ շահուց նոցին՝ զօրս բարեւսան իւր ձոխս կոչէր[7], առաջար-

1 Ագաթիան. Պոռերայ Միհրդատայ, ձԺէ:
2 Պլուտարքոս. ի Պոմպէոս, խէ: — Դիոն Կասսիոս, Լէ. իԱ:
3 Կիկերոն, ճառ վասն Մուրէնայ, ԺԳ:
4 Կիկերոն, Նամակաւք առ Ատտիկոս, Ա. ԺՀ:
5 Դիոն Կասսիոս, Լէ. Ա:
6 Կիկերոն, Նամակաւք առ Ատտիկոս, Ա. ԺԹ:
7 Կիկերոն, Նամակաւք առ Ատտիկոս, Ա. ԺԹ:

կէաց մի ձեռն արկանել՝ի Հասարակաց ապարակս, այլ նոքին ծախիւք ստանալ այլ կալուածս: Բայց Հաւանէր յայնժամ ընդ բնակութիւն գաղթականաց, որ զերկեամ մի յառաջ՝ վտանգաւոր ցուցեալ էր զայն. և խոստովանէր Թէ պարտ է Հեռացուցանել՝ի Հռովմայ զխառնաղանձն ժողովուրդ՝ զսիկ քաղաքին, որ ստիպեալն էր երբեմն զխաժամուժն կալ՝ի Հռովմ՝ի վայելս ծովից և խաղուց, և ունել իրաւունս քուէից[1]: Առաջարկէր դարձեալ գնոց առնուլ զստացուածս իւրաքանչիւրոց ոմանց, և մի ձեռնամերձ լինել՝ի Հասարակաց կալուածս, այն որ՝ի Հաւս իւր ընդդէմ Հռուլղոսի պարսաւէր երբև անաւելոր ինչ՝ զբնակութիւն գաղթականաց՝ի ստացուածս գնեալս յիւրաքանչիւրոց ոմանց[2]: Պերճախօսութիւն հռետորին, որ զօրացաւն տալ մերժել զօրինս Հռուլղոսի, չէզև բաւական առ՝ի տալ Հաստատել զՓլաւեայն: Ա.յնպիսի իմն սաստկութեամբ Հակառակ եկաց այնմ բղեաշխն Մետելլոս, մինչև ոսոխութիւնն տալ զնա՝ի բանտ: Ա.յլ խստութիւնն այն շարժեաց զամենեսեան՝ի ցասումն. և զահի Հարեալ Պոմպէոսի ընդ այն, ազդ արար Փլաւիոսի արձակել զբղեաշխն, և Հրաժարեաց այնուհետև յօրինաց անտի: Բայց զայրացեալ ընդ այն ամենայն անիրաւութիւնս, և՝ի տեսանել նուազեալ զզօրութիւն իւր, ստիպացաւ ընդ արձակել իւր՝ի քաց զբա-
նակն, և եդ՝ի մեր միաբանել ընդ Կլոդեայ՝ որ ունէր յայնժամ ընտրեա յոյժ առաջի ժողովրդեան[3]:

Զայսու ժամանակաւ Մետելլոս Նեպոս, որ դարձեալն էր անդրէն Իտալիա ընդ Պոմպէի, կարգեցաւ դատաւոր, և ետ սահմանել օրինս բառնալոյ զամենայն բաժս անցից Իտալիոյ, վասն որոյ դրուատիս մեծամեծս ընկալաւ: Խորհուրդս այս, զոր Պոմպէոս արդեօք և Կեսար ետուն նմա, հաճոյ եղև ամենեցուն. և՝ի զուր ծերակոյտն գուն գործեաց խափանել զա-

1 Կիկերոն, Երէսդէմ ճառ ընդդէմ Ափրիկեան օրինաց, իէ:

2 «Զոհնիմք՝ի նախնեաց օրինակս գնոց առնլոց վերստանչիւրոց ոմանց կալուածս առ՝ի բնակեցուցանել անդ գաղթականս: Ամենայն օրէնք յարդ՝ի կալուածս Հասարակապետութեան գնոսա սահմանեն բնակեցուցանել». Կիկերոն, Երէսդէմ ճառ ընդդէմ Ափրիկեան օրինաց, իե:

3 Պլուտարքոս՝ի կեսր Ռոմէացի, կգ:

նուն օրէնսդրին, որ ըստ Դիոնի Կասսիոսի յայտ առնէ՝ զի առեանս այս չկամէր ընդունել՝ի հակառակորդաց իւրոց և ոչ բարեբարուքեան ինչ[1]:

Ճ. Իրաց՝ի սահման ձակատագրին դիմելոյն:

Ա.յսպէս ամենայն զօրութիւնք աշխարհին առանին հեղձուածովք կնճռոտել, ոչ ևս կարէին զոլնամ արդասաբեր, և ոչ վասն այլ իրիք Թուէին զարհնուլ, բայց առ՝ի լինել խոչ ընդ ոտն բարւոյ նորին: Ջինուց փառք՝ որպէս և պերճախօսութեան, հաստատանք կրկին Հռովմէական պետութեան, ոչ յայլ ինչ էին այնուհետև պիտանացու, բայց՝ի նեղոտել ճեղ կապճանս և նախանձ: Յաղթանակ զօրավարաց Թուէր անձնական ինչ նոցա պարծանք, քան յաջողութիւն Հասարակապետութեան: Ճարտարիմաստութիւն վարէր տակաւին զիւր իշխանութիւն՝ ցոլչափ ատենաբանն՝ի բեմի անդ կայր. այլ ընդ լինլանել նորա անտի՝ դադարէր և ամենայն ազդեցութիւն բանիցն, և ամենեցուն միտք կային միայն անզգայ ընդ Ճարտարուեստ գիւտս բանից՝ ըստ զինչպիտութեան անձին արկեալս՝ի կիր, և ոչ որպէս երբեմն՝ի պաշտպանութիւն մեծամեծ օգտից հայրենեաց:

Ի մեզ Հակառակորդք զընկերութիւն ինչ մարդկան՝ի նպատակ իւր, տեսս ինձ Թէ որպէս ամենայն ինչ ըստ արկածից բախտին ձեռն տան նմա. ոչ միայն յարձակմունք և ակընկալութիւնք հեռատեսից յեղափոխութեան, այլ և երկիւղ և դիմակալութիւն կամեցողաց խափանել զայն: Ցետ մահուն Սիլլայ, Կեսար միայն յարատևութեամբ գոն գործեաց ամբառնալ զգրօշ Մարիոսի, որով հարկ էր գործոց նորա և բանից՝ի նոյն դիմել նպատակ: Բայց մտադրութեան արժանաւոր այն է, զի Թէ հակառակորդք և Թէ կուսակիցք կարդացին Սիլլայ, Թշնամիք ամենայն նորաձևութեան՝ արբանեկէին դիպուածոց յանդիման առ՝ի հոլովել առաջի Կեսարու Ճանապարհ՝ի գերագահ իշխանութիւն:

[1] Դիոն Կասսիոս, Լիբ. ՍԼ:

Պոմպէոս նախանձաւոր իշխանութեան ծերակուտին՝ եւ զկարեւորն հարուած նախնի կարգաց վարչութեան՝ հաստատեալ վերատին զիշխանութիւն ռամկապետութեան։ Մեծաձեռն յաղթութիւնք նորա յարեւելս մեծարոյ զինա արարեալ՝ ի վերոյ կացուցեալ էին զինա քան զամենեսին. ինքն՝ ի բնէ եւ ըստ առաջնին գնացից միտէր՝ ի կողմն ազնուապետութեան, այլ նախանձ ազատութեցոյն արկ զինա՝ ի կողմն ժողովրդեան եւ՝ ի գիրկս Կեսարու։

Ջնոյն եւ ծերակոյտն, որ պանծայրն պահել անարատ զամենայն նախնի սահմանադրութիւնս, եւնք զայնոսիկ՝ ի վտանգին. նախանձեալ ընդ Պոմպէի՝ եթող՝ ի ռամկապետս զառաջարկութիւն ամենայն օրինաց՝ որ էին յօգուտ հասարակաց. յերկիւղէ Կատիլինայ՝ տապալեաց զթուանըն՝ որ արդեւնս նորատանուց զբռնակալութիւն, և կացոյց բռնաշէն զԿիկերոն։ Ի դատել զհամախտն Կատիլինայ՝ առ ոտն եհար զկարգս ազատութեան, և զնախկին երաշխաւորութիւն ազատութեան քաղաքացւոց՝ զկրաւունս բողոքելոյ առ ժողովուրդն։ Ոչ զմեծաւ ածեալ՝ զի՝ ի դէպ ծանուցս լաւագոյն քաղաքավարութիւն այն է՝ հաստուցանել կարեւոր մարդկան փոխարինս ընդհակառակաց երեւելիս ընդ վաստակոց նոցա՝ ի յաջողելն և՝ ի ձախողել, և ոչ՝ ի յաղթութեան գնեալ երթեալ օրինակի նախնոյ ծերակուտին որ՝ ի պարտութեան ընդդէմ ուներ Վարրոնի վասն չյուսահատելոյ նորա՝ ի փրկութենէ հայրենի պատկառելոյ, առաջնորդ գտանի ծերակոյտն առ Պոմպէոս, և արհամարհէ զչափաւորութիւն նորա. և որ կարէին կուսակից իւր ցուցանել զինա և պարտաւանդել ընդ իւր ընդհակառակօք, մերժէ զօրինաւորագոյն իսկ խնդիրս նորա, և ուսուցանէ այսուհետ զօրաւարաց առ՝ ի յաղագս՝ զի՝ ի դառնալ իւրեանց՝ ի Հռոմ յեթ ընդարձակելոյ զգաւառս Հռոմայեցւոց և յաձխողելոյ զհաս աշխարհին, եթէ արձակեացեն զզօրսն՝ ոչ տացի հաստատութիւն գործոց իւրեանց, և սակ արկցի վարձուց զօրականին՝ որ անկ էն պանծալի վաստակոց նորա։

Կիկերոն խնդրեին՝ որ զնախնի կարգս տեսչութեան Հռնէր պահել, հնին՝ ի վեր տապալէ զայնս յաւեհաբանութեան իւր

ընդդէմ Վերկիսի։ Զի նշաւակէ անդ զկաշառակրծութիւնն ծերակուտին, և զհարստահարութիւնս՝ զորով բռղոքէին գաւառք. և յայլ՝ի Հռուիոյն յանդիմանել՝ի տոկուածն լռոյց զբեզծուն բարուց, զվանհատուածն պաշտամանց, և զբարձուն հայբենասիրութեան յաւագորեցոյ. և՝ի Հռուբէն զՄանլեան օրինադայ՝ պարտ համարի ամենուին զնշխանութիւն՝ի ձեռն միոյ ուրուք, առ՝ի պահել զխաղաղութիւն յԻտալիա, և զփառս արտաքոյ. և իբրև զամենայն պերճախօսութիւն իւր թափէ առ՝ի յուցանել զծայրայեղ չարիս և զդէղ ազգասպանդին, հաճարի կասեցուցանել զհռոմարակաց կարծիս ցուրտ խորհրդով անփոփոխութեան։

Հակառակ էր Կատոն ամենայն նորաձևութեան, և նոյնիսկ հակառակութեամբն իւրով անհրաժեշտ կարևոր զայնս գործէր։ Ոչինչ նուազ քան զՎիկերոն կշտամբէր նա զյոռետիութիւնս աշխարհին. և ուր Վիկերոն յեղեղուկ մտօք սակս փոփոխէր, նա ստոյիկեան կանոնաւոր յամառութեամբ կայր անողոքելի յօրէնս անյեղլիս իմաստասիրութեան իւրոյ. հաստատէր կարևորաց իսկ առաջարկութեանց, և խափանեալ ամենայն զինջութիւն, անհաշտելի գործէր զատելութիւն և զհերձուած։ Ուծացոյց նա զՊանդեոս՝ի ծերակուտէն՝ տալով մերժել ամենայն առաջարկութիւնս նորա. զանայր նմա զդուստր քեռ իւրոյ հակառակ օգտի իւրոյ կողմանն, զի իմաստութեամբն այնուիկ խափանէին ամենայն խորհուրդք կեսարու[1]։ Ոչ զգուշացեալ՝ի հետևանսն ծայրայեղ խստութեան՝ ետ նա ընկենուլ՝ի ոամկապետութենէ զՄեսելլա, և զկեսար՝ի գատաւորութենէ. ամբաստանել զկնդիոս, յարուցանել հարցափորձ ընդդէմ գատաւորաց, ոչ լեալ կանխատես որ ինչ զհետ գայիւս չարիք գային, յորում պատիւ կարգի վոյ առհասարակ կայր՝ի վտանգի։ Ա.յս անխորհուրդ նախանձայուզութիւն Կատոնի թշնամեցուցեալ էր զգասպետս ընդ ծերակուտին. և առաւել թշնամութիւն նոցա և նա՝ Հակառակութեամբն Կատոնի՝ի նուազումն սակի կարուածոց

1 Պլուտարքոս՝ի կեսր, 15։

Ասէր[1]։ Ա՛յսմ առուգութեամբ՝ ի վերայ կացեալ Կիկերոն՝ գրէր առ Ատտիկոս. «Բարեմիտ խորհրդով մերս Կատոն խանդարէ զամենայն. խորհի որպէս՝ ի Հասարակապետութեան պղատոնի, այլ մեք մրուր եմք Հռոմուլեայ»[2]։

Ոչ ինչ ապա արգելոյր զընթացս իրաց. և հակառակորդք առաւել քան զայլս աներևութեան մղէին զայնս յառաջ։ Ամենայն ինչ դիմեր յայտնապէս՝ ի յեղափոխութիւն, և յեղափոխութիւն զօրէն գետոյ տապալեալ զթումբս ողողանէ զամենայն։ Կամք էին ևեթարու պատրաստել նման ձոր. իսկ Պոմպէոս կացեալ առ ջեկաւ կարծէր հրամանն տալ ալեաց՝ որ մղեալ տանէին զնա։ Կիկերոն միշտ՝ ի խորհուրդս տարտամ, և զի թողեալ զնայր ընդ հոսանս ջուրց, և և զի կարծէր անցանել ընդ այն՝ ի մակոյկ դիւրաբեկ։ Կատոն անսասան որպէս ժայռ՝ համարէր զդէմ ունել միայնակ անհակառակելի ուղխից, որ առեալ տանէր զնաւերն կարզ Հռովմէական պետութեան։

1 «Անգոանելի գործեն զծերակոյտն, և աստէառց կարզ ուծանայ՝ ի նմանէ. վասն որոյ առաջոք յայտ իսկ ամի տապալեալ զկրկին հաստատուն խարիսխս, յորս կացուցի իմովսանն զՀասարակապետութիւնն. առեմ իսկ՝ զիշխանութիւն ծերակուտին և զմիաբանութիւն երկոցունց կարգացս»· Կիկերոն, Նամակն առ Ատտիկոս, Ա· ԺՀ։

2 Կիկերոն, Նամակն առ Ատտիկոս, Բ· Ա։

ԳԼՈՒԽ Գ

693–695։

Ա. Կեսարու կոչումակալութիւն՝ ի Սպանիս։

(693)։

Մինչդեռ Հռովմայ համբաւն վաղեմի խոնարհէր՝ ի նուաստ գժտութենս անսիրելութեամբ հայրենեաց, ամբառնային անդ արք պայծառացեալք զինուորական փառօք։ Կեսար յեւս դատաւորութեան իւրոյ ջոգաւ՝ ի Սպանիա՝ որ յայնկոյս, տուեալ նմա վիճակաւ. պարտատեարքն նորա յատպղել ջանային զնա, այլ՝ ի զուր. զի նորա դիմեալ՝ ի մեծանունն Կրասոս, երաշխաւոր իւր կացոյց զնա 830 քանքարուց (իբր 500 բիւր Ֆրանքաց)[1], և մեկնեցաւ առանց իսկ սպասելոյ հրահանգաց ծերակուտին[2], որում չէր իսկ լեալ ժամանակ պատրաստ լինելոյ. զի զկնի կուսակալութեանց Թողեալ էր առեանն սահմանել յետ դատին Կղոդեայ, որ հազիւ աւարտեալ էր յամենեանն ապրիլի՝ ի 693 ամին[3]։

Վասն որոյ այս փոյթ նորա հասանելոյ անյապաղ՝ ի տեղի իշխանութեան իւրոյ՝ չէր յերկիւղէ նորոց դատափետութեանց, որպէս կարծեցաւն, այլ յղձակերտն լինելոյ հասանել՝ ի թիկունս օգնականութեան դաշնակցաց, որք խնդրէին զպատշաճութիւն Հռովմայեցւոց ընդդէմ լեռնականացն Լուսիտանացւոց։ Քանզի նա բոլորանուէր միշտ՝ ի պաշտպանութիւն

1 Պլուտարքոս. ՚ի կէսար, ԺԲ։ — Ապպիանոս (Քաղաք. պատեր. Բ. Ա. 8). իսկ զ2500 բիւրուց սեստերց, որ առնէ 475 բիւր Ֆրանքաց։

2 Սուետոնիոս, կէսար, ԺՀ։

3 Կիկերոն, Համպնի — Ատտիկոս, Ա. ԺԴ և ԺԶ։

Լինքն ասպատինելոց [1], աճէր ընդ նա ի Սպանիա զսան նա Մասինեթա՝ պատանի մեծատոհմ ափրիկեցի, զոր տակաւ մի յառաջ պաշտպանեալ ի Հռոմէ ամենայն ձգամբ, և յետ դատապարտութեան [2] թագուցեալ էր ի տան՝ ի հալածանաց Ցուբատայ որդւոյ Հեմբատայ արքային Նումիդիոյ։

Պատմեն յանցանել Կեսարու ընդ Ալպիս՝ զկայ առեալ ի գեղջ ուրեք, և ի հարցանել ապային ընդ ծաղը Թէ էր՞ն արդեօք և յանկեան անդ երկրի նախանձընդդէմ դարանք ի բարձաձգութիւն, պատասխանի արարեալ նորա լուրջ և զգօն. «Ընտրելի է ինձ գոլ ի մէջ խժոյս առաջին, քան երկրորդ ի Հռոմէ» [3]։ Ոչափ ինչ էին տուգութիւն գիտացս՝ որ աստանդ ի ցոյց փառասիրութեանն Կեսարու պատմին, չգիտեմ։ Զի երկեալ ընդ գահասիրութեանն նորա. այլ գիտելի այն է Թէ օրինաւոր էր գահասիրութիւն նորա, և ի փրկութիւն Թէ ի կործանումն Հռոմէական պետութեան գահասիրէր։ Եւ էիցէ արդեօք պատուականագոյն՝ յայտնել համարձակ զգացմունս մեր, քան ծածկել հանգոյն Պոմպէի զկրճս վէր ի վերոյ արհամարհանօք։

Ընդ հասանելն ի Սպանիա՝ յաւել այլ ևս տանն գունդս ի քառեւտին, որ էին յաշխարհին, և կազմեաց երիս լեգէոնս՝ որ բաւական էին առ ի խաղաղել ընդ հուպ զգաւառն [4]։ Զի խռովէր երկիրն անդադար յերեսաց արշաւանաց քնակեաց լերինն Հերմինեոնի [5], որ ասպատակէին ընդ դաշտաւայրն։ Ստիպեաց զնոսա Կեսար գալ քնակել անդ. և ի չառնուլ նոցա զայն յանձն՝ եւս պատերազմ սաստիկ ընդ լերինան, և նուաճէր զնոսա։ Զահի հարեալ յօրինակէ սասի ազգէ՝ որ շուրջ

1 «Անգամն ի մանկութենէն երևէր նա նախանձաւոր և հաւատարիմ առ սանս իւր»· Սուետոնիոս, կեսար, ՀԱ։

2 Սուետոնիոս, կեսար, ՀԱ։

3 Պլուտարքոս· ի կեսար, ԺԲ։

4 Պլուտարքոս· ի կեսար, ԺԲ։

5 Գոսլիք լերանց Լուսիտանիոյ, որ կոչին արդ Սերրա փա Էսթրէլա, և անջրպետեն ընդ Տագոս գետ և ընդ հովիտն Մոնտեհոյ։ Ըստ Գէոլարիոսի (Աշխարհագրոգրիի վաղնդ, Ա. կ.) լեառն Հերմինիոն կոչի և Արմինոյ։ Գլխաւոր բնորդաւան լեռնականացս Թուի լեալ Մեդոբրեգա (Մէմպրէյ), որ երևի ի Ցիլպոակոգիբա կեսարս, Պոպերոպ Ալեքսանդրի, ԽՀ։

քնակեալ էին, Թէ գուցէ նոյն աղէտք և ինքեանց պատահէսցեն, փութացան տամբք իւրեանց և որ ինչ մեծագին էր նոցա՝ անցանել յայնկոյս Դուրխոս գետոյ (Տուրոյ)։ Զայն պատեհ գտեալ կեսարու, եմուտ ՚ի հովիտն Մանաեկոյ, և առեալ զքաղաքս լքեալս, գնետ անդէր փախստէից։ Որոց տեսեալ մօտ ՚ի Թիկուռս զթշնաման, դարձան ՚ի մուխ եղեալ գալ ՚ի գէն. այլ գնօտս անդէոց վարեցին յառաջ, յուսացեալ զի Հռովմայեցիք ցրուեալ յաւարառութիւն՝ դիւրաւ պարտեսցին։ Բայց կեսարու չէր մարթ ըմբռնել ՚ի ծուղակ Թանձրամտացն. և Թողեալ զանդեայս՝ դիմեաց ՚ի վերայ նոցա, և ցիր և ցան արար զնոսա։ Մինչդեռ ՚ի պատերազմունս յայսոսիկ պատաղեալ էր կեսար ՚ի հիւսիսակողմն Լուսիտանիոյ, ազդ եղև նմա՝ զի քնակիչք Հերմինիոնի լերին անդրէն վտարանդեալ, խորհէին գալ փակել զանցս նորա ՚ի Թիկանոց։ Յայնժամ կալաւ այլ Ճանապարհ. և զայն ևս խափանել Ջանացան՝ զկայ առեալ ՚ի միջոցին ընդ Սերտա Ս.լպարտոս[1] և ընդ ծով։ Ս.յլ ՚ի պարտութիւն մատնեալ և պաշարեալ ՚ի Թիկանոց, ստիպեցան դիմել Յովհան, և ապաստանել ՚ի կղզի ուրեք՝ որ արդ կոչի Ռհնիկ տէ Ջիմա (Տես ՚ի Տախտակն Դ.), և ոչ ևս գտուլ անկցորդ ամենևին ընդ ցամաք, ի որպէս Թերակղզի, իբր քսան և հինգ վարստաւոր հեռի ՚ի հիւսիսակողմն Լիսբոնեայ[2]։ Կեսարու

1 Թուի յայժմեան Ալկիրա գաւառի։

2 Ըստ քննութեանն՝ զոր արար անգ գուքան Բէլլուոնոյ յամին 1861 յամառնան աւգոստոսի, չկար ինչ երկբայութիւն զի Թերակղզին Ռէնիկէ վաղ իսկ ձևակերպեալ էր ՚ի կղզի։ Ըստ աւանդից ժողովրդեան երկրին, հասանէր Ովկիանոս ՚ի հնուն ժինչև Ալտոգուխա քաղաք. այլ քանզի Դիոն Կասիոս պատմէ մակընթացութեան ծովուն մարթել կլանել զզօրականն, պարտ է համարիլ Թէ էին հունք անցից ՚ի աեղատութեան ջուրց։— Համառօտեացուք ասա որ ինչ մատենագիրք լուսիտանացիք զայսմանէ գրեն։ Պեռնարդոս տէ Պրիդոյ (Թագաւորութիւն Բորդուգալայ, հա. Ա. էջ 429, Լիսբոնայ, 1790) ասէ այսպէս. «Եւ զի ընդ քառվանդակ ծովախուռնս Լուսիտանիոյ չգտանեմք յաւուրս մեր այլ կղզի նման այնմ՝ յոր կամէրն կեսար ելանել, քայ ՚ի ցամաք կղզւոյն՝ յորում է աեղին ՚ի ձևոյ իւրմէ կոչեցեալ Ռէնիկէ, զնոյն ընդ մերում Ռեսեռան ասեմք գոլ զերկիրն՝ զորմէ խօսին ամենայն մատենագիրք։ Եւ չկարծեմ յարմարագոյն ըստ ամենայն հանգամանաց գտանել քան զայն, ոչ այնու միայն զի է միակ և ոչ հեռի ՚ի ցամաքէ, այլ և զի ՚ի նուազել ջուրց մարթի անցանել ցամաքաթև ընդ կիրճն անջրպետ, գիւրագոյն ևս յոյժ քան ՚ի հնուն. զի աւազոյն գիզանալոյ յափունան,*

էին նաւք, և ետ նա կազմել լաստափայտս, որովք անցցեն անդր զկնի՝ ի գնդացս· իսկ այլք համարձակեցան գրոհ տալ ընդ ծանծաղուտս, որ տայր նոցա հուն անցից· այլ ուժգնակի հարեալ՝ ի թիւնամեաց և յետս նահանջեալ, ի քարձրանալ ծովուն ընկղմեցան: Միայն Պօւպլիոս Սկեւիոս գնդապետ նոցա ապրեցաւ, որ թէպէտ և վիրաւորեալ՝ փրծաւ՝ ի այլ՝ ի

որով՝ ի յորդել ջուրց՝ ծանծաղագոյն ծածկեն զայնոսիկ· այլ և ոչ այնպէս նուազ է խորութիւն ալեաց՝ ի բարձրանալ ծովուն՝ զի չկարեն պէտք նաւացս տալ՝ ի հասանել՝ ի կղզի անդր ընդ խորոց եթէ կիսոյ մղոնի, որ անջրպետէ ընդ կղզին և ընդ ցամաք »:

Ահաւասիկ և բանք Ռեսենոսայ· « Այլ խնդրելի է և այլուր, որ այն կղզի եցէ հուպ՝ ի ցամաք, ուր՝ ի հեսիոս և՝ ի լոյլ փախստեայք անցանել մարթացան, ուր և թաւիել զզօրս ձեռն արկին: Ձեր անշուշտ Լոնդոբրին, զոր յիշատակէ Պաւսանիաս (և զոր Պէրւինիա կոչեմք արդ)· քանզի չէ այն մօտաւոր ցամաք երկրի: Եւ զի մերձ՝ ի Ծովեզերս առ հասարակ Լուսիտանիոյ յաւուրս մեր չկայ այլ կղզի, ապա կամ զայն՝ զորմէ Դիոն խօսի, ՝ի բազմեցոյց ալեաց մաշեալ, կամ զնոյն ինքն Թերակղզին Բէնինիեայ աւանի մերձ Լիսաբոնա, իմանալի է: Զի և արդ հինգ հարիւրոց քայլից խորոցաւ բաժանի սա՝ ի ցամաք երկրէ, և՝ ի տեղի սալ Ծովուն մարթ է անցանել անդր հեաի· իսկ՝ ի մակընթանալ ալեաց՝ կղզին ամենևին կայ անմատոյց ընդ հուն: Եւ Թերևս յայնժամ ընդարձակագոյն էր քան զարդիս»· (Լ· Անդրէաս ած Ռեսենոս, Հնախօսութիւն Լուսիտանիոյ և այլ պատմական գրոց նոցա հատորդ· հա· Ա· էջ 77, Քանիմպրիկա, 1790): — Անտոն Գաւուալհոյ (Տեղագրութիւն ափանց Լուսիտանիոյ, հա· Ա, էջ 144· Լիսբոնա, 1712) զնոյն առաջի առնէ Թիւնա առաջի առնէ:

Տեղեկութիւնքս յիշատակեալք ստուգիւր առաւել և առնուն հաստատութիւն ի նամականեաց անգլիացւոց ուրուն եպիսկոպոսի, որ առ Թագաւորութեամբ Ալիոնսոսի Հենրիկոսի (1147) յաւուրս առման Լիսբոնայ ընդ խաչակիրան ընկերբէր· « Իսկ յաւուրն ասանեբորդի քարձեալ զհատս մեր և զկարասիս ընդ եպիսկոպոսնա, և հողմոյ տուեալ զառագաստս նաւեցաք յայղուրեամբ· և՝ ի վաղիւ անդր հասաք՝ ի կղզին Բէնիկէ՝ երբ ութ հարիւր քայլիւք հեռի՝ ի ցամաքէն: Ի կղզւոջս յայսմիկ առաստութիւն է եղենկանց, և մանաւանդ Ճագարաց· գոսանի անդ և քաղցրարմատն կոչեցեալ տունկ ւիգոռիւհոմ (իմա ղիւիւրիքոմ): Տիւրացիք՝ զկղզիս զայս կոչեն Երիկարէա, Փիւնիկեցիք՝ Գադդիս՝ այսինքն եօթնեբորդ· ասան և անդր չկաք երկիր, վասն որոյ ծայր ծանօթի սիւեղերացս քարոզի: Մերձ՝ ի սա են և այլ երիս կղզիք՝ առվորաբար Բերլինկ կոչին ըստ խանգարեալ հընչման, փոխանակ ասելոյ Բալէարեանք· ՝ի միում յայնցանէ են ապարանք զարմանալի Ճարտարապետեալ, և գործարանք բազումք, միում՝ ի Թագաւորաց՝ որպէս ասեն՝ հաճոյ օթևան»· (Խաչակիր Անգլիացւոց Թուղթ յաղագս առման Օլիսիպոնեայ, ՝ի գիրս Յիշատակարան պատմութեան Բորդուգալոյ յոռիերդ դրչի Քրիստոսեան Լուսականիս հինլե ՝ի հնգետասաներորդ դար, հրամանաւ ճեմարանին գիտութեանց Օլիսիպոնեայ տպագրեալ· հա· Ա· տետր Գ· էջ 395· Օլիսիպոն, 1861):

ցամաքէ: Եւ ապա կեսար ածել նաւս ՚ի Գադէսայ, և անցեալ բանակաւն ՚ի կղզի անդր՝ եհար նուաճեաց զԽուժս: Անտի խաղաց նաւատորմաւն ՚ի Բրիտանտիոն, (զարդիս Գոռոնեը): Բնակչացն երկրին զարհուրեալ յերեսաց նաւացն՝ որ էին նոցա անծանօթք, նուաճեցան կամակար[1], և Լուսիտանիա ողջոյն եմուտ ընդ հարկաւ Հռովմայեցւոց:

Յայնժամ զօրքն կեսարու եռուն նման զմեծարանաց անուանն Իմպերատոր: Եւ ՚ի հասանել համբաւոյ յաղթութեանց նորա ՚ի Հռոմ, վճռեաց ծերակոյտն տօնախմբել օր մի՚ի պատիւ նորա, և ընտրեաց նմա զերեսունս յաղթանակելոյ ՚ի դարձի իւրում[2]: Յետ արշաւանացն և յաղթելոյ Լուսիտանացւոց, գնեաց եղև կեսար յանձանձել զերս աշխարհին, և տիրէր նովաւ արդարութիւն և միաբանութիւն ՚ի գաւառին: Ընտրհաւ պարտս իւր կացոյց զՊոմպիացիս՝ ազատեալ գնոսա ՚ի հարկաց, զոր եղեալ էր Մեսեղլեայ Պիոսի ՚ի վերայ նոցա յաւուրս պատերազմին Սերտորեայ[3]: Եւ մանաւանդ ջանացաւ խափանել զգժտութիւնս հանապազորդս պարտատէրց ընդ պարտապանս, սահմանեալ օրս զկրկին երիս մասունս հասից իւրեանց տալ ՚ի հատուցումն պարտուց իւրեանց. որ եղև նմա յոյժ ՚ի փառս՝ ըստ Պլուտարքեայ[4]: Չի ապահովէր նա այսուհետ զերաւունս իւրաքանչիւր ուրուք ստացուածոց, և արգելոյր վաշխառուաց Հռովմայեցւոց մի՛ ձեռն արկանել ՚ի դրամագլուխն ողջոյն առ ՚ի հատուցումն պարտուցն. զոր և ամենեցունն ապա օրինադրեաց ՚ի ժամանակս իշխանապետութեան իւրոյ[5]: Եւ յետ խաղաղելոյ զհերձուածս՝ եկեալ քա-

1 Դիոն Կասսիոս, ԼԶ. ԾԲ–ԾԴ: — «Հասեալ անդր եհար կեսար զԼուսիտանացիս և զԳալլեակս (բնակիչս Գալլիկեայ), և խաղաց մինչև ցծովն արտաքին, և էարկ ընդ լծով Հռովմայեցւոց ազգս, որոց չև էր ծանօթ հռովմէականն պետութիւն, և դարձ արար ՚ի կուսակալութենէ անտի փառօք և գանձիւք, յորոց եհան մասն և զօրականին»· Զոնարաս, Տարեգրութիւն, ժ· Զ:

2 Ապպիան· Քաղաքական պատերազմունք, Բ· Ը:

3 կեսար· Պատերազմ Սպանիոյ, ԽԲ:

4 Պլուտարքոս· ՚ի կեանս, ԺԲ:

5 «Ամենէն գառամեալոյ յարեան իսկզբնէ ընդդէմ այնոցիկ՝ որ վաշխուք կալեալ էին մեծանալ, առ ոտն հարեալ զօրէնս՝ զորս իշխանապետութեն կեսարու էր օրինադրեալ յաղագս համեմատութեան պարտեաց և ստացուածոց Իտալիոյ, և որ

բուն Եաոմէ զբնակիչս Գադիսի, եւ նոցա օրէնս՝ զորոց չքնաղ արձանս վայելէին ընդ երկար. և եբարձ՚ի ժողովրդոց Աս֊իանիոյ զխուժադուժ սովորութիս նոցա, մինչև ոմանք՚ի նո֊ցանէ և՚ի մարդազոհս անկղնտանային [1]։ Անդ՚ի Գադէս մտերմացաւ նա ընդ Հոյակապ առնն Լ. Կոռնելեայ Բալբոսի, որ՚ի պատերազմունս Կեսարայ եղև նմա ձարտարապետ դար֊ձիւ, զոր և պաշտպանեաց Կիկերոն, ՚ի ժխտել նմա առենին զիրաւունս քաղաքացւոյ [2]։

Թէպէտ և արդարութեամբ մեծաւ յանձանձէր նա զգա֊ւառ իւր, սակայն յանկածէ պատերազմին կուտեալ էր նորա աւար բազում, որով վարձատրեալ զզօրականն՝ և յաւել՚ի գանձս աշխարհին մեծութիւն յոյժ, և ոչ մի ինչ ամբաստա֊նութիւն հարստահարութեան և բռնակալութեան եղև զնը֊մանէ։ Զաւուրս՝ յորս եկաց նա փոխանակ կուսակալի՚ի Սպա֊նիա՝ [3] գովեցին ամենեքեան, և մանաւանդ Մարկոս Անտոնիոս՚ի Հռովն՝ զոր յետ մահու նորա խօսեցաւ։

՚ի բազմոց հետէ՚ի մուսացօնս անկեալ էր առ զօշաքաղութեան սակաւուց»։ Տակիտոս, Տրէբէլլիէն, Ջ. ԺԶ։ — Սուետոնիոս, ԽԹ։

1 «Եւ զի մի մի յիշատակեցից սասանօր զամենայն ընորհս՝ զորս առատաձեռ֊նեաց Ժողովրդեան քաղաքիս՚ի կուսակալութեան իւրում՚ի Սպանիա, զնե֊ղուածս՝ զորս խաղաղացոյց՚ի Գադիսացիս, զօրէնս՝ զոր հաճութեամբ նոցին խակ քաղաքացւոց եառնոցա. զվաղնջուց խժական բարս նոցա և զսովորութիւնս՝ զորս եբարձ՚ի սպառ, և զնամս նորա՚ի լնուլ զնոսա բարերարութեամբք քան աղա֊չանացն Բալբոսի»։ Կիկերոն, Ճառ վասն Բալբոսի, ԺԹ։

2 «Ի մանկութենէ անտի ծանեաւ նա զԿեսար, և հաճեցաւ այրն մեծ ընդ նա։ Խակ Կեսար՚ի խուժբս բարեկամաց իւրոց մտերմագոյն զնա համարեցաւ. ՚ի կուսակալութեան իւրում և՚ի բդեշխութեան՝ վերակացու հազմութեան պատե֊րազմիկ մեքենայից իւրոց կացոյց զնա։ Ախորժէր ընդ խոհականութիւն առնն, մեծարէր զհաւատարմութիւն նորա, հաճէր ընդ յօժարակամ ազատասիրու֊թիւնն. և հալորդ գոսա Բալբոս՚ի ժամանակին յայնմիկ գրեթէ ամենայն վաս֊տակոց Կեսարու»։ Կիկերոն, Ճառ վասն Բալբոսի, ԻԸ։

3 «Զանգի սա (Կեսար) եկաց նախ կուսակալ՚ի Սպանիա, և կատածեալ ընդ հաւատարմութիւն գաւառին՝ ոչ կամեցաւ ընդարձակիլ նոցա, թէ գուցէ վեր՚ի վերոյ առժամայն խաղաղութեամբ վերատակար լինին առ յառաջ։ Ընտրեաց նա զօդուտ Հասարակապետութեան՝ քան անցուցանել դիւրութեամբ ժամա֊նակ նշանաւթեան իւրոյ. և զի Սպանիացիք ոչ յանձն առնուին հնազանդել, զինու զօրութեամբ հնազանդեցոյց զնոսա, վերադարձեալ փառօք քան զնախորդս իւր՝ որ կացեալ էին՚ի Սպանիա. քանզի դժուարին և է պահել զաշխարհակա֊լութիւն, քան աշխարհակալել»։ Դիոն Կասսիոս, ԽԳ. ԽԱ։

Այլ ոչ, որպէս Սուետոնիոս կարծէ, ՚ի մոլը ջրջէր նա օգնականութեան[1]. զի ոչ մուրոզութեան է գործ խաղալ ՚ի գլուխ բանակի: Եւ ոչ դարձեալ քանութեամբ իշխանութեան ժողովէր նա գանձս, այլ ՚ի տրոց պատերազմի և ՚ի բարւոք տնտեսութենէ, և ՚ի ընտիկակաւեաց իսկ իշխեցելոցն ՚ի նամանէ:

Բ. Կեսարս խնդրել զյաղթանակ և զթոկխտորիան:

(694):

Դարձ արար Կեսար ՚ի Հռոմ ՚ի վերջկոյս յունիսի[2], ոչ սպասեալ իւրոյ յաջորդին: Այս դարձ նորա, զոր կանխաժամանն համարէին պատմագիրք, էր արդեօք այնպէս. քանզի լցեալ էին աւուրք իշխանութեան նորա յամսոյ հետէ՝ յանուարի 694, և պարտ համարէր նա հասանել ՚ի Հռոմ ՚ի ժողով քաղաքացւոց՝ որ հանդերձեալ էր խնդիր յընտրութիւն զբաղխից: Յանդիման եղև նա անդ վատահութեամբ. և մինչդեռ պատրաստէր ՚ի յաղթանակն, խնդրեաց և հրաման ընծայելոյ ՚ի բզեշխութիւնն: Ինկերտատոր (այսինքն ինքնակալ) ՚ի զօրաւոր նէին անուանեալ, և արագ արագ աշխարհակալութեամբն ընդարձակեալ զսահմանս Հասարակապետութեան մինչև ցհիւսիսային ծովափունս Ովկիանոսի, մարթէր իրաւամբ թէկն ածել զկրկնակի պատուոյն, այլ դժուարին էր ընտրմն: Վասն ընդունելոյ զյաղթանակ՝ պարտ էր արտաքոյ կալ Հռոմայեցւոյ սակրատոքաք և ՚ի ձև զինուորական, միայն սահմանելոյ ծերակուտին զօր մտից իւրոց ՚ի քաղաքն: Իսկ վասն ընծայելոյ ՚ի բզեշխութիւն, պարտ էր գոլ ՚ի Հռոմ, և ՚ի ձև հետամտից աւագութեան սպիտակազգեաց[3] զաւուրս բազումս յառաջ քան զընտրութիւնն կալ միայն անդ: Ծերակուտին ոչ միշտ անկցուցանել զա-

1 Սուետոնիոս, կեսար, ՟Ի:

2 «Հասանէ կեսար յերկուս աւուրս». Կիկերոն, նամականի առ Աթտիկոս, Բ. Ա. յունիս 694:

3 Առաւել բառս գաղղիացւոյ candidat (այսինքն սպիտակազգեաց) նշանակէ՝ հետամուտ, ընտրելի, թեկնածու աւագութեան:

տեալ էր զերկոսին խնդրելս[1]. և Թէոդէս ջնորհեր խոկ Կեսարու զայնս՝ եթէ չէր Կատոնի խոսխանեալ զԼճնուն, երկարաձգե- լով զձառս իւր մինչև ցերեկոյ[2]: Ա.յլ և ոչ Կատոնի այսքան խնամ երևեալ էր յամին 684. քայց յայնժամ լինէր Պոմպէոսի յաղթանակել իսկապէս՝ ի վերայ Սերտորիոսի Թշնամւոյ ազ- նուապետութեան, Թէպէտ և ըստ կարգի զյաղթութեանց միայն՝ ի վերայ Սպանիոյ լինէր խնդիր[3]: Հարկ լեալ Կեսարու ընտիր առնել ընդ վարկապարագի ինչ հանդէս և ընդ իշխա- նութիւն, ոչ ինչ երկմտեաց:

Հարթեալ էր առաջի նորա Հանապարհ յընտրութիւն բռնե- խութեան. ջնորհք՝ զոր ունէր առ ժողովուրդն՝ երթային և յա- ւելուին, և ծերակոյտն խոտխտ ընդ իշխանութիւնն իւր օտա- րացուցեալ էր յիւրմէ զարս հզօրս: Պոմպէոս դժկամակեալ ընդ մերժումն բնաւից արդար բողոքանաց նրոց, քաջ գիտեալ և զայն, զի օրինքն այն ինչ սահմանեալ՝ առ Թշնամիս Հասարակաց ունելոյ զկարաշատաբեկս ընտրողաց՝ ուղղակի՝ ի նա ակնարկէին, որ յայտնապէս գնեալն էր զբռնակալութիւն Սիրանիոսի, այսու ամենայնիւ արբեցեալ ինքնահաճութեամբ՝ ոչ ինչ վճռէր՝ ի ձախողութեանցն, սիզալով ընդ գեղապաճոյճ առնկերոյ- ծեալ հանդերձս իւր[4]: Կրասոս՝ որ Հաւատարիմ կացեալն էր ընդ երկար ազնուապետական կողմանն, Հակառակորդ լեալ էր ապա՝ վասն անպատրուակ նախանձու առաջորեցոյն ընդ նա, և վասն Հնարից նոցա առ՝ ի պարտաւորել զնա ընդ Կեսարու՝ ի դաշակցութիւն Կատիլինայ: Եւ Թէպէտ՝ ի վերայ Հասեալ բազմահնար մեքենայից նոցա, սակայն երկնչէր՝ ի վտանգ արկանել զանձն, և խորշէր՝ ի Հակառակելոյ յայտնապէս այ- նոցիկ՝ որ՝ ի պատուի էին[5]: Նուկուլլոս վաստակաբեկ՝ ի պա- տերազմաց և յատանկին գժտութեանց՝ Հրաժարէր՝ ի քաղա- քական իրաց, առ՝ ի վայելել խաղաղութեամբ յանբաւ մե-

1 «Բազումք և՝ ի հետուստ ընծայեալ՝ ի բռնիչխութիւն, ընտրեցան՝ ի նոյն, որպէս Մարկէլլոս յամին 540». Տիտ· Լիւ· ԻԴ· Թ:

2 Պլուտարքոս· ՝ի կոտո՛ն, ԼԶ:

3 Փլորոս, Գ· ԻԳ:

4 Կիկերոն, Նամականի առ Ատտիկոս, Ա· ԺԸ:

5 Կիկերոն, Նամականի առ Ատտիկոս, Ա· ԺԸ:

ծուխն իւր։ Կատուլոս ոչ ևս էր կենդանի. և առաւել պոյնք յաւապանուոյն պՀետ երթեալ ազգեցութեան բռնապետնէից ոմանց յառեհակալաց ծերակուտին՝ ոչ լինչ Հոգային զգործառնութեանց, երջանիկս Համարեալ զանձինս՝ զի էին ևս ձկնուտեալք, և ձկուելք ընտրեցեալք որ՚ի ձեռանէ. ևոցա առնուին ջամբ[1]։ Կիկերոն տեսանէր լքեալ զանձն՚ի բնաւից։ Ագաւանէին, որոց սպասաՀարկու լեալ էր նա ցասման, յանցանել վտանգին՝ ոչ ևս աւելի լինչ Համարէին զնա քան զնորա մուտ ոք օգնեալ՚ի բաղդէն. վասն որոյ խոՀական խորհրդով փոխեալ էր զիտս իւր, և կործանէին դաւակցութեանց պաշտպանէր զՊ. Սկեւռ՝ զի՚ն Համախոհից Կատիլինայ, և տայր արձակել զնա անպատուս ընդդէմ յայտնի Հաւաստեաց յանցաւորութեան[2]. և ոխերիմ թշնամին առնոյն բաշխեց կալուածոց՝ պատուարան լինէր Ագարակային օրինացն Փլաւիոսի։ Գրէր նա առ Ատտիկոս. «Տեսի զայժմու բարեբաստութիւնս, զմեծախնամ սիրոյդ ձկնարանաց, զի ոչ ևս ծածկէին զմտախոհս իւրեանց ընդ իս. խնդրեցի ես յայնժամ հզօրագոյն թիկունս»[3]։

Վասն որոյ ընդելացեալ իսկ էր յայնմՀետե՚ի Պոմպէոս, խոստովանեալ՚ի մխմունջ՝ զի չէր նորա «ոչ ընդարձակութիւն մտաց և ոչ արտի ազնուականութիւն։ Ոչ այլ լինչ գիտէ նա, ասէր, բայց խոնարՀել զգլուխ իւր, և շողոմել զժողովուրդն. սակայն այնպէս կցորդեալ եմ ընդ նմա, զի երկաքանչիւր իբրև սոսկականք՝ օգտիմք իրեարք, և որպէս քաղաքավարք՝ մարթիմք երկոքին իսկ անյողդողդ ևս գործել։ Ոչդեալ էր ինձ Հակառակամարտ աստեղութիւն խնդալից և անխնամ մանկտուոյն. այլ քաջ գիտացի ես որսալ զնոսա քաղցրութեամբ, և մեծարոյ լինել նոցա ստուերածս ածեալ զանձնեքսումբք։ Չամուռօտ ասացից. Ջանամ ոչ զոք զայրացուցանել, այլ առանց նուաստութեան և շողոքորթելոյ զկուռ ժանն։ Ա.յնու զգուշութեամբ կշռեալ եմ զնացք իմ, զի որ-

1 Կիկերոն, Համախանի առ Ապիոս, Բ. Ա։

2 «Թուի իսկ Կիկերոնի յանօթ առեալ՚ի գաւառախազէլոյն Հարիւր բիւր սեաւերոյ՚ի գնել առն՚ի վերայ Պալատին լերին». Աւլոս Գելլիոս, ԺԲ. ԺՆ։

3 Կիկերոն, Համախանի առ Ապիոս, Ա. ԺԹ։

պէս այր հասարակաց՝ չուամ իմիք տեղւոյ, իսկ իբրև այր սոսկական՝ գիտելով զտկարութիւն լաւ որեւոյ, զանիրաւութիւն յաչալուծաց և զատելութիւն չարաց, գնամ զպուշութեամբ և ակնածութեամբ»[1]։

Ակնարկէր սակաւ Կիկերոն՝ ի պատճառս յեղափոխութեան քաղաքական տեսութեանց իւրոց, այլ չտայր ինչ համան թէ էր աղագաւ տխպէր՝ ի խնդիր հզօր թիկանց։ Փոխանակ յայտ առնելոյ համարձակ զպատճառս գնացից իւրոց, հանգոյն յեղեղուկ մարդկան արդարացուցանէր զանձն առ բարեկաման իւր, իբր թէ ոչ ինքն ուղէր զկարծիս իւր, այլ զՊոմպէոս շրջէր՝ ի խորհուրդս իւր, կամելով զնոյն ապա փոխել և ընդ Կեսար։ Ձի այսպէս գրէ նա առ Ատտիկոս. «Մեղմով ինն մեղադիր լինիս ինձ վասն ընտանութեան իմոյ ընդ Պոմպէի. այլ մի համարիցիս թէ յապահովութիւն ինչ անձին գործեմ զայդ։ Ժամանակիս հանգամանք արարին զամենայն. թեթև ինչ գժտութիւն՝ ի միջի մերում յուզէր խոով՝ ի պետութեան։ Ձամենայն խորհեալ և սահմանեցի, առանց հրաժարելոյ յիմաստից իմոց բարեաց՝ զնա ինքն ածել՝ ի լաւագոյն խորհուրդս. և սակաւիկ մի բուժեցաւ՝ ի մոլեգին սիրոյն առ ռամիկն.... Եթէ յաջողէր շահել և զԿեսար, որ հոգմուռոյց առագաստիւք նաւարկէ, զեան արդեօք գործէի պետութեան»[2]։ *Գիտէր Կիկերոն, որպէս և ամենայն ոք՝ որոյ զկեսարս զօրութիւն՝ ի բանս է, զի չկարէր առնել ինչ մեծ, և ոչ կալ յակաստանի՝ առանց յարելոյ յարս պատեբազմողս։*

Մինչդեռ իշխեցողք աշխարհի՝ ի մրցմունս անարգս պատրաստին՝ ի հռոմ, գոյժ գառնութեան եկն յանկարծ խափանել զվէձս քաղաքականս։ Ազդ եղև հարուած գաշնակից ազգին Կելտաց յաւխունս Ամպի յերեսաց Գերմանացւոց, և առաւտակել Հելուետաց արտաքոյ սահմանաց իւրեանց։ Ամհաւելք կալան զամենեսեան, որպէս թէ Կիմբրաց և Տեւտոնաց նոցա նորոգիչն արշաւանք, և հրամայեցաւ զօրաժողով հանդրա-

1 Կիկերոն, Նամականի առ Ատտիկոս, Ա· ԺԲ։
2 Կիկերոն, Նամականի առ Ատտիկոս, Բ· Ա։

կան և անխաղալը, որպէս միշտ յայսպիսի դէպս[1]։ Բզեռաշխիք անցեալ ամին առին վիճակաւ զուրբաքանչիւր գաւառ, և սահմանեցաւ բանտագնաց լինել ընդ Կելտս՝ ի դիմակալու- Թիւն արշաւանաց օտարաց։ Նէին անդէն՝ ի բերանս ամենեցուն անուանք Պոմպէի և Կիկերոնի. այլ ծերակոյտն շարժեալ յայլ և յայլ պատճառաց՝ յայտ արար զկարևորութիւնն նոցա՝ ի Հռոմ, վասն որոյ չէր մարթ թողուլ նոցա հեռանալ։ Զի ոչ կամէր յաւելուլ տալ պարապ Պոմպէի պայծառանալ, և ոչ զրկել՝ ի ձեռնտուութենէ Կիկերոնի։

Գ. Դաշնակցութիւն Կեսարայ, Պոմպէի և Կրասոսի։

Իբրև ապահովացան լուրք հասեալ՝ ի Կելտաց՝ երկիւղ պատերազմի առ ժամանակ մի դադարէր, և լուք՝ ի սովորական ընթացս դառնային, զայր հասանէր Կեսար՝ ի Սպանիոյ։ Ի խառն՝ ի խուռն աղմուկս կարծեաց և ըղձից, երևումն յանկարծ առն՝ որ անյողդողդն էր յառաջարկութիւնս, խորհուրդ՝ ի խելամտութիւն, և արդի յաղթութեամբքն փառաւորեալ, զէպք բարեպատեհք էին աներկբայապէս։ Խելամուտ եղև նա անդէն հանգամանաց երացն, և ոչ կարեալ զեռ ևս միաբանել զամենեսեան՝ ի մեծ ինչ խորհուրդ, խորհեցաւ միաբանել զկնի՝ ի մի օգուտ հասարակաց։

Յայնմ հետէ բռնանդակ Ձիզն նորա այն էր՝ առնել հանձնախոհս իւր զՊոմպէոս, զԿրասոս և զԿիկերոն։ Առաջինն ընդ ակամբ հայէր՝ ի նա, և՝ ի զառնալ իւրում՝ ի պատերազմէն Միհրդատայ[2], կոչէր զնա իւր Եգիպտէ վասն կենակցութեան նորա ընդ կնոջ իւրում Մուկիայ, մինչդեռ հանգոյն Ագամեմնոնի պատերազմէրն յԱսիա։ Այս քէն, տակաւ յայնժամ առ Հռոմայեցիս, անտես լինէր իսկոյն առաջի քաղաքական կարողութեան։ Իսկ վասն Կրասոսի, զոր նախանձընդդէմ հակառակութիւն՝ ի բազմաց հետէ բաժանէր՝ ի Պոմպէի, բռնանդակ Ձարտարութեան և համոզող եղանակին

1 Կիկերոն, Համոյանի առ Աբպիոս, Ա. ԺԲ։
2 Մուհամմէտ, կէսաբ, Ա։

Կեսարու սկզբը էին ու ՝ի հաշտեցուցանել զնա ընդ ասխն իւրում։ Այլ վասն ածելոյ զնոսա ընդ նոյն շաւիղ՝ պարտ է և ևս ցուցանել նոցա պատճառս զօրաւորս բաւականս խնդրանուս առնելոյ զնոսա։ Պատմագիրք ու հատարակ զհրապոյրս անճնական շահու համարին յորդոր միաբանութեան արանցս այսոցիկ։ Եւ արդարև Պոմպէոս և Կրասոս էին ինչ անզգայք պատեհութեանն՝ որ օգնէր զահաւորութեանն նոցա և ընչասիրութեան, այլ պարտ է աղնուագոյն ինչ յորդոր ընծայել Կեսարու, և համարել զնա ՝ի չքմարիտ հայրենասիրութենէ շարժեալ։

Այսպիսի ինչ արդեօք նկարէր նա զՀատարակատեսութիւնն ՝ի լայնածաւալ միտս իւր։ Հռովմէական պետութիւն տարածեալ ՝ի վերայ երկրի էր մարմին մի վիթխարի՝ պինդ ունէր զայն աշխատութ բազկօքն. և մինչդեռ անդամքն քաջառողջք էին և զօրաւորք, սիրան տակաւին լուծանէր։ Այնպէս ասի արիական իրիք դարմանոյ՝ հասանէր տակաւութեանն ծաւալել վաղ ընդ փոյթ ՝ի կենդրոնէ ՝ի ծայրս, և թերի մնալ գործոյն՝ որոյ սահմանեալ էր կատարումն ՝ի ձեռն Հռովմայ։— Համեմատեցուք աստ զբարեհնչեան առակս Հռովմայ ընդ այժմեա։ Ցիշատակեցաք զժամանակ՝ յորում հրեշտակք ազգաց օտարաց մեծարելով զնմանատուն տեսչութիւն ծերակուտին՝ յայտ առնէին բարձրաբարբառ նախամեծար ընծրել զպաշտպանողական իշխանութիւն Հռովմայ՝ քան զնուբեանց ապատութիւն։ Ցայնմ հետէ որպիսի այլափոխս կերպարան։ Այգք համօրէն առեան զնշխանութիւն Հռովմայ, թէպէտ և իշխանութիւնն այն յետս մեծագունից չարեաց պահէ զնոսա։ Ստրաբոնէ ասէր Կիկերոն. «Ախեղամուտ լեզի Ասիա, զի առեղծն տատապանք պատերազմի և քաղաքական գժտութեանց հասցեն նմա՝ ՝ի դադարել նորա ՝ի կալոյ ընդ օրինօք մերովք»[1]։ Ցնոյն է ասել և զառեղծն աշխարհաց՝ ուր մնին լեզիանք։ Այդ եթէ վերջին տեսչութեան կամք եղեն հնազանդել զազգս ընդ միով եղեր ժողովրդով, ապա և ժողովրդեանն՝ որ կատարիչն էր յաւիտենական վճռոյն՝ պարտք էին

1 Կիկերոն, հատուած ասա կարիոս։ Ա. Ա, ԺԱ։

*լրատասէր լինել առտուածօրէն և արդար առ պարտեալս. զի և պարտքն այն անհրաժեշտք էն և անոզոքելի Հանդոյն Աստուածպէն։ — Ա.յլ ոչպակս մարթ էր՝ի չափս ունել զինքնիշխան նուիրեան վոխանակաց ըղեղխից և կուսակալաց, զորս չկարացին անձամբ հարել ամենայն օրինք յայնքանեաց ամաց հետէ հրատարակեալք։ Ո՞րպէս խափանել զհարստահարութիւնս՝ որ ընդ ամենայն ծագս պետութեան՝ ի ձեռն նոցա գործէին, եթէ ոչ հզօրագոյն լինէ և հաստատուն տեսչութիւն՝ի միահեծան իշխանութենէ պատրաստէր։ — Հասարակապետութիւնն առաքար իւր սովորութիւն յարձակել անխտիր, որով հասանէր տպատել զօրութեան նորա. զի անհնար է պատերազմ՝ի վերայ ամենայն ազգաց միանգամայն յարուցանել և ունել զգաշնակիցս՝ի հնազանդութեան՝ յանվրաւորն առ նուազ և՝ի վտարանջութիւն զնոսա բռնադատել։ Պարտ էր նուազել զթիւս Հակառակորդաց Հասարակապետութեան, տալով առաւելութիւն քաղաքաց արժանաւորաց[1], և՝ի բարեկամն ժողովրդեան Հռովմայ ընդունել զթագաւորութիւնս, ընդ որս մարթ էր խաղաղութեամբ կեալ[2]։ Վտանգաւորագոյն թշնամիք նորա էին Կեղտք, և պարտ էր զամենայն զօրութիւնս ընդդէմ պատերազմիլ և անխաղաղասէր ազգին ժողովել։ — Քանիք՝ի բնակչաց Նոսալոյ, ընդ որս խնա և զկեալս յայկոյս Ասկից, զուրկ էին՝ի քաղաքական իրաւանց։ Քանիք՝ի զանազան տակապործաց ողորմութեամբ Հռոմայ կամ՝ի գանձուց հասարակաց կային՝ի Հռովմ։ Եւ առ լինչ միտչէ ցատհմանս Ասկից չձգել զվիճակ հռովմէական, ընդէր ոչ բազմացուցանել զցեղս երկրագործաց և զկինուորաց՝ տեարս կացուցանելով զնոսա առացուածոց։ Պարտ էր զժողովուրդն Հռովմէական մեծարոյ յաչս իւր առնել, և զՀասարակապետութիւն յաչս տիեզերաց։ — Հանդարձակ ազատութիւն խօսից և քուէից՝ բաւական էր յոյժ, յորժամ բարեխառնեալ յանեղծ բարուց, առնձահարեալ՝ի զօրութենէ ազնուապետութեան, ի լոյս ածէր

1 Կեսար՝ի բղեշխութեան իւրում և յիշխանապետութեան ազատ կացոյց քաղաքս բազումս օտարոտիս։

2 Տեսցուք ընդ հուսկ ընդունել Կեսարս՝ի բարեկամս ժողովրդեան Հռովմայ զՎեհս ազգայ Եգիպտացւոց, և զԱրծուիսա ազգայ Գերմանացւոց։

զիւրաքանչիւրոց հանձար՝ առանց վնասելոյ հասարակաց բարեաստուածեան. բայց յորմէ հետէ նախնեացն բառիք՝ ի բաց բարձան ընդ աշխուատասեռութեան, օրէնք փոխանակ զինուց եղեն՝ ի ձեռս կուսակցութեանց, ընտրութիւնք՝ ի վաճառաշահութիւն, առեան ժողովրդեան՝ յատպարիզ մարտի, և ազատութիւն այնուհետև ոչ այլ ինչ էր՝ բայց պատճառ հանապազորդ տիարութեան և անկման։— Սահմանադրութիւնք այնպիսի իմն անհաստատութիւն ներգործեն՝ ի խորհուրդս և ընթերիշխանութիւն՝ զի՝ զուր է ձիգն միայն առնել զայս, և միանձնաւոր՝ արձանագրութեամբք, որ անհրաժեշտ կարևորն է՝ ի պահպանութիւն այնպիսւոյ մեծի պետութեան։ Առանց բառնալոյ զօրինադ՝ որ եռուն Հասարակապետութեան հնոցէակ դարս վառաց, մարթ էր միաբան հանութեամբ ակամատրաց՝ ի քաղաքացւոց հաստատել յաշխարհին իշխանութիւն իմն բարոյական՝ տիրելոյ կրից, չափաւորելոյ զխստութիւն օրինաց, տալոյ հաստատութիւն վարչութեան, ուղղելոյ զընտրութիւնս, ունելոյ՝ ի պարտս իւրեանց զհրամանատարս հռովմէական ժողովրդեան, և միաբանելոյ զերկուսին վտանգս ծանուցս ժամանակին, զանձնասիրութեան աւազորելոյն և զանհանդարտ եռացումն խուժանին։ Ահա որ ինչ միաբանութեան նոցա կարէր՝ ի գլուխ տանել, ուր անմիաբանութեան խրախուսէր ևեթ զխստարնակն գնացս այնոցիկ, որ պատրաստէին կործանումն՝ կիսք դիմակալութեամբ իւրեանց և կիսք յախտումն բերմամբ։

Դիւրին արդեօք էր Պանձէի և Կրաստոսի այսոցիկ խեղանել, որք յայնպիսի արկածս մեծամեծս՝ ի գլուխ անցեալ ականատես լեալ էին այնչափ արեանհեղութեանցն յառաջին պատերազմունս և այնպիսի ազնուախոհ իմաստից, որ մերթ յաղթող և մերթ նուաճ լինէին։ Ընկալան նոքա զհրաւէր Կեսարու, և եղին ընդ իւրեարս զաշն՝ որ յանիրաւի կոչեցաւ Նախկին եռապետութիւն[1]։ Իսկ Կիկերոն մերժեաց զիա-

1 Երկոքեանք, եռապետք, տասնպետք, քառեապետք կոչէին՝ երիւց, երից, տասանց կամ քառից առեանք իշխանակցաց՝ ի նոյն պաշտօն։ Բայց տուտանօր այլազգ ամենևին, զի էր լռելեայն հետ միաբանութիւն աւատպատունից արանց, և ոչ՝ ի դէպ էր անուանել զնոսա եռապետս։

*խանձանս Կեսարու մտանել՝ի դաշնակցութիւն անդր՝ զոր կո-
չէր միաբանութիւն բարեկամաց[1]։ Յողդողդ յամենայն գնացս
իւր, վարանամիտ ընդ հրապոյրս աւանդասպահից իշխանու-
թեան և ընդ դաշինս իւր՝ի կուսակցութիւն սակաւապետու-
թեան, և բազմահոգ ընդ առաջիկայս՝ զորս չկարէր դուշա-
կել, ոչուռ չափ ձգնէր՝ի խափանել որ ինչ՝ի յաջողելն՝ ըն-
դունել լինէր նմա։ Դաշնակցութիւնս, զոր երեքին ազգս այ-
սոքիկ կնքեցին երդմամբ[2], եկայ զանխուլ ընդերկար. և՝ի
բժշկութեան ևեթ Կեսարու էլ՝ի վեր միաբանութիւն
նոցա յամենայն խորհուրդս քաղաքականս։ Այսու ժրու-
թեամբ Կեսար զամենայն պատեհութիւն՝ի կիր առնոյր ա-
պահովելոյ զընտրութիւն իւր։*

Դ. Ընտրութիւն կեսարու։

*Ընդ ընծայեալս՝ի բժշկութիւն էր և Լ. Լուկկէոս. ըղ-
ձայր Կեսար յինքն ձգել զայրն երևելի մատենագրութեամբն
և բնաւորութեամբ[3], որ մեծափարթամ Հռոմէութեամբն խոս-
տանայր սփռել պարզևս առատապէս յօգուտ իւրեանց՝ առ՝ի
բազմապոյն ընդունել քուեայս՝ի ժողովս հարիւրեկաց։ «Հա-
մախոհք ազատութեան, ասէ Սուետոնիոս, լուեալ զայս նոցա
միաբանութիւն, երկեան յոյժ. զի յամենայն ինչ այնուհետև
հանդիպակեացն Կեսար յաւուրս գերապոյն ատենակալու-
թեան, եթէ այնպիսի ոք լինի նմա իշխանակից, միաբան ընդ
նմա յամենայնի և համախոհ»[4]։ Ոչ կարելով աւազաց յաղ-
թել նմա օրինօք, եդին՝ի մէն տալ նմա իշխանակից զԲիբու-
լոս, որոյ յաւագպոյն խակ լեալ էր նմա ընկեր՝ի շինուա-
ծապետութեան և՝ի դատաւորութեան, և երևեալ նմա
միշտ հակառակորդ։ Խրատեցին ոք հանդիպակեաց՝ի գոյից
իւրոց առ՝ի տիրել ընտրութեան. Բիբուլոս ծախեաց արծաթ*

1 «Եւ զնա՝ի մտերիմն իւր կամէր յերկեղն արս պատկանաւորս՝ի բարձր աւագութեան բժշկիմ»· Կիկերոն, ճառ վասն գաւառաց էդէնիոյ, ժԻ։

2 Դիոն Կասսիոս, ԼԻ· 57։

3 Կիկերոն, Ընտանեկան նոաղիք, Ե· ԺԲ։

4 Սուետոնիոս, Կեսար, ԺԹ։— Եւտրոպ· Զ· ԺԴ։— Պլուտարքոս՝ի Կեսար· ԺԴ։

բազում[1], և անկաշառելին իսկ Կատոն՝ որոյ յայտնապէս էր դուեաղն էր դատափետել զգնօղս քուէից, հանդանակեաց և ինքն, արժան համարեալ աստանօր՝ յօգուտ հասարակաց խոտորել յօրինաց մտաց իւրոց[2]։ Ո՛չ անաչառագոյն գտաւ և ինքն Ավիերան, որ սակաւ մի յառաջ գրեր առ Ատտիկոս զհարկ գնոց ստանալոյ զօգնականութիւն ասպետաց[3]։ Լաւագոյնք իսկ, որպէս և տեսանել՝ ի հարկէ իրացն զառածան յընթացս ապականելոյ պետութեանն։

Ըստ ըղձից հասարակաց և ձեռնտուութեամբ երկոցունց արանց հզօրաց, միաբան հաւանութեամբ ընտրեցաւ Կեսար՝ ի բդեաշխս, և ածաւ ըստ սովորութեան Յունիսեան դաշտ մինչև՝ ի տուն իւր խառն բազմութեամբ քաղաքացւոց և յոքանց ասեռակալաց[4]։

Հակառակորդք Կեսարու չկարացին խափան արկանել բդեշխութեան նորա, այլ ոչ լքան՝ ի խափանելոյ զնա՝ ի կարեւոր պաշտաման[5]՝ որ անկ էր նմա որպէս փոխանակի բդեշխի։ Սակայն խորհրդով՝ սահմանեաց ծերակոյտն խուսել՝ ի Գրակքեան օրինաց, որ զի մի աչառանօք սահմանեացին զաւառք՝ հրամայէին նախ քան զգուշանալն առնել քաղաքացւոց սահմանել զայնս. իսկ ծերակոյտն խոտորեալ յօրինաց սահ, էտ Կեսարու և իշխանակցին նորա՝ ակն յայտնի չարաչանութեամբ՝ զհոգաբարձութիւն անտառաց և զարահետ Ճանապարհաց, որ արդարև ընդ կուսակալութիւնս համարէր[6]։ Ա՛յս նուաստ պաշտօն, հաւատիք անհաշտ թշնամութեան նոցա, ՚ի խոր խոցեաց զԿեսար. այլ պարտք նորոյ պաշտամանն լուեցուցին զցասումն. մոռանայր որպէս բդեաշխն զանխաբանութիւնս որ առ Կեսար, և ազնուական խորհրդով քաղաքավարէր առ ՚ի հաշտութիւն։

1 Սուետոնիոս, կէսար, ԺԹ։

2 Պլուտարքոս· ՚ի կատոն, ԻԶ, և Սուետոնիոս, ԺԹ։

3 Այլ ասացեալ, Թէ գնոցդ ևէթ արծաթոյ ունիցիմք ՚ի մեր կոյս զասպետս։ Եւ զինչ առնել կայք... և կայցեն ինչ այլ հնարքք»· Կիկերոն, Նամակ· առ Ատտ· Բ· Ա։

4 «Ընտի ՚ի տուն ուղեկցութեամբ ծերակուտին առհասարակ
Դարձ արասցես, հազիւ բաւեալ տանն ՚ի պաշտօն ժողովրդեան»։
Ովիդ· Թոպղէ ՚ի Պոնտոսէ· Գիրք Դ· Թղթ· Դ։

5 Սուետոնիոս, կէսար, ԺԹ։

ԳԼՈՒԽ Ե

ԲԻԵՇՈՒԹԻՒՆ ԿԵՍԱՐՈՒ ԵՒ ԲԻԲՈՒԼԵԱՅ (695)։

Ա. *փորձ՝ ի հաշտութիւն։*

*Եւ ամբարձաւ կեսար յառաջին բարձ Հասարակապետու-
Թեան. ՚ի քառասուն և ՚ի միում ամի կենաց իւրոց բռնեաշխ
կացեալ ընդ Բիբուլեայ՝ չէր նորա տակաւին ստացեալ զար-
ժանին համբաւ Պոմպէի, և ոչ զմեծութիւն զանձուց կրաս-
սոսի, սակայն ազդեցութիւն նորա մեծագոյն արդէօք էր քան
զերկոցունցն ամենեցունց։ Չի ազդեցութիւն քաղաքական ոչ ՚ի
յաջողութենէ միայն զինուց և կամ ՚ի փարթամ ձոխութե-
նէ, այլ մանաւանդ ՚ի յատուկ գործոց ըստ հասատառուն
ընարութեան մտաց։ Կեսարու միշտ նոյն օրինք էին մտացն։
Ուխտատանութեան դիմադրեաց նա ցասմանն Սիլլայ և
թշնամութեան աւազակութեացն, պաշտպանելով հանապազ զըս-
ղոք հարստահարելոց և զիրաւունս գաւառաց։*

*Մինչ էր յիշխանութեան, ազատ ՚ի պատասխանատուու-
Թենէ՝ ընթանայր անխոտոր յոր դէմ եղեալն էր. ոչ զինչ-
նէր ՚ի խորհուրդս ուրուք, զդէմ ունէր համարձակ նեղհա-
կամտին կուսակցութեան, և հզօրեալսէն զիւր կործա-
պաշտպանէր՝ յանձն առեալ զպայծառ ստեղծաց իւրոց։ Ա.Յ՚ի
կալ իւրում բռնեալն հրաժարեաց յամենայն հակառակու-
Թենէ, և հրաւէր տայր անվեզծութեամբ որոց կամէին գալ
՚ի բարեկամութիւն. յայտ արար և ծերակուտին՝ զի չկամէր
պօծել ինչ առանց խորհրդոյ նորին, և ոչ առաջարկել ինչ
հակառակ իրաւանց նորա[1]։ Ա.Յ՚ի հաշտութիւն կարկառէր*

1 Վիճ Կասիոս, ԼՀ. Ա։

ամենաւսկանօրէն Բիբուլեայ իշխանակցի իւրում, աղաչելով զնա առաջի ծերակուտին՝ վախճան առնել գժտութեանցն, որոց սկզբունք վաղ իսկ աղետալնք ՚ի շինուածապետութեան իւրեանց և ՚ի գատաւորութեան, աղետապոյնք լինէին ՚ի նոր պաշտամանն[1]։ Եւ Կիկերոնի եւս արծամբ ՚ի փոխ, և յղեալ առ նա յամարտատան ապարանս նորա Ա՛նտիոն՝ զկուռնելիոս Բալբոս, խոստանայր անսալ խորհրդոց նորա և Պոմպէի, և խնդրէր ՚ի նմանէ վաստակակից լինել իւր[2]։

Ընդունելի սկզբօք հաճարէր նոցա Կեսար զառաջարկութիւն իւր. զի ՚ի մօտալուտ վտանգի կործանման աշխարհին՝ կարծէր զի և այլք զնոյն կերպ իւր կրէին։ Հաստատակաց բանին սէր, և Հանապազումն պարտուց նուիրելոյ զանձն ՚ի նոյն բոլորանուէր, այնպէս լուռն վատահ առնէր զնա ՚ի հայրենասիրութիւն այլոց, մինչև ՚ի բաց մերժել զամենայն կասկած նուաստախոհ նախանձու և զինչպիտութեան անձին. այլ խաբէր յոյժ։ Զի ծերակոյտն ՚ի կանխակալ կարծիս իւր յամառեալ կայր, Բիբուլոս՝ ՚ի քինուն, և Կիկերոն՝ ՚ի ձախտզակի անձնասիրութեան։

Կարևորագոյն էր Կեսարու սերտիւ կցորդել ընդ իւր զՊոմՊէոս՝ որոյ չէր ինչ անյողդողդ բնաւորութիւն. վասն որոյ եւս նմա ՚ի հինութիւն զՅուլիա դստեր իւր, մանկամարդ քան և երից ամաց, ընտրհալն և հանձարեղ, վաղ իսկ խօսեցեալ Սերուլիեայ Կեպիոնի։ Եւ սմա փոխարկն խոստանայր Պոմպէոս զդուստր իւր, զիօսեցեանն Փաւստոսի որդւոյ Սիլլայ։ Յետ սակաւ միոյ ետու Կեսար իւր կին զԿալպուրնիա դուստր Լուկիոսի Պիսոնի[3]։ Հակառակ այսոցիկ ամուսնութեանց յարեաւ Կատոն, ամօթալի շահալաձառս կոչելով զայնոսիկ երից հաստատակաց[4]։ Այսպէսեարն, և մանաւանդ Կուրիոնք երկոքին ձայնակից լինէին պարսաւանացն։ Սակայն և նոցայն կուսա-

1 Ասպիան. Քաղաքական պատերազմունք, Բ. ժ։

2 Կիկերոն, Նամականի առ Ատտիկոս, Բ. Գ։ — «Բզեաշխս կացեալ՝ վատասկակից գործոց պաշտաման իւրոյ խնդրէր զնա. առանց զինչանելոյ հարկ եղև ինձ շնորհակալել վասն մեծարանացն». Կիկ. Ճառ պատասխանոյ Բրէնխէց, ԺԷ։

3 Պլուտարքոս. ՚ի կեսար, ԺԴ։ — Սուետոնիոս, կեսար, ԻԱ։

4 Պլուտարքոս. ՚ի կեսար, ԺԴ։

կցուԹիւն ոչ անփոյԹ առնէր զօրանալ խնամուԹեամբք։ Ո՛չ ապաքէն և ինքն Կատոն քաղաքական տեսուԹեամբք տայր զղուշացեալ իւր Բիւզուլոսի. և ՚ի տալ իւրում Որտենախոսի զվէնն իւր՝[1] զմայրն երկոց որդւոց, որպէս զի յետ մահու նորա դարձցի առ ինքն Հոխացեալ ժառանգուԹեամբ նորա, անարգապուճի յոյժ շահու լինէր ՚ի խնդիր. զոր Կեսար նշաւակեաց ապա ՚ի մատենին մակագրելոյ Ընդդէմ Կատոնի[2]։

Երկրագործն խնամ նոցուց բդեշխս եղէ ՚ի հաստատուԹիւն տնօրուԹեան՝ հրատարակելոյ օր ըստ օրէ զվճիռս ծերակուտին և ժողովրդեան, որպէս զի կարծիք հասարակաց զատեցին ամենայն կշռուԹեամբ զխորհուրդս ծերակուտին, որոց մինչև ցայնժամ զանխտուլ մնային վճիռք[3]։ ՍկզբնաւորուԹիւն Կեսարու՝ ՚ի մուտս անդ բդեշխուԹեան իւրոյ՝ հարցանելոյ զծերակոյտն վասն առաջարկուԹեան օրինաց, յայտ առնէ նախ քան զԲիբուլոս ընկալեալ նորա զխուրձս նշանակս իշխանուԹեան։ Եւ այն խոկ յայտ է, զի բդեաշխք ամիս յամսոյ փոխանակաւ ունէին զայս պատիւ, և ՚ի կրել նոցա զնշանակս իշխանուԹեանն օրէն էր նոցա առնուլ զվարծիս ծերակուտին[4]։

Բ. Ագարակային օրէնք։

Եւ ապա յամենայնի յանուարի առաջարկեաց Կեսար օրէնս ինչ ագարակային, հաստատեալ ՚ի վերայ խոհական պատճառաց և համեմատս ամենայն օրինական իրաւանց։ Եւ զկնաւոր պատուէրքն օրինացն էին այսոքիկ.

Բաժանել զամենայն ազատ մասունս հասարակաց կալուածոց, զոր ՚ի սահմանաց Կամպանիոյ և Վոլատերրայ, յորոց առաջինն՝ առ յոյժ արգաւանդուԹեան[5] ՚ի բաց առեալ էր, և երկրորդն՝ երաշխաւորեալ վարձուորաց նոցին[6]։ — Իսկ եԹէ

1 Պլուտարքոս. ՚ի կապն, ԻԴ։
2 Պլուտարքոս. ՚ի կապն, ՄԹ։
3 Սուետոնիոս, կէսար, Ի։
4 Տիտ. Լիւ. Թ. Ը։
5 Ագաթիան. Քաղաք. պատէրտալ. Բ. Ե։
6 Կիկերոն, Ընգանէիան Ռուղիփ, ժԳ. Դ։

չէին երկիրն բաւական, ստանալ այլ արծաթով՝ որ յաշխատհակառակութեանցն Պոմպէի և՛ ի յաւելուածոյ հասից հատարակայ ժողովել։ — Մի՛ բռնադատել զոք՝ և՛ վաճառել զերկիր իւր։ — Կարգել գործակալս քան՝ և՛ հոգաբարձութիւն բանից հոգւոյ կալուածոց, քան յաւագքարկուէ օրինացն։ — Հատանել զիւնս կալուածոց իւրաքանչիւր, ոչ ըստ գործակալացն սահմանելոյ, այլ ըստ վճռոյ վերջնոյ ազգահամարին։ — Պարտս՝ և՛ վերայ դնել իւրաքանչիւրոց առեւտրականաց ծերակուտին՝ տալոյ երդումն՝ և՛ վերայ օրինացն, և խոստանալոյ չառաջարկել ինչ հակառակ նոցին։

Յայտ է զի Հռուլլոսի առաջարկութիւնն էր այս, զերծ միայն յանպատշաճութեանցն, որոց ընդդէմ ուժգին զինեցաւ երբեմն Կիկերոն։ Գանգի կեսար փոխանակ տասանց գործակալաց՝ առաջարկէր քսան, առ՝ և՛ բաժանել՝ և՛ բազում զիշխանութիւնն՝ որով վտանգ էր զերծանելոյ։ Վասն իւր իսկ յամենայն կառավարանաց զօշաբարութեան զերծանելոյ՝ արգել զմուտս առաջարկութիւն՝ և՛ ժողով անդր։ Գործակալքն ոչ ևս ըստ օրինացն Հռուլլոսի՝ էին ինքնաստեղծք՝ և՛ գործել և՛ և՛ սահմանել ըստ հաճոյս զիւնս կալուածոց իւրաքանչիւր առ՝ և՛ սակ հարկաց։ Պահէին կանխակալ իրաւունք, և բաժանէր միայն երկիրն, զոր տակաւին ազատ էր սեպութիւնն անօրինելոյ։ Յաշխարհակալութեանցն Պոմպէի ժողովել գանձք՝ սահմանէին հինաւուրց զօրականին։ և կեսար ինքնին արժան համարէր վարել զարծաթն զայն յօգուտ այնոցիկ՝ որք վտանգաւ կենաց ստացեալ էին զայն[1]։ Իսկ պարտք երդնելոյ ծերակուտին՝ չէր նորաձեւութիւն, այլ սովորութիւն հաստատուն։ Իսկ առանձնօր զի ընդունելութիւն օրինացն կանխէր քան զընտրութիւնս՝ առնոյն ընծայեալ և մնաւանդ ասելոյ պետք առաջիկայ աւին՝ պարտականք էղեն խոստանալոյ պահպանութեան նորին[2]։

1 Դիոն Կասսիոս, ԽՀ· 16։

2 Ցամպանի առ Ապպիոն, Ա· ԺՀ։ — Զմիոջէ յառաջնոց օրինացս ընթեռնումք այսպէս· «Առենականք քննիչք այսր օրինացն պարտական լեցին՝ և՛ առանց ուրուս զինն վճռոյ ասելին՝ երդնուլ և՛ պահպանութիւն նորին առաջի գանձապետին և՛ գանձարանի, առաջի ամենեցուն վկայ կոչելով զԱրտեմոսդ և զԹեբրաիս»· Տախտակ Պանդեկտ, Վիէննէ, ձառ բանասիրական, Դ· 16–24։

«Ոչ ումեք, ասէ Դիոն Կասսիոս, եղև գանգատել զնմանէ վասն իրացս։ Ժողովուրդ Հռովմայ, որոյ տարապայման աՀաւն էր գլխաւոր առիթ խռովութեան, կոչեցաւ յաշխատութիւն և՛ ի գաշտային կեանս. և յոլովք՛ ի կողմանց Իտալիոյ պակասեալք՛ ի բնակչաց, մարդաբնակ եղեն վերստին։ Օրինքս այսոքիկ հայթայթէին զկեանս ոչ միայն տաժանելոցն՛ ի պատերազմունս, այլ և ամենայն քաղաքացւոց, առանց ծախուց տերութեան և տուժից աւազանւոյն. նա մանաւանդ յոլովագունից՛ ի նոցանէ յաձախէին պատիւս և իշխանութիւն»[1]։

Վասն որոյ տարապարտ ումանք՛ ի պատմագրաց ամբաստանեն զկեսար որպէս թէ փառասէր խորհրդոց իւրոց նեցուկ՛ ի խաժամուժն Հռովմայ լինելոյ. զի նա ընդ հակառակն թերևս դիեր հնարս վարելոյ՛ ի գիւզօրէս զխռովայոյզ մասն բնակչաց մայրաքաղաքին։

Եւ ընթերցեալ Կեսարու զառաջարկութիւն իւր՛ ի ծերակուտին, կոչեաց ապա զնի մի յառեղակալաց յանուանէ, հարցանէր զառն առն զկարծիս, յօժարակամ՛ ի փոխոխումն օրինացն և՛ ի սպառ խափանումն, եթէ ոչ պատշաճ թուէին նմա։ Ա.յլ ըստ Դիոնի Կասսիոսի, «անատւտանելի էին օրինքս, և՛ ի չհաւանել ուրուք ընդ այն՝ չէիշխէր զդէմ ունել. և այն իսկ վէրջ մեծ էր ոսոխաց նորա, զի այնպէս յօրինեալ էին օրինքն, զի և ոչ տեղի լինէ տրտնջանաց էր»[2]։ Վասն որոյ շատանային յերկարաձգել զայն ժողովոյ՛ ի ժողով մեռոյ բաղաքացւոյ։ Կատոն, առանց ուղղակի դիմամարտելոյ, առարկէր զհարկ չփոխելոյ լինչ յօրինաց Հասարակապետութեան, հակառակ ամենայն նորաձևութեան ցուցեալ. այլ իբրև ժամ եղև տալոյ զկարծիս՝ ի վաղեմի մարթանս իւր ապաստանեալ, չասայր ժամանակ սահմանելոյ լինչ՝ երկարեալ զխօսս զօրն ցերեկ, որպէս երբեմն յաջողեալ էր նմա արգելուլ զյաղթանակ Կեսարու[3]։ Ոչ ևս կարացեալ Կեսարու հանդուրժել, ետ ածել

1 Դիոն Կասսիոս, ԼԸ. Ա։

2 Դիոն Կասսիոս, ԼԸ. Բ։

3 Ասէտս Կասկիոն, ճառ՝ ի վերայ պարբառոյ ապենախալաց ծերակոյսին, յառաջ բերեալ յԱնդրոսէ Գելլիոսէ. Դ. ժ։ — Վալերիոս Մաքսիմոս, Բ. ժ. յօդ. 7։

*’ի բանտ զատեհախօսն յամառ։ Ջհետ գնացին նմա յոլովք ’ի ծերակուտէն, ընդ որս և Մ. Պետրէոս։ Եւ ’ի կշտամբել զնա բղեշխին՝ զի մինչդեռ վախճան լեալ ժողովոյն մեկներ նա ան՝ տի, ետ պատասխանի. «Աւաւել ընտրեմ կալ ընդ կատոնի ’ի բանտ, քան ընդ քեզ ատտանօր»։ Ս.յլ կեսարու տրտնջացեալ ընդ առաջին թաւի ցասմանն, և ’ի դժկամակութենէ ատենին ուշ ’ի կուրծս արարեալ, ազատեցոյց վաղվաղակի զկատոն. և յարձակել զատեանն ասէ. «Դատաւորս զձեզ և տնօրէնս օրինացն կացուցի, զի եթէ ինչ ’ի կարգաց անտի չկոյէ ձեզ հաձոյ, չելցէ յատեան ժողովրդեանն. բայց զի չաւելիք դուք յանձն կանխատահմանել ինչ, միայ արդ ժողովրդեան սահ՝ մանել զայն»։

Ցելանել հնարից հաշտութեան ընդ ծերակուտին ’ի դե՝ րև, սկսաւ կեսար վերատին ողոքել զկիլիանակից իւր զՓիլոս՝ ոս յատենի ժողովրդեան, և աղաչել զնա ձեռն տալ առա՝ ջարկութեան իւրում։ Ցաւել և ժողովուրդն թախանձել զնա. այլ նա անողոք կացեալ, զայս ևեթ ասէր. «Թէպէտ և ամենեքեան խնդրէիցէք, ոչ ընկալցիւք զայդ. զի ցորչափ բղեշխ կամ, չթողից նորաձևութեան ինչ մուտ գտանել»[1]։

Ցայնժամ կեսարու կարևոր համարեալ այլ ինչ ապդեցու՝ թիւնս, հրաւէր ետ Պոմպէի և Կրասոսի։ Ցօժարութեամբ պատեհ առեալ Պոմպէի զդէպս խօսելոյ առ ժողովուրդն, ոչ միայն հաւանէր ընդ ապարակային օրինս, այլ և յատելոյր՝ ընդունել լեալ զայն երբեմն ծերակուտին ըստ խակութեանն, և վճիռ իսկ տուեալ ’ի դարձին իւրում ’ի Սպանիոյ՝ բաշ՝ խել զբրաց իւրոց և զբրացն Մեսելլեայ զանդաստանս. և յամեցուցին լեալ գործոյն վասն պակասութեան ևեթ գան՝ ձուն, որ յայնժամ ’ի ձեռն իւր Ճոխացեալ էր։ Եւ ապա պա՝ տասխանի արարեալ կեսարու՝ որ հարցանէրն թէ լցի՞ ձեռն՝ տու օրինացն ’ի յառնել դիմակալութեան, ասէ. «Եթէ ոք յանդգնեսցի տուր շողացուցանել աւից և զաստար». և կա՝ մէր յայտ առնել զդիմել իւր ’ի հրապարակ՝ զինու վառեալ իբր ’ի Ճակատամարտ։ Ա.յս խրոխտ յայտարարութիւն Պոմ՝*

1 Դիոն Կասիոս, ԼԴ. Գ։

պէի օգնականութեամբ Արաստոի և Կեպիոնի [1], լռեցոյց զամենայն հակառակորդս, բայց ՚ի Բիբուլեայ, որ ընդ երիս ամսեայս հանախտէս իւր խմբեաց զծերակոյտն ՚ի տան իւրում, և հաստատեցաւ անդ խորհուրդ՝ յանձն առնուլ զամենայն վտանգ առ ՚ի մերժել յայտնապէս զօրէնսն [2]։

Ի սահմանեալ աւուր ազգաժողովին՝ խռնեցաւ ժողովուրդն գիշերախառն յատեան հրապարակին։ Բիբուլոս գիտեաց զամենայն եկամօք իւրովք ՚ի մեհեանն Կաստորի, ուր իշխանակից նորա առեներգանէր առ ամբոխն. ընդ վայր Ջանացաւ խօսել առ ժողովուրդն. յաստիճանաց անտի ՚ի վայր մղեալ, բռնադատեր ՚ի փախուստ, Թողուլ անդ զխուրձս իւր խորտակեալս, և զերկուս ռամկապետս վիրաւորեալս։ Փորձեաց և Կատոն մօտել ՚ի բեմն. և բռնի ՚ի բաց վտարեալ՝ դարձաւ անդր, այլ փոխանակ Ջառելոյ զինդրոյն, տեսեալ Թէ ոչ ոք ունկն դնէր բանից նորա, բանիւք կշտամբանաց յարձակեցաւ ՚ի Կեսար, մինչև երկրորդ անգամ մերժեցաւ ՚ի բեմէն։ Եւ ՚ի լսել խռովութեանն՝ հաստատութիւն առին օրինքն։ Ի վաղիւ անդր Բիբուլոս առաջարկեաց ծերակուտին խափանել զայս, այլ ոչ ոք գտաւ օգնական նմա. զի յարձակումն ժողովրդեանն նուաճեալ էր զոգիս [3]։ Յայնմ հետէ խորհուրդ կալաւ Բիբուլոս մնինեալ կալ ՚ի տան ընդ ամն ողջոյն բդեշխութեանն Կեսարու։ Եւ յառաջարկել նորա նոր լինչ օրինս յատենի քաղաքացոց, բոլոր ևեթ քառնայր, և ՚ի ձեռն նուիրակաց իւրոց ազդ առնէր Կեսարու՝ Թէ ՚ի գինել կայր զերկինս, և Թէ չէր ըստ օրինի և ոչ մի ՚ի վնաս անտի [4]։ Որով յայտ առնէր զօրինական ձևոյն քաղաքավարական նպատակ։

1 Առեսան. կէսար, ԻԱ։

2 Ապպիան. Պափէրպաղնանք փողփոխանք, Բ. ԺԱ։

3 Դիոն Կասիոս, ԼՀ. Զ։

4 Բդեաշնք, գաղտաւորք, և որք միանգամ գահէրէց նաւէին յատենի ժողովքդեան, կամ որպէս առենակալք անդ գտանէին, իրաւունս ունէին՝ խափան արկանելոյ ըստ նանրահաւատս կրօնիցն ժողովքդեան, յայտ արտաբեալ զի արփայեին ինչ երևոյթ չներէր առնել ինչ։ Զի այսպիսի ինչ օրինք էին կրօնական կամ քաղաքական, հաստատեալ յամին 397. Յամպահարել կամ յանդրնել Արամպէոյ էր օրէն պիրձառնուելոյ խորհուրդ ՚ի ձէջ առնուլ ընդ ժողովրդեան։ Զէին խակ պէտք շանթաձիգ կամ անձրևարեր լինելոյ խնկապէս. բաւէին բանք ուրուք յատենա-

Սակայն ոչ ղևայը կեսար՝ ի գործոյն առ մնապաշտ երկիւղածութեան, որ ոչ ևս էր յուժի, մինչև յաւուրսն յայնոսիկ առնել Կուկրետիոսի քերթուած ինչ յանդուգն ընդդէմ նաև նրահաւատութեան ոամկին. և խոխրջք հմայից՝ ի բազմաց հետէ համարէին մնապաշտութիւն մանկական, երկերիւր և չիսուն ամօք յառաջ զօրավարի ուրուք մեծի՝ զոյց իրին ընծայել յայտնապէս: Քանզի յորժամ Աննիբալ ապաւինեալ առ արքայն Պրուսիաս, յորդորէր զթագաւորն ընդունել զիւր յօրինուած պատերազմի ընդդէմ Հռովմայեցւոց, ՚ի հրաժարել նորա վասն հմայից գոլոյ չարագուշակ, ասէր. «Թող անդր ՚ի բաց, և զի՞ ես քեզ առաւել հաւատս ընծայել ընչեղոյ ևերդի որթոյ, քան փորձոյ զօրավարիս ծերունւոյ»[1]:

Այե այս որպէս և է, սակայն օրէնք էին չխորհել զժողովուրդն յառեան, յորժամ ոք յառնակալաց ՚ի գնին երկնից հմայէր. վասն որոյ կեսար առ ՚ի չքմեղս լինել անպահպանութեան օրինացն՝ առ ՚ի չտալ տեղի ՚ի դերև հանելոյ զգործս իւր, չև եկեալ՚ի պաշտամանէն՝ եհան յառեան ծերակուտին զնդիրն, և եառ հաստատել զայնոսիկ:

Իբրև ընդունելի եղեն օրէնքն ժողովրդեան, կոչեցաւ ծերակոյտն յերդումն ՚ի պահպանութիւն նոցին: Բազումք ՚ի նոցանէ, ընդ որս և Կ. Մեսելլաս Կելեր, Մ. Կատոն և Մ. Փաւոնիոս[2], յայտ արարին չառնուլ զայն յանձն. այլ իբրև եհաս օր երդմանն, ոչ ևս զօրէր բոլոք առ երկիւղի սպառնալեաց պատուհասին ընդդէմ հրաժարողաց, և բաց ՚ի Կատերինեայ երդուան ամենեքեան, և Կատոն ինքնին[3]:

կալաց, որում անկ էր ՚ի գնին երկնից հմայել. (Կիկերոն, Ճառ. ՚ի պաշտ. Աէտոպիոսի, ժԸ. — Ճառ պաշտօնատուց էդէլիոյ, ժԹ: — Ակոնիոս «ի Պիսոն», էջ 9 տպ. Որբլեայ: — Որբլեայ յուշարձ տպագրութեան Կիկերոնի, Ը. 126, Յոպոյ Օբէնոց, յօգ. Ելէան և Փոռիէան օրէնք):

1 Վալերիոս Մաքսիմոս, Գ. է. 6:

2 Պլուտարքոս. ՚ի Կոպոն, ԼԸ:

3 Դիոն Կասիոս, ԼԸ. է: — «Կամպանեան օրէնք հրամայեն ընծայելոց տալ երդումն յառնելի ժողովրդեան՝ չառաջարկելոյ ինչ ընդդէմ Յուլեան օրինաց որ յայնպա տուացուածոց: Ամենեքեան երդուան, բաց ՚ի Կատերինեայ, որ լաւ համարեցաւ հրաժարել յընտրութենէ ՚ի ռամկապետութիւն՝ քան երդնուլ. և մեծապէս ընդդէմ կալան նմա». Կիկերոն, նամականի առ Ատտիկոս, Բ. ԺԸ:

Կեսար զրգռեալ յարդելից սատի, և վատահ ընդ հաւատնումն ժողովրդեան, յաւել նոր օրինս ընդ բաժանելի կալուածս հասարակաց և զերկիրս Կամպանիոյ և Սոելլայ, որ'է բաց թողեալ էին'ի հնումն հերեսաց ծերակուտին[1]։

Ի կատարումն օրինացս հինաւուրց զօրք Պոմպէի ընկալան անդաստանս'ի Կասիլինան Կամպանիոյ[2], 'ի Մինտուրնէ, 'ի Վոլտուրնան, յԱփիդենա՝ Սաննիտացւոց, 'ի Բովիանան, 'ի Կլիբէս, և 'ի Վէյա՝ Ետրուրիոյ. և բնակեցին 'ի կամ պանիա քան հազար զերդաստան, որոց աւելի քան զերիս էին արդէք. որով տան բիւր երկրագործք ազատք լինին զմանն աշխատիլն, և հոսիլ զերծաւ 'ի սինկլիտոս և 'ի խուռվայոյզ ամբոխն։ Կապուա եղև գաղթական հոմէական, որով հաստատեալ վերստին ռամկապետական ձեռակերտ Մարիոսի, զոր կործանեալ էր Սիլլայ։ Թուի և Կիմոտինեան անդաստա նաց Սիկիլիոյ ընդ ազատական օրինօք անկեալ[4]։

1 Որ ինչ մարթ է ինձ խնամատարել'ի բանից Դիոնի Կասիոսի, ԼԸ. Ա։ Ոչ սակաւք 'ի հմուտգունից մատենագրաց չհամարին երկուս լեալ ագարակային օրէնս. այլ Կիկերոն 'ի Թուղթս իւր առ Ատտիկոս (Բ. Է) 'ի գրեալս յատկին՝ ծանուցանէ կարգեալ քան գործակալս։ Յառաջին օրէնս (Ընդանէիան Ռոգի, ԺԳ. Դ) յիշատակէ զերկիրն Վոլատերրոյ, որ յայս խակ է զի չէ 'ի Կամպանիա։ Յայլում Թղթի գրեալ'ի սկիզբն մայիսի (Նամականի առ Ատտիկոս, Բ. ԺԶ) առաջին անգամ խօսի զԿամպանիոյ, և ասէ ընկալեալ Պոմպէի զառաջին ագարակային օրէնս։ Եւ 'ի գրեցեալսն յամենեան յունիսի (Նամականի առ Ատտիկոս, Բ. ԺԸ) խօսի զերդմանէն վասն ագարակային օրինաց։ Սուետոնիոս (Կեսար, Ի) և Ապպիանոս (Քաղաքական պատերազմունք, Բ. ժ) յիշատակեն յորնակի զՅուլեան օրէնս։ Յորնակի խօսի և Տիտոս Լիւիոս (Հատընտիր գրոց ԾԹ) զագարակային օրինաց կեսարու, և Պլուտարքոս ('ի Կոպոն, ԼՀ) յայտնապէս ասէ. «Խրոխտացեալ կեսարու յաղթութեամբն, առաջարկեաց և այլ օրէնս բաժանելոյ 'ի ջքաւոր և յաղքատ քաղաքացիս զանգատանս Կամպանիոյ գրեթէ զամենայն». և յառաջ քան զայն, 'ի գլուխն ԼԶ, ասէ առաջարկեալ կեսարու օրէնս բաժանելոյ անդաստանս յաղքատանէն։ Ուրեմն կրկին առաւ օրէնք 'ի սակաւ ամի՝ս. և եթէ երկրորդն էր վասն բաժանելոյ զերկիրն Կամպանիոյ, ապա առաջինն հաստատութեամբ ամր մանէր։ Դիոն Կասիոս յետ պատմելոյ զառաջարկութենէն առաջնոյ ագարակային օրէնս՝ ուստի 'ի բաց առեալ էր Կամպանիա, յաւելու նոյնպէս. «Դարձեալ և երկիրն Կամպանիոյ առաւ՝ որոց էին երկք կամ աւելի որդիք». (ԼՀ. է)։

2 Կիկերոն, Եդիտէտ Փիլիպպեան, ԺԵ։

3 Մոպէան գաղթականաց, տպ. Լահմանն, էջ 220, 235, 239, 259, 260։ — Բազումք 'ի գաղթականաց ասեն էնոքա երկցապոյնք ժամանակաւ քան զկշխանապետութենն կեսարու։

4 Կիկերոն, Եդիտէտ Փիլիպպեան, ԼԹ։

*կարգեցին ապա գործակալս քան արդարակորովս, յա-
րանց՝ որոց բդեաշխս երբեմն կացեալ էր[1]. ընդ որս և զԿ. կա-
նխոս, և զԱտիոս Բալբոս՝ քեռայրը Կեսարու: Իսկ Կլոդիոս
չկարաց մնանել՚ի Թիւ տոցա[2]. և Կիկերոն յետ մահուն կա-
նեայ հրաւիրեալ՝ հրաժարեաց՚ի յաջորդելոյ նմին[3]. և՚ի
Թուղթս իւր առ Ատտիկոս պարսաւէ մանաւանդ զբաժանումն
երկրին Կապուայ, զի զերկեր այնուիկ Հասարակապետութեանն
՚ի կարևոր հասից. և յաւելու Թէ զինչ այլ միասցէ պետու-
Թեան, բայց քանտրդ ազատագրելոց գերեաց. քանզի և
բաժք անցից վաղ իսկ Թողեալ էին ընդ Իտալիա ողջոյն: Ա.յլ
երաւանքք արդեօք առարկէին և այլք՝ գերծեալ զպետու-
Թիւնն՚ի ծանր հարկէ բաշխելոյ աղքատանւոյն Հռովմայ
ցորեան:*

*Եւ սակայն բաժանումն անդաստանացն Կամպանիոյ և
Սաբելլայ անագանէր ոչ սակաւ. և յամին 703 չև էր աւար-
տեալ, զի յայնժամ խորհուրդ տային Պոմպէի փութացուցանել
զբաժանումն միացելոցն, զի մի կեսար՚ի դարձին իւրում՚ի
կելտաց՝ ժառանգեսցէ զպարծանսն[4]:*

Գ. Ա.յլ և այլ օրինադրութիւնք կեսարու:

*Յանգեալ ամին կատոն, որպէս ասացաք, չեաւ նեբրել հար-
կահանաց Ասիոյ զնուազումն վարձուց: Խստութեամբ այսուիկ
օտարացուցեալ էր ծերակուտին յինքենէ զկարգ ասպետաց,
որոց տրտունջ չէր լինչ անպատձառ: Եւ արդարև վարձք
անդաստանացն Ասիոյ ծանունք էին յաւուրս պատերազմին
Միհրդատայ, որպէս յայտ է՚ի Ճառից Կիկերոնի զՄանիլեան
օրինաց, և Թուէր իրաւացի ընդհատել զմանն լինչ հասից պե-
տութեան: Բդեաշխս կացեալ Կեսարու՝ արդարասէր մեօք և
խորագէտ քաղաքավարութեամբ փութացաւ առաջարկել*

1 Դիոն Կասսիոս, ԼՀ. Ա: — Կիկերոն, Նամականի առ Ատտիկոս, Բ. ԺԹ:
2 Կիկերոն, Նամականի առ Ատտիկոս, Բ. Է:
3 Ճառ պետասոյ Բպելխիոյ, ԺԷ:
4 Կիկերոն, Ընտանեկան նամակք, Ը. Ժ:

օրէնս ՚ի թեթեւաբեռնութիւն հարկահանաց յերկիր մտանէ պատուոյն[1]։ Ծերակուտին նախ առաջի արար զայն. և ՚ի չկա՜ մել առեւնին տալ վճիռ, տախտեցաւ կեսար հանել զինդիրն յատեան ժողովրդեան[2], որ և ընկալաւ զայն։ Աւատաձեռնու՜ թիւնս այս ՚ի վեր քան զակնկալութիւն հարկահանացն՝ ելից զնոսա խնդութեամբ, և յանկոյց ՚ի բարերարն իւրեանց. իսկ նա խրատ ետ նոցա լու ՚ի լու առնեցուն խոհականագոյնս վարել առ յաւպայս, և մի անզգուշաբար յաւելուլ զսակ ՚ի ժա՜ մանակի տահմանելոյ հարկաց[3]։

Աչառակալին օրէնք և օրէնքս այս հասոյց կալուածոց՝ էին ՚ի շահ մեծ զաւակագործաց, հինաւուրց զօրականին և առա՜ տայ. ոչ թեթև ինչ էր իրաւունս առնել և արդարոյն քաղա՜ քանացն Պոմպէի, որով ընկալաւ կեսար ՚ի ժողովրդենէ և զվե՜ ճիս հաստատութեան առնային գործոց նորա[4]։ *Ընդ որեւիմ հակառակորդս խոտնդոյս լեալ էր ցայնժամ Լուկուլլոս, զի չկարէր նա մոռանալ զյափշտակել Պոմպէի զիւրաս իւր. այլ այնչափ մեծ էր ահ երկիւղին ամբաստանելոյ ՚ի հարստահա՜ րութիւն, զի անկեալ նորա առ ոտս կեսարու՝ հրաժարէր յա՜ ռնային հակառակութենէ*[5]։

Ժրութիւն բդեշխիս ոչ ամիսուիէր յաւուրն բարեկարգու՜ թիւնս միայն, այլ տարածանէր և ՚ի խնդիրս արտաքինս։ Ան՜ հաստատ էին իրք Եգիպտոսի. զի արքայն Պտղոմէոս Աւլետ՝ հարձորդի Պտղոմեայ Լաթիրայ՝ խնթայր թէ գուցէ կեղծ կտակաւ Պտղոմեայ Ալեքսանդրի, յորոյ անկումն ՚ի գահոյից ձեռն տուեալ էր և ինքն, յաւելցի թագաւորութիւն իւր ՚ի պետութիւնն Հռովմէական[6]։ *Տեսեալ նորա զի յերերի կայր*

1 Ապպիանոս, Քաղաքական պատերազմներ, Բ. ԺԴ։ — Պարապմունք Բոլբիոսի Ի վերայ ճառին Կիկերոնի վասն Պլանկիոսի. էջ 261, տպ. Ոքսֆորդեայ։

2 Կիկերոն, վասն Պլանկիոսի, ԺԴ։

3 Կիկերոն, Նամականի առ Աթտիկոս, Բ. Ե։ — Սուետոնիոս, Կեսար, Ի։

4 Սուետոն. Կեսար, Ի։ — Դիոն Կասսիոս, ԼԸ. Է։ — Ապպիանոս, Բ. ԺԴ։

5 Սուետոն. Կեսար, Ի։

6 Կիկերոն, Երէմրէտ ճառ ընդդէմ ագարակային օրինաց, ԺԶ։ — Պարապմունք Բոլբիոսի Ի վերայ ճառին Կիկերոնի «՚ի Թագաւորն Ալեքսանդրացւոց». էջ 350, տպ. Ոքսֆորդեայ։ Պտղոմէոս այս Ալեքսաս կամ Ալեքսանդր՝ Թոռն լինէր հարձորդի Ալեքսանդրի Ա. կրտսերոյ եղբօր Պտղոմեայ Լաթիրայ, որ կոչի և Սոտեր Բ։

իշխանութիւն իւր Յունբաստրիա, խնդրեալ էր օգնակա-
նութիւն ի Պոմպէոսէ՝ մինչ պատերազմէր նա ի Հրէաստան,
յղեալ առ նա պատարագս և ալծաթ բազում՝ պատսպա-
րան լինել իրաւանց իւրոց յատենի ծերակուտին[1]: Պաշտպան
եկաց նմա Պոմպէոս, և կեսար՝ առ քաղաքավարութեան կամ
հաճոյ լինելոց փեսային իւրոյ՝ եւս հրատարակէ զՊտղոմէոս
Աւլետ բարեկամ և դաշնակից Հռովմայ[2]: Ի խնդրոյ նորին, նոյն
ընդհ եղև և Արիովիստոս թագաւորին Գերմանացւոց, որ յետ
պատերազմին ընդ Եղուացիս՝ մեկնեալ էր ի տահմանաց նո-
ցա յահնարկութիւն ծերակուտին, և տեղեայր դաշնակից լի-
նել Հռովմայեցւոց: Էր իսկ ի շահ մեծ Հատարակապետու-
թեան ողջոյն գնալ ընդ Գերմանացիս, և հեռի առնել զնոսա
յայնկոյս Հռենոսի. որպէսի ինչ և այլ կանխատես խորհուրդք
լեալ էին հանդերձելոց զօրավարութեան բղեշխին ի Կելտս:
Ապար ապա և բարեշնորհութիւնս ազատ քաղաքաց ունոյց,
և լցոյց զփառասիրութիւն բազմաց. «քանզի, ըստ Սուետոնիո-
սի, շնորհեր որ ինչ միանգամ խնդրեր՝ որ ի նմանէ, ոչ ու-
րուք իշխեալ հակառակել նմին. և եթէ փորձեր որ, գիտեր
նա ահարկու լինել նմին»[3]:

Ա՛ի յերկայնոյն խնամոց բղեշխին պարտ էր դալ զընտրու-
թեանն հատատարիմ ռամկապետաց, զի նոցա էր անկ տուրա-
բար ընդունել առնել ժողովրդեան զօրինս:

Ցընծայելոց անտի մի էր և Կլոդիոս՝ որում մարթէր պի-
տանի յոյժ լինել նմա, ունելով շնորհս առաջի ժողովրդեան.

Վասն որոյ ըստ անհարազատ ծննդեանն էր հօրեղբօրորդի Պտղոմեայ Աւլեայ, և յաջորդեալ էր Աւլեքսանդրի Բ՝ որդւոյ Աւլեքսանդրի Ա, որ հարանացոյցն ինքեան զղեցանէ իւր զԲերենիկէ, զմիոյն դուստր օրինաւոր Սոտերայ Բ:

1 Կիկերոն, Նամականի առ Աթտիկոս, Բ. ԺԶ: — Թագաւորն Եգիպտացւոց պարգեւաց կեսարու և Պոմպէի քանքարս արծաթոյ իւր 6,000 (35 միլիոն Ֆր.). (Սուետոնիոս, կեսար, ԾԴ):

2 Սուետոնիոս, կեսար, ԾԴ: — Դիոն Կասիոս. ԼԹ. ԺՒ: — Զոր տակն կեսար (պապերազմ Աւլէքսանդրիոյ, ԼԴ. Ե Բաղափական պապերազմ, Գ. ձէ), հատատէ զբարեկամութիւնն Պտղոմեայ Աւլետի ընդ Հռովմայեցիս:

3 կեսար, պապերազմ կելտաց: Ա. Լե: — Պլուտարքոս. ի կեսար, ԻԱ: — Դիոն Կասիոս, ԼՐ. ԼԴ:

4 Սուետոն. կեսար, Ի:

այլ զի աչխատասիրեմ էր այրն, չէր օրէն ընտրել զնա՝ եթէ ոչ որպէսզի թաւալեսցէ անցանէր՝ ի մի՝ ի ցեղէց ասելիին, զոր՝ ի ձեռն օրինաց ինչ միայն կարէր առնել։ Երկմտեր Աբեսար մատուցանել զնա յընտրութիւն. զի թէպէտ և այնուիկ յինքն զնա յանկուցանէր, սակայն պիտեր զվճիժ ընդրութիւն նորա ընդդէմ Աիկերոնի, և չիամեր տալ՝ ի ձեռս նորա իշխանութիւն՝ որով զեղծանելն կարէր։ Ա.յլ իբրև յանեաւն մատուի՝ ի դատաստանել Կ. Անտոնիոսի վասն անարժան գնացից՝ ի Մակեդոնիա, Աիկերոնի ջատագով երթեալ իւրոյ իշխանակցին կացեալ, իշխեաց ուժգինս թիշտանանել զայնոսիկ՝ յորս՝ ի ձեռս էր յայնժամ պետութիւն, ՝ի նոսին աւուր ընդունելի եղև Կլոդիոս ՝ի կարգս ասելիոց[1], և վաղ ընդ վոյթ սահմանեցաւ ընդ Վատինիոսի ՝ի ռամկապետութիւն[2]։ Էր ընդ նոսա և երրորդ ոմն ռամկապետ՝ որոյ անծանօթ է անուն, այլ զինքն և Հաւատարմութիւն շահեալ էր ըզեղեկին[3]։

Ա.յսպէս Աբեսար, ըստ վկայելոյ նորին իսկ Աիկերոնի, հզօրագոյն էր անդստին ինքն միայնակ՝ քան զՀատարակապետութիւնն[4]։ Ակտց ամենակալիք, այլոց ահարկու, և ամենեցուն տէր անհրաժեշտ։ Հրաժեշտ Բիբուլեայ ջարտր այլ ինչ, բայց զօրացուցանել զնշխանութիւն Աբեսարու[5]. մինչև ասել Հռոմայեցոց ընդ խաղ թէ զՅուլեայ և զԿայիոսի Աբեսարու միայն դիտեմք զօրեղութիւն, այսու օրինակաւ զի ոք յերկուս անձինս բաժանեալ. և յեղեղէին սակս զտողս զայսոսիկ.

1 Պլուտարքոս. ՝ի Կոպոն, ԼՀ։ — «Ջվեցերորդ ժամու յատենաբանել խնդրեմ վասն Կ. Անտոնիոսի իշխանակցի իմոյ, բողոք կալայ վասն զեղծմանց ինչ՝ որ զօրանային ՝ի Հատարակապետութեան, և որ ոչն Թուէին օտար ՝ի գաւակ հնչի իմոնէ ասին։ Ջարհուրմք ոմանք ածին զբանս իմ այլ ընդ այլոց յունկն ոմանց աւագամեծար արանց, և ՝ի նոսին աւուր չինեբորդ ժամու որդեգրութիւն կլոդեայ ընդունելի եղև քաւէիւք». Կիկերոն, Ճառ վասն պան խարոյ, ԺԶ։

2 Ապպիանոս, Քաղաք. պոպերոպմ. Բ. ԺԴ։ — Դիոն Կասսիոս, ԼՀ. ԺԲ։ — Պլուտարքոս. ՝ի Պոմպէոս, Ծ. — ՝ի Կիկերոն, ԼԹ։

3 Կիկերոն, Վասն Սեխոպեայ, Ա. ձ։

4 Կիկերոն՝ խօսելով առ Աոսիկոս զառաջնոյ բպեշխութենէ Աբեսարու, ասէ. «Թէպէտ և անզօր յայնժամ, սակայն հզօրագոյն էր քան զբնաւ Հատարակապետութենն». Նմանապէս առ Աթտիկոս, Է. Թ։

5 «Կարծէր Բիբուլոս կասկածաւոր առնել զԱբեսար, այլ հզօրագոյն ևս արար զնա». Վ.ելլ. Պատերկ. Բ. ԽԴ։

«Ոչ առ Բիբուլեաւ դիպեալ նոր ինչ դէպ, այլ առ Կեսարիւ. Ոչ՝ ի հիւպատոսէ Բիբուլեայ լեալ ինչ անկանի ինձ յուշ»[1]։

Եւ զի յորժամ սիրելութիւն ժողովրդեան յայտնապէս բեր[ի] յոք՝ հրաշալիս կարծէ առեանել յամենայն ինչ որ անձին նո[ր] բա պատկանի, բարեզուշակ համարէր խուժանն՝ ի տարօրինակ ծնունդ առպաստանիկ երիվարի միոյ նորա երկձիղ սմբակաւ՝ ի ձև մատանոյ։ Կեսար եւեթ կարծեաց սանձակոծել զզարմանեսն երիվար, զորոյ հլութիւն գուշակ ասէին լինել ոտ[ի] բակալութեան նորա[2]։

Յաւուրս առաջին զբօսիկութեան իւրոյ հրատարակեաց Կեսար բազում ինչ օրէնս, յորոց յոլովագոյնք չհասին առ մեզ։ Սակայն կարևորագունից յայնցանէ պահին նշխարք ցանկալիք, յորոց սակի են՝ ի չափաւորութիւն նախամանուց[ի] թեանց քրմացն կարգեալք։ Տեսաք՝ ի վեր անդր՝ զի առաջին պետն Լաբիենոս վանն ամբառնալոյ զկեսար՝ ի պատիւ քրմապետութեան, զարձոյց յեօթնևտասան ցեղս վիճակաւ զկրաւնս ընտրութեան։ Թէպէտ և օրէնքս այս թուէր տալ ազատութիւն և հեռաւորաց հետամուտ լինելոյ քրմապետութեան, սակայն ժողովուրդն և քուրմք ընդդէմ գտանային՝ ո[ր]ոց ոչ եկեալ անձամբ՝ ի մօտոյ հետամուտ լինէին իշխանութեանն. ուստի յաձախին գժտութիւնք և աղմուկք. յորոց՝ ի խափանումն հաստատեաց կեսար զվէիոս Լաբիենոսն, ընդունելի ծանուցեալ յընծայումն քրմապետութեան ոչ միայն զընծայեալն՝ որ մերձ կայցեն, այլ և որ հեռիք[3]։

1 Սուետոն. կէսար, Ի։

2 Հեծանէր կեսար՝ ի նժոյգն նշանաւոր՝ որոյ կարճք նմանութիւն ինն ունէին ոտից մարդկայնոց և սմբակք բաշխեալք մատանձև։ Դարմանեալ էր նորա խնամալ զերիվարն ընդոծին, զի հաւատիւք խոստանոյին տէառն նորա զտիեզերակալութիւն։ Ոչ ուրուք կարացեալ հեծանել՝ ի ձին, կեսար միայն սանձակոծէր զինա. որոյ ապա և անդրի հանդէպ մեհենին Ասղկան Ծնօսցւոյ կանգնեաց. (Սուետոնիոս. կէսար, ԿԱ)։

3 «Ոչ անտեղի Թուի ինձ՝ զնրաւոնս նուիրելոց՝ ի հետս՝ ի քրմութիւն քննել յատենի ժողովրդեան, զի և յառաջադոյն գիտեմք եղեալ այսպէս։ Կ· Մաբնոս գոլով՝ ի Կապադովկիա՝ ետս հմայել ըստ Վոռիտեան օրինաց, և ոչ մի ինչ օրինք յետս այնմանիկ արդիւնն զայն. զի և՝ ի վերջին Յուլեան օրէնս յաղագս քահանայութեան, ասէ. «Որ՝ ի խնդիր լինի, կամ որոյ իրաւունք առնուն՝ ի քննին»։ Դիկերոն, Համախոհք առ Բրութոս, Ա· Ե։

Յետ այնորիկ պարապէր Կեսար ՚ի լինաման գաւառաց, ընդ որոց աղէտս կարեկցէր միշտ: Օրինաց սահմանելոյ ՚ի բարեկարգութիւն կուսակալութեանց չնք ստոյգ Թուականութիւն, և բերեն գնոյն վերնագիրն՝ որ ինչ սահմանեալքն ՚ի Սիլլայ, որոց նմանին իսկ բազմօք: Օրէնքս այսոքիկ պահպանէին զբնաւկիչս գաւառաց յերեսաց բռնութեան, ինքնահաճոյ հրամանաց և կաշառակրծութեան փոխանակաց բռնելոյ և կուսակալել, և սահմանէին զչափ հարկաց՝ որ անկ էին նոցա [1]: Այլ կացուցանէին զազատ քաղաքանին յիշխանութենէ կուսակալ՝ ներելոյ նոցա իւրեանց օրինօքն և առենակալօք վարել [2]: Ցայն և Կիկերոն կարեւոր համարէր յերաշխաւորութիւն ազատութեան գաւառաց [3]. քանզի յատենաբանութեան իւրում ընդդէմ Պիսոնի՝ պարսաւէ զյանցանել նորա ընդդէմ օրինացս՝ խառնելով զազատ ժողովուրդս ընդ կուսակալութեան իւրում Մակեդոնիոյ [4]: Դարձեալ և պատուէրք առանձինն էին ՚ի նմա ՚ի համար հասից և ծախուց կուսակալութեան, պահանջել ՚ի կուսակալացս յերեսուն աւուրս յելից նոցա ՚ի պաշտամանէ՝ զհամար մնտեսութեան և զամենայն ծախուց իւրեանց, տալով երիս օրինակս ՚ի պահեստ. զմին ՚ի գանձ տէրութեան ՚ի Հռոմ, և զայլ երկուս ՚ի գլխաւոր քաղաքս գաւառին [5]: Իշխանութիւն փոխանակաց կուսակալն էր

1 Կիկերոն, ճառ ընդդէմ Պիսոնի, Լէ:

2 Կիկերոն, ճառ պետասոաց էպէլիէից, Դ. — ճառ ընդդէմ Պիսոնի, ԺԶ:

3 Կիկերոն, ճառ ընդդէմ Պիսոնի, ԺԶ. — Համեմատ առ Ափփիոս, Ե. Ժ, ԺԶ, ԻԱ. — Առաջին Փիլիպպեան, Ը:

4 «Ընկալար դու (Պիսոն) զպատասս բռնչխութեան առանց այլ ինչ սահմանի քան զյափշտակ զօշաքաղութեան քո, յարհամարհանս օրինաց փետային. ուր այգպար և փրկաւէտս օրինօք կեսարու ազգք ազատք վայելեն ՚ի լուսլի և յանխափ ազատութեան». Կիկերոն, ճառ ընդդէմ Պիսոնի, ԺԶ:

5 Կիկերոն, ճառ ընդդէմ Պիսոնի, ԻԸ. — Ընդանէիան Նոսպիփ, Բ. ԺԷ. — Համեմատ առ Ափփիոս, Զ. Է: «Յաւելից ալ ևթէ տակաւին յուժկ կայնն վաղեմի եռանդնք և սովորոյթ, չտայլ համար առանց խորհրդակցելոյ և լսոյ միւսոյն մեծիմ կցորդութեան միաբան սահմանելոյ: Զոր ինչ լսոյ վաղնջուց սովորութեան առնել էր ՚ի Հռոմ, հարկ եղև ինձ ընդ Յունէան օրինօք առնել ՚ի գաւառս. առանձինն զհամարտակիր, և առանձ զհաւատարս ևեթ նոցին ՚ի գանձատունն:.... Հարկ ՚ի վերոյ կոյր կառարել զպատուէր օրինացն: Ասանդեցան ՚ի քաղաքս երկուս համարտակիրք հատուցեալք և համեմատեալք՝ որպէս պարտն

*տարևոր, իսկ փոխանակաց բդեշխի երկեամ՚ի մարզպետու-
Թեան[1]։*

Ընդ երկոքումբք ծանր բեռամբք արկանէին զօրավարք զգաւառս, որոց հրամայէին. պատճառանօք յաղթանակի պահանջէին պահս ոսկիս ծանրագինս, և զծախս իւրեանց և զզօրացն առնէին՚ի գաւառաց՝ ընդ որս անցանէին։ Վեսար աւ՚ի խափանել զանկարգութիւնս զայսոսիկ, արգել փոխանակաց բդեշխի մի պահանջել զտուրս պահակի՝ մինչեւ սահմանեալ յաղթանակին[2]. և եղ օրէնս խիստս վասն պարենից՝ զորս պարտ էր նոցա մատակարարել[3]։ Քանի կարևորք էին պատուէրք օրինացս՝ ի միտ առնուլ է՚ի վկայելոյ նորին խակ Վեսարեայ, որոյ անտեսութիւն իրաւամբք համարէր արդար, զի յետ ութից ամաց Յուլեան օրինաց, ժողովեալ էր նորա արծաթ բազում յոյժ՚ի կուսակալութենէն Կիլիկիոյ[4]։

Նոյն օրէնք արգելուին մի ումեք՚ի կուսակալաց անհրաժան՚ի ձերակուսէն ելանել ըստ գաւառն, կամ հանել զզօրս իւր, մի լինել միջամուխ յիրս դրացեաց[5], և մի արծաթ՚ի գաւառականաց պահանջել[6]։

էր, և ընտրեցեալ ըստ բանի օրինաց զերկուս՚ի հնչակաւորացն՝ զԱւոդիկէ և զՆպամէա։... Եկից արդ՚ի յօգուտ պարգևաց. և դիտա զի չէ իմ անդ բովանդակեալ՝ բայց զհազարապետս զօրաց, զոստիկանս և զպաշտօնեայս պալատին իմոյ։ Սխալեցի խակ, զի համարէի ունել ժամանակ ընդ երկար, այլ ապա գիտացի զի յերեսուն աւուրս պարտ էր տալ ըստ կարգի զՀամար։... Ըստ բազդի էզև ինձ կառարել որ ինչ՚ի հարիւրապետս հայի և՚ի բնակիչս հազարապետաց զօրուն· քանզի օրէնք լուեն՚ի տպատ գլեառնոցս»· Կիկերոն, Ընտանեկան Նոաղիթ, Ե· Ի)։

1 Տիմն Կառսիոս, Խգ· Իե։

2 «Լռեցից զոսկի պահակին, վասն որոյ՚ի բազմաց հետէ տագնապս՚ի վրան Թէ արժանի էցէ քեզ խնդրել զայն Թէ ոչ· քանզի օրէնք փեսայիդ արգելուն և զտան և զընդունելն՝ մինչեւ սահմանեալ յաղթանակին»· Կիկերոն, ձառ ընդդէմ Պիսոնի, Լէ։

3 Կիկերոն, ձառ ընդդէմ Պիսոնի, Լէ· — Նմանի առ Ասփիոս, Ե· ժ, ժԶ։

4 «Միա դիր, ազաչեմ. Թողի յԵփեսոս՚ի ձեռս մուքսաւորաց գումար մի արծաթոյ՝ զիմ օրինաւոր առացուածս՝ 2200 բիւր սեսաերա, զորս Պոմպէի յափշտակեալ է զամենայն։ Եթէ բարւոք գործեցի կամ չարւոք, չէ ինձ փոյթ»· Կիկերոն, Ընտանեկան Նոաղիթ, Ե· Ի։

5 Կիկերոն, ձառ ընդդէմ Պիսոնի, ԻԱ։

6 Կիկերոն, ձառ պաշտօնէից Բդեշխի, Բ, Գ, Դ։

Զսէր դնէին և ազատ հրեշտակութեանց։ Ա. յապէս կոչէին նուիրակութիւնք աւետեակաբաց, որք վասն գործոց իւրեանց Հանապարհ առնելով ընդ գաւառս, պիտակաբար առնուին զանուն պատգամաւորի ժողովրդեան Հռովմայ, առ՝ի զերծանել յամենայն ծախուց և՝ ի վարձուց Հանապարհին։ Նուիրակութիւնքս այսոքիկ տևեալ անպայման՝ տային պատՀառս զրոյց անդադար[1]։ Ակիերոնի՝ ի մի ամ ամիսս տևեալ էր զայն. Կեսար և ևս կարճեաց զայն, որչափն՝ անծանօթ[2]։

Նոր՝ի լրումն այս ամենայն զգուշութեանց յաւել և ընդդէմ զօշաքաղութեան տրոց օրէնս, որ շինութին յաձախ ընդ առՀմանեալն՝ի բարեկարգութիւն գաւառաց, զորոց գովէ Ակիերոն զկատարելութիւն և զարդարութիւն[3]։ Բազում դլուխք էին օրինացն՝ի միում ուրեք՝ի Թղթոց Կելիոսի և խոդիսը ինչ զմեծն դլոյ[4]։ Եւ էին առՀմանեալ առ՝ի խափանել զամենայն դէպս Հարստահարութեանց՝ի առՀմանս Հռովմայ և արտաքոյ Իտալիոյ. և մարթ էր տուժելոց պահանջել իրաւամբք զանիրաւս տոյժս իւրեանց։ Թէպէտ և դլխաւոր պատուէրք նոցին՝ յօրինաց անտի Սիլլայ էին առեալ, սակայն իրաւացն և այս էր առ պատուհաս, և քննութիւն գատին երագա-

1 «Ոչ ինչ առաւել ամօթապարտ, քան առեղակալն գնալ նուիրակութեամբ առանց ինչ պատգամաւորութեան յերեսաց Հասարակապետութեան։ Բառնայի արդեօք՝ի միջ՝ յաւուրս բռնչխութեան իմոյ՝ զոյսպիսի նուիրակութիւն, և Հաւանութեամբ ծերակուտին, որչափ և օգտակար Թուեցեալ նմա, եթէ անխորհուրդ դիմակալութիւն միոյ՝ի ռամկապետաց չէր խափանեալ զոյն։ Սակայն գէթ զչափ ժամանակին, որ անսահման էր, ամիսս եցի՝ի միասի» Կիկերոն, Վասն օրինաց, Գ. Ը։

2 «Թուի ինձ սահմանեալ Ցուլեան օրինաց զչափ ժամանակի ազատ նուիրակութեանց, և գործ գժուարին յաւելուլ զոյն»։ Կիկերոն, Նամականի առ Ատտիկոս, ԺԵ. ԺԱ։ — Որբլլի, Յաղագ օրինաց, էջ 192։

3 Կիկերոն, Ճառ Ջան Սէֆոփոսի, ԿԴ։ — «Բարձաւ ազատութիւն յաղգաց և Հիւրաքանչիւրոց՝ որոց շնորհեալն էր, և որոց իրաւունք՝ի ձեռն Ցուլեան օրինաց զգուշացեալ էին յամենայն զրկանաց»։ Կիկեր. Ճառ ընդդէմ Պիսոնի, ԼԷ. ԺՉ։

4 Կիկերոն, Ընտանեկան նամակք, Ը. Ը։ Ցոլովք՝ի գլխոց առաջի պահին՝ի Յոսեփեանս օրէնս, գիրք ԽԸ, վերնագիր ԺԱ։ — Հատուածք դրոշմեալք՝ի ասխտակ պղնձի, որ պահի՝ի Թանգարանին Փլորենտիոյ, համարին առ Հասարակ առեալ՝ի նոյն օրինաց։ Հրատարակեաց զայնոսիկ Մաֆֆէի (Թանգարան Վէրոնայ, էջ ճԿԵ. Թիւ 4), և մեծանուն Մարինի մեկնաբանեաց՝ի մատենագրութեան իւրում զկիւշատակարանաց Արուալեան եղբարց. (Հա. Ա. էջ 39, 40. Թիւ 44)։

գոյն։ Եւ՝ ի գնալ փարթամացոյ նախ քան զդատն ինքնակամ վտարանդի՝ առ՝ ի նոյա տալ՝ ի պատժոց, տահմանէին օրէնք՝ ի գանձս աշխարհին գրաւել զինչս նոցա լատ մասին կամ քառասակ, լատ ԾանդուԹեան յանցանացն[1]։ Եթէ գոյք պարտաւորին էին քառական՝ ի հատուցումն տուգանաց, յոյզ և խնդիր լինէր կցորդելոց՝ ի յանցանս նոցա, և՝ ի միասին տուժէին[2]։ Համառօտ ասել. զջաքաղուԹիւն տրոց իւ և է օրինակաւ՝ ի նեղլեալ սպրդեալ՝ պատժէր[3], և օրէնք հակէին ևս և պատշաճից

1 Ումեմն. կէսաբ, խբ։

2 Կիկերոն, ճառ վասն Հռաբիրիոյ Պոսթումիոսի, Դ. ե։

3 Հատուկտիկք Յուլիան օրինաց ԶգջափաղուԹենէ տրոց՝ ի Յոսթինէան օրէնս, գիրք ԽԸ, վերնագիր ԺԱ.

«Օրէնքս այս են ընդդէմ այնոցիկ՝ որոց առեալ զառնակալուԹիւն կամ զպատգամաւորուԹիւն կամ զոր և է իշխանուԹիւն, և կամ արբանեկելով այնպիսեաց՝ առնուն արծաԹ։

Օրէն է նոցա ընդունել զոր և է գումար յազգականաց, ի մերձաւոր արեանառուսց, և ի կանանց իւրեանց։

Պատուհասին յօրինաց ասաի՝ որ առնուն արծաԹ՝ վասն տալոյ զկարծիս իւրեանց՝ ի ծերակուտին կամ՝ ի հասարակաց խորհրդեան. — վասն կատարելոյ զպարտս իւրեանց կամ Թերանալոյ յայնց. — վասն հրաժարելոյ՝ ի հասարակաց օրինաց, կամ անցանելոյ զնովաւ. — վասն դատելոյ կամ չդատելոյ զեղեան և զզջաքաղուԹիւն. — վասն դատաստարտելոյ կամ արձակելոյ. — վասն հատուցանելոյ ինչ ուանք կամ պահանջելոյ յուանքէ ինչ, զորմէ եցէ վէճ. — վասն տալոյ դատաւոր կամ խրատարար, փոխելոյ զինս, պատուիրելոյ նմա դատել, կամ չպատուիրելոյ, կամ չփոխելոյ զինս, կամ արգելլոյ չդատել. — վասն բանտարգել առնելոյ զոք, ՚ի կապանս արկանելոյ կամ արձակելոյ ՚ի կապանաց. — վասն լինելոյ կամ չլինելոյ ամբաստան զուանքէ. — վասն յառաջ բերելոյ վկայուԹիւն ինչ կամ խափանելոյ. — վասն յայտ առնելոյ խրև ընկալեալ զգործ ինչ հասարակաց՝ որ չև ևս եցէ կատարեալ. — վասն ընդունելոյ ցորեան ՚ի պէտս հասարակաց, առանց ապահովելոյ զլուսուԹենէն. — վասն յանձն առնելոյ զպահպանուԹիւն հասարակաց չինուածոց, առանց հաւաստեաց գոլոյ այնոցիկ անԹերի. — վասն ՚ի չինուորուԹիւն զոք գրելոյ և կամ արձակելոյ ՚ի չինուորուԹենէ։

Որ ինչ առեալ եցէ փոխանակի ուանք բռնչիկ կամ կուսակալի հակառակ օրինացս, չէ օրէն նախապրաւուԹեամբ առանալ։

Վաճառուն կամ առնուս ՚ի վարձու՝ առուին կամ բարձր քան զարժանն գնով՝ վասն նախապրաւուԹեան ՚ի ձեռն այլոյ ուրուք, ոչինչ զօրէր։

Պարտ է առնեակալաց զգոյշ լինել յամենայն զջաքաղուԹենէ, և չընդունել ՚ի պարգեւ մասին առաւել քան զհարիւր դրամ ոսկի ՚ի տարւոջ։

Մարթ էր և ընդդէմ ժառանգաց ամբաստանելոյն դատ վարել, բայց ցառիւ մի յետ մահու նորա։

*պաշտոն և իրաւախոհութեան։ Նշանաւոր է՝ ի նոսա յօդուածն ազգեալական չընդունելոյ զործ ինչ Թերի՝ իբր աւարտեալ։ յո-
ւսմ ակնարկէր արդեօք Կեսար չընդունայն Ճիդն իւր ընդ-
դէմ Կատուլեայ վասն Թերի Թողլոյ նորա զնախիտոլեանն մե-
հեան Ս.րամազդայ։*

*Մարթ էր՝ ի կարգ օրինացն Կեսարու յեռուլ և զայնս, զորս խորհրդով նորա առաջարկեցին Պ. Վաթինիոս ռամկա-
պետ և Կ. Փուփիոս Կալենոս դատաւոր[1]։*

*Մի՝ ի Վաթինեան օրինաց տայր իշխանութիւն դատախա-
զին և դատախազելոյն մերժելոյ միանգամ ևեթ՝ ի դատաս-
տանի զամենայն դատաւորս, յորոց զոմանս միայն մարթ էր մերժել յառաջագոյն[2]։ Ամենեցուն առհասարակ տայր նա այսուհետ զնոյն երաշխաւորութիւն՝ զոր ծերակուտին միայնոյ պահէր Սիլլա. զի ասպետաց և ռամկին զերիս միայն՝ ի դա-
տաւորաց օրէն էր մերժել[3]։*

*Վաթինիոս եւս և ընտրել հինգ հազար գաղթականաց բնակելոց՝ ի նոյն կոմոյ զիրաւունս հռովմէական քաղաքի։ Հաճոյական ինչ յոյժ զործէր նա այսուհետ ամբարհաւաճո-
Թեանն Պոմպէի[4], զի հօր նորա Պոմպէի Ստրաբոնի կառու-
ցեալ էր անդրէն զկոմոյ քաղաք. և յոյս ակնկալութեան տայր բնակչաց յայնկոյս Պադոսի ընդունելոյ և ինքեանց ըզ-
ընտրս քաղաքացւոց Հռովմայ, որպէս և ընկալանն ապա՝ ի կե-
սարէ[5]։*

Որ միանգամ պարտաւոր օրինացս լեալ, ոչ ևս կարէ ոչ դատաւոր կալ, ոչ դատախազ և ոչ վկայ։

Պատիժք յօրինաց սասի սահմանեալք՝ են ազատ կամ ստրկութիւն՝ ի կղզի ուրիք, կամ մահու դատակնիք, ըստ ծանրութեան յանցանացն»։

1 Դիոն Կասսիոս, ԼՀ. Ը։

2 «Վասն ջերմեռանդ պնդութեան ոմանց». Կիկերոն, Ընդդէմ Վատինիոսի, ԺԱ. և Պա-
րապմունք Բորբիոսի, ստ. Որբլեայ. էջ 321 և 323։

3 «Քաղաքացիք՝ որ չեցեն՝ ի կարգէ ձերմէ, չկարեն ըստ Կոռնելեան օրինաց մերժել աւելի քան զերիս դատաւորս». Կիկերոն, Երիտրէ պատասխանութիւն ընդ-
դէմ Վերրեսի, Երիտրէ ճառ, ԼԱ։

4 Ստեփան. կեսար, ԻԸ։

5 Կիկերոն, Ընտանեկան նամակք, ԺԳ. ԼԵ։ — «Պոմպէոս Ստրաբոն, հայր Մեծին Պոմպէի բնակեցոյց վերստին զկոմոյ։ Յետ ժամանակաց յաւել Սկիպիոն երիս հազար բնակիչս՝ ի քաղաքին, և ապա դիւցազնն կեսար հինգ հազար գաղթա-

Մին ևս ոք հաւատարիմ համախոհ գտեալին՝ Կ· Փու֊փիոս Կալէնոս դատաւոր՝[1] առաջի արար օրէնս, որ պատաս֊խանատու՝ի վէիս դատից կացուցանէր զերիս դաս, յորոց կազմէր ատեանն, այսինքն զծերակոյտն, զասպետս և զգան֊ձասեռս։ Ձի փոխանակ տալոյ զվարկս իւրեանց՝ի միասին, սահմանէր իւրաքանչիւր ումեք՝ի նոցանէ առանձին տալ զվարկ իւր։ Ձոր այսպէս բացատրէ Դիոն Կասիոս. «Տեսանել զի խուռն՝ի խուռն՝ի դատս լինէին վարկք, և իւրաքան֊չիւր ոք՝ի կարգաց՝ իւր ընծայէր զտարեյաջող վէիս, յայլոց վերայ զձախողակս արկանելով, եթ Կալէնոս սահմանէր՝ զի իւրաքանչիւր՝ի կարգաց ուրոյն տացէ քուեայս, առ՝ի գիտել զվարծիս ոչ զմիոյ միոյ՝ զի գաղտնի էր վարկն, այլ զիւրաքան֊չիւր դասու»[2]։

Օրինք կեսարու առհասարակ կոչէցան Յուլեան օրինք, և հաստատեալ՝ի ծերակուտին՝ եղեն ընդունելի առանց հա֊կառակութեան[3]։ Կատոն ինքնին ոչ հակառակեցաւ այնց, այլ՝ի դատաւորութեան իւրում՝ի սահմանելն վարել նոքօք, փոքրագութեամբ լինն կամէր ծածկել զանուն օրինադրին[4]։

Գործք կեսարու յառաջագոյնք յայտ առնեն, զի և յա֊ռաջնումն բռնակալութեան յօգուտ եւթ հասարակաց ուշ ու֊նէր։ Ամենայն խորհուրդք մտաց նորա յայն հայէին թէ որ֊պէս խափանել կարասցէ զբարին՝ որովք տառապէր աշխարհն։ Գործք նորա և վէիսք՝ զոր յոլովք՝ի պատմագրաց տգտա֊նեն իբրև տապալիչս կարգաց և ծայրագունդ փառասիրու֊թեան արկասխս, չէին այլ ինչ՝ քան կշռադատեալ, բայց ար֊գասիք խնդասուն քաղաքավարութեան և կատարումն քաջա֊

*կան առաքեաց անդր, յորս նշանաւորք էին հինգ հարիւր Ցոյնք»· Սուրա֊բոն, ձԺԹ։

1 Կիկերոն, Նամականի առ Ատթիկոս, Բ· ԺԸ։ — Դիոն Կասիոս, ԼԸ· Ը։

2 Դիոն Կասիոս, ԼԸ· Ը։ — Ուրեմն, Ցոցոյն օրինաց, 178։

3 Ի ձառին իւրում Կիկերոն ընդդէմ Վատինեայ (2) կշռամբեալով զարհա֊մարհել նորա զհաւատմունս, գոչէ· «Հարցանեմ քեզ նախ· ինդրեցե՞ր յայդմ զհաւանութիւն ծերակուտին, որպէս սովոր կեսար»։ — «Ապաքէն գործք կեսարու վասն խաղաղութեան էին, և հաստատեալ՝ի ծերակուտին»· Կիկե֊րոն, Երէսդէ Փիլիպեան, ԼԹ։

4 Դիոն Կասիոս, ԼԸ· Է։

ծանօթ առաջարկութեանն՝ զոր յայտ արարեալ էր Գրակքոսեանց յառաջագոյն, և ապա այն ինչ Պոմպէի։ Նման Գրակքոսեանց կամէր Կեսար զբաժանումն հասարակաց կալուածոց, զբարեկարգութիւն առեւնից, զթեթևաբեռնութիւն պաւառաց, և տալ առաւելագունից վերաւունս հռովմէական քաղաքի. հանգոյն նոցին պաշտպան կայր կարգի առաջնոց առ՚ի դիմակալել նոքօք յամառութեան ծերակուտին. և կայր բարեբաղդագոյնս՚ի գլուխ տանել՝ զոր ոչն կարացին Գրակքոսեանք և Պոմպէոս։ Պլուտարքոս՚ի վարս Կրասոսի գովէ զիմաստութիւն վարչութեան նորա[1], Թէպէտ և կանխակալ մօք զգնացս նորա ընդ խոռվարար ամկատեսի ուրուք՚ի կլիւս ածեալ[2]։

Ըստ ախորժակաց դարուն, և մանաւանդ վասն հաճոյ լինելոյ ամբոխին՝ հանդիսացոյց Կեսար մեծապայծառ խաղս, սեսարանս, և մրցմունս սուսերամարտից՝ առեալ՚ի փոխ՚ի Պոմպէոսէ և յԱտիկեայ արծաթ բազում վասն զեղխութեան, շռայլութեան և առատաձեռնութեանն[3]։ Սուետոնիոս՝ որ պատրաստեալ էր՚ի գրել անխտիր զձշմարտութիւն և զսուտն՝ որ ինչ և համբաւէրն յայնժաւր, պատմէ բարձեալ կեսարու՚ի գանձէ աշխարհին երեք հազար լտեղս ոսկւոյ, և փոխանակ եղեալ պղինձ ոսկեզօծ. այլ մեծախոհութիւն կեսարու անտեղի առնէ զայս զրպարտութիւն։ Կիկերոն, որում չէին ինչ յայնժաւր պատճառք ակն ածելոյ՚ի նամանէ, քան ինչ զայսմանէ՚ի նամանկանին՝ յորում թաւիէ զգաստութիւն իւր, և ոչ իսկ՚ի չառս իւր ընդդէմ Վատինիոսի հանախտի նոսին. իսկ Պլինիոս[4] այսպիսի ինչ առ հանդիսանալ՚ի հիւպատոջն Պոմպէի։

1 «Խնամատութեամբ վարեցաւ կեսար՚ի բռնշխութեան իւրում». Պլուտարք. տե՛ս Կրասոս, ժէ։

2 «Օրինա հրատարակեաց կեսար արժանաւորս ոչ բռնշխի, այլ յանդգնագոյն ազատականի». Պլուտարք. տե՛ս Կեսար. ԺԲ։

3 Կիկերոն, Համառօտ առ Ատտիկոս, Զ. Ա։ — Ապպիանոս, Քաղաք. պատերազմ. Բ. ԺԲ։

4 Պլինիոս, Բն. պատ. ԺԲ. Ե։ — Տրուման և Մոմսէն վարժապետք պատմութեան միաբանին ընդ միմ ընդդէմ պատմութեանն Սուետոնիոսի։

Գ. Կեսարու զկռտաւակարտրթիւն կելտաց աշխարհին:

*Փառասիրութիւն կեսարու ոչ զկայ առեալ՝ ի բզեղնութեան և յօրինուղութեան, նկրտեր՝ ի հրամանատարութիւն ինչ համեմատ բարձր հանձարոյն, տարածանել զսահմանս Հասարակապետութեան, և պահ ունել այնոյիկ ընդդէմ հզօրադունին՝ ի Թշնաւեաց: Յընտրութեան բզեղնից, որպէս՝ ի վեր անդր ասացաք, ծերակոյտ էտ նոցա զվերակացութիւն անտառաց և զհասարակաց Հանապարհաց. որով չէր ինչ բաղեաց ակնկալութիւն այնուհետև յերեսաց ժողովոյ ծերակուտին: Բայց սահմանել զկուսակալութիւնս ոչ նոցա միայն էր անկ, զի տեսանեմք՝ ի պատմութեան և քուէիւք ռամկին առանդեալ զայնս. որպէս Նումիդիա տուեալ Մարիոսի՝ առաջարկութեամբ ռամկապետին Լ. Մանլեայ, և Լ. Լուկուլլոս յետ ընդունելոյ՝ ի ծերակուտէն զկուսակալութիւն Կելտաց յայսկոյս Ալպեաց՝ ընդունէր և զԿիլիկիան՝ ի ժողովրդենէ[1]: Ընտ այսմ օրինակի և կուսակալութիւն Ասիոյ տուաւ Պոմպէի: Խրախուսեալ յօրինակաց առն Վառինիոս՝ առաջարկեաց ժողովրդեան տալ Կեսարու Հնգամեայ ժամանակաւ զկուսակալութիւն Կելտաց յայսկոյս Ալպեայց և զԻլլիւրիկեայ երիւք լեգէոնիւք[2]: Ամենայն զօրութեամբ օգնական եղև Պոմպէոս առաջարկութեան նորա, և բարեկամք Կրասոսի[3], Կլոդիոս[4] և Լ. Պիսոն եւուն զվարկ իւրեանց՝ ի նպաստ:

Ջարմանք՝ ի սկզբան անդ Թուին առաջարկել ռամկապետին զնեալոս՝ որ յայսկոյս ևեթ Ալպեայց՝ առանց ինչ ասելոյ զայնմ կողմանէ, ուր բանայր առաջի ասպարէզ փառաց. այլ քաջ միտ եդեալ, տեսանիցէ ամենայն որ քանի Ճարտար և քաղաքավարական էր ձև խնդրոյն: Քանզի խնդրել միանպատ այն զկուսակալութեան երկոցունցն ևս Կելտական գաւա-

1 Պլուտարքոս՝ ի Լուկուլլոս, Բ:
2 Սուետոնիոս՝ կեսար, ԻԲ: — Պլուտարքոս՝ ի կեսար, ԺԴ՝
3 Պլուտարքոս, ի կրասոս, ԺԷ:
4 Ասկոնիոս, Քաղաքական պատերազմունք, Բ՝ ԺԴ:

*ուայ՝ մարթ էր երևեալ կարի իմն, և՝ ի վտանգ արկանել զնոքն-
դիրն։ Ջընիկ Աելտաց միայն խնդրել զկուսակալութիւնն՝
վտանգաւոր էր. զի եթէ չնորհէր այն առանց Աելտական գա-
ւառին որ յայսկոյս Ալեաց՝ տալով զայն այլում ումեք փո-
խանակի բդեշխի, գտանէր Աեսար զատուցեալ՝ ի սպառ յի-
տալից, և չկարէր գնալ անդր՝ ի ձմերել, և ունել ընդ Հռով-
մայ անընդհատ կցորդութիւն։ Իսկ յառաջարկել Վատինիոսի
զնեելս որ յայսկոյս Ալեայց և զԼուկիկէ, գժուարին էր
ջոալ նմա և զերկուքն՝ որ համարէր սովորաբար՝ ի նոյն սահ-
մանի, և յաջողէր այնուիկ Աեսարու հաստատութեամբ ձեռն
՝ի գործ առնել՝ ի մէջ հաւատարիմ և յօժարամիտ ժողովը-
դոց, ուր գնուրին էր նմա զնեգէոնից ընուլ զպահպանութիւն։
Իսկ զնեելս որ յայնկոյս Ալից՝ մարթ էր անակնկալ ինչ գի-
պաց կամ միանգամայն առաջարկութեան յաեելու՝ ի կուսա-
կալութիւն նորա. որպէս և եղեւն իսկ վաղագոյն քան զամե-
նայն ակնկալութիւն։ Քանզի ծերակոյտն կալեալ խորհուրդ
քաջ, ըստ այնմ ժամանակի գժուարադէպ, յաեե՛ի կուսա-
կալութիւն անդր երթալոյ նմա զաւառ զնեելս գիտասցես, զի
այսպէս կոչէին Աելտք որ յայնկոյս Ալեայց, և միս այլ ջո-
րոյզ լեգէոն։ Այսպէս ծերակուտին եղեն պարծանք սկիզբն
առնելոյ գործոյն, զոր ժողովրդեան հասանէր ունել՝ եթէ չէր
նորա կանխեալ աձապարեալ*[1]։

*Ընդ այս ըուր, պատմէ Սուետոնիոս, գոչեալ Աեսարու՝ ի
ծերակուտին առ յոյժ խնդութեանն. «Հասէ արդ ըղձից
ընդդէմ թշնամեաց իմոց, կոխեցից զգլուխս նոցա»*[2]։

*Այլ չէ ինչ ամենևին հաւանական խոհականութեանն
Աեսարու զայրացուցանել դէմ յանդիման սպառնալեօք զհա-
կառակորդս իւր՝ ի մերկնելն՝ ի Հռովմայ, որ «յամենայն ժամ
սէր էր անձին, և ոչ ընդհարկանէր ընդ ումեք վայրապար»,
որպէս ասէ ոմն՝ ի հնոց մատենագրաց*[3]։

1 *Դիոն Կասսիոս*, ԼԸ. Ը։ — *Սուետոնիոս*, *Կեսար*, ԻԲ։
2 *Սուետոնիոս*, *Կեսար*, ԻԲ։
3 *Դիոն Կասսիոս*, Խ. ԼԴ։

Ե· *Դիվակրաւթիւն ազատութեան։*

Մինչդեռ ընդ ծանր ծանր դժուարութիւնս մաքառեալ դուն դոյծէր Կեսար Հաստատել զՀասարակապետութիւնն յամրագոյն խարխի, ազնուապետականք՝ ի վրէժ հետ ընդ հետ պարտութեան իւրեանց, սիտիէին մըցմանէք երդիծանաց և ծաղու. ծախս հարկանէին ի տեսարանի յամենայն ակնարկութիւնս բանից Հակառակս Պոմպէի, և յղտութեամբ ընդունէին զԿեսար[1]։ Բիբուլոս՝ փեսայ Կատոնի՝ զոր պարտաւանաց եհան ընդդէմ Կեսարու լի շինականագոյն բանիւք, նորոգեալ զամբաստանութիւնս դաւակցութեան ընդդէմ Հասարակապետութեան, և զկարծեցեալ կցորդութիւնսն ամօթալիս ընդ Նիկոմիդէայ[2]։ Դիմէր ամբոխն ընթեռնուլ և դաղափարել զպարտաւագիրսն եղեալս ի տեսիլ Հասարակաց, և Կիկերոն յղէր զայնոսիկ խնդութեամբ առ Ատտիկոս[3]։ Համախոհք Բիբուլեայ բարձրացուցանէին զսա գովութեամբ մինչև յաստղս, որպէս զայր ոք մեծ[4]։ Ա.Յ ընդդիմութիւն նա-

1 «Ի չբնէն չրթանց ընկալան ի սուսերամարտս զՀանդիսատեսն նոցին և զարթանեակս նորա։ Յապաղեցեան խաղս ողբերգակին Վիվիէրս ակնարկէր ընդ հենգն ի բարեկամին մեր Պոմպէոս, ասելով. «Թշնամութիւն մեր առնէ զքեզ մեծ»· և բազում անգամ եառն կրկնել զայն։ Եւ ապա աղաղակ համագումար ժողովրդեան ձայնակից եղեն նմա յասելն. «Երկայն ժամանակ՝ յորում ուժգնիս հեծծեցեալ ընդ քոյին թշնամութիւն,» և այլն։ Ջի ապաքս այսպիսի թուին ըստ հանգամանաց ժամանակիս ի թշնամեայ ուժեք Պոմպէի յօրինեալ։ Եւ այն գարձեալ՝ թէ «Ոչ մի ինչ սանձահարէ զքեզ, ոչ օրէնք և ոչ սովորութիւք,» և այլն, մինչդեռ ազատաբար եղև ընդունելի։ Կեսար ի հասանելն անդր եդիտ ընդունելութիւն ցուրտ, խակ Կուրիոն՝ որ զՀեան գայր՝ ողջունեցաւ բազում դրուատիւք, որպէս երբեմն Պոմպէոս ի բարեկենդան սուրս Հասարակապետութեան։ Ծանրացուցին լեալ Կեսարու ընդ այն, ասէ սուրհանդակ փութանակի արձակեալ առ Պոմպէոս, որ է արդ ի Կապուա»· Կիկերոն, Նամականի առ Ատտիկոս, Բ· ԺԹ։

2 Սուետոնիոս, Կեսար· Թ։

3 Կիկերոն, Նամականի առ Ատտիկոս, Բ· ԺԹ։

4 «Ամբաստան երկնաչափ զԲիբուլոս, առ ինչ՝ ոչ գիտեմ· պանծացուցանէն զնա որպէս անհամեմատ ոք, զի յաղագսամբ յաջողեցոյց զկրս Հասարակաց։ Պոմպէոս, նմա Պոմպէոս, զոր ոչ բանն արդ, անձամբ զանձն կործանեաց· ոչ ևս ոք բարեկամ է նմա Տաւասարիմ· խնդամ մի գուցէ երկիւղ Թուխցի նոցա խոր-

*ըս չարար այլ ինչ, բայց յառաջել զաշխարհաժողովն յընտ-
րութիւն զրեշխից միոչէ ցհօսկաեմբեր։ Յառաջմանեալ այսու-
կամէին խափանել զընտրութիւն ուրուք՝ի բարեկամաց անտի
եռապետացն՝ի զրեշխութիւն։ Վասն որոյ կեսար խօսեցաւ
ընդդէմ նորա Քառ սաստիկ, և Պատինիոս առաջարկեաց ար-
կանել զնա՝ի քանտ. Պոմպէոս ինքնին շարժեալ յերկիւղանաց
անտի՝ յոր չէր անսովոր, զողոք կալաւ առաջի ժողովրդեան
զթշնամութենէն ընդ նմա. այլ ոչինչ Թուի օգտեալ։*

*Պատն է տեսանել զկարևոր իրաց յաջողութիւն խափա-
նեալ՝ի զուզնաբեայ կրից կարճամիտ մարդկան, որոց աշխարհ
ամիսոյի յանձնէին սահմանի՝ ուր կեանն փակեալ։ Մարթ էր
Բիբուլեայ՝ի ձեռնառու լինել կեսարու՝ ստանալ իրաւացի
հաճոյս. այլ նա լաւ հանարեցաւ զլուխ կալ կուսակցու-
թեան, և սիրեալ զպրուտոս սակաւուց ոմանց անձնասէր ա-
ռեղակալաց ծերակուտին, քան արժանի լինել ընդ իշխանա-
կցին նախ ինքնին շարժեալ յերկիւղանաց
անտի՝ յոր չէր անսովոր, զողոք կալաւ առաջի ժողովրդեան
զթշնամութենէն ընդ նմա։ Այլ ոչինչ Թուի օգտեալ։*

*Պատն է տեսանել զկարևոր իրաց յաջողութիւն խափա-
նեալ՝ի զուզնաբեայ կրից կարճամիտ մարդկան, որոց աշխարհ
ամիսոյի յանձնէին սահմանի՝ ուր կեանն փակեալ։ Մարթ էր
Բիբուլեայ՝ի ձեռնառու լինել կեսարու՝ ստանալ իրաւացի
հաճոյս. այլ նա լաւ հանարեցաւ զլուխ կալ կուսակցու-
թեան, և սիրեալ զպրուտոս սակաւուց ոմանց անձնասէր ա-
ռեղակալաց ծերակուտին, քան արժանի լինել ընդ իշխանա-
կցին Հակառակ Պոմպէի մերսան բարեկամի։ Ցառաջե-
ցաւ անուն նորա մեծ, որպէս մեհտիոլան Կրաստոս»[2]։*

*Եւ բոլորովին անկեղծութեամբ յայտ առնէ զսխալանքն
անձնասիրութեան իւրոյ ընդ խոնարհել նորա, ընդ որ երբեմն*

*հրդական անհրաժեշտ. խակ ես զգուշանամ՝ հակառակիլ ընդ նոսա առ վա-
ղեմի բարեկամութեանս. դարձեալ և փորձ անցելոց կենացս ինձէն ինձ հաս-
նել ընդ գործս նոցա. վասն որոյ կշտամ՝ի միջամտմանին կամ։ Յօժարութիւն ժո-
ղովրդեան՝ի տեսարանս մանուածոյ գոյ՝ի յոյժ»։ Պլիկերոն, Համեմատ առ Ապ-
պիոս, Բ. ԺԲ, Ի, ԻԱ։*

*1 «Խոհական խորհրդով մեկուսի կայ ինքն, այլ ակն ունի ձեռն տալ՝ի հե-
ռուստ նաւաբեկութեան նոցա»։ Պլիկերոն, Համեմատ առ Ապպիոս, Բ. Է։*

2 Պլիկերոն, Համեմատ առ Ապպիոս, Բ. ԺԳ։

զարմանայր: «Տագնապէի երկիւղիւ Թէ գուցէ վաստակք Պօղոսի առ Հայրենիս՝ մեծապոյնք երթեալ քան զիմն երևեսցին. խնդրեմուտ լինիմ արդ՝ զի այնքան ՚ի տարբ եմ, մինչև Կուրիոսի իսկ առ նովաս Թուել ինձ հսկայ»[1]: Եւ յաւելու. «Զնոր ինչ արդ սիրելագոյն ոսկին, քան առել զսամկա-սէրս. ոչ ևս է որ ևնոցա օգնական: Գիտեն նոքա զայս, վասն այնորիկ կասկածեմ բռնութիւնս. և՚ի խորհել իմում զանհրաժեշտ Հայթհայթումն նոցին՝ արհաւիրք ունին զիս»[2]: Ատե-լութիւն նորա ընդ Կղոդեայ և ընդ Վատինեայ, ցնորէր զիտս նորա:

Մինչդեռ կեսար զհետ Հակառակորդին իւրոյ Հզաւրք մե-ծաւ ընթացեալ, Սիկերոն փոխանակ խնդալուտ լինելոյ ա-պառնեաց, և Հեպելոյ ձեռնտուութեամբ զյաւաջադիմու-թիւն, Հակառակ կայր բուռն բերման Հասարակաց, ժխտէր և զայսմանէն, և զմեծութիւն իրացն չկարէր նկատել ընդ Թերութիւնս կուսակցաց ոմանց իշխանութեան:

Թէպէտ և զժպհի յոյժ էին կեսարու Թշնամանք Սիկե-րոնի, այլ ինքն Հանգոյն այնոցիկ որոց առաջնորդեն քաղա-քավարական վէհ դիտաւորութիւնք՝ զեր՚ի վերոյ վրէժխն-դրութեան, ինայէր յամենայն՝ որում մարթ էր իշխել՚ի վերայ մտաց, և բանք Սիկերոնի էին իշխեցողք: Վասն որոյ Դիոն կասկած այսպէս նկատագրէ զդնացս կեսարու. «Ոչ Թշնամանեաց նա զՍիկերոն, ոչ բանիւք և ոչ գործովք, և ասէր. Սովորութիւն է բազմաց կծանել կամաւ զգեր՚ի վե-րոյ քան զինքեանս տարապարտ երկիւծանօք՝ և առ՚ի գըր-գռել զնոսա՚ի կռիւ, որպէս զի յեզանակաւ լինի Հաւա-սար նոցա երևեցին յընդունելն՚ի նոցանէ նախատինս: Վասն որոյ չկամէր կեսար գալ ընդ ումեք՚ի վեր. այս էր կանոն նորա ընդ ամենեսին որ նախատէին զնա: Եւ՚ի տեսա-նել յայնժամ՝ զի կամէր Սիկերոն ոչ այնչափ նախատել զնա, քան տալ նմա բան ինչ նախատանոյ Հանել՚ի բերանոյ, զի երևեսցի Հաւասար իւր, վասն այնորիկ անվոյթ առնէր, ոչ ինչ

1 Սիկերոն, Համեմատ առ Ապիոն, Բ. ԺԷ:
2 Սիկերոն, Համեմատ առ Ապիոն, Բ. Ի, ԻԱ:

միտ դնէր Աեսար զնանձն, առ ոչ ինչ համարէր զբանս նորա, և Թողոյր նմա նախատել զինքն համարձակ և զանձն գովել անպատմանն։ Իբր ոչ արհամարհէր ինչ զնա, այլ բարեհամբոյր ՚ի բնէ՝ չէր ինչ գիւրագրգիռ ՚ի ցասումն։ Բազում ինչ դէպ լինէր արժանի պատուհասի, որպէս հարկ իսկ էր պարապելումն ՚ի մեծամեծս. այլ նա ոչ երբէք տեղի տայր բարկութեան»[1]։

Դէպք ինչ պատահեցին նշանաւորեալ հակառակութեան համախոհից ոմանց. քանզի Լ. Վետտիոս՝ երբեմն լրտես կիւբրանի ՚ի դաւակցութեան Կատիլինայ՝ պատուհասեալ վասն տարապարտուց քսխս ամբաստանութեան զԱեսարէ մատուցանելոյ, ըմբռնեցաւ իբր դարանակալ կենաց Աեսարու և Պոմպէոսի։ Գտաւ առնմա դաշոյն. և ՚ի հարցմունս մատուցեալ յատենի ծերակուտին, եցոյց հրապուրիչս իւր յերեսն յայն զԱուրիոս, զԱեպիոն, զԲրուտոս, զԼենտուլոս, զԱատոն, զԼուկուլլոս, զՊիսոն՝ փեսայ կիւկերոնի, և զկիւկերոն ինքնին, և զՄ. Լատերենսիս և զայլս ևս. ետ և զանուն Բիբուլեայ, որով բառնայր ամենայն հաւատարմութիւն ամբաստանութեանցն. քանզի Բիբուլոսի կանխեալ ծանուցեալ էր Պոմպէի՝ զպայշ լինել անձին ՚ի դաւոյ անտի[2]։ *Պատմագիրք, ընդ որս Դիոն Կասիոս, Սպիանոս, և Պլուտարքոս՝ մեծ ինչ զդաւակցութիւնս զայս հանուրին. Դիոն Կասիոս ասէ կիւկերոնի և Լուկուլլեայ զինեալ զձեռս դաւաճանին, իսկ Սուետոնիոս ըստ դասանէ զԱեսար՝ իբր Թէ նորա հրապուրեալ կաշառով զվէտտիոս առ ՚ի նախատինս դնել ոտիսաց իւրոց։*

Ի պատմութիւնս յայսոսիկ հակառակս իրերաց, պարտ է՝ որպէս ՚ի սովորական դասս՝ կշռադատել զզօրութիւն համբաստանութեան ըստ յառաջագոյն գնացից ամբաստանելոցն։ Սկզբ կիւկերոն, Թէպէտ և յողբոզչէ, սակայն էր արդարակրօն, և էր մարթ նմա դաւակից լինել սպանութեան. և Կեսար այր մեծախոհ և գիտակից զօրութեան իւրոյ՝ չկարէր յանձն առնուլ զանարգ հնարս առ ՚ի յաւելուլ զպղծեցու-

1 Դիոն Կասիոս, ԼԸ. ԺԱ։
2 կիւկերոն, Ընտիրք առ Ատտիկոս, Բ. ԻԴ։

Թիւն իւր։ Վչուռ ծերակուտին արկաւ Վետոիոս ՚ի բանտ. այլ Կեսար ՚ի մուի եղեալ ՚ի վերայ կալ Չխմարտութեան, աճ ղինղիէն յաւեան ժողովրդեան, և ստիպեաց զՎետոիոս ելանել ՚ի բեմ և հրապարակիոս լինել։ Իսկ Վետոիոս կեղծ ՚ի յեղյեղուկ բանս իւր, մատներ զորս յերկիւղն արդ. բացուցեալ էր, և արդարացուցանէր՝ զորոց ամբաստանն լեալ էր, ընդ որս և զԲրուտոս, զորոյ զիսոխութիւն աւեն լեալ ՚ի կենակցութենէ Կեսարու ընդ մօր նորա։ Այծեալ անդրէն Վետոիոս ՚ի բանտ, ՚ի վաղիւ անդր գտաւ անդ մեռեալ. և Կիկերոն ամբաստանէր զՎատինիոս իբր Թէ նորա տուեալ սպանանել զայրն [1]. բայց ըստ այլոց, սպանողք նորա եղեն այնոքիկ՝ որոց մնեալ էր զնա ՚ի գետն ածել տարտար, և խնթալեն Թէ գուցէ յայտնեացին երբեմն [2]։

Ի համեմատութենէ այլ և այլ պատմութեանց է խնամասիրել, զի անշան պաշտօնէի գաղտ հնարիցն հաւակ լեալ էր գաւակցութեանն, առ ՚ի ցուցանել ապա զանձն վաստակաւոր յայտնութեամբ գաւոյն, և գտանել հնարս առաջի Կեսարու՝ համախոհս չարեացն ցուցանելով զհակառակորդս քաղաքավարութեան նորին։ Ոչ անօգուտ եղեն Կեսարու դէպքս այս, զի Թոյլ եառնա այնուհետև ժողովուրդն զգուշանալ անձին [3], և յայնժամ անելիքեայսպէս նորոգեցաւ վասն ջուցն սովոյին, հնարեալ բռնէնին՝ յամեան յորում էին նորա խուրձք՝ զիրաւունս գնալոյ պատուիրակ առաջի, և ունել զհետ սակրաւորս [4]։

Յաջողեաց Կեսարու առանց փոփոխելոյ զհինաւուրց օրէնս Հասարակապետութեան, փոխանակել ընդ անիշխանութեան իշխանութիւն հզօր՝ միոյ և ծերակուտին և աշխարհաժողովոյ. և մեծախոհութեամբ երից արանց առաջոյ՝ փոխանակել ընդ նախանձընդիմ անձնասիրութեան իշխանութիւն միոյ բարեացակամ, որոյ կարաց հաստատել օրէնս ՚ի յաջողու-

1 *Կիկերոն*, ձառ ընդդէմ Վատինիոսի, ԺԱ։ — *Դիոն Կասսիոս*, ԼՀ· Թ։

2 *Պարտապետնեք Բոլբիոսի*, Ջձառից Կիկերոնի ընդդէմ Վատինեայ· էջ 320 տպ· Որբլիեայ։ — *Ապպիանոս*, Քաղաքական պատերազմունք, Բ· Բ և ԺԲ։

3 *Ապպիանոս*, Քաղաքական պատերազմունք, Բ· ԺԲ։

4 *Սուետոնիոս*, Կեսար, Ի։

թիւն պետութեան։ Բայց գործ այն էր, զի մի՛ ի մեկնել իւրում՛ ի Հռովմայ՝ կործանել շինուածն այնքանեաւ աշխատութեամբ կանգնեալ։ Ոչ ինչ զանխուսափ էր ի նմանէ ոչ թիւ և ոչ զօրութիւն թշնամեաց իւրոց. պիտէր քաջ զի՛ ի թոռնէն ի նոսա զատեան հրապարակին և զժողով վիճակաց, ոչ միայն առնուլն անդրէն ի քենէն զամենայն գործս իւր, այլ մարթ էր նոցա և ընկենուլ զինքն յիշխանութենէ։ Ա՛ ի պիտել զքաւ ատելութեան՝ որով ոխայինն ընդ նմա, շատ է յուշ ածել որ ինչ առաւ յետոյ խոստովան եղև նմա Ա.րիովիստա, ի տեսանել իւրեանց երեսաց զմիմեանս առ ափսոսմբ Հռենոսի, զի բազումք յատագոցեցին Հռովմայ զարտանէին կենաց նորա[1]։ Հարկ էր, թէպէտ և դժուարին, ընդդէմ այսքանեաց թշնամեաց պիտել իշխել ընտրութեանց։ Օրինք հռովմէական պետութեան սահմանէին նորընծայս ամի ամի յատկութիւնս, վասն որոյ անհրաժեշտ պէտք էին ունել համախոհս ի բռնաշխս կերկոսին, յուր զատուորս և ի տան ռամկապետս, որ ընտրէին յաշխարհաժողովի։ Յամենայն ժամանակի և յոյժ զօրաւոր իսկ էր ազնուապետութիւն, չկարաց երբեք խափանել զնուաս թշնամեաց իւրոց ի պաշտամունս հատարակաց։ Եւ ապետաց իսկ համախոհից երկիւղ էր կերեսաց փառասիրութեան և ապերախտութեան այնոցիկ՝ զորս ինքեանց յառաջ մատուցեալ էր, թէ զուցէ ընդ հուպ հաւասարել ինքեանց կամեսցին։ Իսկ վերջին և Թերևս ծանրագոյն վտանգ՝ անսասանութիւն և անկարգութիւն կուսակցութեան ռամկին, որոց ինքեանք էին առաջնորդք։

Ի վտանգաց ասոնք շարժեալ՝ միաբանեցին եւսեբոք ամբաստանել ի բռնակալութիւն վասն առաջիկայ ամին գվ. Պիսոն՝ աներ Կեսարու, և գՈ. Գաբինիոս հաւատարիմ կողմնակից Պոմպէի։ Եւ կային նոքա բռնաշխք յ18 հոկտեմբերի՝ յաղթեալ հակառակութեան ազգորերոյն, և ամբաստանութեան կատնի գԳաբինեայ։

1 «Գիտէր նա (Ա.րիովիստա) ի ձեռն պատգամաւորաց, զի կորուսանելով գկեսար՝ գործ հաճոյական գործէր բազմաց յատագոցեցին Հռովմայ, և մանաւանդ նորա զչնորհս և զբարեկամութիւն նոցա յինքն ձգէր». Կեսար, Պոպէրաց Կեսարեայ, Ա. ԽԴ։

Ի վախճան 695 ամին դադարեցին՝ ի պաշտամանէ իւրեանց Կեսար և Բիբուլոս։ Ի տալ Բիբուլեայ ըստ սովորութեան համար ղգործոց իւրոց, կալի տխուր երանգօք էառ նկարագրել զհանգամանս Հասարակապետութեան, մինչև արգելուլ զնա Կլոդիոսի՝ ի խօսելոյ [1]։ Իակ Կեսարու խնդիք կասկածանաց յերեսաց Հակառակորդացն իւրոց՝ ի գլուխ ելանէին. զի ընդ ելանել նորա՝ ի պաշտամանէն՝ Լ· Դոմետիոս դատաւոր՝ Ընկամօրսան մակձայնեալ, և Կ· Մեմիոս, բարեկամք Կիկերոնի [2], առաջարկեցին ծերակուտին կոչել զնա՝ ի հարցփորձ գործոց նորա յաւուրս բղեշխութեան իւրոյ, և արհամարհելոյ նորա զհաւանմանէ։ Ի հրաժարել ծերակուտին յառաջարկութենէ անտի [3], ածաւ գանձատուն Կեսարու յաւեան. և ինքն իսկ Կեսար կոչեցաւ յաւեան ՅԱնախատեայ ռամկապետէ. այլ ոչ կամեցաւ ժողովն հանդուրժել ընդունել զբողոքն, զի Մեմմեան օրինաք արգելուին չընդունել ամբաստանութիւն զքաղաքացւոյ, որ՝ ի սպաս ծառայութեան հայրենեաց հեռի կայցէ՝ ի Հռովմայ [4]։

Կեսար առ դուրս կայր Հռովմայ, իւնկերատոր՝ ի զօրացն անուանեալ, բազմագունդ բանակաւ ըստ Կիկերոնի [5], ՝ի հինաւուրց զօրաց խմբեալ՝ որպէս Թուխ [6]։ Եւ դեպերբն անդ

1 Դիոն Կասսիոս, ԼՀ· ԺԲ։

2 Կիկերոն, Նամախանի առ Կոռինթոս, Ա· Բ։

3 Սուէտոն· Կէսար, ԻԳ· — Պէրոն, Բ։

4 Սուէտոն· Կէսար, ԻԳ։ — Վալերիոս Մաքսիմոս, Գ· Է· 9։

5 «Կայր առ դրունս Հռովմայ զօրավար ոք զօրու ծանուս և բազմամեայ հրամանատարութեամբ։ Թշնամի իմ էր նա, չունիմ ասել· այլ այսչափ ինչ գիտեմ, զի յաճախ ուրուք զայն՝ լսէր»· Կիկերոն, ճառ չեփ դարձին՝ ի Հռովմ՝ ի ծերախոսին։ — «Բանակաւ զօրաց կեսարու ընկճեալս կալոյց զձեզ, ասէ»· Կիկերոն, Նամախանի առ Ատտիկոս, Բ· ԺԶ։ — «Գրոհ տուեալ յարձակիցսայց, ասէր Կլոդիոս, զօրօք կեսարու յաւեան ժողովոյ վիճակաց»· Կիկերոն, ճառ՝ ի պատասխանի հմայիդ, ԻԲ։ —, «Կեսարու վաղ իսկ մեկնեալ էր՝ ի Հռովմայ բանակաւ իւրով»· Դիոն Կասսիոս, ԼՀ· ԺԷ։

6 Բազում ուրեք՝ ի Թուղթս իւր Կիկերոն կացուցանէ զկեսար բանակաւ իւրով առ դուրս Հռովմայ· սակայն՝ ի Յիշատակագիրս նորա տեսանեմք զի՝ ի սկիզբն Կեսարական պատերազմին քառեակ լեգէոնք էին նորա· առաջինն առ Հռենոսիւ, և երեք այլք յԱգուիլէա քաղաք՝ ի Լիւբիկէ։ Արդ դժուարին է՝ ի միտ առնուլ թէ սպասէս մարթ էր նմա ունել զօրս առ գրունս Հռովմայ, զորմէ քա-

աւելի քան զամիս երկուս, զի մի գուցէ՝ ի հեռանալ նրանց վեր՝ ի վայր տապալեսցին գործք նոր:

Զ. Օրենք կլոդևայ և տարագրութիւն Կիկերոնի:

Զայսու ժամանակաւ Կլոդիոս՝ անխաղաղասէր և խառնարար՝ , խրոխտացեալ՝ ի թիկունս օգնականութեան՝ զոր տեսեալ էր հռոմայեցոյն և ընկալեալ՝ ի նոցանէ, յախտումն բերը զՀետ կրկին, և տայր սահմանել օրէնս՝ յորոց ոմանք զտամիկն և զատրուկս անպատմ հաճելով, մղէին զպետութիւնն յանիշխանութիւն: Օրինօքս այսոքիւք հաստատեր նա ընկե-

շատակէ ինչ կեսար յընթացս պատերազմաց նրանց: Առ՝ ի միաբանել զնամականին Կիկերոնի ընդ Յիշատակագիրս կեսարու, պարտ է համարել՝ զի բաց՝ ի լեգէոնից որ արտաքոյ Իտալիոյ, կոչեալ էին կեսարու՝ ի զինուորութիւն նր և զհինաւուրց զօրականն հռովմայեցի, որ ըղձային գնալ զՀետ նորա: Եւ զի համախմբեալ նոցա առ դուրս Հռովմայ՝ անտի ապա չուս արարեալ էին՝ ի կելտս, գնալ յաւելուլ՝ ի լեգէոնս: Ա յինչափ տուաւել հաւանելի են կարծիքս այս, որչափ զի յամին 700 յընթերութեան Պոմպէի և Կրասոսի՝ ի բռնիչխութիւն՝ առաքեր կեսար զօր բազում՝ ի Հռոմ տալ ջքուէայս իւրեանց յաչխարհաժողովն. չէք ապա երկբայել զի՝ ի զօրուն էին և քաղաքացիք Հռովմայ, զի չէին իրաւունք քաղաքացւոյ՝ բնակչաց յայնկոյս Ալպեայց, յորոց էր զօրաժողովն: Եւ դարձեալ կոչել Կեսարու զհինաւուրց զօրականն՝ ի զինուորութիւն, էր ըստ օրինակի ամենայն զօրավարաց Հռովմայեցւոց, որպէս արարին և Սկիպիոն և Փլամինիոս և Մարիոս: Զի՝ ի չուել Կոռնելեայ Սկիպիոնի՝ ի պատերազմ ընդդէմ Անտիոքոսի, էին առ դրունս Հռովմայ հինգ հազար ինքնակամ զօրական ընդ քաղաքացի և ընդ դաշնաւոր, որոց զինուորեալ էր եղբօր նորա Սկիպիոնի Ասիկիեցւոյ. (Տիտոս Լիւիոս, ԼԷ. Գ): — «Յորժամ մեկնեալ էրթայր Փլամինիոս՝ ի լեգէոնս զօրաց՝ ի Մակեդոնիա, էառ ընդ իւր երեք հազար հինաւուրց զօրական, որոց պատերազմեալ էր ընդդէմ Աննիբալայ և Ասդրուբալայ». Պլուտարքոս՝ ի Փլամինիոս, Գ: — «Մինչդեռ Մարիոսի չուս արարեալ՝ ի պատերազմ ընդդէմ Յուգուրթայ, կոչեաց՝ ի Լատինսն զընտիր ընտիր զօրականն, յորոց բազումք ընդ ձեռամբ նորա զինուորեալ էին, և այլք ծանօթք նմա՝ ի լոյս. և զայնոսիկ խակ, որոց լեալ էր ժամանակ զինուորութեան, սահեցաց յորդորանօք ելանել ընդ իւր՝ ի պատերազմ». Սալուստիոս, Պատերազմ Յուգուրթայ, ԶԴ:

1 «Տագնապի նա արդ և յուզի (Կլոդիոս) ցասմամբ, ոչ գիտելով զոր ինդրէն. յաջ և յահեակ ապառնայ և ըստ դիպաց Թուի կշռել զՀարուածն: Ի խորհել իւրում զդիմեցումն իրաց արդ ընդդէմ ժողովրդեան, կամի հին բախել ընդ պատճառս նոցին. այլ՝ ի տեսանել յոր կոլմն է գործօն արութիւն և սպառազէն զօրութիւն, զերեսս ընդդէմ մեր դարձուցանէ». Կիկերոն, Համախանի առ Ապիոս, Բ. ԻՖ:

բուժիւնս քաղաքականս, խուճքս խուճքս ռամկին վտանգա-
ւոյս Հաստրակաց խաղաղութեան[1], զոյս լուծեալ էր Սիլլայ,
և ապա վերատին կազմեալ, և միւսանգամ բարձեալ՝ի միջոյ՝ի
690 ամին[2]. բաշխէր նա ձրի ժողովրդեան ցորեան, ՚ի բայ առ-
նայր՝ի Համարակալաց զինեանութիւն մերժելոյ՝ի ծերակու-
տէն զոր ոք կամէին, ներելով նոցա արտաքսել զդատապար-
տեալս միայն[3]. արուելոյր առեներակալաց զՀաւատմայս և զար-
փային երեւութեանց զինութիւն յաւուրս աշխարհաժողովոյ[4],
և պատուհասակոծ առնէր՝ որ՚ի մահ դատապարտեալ էին
զքաղաքացիս Հռոմայ՝ առանց տալոց նոցա տեղի պատասխա-
նոյ: Վերջինս այս յայտնապէս ընդդէմ Սիլլեանի էր, առանց
անուանելոյ զինա: Ի հաստատութիւն օրինացս՝ խնդրէր նա
զՀաւատանութիւն Կեսարու, որ առ դրունս Հռոմայ կայր
հրամանատարութեամբ զօրուն, որով խափանէր չմտանել՚ի
նեղութս: Յայնժամ Կլոդիոս դումարեաց զժողովուրդն արտա-
քոյ պարսպին. և՚ի հարցանելնորա զկարծիս փոխանակի բը-
դեշխին, արար նա պատասխանի՝ զի կարծիք իւր քաջայայտ
էին՚ի վարկէ անտի՝ զոր՚ի դառս դաւակցացն Կատիլինայ
տուեալ էր, այլ չՀաւանէր ընդ օրինս վտան անցից անցելոց
պատուհաս՚ի վերայ ածելոյ[5]:

Յայնժամ ծերակոյտն տուպ զգեցաւ, առ՚ի հրապարակա-
գոյժ առնել յաչս Հաստրակաց զկրկն տհաճութիւն. այլ գա-
բինիոս և Պիսոն բդեաշխք ստիպեցին զնա չտալ զտարաժամ
ցոյցս գժկամակութեան:

Կեսար առ՚ի զերծուցանել զՎիկերոն՚ի սպառնալեաց
վտանգին, հրաւիրեաց զնա գնալ ընդ իւր՚ի Կեղտա՝ որ-

1 Խուճքս այսոքիկ էին իւր զինուորական դումարատակք՚ի Թաղս Թաղս բա-
ժանեալ, և՚ի զաւակագործաց միայն կազմեալ. (Տես Մոմսէն, պմ. Հռովմ. Գ.
էջ 290): — «Ի զինուորութիւն գրին ստրուկք՝ պատրուակաւ կազմելոյ ընկե-
րութիւնս». Կիկերոն, ճառ յեպ պոյին՚ի Հռովմ՚ի ծերաւոցին, ԺԳ:

2 Ա.Մ.Յ ամին 690՚ի բաց առեալ զընկերութիւնս արուեստաւորաց: — Ասկո-
նիոս, «՚ի Պիսոն», Գ. էջ 7. «՚ի Կոռնելեանն», էջ 75. տպ. Որելլեայ:

3 Կիկերոն, ճառ ընդդէմ Պիսոնի, Գ: — Ասկոնիոս, Ի վերոյ ճառին Կիկերոնի ընդ-
դէմ Պիսոնի, էջ 7. 8. տպ. Որելլեայ: — Դիոն Կասսիոս, ԼՀ. ԺԳ:

4 Դիոն Կասսիոս, ԼՀ. ԺԳ:

5 Դիոն Կասսիոս, ԼՀ, ԺԷ:

պէտ տեղեակալ[1]։ Ա.յլ նա յանձնառաստանութեամբ[2] մերձ ժեաց զհրաւէրն՝ յեղեալ և՛ ի պաշտպանութիւն Պոմպէի։ Այս ոմն ապա յայտ ի՝ զի Կլոդիոս անդր քան զխորհուրդս Կեսարու անցանէր. յաւելեալ հաւաստիս, զի գործիք այսպիսիք զինք են երկայրիք, որով՛ և Ճարտարապետն իսկ՛ և ձեռս վերնին հարուածք։ Սոյն օրինակ Վատինիոս՛ ի թեւին ածելն ապա զղջաստութեան, ընկալաւ յերբեմն պաշտպանել իւրմէ զծանր զայս կշռամբեան՝ թէ «Վատինիոս չարար ինչ ձրի՛ և ոմանց պետութեան իւրում. և որ արծաթոյ է՛ և խնդիր, դիւրին է նմա հրաժարել՛ի պատուոյ»։ Քանզի կեսար, որ ոչն զատ էր յաշխատելոյ՛ ի հաստատութիւն օրինադրութեանց յօդս ժողովրդեան՝ չկամէր ոչ զանիշխանութիւն և ոչ զօրինս ոմանցմէ. և որպէս չէր նմա ընդունել առաջարկութիւն Մանլեայ՝ համարելոյ զազատագիրս՛ և քաղաքացիս, նոյնպէս մերժէր նա և զվերատին հաստատութիւն ընկերութեանց, զձրի բաշխուց ցորենոյ, և զառաջարկութիւնս վրէժխնդրութեան Կլոդեայ՝ որ պանծային յօդնականութիւն նորա։

Կրասոսի և սա կամելով ապա ինչ առնել Կիկերոնի առանց զանձն վտանգելոյ[3], յորդորէր զորդի իւր ձեռն տալ նմին։ Իսկ

1 «Ընկալայ հրաւէր ամենաւսկան՛ ի կեսարէ, տեղեակալ իւր լինելոյ»· Կիկերոն, Նամականի առ Ատտիկոս, Բ. ԺԸ։ — «Անցոյց նա զԸնեամին իմ (զԿլոդիոս)՛ ի կարգս ռամկին, կամ զի ցասմամբ էր ընդ իս՝ չկարացեալ և բարերարութեամբքն իւրով լինքն յանկուցանել զիս, և կամ զի տեղի տայր Թռխանէանոց։ Զհամեմատիմ զայս ինձ՛ ի Թէնեամանս. քանզի խորհուրդ տայր ինձ ապա, և ազատէր իսկ լինել իւր փոխանորդ։ Ընկալայ զպատիւն զայն, ոչ որպէս առարև ինչ քան զիմ արժանաւորութիւն, այլ զի չկամէի բնաւ՝ Թէ յետ Կեսարու գայցեն բռնաչխք այսպիսիք ապիրատք (Պիսո և Գաբինիոս)»· Կիկերոն, Ճառք Փառուոյ ԲէԷլիէյ, ԺԷ։

2 «Ի ձեռն Ձրանց իմոց յաճախեն ինձ զօրհանապազ շնորհք ժողովրդեան և զօրութիւն։ Հրաժարեմ՛ի ապատ՛ի քաղաքական գործառնութեանց... և առն իմ չէ երբէք գառարկ՛ի ժողովրդենէ ոյք յերկս և՛ի մեռս շուրջ պատեն զինև. գառնան ինձ առուրք բռնչխութեան իմոյ։ Խռամունք հաւատարմութեան առնեսս տեղան զինև, և այնպիսի վստահութիւն է ինձ, մինչև իսկ լինել երբեմն վհատ՝ քան երկիւղիւ ձեռնալ միշտ նոցին»· Կիկերոն, Նամականի առ Ատտիկոս, Բ. ԻԲ։ — «Եթէ ամբաստանութիւնն լցի զԿլոդեայ, զրզիեցի Խռաչիս ոչընչի»· Կիկերոն, Նամականի առ Կուինտոս, Ա. Բ։

3 Կիկերոն, Ճառ ընդդէմ Վատինիոսի, ԺԶ։

4 Պլուտարքոս՛ի Պոմպէոս, ԽՀ։

Պոմպէոս տատանեալ ընդ երկիւղ և ընդ բարեվատութիւն, եգիտ ինչ բաղբաղայս չընդունելոյ զԿիւրեռն՝ի դիմել նորա առ նա։ Ի դէպ եղեալ և՝ի վերջին հնարից աստի Ջարտարաց խօսեն մեծ, և ոչ ևս յուսացեալ՝ի մնասիս, յետ խորհրդոց ինչ դիմակալութեան՝ մեկնեցաւ ինքնակամ գնալ վտարանդի։ Եւ ընդ մեկնել նորա՝ի Հռովմայ, հաստատեցան անխափան օրինքն հակառակ նորա, նոյնիսկ իսկ հաւանութեամբ զորս կարծէր բարեկան իւր[1]։ Գրաւեցան գոյք նորա՝ի գանձս աշխարհին, հինն՝ի վեր տապալեցաւ տուն նորա, և տարագիր եղև նա յերկիր հեռաւոր ցչորեք հարիւր մղոն։

Ջամենայն դուն գործեալ էր Կեսարու Ջարտարութեամբ, զի և՝ի հեռաստ ապրեցոյէ զօրութիւն իւր՝ի Հռովմ, ըստ նեբելոյ անհաստատութեան առենակալաց։ Ի ձեռն գաւեր իւրոց Յուլեայ, որոյ գէղ և հանձար գերիր զսիրտ առն իւրոյ, կալեալ էր նորա զՊոմպէոս. և պատուովն՝ զոր ընտրեաց որդին Կրաստոսի արժանաւոր պատանւոյ, կացուցանելով զինա իւր առեղակալ, հաստատեալ էր ընդ իւր զՅայր նորա։ Կիւրեռն էր՝ի միջի, այլ ընդ հուպ հաւանեալ Կեսարու ընդ դարձ նորա, և զկուխնաոս զեղբայր նորա առ ինքն հրաւիրեալ, ունէր հաշտել ընդ նմա։ Մնայր և՝ի հակառակութիւն կատարն. այլ և զինա Կլոդիոս յանձն էառ հեռացուցանել պատճառաւ նօք մեծարելոյ զինա նուիրակութեամբ. և առաքեցաւ կատոն՝ի Կիպրոս՝ ընկենուլ յաթոռոյ զարքայն Պտղոմէոս, որ անկարգութեամբք իւրովք առել էր ժողովրդեան[2]։ Եւ քանից զլուխ խօսից՝ ամենայն արք առաջք, որոց մարթ էր մուտ՝ի պաշտամունս գտանել՝ յանկուցեալ էին՝ի Կեսար, և ամանց զրոյ իսկ առեալ նմա խոստումն[3]։ Ժամ էր այնուհետև մեկնելոյ, հոդեալ բազմին այլ Հանապարհ առաջի Կեսարու. զի միայն նմա յայնկոյս Ալպեայց փառք անմահականք, որով և՝ի Հռովմ ցոլացեալ Հառապայթք՝ կերպարանափոխ հանդերձեալ էին առնել զաշխարհ։

1 Պլուտարքոս՝ի կիւերոն, ԽԱ։
2 Վէլլէոս Պաաերկուլոս, Բ. ԽԵ։
3 Սուետոնիոս, կեսար, ԻԳ։

Ե. *Դիտաւորութիւն գործոց կենսապոյ:*

Կեսար՝ որպէս ցուցաք՝ խելամտութեան ևեթ իւրում անապայր՝ ի քաղաքավարութիւն, եթէ՝ ի վարել յառաջ եռանդեամբ զամենայն յօգուտ ժողովրդեան, և եթէ՝ ի ձեռն տալ յայտնապէս Պոմպէի: Ցուցաք զի ազնուական իմն փառասիրութեամբ՝ ցանկայր նա իշխանութեան և պատուոյ. այլ չեմք ինչ անպէտ, զի մատենագիրք սովոր են այլ ինչ պատճառս տալ գնացից նորա: Համարին՝ ի 684 ամէ հետէ հաստատեալ նորա՝ ի մտի՝ որ ինչ գործելոցն էր, զորպայթս իւր լարեալ և զամենայն գործս պատրաստեալ: Ցան նմա ստոյգ նախագիտութիւն ապառնոյն, և զօրութիւն վարելոյ զմարդիկ և զդէպս ըստ կամաց իւրոց, և զիւրաքանչիւր ոք՝ ի նոցանէ յանդգնեցոյցն՝ գործակից առնելոյ՝ ի կատարումն խորհրդոց իւրոց: Ամենայն գործոց նորա պատճառս գաղտնիս ընծայէ պատմագիրն, և համարի հատու լինել այնց յետ՝ ի գլուխ ելանելոյ գործոյն: Ոչ ամբաստանայ Կեսար զդրօշ Մաղիոսի, և ոչ պաշտպան կայ ընկճելոց, և հալածիչ Սիկարեանց անցելոյ բռնակալութեանն, բայց աւ՝ ի յաձախել արբանեակս կարևորս գահակիրութեան իւրոյ: Ոչ հակառակի նա Կիկերոնի՝ ի պահպանութիւն օրինաց՝ ի դատաստանի գաւազից Կատիլինայ, և՝ ի նպաստ ազատակայնն օրինաց՝ հաւանեալ ընդ քաղաքական նպատակ նոցա, և ոչ փոխանակ մեծի անհրաժեշտութեանն Սիլլայ՝ պաշտպան կայ՝ ի հատուցումն երանոյ մանկտուցն՝ որոց տարագրեալ էին հարք, բայց աւ՝ ի պարտաւոր առնել զՀարտարախօսն մեծ առաջի ժողովրդեան: Եւ ընդհակառակն չվարէ նա զինւր ազդեցութիւն՝ ի սպառ Պոմպէի, և ոչ վասն պատերազմին ընդդէմ հինից օգնէ առ քառնալոյ նորա յիշխանութիւն՝ որ համարէրն առաւելապանց, ոչ ձեռն տայ՝ ի վէմս ռամկին կացուցանելոյ զինս զօրաւոր մարտին ընդդէմ Մինդատայ, և ոչ՝ ի հեռաւորութեան նորա տայ սահմանել նմա պատիւս անսովորս, բայց խորամանկութեամբ աւ՝ ի վարել յօգուտ իւր զմեծութիւն Պոմպէի: Որպէս զի պաշտպանել նորա ազատութեան՝ և աւ՝ ի կորուստ

*ասէսայ իւրոց, և պաշտպանել իշխանութեան՝ ի վան ընդէ-
լացուցանելոյ զՀռովմայեցիս՝ ի բռնակալութենէն։ Եւ զի երկա-
րեմ. ոչ առ այլ ինչ կեսար հանգոյն ազատաց ամենեցուն հռով
մայեցոց զբռնէշխութեան թեւին ածէ, քայց զի ընդ բռնէշխա-
նան խուրձս և ընդ փոշի մարտից պատերազմաց՝ նկատէ՝ ի հե-
ռուստ զինշխանապետութիւն և զպահոյս զկնասիլն։ Ա.յսուհան
ակնութիւնք՝ ի կարի լինն սովորական վերնապէտ յառաջ գան.
այս ինքն՝ ի հրատարակելոյ զգործս ոչ ըստ ինքեանց, այլ ըստ
հանգամանաց իրաց՝ զորս տան նոցա դէպք զհետ եկեալք։*

*Ա.նտեղութիւն անհետեւեալ՝ ընծայել գործոց վեհից ա-
նանց պատճառս անարգս, միանգամայն և կանխատեսութիւն
գերաշխարհիկ։ Ո՛չ. ոչ անարգ ինչ խորհուրդ գարան գոր-
ծելոյ Ալիկերնայի ածէր զկեսար՝ ի հնարս ձարտարութեան,
այլ խորագնին խելամտութեան իւրում անապար նա. և երևի
այս յայտ յանդիման այնու, զի ընդ ամբառնալն յինշխանու-
թիւն՝ եղ՝ ի գործ որպէս բղեարձն և որպէս իշխանապետ, զոր
պաշտպանեալն էր իբրև քաղաքացի. որում երաշխաւորեն՝
ազատակային օրինքն և դարձ տարապրելոյ յիւրաւունս իւրեանց։
Եւ ոչ՝ ի պաշտպանելն Պոմպէի՝ ի կործանումն նորա ջանայր,
զոր ինքն ածացոյց. այլ զի զօրավարին այնպիսի ածէ զինոյն
դատ վարեալ էր. զի ոչ զբ կարէր գուշակել՝ յոր ինչ ատա
Պոմպէոս զյաղթանակս իւր և զինուղ ժողովրդեան՝ ի կիր ար-
կանելոց էր։ Ա.պաքէն՝ ի հանել նորա զզօրս իւր Լիտալիա՝ ի
տագնապի կայր Հռովմ, և ամենուստ լսել լինէր գոյժ երկիւ-
ղի՝ Թէ արձակէր նա արդեօք զզօրս իւր[1]։ Զի եթէ տկրտաբար
մտանէր անդր, ոչ զբ զօրէր զդէմ ունել նմա։ Ա.յլ նա յան-
կարծ ընդդէմ ամենեցուն ակնկալութեան արձակէր զզօրա-
կանն։ Եւ թրպէս ապա մարթ էր կեսարու գուշակել զյափա-
տուութիւնն զայն՝ արտաքոյ սովորութեան ժամանակին։*

*Հաւանականագոյն արդեօք էր ասել, Թէ կեսարու կա-
ցեալ փոխանակ բղեշխի՝ ի գերագոյն իշխանութիւն նկատէր։*

1 «Շշուկ գալառեան Պոմպէի յառաջեալ քան զնա՝ ոչ Թեթև էին յուզմանց լինէր առնել, զի ասէին գալ մտանել նմա բանակաւն՝ ի Հռովմ»· Պլուտարքոս՝ ի Պոմպէոս, Խե։ — «Ընդէ ապրեին յայնժամ ամենեքեան՝ ի Պոմպէէ, ոչ գիտեալ Թէ ասցէ արձակուրդ զօրաց իւրոց»· Դիոն Կասսիոս, Լէ· Խդ։

Ոչ բնաւ. զի՝ ի խաղալ նմա՝ ի ակեաս՝ չէր մարթ նմա ընդ միտ ածել՝ թագաւորելոյ՝ ի վերայ Հռովմայ. որպէս և ոչ Պոմպեոս՝ ի խաղալ նմանէ՝ ի խաղալ նորում Իտալիա յամին 1796, կարէր երազել զինքնակալութիւն: Մարթ էր գուշակել Ակեսարոս զի յաջողելոց էր նմա՝ ի տանեամեայ բնակութեան նորում՝ ի ակեաս յաղթել միշտ բազմին, և ընդ այնչափ ան յարատեւել յօժարութեան Հռովմայեցւոց՝ ի խորհուրդս նր: Մարթ էր նմա նախագէտ լինել՝ զի մահուամբ դստեր նրոյ Յուլեայ քակելոց էր զօդ բարեկամութեան նրոյ ընդ Պոմպէի. զի Կրասոս փոխանակ յաղթանակաւ դառնալոյ Արեւելից՝ պարտեալոց է և սպանանելոց՝ ի Պարթեւաց. զի մահուամբ Կլոդեայ վէր՝ ի վայր շրջելոց էր Իտալիա. և միով բանիւ, զի անիշխանութիւն՝ զոր՝ ի ձեռն եռապետաց կամէր հեղձուցանել, աստիճան լինելոց էր բարձրութեան նրոյ: Յանդիմանն աչաց նորա կայէն օրինակք մեծամեծք. ընթանայր նա փառաք պՀետ Սկիպիոնեանց, և Պ. Եմիլեանց. առելութիւն թշնամեաց նրոց ստիպեաց զնա առնուլ զինչիանապետութիւն զօրին Սիլլայ, այլ ազնուապոյն պատճառաւ բերեալ յայն, առանց վրէժխնդրութեան և անգթութեան:

Ոչ ի պարտ՝ ի վեհ անձինս խնդրել միշտ անարդ կիրս: Յաջողութիւն վեհից արանց մեծախոհութեան նոցա են արգասիք, և ոչ անձնասիրութեան և խորամանկութեան. սխեմայ է այս մտածութիւն: Յաջողութիւնս այս կարի զձարտարութենէ նոցա չկորուսանելոյ զդէպ ժամանակ, քան զկոյր յանձնապատահանութենէ իշխելոյ դիպաց՝ որ՝ ի ձեռս Աստուծոյ միայոյ են: Զկը երկբայել՝ զի Կեսար ոչ ինչ երկմտեր ընդ բազդ իւր, և վստահ էր՝ ի հանճար. բայց աներկմտութիւնս այս ազգումն է արտ, և ոչ չարտակ մտաց. և հանճար զգայ զգալոցն, առանց գուշակելոյ զանխնամեալն ընթացս նորա:

ՎԱԽԱՆ ԱՒԱԶԵՆՈՑ ՀԱՏՈՐՈՑ

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ 1

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԺԱՄԱՆԱԿ ՀՌՈՎՄԱՅ ՑԱՌԱՋ ՔԱՆ ԶԿԵՍԱՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՌՈՎՄ ԱՌ ԹԱԳԱՒՈՐՕՔ

Ա. *Թագաւորաց սկզբնաւորել զՀռովմէական սահմանադրութիւն* . . 9
Բ. *Յօրինուածք քաղաքական կարգաց* 11
Գ. *Յօրինուածութիւն քաղաքական* 14
Դ. *Կրօնք* 21
Ե. *Օգուտք Թագաւորական վարչութեան* 26

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԸՆԴ ԲԴԵՇԽԻՔ (*յ244 ամէ յ416*)

Ա. *Առաւելութիւն հասարակապետական վարչութեան* 31
Բ. *Օրինադրութիւնք Հասարակապետութեան* 36
Գ. *Կերպարանափոխութիւն ազնուապետական վարչութեան* . . . 40
Դ. *Պատճառք եղծման* 46
Ե. *Բռնանդակութիւն* 55

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԻՈՑ (*Ի 416 ամէ յ488*)

Ա. *Նկարագիր Իտալիոյ* 63
Բ. *Պայման ժողովրդոյ Իտալիոյ, և զօդ կցորդութեան նոցա ընդ Հռոմ-*
միայեցիս 65

էջ

Գ. Գնացք նոցա ընդ պարսեալ Ժողովուրդս 68
Դ. Հպատակել Լատինի յեւ նախնոյ պատերազմին Սամնիացւոց . . 74
Ե. Երկրորդ պատերազմին Սամնիացւոց (427–443) 77
Զ. Երրորդ պատերազմ Սամնիացւոց: Մխաբանութիւն Սամնիացւոց, Ումբրիացւոց և Հերնիկաց (443–449) 80
Է. Չորրորդ պատերազմ սամնիական: Երկրորդ անգամ միաբանութիւն Սամնիացւոց, Ետրուբացւոց, Ումբրիացւոց և Կելտաց (456–464) . 83
Ը. Երրորդ միաբանութիւն Ետրուբացւոց, Կելտաց, Լուկանիացւոց և Տարենտայ (469–474) 85
Թ. Պիւռոս Իտալիա: Նուաճումն Տարենտայ (474–488) . . . 86
Ժ. Նախընթացութիւն Հռոմայ 89
ԺԱ. Զօրութիւն օրինադրութենանց 93

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԲԱՐԳԱՒԱՃՈՒԹԻՒՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻՆ ՑԱՒԱՋ ՓՈՒՆ ՉՊԱՏԵՐԱԶՄՈՒՆՆ ԿԱՐԹԵԴՈՆԱՑԻՈՑ

Ա. Վաճառաշահութիւն Միջերկրականին 100
Բ. Հիւսիսային Ափրիկէ 101
Գ. Սպանիա 105
Դ. Հարաւային կելտք 109
Ե. Լիգուրիա, կելտք յայսկոյս Ալպեայց, Վէնետիա և Իլլիւրիկէ . . 110
Զ. Եպիրոս 112
Է. Յունաստան 113
Ը. Մակեդոնիա 117
Թ. Փոքր Ասիա 120
Ժ. Թագաւորութիւն Պոնտոսի 120
ԺԱ. Բիւթանիա 123
ԺԲ. Կապադովկիա 124
ԺԳ. Պէրգամեան Թագաւորութիւն 124
ԺԴ. Կարիա, Լիկիա և Կիւպրոս 127
ԺԵ. Սիւրիա կամ Ասորեք 129
ԺԶ. Եգիպտոս 134
ԺԷ. Կիւրենական 137
ԺԸ. Կիպրոս 138
ԺԹ. Կրետէ 139
Ի. Հռոդոս 139
ԻԱ. Սարդէնիա 142

Էջ

ԻԲ. Կոթսիկա 143
ԻԳ. Սիկիլիա 143

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԱՐՏԻՔ ՊԱՏԵՐԱԶՄԱՑ ԿԱՐԹԵԳՈՆԻ, ՄԱԿԵԴՈՆԻՈՑ ԵՒ ԱՅԼՈՑ (*Ի* 488 *ամէ* 621)

Ա. *Զուգակշիռ Հռոմայեցւոց ընդ Կարթագինէ* 145
Բ. *Առաջին կարթագինական պատերազմ* (490–513) 147
Գ. *Պատերազմ Լիւբիկեայ* (525). 154
Դ. *Արշաւանք ազգաց որ յայսկոյս Ալպեայց* (528) 156
Ե. *Երկրորդ կարթագինական պատերազմ* (536–552) 158
Զ. *Երկրորդի կարթագինական մարտին եղք* 169
Է. *Պատերազմ Մակեդոնիոյ* (554) 175
Ը. *Պատերազմ ընդդէմ Անտիոքոսի* (563) 179
Թ. *Պատերազմ յայսկոյս Ալպեայց* (558-579) 182
Ժ. *Պատերազմ ընդդէմ Պերսեայ* (583) 185
ԺԱ. *Քաղաքավարութեանն Հռոմայ յեզափոխութիւն* 189
ԺԲ. *Երրորդ պատերազմ կարթագինական* (605–608) 197
ԺԳ. *Կարգել Յունաստանի, Մակեդոնիոյ. Նումանտիոյ և Պերգամոյ'ի մարզս* 199
ԺԴ. *Բռնանգակութիւն պատմելոցս* 203

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԳՐԱԿՈՍԵԱՆՑ, ՄԱՐԻՈՍ ԵՒ ՍԻԼԼԱ (621–676)

Ա. *Հասարակապետութեան որ ինչ յայնժամ հանգամանք* 207
Բ. *Տիբերիոս Գրակքոս* (621) 214
Գ. *Կայիոս Գրակքոս* (631). 219
Դ. *Պատերազմ Յուգուրթայ* (637) 226
Ե. *Մարիոս* (647) 229
Զ. *Պատերազմ դաշնակցաց* (663) 235
Է. *Սիլլա* (666). 240
Ը. *Որ ինչ իշխանապետութեանն Սիլլայ գՀետ եկեալ* 254

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅՈՒԼԻԱՆՑ ԿԵՍԱՐՈՒ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

(654–684)

	Էջ
Ա. *Առաջին ումբ կեսարու*	257
Բ. *Կեսարու հալածումն յերկեաց Սիլայ*	265
Գ. *Կեսարու երթ յԱֆրիա* (673–674)	268
Դ. *Կեսարու դարձ 'ի Հռոմ* (676)	270
Ե. *Կեսարու երթ 'ի Հռոդոս* (678–680)	273
Զ. *Քրմապետութիւն Կեսարու և հալածական կալ ղօրուն* (680–684)	276

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

684–691

Ա. *Որ ինչ 'ի ժամանակին յոյնմիկ հանգամանիք Հասարակապետութեան* (684)	281
Բ. *Բգեշխութիւն Պոմպէի և Կրասոսի*	289
Գ. *Գանձապետութիւն Կեսարու* (686)	296
Դ. *Գաբինեան օրէնք* (687)	299
Ե. *Մանիլեան օրէնք* (688)	301
Զ. *Կեսարու կալ շինուածապետ* (689)	305
Է. *Կեսարու դատաւոր կալ ինդրոց և վիճից*	309
Ը. *Դատակցութիւնք ընդդէմ Ծերակուտին*	310
Թ. *Դժուարութիւնք կազմիչ կուսակցութեան նոր*	312

ԳԼՈՒԽ ԵՐԻՐՈՐԴ

691–695

Ա. *Կիկերոնի և Անտոնիոսի կալ 'ի բգեշխութիւն* (691)	315
Բ. *Ագարակային օրէնք Հռուլլոսի*	317
Գ. *Դատ Հռաբիրիոսի* (691)	321
Դ. *Քրմապետութիւն Կեսարու* (691)	323

Էջ

Ե. Դաւակցութիւն կաթուղիկոսի 326
Զ. Վրիպել Կիւրեղոնի ի կարծիս իւր 344
Է. Դառաւորութիւն կեսարու (692) 346
Ը. Ոճիրք Կլոդեայ (692) 350
Թ. Դարձ և յաղթանակ Պոմպէի (692) 352
Ժ. Իրաց ի սահման Հակառակորդին դիմեցումն 359

ԳԼՈՒԽ ՀՈՐՐՈՐԴ

693–695

Ա. Կեսարու կուսակալութիւն ի Սպանիա (693) 363
Բ. Կեսարու խնդրել զյաղթանակ և զբռնեշնութիւն (694) . . . 369
Գ. Դաշնակցութիւն Կեսարու, Պոմպէի և Կրասոսի 373
Դ. Ընտրութիւն Կեսարու 377

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԲԴԵՇՈՒԹԻՒՆ ԿԵՍԱՐՈՒ ԵՒ ԲԻԲՈՒԼԵԱՑ (695)

Ա. Փորձ ի հաշտութիւն 379
Բ. Ագարակային օրէնք 381
Գ. Ալ և այլ օրինադրութիւնք Կեսարու 388
Դ. Կեսարու ընդունել զկուսակալութիւն Կելտաց աշխարհին . . 400
Ե. Դիմակալութիւն ազատութեան 402
Զ. Օրէնք Կլոդեայ և տարտպրութիւն Կիկերոնի 409
Է. Դիտաւորութիւն գործոց Կեսարու. 413